ՀԱՍԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

Г. Б. ДЖАУКЯН

ОСНОВЫ ТЕОРИИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1974

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Բ. ՋԱՀՈՒԿՅԱՆ

ԹԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1974

4 Ար
Ջ 22

Գիրքը նվիրված է ժամանակակից հայերենի կառուցվածքի, համակարգման ուսումնասիրությանը ներածության մեջ տրված սկզբունքների հիման վրա հեռևողականորեն քննարկված են արտահայտության ոսմոնքի (արտահայտաբանության), քերականության (ձևաբանության ու շարահյուսության) և քերականական միավորների փոխկապակցման (փոխանցման ու փոխակերպման) բոլոր էական հարցերը։

Ջ 071—060
703 (02)—74

© Հայկական ՍՍՀ ԳՄ հրատարակչություն, 1974

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այս աշխատությունը ներկայացնում է ժամանակակից հայոց լեզվի կառուցվածքի ամբողջական ճնշությունը՝ «Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը» (Երևան, 1967) և «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (Երևան, 1969) մենագրություններում շարադրված ընդհանուր սկզբունքներով: Այդ մենագրություններում բերված ձևաբանական նյութը (հոլովման և խոնարհման ճնշությունը) այստեղ լրացված է արտահայտաբանության (արտահայտության ուսմունքի՝ հնչաբանության, գրաբանության, շարժաբանության) և շարահյուսության բաժիններով: Ձևաբանությունը բերված է գրեթե նույնությամբ. կատարված են մասնակի փոփոխություններ, որոնք բխում են ներկա աշխատության ընդհանուր կառուցվածքից և հիշյալ մենագրությունների մասին գրախոսողների արած առանձին դիտողություններից[1]:

Ինչպես հայտնի է, լեզվական կառուցվածքի ճնշության իր եղանակը հեղինակը կոչել է հարաբերակցական՝ այն համառոտակի բնութագրելով հետևյալ կերպ. «Այսպես կոչված հարաբերակցական ճեռականությունը կառուցված է երկու հիմնական սկզբունքով. 1) ճեռականական կառուցվածքի նկարագրությունը տարվում է բնական խոսքի մեջ արտահայտության միջոցների հաջորդման կարգին խստորեն համապատասխան, ընդ որում նախ արտածվում են ընդհանուր կանոններ, ապա ճնշվում է ամեն մի օրական առանձին. 2) նկարագրության բոլոր փուլերում կատարվում է երեք գործողություն՝ արտահայտության պլանի կառուցվածքի տարրերի բացահայտում՝ անկախ բովանդակության պլանից, ապա բովանդակության պլանի կառուցվածքի տարրերի բացահայտում՝ անկախ ար-

---

[1] *Համմ.* Ի. Իշխանյան, *ԼՀՔ, 1968, № 6, ԲԻՀ, 1969, № 3. R. Godel,* REA. VIII, 1971. *Н. А. Козинцева,* ВЯ, 1972, № 2.

տահայտության պլանից և, վերջապես, կառուցվածքների փոխհարաբերության, այսինքն՝ բնդհանուր կառուցվածքի սահմանում: Այլ կերպ ասած՝ ճնշությունը կատարվում է հետևյալ սկզբունքով՝ «նախ տարբերել և ճանաչել առանձին-առանձին, ապա միացնել և ճանաչել ներքին կապը»[2]:

Դեռևս մեր «Լեզվաբանության պատմություն» առաջին հատորում նշված էր, որ լեզվաբանության զարգացման առաջին շրջանի համար բնորոշ է լեզվի և մտածողության ու գիտակցության չտարբերակված, երկրորդ շրջանի համար՝ տարբերակված, երրորդ շրջանի համար՝ հարաբերակցված ճնշությունը. «Առաջին շրջանում լեզուն և գիտակցությունը ըմբռնվում են միասնաբար, նրանց տարբերության հարցը գրեթե չի դրվում. երկրորդ շրջանում, համեմատական հետազոտությունների հետ կապված, հանգում են դրանց տարբերության գաղափարին. երրորդ շրջանում ուշադրությունը կենտրոնացնում են դրանց փոխհարաբերության պարզաբանման վրա»[3]:

Սակայն երրորդ շրջանին վերագրվող հարաբերակցության սկզբունքը ավելի շատ դիտվում է որպես զարգացման ընդհանուր միտում, քան որպես սկզբունքի իրականացում: Լեզվաբանությունը և լեզվաբանական շատ ուղղություններ գոնվում էին և գոնվում են հարաբերակցային ճնշության իրականացման որոնումների հանապարհին: Այդ տեսակետից բնորոշ է ամերիկյան նկարագրական լեզվաբանության անցած ուղին. սկզբնապես լիովին ձևական ճնշության որոնումներ, ապա փոխակերպման սկզբունքի լայն կիրառման միջոցով կամուրջի նետում ձևական ճնշությունից դեպի իմաստը և, վերջապես, խորքային ու մակերևույթային կառուցվածքների տարբերակումից հետո, ուշադրության կենտրոնացում խորքային կառուցվածքների բացահայտման և, հետևաբար, իմաստային (բովանդակային) կողմի խորացված ճնշության վրա,— այսպիսին է այդ լեզվաբանության անցած ուղու համառոտ բնութագիրը: Ընդհանուր առմամբ վերջին շրջանում ավելի ու ավելի է ծավալվում լեզվի բովանդակային կողմի ուսումնասիրության մեթոդների կատարելագործման պահանջը:

---

2 *Г. Б. Джаукян*, Важнейшие направления научных исследований Института языка АН Арм. ССР, ИАН СССР, 1972, № 2, *էջեր 157—158:*

3 Գ. Ջահուկյան, *Լեզվաբանության պատմություն, Երևան, 1960, էջ* XXXVII:

Արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցված ճշտության ուղղությամբ կատարվող որոնումները որոշ առումով նպատակ ունեն հաղթահարել իրականության մեջ արտահայտության և բովանդակության պլանները խառնելու, դրանք հրատակորեն չտարբերակելու, աճիճտևողական կերպով մեկից մյուսը անցումներ կատարելու փաստերը: Առաջին դեպքում նպատակ է դրվում երկու պլանները առանձին-առանձին ճշտարկել և ապա արդյունքները համադրել. երկրորդ դեպքում հետևողական տարբերակման պահանջ չի դրվում:

Հարաբերակցային մոտեցումը կարող է հանդես գալ երկու ձևով. կարելի է սկսել կամ արտահայտության պլանից ու արտահայտության միջոցներից և գնալ դեպի բովանդակության պլանը, կամ վարվել հակառակ ձևով: Ըստ այսմ կարելի է տարբերել արտահարաբերակցական («ձևա-հարաբերակցական») և ներհարաբերակցական («իմաստա-հարաբերակցական») իրականություններ: Մեր հիշյալ մենագրություններում և այստեղ ճշտությունը կատարվում է արտահարաբերակցական սկզբունքով. սրա պատճառը մասամբ այն է, որ «մենք դեռևս չունենք բովանդակության տարրերի բացահայտման այնպիսի մի ընդհանրական բանալի (համընդհանուր ուսմունք), որ հնարավորություն տար թափանցելու բոլոր լեզուների բովանդակային կողմի մեջ»[4] (եղած ընդհանրական իրականությունները շատ հեռու են այդ պահանջը բավարարելուց), մասամբ էլ նկատի է առնվում այն, որ նախեռան այդպիսի իմաստաբանական ուսմունքի ստեղծումը ամեն մի այլ իմաստաբանական ուսմունքի կիրառումը կհանգեցնի կամ լոգիցիզմի (ճշտություն ընդհանուր տրամաբանական սխեմաներով), կամ պսիխոլոգիզմի (լեզվի իրճնություն զուտ հոգեբանական հայեցակետով), կամ տվյալ լեզվի կառուցվածքի մեջ նրան ոչ հատուկ երևույթների ու կարգերի ներմուծման:

Պետք է ասել, որ ներկա աշխատության հեղինակին հաջողվել է գտնել այնպիսի ընդհանրական կատեգորիաներ, որոնք հնարավորություն են տալիս ընդգրկելու լեզվի կառուցվածքի բոլոր կողմերը: Սակայն մինչև ընդհանուր տեսության վերջնական մշակումը առայժմ հարկ համարեցինք տալ «արտահարաբերակցական» իրականության ամբողջական շարադրանքը, «ներհարաբերակցականները» թողնելով հետագային: Սրանով նախ կամբողջանա այն գործը, որ

[4] Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի գարգացումը և կառուցվածքը*, Երևան, 1969, էջ 99:

սկսվել է ինչյալ մենագրություններով, ապա հետագայում, նոր սկզբունքի կիրառումից հետո, ավելի ակնառու կղառնա երկու մոտեցումների տարբերությունը: Կարելի է ասել, որ ներկա աշխատության հեղինակը արդեն առաջ է անցել իր աշխատության կառուցվածքից: Այստեղ լեզվի բովանդակային կողմի համակարգայնությունը առնվում է ըստ արտահայտության պլանի համակարգայնության: Կաղապարների առանձին հատվածների արտահայտության միջոցների ընտրությունից բաշխման և փոխակերպման միջոցով անցում է կատարվում դեպի բովանդակության պլանը: Բովանդակության տարրերը համակարգվում են ըստ արտահայտության միջոցների կաղապարային դիրքի՝ ըստ արտահայտության ձևերի ու եղանակների տարբերության. ժամանակի միևնույն հասկացությունը, օրինակ, հանդես է գալիս ամենատարբեր միջոցներով, և միևնույն տեղում գաղափար չի տրվում նրա լեզվական արտահայտության բոլոր եղանակների մասին: Եթե արտահարաբերակցական հերականության մեջ տարբեր իմաստները միավորվում են ըստ ձևական ընդհանրության, ապա ներհարաբերակցական (իմաստահարաբերակցական) հերականության մեջ տարբեր ձևերն են միավորվում ըստ իմաստային ընդհանրության:

Լեզվի և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլանների ընության լիակատար համակարգայնություն ապահովելու և լեզվի կառուցվածքը ճշտորեն կաղապարելու (մոդելավարելու) համար պահանջվում են դեռ լրացուցիչ որոշ ջանքեր:

Մեր կողմից բացահայտված ընդհանրական կարգերի, լեզվական կաղապարների բնույթի, լեզվի և խոսքի փոխհարաբերության, հերականության տարբեր տեսակների, լեզվաբանության կառուցվածքի (բաժինների) վերաբերյալ մի շարք հարցեր, որոնք նախորդ մենագրություններում բավարար չափով չեն մեկնաբանվել, ընված են ներածության մեջ: Այդ հարցերը հեղինակին զբաղեցրել և շատ կողմերով նրա գլխում ձևավորվել են վաղուց՝ դեռևս ուսանողական շրջանից սկսած՝ մոտավորապես 1930-ական թվականների վերջերից: Աշխատության տեսական դրույթների մեջ թերևս ընդհանուր շատ բան կա նորագույն լեզվաբանության որոշ դրույթների հետ, բայց դրանք իր իսկ հեղինակի խորհրդածությունների արդյունքն են: Իհարկե, ավելի քան երեք տասնամյակի ընթացքում փոփոխություն են կրել ոչ միայն հեղինակի որոշ հայացքներ, այլև մեծ չափով լեզվաբանությունը: Սակայն այն սկզբունքները, որոնք հեղինակի մոտ հենց սկզբից ձևավորվել են, այդ թվում հատկապես

լեզվի և խոսքի, գիտակցության և մտածողության փոխհարաբերությանն վերաբերյալ նրա պատկերացումները, մնացել են հիմնականում նույնը: Դեռ ավելին. իր իսկ հեղինակի առաջին բնագավառներում կատարած աշխատանքները և վերջին տասնամյակներում նրան եկած լեզվաբանական աշխատությունները նրան համոզել են այդ հիմնական սկզբունքների ճշմարտության մեջ:

Կարելի է հարցնել, թե ինչո՞ւ իր որոշ սկզբունքների շարադրանքով հեղինակն ավելի վաղ հանդես չի եկել: Սրա մի պատճառը նրա անընդհատ մտորումներն ու որոնումներն էին, առանձին մանրամասների հարուցած դժվարությունները, ամբողջ կառուցվածքը դեռևս լիովին ավարտված չտեսնելը: Սակայն աշխատության ձգձգման գլխավոր օբյեկտիվ պատճառները սովետական լեզվաբանության մեջ տիրող ընդհանուր վիճակի հետ էին կապված: Մինչև 1950 թ. բանավեճը անհնար էր զարգացնել մի տեսություն, որ Ն. Յա. Մարի «լեզվի նոր ուսմունքից» տարբեր էր կամ չէր համընկնում լեզվաբանական աշխատանքի՝ նրա կողմից գծած սկզբունքների հետ: Հնարավոր չէր հանդես գալ նման մի աշխատությամբ նաև 1950 թ. անմիջապես հետո ընկած ժամանակաշրջանում, երբ իշխում էր Ի. Վ. Ստալինի լեզվաբանական հոդվածների ազդեցությունը, այդ թվում՝ ձևաբանության և շարահյուսության նրա ավանդական ըմբռնումը: Բացի սրանից, հեղինակն զբաղված էր մասամբ հայ և ընդհանուր լեզվաբանության, մասամբ էլ հայոց լեզվի պատմության վերաբերյալ ուսումնասիրություններով, որոնք չէր կարելի կիսատ թողնել: Եվ ահա հայ բարբառագիտության հարցերին նվիրված իր աշխատության ավարտումից հետո նա ձեռնամուխ եղավ նրկա աշխատության իրագործմանը:

Սկզբնապես հեղինակը ցանկանում էր նախ հանդես գալ մի ընդհանուր տեսական աշխատությամբ, շարադրել իր լեզվաբանական սկզբունքները, ապա անցնել հայոց լեզվի նկատմամբ նրանց կիրառմանը: Սակայն որոշ հանգամանքներ փոխեցին այդ մտադրությունը, և արդյունքը եղավ նրկա աշխատությունը, որ յուրատեսակ գիտափորձ է: Սրանից հետո հեղինակը ամենայն հավանականությամբ կանցնի ներածության մեջ արծարծված գաղափարների ավելի հանգամանալից ու ամբողջական շարադրմանը:

Քանի որ հեղինակը վաղուց ի վեր գրել է և հույս ունի մոտ ապագայում հրատարակել արևելահայ բերականական ուսմունքների պատմությանը նվիրված հատուկ աշխատություն, նա այստեղ, գրքի նպատակներին համապատասխան, չի տալիս բերակա-

նական առանձին հարցերի վերաբերյալ հայտնված կարծիքների հանգամանալից շարադրանքը՝ ընդհանուր ծանոթության համար նղելով իր «Հայ լեզվաբանական միտքը XVIII—XIX դդ.» դոկտորական դիսերտացիային և «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» գրքի «Հարցի պատմությունից» հատվածին (էջ 69—91):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐ

*«Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ հիմնական գծերով տրված է լեզվական կաղապարների մեր ըմբռնումը։ Ըստ այդ ըմբռնման՝ լեզվական կաղապարները բառաձևերի որոշակի կարգերի հետևողական շարքեր են, որոնք միմյանցից տարբերվում են այդ կարգերի քանակով, դիրքով և պարտադրականությամբ։ Բերված կաղապարային բանաձևերում կաղապարը կազմող կարգերի քանակը և դիրքը նշանակվում է համապատասխան տառանշանների քանակով և դիրքով, իսկ պարտադրականությունն ու ոչ պարտադրականությունը՝ փակագծերի բացակայությամբ և առկայությամբ։ Այսպես, **ղաղաf–ներ–ից** գոյականական բառաձևի համար տրվում է A(+a(+b)) բանաձևը, որ նշանակում է, թե՝ 1) կաղապարը եռանդամ է՝ բաղկացած A գոյականական հիմքից և a (թվանիշ) ու b (հոլովանիշ) մասնիկներից, 2) A հիմքը նախորդում է a կարգի (թվանիշ), սա էլ b կարգի (հոլովանիշ) մասնիկներին, 3) a կարգի (թվանիշ) և b կարգի (հոլովանիշ) մասնիկների առկայությունը պարտադիր չէ (A հիմքը կարող է հանդես գալ առանց այդ երկու մասնիկների կամ դրանցից մեկնումեկի)։ **Կտեսնեմ** և **չտեսնեմ** բայական բառաձևերի համար տրվում է (a+)A+b+c բանաձևը, որ նշանակում է, թե՝ 1) կաղապարը բառանդամ է՝ բաղկացած a (եղանակիչ-ժխտական), b (կերպային) և c (դիմա-թվային) կարգի մասնիկներից, 2) a կարգի մասնիկները նախորդում են հիմքին, b կարգի մասնիկները՝ հաջորդում, իսկ c կարգի մասնիկները եզրափակում, 3) a կարգի մասնիկների առկայությունը պարտադիր չէ (հմմտ. **կգնամ** և **գնամ**), իսկ b ու c մասնիկների առկայությունը պարտադիր է [տվյալ կա-*

դապարի բայաձևերը չեն կարող հանդես գալ առանց այդ մասնիկների, այսինքն՝ հնարավոր չեն (կ)փախչ *և* (կ)փախեմ *տիպի ձևեր)։*

Այն դեպքերում, երբ քերականական տվյալ կարգին պատկանող իմաստներն արտահայտվում են ոչ թե մասնիկներով, այլ հերթագայությամբ (a/b) *կամ տեղափոխությամբ* (ab/ba), *այս միջոցները հավասարեցվում են մասնիկներին և բերվում մասնիկների ձևով։ Այսպես, քաղաքի բառաձևի կազապարը կիրառելի է նաև* **տան** *բառաձևի նկատմամբ՝* տուն+ու/ա *ձևով։*

Հիշյալ աշխատության մեջ մենք սահմանափակվում էինք միայն համադրական բառաձևերի կազապարներով, ուստի և խոսվում էր միայն հիմքի և մասնիկների մասին։ Ուսումնասիրության շրջանակների ընդլայնումը և բառաձևերի փոխարեն բառակապակցությունների ընդգրկումը,— լինեն դրանք ստորոգական թե ոչ ստորոգական (նախադասությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ստորոգական բառեր և բառակապակցություններ),— սկզբունքային տարբերություններ չի բերում կազապարների ուսումնքի մեջ. տարբերությունն այն է, որ առաջին դեպքում մենք գործ ունենք հիմքերի և մասնիկների, երկրորդ դեպքում՝ բառակապակցության հիմնական (միջուկային) և լրացական անդամների՝ բառերի հետ։ Մասնիկների կարգերի փոխարեն այստեղ հանդես են գալիս բառերի կարգերը, մասնիկների քերականական կարգերի փոխարեն՝ բառերի քերականական կարգերը։

Նկատի ունենալով կազապարի հասկացության՝ մեզ համար կենտրոնական լինելը, խոսենք նաև կազապարների տեսակների մասին, որոնք մասամբ քննված են մեր հիշյալ աշխատության մեջ։

1. Ըստ բոլոր լեզուների, թե մեկ լեզվի համար կառուցվելու՝ պետք է տարբերել ընդհանրական և առանձնական կազապարներ։ Ընդհանրական կազապարը կառուցվում է բոլոր լեզուների համար՝ մակածական (ինդուկտիվ) և արտածական (դեդուկտիվ) մեթոդների համակցմամբ, այսինքն՝ առանձին լեզուների փաստերն ընդհանրացնելու և տրամաբանական ընդհանուր դրույթներից դեպի առանձինները գնալու միջոցով. «...Թեև ամենից ավելի զարգացած լեզուները ունեն ամենից ավելի քիչ զարգացած լեզուների հետ ընդհանուր օրենքներ և սահմանումներ, բայց համընդհանուրից և ընդհանուրից ունեցած տարբերությունն էլ հենց այն է, որ կազմում է նրանց զարգացումը»[1]։

---

[1] *К. Маркс,* К критике политической экономии, М., 1953, *էջ 195։*

2. Յուրաքանչյուր լեզվի յուրաքանչյուր մակարդակային և աստիճանային միավորի համար[2] ըստ կաղապարի անդամների քանակի լրիվության կարելի է տարբերել լրիվ և մասնակի (թերի) կաղապարներ: Լրիվ կաղապարը կամ լիակաղապարը ընդգրկում է բոլոր հնարավոր կարգերը և կարող է չունենալ ոչ մի կոնկրետ դրսևորում (օրինակ, նմուշ). այսպես, եթե կառուցենք որևէ լեզվի նախադասության լիակաղապարը, ապա դժվար թե կարելի լինի կազմել այնպիսի մի օրինակ, որի մեջ ընդգրկված լինեն նախադասության բոլոր հնարավոր անդամները: Մասնակի (թերի) կաղապարը կամ մասնակաղապարը ընդգրկում է միայն որոշ թվով կարգեր՝ դրանց պարտադրականության տարբեր աստիճաններով. այսպես, յուրաքանչյուր լեզվում հանդես են գալիս նախադասությունների որոշակի տեսակներ, որոնց համար կարելի է կառուցել մասնակաղապարներ՝ համապատասխան բանաձևերով և բանաձևերի համար բերվող օրինակներով (նմուշներով): Ընդհանրական կաղապարը հարաբերում է առանձին լեզուների համար կառուցված լիակաղապարներին այնպես, ինչպես սրանք՝ իրենց մասնակի կաղապարներին:

3. Ըստ կաղապարի՝ ամբողջին թե մասին վերաբերելու կարելի է տարբերել հիմնական և լրացական (ստորադաս) կաղապարներ: Հիմնական կաղապարը կամ հիմնակաղապարը ընդգրկում է տվյալ միավորի հիմնական (գործառական համարժեք) կարգերը, լրացական կաղապարը կամ ենթակաղապարը՝ այդ կարգերից յուրաքանչյուրի ենթակարգերի կաղապարը: Հիմնակաղապարի տիպեր վերլուծելի չեն տվյալ կաղապարային աստիճանում և վերլուծելի են ենթակաղապարային աստիճանում: Այսպես, բառակազմական միավորների կաղապարները ենթակաղապարներ են ձևաբանական, սրանք էլ շարահյուսական միավորների համար:

4. Ըստ կաղապարի առանձին հատվածների՝ այլ կաղապարների հետ ունեցած հարաբերության կարելի է տարբերել համասեռ և ոչ համասեռ կաղապարներ: Համասեռ կաղապարն ինքնակա բնույթ ունի, տարասեռ կաղապարը ներկայացնում է երկու կամ ավելի ինքնակա կաղապարների խառնուրդ: Տարասեռ կաղապարների դեպքում խախտվում է ինքնակա կաղապարներում հանդես

---

2 Մակարդակային մենք համարում ենք ստորոգական և ոչ ստորոգական միավորների (նախադասության և ոչ նախադասության), աստիճանային՝ բառակապակցության տարբերությունը:

եկող կարգերի հաջորդականություն։ Այսպես, մոտ-եց-վ-եց-իր բառաձևը կազապարված է մոտ-եց-(ար) և (փոխ-)վ-եց-իր բառաձևերի կազապարների խառնուրդով՝ [A+b(+c)] + [(B+)d + b+ + c] → A+b+d+b+c։

Յուրաքանչյուր լեզվական երևույթ քննելիս պետք է կառուցել նրա կազապարը։ Վերջինս ոչ թե լեզվաբանի քմահաճ կառուցում է, այլ խոսողի մոտ տեղի ունեցող պրոցեսի արտացոլում։ Կազապարը տալիս է հնարավոր կառուցվածքները, որոնք իրականացվում են խոսքային ակտերի մեջ։

Այսպիսով, պետք է տարբերել քննության հետևյալ կազմիչները. 1) լեզվական տարրեր, որոնք տարբեր աստիճանների և մակարդակների համար տարբեր են, 2) լեզվական կազապարներ, որոնք ընդգրկում են այդ տարրերի բոլոր հնարավոր կարգերը և 3) դրանց նկատմամբ կատարվող գործողություններ (պրոցեդուրաներ)։ Կազապարից դեպի տարրերը գնալիս մենք կատարում ենք վերլուծություն, տարրերից դեպի կազապարները գնալիս՝ համադրություն։ Խոսողը կատարում է տարրերի ընտրություն և համադրություն տվյալ լեզվական կազապարների սահմանում՝ լցնելով կարգերի մերթ այս, մերթ այն բաց տեղերը (իրացնելով հնարավոր կարգերը իրական լեզվական միավորներով). լեզվաբանը կատարում է վերլուծություն և դասակարգում՝ առանձնացնելով կազապարի անդամների իրացումները և դրանք խմբավորելով՝ բուն կազապարների բացահայտման նպատակով. լսողը համադրում է և վերլուծում՝ անընդհատ զուգադրելով իր և խոսողի կազապարները։

Լեզվական կազապարների մեջ հատուկ նշանակություն ունեն, այսպես կոչված, սերող կազապարները, որոնց նկարագրությունը տրված է Ն. Խոմսկու և ուրիշների կողմից։ Սերող կազապար ընդունված է կոչել այն կանոնների ամբողջությունը, որոնց կիրառումով կարելի է ստանալ տվյալ լեզվի համար քերականորեն ճշգրիտ միավորներ։ Այդ կազապարները ապահովում են ստացվող միավորների, հատկապես նախադասությունների քերականական ճշգրտությունը, բայց ոչ իմաստայնությունը։ Ստացված քերականորեն ճշգրիտ միավորների մեջ կարող են լինել և՛ իմաստալից, և՛ ոչ իմաստալից տեսակներ։ Լեզվաբանության որոնումները այժմ դնում են այնպիսի կազապարների ստեղծման ուղղությամբ, որոնք ի վիճակի կլինեն սերելու ոչ միայն քերականորեն ճշգրիտ, այլև բոլոր դեպքերում իմաստալից լեզվական միավորներ։ Առաջ է քաշվում մակերեսային և խորքային կառուցվածքների գաղափարը, և

նպատակ է դրվում թափանցել լեզվի իմաստային կառուցվածքի մեջ։

Չի կարելի ասել, թե լեզվաբանության որոնումները արդեն հանգեցրել են որոշակի արդյունքների։ Կառուցվածքային լեզվաբանության որոնումները որոշ առումով եղած ծայրահեղությունների հաղթահարման որոնումներ են։ Սկզբնական ծայրահեղ ձևականությունից փոխակերպման գաղափարի միջոցով անցում իմաստային կողմի հաշվառմանը, ապա խորքային կառուցվածքի գաղափարի առաջքաշմամբ վերադարձ դեպի իմաստային կողմի բազմակողմանի հաշվառումը,— այսպիսին է ժամանակակից լեզվաբանության ուղին։ Սակայն, ինչպես առաջաբանում նշվել է, իմաստային կողմի մեջ թափանցելու արդի որոնումների արդյունքները չի կարելի նույնացնել հնից եկող քերականական տարրոամ և հաճախ ճշգրիտ չձևակերպված գաղափարների հետ։ Այս դեպքում ճշգրտությունը և օբյեկտիվությունը դառնում են լեզվի կառուցվածքի առանձնահատկությունների բացահայտման գլխավոր սկզբունքները։

Ավելորդ չենք համարում նշել, որ Ն. Խոմսկու, Ս. Կ. Շահումյանի և ուրիշների կողմից որպես բացարձակ նորություն ներկայացվող գաղափարները իրականում պայմանավորված են լեզվաբանության նախորդ նվաճումներով։

Ինչպես կտեսնենք փոխակերպմանը նվիրված հատվածում, այդ գաղափարը, որի ներմուծման պատիվը վերագրվում է Զ. Հառիսին և Ն. Խոմսկուն, իրականում վաղուց է հայտնի լեզվաբանությանը և հանդես է գալիս լեզվի ոճա-ճարտասանական վարժությունների, այլև տրամաբանական քերականության՝ միևնույն տրամաբանական-հասկացական կարգերը՝ լեզվական տարբեր ձևերով արտահայտվելու հնարավորության սկզբունքի մեջ։

Այս նույն ձևով էլ պետք է ասել, որ Ս. Կ. Շահումյանի հարակցական սերող կաղապարի (аппликативная порождающая модель) հասկացության ելակետային միավորները լիովին նույնական են Լ. Տենիերի կատեգորիական շարահյուսության մեջ առանձնացված խոսքի մասերի հետ, ընդ որում այսպես կոչված հարակցային գերիշխման (аппликативная доминация) գաղափարը համապատասխանում է Տենիերի բայական հանգույցի, հիմնակազմային գերիշխման (конститутивная доминация) գաղափարը՝ անվանական հանգույցի գաղափարներին։ Էլ չենք խոսում Օ. Եսպերսենի և ուրիշների համատիպ բաժանումների մասին։ Ավե-

լորդ չէ ասել, որ Շահումյանի կողմից ելակետային միավորների առանձնացումը խիստ պայմանական է, և, եթե նկատի չունենանք որոշ կարգի լեզուներ, շատ դեպքերում դժվար իրագործելի։

Ինչպես հայտնի է, Լ. Ելմսլևը ժամանակին խնդիր էր դրել տալ այնպիսի սկզբունքներ, որոնք հավասարապես կիրառելի լինեն լեզվի բոլոր կողմերի, այդ թվում թե արտահայտության ու բովանդակության պլանների, թե հարացուցային ու շարակարգային աստիճանների նկատմամբ։ Սակայն նրա տված սկզբունքներով իմաստային վերլուծության որևէ ծավալուն փորձ չի կատարվել։

Ինչպիսի՞ն պետք է լինի լեզվի ընդհանրական իդեալական կաղապարը։

1) «Լեզվաբանական միավորների և նրանց տարբերիչ հատկանիշների փոխհարաբերության մասին» հոդվածում[3] մենք գրել ենք. «Ընդհանուր լեզվաբանության իդեալը այնպիսի կաղապարի ստեղծումն է, որ լինի բավականաչափ տնտեսող (առանց բաց վանդակների), բավականաչափ ընդհանրական (բոլոր լեզուների նկատմամբ կիրառելի), բավականաչափ միասնական (հատկանիշների խստիվ համակարգային ընտրության դեպքում միևնույն սկզբունքներից ելնող) և բավականաչափ սպառիչ (լեզուն, langage իմաստով, իր բոլոր դրսևորումներով ընդգրկող)»[4]։ Այսպիսով, ընդհանրական սերող կաղապարում՝ ա) բոլոր միավորները պետք է ոչ միայն քերականորեն ճիշտ լինեն, այլև իմաստալից (ի տարբերություն գոյություն ունեցող սերող կաղապարների), բ) կաղապարը պետք է կիրառելի լինի բոլոր լեզուների նկատմամբ, գ) ընդգրկի լեզվի բոլոր կողմերը և դ) սպառիչ բնույթ ունենա։

2) Մենք ելնում ենք առաջին հայացքից շատ բնական թվացող մի սկզբունքից, որը, սակայն, լեզվաբանության մեջ դեռևս հիմքեր չի նետել, և առանց որի չի կարող լինել լեզվի սպառիչ, միասնական և ընդհանրական ուսումնասիրություն։ Այդ սկզբունքն այն է, որ լեզվի համակարգն ուսումնասիրելու և հասկանալու համար պետք է դուրս գալ այդ համակարգի սահմաններից։ Լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ նյութական (մատերիական, սուբստանցիական) աշխարհի մի արտահայտությունը։ Քանի դեռ մենք լեզուն փորձում ենք հասկանալ լեզվի միջոցով, կպտտվենք կախարդական շրջանում և չենք կարողանա ստեղծել ոչ-հակասական համակարգ, որ

---

3 Տե՛ս «Теоретические и практические вопросы преподавания иностранных языков», *ժողովածուն*, М., 1970, էջ 7—22։

4 Նույն տեղը, էջ 22։

լեզվաբանության գլխավոր խնդիրն է։ Սա նշանակում է, որ մենք պետք է նախ՝ քննենք իրական աշխարհի փոխհարաբերությունների հնարավոր տիպերը, ապա անցնենք լեզվին, որպես այդ փոխհարաբերությունների դրսևորումներից մեկի։ Լեզվի արտահայտության պլանը ոչ այլ ինչ է, եթե ոչ նյութական աշխարհի դրսևորում, լեզվի բովանդակային կողմը՝ նյութական աշխարհի արտացոլում։ Այսպիսով, մեր մոտեցումը տրամագծորեն հակառակ է, և՛ Սոսյուրի ու Ելմսլևի իմանենտիզմին, և՛ Ն. Խոմսկու ու մյուսների ռացիոնալիզմին։ Մեզ համար, ի տարբերություն Ն. Խոմսկու և Ս. Կ. Շահումյանի, ելակետային միավորները ոչ թե ցուցակով տրվող կամ ինքնին (հաճախ ապրիորի կերպով) առանձնացվող միավորներն են, այլ ոչ լեզվական՝ գոյաբանական-ֆիզիկական ավելի ընդհանուր միավորների հիման վրա առանձնացվող միավորներ։ Այսպիսով, սերումը մեզ համար ունի երկու էտապ՝ գոյա-իմացաբանական և լեզվա-հաղորդակցային։ Առաջին դեպքում մենք դուրս ենք գալիս լեզվի սահմաններից և մտնում փիլիսոփայության, սեմիոտիկայի և մյուս գիտությունների մեջ (մի բան, որ լեզվաբանները սովորաբար համարում են արտալեզվաբանական խնդիր) և կառուցում ընդհանուր-նյութական կաղապար, երկրորդ դեպքում մենք մնում ենք լեզվի սահմաններում և կառուցում լեզվական կաղապար։ Այս տարբերակումը չպետք է շփոթել Ս. Կ. Շահումյանի՝ արդի փիլիսոփայությունից (տրամաբանությունից) փոխառած զննության և կոնստրուկտի աստիճանների առանձնացման հետ, որովհետև զննության աստիճանը դարձյալ ենթադրում է զննող սուբյեկտ, մինչդեռ մենք վերանում ենք սուբյեկտիվից և սուբյեկտիվը քննում որպես օբյեկտիվ։

3) Ինչպես նշվել է մեր մի շարք աշխատություններում և ինչպես կտեսնենք ստորև, լեզվաբանական ընդհանրական ուսմունք ստեղծելու համար պետք է նկատի առնել հատկանիշներն ու հարաբերությունները, առանձին լեզուները քննելիս՝ և՛ հատկանիշներն ու հարաբերությունները, և՛ դրանցով բնորոշվող միավորները։

4) Լեզվի և խոսքի փոխհարաբերության մեր ըմբռնումը տարբերվում է եղած ըմբռնումներից. ինչպես կտեսնենք, մենք գտնում ենք, որ լեզուն ու խոսքը փոխհաջորդում են միմյանց, և դրանց փոխհարաբերությունը ճիշտ ներկայացնելու համար հարկավոր է կառուցել այնպիսի կաղապար, որ հանդես բերի այդ փոխհաջորդումը։ Սերող քերականությունը փոխհաջորդական քերականություն։

է և մակածորեն (ինդուկտիվ կերպով) հենվում է լեզվի ու խոսքի նշված ըմբռնման վրա։

Լեզվի և խոսքի մեր ըմբռնումը զարգացվել է Երևանի պետական համալսարանում կարդացած մեր դասախոսություններում և առաջին անգամ գրավոր ձևով ակնարկվել «Լեզվաբանության պատմության» II հատորում։ Խոսելով լեզվի և խոսքի հակադրության մասին՝ մենք նշել ենք, որ այս դեպքում «բավարար չափով հաշվի չեն առնվում դրանց անցումները», որ դրանք «դրվում են կողք-կողքի, խստորեն հակադրվում միմյանց»[5]։

Սոսյուրի ժամանակներից ընդհանրացած այս տարբերակումը ժամանակակից լեզվաբանության մեջ գրեթե աքսիոմատիկ բնույթ է ստացել։ Այն վերանայելու կամ անտեսելու փորձերը առայժմ գրեթե ապարդյուն են անցել։ Պետք է կարծել, որ լեզվի և խոսքի տարբերակումը հատուկ է լեզվի էությանը։ Հաղորդման (ինֆորմացիայի) տեսության ձևավորումից հետո առաջ քաշվեց կոդ—հաղորդում զուգահեռ տարբերակումը, որը յուրատեսակ ձևով լրացրեց ու հաստատեց լեզու—խոսք տարբերակումը։

Սակայն եթե մի կողմից՝ լեզու—խոսք տարբերակումը թվում է լեզվի էությանը ներհատուկ, ապա մյուս կողմից՝ մինչև այժմ էլ չի կարելի ասել, թե կա այդ տարբերակման բնույթի մասին ընդհանուր ճանաչում գտած պատկերացում։ Միաժամանակ՝ ամերիկյան նկարագրական լեզվաբանության ներկայացուցիչները առաջին հայացքից կարծես թե «յոլա են գնում» առանց այս տարբերակման. սովորաբար ասվում է, որ նրանց ուսումնասիրության բուն առարկան խոսքն է։ Ինչո՞ւմն է բանը։

Սոսյուրը լեզուն և խոսքը տարբերում է հատկապես նրանով, որ առաջինին հատկացնում է հասարակական բնույթ, երկրորդին՝ անհատական։ Ճի՞շտ է սա արդյոք։ Ամենից առաջ՝ այս դեպքում թույլ է տրվում հարցի դիալեկտիկական անըմբռնողություն։ Խոսքն իրականանում է լեզվական միջոցներով և իր բնույթով սովորաբար ենթադրում է ընկալող, հետևաբար խոսքի և՛ նախադրյալը, և՛ նպատակը հասարակական են. այսպես կոչված ներքին խոսքն ու մենախոսությունը ածանցյալ բնույթի են, և նրանց ժամանակ կիրառվում են այն միջոցները, որոնք առկա են երկխոսության ժամանակ։ Երկրորդ՝ լեզու հասկացությունը միատարր չէ։ Լեզու ասելով հասկանում ենք դերազանցապես երեք բան՝

---

5 Գ. Բ. Ջանուկյան. *Լեզվաբանության պատմություն*, II, Երևան, 1962, էջ 171։

1. մարդկային լեզուն որպես մարդուն հատուկ խոսողական կարողություն, 2. ժողովրդի (կամ նրա մի հատվածի) լեզուն որպես տվյալ ժողովրդի (կամ նրա մի հատվածի) ներսում հաղորդակցումն իրականացնող ընդհանուր միջոց և 3. անհատական լեզուն որպես տվյալ անհատի հաղորդակցումը հնարավոր դարձնող միջոց։ Ճիշտ է. դրանց միջև ընկած են միջակա աստիճաններ՝ պատմական (հմմտ. մի քանի լեզուների համար վերականգնվող նախալեզուները), հասարակական (հմմտ. տվյալ ժողովրդի ներսում գոյություն ունեցող զանազան հասարակական խմբերի «լեզուները»), ֆունկցիոնալ-ոճական (հմմտ. ժողովրդի լեզվի մեջ գրական, խոսակցական և այլ կարգի տարբերակները), տերիտորիալ (հմմտ. տվյալ ժողովրդի ներսում բարբառային, ենթաբարբառային, խոսակցական տարբերակները), բայց դրանց գործողության մեխանիզմը կարելի է հասկանալ մի կողմից՝ ժողովրդի լեզվի մեխանիզմի քննությամբ, մյուս կողմից՝ հասարակության գոյության ոչ լեզվական պայմաններով։ Այդ պատճառով էլ մենք առայժմ դրանց քննությունը բաց ենք թողնում։

Ո՞րն է լեզվի և խոսքի գլխավոր տարբերությունը։ Անկասկած այն, որ խոսքը որոշ պրոցես է, լեզուն՝ այդ պրոցեսի նախադրյալն ու արդյունքը։ Ըստ Սոսյուրի՝ «պատմականորեն խոսքի ակտը միշտ նախորդում է լեզվին»[6]։ Իրականում այդպիսի հարցադրումը ճիշտ չէ։ Խոսքը պատմականորեն և՛ հաջորդում է լեզվին, և՛ նախորդում։ Սոսյուրի և նրա շատ հետևորդների գլխավոր թերությունն այն է, որ նրանք լեզուն և խոսքը դնում են իրար կողքի. Սոսյուրը նույնիսկ կարծում է, որ լեզուն «անհատի նկատմամբ արտաքին երևույթ է, որ ինքնին չի կարող ոչ ստեղծել լեզու, ոչ այն փոխել»[7]։ Մինչդեռ հենց այն փաստը, որ վերոհիշյալ բաժանման մեջ մենք տարբերեցինք նաև անհատի լեզուն, ինքնին խոսում է այս պնդման սխալ լինելու մասին։ Ո՞ւնի արդյոք անհատը իր լեզուն։ Անշուշտ։ Այն յուրացվում է մանկությունից և ուղեկցում անհատին մինչև մահ՝ կազմելով ժողովրդի լեզվի մասը։ Այդ լեզուն է, որ անմիջապես հնարավոր է դարձնում անհատի առանձին խոսողական ակտերը և ընդհանրապես նրա խոսքը։ Անհատի լեզուն նրա խոսքի նախադրյալն է, բայց ոչ այդ խոսքի արդյունքը. այն սկզբնապես յուրացվում է ուրիշների խոսքի հիման վրա և հետագայում անընդհատ

---

6 Ф. Де-Соссюр, Курс общей лингвистики, М., 1933, էջ 42։

7 Նույն տեղը, էջ 39։

ենվում ուրիշների խոսքով: Այսպիսով, լեզվի և խոսքի փոխհարաբերության մասին մենք չենք կարող խոսել ընդհանրապես, հաշվի չառնել, թե ում դիրքերից ենք մոտենում՝ խոսողի՞, թե լսողի, հաղորդողի՞, թե ընդունողի:

Լեզվի յուրացման շրջանում ուրիշների խոսքի ընդունումը գերակշռում է հաղորդման նկատմամբ. հետագայում հաստատվում է որոշ հավասարակշռություն: Ինչպես նշվել է, ընկալման պրոցեսը գերազանցապես վերլուծության պրոցես է, հաղորդմանը՝ գերազանցապես համադրության: Այլ կերպ ասած՝ հասկացումը առաջին հերթին վերլուծություն է, հասկանալի դարձնելը՝ առաջին հերթին համադրում: Չնայած համադրության կարևորությանը՝ կարելի է ասել, որ մինչև վերջին ժամանակներս լեզվաբանությունն զբաղվում էր միայն վերլուծությամբ. պատահական չէ, որ հին հնդիկների մոտ քերականությունը կոչվում էր հենց վերլուծություն (vyakarana): Թերևս մասամբ այս է պատճառը, որ լեզուն և խոսքը Սոսյուրը և ուրիշները դնում են կողք-կողքի, լեզուն դիտում որպես անհատի համար արտաքին մի բան, որ յուրացվում է նրա կողմից վերլուծության ճանապարհով: Որպեսզի հասկանանք լեզվի և խոսքի փոխհարաբերության էությունը, հարկավոր է քննել անհատի լեզվի գործողության մեխանիզմը: Լեզուն միջոցների մի ամբողջություն է, որ հնարավոր է դարձնում վերլուծությունը (հասկանալը) և համադրությունը (հասկանալի դառնալը), որոնց ամբողջությունը հենց հաղորդակցումն է: Հաղորդման և ընդունման, որպես խոսքային երկու դրսևորումների, երկրորդ գլխավոր տարբերություն լեզվից նրա անմիջականությունն է: Կարելի է ասել, որ այն ամենը, ինչ հանդես է գալիս որպես անմիջական պրոցես, վերաբերում է խոսքին. այն ամենը, ինչ զրկվում է անմիջականությունից, դադարում է պրոցես լինելուց և դառնում հիշողության պահեստային փաստ, վերաբերում է լեզվին: Լեզվականը խոսքայինն է՝ զրկված անմիջականությունից և պահեստացված, խոսքայինը՝ լեզվականն է՝ ստացած անմիջական բնույթ և առնված պրոցեսի մեջ: Այս առումով էլ լեզուն և խոսքը չի կարելի պատկերացնել որպես կողք-կողքի դրված երևույթներ՝ լեզու-խոսք, խոսք, խոսք... հաջորդականությամբ, այլ խոսքի հետ միահյուսված և նրան փոխհաջորդող՝ լեզու-խոսք-լեզու-խոսք... հաջորդականությամբ: Խոսքի մեջ շատ կրկնվողը և հիշվողը դառնում է լեզվի համար բնորոշ, քիչ կրկնվողը՝ անցողիկ: Այլ կերպ ասած՝ լեզուն հնարավորություն է տալիս մարդուն խոսել, խոսելը հարստացնում և հաստատում է լեզուն. լեզվա-

Ական միավորը, ստանալով անմիջականություն, դառնում է պրոցես և հանդես գալիս որպես խոսքի միավոր, խոսքի միավորը զրկվելով անմիջականությունից վերածվում է լեզվական միավորի. լեզուն կոդ և կառուցվածք համարելը պայմանական է. լեզուն միայն կոդ չէ, այլ նաև հաղորդելի միավորների անընդհատ փոփոխվող և հարստացող ամբողջություն. լեզուն միայն կառուցվածք չէ, այլ նաև կառուցվող տարրերի անընդհատ փոփոխվող ամբողջություն: Այս առումով մեր պատկերացումը տարբեր է կառուցվածքային լեզվաբանության հիմնական պատկերացումից և ցույց է տալիս, որ ամերիկյան նկարագրական լեզվաբանությունը միայն խոսքը չէ, որ ուսումնասիրում է. այն իրականում քննում է և՛ խոսքը, և՛ լեզուն, բայց անմիջական փոխհաջորդման մեջ (խոսքի միջոցով որոշում է լեզվականը). այնինչ եվրոպական ստրուկտուրալիստները լեզուն առանձնացնում են և դնում խոսքի կողքին: Ինչպես կտեսնենք, այս եզրակացությունը խիստ կարևոր է մեր հետագա քննության համար և իր հաստատումն է գտնում մեքենական թարգմանության պրոցեսի մեջ:

Լեզվի և խոսքի գլխավոր հակասություններից մեկն էլ լեզվի կառուցվածքայնության (ծավալայնության) և խոսքի գծայնության մեջ է:

Լեզվի և խոսքի տարբերակման կապակցությամբ հարկավոր է նկատի առնել, որ տարաժամանակայնությունը (դիախրոնիան) բացարձակ բնույթ ունի, համաժամանակայնությունը (սինխրոնիան)՝ հարաբերական: Լեզվի գործադրման, այսինքն՝ խոսքի դեպքում տեղի է ունենում համաժամանակյա միավորների ներքաշում պրոցեսի մեջ, դրանց տարաժամանակացում. խոսքը որպես պրոցես ծավալվում է ժամանակի որոշ հատվածում: Սակայն դինամիկը չպետք է նույնացնել պատմականի հետ: Եթե խոսքը դինամիկ երևույթ է, ապա այն ինքնին առնված զուրկ է պատմությունից. բառիս բուն իմաստով այն անցողիկ երևույթ է՝ ամրագրելի ու համեմատելի այլ խոսքերի հետ այն չափով, որ չափով ամրագրվում է որպես լեզու: Իսկական պատմության կրողը լեզուն է, որի առանձին դրսևորումները կարող են համեմատվել ըստ հաջորդականության: Միաժամանակ՝ խոսքը անընդհատ բնույթ ունի (դադարները նույնպես իմաստի կրողներ են և մտնում են խոսքի մեջ որպես անհրաժեշտ տարր), լեզուն՝ ընդհատական (դիսկրետային):

Լեզվի և խոսքի տարբերակումը իր զուգահեռն ունի դիտակցության և մտածողության տարբերակման մեջ: Այսպիսով, հիշատ կլի-

նի խոսել ոչ թե լեզվի և մտածողության, այլ լեզվի և գիտակցության, համապատասխանաբար նաև խոսքի և մտածողության կապի մասին։ Եվ իրոք։ Մտածողությունը, ինչպես խոսքը, անմիջական և պրոցեսային բնույթ ունի, գիտակցությունը՝ ոչ. այն ոչ այլ ինչ է, եթե ոչ որոշ առկա վիճակ։ Մտածողության յուրաքանչյուր ակտ հենվում է գիտակցության վրա և վերածվում գիտակցության փաստի։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ լեզվի մեջ կարևոր դեր են խաղում և ոչ գիտակցական երևույթները (համմտ. ձայնարկությունները)։

5) Նախադասությունը այն միավորն է, որի մեջ հանդես են գալիս լեզվական բոլոր իմաստները և ձևերը։ Այդ պատճառով էլ ընդհանրական լեզվական կաղապարը կարող է լինել առաջին հերթին նախադասության կաղապար. այդ կաղապարից կարող են որոշ փոխակերպմամբ ստացվել մյուս կարգի կաղապարները։ Այս առումով նախադասության կաղապարը կլինի լիակաղապար մյուս կարգի (մասնակի) կաղապարների համար, հանդես կգա որպես ընդհանուր լեզվական կաղապարի հիմք։ Սակայն, ինչպես նշեցինք, նախադասությունն ինքը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրական աշխարհի որևէ կողմի լեզվական դրսևորումը։ Ուստի և նախադասության կաղապարի կառուցումը կարելի է սկսել միայն և միայն իրական աշխարհի հարաբերությունների և իրերի հատկությունների ուսումնասիրություններից։

Վերջին ժամանակներս մաթեմատիկայի մեջ նույնպես միտում կա դուրս գալու մաթեմատիկայի լեզվի (տեսության) վերացական առարկաների սահմանից և քննություն սկսելու առանձնակի իրական առարկաներից[8]։

Այսպիսով, մեր կառուցելիք կաղապարը կարելի է կոչել ընդհանրական նյութա-համակցային կաղապար (универсальная субстанционально-комбинаторная модель).

Յուրաքանչյուր նախադասության բովանդակություն ստացվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ որոշ կողմերի դրսևորմամբ։ Օբյեկտիվ առումով նախադասության բովանդակությունը իրական աշխարհի որևէ հարաբերության արտահայտություն է՝ լինի այդ հարաբերությունը նյութական թե հոգեկան բնույթի. հոգեկան բնույթի լինելու դեպքում այն հանդես է գալիս որպես հաղորդման օբյեկտ, այսինքն՝ սուբյեկտիվն օբյեկտիվանում է։ Սուբյեկտիվ առումով նախադա-

---

[8] Համմտ. Л. А. Рвачев, Математика и семантика, Киев. 1966.

սությունը բնորոշվում է որոշ իրադրությամբ (սիտուացիայով), որը ոչ այլ ինչ է, եթե ոչ հաղորդման հարաբերությունը դեպի արտահայտողը (հաղորդողը), հաղորդակիցը, հաղորդման առարկան և հաղորդման ընդհանուր շրջանը (կոնտեքստը)։ Այսպիսով, նախադասության մեջ արտահայտվող կարգերը (կատեգորիաները) և՛ օբյեկտիվ-հաղորդային, և՛ սուբյեկտիվ-հաղորդակցային բնույթի են։ Հարցը բարդանում է նրանով, որ հաղորդողն ու հաղորդակիցը կարող են լինել հաղորդման առարկաներ, և, այսպիսով, ողջ հաղորդումն ստանում է սուբյեկտիվ-իրադրական երանգ, դժվարացնում հաղորդման օբյեկտիվ կատեգորիաների բացահայտումը։

Նախադասության օբյեկտիվ բովանդակությունը որոշվում է նախադասության հնարավոր անդամների ամենատարբեր համակցություններով (կոմբինացիաներով)։ Այսպիսով, նախադասության օբյեկտիվ բովանդակության լիակատարը կազմելու համար պետք է թվել նախադասության բոլոր հնարավոր անդամները՝ բառերի և բառակապակցությունների բոլոր հնարավոր գործառությունները։ Այս անելու դեպքում մենք կստանանք բոլոր ածականների և բայերի օբյեկտիվ տիպերը, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ առարկաների զանազան տարբերությունների և հարաբերությունների դրսևորումներ։ Սրանցից էլ կարելի է ստանալ գոյականներ ու մակբայներ։

Ինչպես նշվել է, կաղապարման պրոցեսը կունենա երկու փուլ։ Առաջին փուլում որոշ հատկանիշների հիման վրա կառանձնացվեն գոյաբանական ընդհանուր կարգեր, որոնք վերջին հաշվով նախադասության անդամների նշանակումներ են. մեր ըմբռնմամբ՝ լայն առումով, նախադասության անդամների և գոյաբանական կարգերի (կատեգորիաների) գաղափարները կհամընկնեն. հմմտ. սուբյեկտ, օբյեկտ, տարածություն, ժամանակ, պատճառ, նպատակ, պայման և այլն՝ մի կողմից և ենթակա, խնդիր, տեղի պարագա, ժամանակի պարագա, պատճառի, նպատակի, պայմանի պարագաներ և այլն՝ մյուս կողմից։ Այս կատեգորիաներն ստանալուց հետո կարելի է կառուցել նախադասության ընդհանուր կաղապարը, որտեղ իրար կհաջորդեն հիշյալ կարգերը՝ տալով տարբեր կարգի համակցություններ։ Այս համակցությունների միջուկները կլինեն ընդհանրական բայատիպերը, որոնք կոնկրետ լեզուներում կիրականանան տարբեր չափերով և տարբեր հոմանիշներով։ Սրանց հետ կմիանան սուբյեկտիվ-իրադրական կարգերը։

Գոյաբանական (օբյեկտիվ-հաղորդային) կարգերն ստանալու համար պետք է ընտրել առարկաների ամենաէական հատկու-

թյունները այնպես, որ դրանք չխաչաձևվեն[9]*։ Կարելի է նշել այդպիսի հինգ հատկանիշ։*

1) **Պարունակայնություն.**— *Յուրաքանչյուր առարկա* (obiectum) *ամենից առաջ բնորոշվում է որոշ պարունակությամբ (բովանդակությամբ)։ Եթե օբյեկտը որպես հատկանշվող նշանակենք* M*-ով, իսկ պարունակությունը (պարունակվող լինելը) որպես հատկանիշ* (m)՝ a*-ով, ապա պարունակայնությունը (օբյեկտի առնվելը իր պարունակությամբ) կարելի է արտահայտել* M(a) *բանաձևով։*

2) **Բաղկացականություն.**— *Յուրաքանչյուր առարկա կարող է հանդես գալ որպես որոշ բաղկացություն (ամբողջ)։ Եթե բաղկացությունը նշանակենք* b*-ով, ապա* M(b) *բանաձևով կարելի է արտահայտել բաղկացականությունը՝ առարկայի (օբյեկտի) հանդես գալը որպես բաղկացություն։*

3) **Հաշվականություն (ֆանականություն).**— *Ամեն առարկա (օբյեկտ) կարող է առնվել որպես հաշվական միավոր՝ մի այլ առարկայի չափը, կարգը և այլն որոշելու համար։ Եթե թիվը նշանակենք* c*-ով, ապա* M(c)*-ով կարելի է արտահայտել առարկայի (օբյեկտի) հաշվականությունը։*

4) **Վիճակայնություն.**— *Ամեն մի առարկա բնորոշվում է որոշ վիճակով, ընդ որում առարկայի ամեն մի վիճակ (առարկայական վիճակ) կարող է հանդես գալ որպես ինքնուրույն առարկա (օբյեկտ)։ Վիճակը* (status) *նշանակելով* d*-ով՝* M(d) *բանաձևով կարող ենք արտահայտել վիճակայնությունը՝ առարկայի հանդես գալը որպես վիճակ։*

5) **Նշանայնություն.**— *Վերջապես, ամեն մի առարկա (օբյեկտ) կարող է հանդես գալ որպես մի այլ առարկայի փոխարինող-նշան։ Նշանակելով նշանը* e*-ով՝* M(e) *բանաձևով կարող ենք արտահայտել նշանայնությունը՝ առարկայի հանդես գալը որպես նշան։ Նշանը նեղ առումով՝ հանդես է գալիս որպես լեզվի նշան (առաջին հերթին որպես հնչանշան)։*

Ի մի բերելով առարկայի հատկությունների բանաձևերը՝ մենք կունենանք հետևյալ ընդհանուր բանաձևը՝

M (a (b (c (d (e))))) *կամ*
M (a + (b + (+c (+d (+e))))):

---

[9] *Աքսիոմատիկ-արտածական համակարգերին ժամանակակից տրամաբանությունը և մաթեմատիկան ներկայացնում են երեք հիմնական պահանջ՝ անհակասականություն, լիություն (տվյալ աքսիոմներից տվյալ բնագավառի բոլոր հնարավոր նախադասությունների արտածման հնարավորություն) և փոխանկախություն (մեկի մյուսից չարտածվելու պայման)։*

Դժվար չէ հաշվել, որ առարկայի՝ բևեռված հատկությունների առկայության և բացակայության հաշվառմամբ կունենանք $2^5=32$ կարգ (կատեգորիա)։

Աղյուսակը չբարդացնելու և կախումների ծառը խիստ չմեծացնելու նպատակով առայժմ մի կողմ թողնենք վերջին՝ նշանայնության, հատկությունը. միայն թե հիշենք, որ նշանը որպես իրական աշխարհի դրսևորում ունի միևնույն հատկությունները, ընդ որում գրային նշանը՝ միայն առաջին երեքը, հնչական նշանը՝ նաև վիճակայնությունը։ Ավելի հանգամանորեն այդ մասին կխոսվի հետո։ Ֆիզիկական իրերի հատկությունների և համապատասխան գոյաբանական կարգերի (կատեգորիաների) փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 1-ին աղյուսակով (էջ 26)։

Այս նույն բանը կարելի է արտահայտել նաև կախումների ծառով, որտեղ, ի տարբերություն աղյուսակի, կարելի է ցույց տալ նաև միջակա կարգերը[10]։ Առայժմ տանք միայն առաջին երեք հատկությունների ծառը (գծագիր 1)՝ հիշելով, որ վիճակայնության դեպ-

Գծագիր 1



[10] Եզրային կարգերի թիվը հաշվվում է 2^n բանաձևով (n-ը հատկությունների քանակն է), եզրային և միջակա բոլոր կարգերի թիվը՝ 2.2^n-1 բանաձևով։

Աղյուսակ 1

Առարկայի հատկություններ	Գոյաբանական կարգեր (կատեգորիաներ)																
	Բազմակատարություն	Ֆունկցիա	Ինքնակատարելագործվող համակարգ (ինքնակարգավորվող համակարգ)	Կառուցվածք	Ինքնակարգավորվող համակարգ (ինքնակարգավորվող համակարգ)	Կարգ	Գաղափարականություն	Կապ	Տեղեկություն	Զարգացում	Էներգիա (ուժ)	Չափ	Փոխադրում	Տեղ	Ներկայություն (գոյություն)	Ամբողջություն
Պարունակայնություն M(a)	+	+	+	+	+	+	+	+	−	−	−	−	−	−	−	−
Բացակայականություն M(b)	+	+	+	+	−	−	−	−	+	+	+	+	−	−	−	−
Հաշվականություն M(c)	+	+	−	−	+	+	−	−	+	+	−	−	+	+	−	−
Վիճակայնություն M(d)	+	−	+	−	+	−	+	−	+	−	+	−	+	−	+	−

քում եռաչափ ծավալի փոխարեն հանդես կգա միաչափ գծայնությունը:

Գոյաբանական այս կարգերը հավասարապես կիրառելի են ոչ միայն բովանդակության, այլև արտահայտության պլանների նկատմամբ, որովհետև արտահայտության պլանը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրական աշխարհի մի մասնակի դրսևորումը. թե՛ հնչանշանները, թե՛ գրանշանները, թե՛ շարժանշանները վերջին հաշվով իրական աշխարհի մասնակի դրսևորումներն են, և նրանց տարբերությունները՝ չափի, ձևի, տեղի, ուղղության և այլ կարգի տարբերություններ:

Եթե նկատի առնենք, որ՝ ա) նախադասության բովանդակությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ առաջին հերթին նյութական առարկաների իրական հարաբերության (շարժման, գործողության) կամ մտավոր հարաբերության (համեմատության, տարբերացման) նշանակում, բ) գոյաբանական հիշյալ կարգերից ոչ-վիճակայինները հանդես են գալիս որպես հարաբերության որոշիչներ, իսկ վիճակայինները՝ որպես հարաբերությունների (որոնք առնվում են իբրև վիճակներ) հարաբերությունների որոշիչներ, ապա կարելի է առաջնային (միչուկային, սկզբնային) նախադասությունների համար տալ հետևյալ ընդհանուր բանաձևը՝

$$[(R)r^{1,\dots,16}(R)]\ r_1^{17,\dots,32}\ [(R)\ r^{1,\dots,16}(R)],$$

որտեղ R-ը հարաբերվող եզրն է, r-ը՝ հարաբերությունը, r_1-ը՝ հարաբերությունների (որպես վիճակների) հարաբերությունը:

Նկատի ունենալով, որ՝ 1) յուրաքանչյուր առարկա բնութագրվում է որոշ վիճակով, 2) յուրաքանչյուր հարաբերություն հանդես է գալիս որպես որոշ վիճակ, 3) նշանայնությունը, որպես առարկայական աշխարհի՝ մեզ համար հատուկ կարևորություն ունեցող դրսևորում, կարող է ներկայացվել առանձին հանգամանալից սխեմայով (կաղապարով),— այս բանաձևի մեջ կատարենք մասնակի փոփոխություններ. 1) առաջին կարգի հարաբերությունները ներկայացնենք որպես վիճակներ, և առարկան ու վիճակը դիտենք իրարից անբաժան. 2) վիճակը արանով իսկ դիտենք որպես օբյեկտ (հարաբերվող եզր) և ոչ թե որպես հարաբերություն, իսկ հարաբե-

---

այսպես, 5 հատկության դեպքում եզրային կարգերի թիվը $2^5=32$ է, բոլոր կարգերինը՝ $2.2^5-1=63$:

րությանը տանք անկախ արժեք. 3) այս կապակցությամբ ուշադրության կենտրոնում պահենք օբյեկտն իր վիճակով և, հանենք հարաբերության եզրերից մեկը. 4) առայժմ հանենք նշանայնության հետ կապված կարգերը և դրանք քննենք ընդհանուր դոյաբանական կարգերի քննությունից հետո։ Այս դեպքում, նկատի ունենալով, որ հարաբերիչ բառերը (բայերը, կապերը, շաղկապները) սովորաբար արտահայտում են երեքից ոչ ավելի առարկայական եզրերի (լինեն դրանք եզակի թե հոգնակի օբյեկտներ) և երկուսից ոչ ավելի վիճակային եզրերի հարաբերություն, կունենանք $(Rr(Rr))RS^{1,\dots,8}(rS^{1,\dots,8})$ *մասնակի բանաձևը, որտեղ* R*-ը առարկան է,* S*-ը՝ վիճակը,* r*-ը՝ հարաբերությունը։*

Վիճակի և հարաբերության այսպիսի տարբերակումից հետո մեզ համար հարկավոր է պարզել հարաբերության կարգերի բնույթը (հարաբերության տարբեր դրսևորումները)։ Կարելի է տարբերել հարաբերության երկու դրսևորում՝ համեմատություն և բուն հարաբերություն։ Պայմանավորվենք հարաբերությունը լայն առումով՝ որպես համեմատության և բուն հարաբերության միասնություն՝ կոչել վերաբերություն, նրա երկու դրսևորումները՝ համեմատություն և հարաբերություն։ Հասկանալի է, որ համեմատությունը հիմնական սուբյեկտիվ-իմացական ակտն է (վերջին հաշվով նաև նախադասության հանգույցը), հարաբերությունը՝ օբյեկտիվ վերաբերություն։ Համեմատությունը նշանակենք =*, հարաբերությունը (նեղ առումով)՝* → *նշաններով։ Այս դեպքում* R=R*-ը կարտահայտի օբյեկտների,* S=S*-ը՝ վիճակների նույնությունը,* $S^1=S^1$, $S^2=S^2\dots S^8=S^8$ *բանաձևերը՝ տվյալ դոյաբանական կատեգորիայով որոշվող վիճակների նույնությունը (դիրքի կամ տեղի, ուղղության, չափի, ձևի և այլն)։ Ոչ նույնությունը (տարբերությունը) կարտահայտվի* ≠*, հարաբերության բացակայությունը («անհարաբերությունը»)՝* —/→ *նշանով։ Համեմատությունը և հարաբերությունը իրարից անկախ են, այսինքն՝* =*-ը չի բացառում* →*-ը և ընդհակառակն. և՛ նույնական, և՛ տարբեր օբյեկտները կարող են հարաբերվել (օբյեկտը կարող է հարաբերվել և՛ ինքն իր, և՛ այլ օբյեկտների հետ)։*

Ըստ վերաբերության տիպերի քննենք $(Rr(Rr))RS(rS)$ *բանաձևի տարբեր դրսևորումները։ Այս կապակցությամբ նշենք, որ վերաբերությունը շարակարգային բնույթ ունի, որ, ինչպես բազմիցս նշվել է մեր կողմից, կարող է վերածվել հարացուցային առանձին եզրերի։*

R = R *համեմատության յուրաքանչյուր եզրը կարող է բնութագրվել* = *հարաբերությամբ և համեմատվող եզրով, այսինքն՝ մենք կարող ենք առանձնացնել*

1) R(=)
2) (=)R
3) R(=R)
4) (R=)R

Հարացուցային միավորները, որոնց համար փակագծերի մեջ առնված հարաբերիչները և հարաբերվող եզրերը կարող են ծառայել որպես տարբերիչներ (որոշիչներ): Այսպես, «Շունը է կենդանի» նախադասության մեջ, որտեղ շունը և կենդանի բառերը համեմատվող եզրերն են, իսկ է-ն՝ համեմատիչը (=-ի արժեք ունեցող), եզրերից յուրաքանչյուրը կարող է բնութագրվել և տարբերվել (որոշվել) հետևյալ կերպ՝

1) Շունը (է).
2) (է) կենդանի.
3) Շունը (է կենդանի).
4) (Շունը է) կենդանի:

Առաջին դեպքում կունենանք ենթակա, երկրորդ դեպքում՝ ստորոգելի, երրորդ դեպքում՝ որոշյալ (տարբերյալ), չորրորդ դեպքում՝ որոշիչ (տարբերիչ), ընդ որում և փակագծերում առնված միավորները, և բերված անվանումները պետք է հասկանալ լայն առումով. առանձին առնված ենթակայի, ստորոգելիի, որոշչի և որոշյալի նիշերը կարող են լինել քերականական արտահայտության տարբեր միջոցներ (բառեր, մասնիկներ, շարադասություն, առոգանություն):

R = R *վերաբերությունը (համեմատությունը) երկու էական հատկություն ունի. ա) եզրերի քանակի փոփոխությունը որակական տարբերություն առաջ չի բերում. բ) այդ հարաբերությունը համարժեքային է* (эквивалентный), *այսինքն՝ անդրադարձ է, համամասն և փոխանցելի:*

Այլ է դրությունը R → R *վերաբերության (հարաբերության) դեպքում: R → R հարաբերությունը կարող է տալ հետևյալ չորս հարացուցային եզրերը.*

1) R (→)
2) (→) R
3) R (→ R)
4) (R →) R

Եթե սա մեկնաբանենք որպես հատկացման հարաբերություն (կախման դրսևորում), ապա օրինակ կարող է ծառայել «Հակոբն ունի գիրք» նախադասությունը, որ կունենա հետևյալ չորս եզրերը.

1) Հակոբն (ունի).
2) (ունի) գիրք.
3) Հակոբն (ունի գիրք).
4) (Հակոբն ունի) գիրք:

Փոխակերպման դեպքում առաջին եզրը կլինի հատկացուցիչ («ունեցող»՝ Հակոբի), երկրորդը՝ հատկացյալ, երրորդը՝ տվյալ հատկացյալով բնութագրվող («գիրք ունեցող», «որ գիրք ունի»), չորրորդը՝ տվյալ հատկացուցչով բնութագրվող («Հակոբին պատկանող», «որ Հակոբին է պատկանում»):

Քանի որ միևնույն հարացուցային եզրը կարող է բնութագրվել հակադիր հարաբերություններով, ուստի և մեկ առարկան որպես հարաբերության եզր բնութագրելու դեպքում մենք կարող ենք փոխել ոչ թե հարաբերիչի դիրքը (R→ և →R ձևով), այլ շրջել հարաբերիչը (→R և ←R կամ R→ և R← ձևով). այլ կերպ ասած՝ ոչ թե հարաբերվող եզրերը կտեղափոխվեն, այլ կփոխվի հարաբերության ուղղությունը: Այսպիսին է վիճակը նախադասության կառուցման դեպքում, երբ ենթական մնում է կենտրոն, և նրա հարաբերությունները որոշվում են հարաբերվող անդամների ու նրանց հարաբերության ուղղության տարբերությամբ: Այսպիսով, նախադասության յուրաքանչյուր ոչ կենտրոնական անդամ կորոշվի → և ← հարաբերիչներով, որոնք կտան հետևյալ չորս եզրերը՝ 1) →, 2) ←, 3) ⇄ (և՛ →, և՛ ←), 4) — (ո՛չ → և ո՛չ ←). վերջինս հարաբերության բացակայությունն է, օրինակը՝ բացարձակ դիրքում, ուստի և հանենք քննությունից: Կունենանք →, ← և ⇄ հարաբերիչները, որոնք եզրերի նույնության և տարբերության դեպքում կտանեն հետևյալ տեսքը.

1) R=R (եզրերի նույնության կամ մեկ եզր). այս դեպքում R→R, R←R և R⇄ հարաբերությունները կունենան միևնույն արժեքը՝ առարկայի ինքնատպվածություն, ինքն իրենից

կախում և այլն, բոլոր դեպքերում մեկ եզրը կունենա R) (կամ) R) տեսքը:

2) R≠R կամ R—R$_1$ (եզրերի տարբերություն կամ երկու եզր). այս դեպքում կունենանք՝ ա) R(→(R$_1$)), բ) R(←(R$_1$)) և գ) R (⇄(R$_1$)) հարացուցային եզրերը:

3) R≠R≠R կամ R—R$_1$—R$_2$ (երեք տարբեր եզր). այս դեպքում կանխենք տարբեր համակցություններ (R→R$_1$→R$_2$, R→R$_1$←R$_2$, R→R$_1$⇄R$_2$ և այլն). սրանցից առաջին և վերջին եզրերի հարացուցային բնութագրերը կտարբերվեն նրանց հարաբերությամբ որոշվող եզրերի բնութագրերից միայն միջնորդվածությամբ. ստահ և միջին եզրի համար էլ միայն →R→ դրանորումը կտա նոր որակ. մյուսները կտան միայն քանակական տարբերություններ (կախման դեպքում՝ →R←՝ կրկնակի. կախում, ←R→՝ կրկնակի կախանակություն, ←R←՝ առաջին և վերջին եզրերի հարաբերության ուղղության փոփոխություն և այլն):

Այսպիսով, եթե ուշադրության կենտրոնում գտնվող օբյեկտը («ենթականը») դիտենք որպես հարաբերության ձախակողմյան եզր, ապա աջակողմյան հարացուցային եզրերը կբնութագրվեն 1) =R, 2)) R, 3) →R, 4) ←R, 5) ⇄R կամ ←→R և 6) →R→ կամ →→R ձևով: Եթե →R→ եզրը պայմանականորեն մեկնաբանենք որպես «ո՛չ-ո՛չ» հարաբերությամբ եզր, ապա վերջին չորսը կբնութագրվեն որպես երկու հատկանշով (→ և ←) միավորված չորս եզր՝ 1) →, 2) ←, 3) ⇄ կամ ←→ (և՛-և՛), →→ (ո՛չ-ո՛չ)):

Իրադրա-հաղորդակցական առումով մենք կունենանք հաղորդման վրա մակաշերտվող այնպիսի հատկանիշներ, որոնք որոշվում են հաղորդակցման կոնկրետ պայմաններով՝ հաղորդակցման անմիջական իրադրությամբ, հաղորդակցվողների վերաբերմունքով, հաղորդման կոնտեքստով, այսինքն՝ տվյալ հաղորդումը ներկայացնող նախադասության նախադասություններով: Վիճակակիր առարկաների դեպքում սրանք հանդես են գալիս որպես դեմք և որոշյալ-անորոշություն, վիճակի դեպքում՝ որպես եղանակ և հարց ու պատասխան: Եթե այլ դեպքերում ելակետ (համեմատության եզր) են ծառայում օբյեկտիվ աստիճաններ և երևույթներ, ապա այս դեպքում իբրև այդպիսիք հանդես են գալիս հաղորդակցման մասնակիցներն ու հանգամանքները:

Իրադրա-հաղորդակցական կարգերի ավելի հանգամանալից ընկալությունը թողնելով ներկա աշխատության համապատասխան

հատվածներին՝ այստեղ նշենք, որ այդ կարգերը բուն լեզվական կարգեր են։ Դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ միևնույն դոյաբանական կարգերի այնպիսի դրսևորումները, որտեղ հարաբերության եզրեր են ծառայում հաղորդակցվողները կամ հաղորդողի հոգեվիճակները (ընդհանուր ոչ-վիճակային և վիճակային կարգերի իրադրա-կոնտեքստային դրսևորումները)։ Բոլոր ձայնարկությունները և եղանակային բառերը (լայն առումով) կարող են վերածվել համապատասխան գլխավոր նախադասությունների, որոնց ենթական սովորաբար խոսողն է, և որոնց համար երկրորդական նախադասություններն են բուն հաղորդումն արտահայտող նախադասությունները. հմմտ. «Վա՛հ, Հակոբն արդեն եկե՞լ է» → [11] «Ես զարմանում եմ, որ Հակոբն արդեն եկել է», «Բնականաբար, այս հարցը դրվում է ընդհանուր քննության» → «Պետք է բնական համարել (=Ես բնական եմ համարում՝), որ այս հարցը դրվում է ընդհանուր քննության», «Այո՛, Հակոբը գալու է» → «Ես հաստատում եմ, որ Հակոբը գալու է» և այլն։ Այսպիսի կապակցություններում գլխավոր նախադասությունները ձևականորեն են գլխավոր. բուն հաղորդումը պարունակում են երկրորդական նախադասությունները, և այդ պատճառով էլ այս տիպի շատ գլխավոր նախադասություններ դառնում են կամ միջանկյալ բնույթի, կամ անցնում եղանակային բառերի շարքը. «Ես կարծում եմ, որ Հակոբը սխալվում է» = «Հակոբը, կարծեմ (կարծես, կարծես թե, իմ կարծիքով), սխալվում է»։

Վիճակային իրադրա-հաղորդակցական կարգերին հակառակ ոչ-վիճակայինները՝ դերանունները և հոդերը, կարող են արտահայտվել երկրորդական նախադասություններով և անձերի ու իրերի՝ խոսքի նկատմամբ ունեցած հարաբերություններն արտահայտող բառերով՝ «Ես (=անձը, որ խոսում է, խոսողը) գնացի», «Ինչ-որ մարդ (=մարդ, որին ես չեմ ճանաչում, որ ինձ հայտնի չէ) եկավ» և այլն։

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ իրադրա-հաղորդակցական կարգերն արտահայտող բառերը, բառախմբերը և մասնիկները կարելի է դիտել որպես հաղորդակցման եզրեր, հաղորդողի վերաբերմունքն ու գնահատումն արտահայտող նախադասությունների յուրատեսակ փոխակերպումներ։ Եթե այս բոլորն առնենք անկախ փոխակերպումից, կունենանք դոյաբանական կարգերի ընդ-

---

11 Նշանն այստեղ օգտագործված է փոխակերպում (փոխարկելիություն) ցույց տալու համար։

հանուր քանաձևի քառակի կրկնված և փոխհարաբերված արտահայտությունը, որոնցից մեկը կարտահայտի հաղորդողի հոգում կատարվածը, երկրորդը՝ հաղորդման բովանդակությունը (բովանդակության գոյաբանական պլանը), երրորդը՝ հաղորդման նյութական արտահայտությունը (արտահայտության պլանը) և չորրորդը՝ հաղորդակցի հոգում կատարվածը։ Հաղորդման ընդհանուր կառուցվածքը կարելի է արտահայտել 2-րդ և 3-րդ գծագրերով (էջ 33 և 34), թեև հաղորդման մեջ այդ պլանները կամ զուգակցվում են (արտահայտության և բովանդակության պլանները) և հանդես գալիս միասին, կամ հաջորդում են միմյանց, կամ շղթայակցվում (իրադրա-հաղորդակցական մասերը ներառվում են բուն հաղորդման մասի մեջ).

Գծագիր 2

Նյութական բովանդակություն



Նյութական արտահայտություն

Վերևում բերված կարգերի քննության ժամանակ մենք հիմք ընդունեցինք մի սկզբնական մաքուր «իդեալական» վիճակ, որտեղ գոյականն արտահայտում է նյութական առարկա, r-ը՝ հարաբերություն և հատկանիշ, r_1-ը՝ հարաբերության հարաբերության և հատ-



կանշի հատկանիշ։ Սակայն իրականում լեզվում հնարավոր են բազմազան անցումներ և փոխակերպումներ. գոյական անունը կարող է արտահայտել առարկայացված (ինքնակայացված) հատկանիշ և վիճակ (կարմրություն, լույս), հատկանիշը՝ նյութական առարկա՝ առնված որոշ հարաբերությամբ (տնայինն) և այլն։ Այս կապակցությամբ հարկավոր է տարբերել գործառական կարգեր՝ գոյական, որոշիչ (ածական՝ այս բառի լայն առումով) և մակորոշիչ (մակբայ՝ այս բառի լայն առումով)։ Այս երեք կարգերը միմյանցից տարբերվում են լեզվական կախմամբ, ուստի և կարող ենք տարբերել կախունակ և կախյալ բառեր, այսինքն՝ հիմք ընդունել կախունակության և կախյալության հատկանիշները (աղյուսակ 3, էջ 35)։

Գոյաբանական և գործառական կարգերի փոխհարաբերությունը կարելի է արտահայտել $\{[(R)r(R)]r_1[(R)r(R)]\} \rightleftarrows (Sb \rightleftarrows Ad \rightleftarrows Adv)$ *կամ, որ նույնն է,* $\{[(R)r(R)]r_1[(R)r(R)]\} \rightleftarrows (M \rightleftarrows m\, m \rightleftarrows m_1)$ *բանաձևերով, որտեղ* Sb*-ն նշանակում է գոյական (լայն առումով),* Ad*-ը՝ ածական (լայն առումով),* Adv*-ը՝ մակբայ (լայն առումով),* M*-ը՝ հատկանշվող (գոյական),* m*-ը՝*

Հատկանիշներ	Դասրգեր			
	Ածական (որոշիչ)	Գոյական	Մակբայ (մակորոշիչ)	—
Կախումնակություն	+	+	—	—
Կախյալություն	+	—	+	—

հատկանիշ, m_1-ը՝ հատկանիշի հատկանիշ։ Սակայն հիշյալ բանաձևերը չեն պարզում գործողությունների իրական հաջորդականությունն ու աստիճանականությունը։ «Իդեալական» վիճակում (բուն, նախնական գործածությամբ) R-ը համապատասխանում է M-ին (Sb-ին), r-ը՝ m-ին (Ad-ին), r_1-ը՝ m_1-ին (Adv-ին)։ Մեխանիզմի գործողության հետևանքով հարաբերվող եղրը կարող է դառնալ գոյական, հետո փոխվել ածականի և հանդես գալ որպես հարաբերիչ. հարաբերությունը կարող է դառնալ հատկանիշ, հետո փոխվել գոյականի և հանդես գալ որպես հարաբերության եղր և այլն։ Ավելի ճիշտ կլիներ հիշյալ բանաձևերն արտահայտել հետևյալ ձևով՝ $\{[(R)\, r\, (R)] \rightleftarrows (M \rightleftarrows m)\} \rightleftarrows \{[(r)\, r_1\, (r)] \rightleftarrows (m \rightleftarrows m_1)\}$։

Իդեալական վիճակով r-ը կարտահայտի կապային և համապատասխան բայական իմաստ (մոտ է, մոտենում է), r_1-ը՝ շաղկապական իմաստ, R-ը՝ նյութական առարկա, M-ը՝ գոյական, m-ը՝ որոշիչ (հատկանիշ), m_1-ը՝ մակորոշիչ (հատկանշի հատկանիշ)։ Մեխանիզմի գործողությունը հանգեցնում է մի վիճակի, երբ M-ի, m-ի և m_1-ի նախնական արժեքները փոխվում են (հմմտ. աշակերտ, աշակերտական, աշակերտաբար. գեղեցիկ, գեղեցկություն, գեղեցկաբար և այլն) և ամեն մի լեզվում նախնական իմաստների բացահայտումը դառնում է արտակարգ դժվար։

«Ածական» և «մակբայ», «որոշիչ» և «մակորոշիչ» անունների տակ չպետք է հասկանալ անպայման բառային առանձնակի դրսևորումներ. այդ իմաստները կարող են արտահայտվել լրացյալների կազմում. հմմտ. ոճակ = փոխ տուն, տեր = տիրող (ունեցող) անձնավորություն և այլն։

Ամփոփելով մինչև հիմա ասվածները՝ կարելի է նշել, որ, այսպիսով, ընդհանրական լեզվական կաղապարի բնությունը պարու-

նակում է հետևյալ չորս կարգի հատկացությունների հետևողական բացահայտումը.

1. Գոյաբանական.— Այս դեպքում ամեն ինչ հանգեցվում է քննության առարկայի համար որոշակիորեն ընտրված հատկանիշների հիման վրա (պարունակականություն, բազկացուականություն, հաշվականություն, վիճակայնություն և նշանայնություն) երեսուներկու կատեգորիաների առանձնացմանը, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ իմաստային նվազագույն բաղադրիչներ։ Ընդհանրապես սրանց մեջ կարելի է առանձնացնել առաջին հերթին առաջին երեք հատկանշի հիման վրա ստացվող ութ կարգեր [կարգի, կախման, քանակի, կազմի, չափի, ձևի, տեղի (դիրքի) և ուղղության], որոնք հետևողականորեն կարելի է կիրառել առարկայական, վիճակային և նշանային եզրերի նկատմամբ։ Սակայն՝ քանի որ մենք ամեն ինչ հանգեցնում ենք օբյեկտը բնորոշող կատեգորիաներին, ապա սրանով իսկ թողնում ենք մեկ եզր, իսկ վիճակայնությունը և նշանայնությունը դիտում որպես այդ եզրը (որպես քննվող առարկան՝ «ենթական») բնութագրող լրացուցիչ հատկանիշներ։

2. Իմացաբանական-տրամաբանական.— Այս դեպքում նկատի են առնվում հիշյալ եզրերի միջև ըստ տվյալ կատեգորիաների հաստատվող հարաբերությունները։ Տարբերվում է այդպիսի երեք կարգի հարաբերություն՝ ա) համեմատություն (A—Ā)՝ երկու եզրով համեմատելի [A=(A)] և համեմատյալ [(A)=A], բ) հակադրություն (A→A)՝ երկու եզրով՝ հակադրելի [A→(A)] և հակադրյալ [(A)→A], գ) հակաժխտություն (A—A)՝ երկու եզրով՝ ժխտելի (դրականը) [A—(A)] և ժխտյալ (բացասականը) [(A)—A կամ Ā]։ Նկատի առնելով՝ ա) համեմատվող եզրերի նույնությունն ու տարբերությունը և բ) քննության առարկային («ենթակային») միշտ ակզբնական դիրք հատկացնելու հանգամանքով միայն հաջորդող եզրերը նշաններով օժտելու անհրաժեշտությունը, մենք մտցնում ենք →-ին հակադիր ←- նշանը և առաջնում վեց հնարավոր հարաբերիչ՝ 1) =, 2)), 3) →, 4) ← 5) ←→ (⇄) և →→ (→→)։

3. Լեզվա-գործառական.— Այս դեպքում նկատի են առնվում տվյալ հատկանիշներն ունեցող և հարաբերվող եզրերի՝ լեզվական-նշանային կազմիչների գործառական արժեքները. տարբերվում են ա) ինքնին հարաբերվող՝ «անկախ» միավորներ կամ «գոյականներ», բ) գոյականներից կախված՝ առաջին աստիճանի կախյալ միավորներ՝ «որոշիչներ» («ածականներ»՝ այս բառի լայն առումով)

և գ) «որոշիչներից» կախված՝ երկրորդ աստիճանի կախյալ միավորներ՝ «մակորոշիչներ» («մակբայներ»՝ լայն առումով)։ Հարկավոր է նկատի առնել, որ տվյալ դեպքում հաշվի են առնվում ոչ միայն բառերը, այլև մասնիկները և սրանց փոխարինող միջոցներով արտահայտվող միավորները. այսպես, «գոյական» ասելով պետք է հասկանալ ոչ միայն ես, fադաf, Պեատոս բառերը, այլև, օրինակ՝ գնաց-ի-ի՝ ի-ն, որ ցույց է տալիս առաջին դեմքի հարաբերվող եզր (=ես). «որոշիչ» ասելով պետք է հասկանալ ոչ միայն այս, ճոr, փոfr բառերը, այլև, օրինակ, տճակ-ի ակ-ը, որ կատարում է «որոշիչ» բառի դեր (տճ-ակ=փոfr տուն) և այլն։

4. Իրադրա-կոնտեքստային.— Այս դեպքում նկատի են առնվում այն տարրերը, որոնք ներկայացնում են առաջին երկու կարգի հասկացությունների իրականացումը ըստ հաղորդման իրադրության և կոնտեքստի, այսինքն՝ որոշում են առարկաների և վիճակների հարաբերությունը հաղորդման և կոնտեքստային շրջապատի նկատմամբ (դեմք, եղանակ, որոշյալ-անորոշություն, փոխարինում-ակնարկում)։

2. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Լեզվաբանության մեջ մինչև հիմա էլ հստակորեն չեն տարբերակում լեզվաբանական դիտակարգերն ու բաժինները։ Եթե այս դեպքում ևս կիրառենք մեր կողմից քննարկված ընդհանրական կարգերը (կատեգորիաները), ապա կարելի է ասել, որ դիտակարգերի առանձնացման համար պետք է հիմք ծառայի օբյեկտի տարածա-ժամանակային ընդհանրականության աստիճանը, բաժինների համար՝ օբյեկտի բաղկացականությունը։ Դիտակարգերի առանձնացման հատկանիշները կլինեն ընդհանրականությունը և պատմականությունը։ Ըստ այս հատկանիշների կարելի է տարբերել, եթե հաշվի չառնենք ընդհանուրին հակադրվող եզրերի (մասնավորման տարրեր աստիճանների) հնարավորությունը, 1) ընդհանրական պատմական և 2) ընդհանրական ստատիկ (ոչ-պատմական), 3) առանձնական պատմական և 4) առանձնական ստատիկ (ոչ-պատմական) դիտակարգեր։ Իհարկե, ամեն մի առանձնական լեզվաբանություն, եթե այդ անվան տակ հասկանանք առանձին լեզուների ուսումնասիրությունը, իր հերթին, որպես տվյալ լեզվի ընդհանրացած (սովորաբար գրական լեզվի ընդհանուր կառուցվածքի) քննություն, կարող է իր հերթին հակադրվել ավելի մասնակի բնույթ

ունեցող այնպիսի գիտակարգերի, ինչպիսիք են բարբառագիտությունը (լեզվի տարածական տարբերակների ուսումնասիրությունը) և ոճաբանությունը (լեզվի գործառական, իրադրական և անհատական տարբերակների ուսումնասիրությունը)։

Ընդհանրական և առանձնական լեզվաբանությունների միջև որպես «մասնակի» լեզվաբանություններ հանդես կգան լեզուների տիպաբանությունը և համեմատական լեզվաբանությունը։ Լեզուների տիպաբանությունը կամուրջ է ընդհանուր և առանձնական լեզվաբանությունների միջև. բուն տիպաբանությունը նպատակ ունի պարզելու, թե ինչպե՞ս են իրականանում ընդհանրական լեզվաբանության բացահայտած ընդհանուր իմաստային կարգերը (կատեգորիաները) արտահայտության պլանի տարբեր դրսևորումներով, այսինքն՝ իմաստների իրականացման հնարավոր տիպերը. լեզուների բնութաբանությունը (խարակտերոլոգիան) զբաղվում է այս կամ այն լեզվի կառուցվածքային ընդհանուր բնութագրությամբ՝ ի տարբերություն այլ լեզուների. այն կերպ ասած՝ լեզուների ընդհանուր տիպաբանությունը ընդհանրականից գնում է դեպի առանձինը, բնութագրաբանության ուշադրության կենտրոնում առանձինն է՝ ըստ մյուս առանձիններից նրա ունեցած տարբերության և ըստ ընդհանուր հնարավորությունների իրականացման տրվյալ եղանակների։ Բոլոր այն դեպքերում, երբ ուշադրության կենտրոնում իմաստային կողմն է (նրա իրականացման տիպերով), առանձնական լեզվաբանությունը կհամընկնի բնութագրաբանության հետ։

Համեմատական լեզվաբանությունը, ի տարբերություն լեզուների տիպաբանության, զբաղվում է լեզուների կառուցվածքանյութական (բաղկացական) ընդհանրությամբ. այնպիսի «մասնակի» լեզվաբանություններ, ինչպիսիք են հնդեվրոպականը (սրա մեջ էլ իրանականը, սլավոնականը, գերմանականը և այլն), որոնք գործ ունեն լեզուների որոշ խմբերի հետ ըստ ծագման ընդհանրության, փաստորեն առանձնական պատմական լեզվաբանություններ են, որոնք փորձում են համեմատության միջոցով վերականգնել իրենց ուսումնասիրության բուն առարկաները՝ մի ժամանակ գոյություն ունեցած որոշակի լեզվական կառուցվածքները։

Եթե նկատի առնենք, որ տիպաբանությունը ևս կարող է լինել պատմական և ոչ պատմական, ապա բուն ընդհանուր լեզվաբանությունը կունենա չորս հիմնական մասնագիտակարգ. 1. ընդհանրական քերականություն, որի նպատակն է լեզվի, որպես մարդու խո-

ողական կարողության ընդհանուր, բոլոր լեզուների համար կիրառելի սկզբունքների ուսումնասիրությունը. 2. ընդհանրական տիպաբանություն, որի խնդիրն է այդ ընդհանուր սկզբունքների և լեզուների առանձնահատկությունների փոխհարաբերության ուսումնասիրությունը. 3. ընդհանրական պատմական քերականություն, որի խնդիրն է լեզվի ծագման և զարգացման ընդհանուր սկզբունքների ուսումնասիրությունը. 4. ընդհանրական պատմական տիպաբանություն, որի խնդիրն է այդ ընդհանուր սկզբունքների և լեզուների զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Եթե ընդհանրական քերականությունը և ընդհանրական տիպաբանությունը կառուցվեն այնպես, որ ցույց տրվի լեզվական իմաստների և արտահայտության եղանակների աստիճանական բարդացման ուղին, այսինքն՝ տրամաբանականը համընկնի պատմականի հետ, ապա հիշյալ գիտակարգերը կամա թե ակամա կպարունակեն նաև ընդհանրական պատմական քերականությունը և ընդհանրական պատմական տիպաբանությունը:

Ամեն մի առանձին լեզվի ուսումնասիրություն չի կարող չհենվել ընդհանրական քերականության փաստերի վրա, մանավանդ, եթե դրանք կառուցված են ճիշտ կերպով և իրոք ընդհանրական բնույթ ունեն: Ընդհանրական և առանձնական քերականությունների նպատակները և խնդիրները չպետք է շփոթել: Մինչև այժմ ընդհանրական քերականության ուսումնասիրության բուն առարկան փաստորեն փոխարինվել է առանձին լեզուների՝ այս կամ այն լեզվաբանին հայտնի փաստերի զուգադրական նկարագրությամբ: Իսկական ընդհանրական քերականությունը պետք է ունենա հետևյալ կարևոր առանձնահատկությունները.

1) Այն կարող է կատարյալ լինել միայն արտածական (դեդուկտիվ) լինելու դեպքում, թեև, իհարկե, չի կարելի այս դեպքում չունենալ քիչ թե շատ լրիվ ինֆորմացիա և չատուգել արդյունքները մակածական (ինդուկտիվ) հանապարհով ձեռք բերված արդյունքներով: Ընդհանրական քերականությունը պետք է կառուցվի ոչ թե առանձին լեզուների հայտնի փաստերի հիման վրա, որոնք բոլոր դեպքերում էլ չեն կարող լիակատար լինել (միշտ էլ կարելի է ենթադրել լեզու, որի փաստերը հաշվառված չեն), այլ որոշ ընդհանուր սկզբունքների հետևողական ծավալմամբ. ընդհանրական քերականության բուն առարկան որոշ ենթադրական իդեալական վիճակ է:

2) Ընդհանրական քերականությունը գործ ունի հատկանիշների և հարաբերությունների բնության հետ՝ ի տարբերություն առանձ-

նական քերականությունների, որոնք գործ ունեն առաջին հերթին տվյալ հատկանիշներն ունեցող կամ տվյալ հարաբերություններով կապված միավորների հետ։ Այսպես, ընդհանրական քերականության մեջ չեն կարող քննվել հնչույթները, այլ հնչույթների հնարավոր տարբերակիչ հատկանիշները և հարաբերությունների տիպերը. սրա պատճառն այն է, որ տարբեր լեզուների նույնական համարվող հնչույթները, որպես տարբեր համակարգերի տարրեր, չեն համընկնում. դրանց միջև կարելի է ենթադրել անցողիկ տիպեր և առանձնացնել լրացուցիչ հատկանիշներ։ Այդպիսին է վիճակը նաև այլ միավորների, այդ թվում՝ բառերի խմբատների դեպքում։ Ընդհանրական քերականությունը խոսում է միայն տարբերակիչ հատկանիշների մասին, բայց չի խոսում այդ տարբերակիչ հատկանիշներն ունեցող միավորների մասին. տվյալ հատկանիշների իրականացման ուղիների մասին խոսում են տիպաբանությունը և առանձնական քերականությունները։ Այս դեպքում նախ՝ պետք է ելնել իրական հնարավորություններից (հնչույթների հատկանիշների առանձնացման դեպքում՝ մեր արտասանական օրգանների բնախոսական առանձնահատկություններից և գործառությունից) և երկրորդ՝ կապել հատկանիշները համակարգորեն՝ հետևողական բացատման և ենթադասության (սուբորդինացիայի) սկզբունքներով՝ հիշելով, որ լեզվի մեջ ոչինչ չի կորչում, ամեն ինչ օգտագործվում է։ Այս երկու սկզբունքները չեն պահպանված Ռ. Յակոբսոնի, Մ. Հալեի և Մ. Հալեի «Լեզվի վերլուծության ներածության» մեջ առանձնացված տասներկու հատկանիշների դեպքում։ Մեր սկզբունքը տարբերվում է նաև Լ. Ելմսլևի սկզբունքից, որի մոտ մի կողմից՝ էական են միայն հարաբերությունները, մինչդեռ հարաբերության քննությունը պետք է հենվի հարաբերվող եղրերի քննության վրա և ընդհակառակն (հարաբերության տիպը պետք է որոշվի հարաբերվողի տիպով, և ընդհակառակն), մյուս կողմից՝ չի որոշված հարաբերությունների և հատկանիշների փոխհարաբերությունը։

Ընդհանրական քերականությունը պետք է տա այն բոլոր ընդհանուր հատկությունների նկարագրությունը, որոնց առանձին համակցություններով (կոմբինացիաներով) կառուցվում են առանձին լեզուները։ Այլ կերպ ասած՝ ընդհանրական քերականությունը գործ ունի միայն հնարավորությունների հետ։ Նրան հետաքրքրում են դասակարգման և հարաբերման սկզբունքները, հատկանիշներն ու հարաբերությունները, որոնք բխում են դասակարգվող և հարա-

բերվող եզերների բնույթից։ Առանց դասակարգվող և հարաբերվող եզրերի հատկությունների իմացության հնարավոր չէ ընտրել դասակարգման հատկանիշները և որոշել հարաբերությունների տեսակները։ Առանձնական լեզվաբանությանն է վերաբերում տվյալ լեզվում հատկանիշների և հարաբերությունների այս կամ այն տեսակներն ունեցող միավորների քննությունը։

3) Ընդհանրական քերականության մեջ պետք է հստակորեն առանձնացվեն արտահայտության և բովանդակության պլանները, մի բան, որ դրեթե հնարավոր չէ և նպատակահարմար չէ առանձնական քերականությունների դեպքում. այստեղ տվյալ իմաստը միշտ ձևավորված է տվյալ միջոցներով։ Եթե ընդհանրական քերականության մեջ արտահայտության և բովանդակության պլանները դրվում են իրար կողքի, ապա առանձնական քերականության մեջ դրանք կապվում են փոխհաջորդմամբ՝ մակարդակից մակարդակ և աստիճանից աստիճան անցումով։ Եթե առանձին լեզուների դեպքում արտահայտելիի և արտահայտիչի (իմաստի և ձևավորման) բացարձակ տարբերակումը գրեթե անհնար է (քանի լեզվական համբավորումները չեն կարող կատարվել զուտ ձևական և զուտ իմաստային հատկանիշներով), ապա իդեալական վիճակով այդ լիովին թույլատրելի է և անհրաժեշտ։ Այսպիսով, ընդհանրական քերականության (և ընդհանրապես ընդհանուր լեզվաբանության) առաջին գլխավոր խնդիրներից մեկը արտահայտելիի և արտահայտիչի տարբերակումն է։

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ամստիկ ուսումնասիրության մեջ իշխում է երկատման սկզբունքը, որ հենվում է հակադրությունների վրա։ Պատմական ուսումնասիրության մեջ պետք է իշխի եռակի բաժանումը, երբ տրվում է երկու հակադիր կողմերի անցման օղակը՝ հասկանալի դարձնելով զարգացումը։ Այս տարբերությունը հեշտ կլինի հասկանալ, եթե նկատի առնենք Կանտի և Հեգելի տրամաբանական սկզբունքների հարաբերությունը։

Վերևում նշվեց, որ լեզվաբանության բաժինների առանձնացման համար հիմք են ծառայում նրա ուսումնասիրության առարկայի՝ լեզվի, բաղկացական մասերը, իհարկե, ըստ դրանց փոխհարաբերության արտացոլման առանձնահատկությունների։ Ինչպես ամեն մի երևույթի, այնպես էլ լեզվաբանության բաժինների առանձնացման համար պետք է ընտրել լեզվի կառուցվածքն արտացոլող կարևորագույն հատկանիշները։ Որո՞նք են այդ հատկանիշները։

1) Լեզվի մեջ մենք ամենից առաջ գործ ունենք արտահայտության կամ, եթե նկատի առնենք արտահայտության ուղղվածությունը (ո՞ւմ ուղղված լինելը), նշանակման հետ։ Արտահայտման համար որպես հարաբերվող եզրեր հանդես են գալիս արտահայտելին կամ արտահայտվողը (այն, ինչ արտահայտվում է) և արտահայտիչը (այն, ինչով արտահայտում են), այլ կերպ ասած՝ բովանդակության և արտահայտության պլանները։ Նշանակման դեպքում հանդես է գալիս երրորդ եզրը՝ արտահայտության ընկալողը (այն անձը, որին արտահայտությունն ուղղված է). արտահայտության առաջին եզրը կհամապատասխանի նշանակելիին (նշանակվողին) երկրորդ եզրը՝ նշանակիչին։ Այս մոտեցման դեպքում բովանդակության պլանը կներկայանա որպես նշանային (նշանակվող) բովանդակություն, արտահայտության պլանը՝ որպես նշանային արտահայտություն։

Ավելորդ չենք համարում նշել, որ բոլոր դեպքերում չէ, որ այս եզրերը հստակ կերպով տարբերում են, և այդ պատճառով առկա է տերմինային շփոթ։ Արտահայտությունը հարաբերություն է, մինչդեռ նրանով նշանակվում է արտահայտության եզրերից մեկը՝ արտահայտման միջոցների (արտահայտիչների) ամբողջությունը («արտահայտության պլան» ասելով հասկանում են արտահայտության միջոցները)։ «Բովանդակության պլան» տերմինը ևս հստակ չէ. նրանով սովորաբար նշանակում են և՛ արտահայտվող առարկաները, և՛ արտահայտության հարաբերությունը։ Վիճակը բարեհաջող չէ նաև «իմաստաբանություն» տերմինի դեպքում. նախ՝ «իմաստ» բառը հայերենում նկատի ունի միջնորդված (ուրիշի միջոցով) ստացված իմացությունը և ոչ թե անմիջական հարաբերությունը դեպի առարկան՝ նշանակությունը (այս առումով «նշանակաբանություն» բառը ավելի մոտ կլիներ «բովանդակության պլանի ուսմունք» տերմինին). երկրորդ՝ այս դեպքում էլ նկատի է առնվում և՛ նշանակվողը, և՛ նշանակման հարաբերությունը (նշանակությունը)։

Եթե արտահայտիչ-արտահայտելիի և, համապատասխանաբար, նշանակիչ-նշանակելիի փոխհարաբերությունը դիտենք որպես պլանային (պլանների) տարբերություն և առայժմ պահպանենք եղած տերմինները, ապա լեզվաբանությունը գործ ունի ամենից առաջ արտահայտության և բովանդակության պլանների տարբերության հետ։ Երկուսն էլ ոչ այլ ինչ են, եթե ոչ մատերիական աշխարհի (սուբստանցի) դրսևորումները. մի սուբստանց (արտահայ-

տիչը կամ նշանակիչը) հիմք է ծառայում մի այլ սուբստանցի (արտահայտելիի կամ նշանակելիի) արտահայտման կամ նշանակման համար։ Այսպիսով, մեր մոտեցումն արմատապես տարբերվում է Լ. Ելմսլևի և շատ ուրիշների ըմբռնումից, որոնց համար արտահայտության պլանը արտահայտման միջոցների փոխհարաբերությունն է՝ անկախ սուբստանցիոնալ (մատերիական) հիմքից։ Արտահայտության պլանի քննությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ արտահայտության միջոցների՝ արտահայտչական (նշանակական) շարժումների (ժեստերի, միմիկայի և այլն), հնչական կամ ձայնական (լսելի) և գրային (տեսանելի) միջոցների քննություն։ «Արտահայտության պլանի» ուսմունքը կարելի է կոչել արտահայտաբանություն՝ երեք հիմնական ղրսևորմամբ՝ ժեստաբանություն կամ շարժաբանություն (կինեսիկա), հնչաբանություն և գրաբանություն։ Մենք առայժմ խուսափում ենք «նշան» բառից որպես բազմիմաստ տերմինի. նշանը մի սուբստանց է, որի միջոցով մի երկրորդ սուբստանց (անձ) տեղեկանում է մի երրորդ սուբստանցի մասին։ Բովանդակության ուսմունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ա) նշանակվողների, բ) նշանը հաղորդողների և գ) նշանն ընդունողների բնույթի և փոխհարաբերության ուսմունք։

2) Երկրորդ կարևոր հատկանիշը, որով պետք է տարբերակվեն լեզվաբանության բաժինները, այսպես կոչված մակարդակային տարբերությունն է, որ մեր ըմբռնմամբ[12] խարսխված է ստորոգման վրա։ Ստորոգումը սուբյեկտիվ ակտ է օբյեկտիվ իրականության որևէ կողմի մասին, որի դեպքում եզրեր են ծառայում ուշադրության առարկան (ենթականը) և առարկայի՝ տվյալ պահին կարևոր համարվող, որպես նորություն դիտվող հատկանիշը։ Ըստ այսմ կարելի է տարբերակել ստորոգական և ոչ ստորոգական մակարդակներ։

3) Լեզվաբանության բաժինների առանձնացման երրորդ կարևոր տարբերությունը, այսպես կոչված, աստիճանային տարբերությունն է։ Աստիճանային ենք կոչում հարացուցային և շարակարգային տարբերությունները, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ հատկանշվողի ու հատկանիշի և հարաբերվողի ու հարաբերության տարբերություններ։ Հարացույցի դեպքում մենք գործ ունենք համեմատության հետ, ընդ որում առկա են համեմատվողներից մեկը և համե-

---

[12] Համմ. Г. Б. Джаукян, О взаимоотношении лингвистических единиц и их различительных признаков, ТПВПИЯ, М., 1970.

մատիչ հատկանիշը։ Շարակարգի դեպքում մենք գործ ունենք հարաբերության հետ, որի երկու եզրերն էլ առկա են։ Կաղապարների քննության ժամանակ մենք տեսանք, որ հարացուցային աստիճանի կաղապարն է $M \rightleftarrows m \rightleftarrows m_1$, որտեղ M-ը հատկանշվողն է (գոյականը), m-ը՝ հատկանիշը (ածականը), m_1-ը՝ հատկանշի հատկանիշը (մակբայը)։ $\rightleftarrows$ նշանը ցույց է տալիս խոսքի մասերի անցման ընույթը և փաստորեն հանդես է գալիս գոյականակերտ, ածականակերտ և մակբայակերտ մասնիկների, ինչպես նաև հարաբերական դերանունների ու շաղկապների միջոցով։ Ինչպես նշվել է, լեզվի ամեն մի փուլում սկզբնական հիմքը արդեն խարխլված է. հանդես են գալիս գոյականացված ածականներ, ածականացված գոյականներ և այլն։ Շարակարգային աստիճանի կաղապարն է (RrR)r_1(RrR), որտեղ R-ը հարաբերվող եզրն է, r-ը՝ հարաբերությունը, r_1-ը՝ հարաբերությունների հարաբերությունը։ Նշվեց, որ առաջնային բնույթով R-ը փոխակերպվում է գոյականի, r-ը՝ հատկանշի, r_1-ը՝ հատկանշի հատկանշի։

Թե այժմ նկատի առնենք, որ բովանդակության և արտահայտության պլանների քննարկումից հետո պետք է պարզվի դրանց փոխհարաբերությունը, և որ յուրաքանչյուր լեզվի նկարագրության ժամանակ պետք է տրվեն հնարավոր հատկանիշներից տվյալ լեզվի ընտրած հատկանիշները և այդ հատկանիշների նշած միավորները, ապա կառացվի 4-րդ աղյուսակը (էջ 45)։

Ներկա աշխատությունը կառուցված է լեզվաբանության բաժինների հիշյալ սխեմային և հարաբերակցական քերականության սկզբունքներին համապատասխան՝ արտահարաբերակցական քերականությունից և ներկա աշխատության նպատակներից բխող մասնակի վերապահումներով։ Քանի որ ներկա աշխատության մեջ քննվում են կառուցվածքի հետ կապված հարցերը, այսինքն՝ լայն առումով՝ քերականությունը, և առայժմ բացառվում է բառագիտական-իմաստաբանական բուն հարցերի քննությունը, ուստի և աշխատության նպատակներին համապատասխան ընդգրկվում են միայն լեզվի կառուցվածքին վերաբերող բաժինները՝ 1) արտահայտության պլանի միավորների ուսմունքը կամ արտահայտաբանությունը և 2) երկպլանային (թե արտահայտության, թե բովանդակության պլաններով բնորոշվող) միավորների ուսմունքը՝ ձևաբանությունը և շարահյուսությունը։ Արտահայտաբանության մեջ մտնում են, ըստ արտահայտության նյութի,

Պլաններ	Մակարդակներ			
	Ոչ-ստորոգական		Ստորոգական	
	Ատիճաններ			
	Հարացուցային	Շարակարգային	Հարացուցային	Շարակարգային
Արտահայտության պլան	Հարացուցային արտահայտաբանություն	Շարակարգային արտահայտաբանություն	Հարացուցային ստորոգաբանություն	Շարակարգային ստորոգաբանություն
Բովանդակության պլան	Հարացուցային իմաստաբանություն	Շարակարգային իմաստաբանություն	Հարացուցային ստորոգաբանություն	Շարակարգային ստորոգաբանություն
Պլանների փոխհարաբերություն	Բառի հարացուցաբանություն	Բառակապակցության ուժմունք	Նախադասության հարացուցաբանություն	Բարդ նախադասության ուժմունք

հնչաբանությունը (հնչյունաբանությունը), գրաբանությունը և շարժաբանությունը։ Երկպլանային միավորների ուսմունքի մեջ մտնում են՝ ա) ձևաբանությունը՝ երկու դրսևորմամբ «նշանային» կամ ոչ-ստորոգական ձևաբանություն (հոլովման հարացույցի ուսմունքը) և ստորոգական ձևաբանություն (խոնարհման հարացույցի ուսմունքը). բ) շարահյուսությունը՝ նույնպես երկու դրսևորմամբ՝ «նշանային» կամ ոչ-ստորոգական շարահյուսություն (ոչ-ստորոգական բառակապակցությունների ուսմունքը) և ստորոգական շարահյուսություն (ստորոգական բառակապակցության և նախադասության ուսմունքը)։

Ե՛վ միապլանային, և՛ երկպլանային միավորները բնութագրվում են որոշակի կաղապարներով. այդ կաղապարների և նրանց անդամների միջև կարող են հաստատվել տարբեր կարգի հարաբերություններ, որոնց քննությունը մենք կենտրոնացնում ենք փոխկաղապարային արտահայտաբանության, փոխկաղապարային ձևաբանության և փոխկաղապարային շարահյուսության մեջ։ Կարելի է նշել փոխկաղապարային երկու կարգի հարաբերություններ՝ փոխակազմական և փոխակերպական։ Փոխակազմական ենք կոչում

հավելման և զեղչման (հանման), փոխակերպական՝ փոխարինման և տեղափոխության հարաբերությունները։ Հայտնի է փոխակազմության երկու դրսևորում՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ-վերաբերողական։

Օբյեկտիվ փոխակազմությունը ավանդաբար հայտնի է որպես համադասություն և հանդես է գալիս պարզ կցմամբ, զեղչմամբ ու համապատասխան շաղկապներով։ Այս դեպքում երկու միավորներ միավորվում են այնպես, որ նրանց ընդհանուր տարրերը սովորաբար դուրս են ընկնում. «Ես գնում եմ տուն» + «Հակոբը գնում է դպրոց»→ «Ես գնում եմ տուն, (իսկ) Հակոբը (գնում է) դպրոց». «Ես գնում եմ տուն» + «Հակոբը գնում է տուն» → «Ես և Հակոբը գնում ենք տուն». «Ես գնացի տուն» + «դու չգնացիր տուն» → «Ես գնացի տուն, (իսկ) դու՝ ոչ» և այլն. «զեղչում» տերմինն այս դեպքում տեղին չէ, որովհետև այստեղ «զեղչումը» արտահայտության ավելորդ մասերի կրկնության վերացումն է. ընդհակառակն, կրկնությունը պետք է դիտել կամ որպես ավելորդություն, կամ որպես սաստկացման դրսևորում։

Սուբյեկտիվ-վերաբերողական փոխակազմությունը տեղի է ունենում տրամաբանական շեշտի և կամաբերական (եղանակային) բառ-մասնիկների օգնությամբ. սրանք արտահայտում են վերաբերմունք միավորների կազմի փոփոխության նկատմամբ՝ զիջում, սահմանափակում, սաստկացում, ընդգծում՝ միայն ես (կարմիր, առագ...), նույնիսկ ես (կարմիր, առագ...), գոնե ես (կարմիր, առագ...) և այլն։

Փոխակերպման համար կարելի է նշել նույնպես երկու դրսևորում՝ փոխանցում և բուն փոխակերպում։ Փոխանցումը բառերի կաղապարային դիրքի փոփոխությունն է՝ առանց բառակազմական փոփոխության։ Փոխանցման հետևանքով մի բառը կարող է անցնել ձևաբանական նոր հարացույցի կամ կորցնել իր հարացուցային ձևակազմիչները։ Փոխակերպումը բառային միավորների դեպքում բառակազմական փոփոխությամբ ուղեկցվող փոխանցումն է, այլ միավորների դեպքում (լայն առումով)՝ կաղապարային փոփոխությունը՝ սովորաբար առանց կաղապարը կազմող միավորների և նրանց քանակի փոփոխության։ Փոխակերպման միջոցով տեղի է ունենում՝ ա) կաղապարակազմ միավորների միաժամանակյա տեղափոխություն («Հակոբն սպանեց Գրիգորին» → «Գրիգորն սպանվեց Հակոբի կողմից»), բ) հիմնակաղապարի վերածում լրացական կաղապարի, այսինքն՝ մի կաղապարի ներմուծում մի

այլ կաղապարի կազմի մեջ որպես նրա որևէ անդամի փոխարինողի («Հակոբը ծաղիկներ է խնամում» + «Հակոբը քնից շուտ է արթնանում» → «Հակոբը, որ ծաղիկներ է խնամում, քնից շուտ է արթնանում» կամ «Ծաղիկներ խնամող Հակոբը քնից շուտ է արթնանում» կամ «Ծաղկախնամ Հակոբը քնից շուտ է արթնանում» և այլն)։ Այսպիսով, նախադասությունների կապակցության (բարդ նախադասության) ուսմունքը մեր կողմից ամբողջապես ներառվում է փոխակերպության մեջ։

Հնչաբանությունը (ինչպես և արտահայտության մյուս բնագավառները), այսպիսով կունենա, երկպլանային միավորների քննության եղանակին համապատասխան, երեք բաժին՝ 1) հնչութաբանություն (հարացուցային հնչաբանություն)՝ երկու դրսևորմամբ՝ ա) ոչ-վանկարար հնչույթների (բաղաձայնների) և բ) վանկարար հնչույթների քննություն. այս բաժինը հարաբերակից են ձևաբանությանը՝ նրա երկու դրսևորմամբ՝ ոչ-ստորոգական և ստորոգական ձևաբանություն. 2) շարահյուսական հնչաբանություն՝ երկու դրսևորմամբ՝ բ) բաղաձայնական կապակցությունների ուսմունք և բ) վանկի ուսմունք. այս բաժինը հարաբերակից է շարահյուսությանը՝ նրա երկու դրսևորմամբ՝ ոչ-ստորոգական բառակապակցությունների ուսմունք և ստորոգական բառակապակցությունների ու նախադասության ուսմունք. 3) փոխկաղապարային հնչաբանություն, որտեղ կքննվեն՝ ա) հնչափոխությունը (շեշտափոխական, առնմանական-տարնմանական, հնչահավելում-հնչանկում) և բ) վանկային կապակցությունների շարքերը, որի դեպքում մի վանկը ենթարկվում է մյուսին, վանկաշարքային մի կապակցությունը (հնչաբառը)՝ մյուսին և այլն՝ մինչև հնչադասություն (հնչանախադասություն)։

Այս բոլոր դեպքերում մենք որոշ տուրք ենք տալիս ավանդական քննությանը, այլապես հարկ կլիներ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Քանի որ բոլոր մյուս կաղապարները ներառվում են նախադասության կաղապարի մեջ, ուստի և կարելի էր ամբողջ քերականությունը վերածել նախադասության քննության՝ մնացած բոլոր միավորները դիտելով որպես փոխկաղապարման արդյունք։ Այս դեպքում նախ կքննվեր նախադասության ուսմունքը, որ կներառեր ստորոգական շարակարգի ուսմունքը և ստորոգական բառաձևերի ուսմունքը, ապա փոխակերպմամբ ստացվող միավորների՝ ոչ-ստորոգական բառակապակցության և ոչ-ստորոգական բառաձևերի ուսմունքները։

2) Քանի որ բառը ներառվում է բառակապակցության մեջ, և բառի կաղապարը կազմում է բառակապակցության կաղապարի մի հատվածը (լրացական կաղապարը), ուստի և բնական կլիներ քննությունը կատարել ընդհանուրից դեպի լրացական կաղապարները, մանավանդ որ լրացական կաղապարը կարող է ստացվել ընդհանուրից՝ փոխկաղապարմամբ: Սակայն մեզ մոտ առայժմ քննությունն սկսվում է բառային միավորներից, և բառակապակցությունը դիտվում է որպես նրա ծավալման արդյունք:

3) Լեզվի իսկական կաղապարը պետք է լիներ դինամիկ (սերող) կաղապար՝ լեզու-խոսք-լեզու-խոսք... անընդհատ անցումների հետ կապված կաղապար-փոխկաղապարում-կաղապար-փոխկաղապարում... անընդհատ անցումներով: Մինչդեռ առայժմ քերականությունը մենք կառուցում ենք ավանդական ձևով. քննվում են ողջ ձևաբանությունը և ողջ շարահյուսությունը առանձին-առանձին, ապա տրվում է նրանց փոխկաղապարումը: Առաջին մոտեցմամբ իրականացվող քերականությունը մենք կկոչենք փոխհաջորդական, երկրորդ տիպինը՝ զուգահեռային: Ներկա քերականությունն ընդհանուր կառուցվածքով զուգահեռային է, թեև առանձին հատվածներում իրականացված է փոխհաջորդական մոտեցումը: Պետք է նշել, որ փոխհաջորդական քերականության ըմբռնումը նույնը չէ սերող քերականության ըմբռնման հետ, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ համադրական փոխհաջորդական քերականություն, և որին հակառակ կարող է լինել վերլուծական փոխհաջորդական քերականություն:

Լեզվական կաղապարների քննության կապակցությամբ հարկավոր է խոսել, այսպես կոչված, հարաբերիչ բառերի՝ կապերի և շաղկապների մասին: Ինչպես հայտնի է, կապերը կապվում են առաջին հերթին գոյականների, շաղկապները՝ դիմավոր բայերի հետ: Նրանք փաստորեն մտնում են գոյականների և դիմավոր բայերի վերլուծական հարացույցների մեջ և մեր կողմից քննվում են կամ գոյականական բառակապակցության, կամ բայական բառակապակցության ու նախադասության կաղապարների մեջ: Սակայն նրանց բուն էությունը ոչ թե հատկանշումն է, մի գոյականը կամ մի բայը մի այլ գոյականից կամ բայից տարբերելու գործառույթը (ֆունկցիան), այլ դրանք հարաբերելու, դրանց հարաբերության բնույթը ցույց տալու գործառույթը (ֆունկցիան): Կապերը և շաղկապները հարացուցային արժեք են ձեռք բերում՝ հանդես գալով որպես բառերի քերականական տարբերիչներ և, հետևաբար, որպես

խոսքի մասային պատկանելության հատկանիշներ։ Կապերի (և հոլովների) բուն դերը առարկաների հարաբերությունների արտահայտումն է, բայց առարկաների հարաբերություններն արտահայտում են նաև բայերը՝ իրենց մեջ փաստորեն կրելով կապային (և հոլովական) իմաստները և դրանք ավելի որոշակի դարձնելով կապերի հարադրությամբ [Համմտ. «Հակոբը մտավ քաղաքի մեջ (քաղաք)» և «Հակոբը քաղաքի մեջ (քաղաքում) է»]. այսպիսով, կապերը արտաքնապես հանդես են գալիս որպես գոյականների և բայերի հարաբերությունների արտահայտիչներ, թեև վերջին հաշվով, բայերի հետ միասին արտահայտում են առարկաների (լեզվի մեջ՝ առարկաների լեզվական նշանակումների՝ գոյականների) հարաբերություններ։ Նրանք կարող են հարել բայերին որպես բայական կազմիչներ և գոյականների որպես կապեր (Համմտ. «Մտնել գործի մեջ» և «Գործին միջամտել»):

Շաղկապները, ի տարբերություն կապերի, արտահայտում են առարկաների հարաբերությունների հարաբերություններ և, վերջին հաշվով, առարկաների հարաբերությունների՝ ինքնին առնվելու դեպքում, վիճակների հարաբերություններ, Իհարկե, ըստ լեզվի առանձնահատկությունների, կապերը ևս կարող են արտահայտել վիճակների հարաբերություններ, եթե դիմավոր բայերը փոխակերպվում են բայական գոյականների՝ բայանունների և անորոշ դերբայների (Համմտ. «Եթե դու գաս, կգնամ» → «Քո գալու դեպքում կգնամ»)։

Ստացվում է մի դրություն, երբ հարաբերիչ բառերը մտնում են գոյականի կամ դիմավոր բայի կազապարի մեջ, բայց ցույց են տալիս երկու գոյականի, կամ երկու դիմավոր բայի հարաբերություն։ Այլ կերպ ասած՝ նրանք դրվում են հարացուցային կազապարների մեջ, մինչդեռ ցույց են տալիս կազապարների շարակարգային հարաբերություններ։ Սրա հետևանքով հարաբերիչ բառերը քննվում են երկու անգամ՝ և՛ հարաբերվող կողմերի առանձնակի քննության դեպքում, և՛ դրանց միացյալ քննության դեպքում։ Ո՞րն է հարաբերիչ բառերի հարացուցային և շարակարգային քննությունների տարբերությունը։ Այստեղ առկա է նույն հարաբերությունը, ինչ հոլովների դեպքում. ձևաբանական հարացույցի մեջ հոլովները քննվում են հարաբերվող մեկ կողմի տեսանկյունից՝ ա) որպես այդ կողմի հարաբերության հնարավոր միջոցներ, և, բ) որպես անփոփոխակային որոշ իմաստների կրողներ. շարակարգի մեջ նրանք առնվում են հարաբերվող երկու կողմերի (ամբողջի) տեսանկյունից՝

ա) որպես այդ կողմերի կապի (կախման) եղանակի արտահայտիչների և բ) հարաբերության մեջ ստացած փոփոխակային իմաստներով («շարահյուսական գործածությամբ»)։ Յուրաքանչյուր կապակցություն (կախում) կարող է արտահայտվել կամ վերհնչութային միջոցներով (շարադասությամբ, հնչերանգով, դադարի տարբեր աստիճաններով), կամ հնչութային միջոցներով (հոլթագայությամբ, վերջավորություններով, օժանդակ բառերով). առաջին դեպքում առկա է առդրական կապ, երկրորդ դեպքում՝ կառավարություն (խնդրառություն) և համաձայնություն. կառավարության դեպքում կառավարվողը և համաձայնության դեպքում՝ հարաբերվող կողմերից յուրաքանչյուրը ունի հնչութային համապատասխան արտահայտություն։ Կախման երեք եղանակների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ ձևով՝

1) առդրություն՝ A—B.

2) կառավարություն՝ A—Ba.

3) համաձայնություն՝ Aa—Ba։

Այսպիսով, հարացուցային քննությունը գործ ունի միջոցների և անփոփոխակային իմաստների, շարակարգային քննությունը՝ եղանակների և փոփոխակային իմաստների հետ։

Ընդհանուր առմամբ կարելի էր կապերը քննել գոյականի ձևաբանական հարացույցի մեջ՝ որպես վերլուծական հարացույցի կազմիչներ. սակայն մենք գերադասում ենք դրանք, որպես բառային միավորներ, քննել գոյականական բառակապակցության կաղապարի մեջ, այլապես՝ ա) շաղկապները հարկ կլիներ համապատասխանաբար քննել բայի ձևաբանական հարացույցի մեջ. բ) պարզ չէր լինի կապերի դիրքային առանձնահատկությունների պատկերը, որ որոշվում է ըստ գոյականական բառակապակցության և ոչ թե ըստ առանձին գոյականի (համմտ. «Այս երկու գեղեցիկ տների մոտ» և «Դեպի այս երկու գեղեցիկ տները»)։

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՀԱՅՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Արտահայտաբանությունը արտահայտության երեք տեսակի միջոցների՝ արտահայտչական շարժումների (շարժամիջոցների), հնչական կամ արտասանական միջոցների (հնչամիջոցների կամ ձայնամիջոցների) և գրային միջոցների (գրամիջոցների), ուսումնասիրությունն է: Ըստ ընկալման շարժամիջոցները և գրամիջոցները տեսողական բնույթի են, հնչամիջոցները՝ լսողական բնույթի: Արտահայտչական շարժումների ուսումնասիրությամբ զբաղվում է շարժաբանությունը, հնչամիջոցների ուսումնասիրությամբ՝ հնչաբանությունը և գրամիջոցների ուսումնասիրությամբ՝ գրաբանությունը:

Արտահայտչական երեք կարգի միջոցներն էլ կարող են լինել ոչ-պայմանական (անմիջական, անհրաժեշտ) և պայմանական: Լեզվաբանական առումով ուսումնասիրության առարկա կարող են լինել հատկապես պայմանական միջոցները (նշանները): Ոչ-պայմանական միջոցները անմիջականորեն (անհրաժեշտաբար) կապված են արտահայտվող երևույթների հետ, ինքնին ընկալելի են և, հետևաբար, լեզվաբանական հատուկ ուսումնասիրության առարկա չեն: Դրանք լեզվաբանին հետաքրքրում են միայն պայմանական միջոցների ծագումնաբանական քննության դեպքում, երբ հարկավոր է ցույց տալ անցումը ոչ-պայմանական (բնական) միջոցներից դեպի պայմանականները:

Պայմանական միջոցները անհրաժեշտաբար հանդես են գալիս որպես նշաններ, այսինքն՝ նախատեսվում են ընկալման (տեսնվելու կամ լսվելու և հասկացվելու) համար: Ոչ-պայմանական միջոցները կարող են ինքնին նշանային արժեք չունենալ, այլ այդպիսին ձեռք բերել երկրորդաբար. գայրույթի հետ կապված միմիկան և ձեռքի շարժումները (մատների սեղմումը՝ բռունցք կազմելը) անպայմանորեն չեն նախատեսված ընկալման համար, թեև կարող են

ընկալվել և հիմք տալ ուրիշի հոգեվիճակը հասկանալու համար։ Ոչ-պայմանական միջոցները յուրատեսակ «բնական» միջոցներ են և կամային ուղղվածություն չունեն (ակամա բնույթի են)։ Ոչ-պայմանական բնույթի են, օրինակ, դեմքի և ձեռքերի հուզա-զգայական (ուրախություն, վիշտ, զայրույթ և այլն արտահայտող) շարժումները (միմիկան և ժեստերը), հուզա-զգայական չտարբերակված ճիչերը, առարկաների նկարները (ինքնին առնված՝ առանց իրենց մեջ պայմանական իմաստ ունենալու)։ Պայմանական են խուլուհամրերի հաղորդակցման համար նախատեսված մատնաշարժումները (մատնախոսություն, դակտիլոլոգիան), մարդկային հաղորդակցական ձայները, գրանշանները։

Արտահայտչական միջոցների փոխհարաբերության քննության հետ կապված պետք է նշել հետևյալը.

1) Արտահայտության այս երեք միջոցների աղբյուրը վերջի-վերջո զանազան շարժումներն են. տարբերությունն այն է, որ արտահայտչական շարժումների դեպքում այդ շարժումները արտահայտության անմիջական աղբյուրներն են. ձայնական միջոցների դեպքում արտասանական ապարատի տարբեր մասերի շարժումները լոկ ձայնի արտահայտչական ձևավորման աղբյուր են և միայն երկրորդաբար (խուլուհամրերի հատուկ վարժեցման դեպքում) կարող են ընկալվել անմիջաբար. գրամիջոցների դեպքում նախ՝ շարժման աղբյուրը սահմանափակ է (միայն ձեռքը) և երկրորդ՝ այն սովորաբար նույնիսկ երկրորդաբար չի ծառայում որպես անմիջական ընկալման աղբյուր։

2) Արտահայտչական շարժումները կարող են ուղեկցել ձայնական միջոցներին։ Առաջին հայացքից դրանք կարծեք հավելուրդային են, բայց իրականում հաճախակի հանդես են գալիս որպես բանավոր խոսքն ուժեղացնող և ճշգրտող միջոցներ։ Վերջին ժամանակներում այս կարգի արտահայտչական շարժումները հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել, այսպես կոչված, հարալեզվաբանության (պարալինգվիստիկայի) մեջ։

3) Չտարորոշված բնույթի զանազան ձայները (ճիչերը) զգալի չափով տարբերվում են մարդկային լեզվի տարորոշված հուզական ձայներից՝ ձայնարկություններից, որոնք որոշ պայմանականություն ունեն, լեզվից լեզու տարբերվում են, ուստի և միջին տեղ են գրավում կենդանական ճիչերի և մարդկային լեզվի նշանների միջև։ Բնական ձայների մարդկային ընդօրինակումները՝ բնաձայնությունները ակնհայտորեն պայմանական բնույթ ունեն. նախ՝ դրանք

սովորաբար նախատեսված են հաղորդակցման համար, եթե հաճույքի հետ կապված ընդօրինակման արդյունք չեն. երկրորդ՝ բնական ձայների նույնական կրկնություն չեն, այլ ընդօրինակում՝ ըստ լեզուների արտասանական առանձնահատկությունների և մարդկանց ստացած տպավորությունների. այս է պատճառը, որ բնաձայն բառերը տարբերվում են լեզվից լեզու։

4) Գրային ամեն մի համակարգ սկիզբ է առնում պատկերագրությունից՝ իրերի պատկերագրումից։ Հաղորդակցման ընդլայնման և արագացման պահանջները հանգեցնում են մի կողմից՝ իրերի նկարների փոխաբերական գործածության, մյուս կողմից՝ դրանց պարզեցման. խզվում է նշանակելիի և նշանակիչի սկզբնական բնական կապը, և վերջինս ընդունում է պայմանական բնույթ։ Իհարկե, ամեն մի գրություն կարող է ավելի կամ պակաս չափով պահպանել պատկերագրության սկզբնական տարրերը։

5) «Նշան» բառի գործածությունը արտահայտչական միջոցների նկատմամբ որոշ պայմանականություն ունի. ա) այս դեպքում ամենից առաջ նկատի են առնվում ոչ թե նշանները իրարից տարբերող տարրերը (հնչույթները, գրույթները, շարժույթները), այլ ամբողջական նշանները՝ անկախ տարրերի քանակից. եթե արտահայտչական միջոցներն առնվում են ինքնուրույնաբար՝ անկախ նշանակելիներից և ենթարկվում վերլուծության, ապա հանդես են գալիս ֆիգուրները՝ հնչույթները, գրույթները, շարժույթները և դրանց շարակարգային զուգակցության տարրերը. բ) պայմանական շարժամիջոցներն ու գրամիջոցները սովորաբար հանդես են գալիս երկրորդաբար՝ որպես հնչույթների նշաններ. ստացվում է մի վիճակ, երբ ոչ-նշանը կարող է երկրորդաբար արտահայտվել նշանով. այսպես, ա-ն, որ ինքնին ոչնչի նշան չէ, այլ նշանի տարբերիչ, կարող է ունենալ իր նշանը շարժամիջոցների և գրամիջոցների մեջ։

6) Բոլոր կարգի արտահայտչական միջոցները իրարից տարբերվում են. այս տարբերությունն է, որ հնարավորություն է տալիս հաղորդակցվելու։ Կարելի է ասել, որ բնության մեջ ընդհանրապես և լեզվի մեջ մասնավորապես չկա բացարձակ նույնություն, այլ կերպ ասած՝ լեզվի մեջ չկա բացարձակ համանունություն։ Այն դեպքում, երբ նշանները արտաքին բոլոր հատկանիշներով համընկնում են, հանդես են գալիս լրացուցիչ տարբերակիչները՝ կապակցելիությունը (իրադրային և կոնտեքստային) և հաճախա-

կանությունը. առաջինը գծային բնույթի է, երկրորդը՝ ոչ գծայինն։ Եթե տվյալ միավորները նույնական են նաև կապակցելիությամբ (բառախաղեր), ապա նրանց տարբերակումը հենվում է հաճախադիպության (հաճախադեպի կամ սովորականի և ավելի քիչ հաճախադեպի կամ քիչ սովորականի) վրա։

Այս կապակցությամբ մենք ցանկանում ենք առաջ քաշել ֆոնի և երանգի գաղափարները։ Քանի որ միավորների դասակարգումը տարվում է ենթադասության սկզբունքով, ուստի և անհրաժեշտորեն ծագում են այդ երկու գաղափարները. մի միավորը ֆոն է ծառայում երկրորդ միավորի համար, վերջինս էլ՝ մի ուրիշի համար և այլն։ Այսպես, շունչը ֆոն է ծառայում հնչման, հնչումը՝ ձայնի, ձայնը՝ արձագանքի, արձագանքը՝ աղմուկի համար. հակառակ հարաբերությամբ առնված՝ աղմուկի տարբեր տիպերը երանգավորում են արձագանքը, արձագանքի տարբեր տիպերը՝ ձայնը, ձայնի տարբեր տիպերը՝ հնչումը, հնչման տարբեր տիպերը՝ շունչը։ Այս նույն ձևով էլ ձեռքի շարժումը ֆոն է ծառայում մատների շարժումների համար։

Սկզբունքային տարբերություն չկա արտահայտչական տարբեր միջոցների դասակարգման սկզբունքների միջև։ Վերջիվերջո այս երեք դեպքում էլ մենք գործ ունենք միևնույն ընդհանրական կարգերի մասնակի դրսևորումների հետ։ Այսպես, արտահայտչական շարժումների դեպքում նրանց հաղորդակցական արժեքը որոշվում է այն բանով, թե ո՛ր օրգանը կամ սրա ո՛ր մասն է մասնակցում, ի՛նչ ձև է ընդունում, շարժման ի՛նչ տևողություն և ինտենսիվություն ունի։ Արտասանության համար կարևոր է, թե արտասանական ապարատի ո՛ր շարժական օրգանն է մասնակցում, ի՛նչ ձև է ընդունում, ի՛նչ տևողությամբ և ինտենսիվությամբ է գործում։ Գրերի դեպքում հանդես կգան ներածության մեջ նշված բոլոր կարգերը, բացի վիճակայիններից (գրանշանների դիրքը, ձևը և այլն)։

ՀՆՉԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

I. ՀՆՉՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(ՀԱՐԱՑՈՒՅԱՅԻՆ ՀՆՉԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

1. ՀՆՉՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. Արտասանական օրգաններ

Հնչանշանները (հնչական կամ ձայնական նշանները) միմյանցից տարբերող նվազագույն միավորները հնչույթներն են, որոնք, ինչպես ամեն տեսակի այլ միավորներ, իրարից տարբերվում են որոշակի հատկանիշներով։

Քանի որ մարդկային ձայնի բոլոր դրսևորումների աղբյուրը մարդու արտասանական ապարատն է, ուստի և հնչույթների բոլոր հնարավոր հատկանիշները որոշելու համար պետք է դիմել այդ ապարատի հնարավորություններին։

Ձայնը կարելի է քննել ֆիզիկական (ակուստիկական), բնախոսա-կազմախոսական և լեզվական առումներով։ Բնականաբար այս երեք դեպքում մենք ունենք հնարավորության և իրականության տարբեր հարաբերություններ։ Ձայնի ֆիզիկական ոչ բոլոր հնարավորություններն են, որ կարող են իրականանալ մարդու բնախոսա-կազմախոսական կարողություններով։ Այս վերջինների ընձեռած ոչ բոլոր հնարավորություններն են, որ կարող են օգտագործվել լեզուների կողմից նշանների տարբերակման համար։ Ընդհանրական հարացուցային հնչաբանության նպատակն է այն բոլոր ձայնական հնարավորությունների բացահայտումը, որոնք այս կամ այն չափով կարող են օգտագործվել տարբեր լեզուներում։ Այս հնարավորությունների ուսումնասիրությունը կարող է ամբողջական լինել միայն ֆիզիկական և բնախոսա-կազմախոսական հնարավորությունների համակցված քննության դեպքում։

Ֆիզիկապես (ակուստիկորեն) ձայնը ոչ այլ ինչ է, եթե ոչ այս կամ այն պատճառով հարուցված օդի մասնիկների տատանում։ Պարբերական (հավասար երկարություն) տատանումը կոչվում է երաժշտական ձայն (տոն), ոչ պարբերականը՝ աղմուկ։ Ձայնը ունի

հետևյալ հատկությունները՝ 1. ուժգնություն (որոշվում է տատանման ալիքի ամպլիտուդայի մեծությամբ)։ 2. բարձրություն (որոշվում է ժամանակի տվյալ միավորին ընկնող տատանումների քանակով) և 3. երանգ (որոշվում է հիմնական տոնին ուղեկցող մասնակի տոներով կամ օբերտոններով. սրանք առաջանում են ձայնի աղբյուրի, ասենք՝ լարի, լրացուցիչ մասնակական տատանումներից, որոնք կարող են ուժեղանալ տարբեր արձագանքարաններ՝ այդ օբերտոններին համապատասխանող արձագանքով)։

Ակուստիկական-հնչյունաբանական զանազան աշխատություններում խոսում են հնչման զանազան հատկությունների մասին՝ սովորաբար առանց նրանց ընդհանրացական ստորադասությունը որոշելու։ Իրականում հնչման հատկությունները ըստ ընդհանրացականության աստիճանի կարող են դասավորվել հետևյալ կերպ. 1. տևողությունը հատուկ է շարժման ամեն մի արտահայտության՝ ներառյալ և շարժման բացառումը՝ հանգիստը կամ դադարը. 2. ուժգնությունը հատուկ է միայն շարժման որոշ ձևերի՝ գործողություններին (ազդեցական շարժումներին), այդ թվում երաժշտական ձայնին և ազմուկին. 3. բարձրությունը հատուկ է ձայնին ընդհանրապես. 4. երանգը հատուկ է միայն արձագանքավորվող ձայնին (նկատի ունենք հատկապես մարդու արտաբերությունը)։

Հատկանիշները կարող են տարբերվել ըստ 1. ընդհանրականության (ընդհանրական, մասնական, առանձնական), 2. փոխադարձելիության (իրար նկատմամբ կիրառելի կամ անկիրառելի), 3. լրացականություն (մեկը մյուսին լրացնող կամ չլրացնող)։

Հատկանիշների փոխհարաբերությունը կարելի է որոշել հետևողական բացառման և հետևողական սահմանափակման սկզբունքներով. առաջին դեպքում կարելի է առնել ամենաբարդ, երկրորդ դեպքում՝ ամենապարզ (մեկ հատկանշով) միավորները։ Այդ երկուսը կարելի է արտահայտել 1-ին աղյուսակով (էջ 59)։

Մարդու արտասանական և լսողական ապարատները բնական զանազան ձայների բոլոր հնարավորությունները չեն կարող օգտագործել. նախ՝ մարդու շնչառության հետ կապված՝ ձայնը չի կարող չընդհատվել որոշ դադարներով. երկրորդ՝ մարդը կարող է լսել միայն որոշ ուժի և որոշ բարձրության ձայներ. երրորդ՝ մարդկային ձայների զանազան երանգները կախված են գերազանցապես արտասանական ապարատի արձագանքարաններից, հատկապես բերանի ու քթի խոռոչներից, որոնցից քթի խոռոչի չափերը և ձևերը չեն կարող փոխվել. պետք է ասել, սակայն, որ մարդու ար-



տասանական ապարատի արձագանքարանների համակարգը բավականաչափ հարուստ հնարավորություններ է տալիս։

Ինչպես նշեցինք, ձայնական տարբերությունների աղբյուրը մարդու արտասանական ապարատի շարժուն մասերի տարբեր բնույթի շարժումներն են. այդ շարժուն օրգաններն են թոքերը, ձայնալարերը, երախի ետնամասը, մակալեզուն (սոսորդը), լեզվակը, լեզուն, ներքին ծնոտը և շրթունքները։ Թոքերը ծառայում են որպես շնչի աղբյուր և կարող են առաջացնել մի շարք տարբերություններ՝ շնչի առկայությունը կամ բացակայությունը, արտաշընչումը և ներշնչումը, ուժգնության և տևողության տարբեր աստիճանները։ Սրանց միանում են մյուս օրգանների առանձնակի կամ համակցված գործողությամբ, նրանց ընդունած տարբեր դիրքերով ու ձևերով, շարժումների տարբեր ուժգնությամբ ու տևողությամբ առաջացած տարբերությունները։ Այդ օրգանները կարող են ստեղծել բացվածքի տարբեր աստիճաններ՝ լայն բացվածքներ, նեղվածքներ, փակվածքներ, սրանց տարբեր տիպի հաջորդումներ ու զուգակցումներ։ Լայն բացվածքների դեպքում հատկապես լեզվի, շրթունքների, ներքին ծնոտի և լեզվակի տարբեր շարժումներով գոյանում են տարբեր ծավալի և ձևի արձագանքարաններ, որոնց առաջացրած արձագանքային տարբերությունները ստեղծում են երանգային տարբերություններ։ Նեղվածքների դեպքում առաջանում է շփում, փակվածքի դեպքում՝ հպում, որոնք որպես աղմուկի տար-

բեր ձևեր հնչութային տարբերություններ են ստեղծում։ Հնարավոր են՝ ա) անցումնային լայնբացվածք-նեղբացվածքային կամ նեղբացվածք-լայնբացվածքային (երկբարբառները), փակվածք-նեղվածքային (հպաշփականները կամ կիսաշփականները) և բ) համակցական՝ փակվածք-բացվածքային (որոշ ձայնորդներ) տիպեր։ Այս բոլորը առաջացնում են երաժշտական ձայնի և ազմուկի, երանգի, ուժի, տոնի և տևողության տարբերություններ, որոնք և տարբեր լսողական ընկալում են տալիս։

Հնչութային հատկանիշների անվանումները կարող են լինել երեք տիպի՝ ֆիզիկական (ակուստիկական), արտաբերական և լսատպավորական։ Այս անվանումները երբեմն խառն կերպով գործածվում են հնչաբանական գրականության մեջ։ Քանի որ ֆիզիկական (ակուստիկական) բնութագրումները չեն կարող լեզվականորեն լիովին գոհացուցիչ համարվել և արտասանողին չեն կողմնորոշում այս կամ այն հնչույթը արտաբերելու մեջ, իսկ լսատպավորական բնութագրումները չեն կարող լիովին փոխարինել արտաբերականներին և սրանց համեմատությամբ բավարար չափով տարբերակված չեն (համմտ. «ոնդայնություն»), ուստի և մենք գերադասում ենք դիմել արտաբերական բնութագրումներին (անվանումներին), ընդ որում, ըստ հնարավորության, զուգահեռաբար տալիս ենք և մյուսները։ Արտաբերական բնութագրման դեպքում էլ պետք է նկատի առնել երկու կարգի մոտեցում՝ ըստ մասնակցող (գործող) օրգանի և ըստ մասնակցության (գործողության) բնույթի, այսինքն՝ ըստ օրգանի և ըստ նրա լեզվական գործառութային բնութագրելու հնարավորության։

Հնչման աղբյուրը թոքերն են, ուստի և, հավատարիմ մնալով հիերարխիկ (ենթադասական) դասակարգման (հատկապես ատոճանական բարդացման) մեր սկզբունքին, ամենից առաջ նշենք տարբերակման համար միայն թոքերի հետ կապված երկու կարգի հատկանիշների օգտագործման հնարավորությունը՝ 1) թոքերի գործելը կամ չգործելը, այսինքն՝ շնչի առկայությունը կամ բացակայությունը (շունչը և դադարը), 2) շնչի առկայության դեպքում՝ արտաշնչականությունը և ներշնչականությունը. բնականաբար ավելի տարածված են արտաշնչական հնչույթները, բայց տեսականորեն բոլոր հնչույթները կարող են լինել և ներշնչական (այս տիպի հնչույթները հանդիպում են գլխավորապես պայթականների մեջ՝ ճթթոցային հնչյունները)։

Թոքերի և մյուս բոլոր օրգանների մասնակցությունը կարող է արտահայտվել հետևյալ ընդհանուր հատկանիշներով. 1) մասնակ-

ցության տևականությամբ. ըստ այսմ նախ՝ կարող են տարբերվել տևականներ ու ոչ տևականներ և, քանի որ լեզուն օգտագործում է ամեն մի փոքր հնարավորություն, տևականները կարող են տարբերակվել ըստ տևականության աստիճանների (հաճախ երկու աստիճանով՝ երկար և կարճ, թեև կարող են լինել և երկարության տարբեր աստիճաններ). 2) արտաբերման ուժով. թեև բոլոր հնչույթները, արտաբերման բնական տարբերություններին համապատասխան, ըստ արտաբերման ուժի կազմում են որոշ աստիճանական սանդուղք, բայց նրանք կարող են տարբերակվել սովորական և սովորականից ավելի ուժեղ արտասանությամբ (կարող են լինել նաև ուժգնության տարբեր աստիճաններ). 3) լարվածության աստիճանով (տոնային տարբերություններով). թեև այս դեպքում ևս հնչույթները ըստ լարվածության կազմում են աստիճանական շարք, բայց շարքի անդամները կարող են տարբերակվել ըստ լարվածության աստիճանների. լարվածության տարբերությունների օգտագործման հնարավորությունն աճում է լարվածության բնական նվազման (թուլացման) համապատասխան, այլ կերպ ասած՝ լարվածության բնական տարբերությունները հակառակ համեմատական են հնչութային տարբերակման համար նրանց օգտագործման հնարավորություններին. ամենաքիչ լարված հնչույթների («ձայնավորների») դեպքում դրանք կարող են լինել հավասար (հարթ) և ոչ հավասար. ոչ հավասար լարվածությունը (տոնը) կարող է լինել բարձրացող և իջնող. հնարավոր են դրանց բազմազան համակցություններ՝ երկբարդ (հարթ-իջնող, հարթ-բարձրացող, իջնող-հարթ, բարձրացող-հարթ, բարձրացող իջնող, իջնող-բարձրացող), եռաբարդ և այլն:

Հնչութային մնացած բոլոր տարբերությունները ֆիզիկական (ակուստիկական) առումով երանգային տարբերություններ են: Այդ տարբերությունները կարելի է հանգեցնել երկուսի՝ մասնակցող օրգանները և մասնակցության բնույթը: Եթե թրթռումները դիտենք որպես բացվածք-փակվածքների կամ բացվածք-նեղվածքների պարբերական հաջորդումներ, ապա մասնակցության տիպը կարելի է հանգեցնել բացվածքի տարբեր աստիճանների ստեղծմանը: Այսպիսով, հնչութային մնացած (երանգային) տարբերություններն ստեղծվում են մասնակցող օրգանների ու նրանց մասերի առաջացրած բացվածքի տարբեր աստիճաններով: Բացվածքի մեծությունը հակադարձ համեմատական է արտաբերական հնարավոր տարբերակների թվին, այսինքն՝ որքան մեծ է բացվածքը, այնքան պա-

կաս են հնչույթների տարբերակման հնարավորությունները, և ընդհակառակն։

Ըստ բացվածքի տվյալ տիպի պահպանման կամ չպահպանման կարելի է տարբերել միատիպ կամ անփոփոխ և բազմատիպ (ոչ միատիպ) կամ փոփոխական բացվածքով տիպեր։ Այս դեպքում խոսքը վերաբերում է միայն տվյալ մասի բացվածքային տիպի չափի պահպանմանը, այլապես հիմնական բացվածքի տիպը կարող է ուղեկցվել այլ մասերում առաջացող փակվածքներով, նեղվածքներով կամ թրթռումներով, որոնք կարող են լինել կամ հավելուրդային, ավելի ճիշտ, ծառայել լիահնչությանը, լսելիության ուժեղացմանը, կամ լրացուցիչ երանգ տալ։ Խստորեն ասած, իհարկե, չկան բացարձակ միատիպ հնչույթներ, և որոշ միատիպ հնչույթներ կարող են այդպես կոչվել միայն պայմանականորեն։ Միատիպ բացվածք ունեցողները կարող են տարբերակվել տեղայնացվածների (համեմատաբար լայն բացվածք ունեցողների՝ բացվածքայինների կամ ձայնավորների) և չտեղայնացվածների (նեղվածքով կամ փակվածքով արտասանվողների՝ բաղաձայնների). առաջինների դեպքում մասնակցող գլխավոր օրգանների (հատկապես քմավարագույրի, լեզվի տարբեր մասերի և շրթունքների) միջոցով ստեղծվում են տարբեր չափերի և ձևերի արձագանքարաններ, որոնք և որոշում են հնչույթների բնույթի տարբերությունները. երկրորդների դեպքում արտասանությունը կենտրոնանում է մի տեղում՝ գերազանցապես իրար մոտեցող կամ հպվող օրգանների օգնությամբ։

Չտեղայնացվածները կարող են լինել չսահմանափակված և սահմանափակված բացվածքայիններ։ Սահմանափակված բացվածքայինները լեզվից լեզու կարող են տարբերվել բացվածքայնության տարբեր աստիճաններով, որոնց ճշգրիտ սահմանումը ընդհանուր լեզվաբանության առումով անիմաստ է. կարելի է միայն նշել բացվածքի տարբեր աստիճանների տարբերակիչ հնարավորությունները. հնարավոր է, իհարկե, սահմանափակ բացվածքայինների համար տարբերել գերսահմանափակված և թույլ սահմանափակված բացվածքայիններ, որոնք իրենց հերթին կարող են ունենալ բաց ու փակ տիպեր. այս մանրամասն տարբերությունները ստացվում են միայն լեզվի մասնակցությամբ. մյուս օրգանները (օրինակ՝ շրթունքները) այդչափ տարբերություններ տալ չեն կարող։

Տեղայնացվածները (ոչ բացվածքայինները) կարող են լինել նեղվածքայիններ (շփականներ կամ տևականներ) և փակվածքա-

յիններ (պայթականներ կամ վայրկենականներ)։ Թերևս նեղվածքայինների դեպքում հնարավոր է նեղվածքի աստիճանի տարբերությունների լեզվական օգտագործում, սակայն պայմանավ, որ նեղվածքի օգնությամբ առաջացող շփման աղմուկը պահպանվի։

Բազմատիպ (ոչ միատիպ) բացվածքով հնչույթները կարող են լինել մենահաջորդական և բազմահաջորդական (երկտուն)։ Մենահաջորդականները կարող են լինել ըստ բացվածքների հիշյալ աստիճանների տիպերի՝ 1) բացվածքափոփոխայիններ (երկբարբառներ, եռաբարբառներ և այլն), 2) փակվածք-նեղվածքայիններ (հպաշփականներ կամ կիսաշփականներ) և 3) բացվածք-փակվածքայիններ (ա. բերանային բացվածք և փակվածք՝ կողմնականները, բ. բերանային փակվածք և քմավարագուրային բացվածք՝ ռնգային ձայնորդները)։

Ըստ տվյալ հնչույթների արտաբերման երանգը որոշող օրգանների քանակի տարբերվում են միակենտրոններ և բազմակենտրոններ (ոչ միակենտրոններ)։ Այստեղ ևս հարկավոր է նշել, որ նախ՝ փակվածքայինները (պայթականները) հարաբերական առումով միակենտրոն են, երկրորդ՝ բացարձակ իմաստով միակենտրոններ չկան. վերջին հաշվով թոքերը մասնակցում են բոլոր հնչույթների արտաբերմանը, իսկ ձայնալարերը կարող են մասնակցել ոչ թե լրացուցիչ երանգ հաղորդելու, այլ լսելիությունը ավելացնելու նպատակով (ինչպես ձայնավորների դեպքում)։ Այսպիսով, խոսքը վերաբերում է հիմնական ձևավորող օրգանների գործողությանը։ Այդպիսիք կարող են լինել ակտիվ (շարժական) օրգանները, որոնք ըստ ո՛ր օրգաններին մերձենալու կարող են ստեղծել հնչույթների տարբերակման լրացուցիչ հնարավորություններ։ Ընդունված է հնչույթները դասակարգելիս սկսել բերանի առջևից գնալ ետ, բայց ավելի ճիշտ կլինի հակառակ կարգը, որովհետև այն համապատասխանում է օդի շարժման բնական ուղղությանը և հնարավորություն է տալիս հնչման աղբյուրից գնալ դեպի ձևավորիչները՝ աստիճանական բարդացմամբ։ Ըստ այսմ կարող ենք տարբերել 1. ձայնալարայիններ և ոչ ձայնալարայիններ («զուտ աղմկավորներ» կամ խուլեր). 2. կոկորդայիններ (ստորերախայիններ) և ոչ կոկորդայիններ. 3. ըմպանայիններ (վերըմպանայիններ) և ոչ ըմպանայիններ. 4. քմավարագուրայիններ և ոչ քմավարագուրայիններ (ռնգայիններ և ոչ ռնգայիններ). 5. լեզվակայիններ և ոչ լեզվակայիններ. 6. ետնալեզվայիններ և ոչ ետնալեզվայիններ. 7. միջնալեզվայիններ և ոչ միջնալեզվայիններ. 8. առաջնալեզվայիններ և ոչ առաջնալեզվայիններ՝ առաջնալեզվայինների հնարավոր

(միաժամանակություն և հաջորդում), տևականությամբ, ուղղությամբ (մեկ ուղղությամբ թե տարբեր ուղղություններով) և անցման (կցույթի) ձևով։

Ֆիզիկական առումով պետք է հաշվի առնել ձայնական ալիքների կազմիչ տարրերի (տատանումների) փոխհարաբերությունը և հատկությունները։ Այսպես, տատանումների քանակը (հաճախականությունը) բնորոշում է ձայնի բարձրությունը (տոնը). տատանումների կազմը (լրացուցիչ բարձր տոների կամ օբերտոնների և երաժշտական ձայնի ու աղմուկի տարբեր համակցություններն ու համամասնությունը)՝ երանգը, տատանումների տևողությունը՝ չափը և այլն։

Այս կապակցությամբ մասնավորապես պետք է նշել, որ ձայնին, որպես վիճակի մի դրսևորման, հատուկ են չափի մի քանի դրսևորումներ՝ տևողություն, արագություն (տեմպ), ուժգնություն։ Սրանք որպես չափական հատկանիշներ բնութագրում են վիճակի տարբեր դրսևորումները՝ ըստ վիճակի սահմանափակման աստիճանների։ Վիճակին, լինի այն շարժում թե հանգիստ, ընդհանրապես հատուկ է տևողությունը. շարժմանը (շարժման վիճակին) հատուկ է արագությունը. ազդեցական շարժմանը հատուկ է ուժգնությունը[1]։ Վիճակի և վիճակային չափի տարբեր դրսևորումների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 2-րդ աղյուսակով, որ կազմված է հետևողական բացառման սկզբունքով.

Աղյուսակ 2

1. Վիճակ	Շարժման վիճակ		Հանգիստ վիճակ	1. Տևողություն
2. Շարժում	Ազդեցական շարժում	Անազդեցական շարժում	2. Արագություն (տեմպ)	
3. Գործողություն	Գործողություն	3. Ուժգնություն		

Ինչ վերաբերում է ձայնի մյուս հատկություններին՝ բարձրությանը (տոնին) և երանգին, ապա նրանցից առաջինը որոշվում է տատանումների քանակով, երկրորդը՝ կազմով՝ հիմնական տոնին ուղեկցող լրացուցիչ (բարձր) տոներով (օբերտոններով)։

Մարդու արտասանական օրգանների ստեղծած բազմաթիվ

---

1 Այս մասին տե՛ս շարահյուսության բաժնում՝ մակբայների և բայերի կապակցելիության քննության մեջ։

տարբերություններից հայոց լեզվի (ինչպես և յուրաքանչյուր այլ լեզվի) հնչույթները տարբերակելու համար օգտագործվում է մի փոքր մասը միայն։ Տեսնենք, թե հայերենում ինչպիսի՛ տարբերակիչ հատկանիշներ են հանդես գալիս, այսինքն՝ կատարենք հայերենի հնչույթների դասակարգում։

2. ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՈՒՅԹՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

ա. Հնչույթների երկու հիմնական խմբերը՝ բաղաձայններ և ձայնավորներ

Ներածության մեջ լեզվաբանության բաժինների փոխհարաբերությունը քննելիս մենք զուգահեռ անցկացրինք բաղաձայն—ձայնավոր և գոյական—բայ տարբերակումների միջև։ Այս զուգահեռը գործառական բնույթի է և հենվում է ավելի բարձր մակարդակի ու աստիճանի միավորների մեջ բառերի (բառույթների) և հնչույթների խաղացած դերի վրա։ Ինչպես կտեսնենք, նախադասությունը, սուբստանցիոնալ մեկնաբանության դեպքում, ներկայացնում է որևէ իրական հարաբերություն՝ լինի այն ֆիզիկական, թե հոգեկան բնույթի, թեև բառային արտահայտության առումով ա) կարող են արտահայտված լինել հարաբերության ոչ բոլոր անդամները, բ) հարաբերվող եզրերը և հարաբերիչը կարող են հանդես գալ ոչ անպայման երեք առանձին բառերի միջոցով, այլ որոշ համակցություններով (հմմտ. «Գրիգորը մարդ է», «Գրիգորը գնաց», «գնացի» և այլն)։ Նախադասության անհրաժեշտ տարրը՝ հարաբերիչը, սովորաբար բայական արտահայտություն է ունենում, և, հետևաբար, բայը հանդես է գալիս որպես նախադասություն կազմող («նախադասարար») միավոր։ Սրան հակադրվում է գոյականը որպես հարաբերվող եզր։ Մոտավորապես նույն հարաբերությունն է առկա ձայնավորների և բաղաձայնների միջև, եթե դրանք առնելու լինենք ըստ շարակարգային նվազագույն միավորի՝ վանկի հետ ունեցած հարաբերության, այսինքն՝ վանկի մեջ կատարած դերի (դործառության)։ Գործառական առումով ձայնավորները միայնակ կարող են վանկ կազմել, բաղաձայնները՝ ոչ (ձայնավորները վանկարար միավորներ են, բաղաձայնները՝ ոչ)։ Վանկի կազմում բաղաձայնները հանդես են գալիս որպես յուրատեսակ հարաբերվող եզրեր, կապվում են (հարաբերվում են) ձայնավորների միջոցով։ Ճիշտ է, սակայն, որ այս անալոգիան թույլ կողմեր ունի։ Մասնավորապես պետք է նշել, որ բայը որպես երկպլանային միավոր կա-

րող է հանդես գալ գոյականական, ածականական և մակբայական գործածությամբ, մինչդեռ հայերենում ձայնավորներն ընդհանրապես չեն կարող բաղաձայնական գործածություն ունենալ (ուրիշ լեզուներում հնարավոր է ձայնավորների ոչ-վանկարար գործածության երկբարբառների կազմում)։

Ձայնավորների և բաղաձայնների գործառական տարբերակումը հենվում է վանկի վրա, որ մենք պետք է հետո քննենք։ Այսպիսով, այստեղ նախ քննվում են տարրերը, ապա դրանցից բաղադրված միավորները, թեև հետևողական լինելու դեպքում պետք է ընդունվի հակառակ կարգը։ Եթե գոյականի և բայի տարբերման համար հիմք է ծառայում նրանց ձևաբանական հարացույցների տարբերությունը, ապա այս դեպքում ձայնավորների և բաղաձայնների տարբերակման այդպիսի որոշակի հիմքեր չկան։ Մնում է գործառական հիմքը փոխարինել բնախոսական հիմքով՝ այդ հնչույթների կազմավորման տարբերությամբ։ Հնչույթների այս երկու խմբերի հիմնական տարբերությունն այն է, որ ձայնավորները բացվածքային միավորներ են, արտասանվում են ազատ կերպով՝ առանց արգելքների, պարունակում են միայն ձայն (երաժըշտական ձայն, որպես ձայնավորների տատանման արդյունք), բայց ոչ աղմուկ. շարժուն (ակտիվ) օրգանները միայն երանգավորում են ձայնավորները՝ փոխելով արձագանքարանների չափերը և ձևերը։ Այս ազատ արտասանությունն էլ հնարավորություն է տալիս ձայնավորներին հանդես գալու որպես հարաբերվող տարրեր, ֆոն ստեղծելու բաղաձայնների համար։ Բաղաձայնները հանդես են գալիս որպես հնչանշանների հիմնական տարբերակիչներ, բնորոշվում տարբեր փուլերում գոյացող հպվածքով և նեղվածքով, որոնք առաջացնում են զանազան երանգի աղմուկներ։

Հայերենի համար կարելի է տարբերել բացվածքի չափի 5 աստիճան՝ 1) զրո բացվածք կամ հպվածք (փակվածք), 2) նեղվածք, 3) նեղ բացվածք, 4) միջին աստիճանի բացվածք և 5) լայն բացվածք։ Բացվածքի առաջին երկու աստիճանները հատուկ են բաղաձայններին, ընդ որում հպվածքի արագ բացումը առաջ է բերում պայթման աղմուկ, նեղվածքը՝ շփման աղմուկ. մյուս երեք աստիճանները հատուկ են ձայնավորներին։ Ուրիշ լեզուներում կարող են տարբերվել բացվածքի լրացուցիչ այլ աստիճաններ, առանձնապես 3-րդի և 4-րդի բաց և փակ տարատեսակներ։ Քանի որ ձայնավորները զերծ են աղմուկից, ուստի բուն ձայնը, որ առաջանում է ձայնալարերի թրթռումից, պահում է նրանց անհրաժեշտ տարրը։

Հայերենի 36 հնչյուններից ձայնավորներ են 6-ը՝ ա, է (բառամիջում գրվում է ե), ը, ի, ու, ո (բառամիջում գրվում է ո), բաղաձայններ 30-ը՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ:

բ. Բաղաձայններ

Հնչյունների հնարավոր բոլոր հակադրություններից ժամանակակից հայերենում իրանում է միայն որոշ քանակ: Այդ քանակը որոշելու համար հարկավոր է գտնել հատկանիշների այն նվազագույն թիվը, որոնցով նրանք տարբերվում են: Քանի որ հայերենի հնչյունների ընդհանուր քանակը 36 է, ուստի և նրանց դասակարգման համար ընտրվող հատկանիշների նվազագույն քանակը կլինի վեց. հինգ հատկանիշը բավարար է միայն մինչև 32 հնչյուն դասակարգելու համար ($2^5=32$): Ընտրվելիք վեց հատկանիշները իդեալական համակարգի դեպքում բավարար են 64 հնչյուն տարբերակելու համար ($2^6=64$), սակայն, ինչպես տեսնում ենք, հայերենի հնչյունների քանակը 36 է, և նույնիսկ այդպիսի վեց հատկանիշ գտնելու դեպքում մենք կունենանք դատարկ վանդակներ: Իրականում հայերենի բոլոր հնչյունները տարբերակելու համար գործող հատկանիշների քանակը վեցից անցնում է:

1) Ամենից առաջ դժվար չէ համոզվել, որ բաղաձայն և ձայնավոր հնչյունների տարբերակիչ հատկանիշները տարբեր բնույթի են. ա) ձայնավորների դեպքում հիմք ընդունվող՝ բացվածքի տարբեր աստիճանների առաջացրած տարբերությունները լիովին հավելուրդային են բաղաձայնների տարբերակման համար. բ) ընդհակառակն, բաղաձայնների հակադրություն ստեղծող այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են փակվածքն ու նեղվածքը կամ ձայնի և աղմուկի համամասնությունը, հավելուրդային են ձայնավորների տարբերակման դեպքում: Մնում է մի ելք. բաղաձայնների և ձայնավորների դասակարգման համար ընտրել տարբեր հատկանիշներ, որոնք արտացոլում են հնչյունների այդ ենթահամակարգերի ներքին հակադրությունների իրական տարբերությունները:

2) Բաղաձայնների մեջ առկա է մի հատուկ խումբ, որի անդամները, այսպես կոչված՝ ձայնորդները, զուգակցում են բաղաձայնների ու ձայնավորների որոշ հատկություններ, թեև հայերենում դրանք վանկարար չեն և, հետևաբար, մտնում են բաղաձայնների մեջ. այլ լեզուներում դրանք կարող են հանդես գալ դիրքային երեք կարգի տարբերակների ձևով՝ որպես վանկարար տարրեր

կամ ձայնավորներ (բաղաձայնների միջև, ընդ որում տվյալ դեպքում բաղաձայնական արժեք ունի նաև սահմանային ազդանշանը, որ հաճախ հանդես է գալիս դադարի ձևով), որպես ոչ-վանկակազմ տարրեր կամ բաղաձայններ (ձայնավորների միջև) և իբրև միջին կարգի միավորներ կամ իսկական ձայնորդներ (ձայնավորների ու բաղաձայնների կամ բաղաձայնների ու ձայնավորների միջև)։ Կազմախոսական-արտաբերական առումով ձայնորդները բնորոշվում են երկու կարևոր հատկությամբ։ Առաջին՝ նրանք զուգակցում են բաղաձայններին հատուկ արգելքի՝ փակվածքի կամ նեղվածքի, և ձայնավորներին հատուկ բացվածքի տարբեր տիպեր։ Վեց ձայնորդներից (մ, ն, լ, ր, ռ, յ)՝ ա) մ–ն և ն–ն կազմվում են շրթնային ու առաջնալեզվա-ատամնային (լեզվածայրա-վերատամնային) փակվածքների և ռնգային բացվածքի միաժամանակյա առկայությամբ, ուստի և հայտնի են որպես ռնգային ձայնորդներ. բ) լ–ն կազմվում է առաջնալեզվա-վերատամնային (լեզվա-ծայրա-ատամնային կամ, ըստ դիրքի, լեզվածայրա-լնդային) փակվածքով և լեզվի երկու կողմերի խջեցման միջոցով կազմվող բացվածքների միաժամանակյա առկայությամբ, ուստի և կոչվում է կողմնական ձայնորդ. գ) ր–ն և ռ–ն կազմվում են առաջնալեզվա-ատամնային և առաջնալեզվա-վերատամնային (լեզվածայրա-լնդային) փակվածք-բացվածքների հաջորդումով՝ թրթռումով, ընդ որում ռ–ի դեպքում թրթռումն ավելի ինտենսիվ է. այս երկու ձայնորդները կոչվում են թրթռուն ձայնորդներ. դ) վերջապես, յ–ն ամենավերին բարձրացման ի ձայնավորի ավելի նեղ (փակ) տարբերակն է, որ ըստ դիրքի մերթ մոտենում է իսկական նեղվածքային բաղաձայններին (միջձայնավորային դիրքում՝ կայարան), մերթ միջին դիրք գրավում նեղվածքային բաղաձայնների և նեղբացվածքային ձայնավորների միջև (ձայնավորի և բաղաձայնի միջև գտնված դիրքում՝ մայր)։ Երկրորդ՝ ձայնորդների մեջ գերակշռում է ձայնը, մյուս բաղաձայնների մեջ՝ աղմուկը. ուստի և ձայնորդները հակադրվում են «աղմկային» բաղաձայններին ըստ ձայնի և աղմուկի համամասնության։

Բաղաձայնների երկու խմբերի և ձայնավորների արտաբերական փոխհարաբերության մասին գաղափար է տալիս 3-րդ աղյուսակը (էջ 71)։

Աղմկային քսանչորս բաղաձայնների առանձնակի դասակարգման համար հարկավոր է առնվազն հինգ հատկանիշ։ Սակայն, ըստ հայերենի աղմկային բաղաձայնների համակարգի բնույթի ու արտա-

Հատկանիշներ	Հնչույթների կարգեր			
	Ձայնորդներ	Աղմկային բաղաձայններ	Ձայնավորներ	—
Արգելքայնություն (փակվածքի կամ նեղվածքի առկայություն)	+	+	−	−
Բացվածքայնություն	+	−	+	−

սանական օրգանների առանձնահատկությունների, հնարավոր չէ բավարարվել հինգ հատկանիշով, և մենք ստիպված ենք թույլ տալ մեկ հատկանշի հավելուրդայնություն՝ կանգ առնելով հետևյալ վեց հատկանիշների վրա՝ 1) առաջնալեզվայնություն, 2) ետնալեզվայնություն, 3) բմպանայնություն (հագագայնություն, շնչեղություն), 4) ձայնեղություն (ձայնալարերի մասնակցություն՝ թրթռում), 5) հպականություն և 6) շփականություն (նեղվածքայնություն)։ Ինչպես տեսնում ենք, առաջին չորս հատկանիշը որոշվում են բուն ակտիվ օրգանների մասնակցության, վերջին երկուսը՝ բուն բացվածքայնության աստիճանների, որոնք տվյալ դեպքում բնութագրվում են որպես արգելքայնության աստիճաններ՝ փակվածք (հըպվածք) և նեղվածք։ Շրթնային բաղաձայնները կբնութագրվեն առաջնալեզվայնության և ետնալեզվայնության հատկանիշների բացակայությամբ, այսինքն՝ այս հատկանիշների միաժամանակյա բացասական գնահատմամբ։ Ընդհանրապես վեց հատկանիշը կարող են տարբերակել վաթսունչորս միավոր ($2^6=64$), ուստի և հարկ կլինի կազմել 64 վանդականոց վերլուծական տիպի աղյուսակ (աղյուսակ 4)։

Բոլոր վաթսունչորս վանդակների լրացվելու դեպքում մենք պետք է ունենայինք հատկանիշների $\sum_{n=0}^{m} C_m^n$ քանակ ունեցող միավորներ՝ վեց հատկանիշ ունեցող 1, հինգ հատկանիշ ունեցող 6, չորս հատկանիշ ունեցող 15, երեք հատկանիշ ունեցող 20, երկու հատկանիշ ունեցող 15, մեկ հատկանիշ ունեցող 6 և զրո հատկանիշ ունեցող 1, ընդամենը 64 աղմկավոր բաղաձայն հնչույթ։ Սակայն իրականում հայերենում առկա է 6 հատկանիշ ունեցող 1 (չ), 5 հատկանիշ ունեցող 2 (ջ, ց), 4 հատկանիշ ունեցող 3 (ժ, ճ, ձ), 3

հատկանիշ ունեցող 8 (շ, թ, դ, զ, ծ, ֆ, գ, ղ), 2 հատկանիշ ունեցող 8 (տ, ս, կ, խ, փ, հ, բ, վ) և 1 հատկանիշ ունեցող 2 (պ, ֆ) այդպիսի հնչույթ։

Հայերենի ազմկային բաղաձայն հնչույթների փոխհարաբերությունը կարելի է ստատահայտել 5-րդ համադրական աղյուսակով։

Աղյուսակ 5

Հատկանիշներ			Առաջնալեզվային				Ոչ-առաջնալեզվային			
			Ձայնեղ		Ոչ-ձայնեղ (խուլ)		Ձայնեք		Ոչ-ձայնեղ (խուլ)	
			հպա-կան	Ոչ-հպա-կան	հպա-կան	Ոչ-հպա-կան	հպա-կան	Ոչ-հպա-կան	հպա-կան	Ոչ-հպա-կան
Ոչ-խուլ	Ոչ-բաղաձայնային (ձայնավոր)	Ոչ-շփա-կան	դ	—	տ	—	բ	—	պ	—
		Շփա-կան	ձ	զ	ծ	ս	—	վ	—	ֆ
	Բաղաձայնային (ձայնակապ)	Ոչ-շփա-կան	—	—	թ	—	—	—	փ	—
		Շփա-կան	—	—	ց	—	—	—	—	հ
Խուլ	Ոչ-բաղաձայնային (ձայնավոր)	Ոչ-շփա-կան	—	—	—	—	գ	—	կ	—
		Շփա-կան	ջ	ժ	ք	շ	—	ղ	—	խ
	Բաղաձայնային (ձայնակապ)	Ոչ-շփա-կան	—	—	—	—	—	—	ծ	—
		Շփա-կան	—	—	չ	—	—	—	—	—

Ծթե հաշվի չառնենք տնտեսման (հատկանիշների նվազագույն

Ալիքային բաղադրիչներ	Տարբերակիչ հատկանիշներ					
	Երկարաձգություն (նեղվածքայնություն)	Տրակացություն	Զայնեզուրյուն (ձայնավորային բնույթ ունենալու հակում)	Ըմպանայնություն (շնչականություն)	Քունայնեզվայնություն	Առաջնալեզվայնություն
ա	+	+	+	+	−	−
ե	−	−	−	+	+	+
ը	−	+	−	−	+	+
ի	−	−	−	+	+	+
ո	−	+	−	−	+	+
ու	+	−	−	−	+	+
է	−	+	−	−	+	+
օ	+	−	−	−	+	+
յ	−	+	−	+	−	+
ա	−	−	−	+	−	+
ե	−	−	−	+	−	+
ը	−	−	−	−	−	+
ի	−	−	−	+	−	+
ո	−	−	−	−	−	+
ու	−	−	−	−	−	+
է	−	−	−	−	−	+
օ	−	−	−	−	−	+
յ	−	−	−	−	−	+
ա	−	−	−	−	−	+
ե	−	−	−	−	−	+
ը	−	−	−	−	−	+
ի	−	−	−	−

քանակ ընտրելու) սկզբունքը, այսինքն՝ թույլ տանք հատկանիշների ավելի մեծ համախմբություն, և դասակարգումը կատարենք ոչ ըստ հնչույթների արտաբերման փուլերի, այլ ըստ ամբողջական հնչույթների[2], այսինքն՝ որոշ տուրք տանք ավանդական դասակարգումներին, ապա կստացվի հետևյալ պատկերը (աղյուսակ 6).

Աղյուսակ 6

Հատկանիշներ		Շրթնային: երկշրթնային	Շրթնային: ատամնա-շրթնային	Առաջլեզվային	Երկհնարային (ատամնա-հնարային)	Ետնալեզվային	Կոկորդային
Պայթական	Ձայնեղ	բ	—	դ	—	գ	—
	Խուլ	պ	—	տ	—	կ	—
Շփական	Շնչեղ-խուլ	փ	—	թ	—	ք	—
	Ձայնեղ	—	վ	ղ	ժ	ղ	—
	Խուլ	—	ֆ	ս	շ	խ	հ
Հպաշփա-կան	Ձայնեղ	—	—	ձ	ջ	—	—
	Խուլ	—	—	ծ	ճ	—	—
	Շնչեղ-խուլ	—	—	ց	չ	—	—

Եթե փորձենք հայերենի աղմկային բաղաձայնները դասավորել այնպես, որ ամեն մի հնչույթ տարբերվի իր հետ գծիկով միացած հնչույթներից միայն մեկ հատկանիշով (բացառությամբ այն դեպքերի, երբ հպականներից անցնում ենք հպաշփականներին), ապա կստացվի կատուցվածքային հետևյալ պատկերը (գծագիր 1, էջ 74)։ Կարելի է նկատել, որ հնգական շարքերը հայերենում խախտված են երկու դեպքում. ա) չկան ղ, ս, թ շարքին համապատասխան ձայնեղ և խուլ շփական (նեղվածքային) ժ և θ հնչույթները (համմտ. անգլերենը), բ) առկա է ճ հնչույթը, որ միջին դիրք է գրավում խ-ի և ֆ-ի միջև՝ առաջինի հետ առնչվելով որպես շփական, երկրորդի հետ՝ որպես ըմպանային (հադադային, շնչական)։

Հայերենի վեց ձայնորդների դասակարգման համար հարկավոր

2 Ինչպես, օրինակ, հպաշփականությունը առանձնացնենք որպես հատկանիշ, փոխանակ այն դիտելու հպականության և շփականության հատկանիշների միացում։



է առնվազն երեք հատկանիշ (երկուսը բավարար չէ՝ $2^2=4$)։ Որպես այդպիսի երեք հատկանիշ կարելի է ընտրել 1) վերատամնայնությունը (լեզվի ծայրի բարձրանալը ատամներից վեր, ինչպես ռ-ի, լ-ի և ն-ի ժամանակ. ր-ի դեպքում լեզվի ծայրը ավելի ցած՝ ատամնային դիրք է գրավում), 2) ռնգայնությունը (քմավարագույրի մասնակցությունը) և 3) թրթռականությունը (աղյուսակներ 7 և 8).

Աղյուսակ 7

Հատկանիշներ	Ձայնորդներ							
	—	ն	ռ	լ	—	մ	ր	յ
Վերատամնային	+	+	+	+	—	—	—	—
Ռնգային	+	+	—	—	+	+	—	—
Թրթռական	+	—	+	—	+	—	+	—

Աղյուսակ 8

Հատկանիշներ	Վերատամնային		Ոչ-վերատամնային	
	Ռնգային	Ոչ-ռնգային	Ռնգային	Ոչ-ռնգային
Թրթռական	—	ռ	—	ր
Ոչ-թրթռական	ն	լ	մ	յ

Առանց տնտեսման սկզբունքի հաշվառման կունենանք հետևյալ պատկերը (աղյուսակ 9, էջ 75)։

Ձայնորդների փոխհարաբերությունը կարելի է պատկերացնել կառուցվածքային 2-րդ գծագրով (էջ 75)։

Հատկանիշներ	Շրթնային	Առաջնալեզվային		Միջնալեզվային
		Ատամնային	Վերատամնային	
Ինդային	մ	—	ն	յ
Թրթռականն	—	բ	ռ	—
Կողմնականն	—	—	լ	—

Գծագիր 2



գ. Ձայնավորներ

Հայերենի վեց ձայնավորները կարելի է դասակարգել ոչ պակաս, քան երեք հատկանշով: Ըստ տնտեսման (խնայողության) սկզբունքի դասակարգման լավագույն տարբերակը կլիներ հենց երեքից ոչ ավելի հատկանիշների ընտրությունը: Սակայն հայերենի ձայնավորների համակարգի անդամները հակադրվում են երեքից ավելի հատկանիշներով, և մենք ստիպված ենք դիմել հետևյալ

Հատկանիշներ	Զայնավոր հնչյուններ															
	ա	ե	է	ը	ի	ու	ո	ա	ե	է	ը	ի	ու	ո	ա	ը
Ներքացվածքայնություն	+	+	–	+	+	+	+	+	–	–	–	–	–	–	–	–
Գերբացվածքայնություն	+	+	+	+	–	–	–	–	+	+	+	+	–	–	–	–
Առաջնաշարքայնություն (առաջնալեզվայնություն)	+	+	–	–	+	+	–	–	+	+	–	–	+	+	–	–
Ետնաշարքայնություն (ետնալեզվայնություն)	+	–	+	–	+	–	+	–	+	–	+	–	+	–	+	–

չորս հատկանիշներին՝ 1) առաջնաշարքայնություն («առաջնալեզվայնություն»), 2) ետնաշարքայնություն («ետնալեզվայնություն»), 3) նեղբացվածքայնություն և 4) լայնբացվածքայնություն կամ գերբացվածքայնություն: Սրանցից առաջին երկուսը որոշվում են լեզվի տարբեր մասերի բարձրացմամբ, վերջին երկուսը՝ այդ բարձրացման հետևանքով ստեղծված բացվածքի աստիճանով: Այսպիսով, շրթնայնացածության, միջնաշարքայնության[3] և միջին աստիճանի բացվածքայնության հատկանիշները դառնում են հավելուրդային: Թերևս այս է պատճառը, որ հայերենում շրթնայնացումը (o, ու) շատ ուժեղ չէ: Ձայնավորների դասակարգումը չորս հատկանիշի հիման վրա կարելի է ներկայացնել հետևյալ վերլուծական 10-րդ (էջ 76) և համադրական 11-րդ (էջ 77) աղյուսակներով:

Աղյուսակ 11

Հատկանիշներ		Նեղբացվածքայնություն		Ոչ-նեղբացվածքայնություն	
		Առաջնաշարքայնություն	Ոչ-առաջնաշարքայնություն	Առաջնաշարքայնություն	Ոչ-առաջնաշարքայնություն
Ոչ-գերբացվածքայնություն	Ոչ-ետնաշարքայնություն	ի	—	է	ը
	Ետնաշարքայնություն	—	—	—	օ
Գերբացվածքայնություն	Ոչ-ետնաշարքայնություն	—	—	—	
	Ետնաշարքայնություն	—	ու	—	ա

Առանց տնտեսման սկզբունքը հաշվի առնելու կունենանք հետևյալ պատկերը (աղյուսակ 12, էջ 78):

Հայերենի ձայնավորների փոխհարաբերությունը կարելի է ներկայացնել կառուցվածքային գծագրով (գծագիր 3, էջ 78):

Ձայնավորների հիմնական տարբերությունները, ինչպես տեսնում ենք, կապված են բերանի խոռոչի, որպես արձագանքարանի, ձևի և չափի տարբերությունների հետ: Ձևի տարբերությունները

3 Ը-ն երբեմն դիտվում է որպես «խառն» տիպի ձայնավոր, այսինքն՝ բնութագրվում է ոչ թե «ո՛չ-ա՛չ», այլ «և՛-և՛» հարաբերությամբ:

Հատկանիշներ	Առաջին շարքի	Միջին շարքի	Երրորդ շարքի	
			Շրթնայնացած	Ոչ-շրթնայնացած
Վերին բարձրացման (նեղրացվածքային)	է	—	ու	—
Միջին բարձրացման	է	ը	օ	—
Ստորին բարձրացման (լերբացվածքային)	—	—	—	ա

կապված են լեզվի տարբեր մասերի բարձրացման և շրթունքների կլորացման կամ հանգիստ վիճակների, չափի տարբերությունները՝ լեզվի տարբեր մասերի բարձրացման տարբեր աստիճանների (բացվածքի աստիճանների) հետ։ Այս տարբերությունները հայերենում

Գծագիր 3



ընկալվում են որպես ձայնավորների որակական տարբերություններ, այսինքն՝ հանդես են գալիս որպես էական (ռելևանտ) հատկանիշներ։ Սրանց հետ միասին կարող են հանդես գալ, այսպես կոչված, վերհնչութային կամ առոգանական տարբերություններ, որոնք հնչույթների վիճակարար (վիճակային) հատկությունների տարբերություններ են[4]։ Այս տարբերությունները

[4] Սրանում հնչում է համոզվել, եթե նկատի առնենք, որ այս հատկանիշներն արտահայտող բառերը հանդես են գալիս որպես բայերի տարբեր հարաբերությունները որոշող մակբայներ՝ «երկար քայլել», «ուժգին հնչել», «բարձր խոսել»։

տևողության, տոնի (ելևէջի, բարձրության) և ուժգնության տարբերություններն են։ Ուրիշ լեզուներում տևողության տարբեր աստիճանները և բարձրության տարբեր տիպերը կարող են հանդես գալ որպես էական (ռելևանտ) հատկանիշներ, այսինքն՝ իրարից տարբերել հնչույթները և արանով իսկ ծառայել լեզվական նշանների իմաստային տարբերակմանը։ Հայերենում այդ տարբերությունները ծառայում են վանկերի տարբեր քանակի կապակցությունների, հնչաշղթայի տարբեր հատվածների, բնույթի ու փոխհարաբերության և արտահայտվող անձի սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորմանը[5]։

Վերհնչութային հատկանիշները հայերենում հազվադեպ են հանդես գալիս «մաքուր» ձևով. ավելի հաճախ են դրանց տարբեր տիպի համակցությունները (կոմբինացիաները)։ Այս հատկանիշներից տևողությանը և ուժգնությունը կարող են տարբերություններ ստեղծել ոչ միայն ձայնավորների, այլև բաղաձայնների դեպքում, թեև նրանք ամենից ավելի բնորոշում են ձայնավորների ուժի և տևողության տարբերությունները։ Բարձրությունը, որ, ըստ հնչույթների արտաբերման առանձնահատկությունների, ինքնին տարբեր է հնչույթների տարբեր խմբերի մեջ, ձայնավորների դեպքում առաջ է բերում զանազան կարգի լրացուցիչ տարբերություններ։ Տոնի տարբերությունները կազմվում են երկու հակադիր հատկանիշներով՝ բարձրացում և իջեցում (ցածրացում), որոնք տալիս են հետևյալ եզրերը (աղյուսակ 13).

Աղյուսակ 13

Հատկանիշներ	Եզրեր			
	Փոփոխական տոն	Բարձրացող տոն	Իջնող տոն	Հարթ (հավասար) տոն
Բարձրացում	+	+	—	—
Իջեցում	+	—	+	—

Նշենք, որ հարթ տոնը կարող է լինել բարձր և ցածր, իսկ փոփոխական տոնը, բացի բարձրացման և իջեցման երկու համակցումից (բարձրացնող-իջնող և իջնող-բարձրացող), կարող է տալ

5 Թերևս բացառություն է կազմում ո-ն, որ ը-ին հակադրվում է ոչ միայն արտաբերության տեղով, այլև ուժգնությամբ։

տարբեր համակցումներ նաև հարթ տոնի հետ։ Հնարավոր են, իհարկե, նաև երկուսից ավելի եզրերի համակցումներ։ Այս բոլոր տարբերությունները, որ կապվում են տևողության և երբեմն էլ ուժի տարբերությունների հետ, ինչպես կտեսնենք, նշանակալից դեր են խաղում լեզվի մեջ, ընդ որում սուբյեկտիվ-վերաբերմունքային տարբերությունները սովորաբար գրության մեջ նշվում են առոգանության հատուկ նշաններով (՞, ՜, երբեմն էլ ՛), իսկ հնչաշղթայի հատվածների փոխհարաբերության տարբերությունները սովորաբար չեն նշվում. դրանք ի հայտ են գալիս, ինչպես կտեսնենք, տրոհման տարբեր տիպերի նշանակման հետ կապված։

Ձայնի բարձրության (տոնի) տարբերությունները սովորաբար ընկալվում են որպես դիրքի («բարձր», «ցածր», «միջին» ու «ոլորուն») և ուղղության («բարձրացող», «իջնող», «հարթ», «հավասար» և «փոփոխական») տարբերություններ։

Ուժգնությունը հանդես է գալիս սովորական և սաստկական աստիճաններով. սովորական ուժգնությունը գրության մեջ չի նշանակվում, թեև այն կարող է տարբեր լինել ըստ հնչաշղթայի հատվածների փոխհարաբերության. սաստկականը նշանակվում է հատուկ նշանով՝ շեշտով (՛)։ Սակայն սաստկական շեշտը, բացի ուժգնության հավելումից, ուղեկցվում է նաև տևողության և տոնի հավելմամբ։

Տևողության փոփոխությունը սովորաբար օժանդակ դեր է խաղում բարձրության և ուժգնության փոփոխությունների համար։ Ճիշտ է, գրության մեջ կա երկարության հատուկ նշան (՟), բայց այն արտահայտում է հատկապես տոնի հետ կապված փոփոխություն։

Լեզվաբանության, հատկապես ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ ընդունված է տոնի, ուժգնության և տևողության տարբերությունները դիտել որպես ինքնուրույն հնչույթներ՝ առոգանույթներ (պրոսոդեմաներ). սակայն այստեղ մենք գործ ունենք ոչ թե միավորների, այլ հատկանիշների հետ, հատկանիշներ, որոնք կարող են ստեղծել հնչութային տարբերություններ կամ ծառայել խոսքի ձևավորմանն ու սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտմանը։

II. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀՆՉԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բաղաձայնական կապակցությունը վանկի նկատմամբ ունի նույն հարաբերությունը, ինչ գոյականական բառակապակցությունը նախադասության նկատմամբ: Ինչպես որ բայը կարող է միայնակ նախադասություն կազմել կամ, ըստ արժույթի, լրացվել գոյականներով ու գոյականական բառակապակցություններով, այնպես էլ ձայնավորը կարող է միայնակ վանկ կազմել կամ լրացվել բաղաձայններով ու բաղաձայնական կապակցություններով: Վանկի և նախադասության միջև անցկացվող այս անալոգիան հնարավորություն է տալիս շարահյուսական հնչաբանությունը կառուցել ինչպես բուն շարահյուսությունը. քննել նախ բաղաձայնական կապակցությունը (հմմտ. գոյականական բառակապակցություն), ապա վանկը որպես անկախ միավոր (հմմտ. նախադասություն) և վերջապես վանկերի կապակցությունն ու փոխկաղապարումը (հմմտ. նախադասությունների կապակցություն ու փոխկաղապարում):

Բաղաձայնական կապակցությունները,— ի տարբերություն գոյականական բառակապակցությունների, որոնց կառուցվածքը կախված չէ նախադասության մեջ գրաված դիրքից,— տարբեր կառուցվածք ունեն վանկի սկզբում և վանկի վերջում: Վանկի սկիզբը հայերենում ենթակա է որոշ սահմանափակումների. ա) որոշ կարգի բաղաձայններ (r, ղ) բառասկզբում քիչ են հանդիպում, բ) բաղաձայնական կապակցությունները ունեն միայն որոշակի, և այն էլ անկայուն, կաղապարներ (անկայուն այն իմաստով, որ, ինչպես կտեսնենք, այդ կապակցությունները կարող են մեկնաբանվել որպես լրացուցիչ վանկեր ը ձայնավորով և բանաստեղծություններում հաշվվել որպես լրացուցիչ վանկեր):

Բառասկզբնային բաղաձայնական կապակցությունները կազմվում են «առաջնալեզվային շփական (c_1) + եռնալեզվային պայթական (c_2) + յ ձայնորդ (c_3)»՝ (c_1)(c_2)(c_3) կաղապարով, ընդ որում խուլերն ու ձայնեղները իրար հետ չեն կապակցվում, այլ հանդես են գալիս որպես առանձին ենթակաղապարների տարրեր: Առաջնալեզվային խուլ շփականները են ս, շ, ձայնեղները՝ զ, ժ. եռնալեզվային խուլ պայթականները՝ պ, տ, կ, փ, թ, ֆ, ձայնեղները՝ բ, դ, գ: Այսպիսով, տեսականորեն հնարավոր է ընդհանուր կաղապարի 36 իրականացում՝ խուլերի 24՝ սպ, ստ, սկ, սփ, սթ, սֆ,

շպ, շտ, շկ, շփ, շբ, շf երկանդամ ու համապատասխան եռանդամ (յ պարունակող) կապակցություն և զբ, զդ, զգ, ժբ, ժդ, ժգ երկանդամ ու համապատասխան եռանդամ (յ պարունակող կապակցություն): Սակայն փաստորեն բոլոր հնարավոր 36 դեպքերից իրականանում է,— եթե չհաշվենք հնացած (հմմտ. շկաճել), բարբառային բառերը և նորագույն փոխառությունները,— միայն 12 դեպք, այսինքն հնարավոր դեպքերի մեկ երրորդը՝ սպա, ստեպ, սկիզբ, սկյուռ, սփոփ, սփյուռ, սթափ, սfանշ, շտապ, շպար, զբաղ, զգույշ:

Այս առնչությամբ հարկավոր է նկատի ունենալ հետևյալը.

1) Այսպիսի կապակցություններ պարունակող վանկերում շփականները հաճախ պատմականորեն վերլուծելի տարրեր են. հմմտ. զ–բաղ, զ–գույշ *և այլն: Մի շարք դեպքերում էլ մենք գործ ունենք հին փոխառությունների հետ (հմմտ.* սկյուռ): *Այսպիսով, հայերենի բնիկ բառերում այս կապակցություններն է՛լ ավելի սահմանափակ են:*

2) Ինչպես թռուցիկ կերպով նշվեց, այսպիսի կապակցությունների սկզբում լավում է թույլ ը, *որ լիովին կորչում է այս վանկերի՝ բաղադրությունների մեջ ձայնավորի հաջորդելու դեպքում* (եֆթասպա, ֆիասfանշ *և այլն) և ուժեղանում ոտանավորների մեջ, եթե* ը-ն *դիտվում է որպես առանձին վանկի կրող* (ըս–տա–ճալ, ըշ–տապ *և այլն):*

3) Ը-ն թույլ է հնչում հատկապես նոր սերնդի արտասանության մեջ՝ մանավանդ փոխառյալ բառերում (շտոֆ, սպառտ, ստանդարտ *և այլն) և նրանց ազդեցությամբ:*

4) Ըստ վանկասկզբնային կապակցելիության աղմկային բաղաձայնները կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) վանկի կազմում այլ աղմկային բաղաձայնների հետ կապակցվելու ընդունակ բաղաձայններ՝ նախադիրքային՝ ս, շ, զ, ժ *ու ետդիրքային՝* պ, տ, կ, փ, թ, f, բ, դ, գ *և* բ*) այդպիսի կապակցությունների մեջ մտնելու անընդունակ բաղաձայններ՝ հպաշփականներ՝* ծ, ձ, ց, ճ, ջ, չ *և ոչ-առաջնալեզվային շփականներ՝* վ, ֆ (?), խ, ղ, հ:

Եթե բացառենք յ շփականը, իմաստակիր բաղաձայնների առաջացած լրացուցիչ շարքերը (հմմտ. f *ածանցը* պարտ–f, կուրծ–f *տիպի բառերում) և նորագույն փոխառությունները, ապա կարելի է ասել, որ աղմկային բաղաձայնների վանկավերջային կապակցությունը ներկայացնում է վանկասկզբնային կապակցության ընդարձակված տարբերակը: Ընդհանուր առմամբ կարելի է սահմանել աղմկային բաղաձայնների վանկավերջային հետևյալ*

կաղապարը՝ «ձայնորդ (C_3) + շփական բաղաձայն (C_1) + հպաշըփական բաղաձայն (C_4) + պայթական (հպապայթական) բաղաձայն (C_3)», որտեղ օգտագործված են վանկասկզբնային կապակցությունների նշանները, և ավելացված է հպաշփականների համար C_4 նշանը։ Պետք է նշել, որ՝ ա) հպաշփականների դիրքի որոշումը կատարված է խիստ հազվադեպ օրինակների (համմտ. սց, ծկ՝ հասցնել, եթե ց-ից հետո ը չի արտասանվում, ծածկ, բայց ոչ ցս, կծ) և հնչաշղթայում հնչույթների հաջորդման ավելի սովորական կարգի հիման վրա. բ) ի տարբերություն վանկասկզբնային կապակցության՝ վանկավերջային կապակցության մեջ ձայնորդները և շփականները ավելի մեծ չափով են իրացված. այստեղ տվյալ դիրքերում կարող են հանդիպել բոլոր ձայնորդները և բոլոր շփականները. գ) ձայնորդները և շփականները կարող են ունենալ իրենց մանրակաղապարները. այսպես, ձայնորդների համար հնարավոր է «յ կիսաձայն ձայնորդ+r, n, l ձայնորդ+մ, և ռնգային ձայնորդ» մայր, թարմ և այլն), շփականների համար՝ «առաջնալեզվային շփական + ետնալեզվային շփական» (վաշխ, ստաշխ, խարիսխ) մանրակաղապարները. դ) ձայնորդների և շփականների դեպքում հնարավոր են կաղապարային կարգերի որոշ խախտումներ՝ պայմանավորված պատմական գործոններով (ղ-ն, որ հնում եղել է ձայնորդ լ-ի տարբերակը, կարող է նախորդել մ-ին՝ կողմ, հողմ. գ-ն կարող է նախորդել մ-ին հին փոխառություններում և բաղադրություններում՝ ռազմ, պատերազմ, հավանաբար կազմ և այլն). ե) ինչպես վանկասկզբնային, այնպես էլ վանկավերջային կապակցությունները կազմում են ձայնեղ և խուլ բաղաձայնների շարքեր, որոնց նկատմամբ ձայնորդները չեզոք են, այսինքն՝ կարող են կապակցվել և՛ խուլ, և՛ ձայնեղ բաղաձայնների հետ. ստացվում է հետևյալ ընդհանուր կաղապարը.

$$C_3 + \begin{cases} C_1^{\text{ձ}} + C_4^{\text{ձ}} + C_2^{\text{ձ}} \\ C_1^{\text{խ}} + C_4^{\text{խ}} + C_2^{\text{խ}} \end{cases}$$

զ) ինչպես վանկասկզբնային կապակցությունների դեպքում, այստեղ ևս իրականանում են կաղապարային ոչ բոլոր տիպերը (տեսականորեն հնարավոր է 1 քառանդամ, 4 եռանդամ, 6 երկանդամ, այլև 4 միանդամ տիպ) և ոչ բոլոր հնարավոր կոնկրետ դեպքերը. է) ի տարբերություն վանկասկզբնային կաղապարի, այստեղ հնարավոր չէ գտնել լիանդամ նմուշ, որ ունենա բոլոր չորս անդամ-

ները. հնարավոր են միայն երկանդամ և եռանդամ մասնակապա-պարների նմուշներ, ընդ որում վերջիններս էլ f վերջաբաղաձայնով՝ կուրծ–f):

2. ՎԱՆԿ

Վանկի բնույթի և կազմության հարցերը վերջին ժամանակներս ավելի ու ավելի են գրավում լեզվաբանների ուշադրությունը: Վանկի ուսումնասիրությունը կատարվում է միաժամանակ և՛ գործառական-կառուցվածքային, և՛ փորձառական-ակուստիկական ճանապարհներով[6], որոնց տված արդյունքները նշանակալից չափով առաջ են մղում վանկի մասին մեր ունեցած գաղափարները:

Սկսել են ուշադրության արժանանալ նաև հայերենի վանկի կազմության, վանկատման և հնչույթների կապակցությունների հարցերը[7]:

Այս բոլորով հանդերձ վանկի ուսումնասիրության վիճակը դեռևս շատ հեռու է բավարար լինելուց. վանկի տեղը լեզվաբանական միավորների շարքում մնում է դեռ բավարար չափով չպարզաբանված:

Վանկի նկատմամբ հնարավոր է երկու կարգի մոտեցում, որ մենք պայմանականորեն կկոչենք համադրական և վերլուծական: Առաջին դեպքում մասերից (հնչույթներից) են գնում դեպի ամբողջը (վանկը), երկրորդ դեպքում, ընդհակառակն, ամբողջից (հնչաշղթայից) դեպի մասերը (այդ թվում և վանկը): Առաջին մոտեցմամբ վանկը սահմանվում է որպես հնչյուն (հնչույթ) կամ հնչյունների (հնչույթների) կապակցություն, որ արտասանվում է օդի մեկ մղումով: Երկրորդ մոտեցմամբ վանկը դիտվում է որպես արտասանական շղթայի մի հատված, որտեղ առավել հնչեղ և նվազագույն չափով լարված հնչումն ընկած է ավելի քիչ հնչեղ և ավելի մեծ

---

6 Համմտ. առանձնապես *Е. Курилович*, Вопросы теории слога, «Очерки по лингвистике», М., 1962. *Н. И. Жинкин*, Механизмы речи, М., 1958. Произнесение слов—концепция глоточного образования слога, IJSLP, I, II, 1959 և այլն: Տե՛ս նաև *О. С. Ахманова*, Фонология, морфонология, морфология, М., 1966.

7 *С. Б. Тошьян*, Слогораздел и строение слога в армянском языке, ВЯ, 1969, 3, էջ 116—124: *А. Аралян*, Некоторые выводы по дистрибутивному анализу смычных литературного армянского языка, ВОН Арм. ССР, 1969, № 5. *А. Хачатрян* и *В. Айрапетян*, Экспериментальное исследование согласных армянского языка, Е., 1972: Համմտ. նաև **Ա. Սարգսյան**, *Գրաբարի տիպաբանական բնութագիրը, թեկնածուական դիսերտացիա (անտիպ)*:

չափով լարված հնչումների միջև։ Համադրական սահմանումն իր հիմքերն ուներ դեռևս անտիկ աշխարհում, որտեղ քերականության քննության միավորներն էին համարվում հնչյունը (հին ըմբռնմամբ՝ տառը որպես խոսքի տարր), վանկը, բառը և նախադասությունը («բանը»)։ Հետագայում Մերկելի, Ստորմի և այլոց աշխատություններում այն ստանում է վերևում բերված տեսքը։ Վերլուծական սահմանումը կարող էր հանդես գալ հնդկական քերականության մեջ, որտեղ քննությունն սկսվում էր նախադասությունից, եթե հնդիկները քերականության մեջ ուշադրություն դարձնեին վանկի վրա, մի բան, որ չէր արվում։ Հին աշխարհում ընդհանրապես վանկն ուշադրություն էր գրավում որպես տաղաչափության ուսումնասիրության առարկա։ Վանկի վերլուծական սահմանումը հիմքեր է գտում միայն նոր ժամանակներում, հատկապես Օ. Եսպերսենի և ապա **Լ. Վ. Շչերբայի** աշխատություններում, որոնցից առաջինն առաջ է քաշում հնչեղության, երկրորդը՝ արտաբերական օրգանների լարվածության աստիճանի չափանիշները։

Ա.վելորդ համարելով վանկի վերաբերյալ Ե. Կուրիլովիչի, Ն. Ի. Ժինկինի և ուրիշների հայացքների շարադրանքը՝ մենք այստեղ ցանկանում ենք հետևողականորեն կիրառել ու զարգացնել մեր նախորդ աշխատություններում առաջ քաշված որոշ սկզբունքներ, որոնք հիմք են տալիս վանկի բնույթի և վանկի ու հնչույթի փոխհարաբերության ըմբռնման համար[8]։ Ամենից առաջ մենք նկատի ունենք՝ 1) վանկի մեր ըմբռնումը որպես արտահայտության պլանի շարակարգային նվազագույն միավորի և 2) կաղապարի մեր ըմբռնումը որպես հնարավոր բոլոր տիպերն ընդգրկող կառուցվածքային սխեմայի։ Եթե ձևաբանության մեջ իբրև տիպեր են դիտվում իմաստակիր ձևաբանական միավորների միևնույն քանակն ունեցող ամբողջությունները (մասնիկների դեպքում՝ միամասնիկ, երկմասնիկ, եռամասնիկ և այլն տիպերը), ապա այս դեպքում մենք նկատի ունենք հնչույթների կապակցությունների տիպերը։ Ինչպես որ քերականական կարգերը մենք տարբերում էինք ըստ բառաձևային կաղապարի, այնպես էլ հնչույթները կարելի է դասակարգել ըստ վանկային կաղապարի մեջ գրաված դիրքի։ Այսպիսով, վանկը քննվում է ըստ կազմիչ տարրերի՝ հնչույթների հետ ունեցած հարաբերության, և հնչույթների խմբերը (կարգերը) որոշվում են ըստ

8 Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1968, Г. Б. Джаукян. О соотношении лингвистических единиц и их различительных признаков. ТПВПИЯ, М., 1970.

վանկի մեջ խաղացած դերի (գրաված դիրքի), այսինքն՝ ըստ գործառական (ֆունկցիոնալ) բաշխման։

Քանի որ մենք առանձնակի քննեցինք բաղաձայնական կապակցությունները, ուստի և այստեղ կարող ենք բավարարվել վանկի հատկությունների ընդհանուր քննությամբ։ Վանկը ոչ այլ ինչ է, եթե ոչ հնչական պլանի շարակարգային նվազագույն միավոր, որ բաղկացած է մեկ վանկարար ու պարտադիր և մեկ կամ մի քանի ոչ վանկարար ու ոչ պարտադիր տարրերից. որպես ոչ-վանկարար տարրեր հանդես են գալիս բաղաձայններն ու բաղաձայնական կապակցությունները՝ ըստ նախորդ հատվածում քննված կարգի։ Այսպիսով, վանկի ընդհանուր կաղապարը կունենա (C)V(C) տեսքը, որտեղ C-ն նշանակում է ոչ-վանկարար, V-ն՝ վանկարար տարրը։

Հայերենում չկան երկու կամ ավելի ձայնավորների՝ վանկարար մեկ արժեք ունեցող կապակցություններ՝ երկբարբառներ և եռաբարբառներ, ինչպես մի շարք այլ լեզուներում, ուստի վանկարար տարրն արտահայտվում է միշտ մեկ ձայնավորով։ Դժվարություն է հարուցում յ կիսաձայնի հարցը, որ միջին դիրք է գրավում ոչ-վանկարար ձայնավորի և իսկական բաղաձայնի միջև։ Այն հանգամանքը, որ վանկի ընդհանուր կաղապարում յ-ն հանդիպում է ձայնավորին անմիջապես նախորդող և հաջորդող դիրքերում, խոսում է յ-ի և ձայնավորների կապակցությունների հատուկ բնույթի մասին. այսպիսի կապակցություններն ընդունված է կոչել «երկհնչյուններ» (Գ. Սևակ) բայց այս տերմինը չի բացահայտում օբյեկտիվ էությունը։ Ավելի ճիշտ կլիներ դրանք կոչել «երկբարբառակերպներ»։

Հնարավոր է յ-ի երկու մեկնաբանություն. կարելի է կամ այն դիտել որպես լիակատար բաղաձայն և քննել ոչ-վանկարար տարրերի մեջ, ինչպես մենք արեցինք բաղաձայնական կապակցությունների քննության դեպքում, կամ համարել վանկարար միավորի՝ ձայնավորի լրացական տարր, այսինքն՝ տարբերել բուն ձայնորդներից։ Երկրորդ մոտեցման դեպքում V-ն կիրացվի որպես ձայնավոր կամ երկբարբառակերպ, C-ն՝ որպես բաղաձայն կամ բաղաձայնական կապակցություն (բացի յ-ից)։ Եթե վանկասկզբնային և վանկավերջային բաղաձայնների տիպերը առանձնացնենք՝ նշանակելով փոքրատառերով, ապա վանկի ընդհանուր կաղապարը կունենա հետևյալ տեսքը.



Վանկի այս կաղապարային բանաձևում V*-ն ձայնավորն է,* c_1*-ը՝ ձայնորդների կարգը (բացի յ կիսաձայնից),* c_2*-ը՝ շփականների կարգը,* c_3*-ը՝ հպաշփականների կարգը,* c_4*-ը՝ պայթականների կարգը, ընդ որում խ–ն և ձ–ն նշանակում են վերջին երեք կարգերի խուլ և ձայնեղ խմբերը: Այս դեպքում հաշվի չենք առնում մասնակի բացառությունները, որոնք նշվել են բաղաձայնական կապակցությունների քննության կապակցությամբ: Եթե բանաձևի վերևում և ներքևում գրենք կաղապարն իրացնող հնչույթները, կստացվի հետևյալ պատկերը (գծագիր 4).*

Գծագիր 4



Տեսականորեն հնարավոր վանկային բոլոր տիպերից իրականանում է մի փոքր մասը միայն. եթե նկատի առնենք վանկասկզբնային կապակցությունների դաղտնավանկային արժեքը, և բացառենք սպ, ստ, սկ տիպի կապակցությունները, ապա այդ քանակն ավելի կփոքրանա: Այս դեպքում վանկասկզբում հնարավոր կլինեն միայն «բաղաձայն» և «բաղաձայն + յ» ոչ-վանկարար տարրերը, բառավերջում՝ երեքից ոչ ավելի բաղաձայն (ներառյալ և յ–ն), այն էլ f *բառակազմական մասնիկի դեպքում: Այսպիսով, հայերենում տեսականորեն հնարավոր են, ((C+)C+)*

V (+C(+C(+C))) ընդհանուր բանաձևին համապատասխան[9], հետևյալ տիպերը՝ 1 միանդամ (V), 2 երկանդամ (CV, VC), 3 եռանդամ (CCV, CVC, VCC), 3 քառանդամ (CCVC, CVCC, VCCC), 2 հինգանդամ (CCVCC, CVCCC) և 1 վեցանդամ (CCVCCC), ընդամենը 12 տիպ՝ ա, կա, ակ, լյա, տատ, աղջ, ձյուն, գործ, անցք, կյանք, պատառ, *կյանցք[10]: Ձայնավորով վերջացող վանկերն ընդունված է կոչել բաց, բաղաձայնով վերջացողները՝ փակ վանկեր:

III. ՎԱՆԿԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈԽԿԱՂԱՊԱՐՈՒՄ

1. ՎԱՆԿԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՆՋԱՇՂԹԱ

Վանկը արտասանության (արտահայտության պլանի հնչական դրսևորման) շարակարգային նվազագույն միավորն է, հնչաշղթան՝ առավելագույնը: Հնչաշղթան կարող է բաղկացած լինել վանկերի n քանակությամբ կապակցություններից, բայց այն կարող է բաղկացած լինել նաև մեկ վանկից. այս դեպքում վանկը կներկայացնի հնչաշղթայի բոլոր հնարավոր միավորները:

Ինչպես որ առանձին հնչույթների կազմավորման բնութագրության ժամանակ հաշվի առանք նրանց արտասանական փուլերի և առանձին վանկերի բնութագրության ժամանակ՝ նրանց կազմիչ հնչույթների որակը (բնույթը, կազմը), քանակը, կախումը (միացման տիպը) և կարգը (հաջորդականությունը), այնպես էլ հնչաշղթայի ուսումնասիրության ժամանակ հաշվի կառնենք այն կազմող հատվածների բնույթը (կազմը, որակը), քանակը, կախումը և կարգը: Քանի որ հնչաշղթան կազմող միավորները ոչ այլ ինչ են, եթե ոչ վանկեր, որոնք բնութագրվում են որոշ քանակի հնչույթներով և դրանց վերհնչութային հատկություններով (տևողություն, տոն, ուժգնություն), ուստի և հնչաշղթան կբնութագրվի այդ վանկերի որոշ քանակով, կազմով (համասեռ և տարասեռ

---

9 Բաղաձայնները բերում ենք առանց կարգերի տարբերակման և V-ին անմիջապես նախորդող C-ի տակ նկատի ենք առնում յ կիսաձայնը՝ բացառելով սպ, ստ, սկ տիպի կապակցությունները:

10 Աստղանիշով նշանակում ենք ենթադրական (հնարավոր, բայց չիրականացած) ձևերը:

վանկեր), կարգով (հաջորդականությամբ) և կախումով (միացման բնույթով), այլև տևողության, տոնի և ուժգնության որոշակի հարաբերությամբ։

Վանկերի և այլ միավորների միացման կարգը (կատեգորիան) կոչենք կցույթ, հաջորդականության կարգը (կատեգորիան)՝ շարադասություն, տևողության, տոնի և ուժգնության հարաբերակցությունը՝ հնչերանգ։

Կցույթը հնչաբանական մի միավոր է, որ հակադրվում է մյուս բոլոր հնչույթներին որպես դրանց ժխտումը. այդ բանը դժվար չէ որոշել, եթե նկատի ունենանք հետևյալ երկու հանգամանքները. 1) կցույթների (այդ թվում՝ նաև դադարների) և հնչույթների փոխհարաբերությունը նույնն է, ինչ մի կողմից՝ ժխտական դերանունների և անունների ու մյուս դերանունների, մյուս կողմից՝ ոչ-ի և հաստատական բայերի փոխհարաբերությունը. համմտ. ես, դու, Հակոբը, աշակերտը... և ոչ ոք. այսպես, այդպես, լավ, հերոսաբար... և ոչ մի կերպ. գրում եմ, կարդում եմ, երգում եմ և ոչ. այս առումով առանձին հնչույթներին հակադրվում են նրանց ժխտական ձևերը (համմտ. բ և $\overline{\text{բ}}$, գ և $\overline{\text{գ}}$ և այլն), առանձին բառերին՝ նրանց ժխտված ձևերը (ես—ոչ ես, Գրիգորը—ոչ Գրիգորը, գեղեցիկ—ոչ գեղեցիկ և այլն կամ ես—$\overline{\text{ես}}$ և այլն), իսկ բոլոր հնչույթներին՝ կցույթը (ներառյալ դադարը), բոլոր բառերին՝ ժխտական դերանուններն ու ժխտական բառերը, որպես բոլորի ժխտումներ. 2) կցույթը, դադարով հանդերձ, ունի, հնչույթների նման, տևողության հատկություն, այսինքն՝ ինչպես հնչույթները, այնպես էլ կցույթը կարող է ունենալ որոշ տևողություն. կցույթին ուժի և բարձրության հատկությունները հատուկ չեն։

Կցույթները կարող են լինել մի քանի աստիճանի՝ սկսած զրո աստիճանից (միավորների անմիջական և աննկատելի հաջորդումից) մինչև զգալի տևողությամբ դադարը։ Կցույթը կարող է լինել միացական և տրոհական (անջատական). վանկերը բառի ներսում միացնող կցույթը միացական բնույթի է, հնչաշղթայի ընդհանուր ավարտը նշող դադարը՝ տրոհական բնույթի. մնացած կցույթները միաժամանակ և՛ միացական, և՛ տրոհական արժեք ունեն. ավելի փոքր աստիճանի կցույթների համեմատությամբ նրանք տրոհական են, ավելի մեծ աստիճանի կցույթների (դադարների) համեմատությամբ՝ միացական։

Հնչերանգը հանդես է գալիս որպես հնչաշղթայի վերհնչութային հատկությունների որոշ հարաբերություն, որ ուժգնության, տևողության և բարձրության տարբերությունների պարբերականության և կանոնավորության դեպքում դրսևորվում է որպես ռիթմ: Ջափածո խոսքը ռիթմական խոսք է:

Հնչերանգը կազմող՝ ուժգնության սովորական չեշտերը տարբեր ուժի են լինում ըստ միավորների ենթադասության. պարունակող միավորների ընդհանուր շեշտը, որ ընկնում է որևէ բառի վրա (այն լինում է վերջին բառը, իսկ սաստկական շեշտ ունեցող բառ լինելու դեպքում՝ այդ բառը), ավելի ուժեղ է լինում, քան պարունակվողներինը:

Հնչերանգը կազմող տոնային տարբերությունները կազմում են յուրատեսակ ալիք, որ բնութագրվում է որոշ բարձրացումներով ու իջեցումներով և սովորական առոգանության խոսքի դեպքում ավարտի ժամանակ իջնում է: Եթե հնչաշղթայի մեջ կա սովորականից տարբեր տոն ունեցող բառ, ապա տոնի տարբերությունները (ելևէջումը, ինտոնացիան) որոշ յուրահատկություններ են ձեռք բերում. սպասողական խոսքը (օրինակ՝ հարցումը) սովորաբար ուղեկցվում է բարձրության աճով, որ արտահայտում է խոսողի ներքին լարումը:

Հնչաշղթան կարող է բաժանվել որոշակի հատվածների, որոնք բնութագրվում են սկզբնային և վերջնային տևական դադարներով, ավարտային ելևէջումով: Այս հատվածները երկպլանային միավորների մեջ համապատասխանում են նախադասություններին և կարող են կոչվել հնչական նախադասություններ (հնչական ֆրազներ) կամ, համառոտակի, հնչադասություններ:

Հնչադասությունների մեջ այն վանկերը և վանկերի այնպիսի կապակցությունները, որոնք ունենում են ուժգնության մեկ շեշտ, որ երբեմն կարող է ուղեկցվել (երկար միավորների դեպքում) մեկ կամ մի քանի թույլ շեշտով, կոչվում են հնչաբառեր: Հնչաբառերը երկպլանային միավորներից համապատասխանում են բառերին, թեև որոշ դեպքերում մեկ հնչաբառը կարող է պարունակել մեկից ավելի բառեր: Ինչպես հայտնի է, բառերի առանձնացման համար հիմք է ծառայում նրանց ձևաբանական և գործառական ինքնուրույնությունը, տեղափոխելիությունն ու անխոցելիությունը (բառի մեջ բառ չի դրվում). մինչդեռ հնչաբառի դեպքում հիմք է ծառայում շեշտակրությունը. այս պայմաններում անշեշտ բառերը, լինեն դրանք նախահար (պրոկլիտիկ), թե վերջահար (էնկլիտիկ), միանում են

շեշտակիր բառերին և կազմում մեկ հնչաբառ. համմտ. մի մա՛րդ, գնո՛ւմ եմ, որոնք մեկական հնչաբառեր են, բայց բաղկացած են երկուական բառերից: Հնչաբառերի դեպքում կցույթը կարող է երկայանալ և՛ որպես դադար, և՛ որպես նկատելի անցում՝ սահմանային ազդանշան:

Հնչաբառերի և հնչադասությունների միջև կարող են հանդես գալ միջին կարգի միավորներ, այսպես կոչված՝ հնչատակտերը (արտասանական տակտեր). սրանք բառեր կամ բառերի այնպիսի կապակցություններ են, որոնք, ի տարբերություն բառերի, բնութագրվում են սկզբնային և վերջնային որոշակի՝ հնչադասություններից ավելի փոքր դադարներով և ելևէջային որոշակի բնութագրով: Երկպլանային միավորներից սրանք համապատասխանում են շարույթներին, որոնք կարող են դրսևորվել բառերի կամ բառակապակցությունների ձևով. այսպես: «Ես երեկ առավոտյան գնացի տուն» հնչադասությունը բաղկացած է երեք հնչատակտից՝ *1)* ես, *2)* երեկ առավոտյան և *3)* գնացի տուն:

Այսպիսով, հնչաշղթան բաժանվում է հնչադասությունների, հնչադասությունները՝ հնչատակտերի, հնչատակտերը՝ հնչաբառերի, հնչաբառերը՝ վանկերի, այլ կերպ ասած՝ վանկերը կազմում են հընչաբառեր, հնչաբառերը՝ հնչատակտեր, հնչատակտերը՝ հնչադասություններ, ընդ որում յուրաքանչյուր ստորակարգ միավոր կարող է, որոշ պայմաններում, ներկայացնել բարձրակարգ միավորները. համմտ. վա՜հ, որ և՛ վանկ է, և՛ բառ, և՛ հնչատակտ, և՛ հնչադասություն:

Հնչաբառերը ըստ իրենց պարունակած վանկերի քանակի կարող են լինել միավանկ և բազմավանկ: Մեկ բառի մեջ մտնող վանկերի քանակը հայերենում սովորաբար չի կարող մեկ տասնյակից անցնել: Այսպիսի սահմանափակումներ կան նաև ավելի բարձրակարգ միավորների բաղադրիչների քանակի հարցում, թեև տեսականորեն հնչադասության բաղադրիչ հնչատակտերի քանակը կարող է անվերջ լինել:

Հիշյալ միավորների դեպքում մենք հաշվի չառանք հնչադասությունների տարբեր տիպի կապակցությունները, որոնց դեպքում մի հնչադասությունը որոշ փոխակերպմամբ հատկացվում է մյուսին կամ ավելի սերտորեն միացվում նրա հետ. սրանք քանակական և ոչ թե որակական տարբերություններ են: Այս նույն հիմունքով չի խոսվում նաև զանազան միջադաս բառերի, բառակապակցությունների և նախադասությունների մասին, որոնք բնութագրվում են և մյուսներից առանձնանում որոշ հարթ ելևէջումով:

2. ՀՆՉԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հնչաշղթայի ստորակարգ միավորները բարձրակարգ միավորների կազմում կարող են ազդել միմյանց վրա և ենթարկվել որոշ փոփոխությունների: Հայերենում հնչաբառերը հնչատակտերի և հնչատակտերը հնչադասությունների կազմում ենթարկվում են միայն վերհնչութային՝ շեշտի և տոնի փոփոխությունների՝ ըստ հաղորդման բովանդակության, հաղորդողի վերաբերմունքի և հաղորդման տարրերի հարաբերակցության: Այլ է վիճակը վանկերի դեպքում, որոնք հանդես են գալիս հնչաբառի կազմում. այս դեպքում վանկերը կարող են ենթարկվել ոչ միայն վերհնչութային, այլև հնչութային փոփոխությունների:

Քանի որ հայերենում հնչաբառը բնութագրվում է մեկ շեշտով, այսինքն՝ սովորական շեշտի հիմնական դերը (ֆունկցիան) բառի ձևավորումն է, ուստի և բառի մեջ մտնող վանկերից մեկն է ունենում շեշտ, մյուսները կամ զրկվում են շեշտից, կամ ունենում շեշտակիր վանկի համեմատությամբ թույլ շեշտ: Այստեղից բխում է, որ տոնային (բարձրության) փոփոխությունները կապվում են շեշտակիր վանկի հետ: Կարելի է ասել, որ հնչաբառի անշեշտ վանկերը զրկվում են վերհնչութային-առոգանական հատկանիշներից ընդհանրապես: Այսպիսով, ինչպես վանկի ներսում գոյություն ունի միակողմանի կախում վանկարար և ոչ վանկարար տարրերի միջև, այնպես էլ բառի կազմում գերադաս դիրք է գրավում շեշտակիր վանկը: Արդեն նշել ենք, որ հայերենում սովորական (ոչ-սաստկական) շեշտը իմաստային ծանրաբեռնվածություն չունի, այլ ծառայում է հատկապես բառի ձևավորմանը և, երկրորդաբար, հնչաշղթայի միավորների ենթադասության արտահայտմանը: Սա պայմանավորված է հայերենի շեշտի դիրքային կապվածությամբ. հայերենի շեշտը, հազվադեպ բացառություններով, վերջավանկային է. բացառություն են կազմում հետևյալ դեպքերը. ա) ը-ն ընդհանրապես շեշտ չի ստանում, ուստի և շեշտն ընկնում է այն պարունակող վանկին նախորդող վանկի վրա՝ տո՛ւնը, ֆա՛ղց(ը)ր, մե՛ղ(ը)ր(ը) և այլն. բ) մի՞թե. մա՛նավանդ, նա՛մանավանդ բառերի դեպքում շեշտը սկզբնավանկային է, երորդ-ով վերջացող դասական թվականների դեպքում ընկնում է երորդ-ին նախորդող վանկի վրա՝ հի՛նգերորդ, տա՛սներորդ և այլն:

Բացի վերհնչութային փոփոխություններից, բառի կազմում վանկերը բառակազմական և ձևաբանական հավելումների հետևան-

քով կարող են ենթարկվել հնչութային էական և դիրքային տարբեր փոփոխությունների:

1) Վանկի մասնատում.— Քանի որ վանկասկիզբը սահմանափակումներ ունի,— այն կարող է սկսվել սովորաբար մեկ բաղաձայնով կամ «բաղաձայն +յ» կապակցությամբ,— ուստի և վանկերի միացման դեպքում կարող են լինել բաղաձայնների տեղափոխումներ՝ մարդ+ու → մար-դու, հաց+ի → ճա-ցի:

2) Առնմանություն.— Եթե իրար կողքի հանդիպում են երկու բաղաձայն հնչույթներ, որոնք տարբերվում են արտասանական որևէ մեկ հատկանիշով, ապա նախորդ բաղաձայնը կարող է նմանվել հաջորդին, այսինքն՝ կորցնել այդ տարբերակիչ հատկանիշը. սա հատկապես լինում է ձայնեղների և խուլերի հանդիպման, հազվադեպ՝ նաև արտաբերության տեղի տարբերություն ունեցող բաղաձայնների դեպքում՝ վազ+f → վասf, fաչ+f → fաչf, աճ+ բիծ → ամբիծ և այլն. նշենք, որ՝ ա) գրական արտասանության մեջ ըստ հնարավորին աշխատում են խուսափել այս կարգի նմանեցումից (առնմանության տվյալ դեպքերից), բ) գրության մեջ այս կարգի փոփոխությունները չեն նշանակվում:

3) Հարմարեցում (ակոմոդացիա).— Եթե բաղաձայնը հանդիպում է ձայնավորից առաջ, ապա հարմարվում է նրան ըստ իր արտասանության. այսպես, օրինակ, առաջին շարքի ձայնավորներից (է.ի) առաջ բաղաձայնն արտասանվում է ավելի փափուկ, քան մյուս շարքերի ձայնավորներից (ա, օ, ու, ը) առաջ. հմմտ. կ-ի համար ակ+ի → ակի. ձուկ+ան → ձկան. այս կարգի հարմարեցումը (ակոմոդացիան) դիրքային է և հնչութային նկատելի տարբերություններ չի առաջացնում[11]. այսպիսի փափկացում (քմայնացում) լինում է նաև յ-ից առաջ՝ հանգիստ+յան → հանգստյան:

4) Ամփոփում (սանդհի).— Ի և ու ձայնավորները հանդիպելով այլ ձայնավորների՝ կարող են ենթարկվել անկման և փոփոխության. ա) ի-ն կարող է ընկնել (սղվել)՝ թշնամի+ական → թշնամական. բ) ի-ն միանալով ա-ի հետ կարող է տալ ե՝ տարի+ական → տարեկան. գ) ու-ն միանալով այլ ձայնավորների հետ կարող է փոխվել վ-ի՝ կատու+ի → կատվի: Պետք է նշել, որ այս փոփոխությունները ժամանակակից գրական լեզվում գործուն օրինաչափություններ չեն, այլ կամ ժառանգված են հնից, կամ գործում

11 Այդ տարբերությունները ենթահնչութային են (այլահնչակային՝ ալոֆոնային):

են համաբանությամբ (նմանակությամբ, անալոգիայով)։ Այս պատճառով էլ նորագույն փոխառությունների ու գրական նորակազմությունների դեպքում այդպիսի փոփոխություններ չեն կատարվում՝ **բաղաքացի+ական → բաղաքացիական, թեկնածու+ական → թեկնածուական** և այլն։

5) Շեշտափոխական հնչութափոխություն.— Շեշտակորույս վանկերի որոշ ձայնավորներ և երկբարբառակերպներ կարող են ենթարկվել սղման և փոփոխության։ Հին հայերենում (գրաբարում) այս փոփոխությունները տեղի էին ունենում կանոնավոր կերպով, գրեթե առանց բացառության. ժամանակակից հայերենում դրանք պահպանվել են մասամբ, շատ դեպքերում ժառանգվելով պատրաստի ձևով. այդ պատճառով էլ բառակազմության ժամանակ նման փոփոխություններ առկա են ավելի հաճախ, քան ձևաբանական փոփոխությունների ժամանակ։ Պատրաստի ձևով ժամանակակից լեզվին են անցել նաև միջին հայերենին, արևմտահայ գրական լեզվին և բարբառներին հատուկ հնչութափոխական որոշ դեպքեր՝ **բաղաք+եցի → բաղքեցի, որոր+ան → որրան** և այլն։ Շեշտափոխական հնչութափոխության ենթարկվում են առաջին հերթին փակ վանկերի ձայնավորներն ու երկբարբառակերպները. բաց վանկերի ձայնավորները ենթակա են միաժամանակ և՛ ամփոփման, և՛ շեշտափոխական հնչութափոխության. համմտ. գրաբարում **բարի+ացս → բարեացս** և **բարի+ա+կամ → *բարեական → բարեկամ**։ *Մեր «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» գրքում (Երևան, 1959, էջ 200—201) մենք տարբերել ենք գրաբարի շեշտափոխական հնչութափոխության երկու դեպք. ա) վերին բարձրության **ի** և **ու** ձայնավորները «վերածվում են ամենակարճ **ը** ձայնավորի կամ սղվում՝ **սի՛րտ—սրտի՛, մարմի՛ն—մարմնո՛յ, ջո՛ւր ջրո՛յ** և այլն». բ) «եա, ոյ երկբարբառները և է երկար ձայնավորը վերածվում են համեմատաբար ավելի փակ բնույթի ձայնավորների և կարճանում՝ **եա—ե, ոյ—ու, է—ի՝ կեա՛նք—կենա՛ց, բարութեա՛ն——ի բարութենէ՛, լո՛յս—լուսո՛յ, երևո՛յթ—երևութի՛, է՛շ—իշո՛յ, ֆէ՛ն—ֆինո՛ւ** և այլն». **եայ—է** հնչութափոխությունը մեր կողմից դիտվում է որպես **եա-ի** հնչութափոխության մի դեպք՝ **եայ—եյ—է**։ Գրաբարի հնչութափոխության բնույթի մասին գաղափար է տալիս 5-րդ գծապիրը։

Ինչպես նշվել է, արդի գրական լեզվում հնչութափոխության այս դեպքերը [**ի—(ը), ու—(ը), յա—ե, ույ—ու, ե—ի** ձևով] զգալիորեն սահմանափակվել են. ա) դրանք ամբողջական ձևով հանդես են



գալիս գերազանցապես պատրաստի ժառանգված կամ փոխ առնված բարդությունների, ածանցումների և հիմքային ձևերի, երբեմն էլ համաբանությամբ կազմված ավելի նոր ձևերի մեջ. բ) հոլովման մեջ գործող շեշտափոխական հնչութափոխության դեպքերի համագամանալից քննությունը թողնելով ձևաբանությանը՝ այստեղ հարկ ենք համարում նշել, որ այդտեղ գործուն են միայն ի—(ը), ու—(ը) հնչութափոխությունները, այն էլ միավանկ բառերի և բազմավանկ՝ ոչ-փոխառյալ բառերի եզակի թվի ձևերի դեպքում. օրինակ՝ գի՛ր—գ(ը)րի՛ *[հմմտ. գրաբար* գի՛ր—գ(ը)րո՛յ], ջո՛ւր—ջ(ը)րի՛ *[հմմտ. գրաբար* ջո՛ւր—ջ(ը)րոյ], հանգի՛ստ—հանգ(ը)ստի՛, ուսուցի՛չ—ուսուցչի՛ *և այլն, բայց* տանի՛ֆ—տանիֆնե՛ր, կամուրջ—կամուրջնե՛ր, գաստրի՛տ—գաստրիտի՛, կյա՛նք—կյանքի՛ *(հմմտ. գրաբար* կեա՛նք—կենա՛ց). մատյան—մատյանի *(հմմտ. գրաբար* մատեա՛ն—մատենի՛—մատենի՛ց). լո՛ւյս—լույսի՛ *(հմմտ. գրաբար* լո՛յս—լուսո՛յ). պարտե՛զ—պարտեզի՛ *(հմմտ. գրաբար* պարտէ՛զ—պարտիզի՛—պարտիզա՛ց) *և այլն. սիրտ, հուսո ձևերը պետք է համարել ոչ գործուն և ոչ տարածված՝ գրաբարատիպ ձևեր:*

ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

I. ԳՐԱՆՇԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՀԱՅՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրանշանները արտահայտաբանության ամենից ավելի հեշտությամբ ընկալելի համակարգն են, ուստի, և նրանց ուսումնասիրությունը լեզվաբանական ընդհանուր տեսության կառուցման և հատկապես ընդհանրական կարգերի (կատեգորիաների) դրսևորման առանձնահատկությունները հասկանալու տեսակետից առաջնակարգ նշանակություն ունի։ Այդ պատճառով էլ նրանց վրա կանգ կառնենք փոքր-ինչ ավելի հանգամանորեն և առաջին հայացքից ավելորդ թվացող մանրամասնությամբ։ Ճիշտ է, գրանշանները հնչանշանների և երբեմն շարժանշանների նկատմամբ ունեն երկրորդային բնույթ՝ հանդես գալով որպես նշանների նշաններ, բայց նախ՝ գրավոր խոսքը իր հաղորդակցական արժեքով գրեթե չի զիջում բանավորին և երկրորդ՝ գրական լեզվի յուրացումը սովորաբար սկսվում է գրանշանների յուրացումից։

Գրանշանները հնչանշանների համեմատությամբ ունեն երեք կարևոր առանձնահատկություն՝ ստատիկություն, երկուղղություն և մենաղբյուրություն։ Ստատիկություն ասելով մենք հասկանում ենք գրանշանների այն առանձնահատկությունը, որ նրանք շարժման հետևանք են, բայց իրենք ինքնին առնված շարժում չեն պարունակում (դինամիկ միավորներ չեն ի տարբերություն հնչանշանների, որոնք ինքնին շարժման կրողներ են)։ Երկուղղություն ասելով հասկանում ենք գրանշանների այն առանձնահատկությունը, որ նրանք ծավալվում են ոչ թե մեկ ուղղությամբ, ինչպես հնչանշանները, այլ երկու ուղղությամբ, այսինքն՝ ոչ միայն ձախից աջ, այլև վերև ու ներքև՝ ըստ այն աստրածության մակերեսային (երկչափ) բնույթի, որտեղ նրանք հանդես են գալիս։ Մենաղբյուրություն ասելով հասկանում ենք գրանշանների այն առանձնահատկությունը, որ նրանք ունեն կազմավորման միայն մեկ աղբյուր՝ ձեռքի շարժումը՝ սովորաբար միջնորդված այնպիսի միջոցներով, որոնք տեսանելի հետք են թողնում. մինչդեռ հնչանշանները կազմավորվում են մի քանի աղբյուրի օգնությամբ. այս է պատճառը, որ հնչանշանների

լեզվաբանական քննության ժամանակ աղբյուրի մատնանշումը որակարար է և անհրաժեշտ, գրանշանների քննության ժամանակ՝ ոչ։ Ավելորդ չէ նշել, որ բոլոր դեպքերում մենք ունենում ենք համեմատության որոշ սկզբնական (շատ դեպքում ենթադրական կամ պայմանական) էտալոն՝ կետ, ուղիղ գիծ, հարթ մակերես, որի նկատմամբ եղած բոլոր տարբերությունները արժեքավորվում են՝ համապատասխան կոորդինատներով։

Գրանշանները շարժանշանների համեմատությամբ նույնպես ունեն երեք կարևոր առանձնահատկություն՝ ստատիկություն, երկուղղություն և մննաղբյուրություն՝ այն տարբերությամբ, որ շարժանշանները հնչանշանների նման դինամիկ են և տարաղբյուր, բայց տարբերվում են երկուսից էլ նրանով, որ կարող են ծավալվել երեք ուղղությամբ՝ ոչ միայն ձախից աջ կամ աջից ձախ և վերև կամ ներքև, այլև առաջ և ետ՝ ըստ աղբյուրների բնույթի։

Միաժամանակ նշենք, որ գրանշանները սովորաբար հաղորդակցական արժեք ունեն, հնչանշանները և շարժանշանները՝ նաև ոչ-հաղորդակցական. սովորաբար «հենց այնպես» չեն գրում։

Ինչպես նշվեց, գրանշանները երկրորդական (ածանցյալ) բնույթի են. նրանցով երկրորդաբար նշանակվում են հնչանշանները և շարժանշանները։ Գրառումը կարող է լինել նմանողական (համմտ. օ-ն որպես շրթունքների կլորացմամբ ստացվող ձայնի նշանակում, ձեռքի տարբեր շարժումների միջոցով հաղորդելու վերաբերյալ ձեռնարկների մեջ համապատասխան նկարները) և պայմանական։ Հայերենի և շատ ուրիշ լեզուների գրանշանները գերազանցապես պայմանական բնույթի են։

Եթե համեմատելու լինենք գրանշանների՝ իրար հաջորդող շարքերը, ապա կտարբերենք ընդհատական և ոչ ընդհատական շարքեր։ Հայերենի դեպքում տպագիր տեքստում ամեն մի գրանշան գրվում է առանձին՝ ընդհատական շարքում, ձեռագիր տեքստում գրանշանները գրվում են մասամբ միացած, մասամբ՝ անջատ. անջատ գրելը կախված է երբեմն արտահայտվող իմաստից և լեզվական արժեք ունի, երբեմն գրանշանի գծագրության ընձեռած հնարավորությունից կամ գրողի անհատական հակումներից ու նպատակներից։ Հնչանշանների դեպքում ընդհատականությունը (եթե խոսողի հետ արտակարգ բան չի պատահել) լեզվական-հաղորդակցական արժեք ունի. իմաստային միավորները սովորաբար հանդես են գալիս ընդհատումով, նրանք մեջ եղած հնչանշանները՝ կապված։ Շարժանշաններն ընդհատական բնույթի են ընդհանրա-

պես: Լեզվական արժեք ունեցող ընդհատումները գրավոր խոսքում նշանակվում են կամ բացատով (տպագիր խոսքում այն առանձին նշանների միջև եղած տարածությունից ավելի է), կամ հատուկ նշաններով, որոնք ցույց են տալիս ընդհատման տարբեր աստիճաններ:

Ինչպես լեզվական այլ միավորներ, այնպես էլ գրանշանները կարելի է քննել ըստ հարացույցի, այսինքն՝ ըստ համակարգը կազմող նշանների հետ ունեցած ընդհանրությունների ու տարբերությունների, և ըստ շարակարգի, այսինքն՝ ըստ տեքստը կազմող միավորների կապակցելիության հնարավորության (կապակցվում են, թե չեն կապակցվում) ու հաճախականության (շատ են կապակցվում թե քիչ): Սակայն գրանշանների՝ բաղադրյալ լինելու պայմաններում դրանք ըստ իրենց կազմիչների նույնպես հանդես են բերում հարացուցային և շարակարգային տարբերություններ՝ ըստ կազմիչների տարբերության և հաջորդման: Այսպիսով, հարացուցային և շարակարգային հարաբերությունները հանդես են գալիս և՛ նշանի կազմիչների, և՛ տարբեր նշանների, և՛ նշանների տարբեր խմբերի միջև: Տվյալ դեպքում գրանշանների հարացուցային քննությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ նրանց կազմիչների հարացուցային և շարակարգային քննություն. գրանշաններն էլ իրար կարող են հաջորդել և ըստ այդմ կազմել հարացուցային և շարակարգային շարքեր, օրինակ, բացատով առանձնացած միավորների մեջ, սրանք էլ՝ ավելի մեծ միավորների մեջ և այլն: Յուրաքանչյուր դեպքում մենք կունենանք քննության որոշ մակարդակային սահմաններ: Գրանշանների կազմիչների հարացուցային և շարակարգային քննությունը գրաբանության նյութն է, նրանց կապակցությունների քննությունը գրաբանական ինքնուրույն արժեք չունի և վերաբերում է այլ բաժիններին:

2. ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայերենի գրանշանները բոլոր տեքստերում հավասար գործածություն չունեն. որոշ նշաններ հանդիպում են բոլոր տեքստերում, այլ նշաններ՝ միայն որոշ բնույթի տեքստերում: Բոլոր տեքստերում հանդիպող նշանները հետևյալներն են (փակագծերում բերվում են նշանների անվանումները).

1) Ա,ա (այբ), 2) Բ,բ (բեն), 3) Գ,գ (գիմ), 4) Դ,դ (դա), 5) Ե,ե (եչ), 6) Զ,զ (զա), 7) Է,է (է), 8) Ը,ը (ըթ), 9) Թ, (թո), 10) Ժ,ժ (ժե), 11) Ի,ի (ինի), 12) Լ,լ (լյուն), 13) Խ,խ (խե), 14) Ծ,ծ (ծա),

15) Կ,կ (կեն), 16) Հ,հ (հո), 17) Ձ,ձ (ձա), 18) Ղ,ղ (ղատ), 19) Ճ,ճ (ճե), 20) Մ,մ (մեն), 21) Յ,յ (հի), 22) Ն,ն (նու), 23) Շ,շ (շա), 24) Ո,ո (ո), 25) Չ,չ (չա), 26) Պ,պ (պե), 27) Ջ,ջ (ջե), 28) Ռ,ռ (ռա), 29) Ս,ս (սե), 30) Վ,վ (վեվ), 31) Տ,տ (տյուն), 32) Ր,ր (րե), 33) Ց,ց (ցո), 34) Ւ,ւ (վյուն), 35) Փ,փ (փյուր), 36) Ք,ք (քե), 37) և (և), 38) Օ,օ (օ), 39) Ֆ,ֆ (ֆե), 40) ։ (վերջակետ), 41) . (միջակետ), 42), (ստորակետ), 43)՝ (բութ), 44) ՛ (շեշտ), 45) ՞ (հարցական նշան), 46) ՜ (բացականչության նշան կամ երկար), 47) «» (չակերտներ), 48) () (փակագծեր), 49) ... (կախման կետեր), 50) ..... (բազմակետեր), 51) — (անջատման գիծ), 52) – (միության գծիկ), 53) - (ենթամնա), 54) ՝ (ապաթարց)։ Սրանցից վերջինը արևելահայ գրական լեզվում գրեթե չի հանդիպում, իսկ միության գծիկը և ենթամնան սովորաբար նույնացվում են։

Բերված նշանների մեջ կան այնպիսի զույգեր, որոնք ունեն միևնույն անունը. դրանք 37 հատ են, եթե հաշվի չառնենք 34-րդ կետի առաջին նշանը, որ հանդիպում է միայն տպագիր տեքստերում, բայց չի հանդիպում ձեռագրերում։ Այսպիսով, առանց Ի-ի հայերենի ընդհանուր գործածական նշանների թիվը 91 է։ Եթե սրանց գումարենք 55) բացառը՝ այդպիսին համարելով նշանների միջև հատուկ կերպով թողնվող տարածությունը, և պայմանականորեն նշանակելով .. ձևով, կունենանք 92՝ նշան։

Սովորաբար դիտական, հազվադեպ գեղարվեստական գրականության մեջ հանդիպում են 56) 1, 57) 2, 58) 3, 59) 4, 60) 5, 61) 7, 62) 8, 63) 9, 64) 0 նշանները, որոնցից 2-ը ձեռագրում գրեթե նույնական է Զ-ի, 3-ը՝ Յ-ի, 0-ն՝ Օ-ի հետ, սակայն սրանք հանդիպում են միանգամայն տարբեր հարացուցային շարքերում և, հետևաբար, համանուն են, այն էլ որոշ տիպերում։

Քննելով 34-րդ և 37-րդ նշանների բաշխումը՝ մենք տեսնում ենք, որ՝ ա)ւ-ը հանդիպում է միայն ո-ի մոտ և, հետևաբար, նրա հետ մեկ ամբողջություն է կազմում. բ) և-ը գրության որոշ ձևերում ու դիրքերում փոխարինվում է եվ-ով։ 34-րդ կետը փոխարինելով ՈՒ,ու և 37-րդը՝ Եվ.և (եվ) զույգերով՝ մենք կունենանք 1—39-րդ կետերի դեպքում զույգ տիպեր, ընդ որում 34-րդի երկու անդամները և 37-րդի հատկապես առաջին անդամը ներկայացված կլինեն երկու նշանով։ Այս փոփոխությունից հետո թվենք բերված նշանների ընդհանուր բաշխումը։

Եթե մենք ոչինչ չիմանայինք հայերենի գրանշանների տիպերի մասին, ապա նրանց բաշխման հիման վրա կարելի կլիներ առանձ-

նացնել որոշակի խմբեր: Ամենից առաջ դժվար չէ նկատել, որ որոշ նշաններ կարող են հանդիպել առանձին գործածված և իրար հետ ազատ կերպով շարքեր կազմել. բացատների միջև գտնվող այդպիսի նշանների շարքերի (բառերի) մեջ գրանշանների թիվը կարող է հասնել մինչև երկու տասնյակի (հազվադեպ ավելի): Նշանների մյուս խումբը կարող է հանդիպել միայն առաջին խմբի նշանների և նրանց խմբերի հետ միասին (բացառում են լեզվաբանական տեքստերը): Առաջին տիպի են 1—39 և 56—65-րդ նշանները, երկրորդ տիպի՝ 40—55-րդ նշանները: Առաջիններն կոչենք անկախ, երկրորդները՝ կախյալ կամ, ինչպես ընդունված է ասել, կետադրական նշաններ: Անկախ նշաններից 1—39-րդ և 56—65-րդ ենթատիպերը տարբերվում են նրանով, որ առաջինները առանց բացատի և կետադրական նշանների չեն հանդիպում երկրորդ տիպի նշաններից առաջ, իսկ նրանցից հետո հանդիպում են միայն որոշ սահմանափակ զուգորդություններով և այն էլ միության գծիկով միացած (հմմտ. 1-ին, 2-րդ, 5-ական և այլն): Երկրորդ ենթատիպի նշանները որոշ տեքստերում կարող են փոխարինվել առաջին ենթատիպի նշանների՝ բացատների միջև գտնվող որոշակի զուգորդություններով և, հետևաբար, ամբողջ բառի արժեք ունեն: Ընդունված է առաջին ենթատիպի անկախ նշանները կոչել տառեր կամ տառանշաններ, երկրորդ ենթատիպի անկախ նշանները՝ թվանշաններ: Առաջին կարգի անկախ նշանների (տառերի) ամբողջությունը, դասավորված որոշակի կարգով, կոչվում է այբուբեն:

Ինչպես տեսանք, այբուբենը կազմող՝ 1—39-րդ նշանները (տառերը) հանդես են գալիս զույգերով: Դժվար չէ համոզվել, որ սրանց գործածությունը դիրքային սահմանափակություն ունի. զույգերի երկրորդ անդամները չեն կարող հանդիպել վերջակետից հետո, առաջին անդամները հանդիպում են որոշակի դիրքերում, հատկապես վերջակետից հետո և որոշակի բառերի (օր.՝ հատուկ անունների) մեջ՝ միայն բառասկզբում: Այսպիսով, եթե տառերը դիտենք որպես գրույթներ (գրաֆեմներ), ապա դրանք հանդես կգան երկուական դիրքային տարբերակներով, որոնցից առաջիններն ընդունված է կոչել մեծատառեր կամ գլխատառեր, երկրորդները՝ փոքրատառեր: Մեծատառերը գրվում են հատկապես տողի վրա և փոքրատառերից մեծ մասամբ տարբերվում են մեծությամբ, երբեմն էլ ուրիշ հատկանիշներով: Որոշ դեպքերում (վերնագրեր, կոչեր և այլն) փոքրատառերն ամբողջովին կարող են փոխարինվել մեծատառերով:

Բացի պարտադիր (դիրքային) տարբերակներից, որոշ հիմնա-

կան դրանշաններ ունեն նաև ոչ-պարտադիր (աղատ) տարբերակներ՝ պատմական, տպագրական, անհատական, որոնց քննությունը լեզվաբանական արժեք ունի միայն այն չափով, որ չափով կապվում է գրանշանների տարբերիչ հատկանիշների հետ. համմտ. ե–ի առաջին դծի ուղղահայաց և կոր (ե,ՙ), և–ի՝ վերին ձախ կողմի հավելյալ դծիկով և առանց դրա (և,ն) տիպերը և այլն։ Առաջիկա քննության մեջ մենք ըստ հնարավորին կբացառենք այս կարգի տարբերությունները՝ նկատի ունենալով արդիական, ստանդարտ և անհատական տարբերություններից զերծ ձևերը։

Նշենք, որ որոշ կարգի կետադրական (կախյալ կամ լրացուցիչ) նշաններ գրավոր խոսքը դարձնում են առաջնային հնչյունականի նկատմամբ. դրանք հատկապես չակերտները և փակագծերն են, որոնք բանավոր խոսքում պետք է տրվեն նկարագրորեն և որոշ հնչերանգով։

Կետադրական նշանները տարբեր բաշխում ունեն։ Դրանց մի մասը դիրքային սահմանափակություն ունի, այսինքն՝ հանդիպում է միայն հետևյալ տառերի հետ միասին՝ նրանցից հետո կամ նրանց վրա (լեզվաբանական տեքստերը բացառվում են)՝ ա (Ա), ե (ե), է (է), ը (Ը), ի (Ի), ու (Ու), օ (Օ). այս կարգի նշանները կոչվում են առոգանության նշաններ՝ 44) շեշտ (՛), 45) հարցական նշան(՞) և 46) բացականչության նշան կամ երկար (՜)։ Մնացած նշանների մի մասը հանդիպում է միայն տառերից կամ տառախմբերից (բառերից) հետո՝ բացատի տարբեր աստիճանների փոխարեն կամ բացատից առաջ. այս կարգի նշանները կոչվում են տրոհության նշաններ՝ 40) վերջակետ (։), 41) միջակետ (.), 42) ստորակետ (,), 43) բութ (՝). համմտ. և 55) բացատ (..)։ Մնացած կետադրական նշանները (47—54-րդ) հայտնի են բացահայտության նշաններ անունով։

3. ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԻՔՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի գրանշանների կազմությունը քննելու համար ամենից առաջ հարկավոր է ճշտել, թե ի՛նչ ենք հասկանում կազմիչ տարր ասելով։ Հայերենի (և ոչ միայն հայերենի) գրանշանները հիմնականում բաղադրյալ են՝ կազմված նույնական (կրկնված) կամ տարբեր կազմիչներով։ Եվ սա հասկանալի է. անհրաժեշտ բանակությամբ տարբերակումներ ստանալու ուրիշ ուղի չկա։ Սակայն որպեսզի կարողանանք որոշել նշանի պարզ թե բարդ լինելը, այլև ինչպիսի բարդություն ունենալը, մենք պետք է ճշգրիտ կերպով որոշած լիննենք նվազագույն՝ անբաժանելի կազմիչները։ Բնակա-

նաբար այս տեսակետից առաջին միտքն այն է, որ իբրև առաջնային կազմիչ կարելի է դիտել կետը։ Սակայն նախ՝ կետն անհրաժեշտ քանակությամբ (մանավանդ ընթերցողի համար դյուրընկալ) տարբերակումներ չի տալիս, երկրորդ՝ հայերենի այբուբենի նշանները միայն գծային բնույթի են, իսկ կետադրական նշանների մեջ գերակշռում են գծային նշանները։ Այս դեպքում մնում է հիմնական (նվազագույն) կազմիչ տարր համարել գծիկը՝ նրան հավասարացնելով բութի, շեշտի, ենթամնայի չափերը և երկու կետերի միջև ընկած տարածությունը (բացատը)։ Այս դեպքում, օրինակ, անջատման գիծը և բացականչության նշանը կլինեն երկչափ։

Ավելի առաջ գնալով՝ մենք կարող ենք ընդհանրացնել կետը և գիծը որպես էլակետային միավորներ. այստեղ կունենանք ընդհանուր հարաբերություն՝ չորս տարրերով, որոնցից երկուսը (սահմանային միավորները՝ կետերը) կգանվեն մասնակի՝ հակադրական, գծիկը և բացատը՝ հակասության հարաբերության մեջ։ Գծիկը հիմնական միավոր համարելու դեպքում կետերը կլինեն սահմանային միավորներ. այս դեպքում կետը կհամարվի ամեն մի սահման, որտեղ գիծը վերջանում է կամ բացատով, կամ հատվում է որևէ այլ գծի հետ. նվազագույն կազմիչներ համարելով կետը և գծիկը՝ դրանց տարբեր զուգորդումներով կարող ենք ստանալ բոլոր գրանշանները։ Այս դեպքում մենք կունենանք աստիճանական բարդացվող պատկերներ՝ կազմիչների՝ տարբեր դիրք, ուղղություն, ձև, քանակ և այլն ունեցող զուգակցումներով։ Եթե կազմենք ամենաբարդ գրապատկերը, որ ունենա հայերենի գրանշանների բոլոր հնարավոր տիպերը, ապա այն կլինի ընդհանուր կաղապար։ Հասկանալի է, որ այդ կաղապարը պետք է ընդգրկի տառերի ուղղահայաց և հորիզոնական առավելագույն չափերը։ Քանի որ հայերենի գրավոր խոսքը տարածվում է ձախից աջ և նրա համար հիմք է ծառայում իրական կամ ենթադրական տողը, ուստի գրանշանների համակարգի կաղապարի համար շարակարգ կհամարենք ձախից աջ ձգվող (հորիզոնական և թեք տարբերակներով), հարացուցային՝ վերևից ներքև ձգվող (ուղղահայաց և թեք տարբերակներով) տարբերությունները։

Կաղապարի գծագիրը շատ չբարդացնելու համար անենք հետևյալ վերապահումները. 1) քանի որ կետային նշանները սակավաթիվ են և կարող են դիտվել անկախորեն, որպես լրացուցիչ տարբերություններ, դրանք առայժմ հաշվի չառնենք. նկատի ենք առնում, որ բազմակետերը կարող են երկարացվել ցանկացած չափով. 2) բա-

նի որ ձևի բուն տարբերությունները (կորության և ուղիղ գծերի) կարող են, առանց հակադրությունների կորստի, փոխարինվել ուղղության (ուղիղ և թեք գծերի) տարբերություններով (համմտ. շ և ղ, Ջ և Ջ այլն), իսկ կետագրական նշանների որոշ տարբերությունները կարելի է դանց առնել, ուստի կոր գծերն ընդհանրապես բացառենք. 3) ավելորդ գծիկները, որոնց բացթողումը չի խախտի գծագրի պատկերը, հաշվի չառնենք. 4) նկատի չառնենք մեծատառ Յ-ի ձախ կողմի վերին գծիկը, որ տալիս է չորս չափ:

Ըստ պայմանի՝ եթե այս դեպքում կետից կետ ձգվող ամեն մի տարբերություն համարենք մեկ չափ, դժվար չի լինի համոզվել, որ տողի ուղղությամբ տառերը ձգվում են երկու չափից ոչ ավելի, ուղղահայաց ուղղությամբ՝ հինգ չափից (աստիճանից) ոչ ավելի. այսպես ա, փ. խ, տառերը հորիզոնական (տողի) ուղղությամբ ունեն երկու չափ (երկու գծիկի չափ՝ երեք կետով), ե-ն տողի վրա՝ երեք չափ (երեք աստիճան), Ք-ն տողի տակ երկու չափ (երկու աստիճան): Այսպիսով, կաղապարային բոլոր տարբերությունները կտեղավորվեն երկու չափի և հինգ աստիճանի մեջ: Եթե հիմք ընդունենք գծագրում բերված տառաձևերը, ապա 1-ին գծագիրը բավական կլինի հայերենի բոլոր տառերի ձևերն ու չափերն ընդգրկելու (էջ 104). այս կամ այն տառն ստանալու համար հարկավոր կլինի բացառել միայն մեկ կամ մի քանի չափի և աստիճանի գծիկներ: Այստեղ տողը նշանակվում է կետագծով: Այս դեպքում, ճիշտ է, մեծատառ և փոքրատառ ե, և տառերի տարբերությունը կորչում է, բայց այն կարելի է հաշվի առնել առանձին:

Գծագրի հանգամանալից քննության դեպքում դժվար չէ համոզվել, որ հայերենի այբուբենի մեջ օգտագործված է հնարավոր տարբերակների շատ փոքր մասը միայն, և որ հայերենի բոլոր գրանշաններն ստանալու համար լիովին բավարար է միայն 7 գծիկից բաղկացած ֆիգուրը, որ կարող է տալ $2^7=128$ գրանշան (բացատի հետ միասին): Այսպես, միայն 

ֆիգուրը իր 7 կազմիչ տարրով (| , — , / , \ ) կարող է տալ 128 միավոր՝ 1 յոթատարը+7 վեցատարր+21 հնգատարր+35 քառատարր+35 եռատարր+21 երկտարր+7 միատարր միավոր (գրա-



նշան) + բացատ[1]։ Հասկանալի է, որ այս դեպքում



[1] Այս թվերը կարելի է ստանալ $\sum_{m=0}^{n} C_n^m$ բանաձևով։

ֆիգուրը կլինի կաղապարը, իսկ  *գծիկները՝ կաղապարի կազմիչ տարրերը*[2]*։ Սակայն իրականում հայերենի այբուբենի կաղապարը շատ ավելի բարդ է և ռացիոնալ օգտագործման դեպքում կարող է տալ շատ մեծ գուգորդումներ (կոմբինացիաները)։ Թե որքան քիչ են օգտագործված այստեղ եղած հնարավորու-*



թյունները, երևում է նրանից, որ հիշյալ ֆիգուրի 128 հնարավոր նշանից հայերենում օգտագործված է միայն 8-ը՝ ֊(գծիկ), ՝(քութ), ՛(շեշտ), ւ(վյուն), ս(սե), ո(ո), օ(օ) և բացատ։

Եթե փորձենք պարզել հայերենի տառերի կաղապարի հնարավորությունները՝ հաշվի առնելով ոչ բոլոր, այլ միայն թվանշաններով առանձնացված կետերի միջև եղած գծերը, ապա կունենանք 24 ուղիղ (ուղղահայաց և հորիզոնական) և 16 թեք գիծ, որոնք կտան 2^{40} հնարավորություն։ Սրդ պարզ է, որ օգտագործվում է հնարավոր տարբերությունների մի շատ չնչին մասը։

Ինչո՞վ բացատրել հնարավորությունների այսպիսի անտրնտես օգտագործումը։ Չխոսելով այն մասին, որ այստեղ գործել են պատմական հանգամանքները (տնտեսման սկզբունքին հատուկ ուշադրություն չդարձնելը և ուրիշ այբուբենների համապատասխան տառերն իբրև օրինակ ընտրելը), նշենք երկու կարևոր կողմ ևս՝ դրության և ընթերցման (հանաչողության) պրոցեսների հնչտացման պահանջները։ Ճիշտ է, դրության հնչտացման համար պահանջվում է ըստ հնարավորին մեծ տնտեսում, բայց այս դեպքում կբացառվեն այն բոլոր տարբերականները, որոնք դեպքում հարկ է լինում կտրվել գծից կամ կատարել շարժում ետ. այս առումով նպատակահարմար չէ ընտրել չմիացած կամ լրացուցիչ գիծ ունեցող տարբերականները։ Ավելի մեծ դեր է խաղում տառերի ճանաչողության պրոցեսի, այսինքն՝ ընթերցողի գործի հնչտացումը։ Տրնտեսման և ճանաչողության հնչտացման սկզբունքները այս ընտրում գտնվում են նույնպիսի հակադարձ հարաբերության մեջ, ինչպես հաղորդակցման պրոցեսի այլ կարգի միավորների դեպքում. նվազագույն հավելուրդայնությունը, որ մեծ տնտեսում է տալիս

---

2 *Այս դեպքում փոսատրեն բոլոր կարգի տարրերությունները մենք վերածում ենք գծայինի՝ իրար հաջորդող տարրերությունների։*

հաղորդողի դիրքերից, հասցնում է, ամենափոքր իսկ խանգարման (աղմուկի) դեպքում, հատկանշիության դժվարացմանը։ Կարելի է ասել, որ, հակառակ տնտեսման սկզբունքի, որքան շատ են գրանշանների տարբերությունները, այնքան հեշտ է ճանաչումը։

Քանի որ ամեն մի կազմիչ հանդես է գալիս որպես գրանշանների տարբերիչ հատկանիշ, պարզ է, որ հայերենի այբուբենը կազմված է անհրաժեշտից շատ ավելի տարրերով, և որ, հետևաբար, նրանց հակադրություններն իրականանում են յոթից ավելի հատկանիշներով։ Սակայն կարելի է գտնել մի քանի՝ շատ տարեր ընդգրկող էական հատկանիշներ և դանց առնել երկրորդականները։ **Մենք արդեն բերել ենք առավելագույն հակադրություններ կազմող հատկանիշները։** Եթե դրանցից ընտրենք այնպիսիները, որ հնարավորություն տան ընդգրկելու բոլոր միավորները, ապա միայն 39 փոքրատառերի համար (+1 բացատ=40) պահանջվող հատկանիշների նվազագույն թիվը կլինի 6 (5 հատկանիշը կարող են տարբերակել 32 միավորից ոչ ավելի, 6 հատկանիշը՝ 33—64 միավոր)։ Իրականում մեզ չի հաջողվել գտնել այդպիսի 6 հատկանիշ և ստիպված ենք թուլատրել հատկանիշների ավելի մեծ քանակ՝ զգալի հավելուրդայնությամբ։ Տառանշանները կարող են լինել՝

1) Վերաձիգ (տողից վերև ձգվող).
2) Ստորաձիգ (տողից ցած ձգվող).
3) Միաչափ (մեկ գծիկի չափ տարածվող).
4) Աջափակական (աջ կողմում փակ մաս ունեցող).
5) Ձախափակական (ձախ կողմում փակ մաս ունեցող).
6) Վերաբացվածքավոր (դեպի վեր տարածվող բացվածք ունեցող).
7) Ստորաբացվածքավոր (դեպի ցած տարածվող բացվածք ունեցող).
8) Շեղագիծ (շեղ գիծ ունեցող).
9) Վերաձախագծիկավոր (վերևի ձախ կողմում լրացուցիչ գծիկ ունեցող.
10) Ստորաջագծիկավոր (ներքևի աջ կողմում լրացուցիչ գծիկ ունեցող)։

Այս դեպքում թերևս ավելի նպատակահարմար է բաշխումը ոչ թե ընդհանուր, այլ մասնավորվող հատկանիշներով. կստացվի ծառ, որի ամեն մի ճյուղավորում կունենա մյուսներից տարբեր հատկանիշ՝ հակառակ ընդհանրական բաշխման, որի դեպքում տվյալ մակարդակի բոլոր ճյուղավորումները կունենան միևնույն հատկանիշը։ Ընդհանրական բաշխումը ելնում է առավելագույն, մասնական բաշխումը՝ նվազագույն հակադրությունների սկզբունքից։ Ընդ-

Հանրական բաշխման տասը հատկանիշներից առաջին երեքը կտան բաշխման մի պատկեր (գծագիր 2)[3], որ կարելի է լրացնել մասնակի բաշխումներով (գծագրեր 3—10, էջ 108—112).

Գծագիր 2



Քանի որ դրանշանները տարածվում են ոչ միայն ձախից աջ, այլև վերևից ներքև, մենք ստիպված ենք վերևից ներքև հանդես եկող տարբերությունները վերածել գծային (ձախից աջ տարած-

---

[3] Ավելի ընդարձակելու դեպքում բաո 10 հատկանշի կունենայինք $2^{10}=1024$ նքրային նյուն։

Գծագիր 3



Գծագիր 4





Գծագիր 6





վող) տարբերությունների՝ կազմիչների քանակը և փոխհարաբերությունը պարզելու համար: Այս մեթոդը հիշեցնում է հեռուստատեսության մեջ կիրառվող մեթոդը՝ պատկերի բաշխումը տարրերի և դրանց հաջորդական հաղորդումը: Այսպիսով, բոլոր կարգի հարացուցային տարբերությունները վերածվում են շարակարգայինի, իսկ հարացուցային հարաբերությունները վերածվում են միայն «այո-ոչ» (դրական-բացասական) տարրերի: Հնչաբանության մեջ այս սկզբունքի կիրառումը մի կողմից՝ դյուրանում է՝ շնորհիվ դինամիկ տարրերի դծայնության, մյուս կողմից՝ դժվարանում է՝ կազմության տարբեր աղբյուրների պատճառով:

Գծագիր 8

Գծագիր 9



II. ՀՆՉԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՆՉՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԳՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ա. Քանակական փոխճարաբերություն

Եթե մենք գործ ունենայինք իդեալական գրական լեզվի հետ, ապա հանդես կգար հնչույթների և գրույթների քանակի և բաշխման գրեթե լիակատար համապատասխանություն: Սակայն մի կողմից՝ պատմական հանգամանքները (գրանշանների և հնչանշանների կրած փոփոխությունները՝ սկսած գրանշանների համակարգի ստեղծման օրից), մյուս կողմից՝ գրական լեզվի գործառության, հաղորդակցման պրոցեսի կատարելագործման պահանջը, որ հանդես է գալիս հատկապես գրանշանների համակարգի բնագավառում, առաջ են բերում զգալի տարբերություններ: Եթե հնչական արտահայտության տարրեր համարենք հնչույթները և դրանք արժեքով հավասարեցնենք գրույթներին, ապա կարելի է նշել հետևյալը.

1. Գրույթների և հնչույթների դիրքային և ոճական տարբերակները որոշ առումով տարբեր բնույթ ունեն՝ կապված այն բանի հետ, որ գրանշանների համակարգը ավելի հեշտությամբ է ենթարկվում մարդկային գիտակցական միջամտության: Գրույթների և հնչույթ-

ների անհատական տարբերությունների էությունը մոտավորապես նույնն է. այդ տարբերությունները թույլատրելի են մինչև որոշ սահման՝ մինչև հիմնական տարբերիչ հատկանիշների պահպանումը, որպեսզի չխաթարվի լեզվի գործառության հիմնական կողմը՝ հաղորդակցման իրականացումը։ Գրույթների և հնչույթների դիրքային տարբերակները կապված են խոսքի պրոցեսում իրար հաջորդող միավորների առանձնահատկությունների հետ. սակայն երբեմն երկու դեպքում էլ դեր է խաղում գրողի կամ խոսողի ջանքերի նվազեցման (տնտեսման) օբյեկտիվ պահանջը, ասպա գրույթների մեծատառ և փոքրատառ տեսակների, որպես դիրքային տարբերակների, առանձնացումը լիովին գիտակցական բնույթ է կրում և նպատակ ունի գրավոր խոսքի ընկալման պրոցեսի (ընթերցողի «գործի») հեշտացումը, որոշ կարևոր տարբերությունների՝ ավելի ընդգծելն ու ակնառու դարձնելը։ Գրանշանների գործառական տարբերակները հատկապես նրանց տպագիր և ձեռագիր տեսակներն են, որոնցից առաջիններն ըստ հնարավորին զերծ են անհատական տարբերություններից և ստանդարտացված բնույթ ունեն։ Հնչանշանների դեպքում այսպիսի տարբերություն չկա։ Գրանշանները ինքնին ավելի մեծ հնարավորություններ ունեն մարդկանց գեղագիտական ճաշակը բավարարելու տեսակետից. այս առումով գրույթների և հնչույթների ոճական տարբերակների բնույթը զգալիորեն տարբեր է։

2. Հայերենի հնչույթների քանակը չի համընկնում հայերենի գրույթների քանակի հետ, մի հանգամանք, որի հիմքում ընկած են պատմական հանգամանքները և մասամբ տնտեսման պահանջը։ Չխոսելով գրույթների որոշ դիրքային տարբերությունների, հատկապես մեծատառերի ու փոքրատառերի մասին, նշենք մյուս տարբերությունների հիմնական դեպքերը.

ա) Որոշ դեպքերում և դիրքերում երկու կամ երեք հնչույթ կարող են արտահայտվել մեկական գրանշանով. այսպես, վ, յ, յև հնչութային կապակցությունները բառասկզբում գրվում են ո, ե, և տառանշաններով, ընդ որում և-ը՝ միայն փոքրատառերի համար նախատեսված դիրքերում. ոչ բառասկզբնային դիրքում արանք ունեն օ, է, էվ արժեքները։

բ) Ընդհակառակն, որոշ հնչույթներ կարող են արտահայտվել մեկից ավելի տառանշաններով. ինչպես տեսանք, օ, է հնչույթները բառասկզբում արտահայտվում են է, օ, բառամիջում՝ ե, ո գրանշաններով։ Ու հնչույթն ընդհանրապես արտահայտվում է ո և ւ

կրանշանների զուգակցմամբ, որոնք արդի էտապում դիտակցվում են որպես մեկ գրույթ. ւ–ն անկախ գործածություն չունի:

գ) Ը հնչույթը, որ յուրահատուկ բնույթ ունի և սովորաբար չի հանդիպում շեշտակիր դիրքում, գրվում է միայն բառասկզբնային որոշ դիրքերում (և–ից առաջ) և բառավերջում, այլև ըստ. ըն՝ բառերում (սրանք թեև ընդհանրապես շեշտազուրկ բառեր են եղել, բայց այժմ կարող են հանդիսավոր խոսքում շեշտ կրել). մնացած դիրքերում այն չի հանդիպում՝ հանդես գալով որպես որոշ կարգի հնչույթների կուտակումները տարմանափակող (հենակետային) հնչյուն:

դ) Ձ հնչույթը r–ից հետո սովորաբար չի արտասանվում (խոռհել, շնորհակալ, խոնարհ և այլն), բայց այժմ գրության ազդեցության տակ կարող է արտասանվել:

բ. Որակական փոխհարաբերություն. ուղղագրություն և ուղղախոսություն

Գրության իդեալական համակարգի դեպքում ոչ միայն մեկ հնչույթը կարտահայտվի մեկ գրույթով, և մեկ գրույթը կարտահայտի մեկ հնչույթ, այլև յուրաքանչյուր հնչույթ կարտահայտվի միշտ միևնույն գրույթով, և յուրաքանչյուր գրույթ կարտահայտի միշտ միևնույն հնչույթը: Այսպիսի իդեալական համակարգ, սակայն, գործնականորեն գրեթե չի հանդիպում, մանավանդ եթե գրավոր լեզուն անցել է զարգացման որոշակի ճանապարհ, և ստեղծվել է որոշակի ավանդույթ: Հենց գրության ստեղծման ժամանակ էլ հարկավոր է նկատի առնել տնտեսման (տեղ խնայելու) անհրաժեշտությունը, հնչույթների՝ հնչաշղթայում կրած ձևափոխությունները, տվյալ լեզվի հնչութային համակարգի առանձնահատկությունները: Մյուս կողմից՝ ինքը լեզուն երբեք բացարձակ միատարրություն չի ունենում. նրա մեջ անընդհատ բախվում են գրային և բարբառային, տեղական և օտարաբան, նորմավորված և չնորմավորված տարբերակները: Այս բոլորի հետևանքով յուրաքանչյուր գրական լեզվի համար հարկ է լինում հաշվի առնել գրության և արտասանության տարբերությունները և տալ դրանց փոխհարաբերությունն ու, վերջին հաշվով, գրական նորման որոշող կանոնները:

Գրական լեզուն հանդես է գալիս գրավոր և բանավոր ձևերով, որոնց համար համապատասխանաբար գործում են ուղիղ գրելու կամ ուղղագրական և ուղիղ խոսելու կամ ուղղախոսական կանոն-

ներ։ Առաջին դեպքում հնչույթների համակարգից գնում են դեպի պրույթների համակարգը, երկրորդ դեպքում վարվում են հակառակ ձևով։ Այսպիսով, ուղղագրությունը արտահայտաբանության այն բաժինն է, որ սահմանում է հնչույթները գրության մեջ ուղիղ արտահայտելու՝ ուղիղ գրելու կանոնները։ Ուղղախոսությունը արտահայտաբանության այն բաժինն է, որ սահմանում է ուղիղ արտասանելու, հնարավոր արտասանական տարբերակներից ուղիղ ընտրություն կատարելու կանոնները։

Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ հայերենի ուղղագրությունը խարսխվում է որոշակի սկզբունքների վրա, որոնց դեպքում հաշվի են առնվում տարաժամանակյա և համաժամանակյա գործոններ։

Տարաժամանակյա բնույթի են ուղղագրության ավանդական և ստուգաբանական սկզբունքները, ընդ որում ստուգաբանական սկզբունքը կարելի է դիտել որպես ավանդականի մասնակի դրսևորում։ Ըստ ավանդական սկզբունքի բառերը գրվում են այնպես, ինչպես նրանք ավանդաբար գրվել են, հաշվի չեն առնվում լեզվի ժամանակակից վիճակի արտասանական և կառուցվածքային առանձնահատկությունները։ Այդպիսիք են վարդ (վարթ), կարգ (կարճ), ուղտ (ուխտ), աղբյուր (ախպյուր) տիպի գրությունները։ Ստուգաբանական սկզբունքի դեպքում պահպանվում է բառի սկզբնական կազմության կամ փոխառու աղբյուրի թելադրած գրաձևը, թեև այն չի համընկնում արդի արտասանության հետ. այդպիսիք են խոհուրդ (խորուրթ), շնորհ (շնոր), ճանապարհ (ճանապար) տիպի գրությունները, որոնց դեպքում ճ-ն չի արտասանվում, բայց պահպանվում է։

Համաժամանակյա բնույթի են հնչութային և ձևաբանական սկզբունքները։ Հնչութային սկզբունքով բառերը գրվում են այնպես, ինչպես արտասանվում են, այսինքն՝ հնչույթները տրվում են իրենց համապատասխան գրույթներով. այդպիսիք են գնալ, պատմել, տուն, հաց գրությունները։ Ձևաբանական սկզբունքով միևնույն ձևույթները բոլոր դեպքերում գրվում են միևնույն ձևով, թեև հնչաշղթայի մեջ նրանք կարող են ենթարկվել փոխազդեցական և դիրքային փոփոխությունների՝ առնմանության, ամփոփման, շեշտափոխական հնչութափոխության. հայերենում ձևաբանական սկզբունքը գործում է միայն առնմանական փոփոխությունների դեպքում, երբ ձևույթները գրվում են միևնույն ձևով, անկախ նրանց հնչույթների առնամանական փոփոխությամբ թելադրված ձևերից. ձևաբանական են կողմ (կոխմ), վազմ (վասմ). անրիծ (ամբիծ) տիպի գրությունները։

Հայերենի ժամանակակից ուղղագրության հիմքում դրված են հնչութային և, ավելի քիչ չափով, ավանդական սկզբունքները. համեմատաբար փոքր դրսևորում ունի ձևաբանական սկզբունքը, որ, օրինակ, ռուսերենում հիմնական սկզբունքներից մեկն է:

Հայերենի ուղղախոսության նորմաների խախտումները մի քանի տիպի են՝ գրային, բարբառային և օտարաբան:

Գրային է կոչվում այնպիսի արտասանությունը, որի դեպքում հաշվի չեն առնվում գրության և արտասանության՝ ուղղագրությամբ նորմավորված տարբերությունները. այդպիսիք են ծագել *(փխկ.* ծաֆել*),* կարդալ *(փխկ.* կարթալ*),* խորհուրդ *(փխկ.* խորուրթ*),* ընդհանուր *(փխկ.* ընթանուր*) բառերի նույնական արտասանությունները:*

Բարբառային է կոչվում այն արտասանությունը, որի դեպքում դրական լեզվի արտասանական նորմանները խախտվում են բարբառների ազդեցության տակ. այդպիսիք են գործ*–ի* գործ*,* կանգնել*–ի* կայնել*,* պահել*–ի* պայել*,* սկիզբ*–ի* զկիզբ*,* դարիք*–ի* կարիք*,* ջուր*–ի* ջուռ *արտասանությունները:*

Օտարաբան է կոչվում այն արտասանությունը, որի դեպքում հայերենի արտասանական նորմանները խախտվում են ուրիշ լեզուների ազդեցության տակ: Օտարաբան հնչումը հաճախակի տեղի ունի փոխառյալ բառերում, որոնց դեպքում կարող են պահպանվել փոխառու աղբյուրի արտասանական առանձնահատկությունները: Այդպիսիք են բազաձայնների՝ ե–ից և ի–ից առաջ սովորականից ավելի քմայնացումը (երբեմն դի-ն ձի և տի-ն ծի արտասանելու միտումով), շեշտահաջորդ վանկերի ձայնավորների՝ հայերենի համար անսովոր ուժեղ թուլացումը (դիրեկտոր *փխկ.* դիրեկտոռ*,* տրակտոր *փխկ.* տրակտոռ *և այլն), օտարազգի բառերի թեք հոլովներում փոխառու լեզվի շեշտի պահպանումը* (օպերայից *փխկ.* օպերայի՛ց*,* Պո՛ւշկինի *փխկ.* Պուշկինի՛ *և այլն) և այլն:*

2. ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Կետադրական նշանների երեք խմբերից առոգանության և տրոհության նշանները ծառայում են վերհնչութային հատկանիշների ու միավորների՝ առոգանական ու կցութային տարբերությունների նշանակմանը: Բացահատության նշանները ծառայում են հաղորդման մասերի շարակարգային փոխհարաբերության (կախման)

բացահայտմանը. դրանք մասամբ բխում են գրավոր խոսքի կարիքներից, մասամբ կատարում են ինքնուրույն շարահյուսական-իմաստաբանական դեր. բացահայտության նշաններն իրենց բնույթով մոտ են տրոհության նշաններին:

Առոգանական նշանները արտահայտում են տևողության, ուժգնության և բարձրության՝ սովորականից տարբեր աստիճանները՝ ըստ հաղորդակցման կարիքների, հաղորդողի՝ հաղորդակցողի և հաղորդման նկատմամբ ունեցած վերաբերմունքի: Շեշտը (՛) արտահայտում է հիմնականում ուժգնության, պարույկը (՞)՝ բարձրության, բացականչական նշանը՝ երկարության՝ սովորականից տարբեր դրսևորումները, ընդ որում դրանցից յուրաքանչյուրը, ինչպես նշել ենք, հանդես է գալիս մյուսների ուղեկցությամբ՝ ըստ հանգամանքների ստանալով այս կամ այն կոնկրետ արտահայտությունը: Շեշտի դեպքում ուժգնության աճն ուղեկցվում է երկարության և բարձրության աճով. պարույկի դեպքում բարձրության փոփոխությունն ուղեկցվում է տևողության զգալի փոփոխությամբ. բացականչական նշանի դեպքում երկարության աճը ուղեկցվում է բարձրության զանազան դրսևորումներով:

Տրոհության նշանները կցույթի դադարային դրսևորումների նշանակումներն են, ընդ որում դադարի տարբեր աստիճանները բնութագրվում են նախորդ միավորների տևողության, ուժգնության և բարձրության տարբեր աստիճաններով: Եթե զանց առնենք այն լրացական գործառույթները, որոնք կապվում են նախադասության մասերի փոխհարաբերության հետ և կանոնավորվում են հատուկ պայմանավորվածությամբ (որոշումներով ու հրահանգներով), ապա կարելի է սահմանել դադարի գրավոր նշանակման պայմանական հինգ աստիճան՝ 1) սովորական կամ բացատային, որ արտահայտվում է տառերի որոշակի հեռավորությամբ և հանդես է գալիս բառերի միջև, որպես բառերի սահմանային ազդանշան, 2) բութային՝ բութով (՝) արտահայտվող, 3) ստորակետային՝ ստորակետով (,) արտահայտվող, 4) միջակետային՝ միջակետով (·) արտահայտվող և 5) վերջակետային՝ վերջակետով արտահայտվող: Վերջինս հատուկ է նախադասություններին, մյուսները ծառայում են նախադասության տարբեր հատվածների տրոհմանը: Այս տարբերությունները բացարձակ արժեք չունեն, այլ հարաբերական՝ ըստ խոսքի անհատական տեմպի տարբերությունների և նախադասության հատվածների գործառական փոխհարաբերության. վերջիններս կնշվեն շարահյուսության համապատասխան հատվածներում:

Ավելորդ չէ նշել, որ բութն սկզբնապես նշանակել է ձայնի իջեցումը, այսինքն՝ եղել է առոգանական (տոնային) նշան և համեմատաբար ուշ է անցել տրոհության նշանների շարքը:

Բացահայտության նշաններից չակերտները («»), փակագծերը (( )), անջատման գիծը առանձնացական արժեք ունեն. ա) չակերտներն օգտագործվում են գերազանցապես ուրիշի խոսքը նույնությամբ մեջբերելու, այլև պայմանական անվանումներ ու պայմանական իմաստով գործածություններ ցույց տալու համար. բ) փակագծերն օգտագործվում են միջանկյալ, բուն հաղորդման հետ անմիջապես չկապված, լրացական բնույթի բառերը, բառակապակցությունները և նախադասությունները տարբերարկելու (առանձնացնելու) համար. գ) անջատման գիծն օգտագործվում է ուրիշի ուղղակի խոսքը գեղարվեստական երկերում նշելու և երկար նախադասությունների որոշ հատվածներ առանձնացնելու համար (երկրորդ դեպքում անջատման գիծը կարող է օգտագործվել նաև տրոհության նշանների՝ բութի, միջակետի հետ միասին): Կախման կետերը (...) և բազմակետերը (.....) դրվում են չարտահայտված հույզերի ու մտքերի և կիսատ թողնված հատվածների համար. կախման կետերը հաճախ գործածվում են վերջակետի փոխարեն՝ չարտահայտված հույզը ցույց տալու համար. բազմակետերը գործածվում են կրճատված հատվածների փոխարեն: Միության գծիկը (–) և ննթամնան (-) միացական արժեք ունեն. առաջինը հանդես է գալիս կցական և կրկնավոր տիպի որոշ բարդությունների բաղադրիչները միավորելու (գյուղատնտեսական–արդյունաբերական, մարդ–ավտոմատ, արագ–արագ և այլն), երկրորդը՝ տվյալ տողում չտեղավորվող բառի մի մասի՝ հաջորդ տողն անցնելը նշելու համար:

ԵՐՐՈՐԴ ԽՆԹԱԲԱԺԻՆ

ՇԱՐԺԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՇԱՐԺԱՆՇԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես որ հնչանշանները առաջնային են գրանշանների, այնպես էլ ոչ պայմանական շարժանշանները առաջնային են հնչանշանների նկատմամբ: Սակայն եթե գրանշանները իրենց բնույթով

ծառայում են հնչանշանների արտահայտմանը (լոկ պատկերագրության և գաղափարագրության մեջ են նրանք անմիջաբար արտահայտում առարկաները և գաղափարները), ապա հնչանշանները չեն ծառայում շարժանշանների արտահայտմանը, այլ ինքնուրույն արժեք ունեն: Իրենց ծագմամբ հնչանշանները ոչ պայմանական շարժանշանների մասնակի դրսևորումն են. որակական տարբերություն չկա մարմնի մյուս մասերի շարժումների և արտասանական օրգանների շարժումների միջև. տարբերությունն արդյունքի մեջ է. շարժանշանները անմիջականորեն տեսանելի շարժումներ են և ինքնին ընկալելի. հնչանշանները արտասանական օրգանների շարժումների արդյունքն են, ընդ որում այդ շարժումներն ընկալվում են ոչ թե անմիջաբար, այլ ձայնի՝ օդի տատանումների միջոցով: Շարժանշանները տեսողական են՝ լուսանշաններ, հնչանշանները՝ լսողական նշաններ են:

Ինչպես որ հնչանշանները կարող են լինել պայմանական (նշանակվող առարկայի հետ պայմանականորեն և, կարելի է ասել, պատմականորեն կապված) և ոչ պայմանական (նշանակվող առարկայի հետ անմիջաբար կապված, գրեթե ինչպես բնաձայնությունների դեպքում)[1], այնպես էլ շարժանշանները կարող են լինել պայմանական և ոչ պայմանական: Պայմանական են, օրինակ, դրոշակային ազդանշանումը (ծովային գործում), խուլուհամրերի մատնանշանային համակարգը՝ մատնախոսությունը (дактилология): Առաջին դեպքում հաղորդողը յուրաքանչյուր ձեռքում պահում է մեկական դրոշակ և ձեռքերին (առանց դրանք ծալելու) տալիս հինգ հիմնական դիրք՝ վեր-ուղղաձիգ, վեր-շեղակի, հորիզոնական, վար-ուղղաձիգ և վար-շեղակի. երկու ձեռքի դեպքում այն կտա $C^2_5 = 5^2 = 25$ տարբերություն (տարաբաշխում): Եթե այբուբենը բաղկացած է ոչ ավելի քան 25 տառից, ապա այս դիրքերը բավական են բոլոր տարբերությունները հաղորդելու համար: Եթե այբուբենը 25 տառից ավելի է, ապա հարկ է լինում գտնել լրացուցիչ տարբերություններ. այսպես, ռուսական այբուբենի համար (32 տառ) պետք է ավելացվի ևս 7 տարբերություն. այդ պատճառով մի շարք տառերի համար դրոշակները (ձեռքերը) տարածվում են միևնույն կողմը. եթե սրան գումարենք այն դիրքը, որ օգտագործվում է բառերի անջատման համար (համմտ. գրության մեջ բացատը և արտասանու-

[1] Իրականում բնաձայնություններն ու ձայնարկությունները նույնպես որոշ պայմանականություն ունեն և տարբերվում են լեզվից լեզու՝ ըստ տվյալ լեզվի արտասանական բազայի և իրադարձությունների ընկալման բնույթի:

թյան մեջ դադարը), ապա կստացվի 33 տարբերություն. ի միջի այլոց, e և ə տառերը նշանակվում են միևնույն ձևով, և ստացվում է 32 տարբերություն[2]։

Դրոշակներով կամ, որ նույնն է, ձեռքերի շարժումներով հաղորդելու այս եղանակը սկզբունքային տարբերություն չունի տառանշանային համակարգով հաղորդումից։ Միայն թե այստեղ օգտագործվում են մեր նշած ընդհանրական կարգերից միայն կարգի (ձախ ձեռք—աջ ձեռք) և ուղղության տարբերությունները։ Մնացած կարգերի հետ կապված տարբերությունները հանդես չեն գալիս կամ ըստ բնական սահմանափակման (կազմավորմանը մասնակցում է միայն ձեռքը, որ գտնվում է որոշակի տեղում), կամ ըստ նշանային համակարգի բնույթի. այսպես, այստեղ կարող էին օգտագործվել ձևային (կորացում—պարզում, ծալում՝ անկյունավորում—ուղղում), շարժաքանակության (մեկ անգամ—մի քանի անգամ), տևականության (որքան ժամանակ է պահվում ձեռքը տվյալ վիճակում), կազմի (մատների հնարավոր մասնակցությունը) տարբերությունները, բայց դրանք չեն օգտագործված. հիմք է ընդունված ձեռքի ուղղաձև շարժումը միայն մեկ անգամ։

Եթե դրոշակային կամ ձեռքային նշանները կառուցված են տարբերությունների առավելագույն օգտագործմամբ, ապա նույնը չի կարելի ասել խուլուհամրերի համար կիրառվող մատնանշանների վերաբերյալ, որոնք նմանեցվում են տառաձևերին. մատների շարժումները կատարվում են այնպես, որ արտացոլեն տառաձևերը, իհարկե, որոշ պայմանականությամբ (նմանությունը բացարձակ լինել չի կարող, որովհետև բոլոր տառաձևերը հնարավոր չէ հաջորեն արտահայտել մատների ձևերով)։ Ինչպես որ տառերի գծագրության մեջ խնայողության սկզբունքը շատ չնչին չափով է հաշվի առնված, այնպես էլ մատնանշանների դեպքում օգտագործվում են ձեռքի թաթի և մատների ոչ բոլոր հնարավորությունները։ Առանձնապես մեծ կլիներ ողջ ձեռքի և մատների համակցված շարժումների բոլոր տարբերությունների թիվը։ Մենք վերևում նշեցինք, որ արտասանական օրգանների շարժումները չէ, որ ծառայում են որպես նշաններ, այլ դրանց առաջացրած օդային տատանումները։ Սակայն խուլուհամրերի համար օգտագործվում է այսպես կոչված մոնոռալ համակարգը, որի դեպքում սովորեցնում են բերանի և շրթունքների շարժումից կռահել սովորական աչքով չնկատվող հըն-

---

[2] Հմմտ. Н. Я. Виленкин, Комбинаторика, М., 1969, էջ 14—15։

չութային տարբերություններ։ Այս դեպքում արտասանական օրգանների շարժումներն ստանում են անմիջական շարժանշանների արժեք։

2. ՀԱՐԱԼԵԶՎԱԿԱՆ (ՊԱՐԱԼԻՆԳՎԻՍՏԻԿԱԿԱՆ) ՇԱՐԺԱՆՇԱՆՆԵՐԸ

Մենք մինչև այժմ խոսեցինք պայմանական այն շարժանշանների մասին, որոնք արհեստական բնույթ ունեն և հարմարեցված են գրանշանների (հազվադեպ հնչանշանների) արտահայտմանը։ Սակայն կան այս կամ այն ժողովրդի մեջ, այս կամ այն մշակութային շրջանում գործող շարժանշաններ, որոնք առավել կամ պակաս չափով պայմանական բնույթ են կրում. այդպիսիք են օրինակ, գլխի շարժումը վերից վար իբրև հաստատման նշան («այո՛»), ձախից աջ՝ իբրև բացասման նշան («ո՛չ»). (աջ) ձեռքի շարժումը ձախից աջ՝ մի քանի անգամ՝ նույնպես բացասման իմաստով («ո՛չ»), (աջ) ձեռքի շարժումը իրենից հեռու՝ որպես հեռացման նշան («տա՛ր, հեռացրո՛ւ, գնա՛») և դեպի իրեն՝ որպես մոտ կանչելու նշան («բե՛ր, ե՛կ· մոտեցի՛ր»), ցուցամատի թափ տալը մի քանի անգամ՝ որպես սպառնալիքի նշան, ձեռքը կամ մատը բարձրացնելը՝ որպես արտահայտվելու (պատասխանելու, հանդես գալու) ցանկության նշան և այլն։

Այս կարգի նշանները վերջին ժամանակներս լայն ուսումնասիրության են ենթարկվում որպես «հարալեզվական» միավորներ լեզվաբանության այն բաժնի մեջ, որ կոչվում է «հարալեզվաբանություն» (պարալինգվիստիկա)[3]։

Ոչ պայմանական են մարմնի և հատկապես դեմքի զանազան շարժումները (մասամբ համակցված բնույթի), որոնք հանդես են գալիս որպես մարդկային զանազան հույզերի ակամա արտահայտություններ։ Սրանք սովորաբար կապված են բնախոսական որոշ պրոցեսների հետ, որոնցով դրսևորվում են համապատասխան հոգեկան պրոցեսները։ Ջարմանքը, սարսափը, ուրախությունը, տրխրությունը, բարկությունը և այլն արտահայտվում են աչքերի, բերանի, դեմքի մկանների համապատասխան փոփոխություններով։

---

[3] *Համա., օրինակ,* K. Le Mée. Studies in communication, «Language to day», New York, 1967, *էջ 98—127։*

ճիշտ է, սրանք ակամա բնույթ են կրում, բայց կարող են ընդօրինակվել և վերարտադրվել, ինչպես, օրինակ, դերասանական ելույթների ժամանակ։ Այս կարգի շարժումները հիշեցնում են ձայնարկութ յունները։ Նմանողական շարժումները զուգահեռ ունեն բնաձայնութ յունների, ոչ նմանողական-պայմանական շարժումները՝ հնչական մյուս կարգի միավորների մեջ։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՌԵՐԻ ԽՄԲԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Այն հանգամանքը, որ,— չնայած բազմաթիվ քննադատություններին ու դիտողություններին, ժխտման ու փոխարինման փորձերին, դասակարգումներին ու վերադասակարգումներին,— խոսքի մասերի հասկացությունը շարունակում է մնալ ժամանակակից քերականության կենտրոնական հասկացություններից մեկը, խոսում է նրա գոյության օբյեկտիվ հիմքերի մասին: Եվ իրոք: Կարելի է վիճել բառերի խմբավորման տարբեր սկզբունքների մասին, բայց որ բառերի որոշակի խմբավորումը կազմում է լեզվաբանության կարևոր խնդիրներից մեկը, կասկած չի հարուցում:

Խոսքի մասերի դասակարգման հարցը լայն քննարկման է ենթարկվել նաև հայ լեզվաբանության մեջ: Ընդհանուր լեզվաբանական զանազան ուսմունքների բազայի վրա հայ իրականության մեջ հանդես են եկել խոսքի մասերի դասակարգման մի քանի սկզբունքներ: Համառոտակի կանգ առնենք դրանց վրա:

Իմաստաբանական սկզբունքն *առաջ քաշողները փորձում են վերանալ բառերի ձևավորման, կազմության, գործառության զանազան առանձնահատկություններից և բառերի խոսքի-մասային խմբավորման հիմքում դնել նրանց արտահայտած իմաստները: Կարելի է առանձնացնել խոսքի մասերի իմաստաբանական խմբավորման երեք դրսևորում՝ տրամաբանական, իմացաբանական և աստիճանական:*

Տրամաբանական դասակարգումը լայն տարածում է գտել XVII—XIX դդ. հայ քերականության մեջ՝ հանդես գալով և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի քերականություններում: Տրամաբանական քերականության ներկայացուցիչները խոսքի մասերը համարում են բառերի խմբեր, որոնք տարբերվում են ըստ իրենց արտահայտած

հասկացությունների. բառիմաստի և հասկացության միջև տարբերություն չի դրվում: Այսպես, Ս. Պալասանյանը գրում է. «Բառերը իրենց պարունակած հասկացությունների համեմատ այլ և այլ կարգերի են բաժանվում, որոնք քերականության մեջ կոչվում են մասունք-բանի, այսինքն՝ խոսքի մասեր»[1]:

Այսպես կոչված իմացաբանական դասակարգումը (Գ. Սևակ) տրամաբանական դասակարգման մի տարատեսակն է, նրա հետագա զարգացումը և լրացումը: Այս դեպքում նախ՝ նկատի է առնվում Ֆ. դը-Սոսյուրի լեզու-խոսք հակադրությունը, և խոսքի մասերը համարվում են լեզվական, նախադասության անդամները՝ խոսքային կարգեր[2]. երկրորդ՝ խոսքի մասերի դասակարգման համար բացառվում են ձևական, հոգեբանական (կոնկրետ-իմաստաբանական), բառափոխական, բառակազմական, շարահյուսական հատկանիշները թե առանձին-առանձին, թե միասին առնված, և հիմք է ընդունվում նրանց «լեզվական-իմացաբանական ընդհանուր իմաստը»: Այս ուղղության ներկայացուցիչներն ընդունում են ինը խոսքի մաս՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն:

Աստիճանական իմաստաբանական դասակարգման դեպքում պահանջվում է պահպանել իմաստային չափանիշը, բայց դասակարգումը կատարել աստիճանաբար՝ աստիճանական ենթադասակարգումներով (Ս. Աբրահամյան): Հասկանալի է, որ այս սկզբունքը հենվում է արդի կառուցվածքային լեզվաբանության՝ մակարդակների և լեզվական համակարգի հիերարխիկ բնույթի գաղափարների վրա: Այս դեպքում պահանջվում է բառերը բաժանել նախ երեք խմբի՝ նյութական, քերականական և վերաբերմունքային իմաստ ունեցողների, ապա սրանց մեջ կատարել ենթադասակարգում՝ աստիճանաբար մեկ խոսքի մասը առանձնացնելով մյուսներից (փաստորեն այն սկզբունքով, որ մենք կոչել ենք աստիճանական բացառման սկզբունք):

Գործառական-շարահյուսական սկզբունքը թեև ավելի կամ պակաս չափով հանդես է գալիս Մ. Աբեղյանի նախորդող քերականների մոտ, բայց որոշակի հետևողականությամբ դրսևորվել է նրա աշխատություններում: Մ. Աբեղյանը տարբերում է խոսքի մա-

---

1 Ս. Պալասանյան, *Քերականություն մայրենի լեզվի*, Թիֆլիս, 1874, էջ 33:

2 Համմա. Գ. Սևակ, *Խոսքի մասերի ուսմունքը*, ԵՊՀ, 1939: Խոսքի մասերի և նախադասության անդամների այս տարբերակումը ավելի վաղ անց էին կացրել Վ. Բրյուսովը և Ա. Գալդինները. տե՛ս О. С. Ахманова и Г. Б. Микаэлян, Современные синтаксические теории, 1963, էջ 51—60:

սեր և խոսքի մասնիկներ: Առաջիններըս նա բաժանում է երեք խմբի՝ 1) բայեր, որոնք «ցույց են տալիս հատկանիշ և դեմք, միաժամանակ և ստորոգում» և միայնակ նախադասություն («խոսք») են կազմում. 2) դոյականներ, որոնք «ցույց են տալիս ինքնակա գոյություն ունեցող կամ իբրև այնպիսին մտածված առարկաներ». 3) ածականներ և մակբայներ, որոնք «ցույց են տալիս ոչ-ինքնակա հատկանիշներ»՝ առարկայի հատկանիշներ (ածական) և հատկանիշների հատկանիշներ (մակբայ): Գոյականների, ածականների և մակբայների մեջ տարբերվում են անվանական, դերանվանական, թվական և դերբայական տեսակներ: Խոսքի մասնիկների մեջ տարբերվում են՝ 1) կապակցական բառեր (կապեր, ստորադասական և համադասական շաղկապներ), 2) եղանակական բառեր կամ մասնիկներ, 3) բացասական մասնիկներ և 4) պատասխանական բառեր:

Գործառական-շարահյուսական սկզբունքի մի տարբերակը պետք է համարել կատեգորիական-գործառական մոտեցումը (է. Աթայան), ըստ որի խոսքի մասերի տարբերակման դեպքում պետք է հիմք ընդունել հարացուցային-կատեգորիական և շարակարգային-գործառական կողմերը, ընդ որում երկրորդ դեպքում պետք է նկատի առնել առաջնային և ոչ թե կրկրորդային գործառույթները[3]:

Բացի հիշյալ երկու սկզբունքներից կարելի է նշել բավարար հստակությամբ չձևակերպված երկու սկզբունք ևս՝ **ձևաբանական** և **համադրական**: Առաջին սկզբունքը, որ կապված է հարացուցային-կատեգորիական մոտեցման հետ, մասնակիորեն դրսևորվել է տարբեր աշխատություններում, այդ թվում, օրինակ, մեր «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ, որտեղ նախ տարբերվում են հոլովվող բառեր (դոյականներ) և խոնարհվող բառեր (բայեր), ապա հոլովվող բառերի մեջ առանձնացվում են, ըստ հոլովման տիպերի, գոյական անուններ և դերանուններ: Երկրորդ սկզբունքը հանդես է եկել բազմաթիվ հեղինակների մոտ, որոնք պահանջում են խոսքի մասերը տարբերակելիս նկատի առնել բառերի իմաստային, գործառական, ձևաբանական և բառակազմական առանձնահատկությունները: Համադրական մոտեցման համար ևս կարելի է նշել երեք դրսևորում. ա) պարզ-համադրական, երբ հիմք

---

3 Առաջնային և երկրորդային գործառույթների տարբերակման մասին խոսել է Կոբրիովիչը (Сб. Очерки по лингвистике. М., 1962, էջ 61): Կոբրիովիչից անկախ և բավականին վաղ տոդերիս հեղինակը այդ մասին խոսել է իր դասախոսություններում և մի հոդվածում, որ գրվել է 1956 թ.:

է ընդունվում միաժամանակ մի քանի սկզբունք. այսպես, օրինակ, է. Աղայանը գրում է. «Խոսքի մասերի դասակարգման ժամանակ ելակետ պիտի ունենանք երեք բան՝ բառի խոսքի մասային իմաստը, բառի ձևավորումը և նրա կիրառությունը խոսքի մեջ»[4]. կոնկրետ կիրառության մեջ, սակայն, է. Աղայանը ավելի շատ ելնում է «խոսքի-մասային իմաստից»՝ տարբերելով առարկայի հասկացություն արտահայտող բառեր (գոյականներ), հատկանիշ արտահայտող բառեր (բայ, ածական, թվական, մակբայ), որևէ խոսքի մասի ընդհանուր իմաստ արտահայտող բառեր (դերանուններ), նյութական իմաստից զուրկ՝ քերականական իմաստ արտահայտող բառեր (կապ, շաղկապ, հոդ) և զգացմունքի բառեր (ձայնարկություններ). բ) լրացական-համադրական, երբ հիմք է ընդունվում մեկ սկզբունք, բայց այն ըստ անհրաժեշտության լրացվում է այլ սկզբունքներով. այսպես, Ա. Ղարիբյանը գրում է. «Բառերի տեսակները որոշվում են ըստ նրանց նշանակության, հազվագյուտ դեպքում նաև ըստ գործածության և կոչվում են խոսքի մասեր»[5], գ) հիերարխիկ-համադրական կամ ստորադասական-համադրական, երբ հիմք է ընդունվում որևէ սկզբունք, և մյուսները որոշակի հիմունքով ստորադասվում են նրան. այս սկզբունքը տպագիր խոսքում որոշակի ձևակերպում չի ստացել[6]:

Նկարագրված սկզբունքներից ո՞րն է ամենից ավելի ընդունելին. ի՞նչ չափանիշներով պետք է առաջնորդվել դրանցից որևէ մեկին առաջնություն տալու դեպքում: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը:

1) Բառերի խոսքի-մասային դասակարգումը սկզբունքորեն չի տարբերվում լեզվաբանական այլ կարգի միավորների դասակարգումից: Սա նշանակում է՝ ա) դասակարգման ժամանակ պետք է ելնել ոչ թե մեկ հատկանիշից, այլ հատկանիշների որոշ ամբողջությունից. բ) հատկանիշների քանակը ոչ թե պատահական թիվ է, այլ որոշվում է դասակարգվող միավորների թվով: Հայտնի է, որ հայերենի խոսքի մասերի թիվը տրվում է սովորաբար իննից-տասը: Եթե ընդունենք, որ հայերենի խոսքի մասերի թիվը չի կարող փոքր լի-

---

4 է. Աղայան, *Լեզվաբանության ներածություն*, Երևան, 1952, էջ 358:

5 Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի քերականության դասագիրք*, Երևան, 1945, էջ 94:

6 Այս սկզբունքը հետևողականորեն անցկացրել է ներիա աշխատության հեղինակը իր հայոց լեզվի տեսության և ընդհանուր լեզվաբանության դասախոսություններում՝ խոսքի մասերը դիտելով որպես բառերի իմաստային այնպիսի խմբեր, որոնք լեզվի կառուցվածքում ստանում են բառակազմական, շարահյուսական և ձևաբանական համապատասխան արտահայտություն:

նել ումից և չի կարող անցնել տասնվեցից, ապա նրանց դասակարգման համար հիմք ընդունված հատկանիշների քանակը, պետք է լինի առնվազն չորս. չորս հատկանիշը բավական է 9—16 միավոր նկարագրելու համար: Այսպիսով, հատկանիշների ընտրությունը պետք է կատարել այնպես, որ նրանցով ըստ հնարավորին շատ միավորներ բնութագրվեն:

2) Հատկանիշների ընտրությունը կարող է կատարվել կամ մնալով միևնույն սկզբունքի սահմաններում (այսինքն՝ ընտրելով միայն իմաստաբանական, միայն ձևաբանական չափանիշներ), կամ դիմելով տարբեր սկզբունքների: Այս առումով հարցի լուծմանը կարծեք փոքր-ինչ մոտենում են Ս. Աբրահամյանի աստիճանական, Է. Աթայանի կատեգորիական-գործառական և Է. Աղայանի եռասկզբունք դասակարգումները: Սակայն Ս. Աբրահամյանի և Է. Աղայանի առաջ քաշած սկզբունքների մեջ հատկանիշները չեն հանգեցված որոշակի համակարգային կապերի. ա) երկու դեպքում էլ չեն ստացվում կախումների՝ երկանդամ հյուղավորումով և ընդհանրապես կանոնավոր հյուղավորումով ծառեր[7]. բ) եթե նույնիսկ փոփոխություններ կատարելով կարողանանք ստանալ այդպիսի ծառեր, ապա ծառերի՝ յուրաքանչյուր մակարդակի հանգույցներից բաժանվող հյուղերը չեն միավորվի միևնույն հատկանշով, այլ կունենան տարբեր հատկանիշներ. իդեալական պայմաններում ծառը պետք է վերածվի մեր աշխատության մեջ

---

7 Ս. Աբրահամյանի դասակարգումը տալիս է հետևյալ պատկերը (գծագիր 1).

Գծագիր 1



բերված որևէ աղյուսակի տիպի աղյուսակի[8]: Ինչ վերաբերում է Աթայանի կատեգորիական-գործառական դասակարգմանը, ապա այստեղ փաստորեն թողնվում են միայն այն խոսքի մասերը, որոնք կարող են հանդես գալ որպես նախադասության անդամներ, իսկ մյուսները առնվում են, ինչպես բերականական կապված մասնիկները (վերջավորությունները), «լիիմաստ» բառերի հետ միասին: Է. Աթայանը նշում է հատկանիշների երկուական զույգ՝ ա) կատեգորիական առումով սուբստանց թե հատկանիշ արտահայտելը, բ) գործառական առումով՝ հիմնականում որպես գործողության մասնակից (ննթակա—խնդիր), թե որոշիչ հանդես գալը: Եթե նկատի առնենք, որ սուբստանց արտահայտողները հանդես են գալիս հիմնականում որպես գործողության մասնակիցներ, հատկանիշ արտահայտողները՝ հատկապես որպես որոշիչներ և մակորոշիչներ, ապա փաստորեն մնում է երկու հատկանիշ, որոնք բավարար չեն բոլոր խոսքի մասերը (նույնիսկ «լիիմաստները») տարբերակելու համար: Մենք չենք խոսում այն մասին, որ «հատկանիշ» անվանումը տվյալ դեպքում պայմանական է, և դասի բերականությունները, օրինակ, ածականների հետ հավասարապես կարող են դիտվել որպես որակական հատկանիշ արտահայտող միավորներ. թվի բերականությունները թվականների հետ միասին կարող են դիտվել որպես քա-

---

է. Աղայանի դասակարգումը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով (գծագիր 2):

Գծագիր 2



8 Համմ., օրինակ, բայական կարգերի դասակարգման աղյուսակը (էջ 243), որ

նակական հատկանիշ արտահայտող միավորներ. հարաբերական շատ ածականներ փաստորեն սուբստանց են արտահայտում, և այս դեպքում պետք է բացառել կատեգորիական սկզբունքն ու դիմել միայն գործառական սկզբունքին և այլն։

3) Իմաստաբանական, գործառական և ձևաբանական սկզբունքների պարզ (մեխանիկական) միացումը չի կարող գոհացուցիչ արդյունքների հասցնել։ Պետք է նկատի առնել, որ իմաստաբանական և գործառական սկզբունքները ընդհանրական բնույթի են և կարող են ծառայել որպես բոլոր լեզուների խոսքի մասերը դասակարգելու հիմք, մինչդեռ ձևաբանական և բառակազմական սկզբունքները կիրառելի են ամեն մի կոնկրետ լեզվի համար՝ ըստ նրա առանձնահատկությունների։ Առաջին կարգի (իմաստաբանական և գործառական) չափանիշները, տարբեր լեզուների համար կիրառվելով, կտան միևնույն արդյունքները, երկրորդ կարգի (ձևաբանական և բառակազմական) չափանիշները՝ տարբեր արդյունքներ. վերջին դեպքում ավելի լավ են երևում այս կամ այն լեզվի կառուցված-

---

կարելի է արտահայտել հետևյալ ծառով (հատկանիշը նշվում է փոքրատառով՝ a,b,c..., որոնք ժխտվելու դեպքում ստանում են ā,b̄,c̄... տեսքը) (գծագիր 3).

Գծագիր 3



քային առանձնահատկությունները, բացահայտվում են միայն այդ լեզուներին բնորոշ բառային կարգերը։ Ձևաբանական և բառակազմական չափանիշները ինքնին առնված չեն կարող համարվել ձևական կամ ոչ ձևական չափանիշներ։ Այդ չափանիշները ծառայում են տվյալ լեզվում բառերի իմաստային և գործառական յուրահատկությունների դրսևորմանը, դրանք չեն մնում ձևաբանության և բառակազմության սահմաններում, այլ անցնում են իմաստաբանական և գործառական-շարահյուսական «մակարդակներին»։

4) Խոսքի մասերի իդեալական դասակարգումը նույնն է ձևութային իմաստների դասակարգման հետ, որովհետև իդեալական անձև-անջատական լեզվում բառը համընկնում է ձևույթի հետ, և բոլոր ձևութային իմաստները պետք է նկատի առնվեն։ Եթե առանձնացնենք միայն «լիիմաստ» բառերը, ապա, միևնույն է, վերջիվերջո հարկ կլինի դասակարգել նաև ոչ «լիիմաստները», որովհետև, հաշվի կառնվի «լիիմաստ» բառերի՝ ո՛ր ոչ-«լիիմաստ» բառերի հետ զուգակցվելու (վերլուծական հարացույց կազմելու) ընդունակությունը։ Հասկանալի է, որ այս պայմաններում պետք է նկատի առնել հոլովման և խոնարհման կապակցությամբ քննված քերականական իմաստները։ Այսպիսով, ձևույթների՝ բառերի հետ համընկնելու դեպքում «լիիմաստ» բառերի՝ ոչ-«լիիմաստների» հետ զուգակցվելը կտա հարացույց (վերլուծական հարացույց), «լիիմաստների» հետ զուգակցվելը՝ շարակարգ։ Այս դեպքում վերջին հաշվով դասակարգման համար կմնա երկու կարգի չափանիշ՝ իմաստաբանական-կատեգորիական և գործառական-շարակարգային։ Ձևաբանական մոտեցման համեմատությամբ տարբերությունն այն կլինի, որ այստեղ հարկ կլինի ելնել միայն վերլուծական հարացույցից։

5) «Ձուտ» իմաստաբանական դասակարգումը չէր լինի լեզվաբանական դասակարգում. այսպիսի դասակարգումը կլիներ փիլիսոփայական (գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական) և հոգեբանական կատեգորիաների առանձնացում՝ առանց լեզվական չափանիշները նկատի առնելու։ Եթե ցույց տրվեր, թե այսպիսի դասակարգումը լեզուների մեջ ինչպիսի՛ դրսևորումներ է ստանում, մենք կունենայինք իմաստից ելնող լեզվաբանական դասակարգում. հակառակ ընթացքի դեպքում հանդես կգար ձևից ելնող լեզվաբանական դասակարգում. (վերջին դեպքում եթե հետազոտողը մնա ձևի սլանում՝ առանց անցնելու իմաստայինին, ապա կլինի ձևի ինքնանպատակ նկարագրող)։ Խոսքի-մասային դասա-

կարգումը անհրաժեշտորեն պարունակում է գործառական հայեցակետը, հաշվի առնում բառերի՝ խոսքի մեջ կատարած հիմնական գործառույթները: Այս առումով խոսքի մասերը նախադասության անդամների նկատմամբ յուրաքանչյուր տվյալ լեզվում անփոփոխակներ են, և նախադասության անդամները հանդես են գալիս որպես փոփոխակներ:

6) Խոսքի մասերի՝ բառերի որոշ խմբեր լինելու դրույթը պետք է հասկանալ պայմանականորեն: Եթե մի կողմ թողնենք այն կարծիքը, որ իսկական բառը քերականորեն ձևավորված (լինի այն համադրական թե վերլուծական բաղադրություն) բառն է, և որ, հետևաբար, խոսքի մասերի դասակարգումը պետք է լինի շարահյուսական նվազագույն միավորների դասակարգում (է. Աթայան), ապա հարկավոր է նկատի առնել, որ խոսքի մասեր դիտվող շատ միավորներ ոչ թե բառեր են, այլ բառախմբեր (համմտ. բայաձևեր՝ գրել տված է լինում, եղանակական բառեր՝ կարծես թե, շաղկապներ՝ ոչ միայն—այլև և այլն): Այսպիսով, բառային միավորների հասկացությունը պետք է տարբերել բառերի հասկացությունից: Խոսքի մասերը ոչ թե բառերի խմբեր են, այլ բառային միավորների խմբեր:

Վերևում ասվածներից բխում է, որ խոսքի մասերի ընդհանրական դասակարգում կատարելիս պետք է ընտրել հատկապես իմաստաբանական-կատեգորիական և գործառական հատկանիշներ, առանձին լեզուների մեջ այդ ընդհանուր կարգերը կդրսևորվեն հարացուցային և շարակարգային տարբեր հատկանիշներով: Բուն հայոց լեզվի համար կատարվող դասակարգումը պետք է սկսվի ձևաբանական և բառակազմական չափանիշներից և լրացվի իմաստային ու գործառական չափանիշներով. վերջին հաշվով կստացվեն բառային միավորների իմաստա-գործառական կամ, լայն առումով, բառա-քերականական խմբեր: Ձևաբանական և բառակազմական չափանիշներից սկսելու դեպքում էլ պետք է նկատի առնել հատկապես ձևաբանական և բառակազմական միջոցներով արտահայտված իմաստները:

Իմաստաբանական հանգամանալից դասակարգումը կհամընկներ ընդհանրական գոյա-իմացաբանական կարգերի՝ մեր կողմից տրված դասակարգման հետ: Այդ պատճառով էլ այստեղ կտանք լոկ մասնակի դասակարգում՝ նկատի ունենալով միայն ավանդաբար առանձնացվող խոսքի մասերը և դրանք ենթարկելով տրամաբանական համապատասխան ճշգրտումների: Ստորև կնշենք խոսքի մասերի դասակարգման հիմքում դրվող չորս հատկանիշ և արդյուն-

քում կատանանք տասնվեց խոսքի մաս։ Պետք է նկատի առնել, որ հատկանիշների անվանումները որոշ պայմանականություն ունեն, և նրանց մեջ պետք է դնել այն իմաստը, ինչ տրվում է հատկանիշների թվարկման հետ կապված բացատրություններում մեջ։

1) Գոյականություն.—Այս հատկանիշը չպետք է հասկանալ ավանդական առումով՝ որպես գոյականի նշանակում, այլ որպես գոյականի ու նրա հետ կապված բոլոր կարգի բառատիպերի նշանակում։ Այս առումով գոյականությունը համընկնում է բայական կարգերի դասակարգման ժամանակ բերվող առարկայականության հատկանշի հետ և հակադրվում է ոչ թե հատկանշայնությունը, այլ վիճակականությունը։ Գոյականության հատկանշով միավորվող բառային միավորները ցույց են տալիս առարկա, առարկայի անուն, առարկայի հատկանիշ կամ հարաբերություն. դրանք գոյական անունը, ածականը, թվականը, կապը, դերանունը և հոդն են (հոդի՝ առանձին բառ լինելու դեպքում), ընդ որում դերանունը համապատասխանաբար պետք է մասնատել, և հոդը փաստորեն դիտել որպես դերանվան (լայն առումով) մի դրսևորումը։ Այսպիսով, աղյուսակում գոյականության ժխտումը պետք է հասկանալ որպես վիճակականություն. վիճականիշ (վիճականիշ) կարգերի մեջ կմտնեն բայը, մակբայը, շաղկապը, ձայնարկությունը, եղանականական բառերն ու մասնիկները, որոնք նշանակում են առարկայի (այդ թվում՝ նաև խոսողի) որոշ վիճակ ու հոգեվիճակ և սրանց հետ կապված հանգամանքներ, ընդհանրապես նախադասության կազմության հետ կապված միավորներ։

2) Իրադրայնություն.— Այս հատկանիշը չպետք է հասկանալ նեղ առումով՝ որպես ստորոգման հետ կապված բառակարգեր, այլ լայն առումով՝ որպես այն բոլոր խոսքի մասերի նշանակում, որոնք իրադրական բնույթ ունեն՝ լինի այն հաղորդակցման իրադրություն, թե խոսքային իրադրություն («կոնտեքստ»)։ Իրադրական բնույթի են դերանունը, հոդը, ձայնարկությունը, եղանականական բնույթի բառերն ու բառ-մասնիկները։ Իրադրական բառերը ըստ ոչ-իրադրական բառերի տարբեր կարգերի հետ ունեցած հարաբերության աղյուսակում կենթախմբավորվեն։ Ոչ-իրադրական են գոյականը, ածականը, թվականը, կապը, բայը, շաղկապը, որոնք առարկան, նրա վիճակը, հատկանիշը, հարաբերությունը անվանում կամ արտահայտում են։

3) Մակդրականություն.—Այս հատկանիշով միավորվում են այն խոսքի մասերը, որոնց համար բնորոշ է (ըստ նրանց հիմնա-

կան գործառության) խոսքի մեջ մի այլ խոսքի մասի հարելը, նրանից կախման մեջ մտնելը, այդ խոսքի մասը այս կամ այն առումով լրացնելը։ Այդպիսիք են ածականը, թվականը, որոշիչ դերանունը, մակբայը, այլև եղանակական բառերն ու բառ-մասնիկները. եղանակական բառերը հարում են դիմավոր բայերին (լայն առումով՝ նախադասություններին), բառ-մասնիկները՝ տարբեր կարգի բառերի. համմտ. ցավոմ սրտի. չի գնացել և միայն ես (միայն կարմիր, միայն արագ. միայն խոսել)։ Ոչ-մակադրական խոսքի մասեր են գոյականը, բայը, կապը, շաղկապը, գոյական դերանունը, հարաբերական դերանունները, ձայնարկությունը։ Կապը և շաղկապը մենք չենք դնում մակադրական բառերի շարքում, որովհետև դրանք թեև կախման մեջ են մտնում, բայց ինքնին չեն լրացնում, այլ նշում են լրացական կապի առկայություն։ Այսպես, պատի մոտ կապակցության մեջ մոտ-ը բնութագրում է մի այլ առարկա («Կողովը պատի մոտ է»), մինչդեռ մոտակա պատ կապակցության մեջ մոտակա-ն բնութագրում է պատ-ը։

4) Էանշություն.—*Այս հատկանիշով միավորվում են այն խոսքի մասերը, որոնք ցույց են տալիս իրենց նշած օբյեկտի էությունը, նրա էական կողմը։* Էանիշ խոսքի մասերն են գոյականը, ածականը, բայը, որակական մակբայը, անձնա-ցուցական դերանունները, իրադրական մակբայը, ձայնարկությունը։ Ոչ-էանիշ են թվականը, կապը, քանակական մակբայը, շաղկապը, քանակական դերանունը (և հոդը), եղանակական բառերն ու բառ-մասնիկները[9]։

Այս բոլորը կարելի է արտահայտել 4-րդ և 5-րդ աղյուսակներով (էջ 136 և 137)։

Թեև այժմ նկատի առնենք հատկապես գործառական հատկանիշները և չկատարենք ածականների ու մակբայների որակական ու քանակական տիպերի տարբերակում, ապա կարելի է ընտրել հետևյալ հատկանիշները.

1) Հաղորդակցություն («լիիմաստություն». նախադասության անդամայնություն, որպես նախադասության և բառակապակցության անդամ հանդես գալը).—*Այս հատկանիշով միավորվում են գոյականը, ածականը, թվականը, դերանունը, բայը և մակբայը։*

---

9 Հետաբրքրական տարբերություններ կարող է տալ և նկարագրականության հատկանիշը, որի մասին տե՛ս հոդվի բնութ։յան մեջ։

Ազգությունը, ցեղախումբը	Ապրելակերպ	Ֆոլկլորային տարրերի պահպանում	Ազգային տարազի պահպանում	Ազգային տարազի տարրերի պահպանում	Ազգային տարազի տարրերի պահպանում
	Անասնապահական տնտեսություն	+	+	+	+
	Հողագործական տնտեսություն	+	+	+	+
	Ձկնորսական տնտեսություն	+	+	+	+
	Որսորդական տնտեսություն	+	+	+	+
	Ձիաբուծական տնտեսություն	+	+	+	+
	Ջրաղացային տնտեսություն	+	+	+	+
	Ֆիզիկական աշխատանքի գերակշռություն	+	+	+	+
	Մտավոր աշխատանքի գերակշռություն	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսություն	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի պահպանում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի կորուստ	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի վերականգնում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի ստեղծում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի զարգացում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի ոչնչացում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի փոխարինում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի վերացում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի նոր ձևավորում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի նոր զարգացում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի նոր ոչնչացում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի նոր փոխարինում	+	+	+	+
	Ընտանեկան տնտեսության տարրերի նոր

Հատկանիշներ			Գոյականական		Ոչ-գոյականական (վիճականիշ-նախադասականը)	
			Իրապրային	Ոչ-իրապրային	Իրապրային	Ոչ-իրապրային
Ստականական	Կենդ		Ածական դերանուն	Ածական	Իրապրական մակբայ	Որակական մակբայ
	Ոչ-էանիշ		Քանակական դերանուն և հոդ	Թվական	Բառ-մասնիկ	Քանակական մակբայ
Ոչ-ստականական	Կենդ		Գոյական դերանուն	Գոյական	Ձայնարկություն	Բայ
	Ոչ-էանիշ		Հարաբերական դերանուն	Կապ	Եղանակական բառ	Շաղկապ

Սրանց կհակադրվեն կապերն ու շաղկապները, ձայնարկությունը, եղանակական բառերն ու բառ-մասնիկները:

2) Միագործառություն.—Այս հատկանիշով միավորվում են այն խոսքի մասերը, որոնք ըստ կապակցելիության հանդես են գալիս սովորաբար միևնույն խոսքի մասերի շրջապատում, կապվում միևնույն կարգի բառերի հետ: Որպես նախադասության անդամ հանդես եկող խոսքի մասերից միագործառական են գոյականը, ածականը և մակբայը, մյուս խոսքի մասերից՝ եղանակական բառերը, կապը և ստորադասական շաղկապը: Բազմագործառական են բայը, դերանունը և թվականը, ձայնարկությունը, բառ-մասնիկը և համադասական շաղկապը: Խոսքի մասերի նման բաշխումը կասկած կարող է հարուցել բառ-մասնիկների և ձայնարկությունների ու եղանակական բառերի դեպքում: Սակայն հարկավոր է նկատի առնել հետևյալը. ա) բառ-մասնիկների անվան տակ մենք միավորում ենք այն բառերը, որոնք ցույց են տալիս ընդգծում, սահմանափակում և այլն և կարող են կապվել տարբեր խոսքի մասերի հետ. հմմտ. միայն ես /կարմիր/ առագ. որանով իսկ բառ-մասնիկները տարբերվում են եղանակական բառերից, որոնք սովորաբար կապ-

վում են դիմավոր բայերի և ընդհանրապես նախադասության հետ. բ) ձայնարկությունները դիտվում են որպես բազմագործառական (տարագործառական) բառեր, որովհետև կարող են գործածվել նաև ինքնուրույնաբար, որպես ինքնին հաղորդում արտահայտող միավորներ (մինչդեռ եղանակական բառերը միշտ կապված են որևէ հաղորդման հետ), կարող են հանդես գալ գոյականաբար ոչ միայն անդրադարձվում (հմմտ. «Վայ-ը ձայնարկություն է»), այլև լեզվում (հմմտ. «Հայհայը գնացել է, վայվայն է մնացել»), կարող են կապվել ինչպես դիմավոր բայաձևերի ու նախադասությունների, այնպես էլ առանձին բառերի հետ և նույնիսկ խնդիր ստանալ ինչպես ձևավորված բայերը. այս բազմագործառականությունն ավելի ակնհայտ կլինի, եթե հաշվի առնենք բնաձայն բառերի պատկանելիությունը ձայնարկություններին:

3) Ինֆինիտաղորդայնություն (ինֆինիտոռոգականություն).— Այս հատկանիշով միավորվող խոսքի մասերը կարող են ինքնին, միայն հնչերանգային փոփոխությամբ հանդես գալ որպես ինքնուրույն հաղորդակցական միավոր՝ նախադասություն կազմել. այդպիսիք են բայը, գոյականը, ձայնարկությունը և եղանակական բառերը. հիշատ է, որոշ ածականներ և մակբայներ նույնպես կարող են հանդես գալ որպես նախադասություն կազմող միավորներ, բայց այս դեպքում դրանք փաստորեն եղանակական բառեր են (հմմտ. «լա՜վ», «Շա՜տ լավ»):

4) Լրացականություն.—Այս հատկանիշով միավորվում են այն բառերը, որոնց իմաստները կարող են լրացվել «լիիմաստ» (հաղորդակազմիչ) բառերի դեպքում՝ «լիիմաստ» բառերով, ոչ-«լիիմաստ» բառերի դեպքում՝ ոչ-«լիիմաստ» և «լիիմաստ» բառերով: Հաղորդակազմիչ բառերի մեջ լրացականության հատկանշով օժտված են գոյականը, ածականը և թվականը, չեն օժտված դերանունը և մակբայը, որոնք սովորաբար չեն լրացվում այլ «լիիմաստ» բառերով: Ոչ-հաղորդակազմիչ բառերից լրացական են ձայնարկությունները, եղանակական բառերը, բառ-մասնիկները և կապերը. եղանակական բառերն ու բառ-մասնիկները կարող են լրացվել ձայնարկություններով և ստանալ զգացական երանգ՝ «Ա՛խ, դժբախտաբար», «Ա՛խ, մի՞թե....» և այլն: Լրացական չեն շաղկապները: Լրացականությունը որոշ առումով հակադրվում է կախյալությանը, որը թերևս հետագայում հարկ լինի մտցնել գործառական դասակարգման հատկանիշների մեջ:

խոսքի մասերի դործառական դասակարգման արդյունքները կարելի է արտահայտել 6-րդ և 7-րդ աղյուսակներով (էջ 140 և 141)։

Տարբեր կարգի դասակարգումների փոխհարաբերությունը պարդելու նպատակով կանգ առնենք հայերենի խոսքի մասերի ձևաբանական և բառակազմական դասակարգումների վրա։ Ձևաբանական դասակարգումը կունենա երկու դրսևորում՝ ա) բուն ձևաբանական (ձևական-ձևաբանական, արտահայտական-ձևաբանական), որի դեպքում հիմք են ընդունվում ձևաբանական արտահայտության միջոցները և բ) կատեգորիական-ձևաբանական, որի դեպքում հաշվի է առնվում քերականական կարգերի (կատեգորիաների) բաշխումը։

Բուն ձևաբանական դասակարգումը հաճախակի է հանդիպում հայ քերականների աշխատություններում, թեև առանց հետևողական սկզբունքային մեկնաբանության և լոկ մասնակի կիրառության։ Գրեթե բոլոր բերականները տարբերում են ձևաբանորեն փոխվող և անփոփոխ խոսքի մասեր, ընդ որում ձևաբանորեն փոխվող խոսքի մասերի մեջ տարբերում են հոլովվող և խոնարհվող խոսքի մասեր։ Այսպես, Գ. Սևակը, խոսելով խոսքի մասերի լեզվամիմացաբանական դասակարդման մասին, բուն ձևաբանական քննության մեջ տարբերում է թեքվող և չթեքվող խոսքի մասեր, թեքվող խոսքի մասերն էլ բաժանում է հոլովվողների և խոնարհվողների[10]. հոլովվող են համարվում գոյականը և դերանունը, «մասամբ նաև ածականն ու թվականը»։ Եթե մի կողմ թողնենք «մասամբ» բառը և այն հանգամանքը, որ հոլովումը վերագրվում է ածականին ու թվականին ոչ ըստ նրանց հիմնական գործառության, ապա կարելի է ասել, որ այս դասակարգումը բուն ձևաբանական դասակարգում է։

Այսպիսով, հայերենի բառերի ձևաբանական դասակարգում կատարելիս կարելի է նկատի առնել նրանց հոլովականության և խոնարհականության հատկանիշները։ Այս դեպքում հնարավոր կլինի երկու մեկնաբանության՝ ըստ դերբայների խոսքի-մասային հատկացման. դերբայները բային հատկացնելու դեպքում բայը կբնորոշվի և՛ հոլովականության, և՛ խոնարհականության հատկանիշներով, չհատկացնելու (գոյականների, ածականների և մակբայների վրա բաշխելու) դեպքում՝ միայն խոնարհականության

---

10 Հմմտ. Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Երևան, 1955, էջ 252—253։

Ցեղերի անուններ	Ականջները	Աչքերի գույնը	Մազերի երկարությունը	Պոչերի երկարությունը	Ոտքերի երկարությունը
Ֆրանսիական	Փոքր	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	—	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	Լայն	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	Ուղիղ	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	Ֆիլ	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	—	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	Ֆիլանման	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	Թավշանման	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	—	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	Կոր	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	Ուղիղ	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	Ոչխարանման	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	—	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	Ֆիլ-անման	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ
	Հաստ	Կանաչ	Կարճ	Կարճ	Կարճ

Աղյուսակ 7

Հատկանիշներ		Հոգոդակազմիչ		Ոչ-հոգոդակազմիչ	
		Ինքնահոգոդային	Անինքնահոգոդային	Ինքնահոգոդային	Անինքնահոգոդային
Միգոդակազմական	Լրացական	Գոյական	Ածական	Եղանակական	Կապ
	Ոչ-լրացական	—	Մակբայ	—	Սոցիալական շաղկապ
Բազմագոդակազմական	Լրացական	Բայ	Թվական	Ժամանակական	Բառ-մասնիկ
	Ոչ-լրացական	—	Դերանուն	—	Համադասական շաղկապ

Հատկանիշով. կունենանք ձևաբանական դասակարգման երկու տարբերակ (աղյուսակներ 8 և 9):

Աղյուսակ 8

Ձևաբանական հատկանիշներ	Բառերի ձևաբանական խմբեր (խոսքի մասեր)			
	Բայ	Անուն	—	«Խոսքի մասնիկ»
Հոլովականություն	+	+	—	—
Խոնարհականություն	+	—	+	—

Աղյուսակ 9

Ձևաբանական հատկանիշներ	Բառերի ձևաբանական խմբեր (խոսքի մասեր)			
	—	Անուն	Բայ	«Խոսքի մասնիկ»
Հոլովականություն	+	+	—	—
Խոնարհականություն	+	—	+	—

Եթե հիշյալ հատկանիշներին միացնենք ձևաբանական փոխոխության երրորդ դրսևորումը՝ բաղդատության կամ համեմատության աստիճաններ ունենալը (բաղդատականություն), որ հայերե-

նում միայն գերադրականի դեպքում ունի համադրական արտահայտություն, ապա իբրև առանձին բառախմբեր կառանձնանան նաև բաղդատական (որակական) ածականը (հոլովական և բաղդատական) և մակբայը (ոչ-հոլովական և բաղդատական)։

Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել ձևական-ձևաբանական դասակարգման արդյունքների հիման վրա։

1) Բառերի ձևաբանական դասակարգումը տալիս է խոսքի մասերի եռամասնյա բաժանում, որ հար և նման է արաբ քերականների դասակարգմանը, և որի երեք խմբերի համար մենք օգտագործեցինք արաբ քերականների անվանումների տիպի անվանումներ։

2) Բաղդատականության հատկանիշի ներմուծումը չի տալիս լիովին գոհացուցիչ արդյունք. ածականների երկու խմբերը, որոնք գործառական առումով նույնական են, ընկնում են տարբեր խմբերի մեջ։

3) Բուն ձևաբանական դասակարգումը բավարար մանրամասնություն չունի և անխուսափելիորեն պետք է լրացվի այլ կարգի հատկանիշներով, եթե ցանկանում ենք ունենալ բառային միավորների խոսքի մասային հանգամանալից, ավանդական դասակարգմանը մոտեցող, դասակարգում։

4) Ձևաբանական դասակարգումը նույնիսկ ամենազարգացած թեքական լեզուների դեպքում կարող է ընդգրկել միայն ձևաբանական փոփոխություններ կրող խոսքի մասերը։ Մնացած խոսքի մասերը անխուսափելիորեն կդրվեն միևնույն բառախմբերի մեջ՝ բնութագրվելով ձևաբանական անփոփոխականությամբ։ Այսպիսով, ամեն մի ձևաբանական դասակարգում միայն մասնակի, առաջին հերթին փոփոխական և, հետևաբար, գերազանցապես «լիիմաստ» բառերի դասակարգում է։ Եթե քերականական արժեք ունեցող խոսքի մասերը՝ հոդերը, կապերն ու շաղկապները դիտենք որպես վերջավորություններին համազոր վերլուծական քերականական ձևեր և դնենք բառերի ձևաբանական հիմնական խմբերին պատկանող բառերի (անունների և բայերի) հետ միասին, ապա խոսքի մասերի և շարահյուսական նվազագույն միավորների հատկացությունները կհամընկնեն[1]։ Այս դեպքում ձևաբանական հարացույցի անդամները կբնորոշվեն և՛ համադրական, և՛ վերլուծական ձևերով։

---

[1] Համմ. Э. Р. Атоян, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968։

Կատեգորիական-ձևաբանական դասակարգումը բուն ձևաբանական դասակարգումից տարբերվում է նրանով, որ այս դեպքում հոլովումը և խոնարհումը առնվում են ոչ թե ամբողջովին, այլ ըստ դրանք կազմող առանձին կարգերի (կատեգորիաների). բնականաբար, և՛ բուն ձևաբանական, և՛ կատեգորիական-ձևաբանական դասակարգումները «զուտ ձևական» դասակարգումներ չեն. նրանք միշտ ենթադրում են որոշ իմաստային տարբերություն, եթե հաշվի են առնվում հարացուցային ու շարակարգային առնչությունները, և բառերն անվանում են որպես համակարգի բաղադրիչներ:

Քանի որ կատեգորիական-ձևաբանական դասակարգումը վերջիվերջո ձևաբանական դասակարգում է, միայն նրա սահմանում մնալու դեպքում այն նույնպես չի կարող տալ չթեքվող («անփոփոխ») խոսքի մասերի տարբերակված խմբեր: Սակայն զարմանալին այն է, որ նույնիսկ «լիիմաստ» խոսքի մասերի նկատմամբ կիրառվելիս այն սահմանափակ բնույթ ունի, և չի բավարարում նվազագույն հատկանիշների պահանջը. հայերենում տարբերակվող վեց «լիիմաստ» խոսքի մասերի համար (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ) հնարավոր չէ գտնել երեք այնպիսի քերականական կարգեր, որոնք տան վեցմասնյա բաժանում: Հայտնի է, որ 3—8 միավոր տարբերակելու համար հարկավոր է առնվազն երեք հատկանիշ, ընդ որում յուրաքանչյուր միավոր մյուսից պետք է տարբերակվի մեկ, երկու և (եզրային միավորների դեպքում) երեք հատկանիշով: Բնականաբար պետք է ընտրել այնպիսի կարգային (կատեգորիական) հատկանիշներ, որոնք կտարբերակեն երկուսից ոչ պակաս միավորներ, այլապես ամեն մի միավոր մյուսից կտարբերվի մեկ հատկանշով, և կստացվի ոչ ռացիոնալ բաշխում: Տվյալ դեպքում, երբ ունենք դասակարգելի վեց միավոր, որ քիչ է երեք հատկանիշով նկարագրվող առավելագույն քանակի (ութ) միավորներից, կարելի է որոշ դեպքերում թուլլատրել նման բաշխում:

Ամենից առաջ ընտրենք առավելագույն տարբերակում առաջացնող (երեք և երկու միավորների հատուկ) կարգերը. այդպիսիք կլինեն՝ ա) առկայացականությունը և հատկապես հոդառությունը. հոդառու են բուն անվանական խոսքի մասերը՝ գոյականը, ածականը և թվականը, ոչ հոդառու՝ դերանունը, բայը և մակբայը, ընդ որում առկայացականությունը կազմում է դերանվան էությունը և ոչ թե նրան հատուկ է իբրև առանձին ձևաբանական կարգ. բ) դիմայնությունը. դիմային են դերանունը և դիմավոր բայը, ոչ դի-

մային՝ մյուս խոսքի մասերը, ներառյալ և դերբայները. գ) թվայնություններ. թվի կարգը հատուկ է բոլոր խոսքի մասերին, բացի մակբայից, ընդ որում այն կազմում է թվականի էությունը և դոյականին ու դերանվանը հատուկ է անմիջաբար, մյուսներին՝ միջնորդված կերպով՝ համաձայնությամբ (բային) կամ գործառական անցմամբ (ածականին ու թվականին). դ) հոլովառություններ. հոլովառու են դոյականը և դերանունը անհրաժեշտաբար («բնությամբ») ածականը և թվականը՝ գործածությամբ («դրությամբ»). ե) բաղդատականություններ. բաղդատության աստիճաններ ունեն որակական ածականները և որոշ մակբայներ ու բայեր:

Այս բոլորից հնարավոր չէ ընտրել այնպիսի երեք հատկանիշ, որոնք տարբերակեն բոլոր խոսքի մասերը. բաղդատականության կարգից էլ պետք է հրաժարվել, որովհետև այն ստեղծում է խոսքի մասերի գործառական դասակարգման համար դժվարություններ (ածականները և մակբայները բաժանվում են երկուական խմբերի. *համեմատական*, բայց ոչ ավելի փայլուն. ավելի հնոու, բայց ոչ ավելի ֆիզիկապես): Այսպիսով, կարելի է ընտրել՝ 1) հոդառության, 2) անհոդ հոլովառության (առանց որոշիչ հոդի հոլովվելու կարողության), 3) բաղդատականության (առանց բաժանելու բաղդատական և ոչ բաղդատական ածականներն ու մակբայները, այսինքն՝ դիմելով գործառական և իմաստային չափանիշների) և 4) սեռայնության (բայասեռային վ ունեցալը՝ 3-րդ կետում նշված սահմանափակմամբ) հատկանիշները. կստանանք 10-րդ աղյուսակը (էջ 145):

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1) Սեռայնության փոխարեն կարող էին առնվել բուն բայական այլ հատկանիշներ, բայց՝ ա) տիպարի ձևաբանական արտահայտությունը հայերենում շատ հստակ չէ, բ) ժամանակի երկու դրսևորումները՝ հաջորդականությունը և իրադրական ժամանակը, չեն տարբերակված, գ) կերպի դրսևորումը դերբայների դեպքում հրատակ չէ:

2) Սեռայնություն հատկանշի դեպքում առաջանում է դերբայական ձևերի համապատասխան տարբերակում. դերբայները, սեռի փոխարեն իրադրական ժամանակի հատկանիշն ընտրելու դեպքում, կմտնեին դոյականական, ածականական և մակբայական ձևերի մեջ՝ առանց տարբերակման. կերպայնության ընտրության դեպքում մենք իմաստային հատկանիշով (տևականության դրսևորմամբ) դերբայները կմիացնեինք բայերին, բայց դերբայների կերպի ձևա-

Ուսումնական հաստատությունների տեսակները	Ընդամենը	Այդ թվում՝																			
		Ուսումնական հաստատություններ																			
		Միջնակարգ դպրոցներ																			
		Ընդհանրական միջնակարգ դպրոցներ																			
		Հերթական միջնակարգ դպրոցներ																			
		Երեկոյան (հերթական) միջնակարգ դպրոցներ																			
		Ուսուցչանոցներ																			
		Ուսուցչանոցներ																			
		Ֆիզկուլտուրայի տեխնիկումներ																			
		Արհեստական ուսումնարաններ																			
		Ֆաբրիկա-գործարանային դպրոցներ																			
		Երեկոյան (հերթական) դպրոցներ																			
		Ուսումնական կոմբինատներ																			
		Ուսումնական արհեստանոցներ																			
		Ուսումնական տնտեսություններ																			
		Ուսումնական փորձադաշտեր																			
		Ուսումնական կայաններ																			
		Ուսումնական կետեր																			
		Ուսումնական բրիգադներ																			
		Ուսումնական խմբեր																			
		Ուսումնական կաբինետներ																			
		Ուսումնական լաբորատորիա

բանական դրսևորումը կլիներ ոչ հատակ (ոչ ըստ կերպանիշ մասնիկների)։

Բառակազմական դասակարդումը պահանջում է ընտրել ոչ թե բառակազմական որևէ հատկանիշ, այլ բառակազմական միջոցների որոշ ամբողջություն։ Բառակազմական տեխնիկայի տարբեր տիպերի առումով կարելի է նշել միայն որոշ գծեր՝ առանց դրանց ընդհանրացման։

1) Կրկնությունը ունի սաստկական և բերականական արժեք. բերականական կրկնությունը ամենից ավելի բնորոշ է մակբայների համար, այսինքն՝ ծառայում է որպես մակբայակերտման միջոց՝ խումբ-խումբ հավաքվել, մեծ-մեծ խոսել և այլն։

2) Եթե տարբերենք «անիսկական» (շարահյուսական կամ, ավելի ճիշտ, շարակարգային) և «իսկական» բարդություններ, ապա կարելի է ասել, որ իսկական բարդությունը հատուկ չէ դերանուններին, թվականներին և չբեկվող («անփոփոխ») խոսքի մասերին։ Դերանունները և թվականները կարող են հանդես գալ որպես իսկական բարդության կազմիչ (հատկապես որպես առաջին բաղադրիչ), բայց այդպիսի իսկական բարդությունները դերանուններ և թվականներ չեն, այլ ուրիշ խոսքի մասեր (հմմտ. ինքնապաշտպանություն, ամենակեր, տասնապետ և այլն)։ Այս կապակցությամբ նշենք, որ «անիսկական» պետք է համարել այն բարդությունները, որոնց կազապարը նույնությամբ կրկնում է բարդության համար հիմք տված բառախմբի կազապարը՝ առանց անդամների ձևավորման և շարադասության էական տարբերությունների. հմմտ. ճոր+եղբայր → ճորեղբայր, այս+որ → այսօր, այնու+ամենայնիվ → այնուամենայնիվ և այլն. «իսկական» պետք է համարել այն բարդությունները, որոնք իրար հաջորդող բառերի սոսկական միացումներ չեն, այլ կազմվում են բարդությանը հատուկ որոշակի կազապարով՝ սովորաբար ա հոդակապով։

3) Նախածանցումը, եթե բացառենք ժխտական նախամասնիկները, մեծ մասամբ հատուկ է բայերին. մյուս խոսքի մասերը նախածանցներ են ունենում սովորաբար այն դեպքում, երբ ածանցվում են բայերից. հմմտ. մակագրել → մակագրություն, շարադրել → շարադրանք (շարադրություն), շարադրական և այլն։ Ժխտական նախածանցները բնորոշում են ածականները և վկայում են տվյալ բառերի՝ ածականներ լինելու կամ ածականներից ածանցվելու մասին։

4) Վերջածանցումը հատուկ է մի շարք «լիիմաստ» խոսքի մասերի, ընդ որում դրանցից յուրաքանչյուրը բնորոշվում է վերջա-

ծանցների նյութական խմբերով. այսպես, գոյականները, ածականները, բայերը, մակբայները բնորոշվում են վերջածանցների որոշ խմբերով (բառածանցների մեջ խիստ տարածված է իմաստային և գործառական համանշությունը և համանունությունը), որոնց մասին կխոսվի ինչպես առանձին խոսքի մասերի, այնպես էլ նրանց փոխանցման ու փոխակերպման կապակցությամբ:

Առայժմ փորձ չենք անում կատարելու խոսքի մասերի բառակազմական բազմահատկանիշ (ըստ նվազագույն հատկանիշների) դասակարգում՝ ոչ ըստ բուն-բառակազմական, ոչ էլ ըստ տիպաբանական-բառակազմական դրսևորումների (Համմտ. էջ 155)[12]:

Այս կամ այն կոնկրետ լեզվի խոսքի մասերի քննության ժամանակ հնարավոր է երկու մոտեցում. ա) կամ ելնել ընդհանրական իմաստաբանական-գործառական դասակարգումներից և ցույց տալ դրանց կոնկրետ լեզվական արտահայտությունն ու, հետևաբար, խոսքի-մասային դրսևորումները. բ) կամ ելնել տվյալ լեզվի ձևաբանական, շարահյուսական ու բառային միջոցների բաշխումից ու փոխհարաբերությունից և դրանցից անցնել խոսքի-մասային իմաստների բացահայտմանն ու դասակարգմանը: Առաջինը իմաստա-հարաբերակցական (ներհարաբերակցական), երկրորդը՝ ձևա-հարաբերակցական (արտահարաբերակցական) մոտեցում է, թեև մեր կողմից բացահայտված իմաստաբանական և գործառական ընդհանրական կարգերը (կատեգորիաները) հնարավորություն են տալիս կիրառելու առաջին մոտեցումը, բայց այդ թողնելով հետագային՝ առայժմ դիմենք երկրորդ մոտեցմանը և դրանով իսկ լրացնենք ամբողջացնենք մեր «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» գրքի նյութը: Այստեղ կիրառված սկզբունքը կարելի է կոչել համադրական-կաղապարային: Այս սկզբունքի համաձայն մենք խոսքի մասերի տիպերը և քանակը որոշում ենք ըստ բառերի լեզվա-կաղապարային բաշխման: Այս դեպքում հաշվի են առնվում ինչպես մակարդակային, այնպես էլ աստիճանային տարբերությունները (հատկապես վերջինները)՝ ըստ արտահայտության և բովանդակության պլանների: Մակարդակային են համարվում ստորոգական և ոչ-ստորոգական (նշանային) միավորների տարբերությունները: Աստիճանային են համարվում բառային միավորների և բառակապակցությունների տարբերությունները. բառային միավոր-

12 Այսպիսի դասավորման դեպքում կարելի է օգտագործել Է. Բենվենիստի՝ բարդությունների դասակարգման սկզբունքները. Համմտ. *E. Benveniste*, Fondements syntaxiques de la composition nominale, BSL, LXII, 1, 1968, էջ 15—31:

ներ են համարվում բառային մեկ արժեք ունեցող համադրական և վերլուծական կազմությունները, այսինքն մեկ «լիիմաստ» բառի և մեկ կամ մի քանի մասնիկների ու ոչ-«լիիմաստ» բառերի զուգակցությունները. բառակապակցություններ են համարվում ստորադասական հարաբերությամբ կապված բառային միավորների զուգակցությունները՝ անկախ մասնիկների ու ոչ-«լիիմաստ» բառերի, ինչպես նաև համադասական հարաբերությամբ կապված «լիիմաստ» բառերի քանակից։

Քանի որ տվյալ դեպքում նկատի են առնվում կաղապարները՝ անկախ կաղապարային միավորների հնչյունական տարբերություններից, ուստի և բառային միավորների կաղապարների քննությունը կհամընկնի ավանդական ձևաբանության հետ և կունենա երկու դրսևորում՝ հոլովում ու խոնարհում. ըստ այսմ էլ կտարբերվեն հոլովվող (ոչ-ստորոգական) բառեր՝ գոյականներ (գոյական անուններ ու գոյական դերանուններ) և խոնարհվող (ստորոգական) բառեր՝ բայեր։ Գոյականը կկազմի գոյականական բառակապակցություններ, բայը՝ բայական բառակապակցություններ և նախադասություններ, որոնց քննությամբ կզբաղվում է շարահյուսությունը։

Քանի որ գոյականը հանդես է գալիս նախադասության կազմում որպես բայով արտահայտված հարաբերության հարաբերվող կողմ, և քանի որ թե՛ գոյականը, թե՛ գոյականական բառակապակցությունը կարող են ստացվել նախադասության փոխակերպմամբ, ուստի և նախադասության կաղապարը կարող է դիտվել որպես ելակետային, և խոսքի մասերը կարող են առանձնացվել ըստ նախադասության կաղապարի։ Սակայն առայժմ խոսքի մասային բաշխումը կատարենք ըստ ներկա դրքում ընդունված բաժանման։

Ձևաբանության բաժնում կտարբերվեն հարացուցային երկու կաղապարներ՝ հոլովման և խոնարհման։ Ըստ այսմ կառանձնացվեն հոլովվող բառեր՝ գոյականներ և խոնարհվող բառեր՝ բայեր։ Ըստ հոլովման երկու կարգի դրսևորման կառանձնացվեն գոյական անուններ և գոյական դերանուններ։ Միաժամանակ ըստ հոլովման և խոնարհման վերլուծական դրսևորումների կառանձնացվեն ձևաբանական բառ-մասնիկներ, որոնք հանդես կգան որպես համադրական ձևերի շարքերի (հարացույցի) վերլուծական անդամներ. այդպիսիք կլինեն գոյականի դեպքում մի՝ անորոշ հոդը, որ կհակադրվի ը/ն որոշիչ հոդին, արգելականի մի–ն, պիտի՝ եղանակիչը, եմ, լինել, տալ օժանդակ բայերը։ Որոշ վերապահությամբ սրանց

կարելի է միացնել և բաղադրյալ բայական ստորոգյալներ կազմող այլ ձևեր, որոնք կբննվեն նախադասության ստորոգյալի քննության հետ կապված:

Շարահյուսության բաժնում գոյականական բառակապակցության կաղապարի քննության հետ կապված կտարբերվեն՝ 1) երեք կարգի որոշիչ բառեր՝ ա) դերանվանական (դերանվանական ածական), բ) թվական (թվական ածական) ու գ) ածական (բուն ածական) և դ) հարաբերիչ բառեր՝ կապեր: Գոյականի որոշիչ բառերից ածականը և թվականը կարող են ունենալ մակորոշիչ բառեր, որոնք կարելի էր կոչել մակածականններ և մակաթվականներ, և որոնք,— նկատի առնելով՝ ա) նրանցից շատերի համընկնելը մակբայների հետ, և բ) բայական ածականների ու ածականական դերբայների՝ ածականների հետ նույնական կաղապարային բաշխումը,— կարելի է միացնել մակբայների հետ՝ մեկ ընդհանուր պայմանական (ավանդական) «մակբայ» անվան տակ:

Բայական բառակապակցության քննությամբ կտարբերվեն բայական բառակապակցության՝ գոյականից տարբեր երկու կարգի միավորներ՝ ա) որոշիչ բառեր՝ մակբայներ, որոնք կպահպանվեն դիմավոր բայերի՝ դերբայների փոխակերպվելու դեպքում (համմտ. արագ գնաց → արագ գնացող (գնացած) և բ) հարաբերիչ բառեր՝ ստորադասական շաղկապներ:

Գոյականական և բայական բառակապակցություններից դուրս կմնան և նախադասությանը հարող բառերի կաղապարի մեջ տեղ կգրավեն ա) ձայնարկությունները և բ) եղանակական բառերը (եղանականները):

Բացի սրանցից, հարկ կլինի տարբերել բառերի երկու խումբ, որոնք կարող են որոշել կամ հարաբերել տարբեր տիպի կաղապարների տարբեր «լիիմաստ» միավորներ: Սրանք ա) եղանակական բառ-մասնիկները և բ) համադասական շաղկապներն են: Եղանակական բառ-մասնիկները, ի տարբերություն բուն եղանակական բառերի, եղանակավորում են ոչ թե նախադասությունները, այլ առանձին բառեր՝ անկախ դրանց խոսքի-մասային բնույթից՝ սահմանափակական և սաստկական (ընդգծողական) նշանակությամբ՝ գեթ, գոնե, լոկ, միայն, միմիայն և այլն, անգամ, իսկ, մինչև անգամ, մինչև իսկ, մանավանդ, նամանավանդ և այլն[13]. համմտ. միայն Գրի-

13 Այս բառերը սովորաբար դրվում են եղանակականների մեջ որպես սահմանափակական և սաստկական տեսակներ. համմտ. Ս. Աբրահամյան, Չբնդվող խոսքի մասերը, Երևան, 1965, էջ 525—527:

գոր (ես, կարմիր, հինգ և այլն)։ Համադասական շաղկապները կարող են հարաբերել միակարգ խոսքի մասեր՝ անկախ դրանց կազապարային դիրքից (համմտ. ես և դու, կարմիր և սպիտակ, առագ և դանդաղ, հինգ և վեց, գնաց և եկավ և այլն) և համադաս նախադասություններ։

2. ԲԱՌԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ա. Ձևույթը և նրա տեսակները

Բառերը իմաստապես անվերլուծելի միավորներ չեն։ Լեզվի զարգացման յուրաքանչյուր տվյալ փուլում լինում են՝ ա) բառեր, որոնք այդ լեզվով խոսողների գիտակցության մեջ հանդես են գալիս որպես անվերլուծելի տարրեր, թեև պատմականորեն դրանք կարող են բաղադիր լինել, բ) բառեր, որոնք բաժանելի (վերլուծելի) են որոշ իմաստակիր, ինքնուրույնաբար հանդես եկող և չեկող տարրերի։ Կարելի է պատկերացնել իդեալական անջատական տիպի լեզու, որտեղ բաղադրված միավորներ չկան, և որտեղ յուրաքանչյուր անբաղադիր միավոր ձևաբանական ինքնուրույնություն ունի։ Սակայն այդպիսի իդեալական անջատական լեզուներ գրեթե չկան։ Սովորաբար բառային միավորները բաղկացած են լինում մեկ կամ մեկից ավելի իմաստակիր տարրերից, որոնք ընդունված է կոչել ձևույթներ։ Ձևույթները ըստ բառերի մեջ ունեցած իրենց բաշխական արժեքի և կապակցելիության լինում են երկու տեսակ՝ 1) ձևույթներ, որոնք կարող են հանդես գալ միայն ուրիշ ձևույթների հետ միասին, և 2) ձևույթներ, որոնք կարող են հանդես գալ նաև առանց այլ ձևույթների հարևանության։ Առաջին տեսակի ձևույթները կոչենք անկախ, երկրորդ տեսակի ձևույթները՝ կախյալ։ Կախյալ ձևույթների մեջ կարելի է տարբերել երկու ենթատեսակ՝ ա) ձևույթներ, որոնք կարող են հանդիպել միայն եզրային դիրքերում և բ) ձևույթներ, որոնք կարող են հանդիպել նաև ոչ-եզրային դիրքերում՝ անկախ և կախյալ-եզրային ձևույթների միջև. իհարկե, այս դեպքում մենք նկատի ունենք լիակազապարը, այլապես կախյալ ձևույթների տարբեր տեսակները ունեն իրենց մանրակազապարները՝ հաղորդման որոշակի կարգով։ Բառի ձևութային կազմի կազապարը հայերենում կունենա ((a+)+b)A(+b(+a)) տեսքը, որտեղ A-ն նշանակում է անկախ, a-ն՝ կախյալ-եզրային, b-ն՝ կախյալ-ոչ-եզրային ձևույթ։ Կաս···պարային այս բանաձևը հայե-

բենում չունի ընդհանուր նմուշ. կարելի է նշել միայն հիշյալ բանաձևի մասնակի դրսևորումը հանդիսացող ((a+)b+)A(+b)+a բանաձևի համար ((կ+)գերա+)ծախ(+ս)+եմ նմուշը։ A կարգի (անկախ) ձևույթները հայտնի են որպես արմատական ձևույթներ, b կարգի ձևույթները՝ որպես ածանցներ կամ բառակազմական մասնիկներ, a կարգի ձևույթները՝ որպես թեքույթներ կամ բառաթեքական (ձևաբանական) մասնիկներ։ A կարգի ձևույթները առանձին կամ b կարգի ձևույթների հետ միասին հանդես են գալիս որպես բառարանային բառաձևեր, այսինքն՝ բերվում են բառարաններում. a կարգի ձևույթները քննվում են ձևաբանության մեջ։ Դրանք երկու խմբի են բաժանվում. առաջին խմբի ձևույթները հանդիպում են մի տիպի բառերի, երկրորդ տիպի ձևույթները՝ մի ուրիշ տիպի բառերի *մոտ. հմմտ. 1)* fադաf–ի, fադաfից, fադաf–ով, fադաf–ում և այլն. *2)* ատար–ա, ատար–ար, ատար–ավ, ատար–աճf, ատար–աf, ատար–ան և այլն։ Առաջին խմբի ձևույթները կազմում են հոլովման, երկրորդ տիպի ձևույթները՝ խոնարհման հարացույցը։ Այս կապակցությամբ հարկավոր է նշել հետևյալը. *1)* Հոլովման ձևույթները կարող են հանդիպել միայն անկախ ձևույթներից հետո, մինչդեռ խոնարհման ձևույթները կարող են հանդիպել և՛ նախապաս, և՛ հետադաս դիրքում. հմմտ. կ–գն–ամ. *2)* Հոլովական ձևույթներ ստացող բառերը երբեմն կարող են առանց որևէ այլ ձևույթի միչնորդության ստանալ խոնարհման ձևույթներ (հմմտ. fար, fարի, fարով և այլն և fարեմ, fարես, fարի և այլն), և ընդհակառակն (ցատկեմ, ցատկես, ցատկի և այլն և ցատկ, ցատկի, ցատկով և այլն). այս դեպքում խոսում են բառերի խոսքի-մասային փոխանցման մասին։

բ. Ածանցական ձևույթներ

Միայն մեկ արմատական ձևույթ պարունակող բառերը կոչվում են պարզ, մեկից ավելի արմատական և ածանցական ձևույթներ պարունակողները՝ բաղադրյալ։ Բաղադրյալ բառերը լինում են բարդ, ածանցավոր և բարդ-ածանցավոր։ Բարդ են կոչվում մեկից ավելի արմատական ձևույթներ, ածանցավոր՝ մեկ արմատական և մեկ կամ մի քանի ածանցական ձևույթներ, բարդ-ածանցավոր՝ մեկից ավելի արմատական և մեկ կամ մի քանի ածանցական ձևույթներ պարունակող բառերը։ Սակայն պետք է նկատի առնել, որ որոշ անկախ կամ արմատական ձևույթներ կարող են ունենալ հարաբերանիշ արժեք, այսինքն՝ ցույց տալ երկու «լիիմաստ» բառե-

րի հարաբերություն. այս կարգի ձևույթների միացումը «լիիմաստ» բառերի հետ տալիս է յուրատեսակ բաղադրություններ, որոնք ոմանք դնում են բարդ, երկրորդները ածանցավոր բառերի մեջ, երրորդները տարբերում են որպես հատուկ խումբ. այսպես, հայ հին քերականները նախդիրներով բաղադրությունները դնում էին բարդ բառերի մեջ, արդի քերականները՝ սովորաբար ածանցավորների մեջ. Մ. Աբեղյանն առանձնացնում է որպես հատուկ տիպ՝ «առաջադիրներով բաղադրություններ»:

Բարդության կազմիչների փոխհարաբերությունը որևէ էական տարբերություն չունի բառային միավորների ընդհանուր փոխհարաբերությունից և մասամբ կքննարկվի փոխակերպմանը նվիրված հատվածում: Այդ հատվածում կխոսվի նաև ածանցական այն մասնիկների մասին, որոնք կատարում են մի խոսքի մասից մի ուրիշ խոսքի մաս կերտելու գործառություն: Այն ածանցները, որոնք բառեր են կերտում միևնույն խոսքի մասի սահմաններում, կքննվեն համապատասխան խոսքի մասերին նվիրված հատվածներում. այսպես, գոյական անուններից գոյական անուններ կերտող ածանցները կքննվեն գոյական անվանը և նրա հոլովմանը նվիրված հատվածում:

Եթե բացառենք ժամանակակից հայերենի անարտադրողական կազմությունները, որոնց մասին խոսք կլինի ստորև, ապա կարելի է նշել բառակազմական ամենաբազմանդամ կաղապարի (((a+) b+)b$_1$+) A (+c(+d(+e))) բանաձևը: Այս ընդհանուր բանաձևը կարող է ունենալ զանազան մասնակի դրսևորումներ՝ ըստ A-ի խոսքի-մասային պատկանելիության և ածանցների բնույթի ու շարադասության՝ հայերենին բնորոշ առանձնահատկություններ: Եթե նկատի չառնենք ածանցների պարտադրականությունը, ապա բանաձևի համար կարելի է տալ ան–վեր–արտա–ղր–ող–ական–արեն նմուշը (օրինակը): A-ին նախորդող ածանցները կոչենք նախածանցներ, հաջորդողները՝ վերջածանցներ: Կաղապարակազմ ածանցների կարգերի համար կարելի է նշել հետևյալ հիմնական իմաստագործառական արժեքները.

1) Առաջին կարգի (a) ածանցները (նախածանցները) ունեն ժխտական կամ, ավելի ճիշտ, բացառողական արժեք (ան–տուն «առանց տան»), այսինքն՝ հանդես են գալիս որպես կազմի ընդհանրական կարգի մի դրսևորումը:

2) Երկրորդ և երրորդ կարգի (b և b$_1$) ածանցները (նախածանցները) գերազանցապես բայական ածանցներ են, ընդ որում երկրորդ

կարգի ածանցները արտահայտում են «ժամանակային» [կրկնության՝ վեր(ա)], երրորդ կարգի ածանցները [առտ(ա), եզբ(ա), միջ(ա), ներ(ա) և այլն]՝ «տարածական» իմաստներ։ Իմաստային առումով նրանք հարաբերակից են ժամանակի ու տեղի մակբայներին և, հետևաբար, բառիս բուն իմաստով ածանցներ չեն։ Այս ածանցներով կազմությունները համարժեք են հայերենի առաջ, դուրս, ետ, ներս և այլ բաղադրիչներով հարաբերական կազմություններին, ինչպես նաև որոշ լեզուների՝ այսպես կոչված նախդրային բայերին (համմտ. անգլ. go back «ետ գնալ», go in «ներս գնալ» և այլն)։

3) Չորրորդ կարգի (c) ածանցները կամ, որ նույնն է, առաջին կարգի վերջածանցները գոյականակերտ ածանցներ են, որոնք երբեմն կարող են նախորդել հինգերորդ (d) կարգի ածանցներին, երբեմն՝ ոչ (համմտ. գործ-վածք-ային, բայց ոչ դր-ություն+ական/ային և այլն). ըստ այսմ կարելի է տարբերել նախադիրքային և վերջադիրքային գոյականակերտ ածանցներ. ամենատիպական վերջադիրքային ածանցը -ություն-ն է։ Գոյականակերտ ածանցները կքննվեն մասամբ գոյական անվանը հատկացված հատվածում, եթե նրանք գոյականներից գոյականներ են կերտում, մասամբ փոխակերպման քննության մեջ, եթե նրանք այլ խոսքի մասերից են գոյականներ կերտում։

4) Հինգերորդ կարգի (d) ածանցները կամ, որ նույնն է, երկրորդ կարգի վերջածանցները ածականակերտ ածանցներ են, որոնք գոյականակերտ ածանցների նման կարող են լինել նախադիրքային և վերջադիրքային։ Սրանք կքննվեն մասամբ ածականին, մասամբ փոխակերպմանը նվիրված հատվածներում։

5) Վերջապես, վեցերորդ կարգի (e) ածանցները կամ երրորդ կարգի վերջածանցները մակբայակերտ ածանցներ են։ Սրանց քննությունը ևս կկատարվի տարբեր տեղերում՝ մակբայներին և փոխակերպմանը նվիրված հատվածներում։

Ընդհանուր կաղապարի իրացումները ըստ տարբեր խոսքի մասերի կարելի է արտահայտել 11-րդ աղյուսակով (էջ 154). նկատի ունենալով, որ b և b_1 նախածանցների տարբերությունը կաղապարային էական փոփոխություն չի առաջացնում (դրանք հանդիպում են միևնույն հիմքերի դեպքում), տեղ խնայելու նպատակով զանց ենք առնում b_1 նախածանցով տիպերը։

Աղյուսակի կապակցությամբ կարելի է նշել հետևյալը.

1) Ըստ ածանցման հնարավորությունների «լիիմաստ» բառար-

	Մասնակա-ղապատճյին բանաձևեր	Իրացման օրինաչափեր			
		A = բայա-տատ	A = գոյականա-կան տրմատ	A = ածական-նական տրմատ	A = մակբա-յական տրմատ
1	A	թեր(եմ)	երես	մեծ	միշտ
2	aA	(չթեր)	աներես	անլուրջ	—
3	bA	արտաթեր-(եմ)	մակերես	—	աստիճան
4	Ac	բերք	առակ	մեծություն	—
5	Ad	բերքատ	առակին	մեծավուն	միշտական
6	Ae	բերելիս	առակնատար	մեծապես	միշտապես
7	abA	(անտաբեր)	անմակերես	—	—
8	aAc	անբերք	անփեսացու	անլրջություն	—
9	bAd	անբերելի	—	—	անմշտական?
10	aAe	—	—	անլրջորեն	—?
11	bAc	արտաբեր-վածք	փոխանցություն	—	—
12	bAd	արտաբերական	փոխանցվական	—	—
13	bAe	արտաբերելիս	փոխանցվանապես	—	—
14	Acd	բերքատուն	քաղաքացիական	խորքային	—
15	Ace	—?	քաղաքացիաբար	—	—
16	Ade	—?	քաղաքականապես	քեքականորեն?	միշտականորեն
17	abAc	անարտաբերվածք	անփոխանցություն	—	—
18	abAd	անարտաբերական	անփոխանցվական	—	—
19	abAe	անարտաբերապես	անփոխանցվապես	—	—
20	aAcd	—	—	—	—
21	aAce	—	—	—	—
22	aAde	անանբերելիորեն	—	—	—
23	bacd	արտաբերվածքային	—	—	—
24	bAce	—	—	—	—
25	bAde	արտաբերականորեն	փոխանցվականորեն	—?	—
26	Acde	բերվածքայնորեն	քաղաքացիականորեն	—	—
27	abAcd	—	—	—	—
28	abAce	—	—	—	—
29	abAde	անարտաբերականորեն	անփոխանցվանականորեն?	—?	—
30	aAcde	—	—	—	—
31	bAcde	արտաբերվածքայնորեն	—	—	—
32	abAcde	անարտաբերվածքայնորեն	—	—	—

մատները դասավորվում են հետևյալ կերպ՝ ա) բայարմատներ, բ) գոյականական արմատներ, գ) ածականական արմատներ և դ) մակբայական արմատներ։ Այլ կերպ ասած՝ բառակազմական ամենալայն հնարավորություններ ունեն բայական և ապա գոյականական արմատները, համեմատաբար պակաս հնարավորություններ՝ ածականական և մանավանդ մակբայական արմատները։

2) Խոսքի մասերը միմյանցից տարբերվում են, բացի այլ հատկանիշներից, նաև բառակազմական կաղապարներով։ Կոպիտ ընդհանրացմամբ կարելի է ասել, որ վերջնային դիրքում՝ ա) c կարգի ածանցներ (վերջածանցներ) ունեցող բառերը գոյականներ են, բ) d կարգի ածանցներ (վերջածանցներ) ունեցողները՝ ածականներ, գ) e կարգի ածանցներ ունեցողները՝ մակբայներ։ Նախածանցներից a կարգի (ժխտական) ածանցները բնորոշ են ածականների համար. b և b_1 ածանցները, եթե բառերը ուրիշ կարգի ածանցներ չեն պարունակում, մեծ մասամբ բնորոշ են բայերի համար. գոյականները հազվադեպ կարող են ունենալ դեր, մակ(ա), փոխ(ա) և այլ նախածանցներ (դերանուն, մականուն, մակերես, փոխանուն), մակբայները հին հայերենի նախդիրներից (առ, ընդ և այլն) ծագող նախամասնիկներով հանդես են գալիս, որպես քարացած կազմություններ (առհիշտ, ընդհուպ և այլն)։

3) Տեսականորեն յուրաքանչյուր ածանցավոր կազմություն կարող է հանդես գալ կաղապարի մեջ որպես A և վերստին ածանցվել. այսպես, անկ- բայարմատից կազմված անկ-ումն-ային երկածանց ածականը կարող է դիտվել որպես A և ստանալ ություն գոյականակերտ ածանցը՝ անկումնայնություն, ընդ որում, ինչպես նշվեց, ություն-ով կազմությունները սովորաբար այլևս չեն ածանցվում (բացառություն են կազմում միություն—միութենական տիպի բառերը). հատկապես ածականակերտ ածանցները երկարժեք են և կարող են հանդիպել ոչ միայն մեր կողմից նշված կաղապարին հատուկ դիրքում, այլև c կարգի (գոյականակերտ) ածանցներից առաջ. այս առումով ընդհանուր բանաձևին կարելի է տալ

$$(((a+)\,b+)\,b_1+)\,A\,(+\,c\,(+d\,(+\,\langle^{e)))}_{c_1)))}$$ տեսքը։

4) Գոյականական և որոշչային բառերից մենք բերեցինք միայն գոյական և ածական անունների օրինակներ. այստեղ նշենք, որ՝ ա) գոյական դերանունների և դերանվանական որոշիչների ածանցումը հազվադեպ է և դրսևորմամբ ներկայացնում է անունների

ածանցման մի մասնակի դեպք՝ սահմանափակ հնարավորություններով (համմտ. եսական. եսյնական և այլն). բ) թվականների ածանցումը ունի իրացման իր որոշակի առանձնահատկությունները, որոնք, սակայն, չեն ազդում կաղապարի վրա. թվականները կաղապարի մեջ գրավում են ածականներին հատուկ դիրք:

5) Դերբայական մասնիկները պետք է դիտել որպես յուրահատուկ փոխակերպական ածանցներ, որոնք կքննվեն փոխակերպման բաժնում: Այստեղ նշենք, որ ել/ալ-ն ունի գոյականակերտ (c կարգի), ած-ը և ող-ը՝ ածականակերտ (d կարգի) և ալիս/ելիս-ը՝ մակբայակերտ (e կարգի) արժեք, ընդ որում դրանք մասամբ կարող են հանդիպել այլ ածանցներից առաջ, մասամբ՝ ոչ: Ամենից ավելի հնարավորություններ ունի ող-ը, որ ածանցման դեպքում փաստորեն հանդես է գալիս որպես գոյականակերտ ածանց. ելիս/ալիս-ը վերջադիրքային է, այսինքն՝ հետագա ածանցման չի ենթարկվում. (վ)ած-ը f-ի հետ միասին կարող է հանդես գալ որպես ինքնուրույն գոյականակերտ ածանց (թխ-վածf, գործ-վածf և այլն). ել/ալ-ը ինքնուրույնաբար գրեթե չի հանդիպում այլ ածանցներից առաջ, թեև որոշ ածանցների հետ կարող է հանդես գալ որպես միասնական բաղադրյալ ածանց՝ ելիս/ալիս, ալի/ելի:

6) Ժամանակակից հայերենն ունի մեծ թվով կազմություններ, որոնք պատրաստի կերպով առնված են հնից. այս կազմությունների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրանց բաղադրիչների միջև ուրիշ ածանցներ մտնել չեն կարող:

7) Առաջին կարգի (a) ածանցները (ժխտական նախածանցները) սովորաբար դրվում են A+c կազմությամբ բառերի վրա, եթե c-ն նույնիսկ ձևականորեն դրո արժեք ունի. համմտ. աճ-կիր-f և աճ-ուն, այլ կերպ ասած՝ աճ-ը դրվում է գոյական անունների վրա, լինեն դրանք ածանցական թե անածանց կազմություններ: Երկրորդաբար, հաճախ ոչ միշտ գործածությամբ կամ ոճական նկատառումներով, ժխտական մասնիկները կարող են դրվել նաև ածականների վրա: Ամենից ավելի տարածված ժխտական նախածանցը աճ-ն է (անբիծ. անզարդ. անուն. անճոռն և այլն). որպես ժխտական նախածանցներ հանդես են գալիս ոչ-, չ-, ու- մասնիկները, որոնցից՝ ա) ոչ-ը պահպանվել է միայն որոշ բառերում և գործուն ու արտադրողական ածանց չէ. բ) ու-ն հանդես է գալիս սակավաթիվ բառերում, որոնք դերազանցապես բայահիմքեր են՝ ուգեղ, ուգետ, ուկար, ուճաճ, ուճաս, այլև ուձև, ումարդի. գ) չ-ն համանուն լինելով բայական չ-ին, որ կքննվի խոնարհման բաժ-

նում, այս դեպքում հանդես է գալիս որպես ածականակերտ ածանց՝ չբեր. չխոս(կաճ). չկամ. չճաս. չտես և այլն. չ–ով բառերը փաստորեն չձևավորված ժխտական դերբայների արժեք ունեն՝ չբեր=չբերող. չկամ=չկամեցող. չտես=չտեսած և այլն:

8) Երկրորդ կարգի (b և b_1) ածանցները (նախածանցները) կամ արհեստական կազմություններ են՝ ստեղծված դեռևս V դ. Հունաբան դպրոցի կողմից [ապ(ա). առ(ա). արտ(ա), բաղ(ա), բաց(ա). գեր(ա). ենթ(ա). հակ(ա), հոմ(ա). մակ(ա), հար(ա), ներ(ա). չաղ(ա). շար(ա). պար(ա). ստոր(ա). վեր(ա). տար(ա), փաղ(ա). փար(ա). փոխ(ա)] և մասամբ արտադրողական նաև մեր օրերում[14], կամ մակբայ-կապեր՝ վերածված համապատասխան ածանցական բաղադրիչների [առաջ(ա). ետ(ա). միջ(ա), նախ(ա) և այլն]:

9) Ըստ ընդհանուր կաղապարի յուրաքանչյուր խոսքի մասի համար հնարավոր է $2^6=64$ կամ, եթե զանց առնենք b_1 կարգի ածանցները, $2^5=32$ տիպ՝ 1 անածանց, 5 միածանց, 10 երկածանց, 10 եռածանց, 5 քառածանց և 1 հնգածանց: Սակայն հնարավոր տիպերից բայի և դոյականի դեպքում իրականանում է շուրջ երեք քառորդը, ածականի և մակբայի դեպքում՝ շուրջ մեկ քառորդը միայն: Իրականացող տիպերն էլ ա) միևնույն տարածվածությունն ու հաճախականությունը չունեն և բ) երբեմն հավելուրդային կազմություններ են (համմտ. մութ—մթին. միշտ—մշտապես և այլն). այսպիսի ածանցները հայտնի են «թարմատար» անունով:

10) Ածանցները կաղապարի մեջ առնվում են իբրև միասնական կազմիչներ, թեև դրանցից յուրաքանչյուրը կարող է բաղադրյալ լինել և, հետևաբար, ունենալ իր մանրակաղապարը: Այսպես, վածf–ը դիտվում է իբրև մեկ՝ c կարգի (դոյականակերտ) ածանց, թեև այն բաղկացած է վ. ած. f բաղադրիչներից, որոնցից յուրաքանչյուրն ունի անկախ գործածություն: Այս առումով ա հոդակապը ոչ թե անկախ ձևույթ է, այլ ձևույթի կազմիչ (համմտ. ա–կաճ. ա–վոր և այլն):

11) Ածանցական և վերաբերական ձևույթների տարբերակումը որոշ դեպքերում պայմանական բնույթ ունի: Այսպես, բայական որոշ կարգի մասնիկներ, որոնք ակնհայտ բառակազմական արժեք

---

14 Համմտ. Գ. Ջահուկյան. Քերականական և ուղղագրական աշխատություններ հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.), Երևան, 1954. Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա ստեղծած բերականական տերմինարանությունը, Երևան, 1971:

ունեն, այնքան սերտորեն են կապվում բայական համապատասխան վերջավորությունների հետ, որ դժվար է նրանցից անջատել. այդ պատճառով էլ նրանց քննությունը դրված է բուն ձևաբանության՝ խոնարհմանը նվիրված հատվածում:

12) Ածանցները ակնհայտորեն երկու տիպի են՝ իմաստափոխական կամ իմաստահավելական և գործառական-փոխանցական: Առաջին տիպի ածանցները բառին հաղորդում են նոր իմաստ՝ առանց նրա խոսքի մասային արժեքը փոխելու (հմմտ. fաղաf—fաղաfացի, գրեմ—վերագրեմ, մեծ—մեծալուն *և այլն): Երկրորդ տիպի ածանցները փոխում են բառի գործառական արժեքը, այսինքն՝ նրա տեղը շարակարգային կաղապարներում, մի խոսքի մասը վերածում են մի այլ խոսքի մասի՝ առանց գոյաբանական իմաստի փոփոխության (հմմտ.* խոսեմ—խոսf—խոսfային, լուրջ—լրջորեն, fնեմ—fնել *և այլն): Կան ածանցներ էլ, որոնք զուգակցում են այս երկու տիպի արժեքները (հմմտ.* տուն—աճուն, նստել—նստարան *և այլն):*

13) Պետք է նկատի առնել, որ մի շարք դեպքերում տեղի է ունենում գործառական արժեքի ածանցների զեղչում՝ տեղի խնայողության սկզբունքով. այսպես տեսական *բառը առաջին հայացքից կարծես անմիջապես ածանցված է* տեսնել *բայից, բայց իրականում այն ածանցված է* տեսություն *բառից՝* ություն–ի *զեղչմամբ [=*տես(ություն)+ական, *փխկ. *տեսութեական], այսինքն՝* տեսական–ը *ունի* A(+c)+d *և ոչ* A+d *կազմությունը:*

գ. Հիմքի հասկացությունը

Հիմքի հասկացությունը քերականության կարևորագույն հասկացություններից մեկն է, բայց տարբեր քերականների կողմից գործածվում է տարբեր իմաստով: Այս կապակցությամբ հարկ ենք համարում կատարել որոշ կարգի ճշտումներ:

1) Ամենից առաջ հարկավոր է տարբերել բառակազմական և ձևաբանական հիմքեր: Բառակազմական հիմք է կոչվում բաղադրության այն մասը, որ մնում է տվյալ բառակազմական մասնիկը (ածանցը) առանձնացնելուց հետո. այսպես, fաղաf–ական *բառի դեպքում* fաղաf*-ը բառակազմական հիմքն է,* ական*–ը՝ ածանցը: Ձևաբանական հիմք է կոչվում բառաձևի այն մասը, որ մնում է թեքական (վերաբերական) ձևույթը առանձնացնելուց հետո: Հա-*

յերևնում թևքական մասնիկները գերազանցապես եռադաս դիրք են գրավում, ուստի և կոչվում են վերջավորություններ: Այս նեղ առումով ձևաբանական հիմքը բառաձևի այն մասն է, որ ստացվում է վերջավորությունն առանձնացնելուց հետո. այսպես, **fադաf–ից** *և* **գրել–ուց** *բառաձևերի առաջին մասերը (***fադաf–***,* **գրել–***) հիմքեր են, վերջին մասերը (***–ից***,* **–ուց***)՝ վերջավորություններ:*

2) Հայերենում հիմքի հասկացությունը բազմաիմաստ է: Հիմք է կոչվում բառի յուրաքանչյուր իմաստակիր հատված, որից առանձնացվում է տվյալ եզրային՝ քերականական ձևույթը, թեև այդ հատվածը ինքնին կարող է նույնպես քերականական ձևույթներ պարունակել: Այսպիսով, բառակազմական կամ, նեղ իմաստով, բառածանցական հիմքը կարող է պարունակել ուրիշ ածանցներ (հմմտ. **fադաfական–ապես***), ձևաբանական հիմքը՝ ուրիշ վերջավորություններ (հմմտ.* **fադաfներ–ից***): Այս դեպքում անմասնիկ հատվածը հիմք է ծառայում միամասնիկ, միամասնիկ հատվածը՝ երկամասնիկ, երկամասնիկ հատվածը՝ եռամասնիկ միավորի համար և այլն. հմմտ.* **fադաf–ներ***,* **fադաfներ–ի***,* **fադաfների–ն***, որտեղ առաջին դեպքում հիմք է* **fադաf–***ը, երկրորդ դեպքում՝* **fադաfներ–***ը, երրորդ դեպքում՝* **fադաfների–ն** *և այլն: Այլ կերպ ասած՝ հիմքը կարող է լինել պարզ և բաղադրյալ, այլև միամասնիկ, երկմասնիկ, եռամասնիկ և այլն:*

3) Հիմքի հասկացությունը կապված է մեկ կամ մի քանի հնչույթ պարունակող իմաստակիր միավորների՝ ձևույթների հետ: Ճիշտ է, քերականական միևնույն իմաստները կարող են արտահայտվել ոչ միայն ձևույթների, այլև հնչույթների փոփոխության կամ, այսպես կոչված, հերթագայության միջոցով (հմմտ. **fադաf — fադաfի** *և* **տուն — տան***), բայց այս դեպքում սովորաբար չեն խոսում հիմքի և վերջավորության, այլ հիմնական ձևի ածանցյալ կամ փոխված ձևի մասին:*

4) Հիմքի հասկացությունը կապված է բառի հետ. թեև ավելի մեծ միավորների բաղադրիչների միջև առկա է միևնույն հարաբերությունը, բայց այս դեպքում գործածում են այլ տերմիններ: Նպատակահարմար է առաջիկայում վերլուծական բառաձևերի դեպքում խոսել վերլուծական հիմքերի և վերլուծական վերջավորությունների մասին (հմմտ. **գնում եմ***), իսկ բառակապակցությունների դեպքում գործածել «բառակապակցության հիմք» և «հավելյալ բաղադրիչ» տերմինները (հմմտ.* **fադաfը** *և* **նոր fադաfը***,* **նոր fադաfը** *և այս* **նոր fադաfը** *և այլն, որտեղ առկա է միևնույն հարա-*

բերությունը, ինչ **Բաղաք** *և* **բաղաք-ներ, բաղաքներ** *և* **բաղաքներ-ը** *այլն ձևերի միջև)։*

5) Հետագա քննության համար հարկավոր է տարբերել «մաքուր հիմք» և «ձևավոր հիմք» հասկացությունները։ Ձևավոր կոչենք մասնիկներին անմիջապես նախորդող հիմքերը՝ իրենց բոլոր կարգի փոփոխություններով հանդերձ, մաքուր կոչենք այդ նույն հիմքերը՝ անկախ առնված (տվյալ մասնիկներից զուրկ) ձևով։ Այս տարբերակումն անհրաժեշտ է նրանով, որ ձևավոր հիմքերը ոչ միշտ են համընկնում մաքուր հիմքերի հետ. ձևավոր հիմքերը մաքուր հիմքերից կարող են տարբերվել՝ ա) շեշտակրությամբ, բ) փոխված հնչույթներով և գ) որևէ հավելյալ հնչույթի առկայությամբ ու բացակայությամբ։ Ի տարբերություն բուն ձևույթների (վերջավորությունների) և նրանց համազոր քերականական հերթագայությունների՝ հիմքային այս տարբերությունները դիրքային պայմանավորվածություն ունեն և նշանակիր չեն։ Այս կարգի հավելական մասնիկները կարելի է կոչել կեղծ ձևույթներ և կեղծ հերթագայություններ կամ նշույթներ (маркер) *և հերթագայական նշույթներ*[15]*։*

Հայերենում ձևավոր հիմքերը լինում են մի քանի տեսակ (օրինակները բերում ենք անվանական հիմքերից)։

1) Անփոփոխ-շեշտավոր հիմք, որ համընկնում է մաքուր հիմքի հետ՝ **Բաղա՛ք—բաղա՛ք-ը, գյուղացի՛—գյուղացի՛ք** *և այլն։*

2) Շեշտափոխված-անշեշտ հիմք, որ տարբերվում է մաքուր հիմքից անշեշտակրությամբ՝ **բաղա՛ք—բաղաք-ի՛, ընկերո՛ջ—ընկերոջ-ի՛ց** *և այլն։*

3) Հնչութափոխված հիմք, որ տարբերվում է մաքուր հիմքից մեկ կամ մի քանի հնչույթով. կարելի է տարբերել երեք կարգի հնչութափոխություն՝ ա) շեշտափոխական՝ **գի՛ր—գ(ը)ր-ի՛, երկի՛ր—երկր-ի՛, ջուր—ջ(ը)ր-ի՛, մանո՛ւկ—մանկ-ա՛-ն, կատո՛ւ—կատվ-ի՛, սե՛ր—սիր-ո՛, հո՛ւյս—հուս-ո՛**, *այլև* **Բո՛ւյր—բրո՛ջ, կի՛ն—կանա՛յք**[16]*. բ) առնմանական՝* **անվան—անվամ-բ**. *գ) պատմական-ոճաբանական՝* **սիրո—սիրու-ն** (**սիրո<սիրոյ, սիրուն<սիրոյն**)։

---

[15] *Համմ. Е. С. Кубрякова.* Морфологическая структура слова в современных германских языках, «Морфологическая структура слова в индоевропейских языках», М., 1970, *էջ 123—127։*

[16] *Արդի Բաապում այ/(ը) և ի/ա հնչութափոխությունները դրեթե նույնացել են շեշտափոխական այլ հնչութափոխությունների հետ և տարբերվում են վերջիններից միայն նրանով, որ առանձին հիմքեր են ընդգրկում և ընդհանրական բնույթ չունեն։*

4) Մասնիկավոր հիմք, որ տարբերվում է մաքուր հիմքից որևէ մասնիկի առկայությամբ. մասնիկավորումը կարող է լինել՝ ա) ներդաշնակային (երկու ձայնավորի հանդիպման դեպքում՝ որպես հորանջից խուսափելու միջոց)՝ **ֆահանա—ֆահանայ-ի, աղջկա—աղջկան-ից** *(ն-ն հանդես է գալիս միայն այն դեպքում, երբ պատմականորեն առկա է եղել մաքուր հիմքում և հետագայում ընկել է). բ) պատմական-դիրքային՝* **գառ (<գառն)—գառն-եր, մութ (<մութն)—մթն-ից.** *գ) դիրքա-իմաստային՝* **գործ-ն-եր-ս** *(այս ն-ն հանդիպում է միայն միավանկ բառերի դեպքում՝* **եր-ս** *վերջամասնիկների զուգորդությամբ և, ինչպես կտեսնենք, իմաստային որոշակի արժեք ունի. այն փաստորեն ա-ի և պ-ի հետ միասին մեկ բաժանական վերջամասնիկ է կազմում՝ հանդիպելով բարբառային-խոսակցական ոճում:*

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ՀԱՐԱՑՈՒԹՅՈՒՆ (ՀՈԼՈՎՈՒՄ)

I. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

1. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

Համեմատելով բառարանային բառաձևերը խոսքի մեջ հանդես եկող բառաձևերի հետ՝ մենք նկատում ենք, որ որոշ բառեր խոսքի մեջ հանդիպում են անփոփոխ, մյուսները՝ փոփոխված, այսինքն՝ թևքույթներով (մասնիկներով և հերթագայություններով) օժտված ձևով: Ըստ այդմ կարելի է տարբերել բառերի երկու խումբ՝ փոփոխական և անփոփոխ: Փոփոխական բառերի քննությունը ևս բացահայտում է փոփոխության երկու տեսակ, որոնք ավանդաբար հայտնի են հոլովում և խոնարհում անուններով: Համեմատելով հոլովվող և խոնարհվող բառերը՝ կարելի է պարզել, որ իմաստային տեսակետից հոլովվող բառերը կազմում են առարկայանիշ բառերի կամ, ավանդական անվանմամբ, դոյականների կարգը, իսկ խոնարհվող բառերը՝ եղելություն (գործողություն, վիճակ, շարժում,

պրոցես, վերջին հաշվով առարկաների շարժման ու հարաբերության տարբեր տիպեր) նշանակող բառերի կամ, ավանդական անվանմամբ, բայերի կարգը: Խոնարհվող բայաձևերը փաստորեն արտահայտում են երկու կարգի իմաստներ՝ հանդես գալով որպես ընդհանրապես շարժման տարբեր ձևերի նշանակումներ (իմացական արժեք) և որպես հաղորդակցման պրոցեսի հետ կապված առկայացական-իրադրական իմաստների նշանակումներ (հաղորդակցային արժեք). այս առումով ավելի ճիշտ կլիներ խոնարհվող բառերը կոչել բայ-ստորոգյալներ: Հոլովվող բառերի դեպքում առկա է որոշակի տարբերակում, որ ունի հոլովման ձևերին տարբերակված արտահայտություն. առարկաների իմացական նշանակումները հայտնի են գոյական անուններ, հաղորդակցա-առկայացական նշանակումները՝ դերանուններ անվամբ. երկրորդարար գոյական անունները ևս կարող են ունենալ առկայացական իմաստներ, բայց գոյական անունների համար դրանք ուղեկցող իմաստներ են, դերանունների համար՝ նրանց էությունը կազմող իմաստներ: Ըստ հոլովման դրսևորման տարբերությունների գոյական անունների հոլովումը կոչվում է անվանական հոլովում, դերանուններինը՝ դերանվանական հոլովում:

Յուրաքանչյուր խոսքի մասի քննության ժամանակ նախ բերում ենք այդ խոսքի մասին պատկանող արմատական բառերի ցանկը, ապա թվում այն ածանցները, որոնք արմատներից նոր բառեր են կազմում առանց խոսքի-մասային փոխակերպման. այլ խոսքի մասերից տվյալ խոսքի մասին պատկանող բառեր կերտող ածանցները քննվում են փոխակերպման հատվածում: Սակայն գոյական անունների դեպքում հարկադրված ենք շեղվել այդ սկզբունքից՝ նկատի առնելով արմատական գոյականների պատկառելի թիվը:

Գոյականներից գոյականներ կերտող ածանցները բնականաբար ոչ այլ ինչ են, եթե ոչ գոյականների տարբերությունների և հարաբերությունների նշանակումներ: Տեսականորեն կարելի է պատկերացնել այնպիսի լեզու, որտեղ գոյականի բոլոր հնարավոր լրացումները (որոշիչ բառերը) և հարաբերիչները (հարաբերող բառերը) կարող են արտահայտվել մասնիկների միջոցով՝ որպես ածանցներ: Սակայն իրականում ամեն մի լեզու ընտրություն է կատարում բառերի և մասնիկների միջև՝ ըստ արտահայտվող իմաստների կարևորության և հաճախականության. տվյալ հանրության մեջ ամենից ավելի կարևոր և հաճախակի գործածվող իմաստները,

Համապատասխան լեզվակառուցվածքային հնարավորության դեպքում, սովորաբար արտահայտվում են ածանցների ձևով: Մի շարք դեպքերում գոյականակերտ համարվող ածանցները իրականում ածականանակերտ ածանցներ են՝ խոսքի-մասային փոխանցմամբ գոյականացված. ածականը, որ ընդհանրապես ենթադրում է գոյական լրացյալ, գոյականանալու դեպքում դառնում է լրացյալը պարունակող բառ. համմտ. գինվոր = գինվոր մարդ: *Բուն գոյականակերտ (գոյականներից գոյականներ կերտող ածանցները ունեն որոշչային (թվականի, ածականի) իմաստներ* [տնակ = փոքր տուն, ավագանի = չատ ավագներ. հաղթաթացուհի = կին (իգական սեռի) հաղթաթացի], *երկրորդային-գոյականակերտ (ածականների խոսքի-մասային փոխանցմամբ գոյականակերտ դարձած) ածանցները՝ հարաբերիչ իմաստներ, այսինքն՝ արտահայտում են հոլովական (հատկապես հատկացուցիչ—հատկացյալի), կապային և բայական (վերջին հաշվով՝ դերբայական) իմաստներ* [նախարապան = նախիր պահող մարդ, ծիրանի = ծիրանի ծառ, խնձորենի = խնձորի ծառ, գլխարկ = գլխին դնելու (գլուխը ծածկելու) բան (իր) և այլն]:

Որոշչային արժեքի ածանցները գոյականի որոշչային լրացումների նման արտահայտում են քանակական և որակական հատկանիշներ՝ 1) հավաքականություն (որպես քանակի կարգի արտահայտություն՝ քանակապես շատ՝ առնված իբրև մեկ ամբողջություն)՝ ան (առածանի, ավագանի), եղեն (ամանեղեն, իրեղեն), *այլև, որոշ վերապահությամբ,* անք, ենք (Վարդանանք, Գրիգորենք), *2) նվազականության՝ միացած սուբյեկտիվ-դրական վերաբերմունքի՝ փաղաքշականության հետ (որպես չափի կարգի արտահայտություն՝ չափով փոքր)՝* ակ (տնակ), իկ (գլխիկ), ուկ (իշուկ), *3) սեռա-դասային տարբերություն («արական», «իգական»)՝* ուհի (ուսուցչուհի, հաղթաթացուհի):

Հարաբերիչ արժեքի ածանցները արտահայտում են առարկաների ամենատարբեր բնույթի առնչություններ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ 1) պարունակող-պարունակելիի՝ ա) տեղի՝ (ա)կալ (մոմակալ), (ա)նոց (բանջարանոց, հյուրանոց), (ա)պանակ (ծայրապանակ, դրամապանակ), (ա)ստան (Հայաստան, մրգաստան), արան (բառարան, սրճարան), արկ (գլխարկ), ոց (դարբնոց, ծաղկոց), ուտ (եղեգնուտ, լորուտ), *բ) «տեղառնչական»՝* (ա/ե)ցի (հաղթաթացի, դազախեցի, երևանցի). *2) առնչակցային (առարկաներին առնչություններ արտահայտող)՝* (ա)կան (կոլտնտեսական, մանկավարժական), (ա)պան (նախարապան, այգեպան), (ա)վոր

(ձիավար, գինվոր), ենի (խնձորենի, տանձենի, խոզենի), ի (ծիրանի, կաղնի), յան (հնչակյան, վարդանյան), ուդ (եռանապարհուդ, սայլուդ) և այլն՝ «պատկանող», «պահող», «ունեցող» և այլն իմաստներով, որոնք կարող են արտահայտվել նաև հատկացուցիչ—հատկացյալ, կապառու—կապի խնդիր կապակցությամբ. լրացյալը երբեմն կարող է լինել ոչ թե ընդհանուր («մարդ, «բան», «իր»), այլ ավելի կոնկրետ իմաստով բառ (խոզենի = խոզի միս, ծիրանի = ծիրանի ծառ և այլն):

Գոյականի անվանական հոլովման կազմության հիմնական միջոցը մասնիկավորումն է (վերջավորությունների հավելումը), որի հետ միասին կարևոր դեր է խաղում նաև հերթագայությունը (հնչյունների փոխարինումը այլ հնչյուններով):

Հայերենում անվան մասնիկների մեջ մտնող հնչյունների քանակը երեքից չի անցնում: Ձրո մասնիկը կարող է միաժամանակ հակադրվել մի քանի մասնիկի, և այս դեպքում իրապես կունենանք յուրաքանչյուր մասնիկին հակադրվող առանձին զրո մասնիկ, այսինքն՝ fադաf/fադաfներին հակադրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ fադաf+0+0+0/fադաf+ներ+ի+ն հակադրություն կամ, որ նույնն է, fադաf+0/fադաf+ներ, fադաfներ+0/fադաfներ+ի և fադաfների+0/fադաfների+ն հակադրությունների ամբողջություն:

Ժամանակակից հայերենում հոլովման վերջամասնիկները իրար են հաջորդում որոշակի կարգով: Հաշվի առնելով վերջամասնիկների հնարավոր ամենամեծ քանակ պարունակող ձևերը և զանց առնելով մասնակի տարբերությունները[1] ըստ գուգորդվող վերջամասնիկների բնույթի և հաջորդականության կարելի է տարբերել կառուցվածքային կաղապարների (մոդելների) հետևյալ նմուշները[2], 1) fադաf(+ներ)+ից+ս))), 2) բնկեր(+ոջ)ից)+ս))), 3) կան(+ացց)ից)+ս))), 4) մարդ(+կ)+ացց)+ից)+ս)))): Այս կաղապարներից ամենագործունը և ամենատարածվածը առաջինն է. ա) այն ընդգրկում է գոյական անունների մեծ մասը. բ) նրան պատկանում են գոյականաբար առնված և հոլովված բոլոր ածականները ու թվականները. գ) երկրորդ տիպին պատկանող գոյական անունները ևս կարող են ունենալ այդ տիպը՝ բնկեր(+ներ)+

---

1 Սրանց մասին կխոսվի առանձին բերականական կարգերին նվիրված հատվածներում:

2 Մոդել բառը մենք գործածում ենք լայն առումով, կաղապար բառը՝ նեղ առումով, ոչ դինամիկ մոդելները նշանակելու համար:

+ից)+ս))). դ) երրորդ կաղապարն ընդգրկում է միայն սակավաթիվ գոյական անուններ, այն էլ ոչ բոլոր հնարավոր ձևերով. ե) չորրորդ կաղապարը, որ ամենաբազմանդամն է, ընդգրկում է միայն մարդ հիմքը և այն որպես երկրորդ բաղադրիչ ունեցող բարդ հիմքերը (տղամարդ և այլն):

Ըստ բաշխական արժեքի համեմատելով այս չորս տիպերի վերջամասնիկները՝ պարզում ենք հետևյալը. ա) ս տիպի վերջամասնիկները կարող են հանդիպել բոլոր մնացած տիպի վերջամասնիկներից հետո. բ) ից տիպի մասնիկները կարող են հաջորդել մնացած բոլոր տիպի վերջամասնիկներին, բացի ս տիպի վերջամասնիկներից. գ) աց տիպի վերջամասնիկները կարող են հաջորդել միայն (ի)կ տիպի վերջամասնիկներին. դ) վերջապես, (ի)կ տիպի վերջամասնիկները չեն կարող հաջորդել այլ կարգի վերջամասնիկների: Այսպիսով, կունենանք չորս կարգի վերջամասնիկներ, որոնք պայմանականորեն կարելի է կոչել I կարգի (իկ–ի խումբ՝ a), II կարգի (աց–ի խումբ՝ b), III կարգի (ից–ի խումբ՝ c) և IV կարգի (ս–ի խումբ՝ d): Մենք առայժմ չկարողացանք ճշտել ներ և ոչ տիպի վերջամասնիկների կարգային պատկանելության հարցը. հիշյալ կաղապարները այդ նպատակի համար անբավարար են դուրս դալիս. երկուսն էլ կարող են նախորդել ից տիպի մասնիկներին և երկուսն էլ անմիջապես հաջորդում են հիմնական բառաձևերին: Այս դեպքում մեզ օգնության կարող է հասնել մնացած երկու կաղապարներում ից–ին նախորդող աց վերջամասնիկի բաշխական վերլուծությունը: Առաջին հայացքից և՛ կաճ–աց–ից, և՛ մարդ–կ–աց–ից բառաձևերում կարծես թե մենք գործ ունենք մրևնույն աց մասնիկի հետ, բայց հարցի ավելի ուշադիր քննությունը ցույց է տալիս դրանց տարարժեքությունը. պարզվում է, որ ինչպես մարդ հիմնաձևի և աց վերջամասնիկի միջև ընկած է իկ–ը, այսինքն՝ մարդ–կաց ձևի մեջ աց-ը կապվում է մարդ հիմնաձևի հետ մարդիկ ձևի միջնորդությամբ, այնպես էլ կին հիմնաձևի և աց վերջամասնիկի միջև ընկած է կանայ ձևը, այսինքն՝ կանաց ձևի մեջ աց-ը կապվում է կին հիմնաձևի հետ կանայ ձևի միջնորդությամբ. այլ կերպ ասած մենք ունենք մարդ—մարդիկ—մարդկաց և կին—կանայ—կանաց շարքերը, որոնց մեջ նույն կարգին պատկանող յուրաքանչյուր ձև բաշխական առումով լիովին նույնարժեք է: Այստեղից բխում է, որ՝ ա) աց–ը բաղկացած է այլ վերջամասնիկից և

յf/ներ հերթագայությունից (անց = այf + յf/ներ)[3]. բ) մարդիկ, կանայք ձևերը բաշխական առումով լիովին հարաբերակից են բապաֆներ, ընկերներ ձևերին և տարբերվում են ընկերոջ տիպի ձևերից. գ) ընկեր-ոջ ձևը կարելի է դիտել որպես ընկեր(+ներ)+ոջ (ժխտված հոգնակիով, այսինքն՝ եզակիի զրո վերջավորությամբ օժտված) ձև, որի մեջ ոջ-ը հարաբերակից է մարդ-կ-անց-ի անց վերջամասնիկին և կանանց-ի յf/ներ հերթագայությունը. դ) վերջամասնիկային արժեք ունեցող հնչութափոխությունները, այսինքն՝ հերթագայությունները կարող են փոխարինել միայն II կարգի (b) վերջամասնիկներին և պետք է մտցվեն նրանց մեջ. այս բոլորով հանդերձ կմնան որոշ թվով վերջամասնիկներ, որոնց բաշխման հարցը կդժվարանա. այսպես, օրինակ, ի-ով օժտված ձևերը (բաղաֆ-ի) լիովին հարաբերակից են ընկերոջ տիպի ձևերին և խոսքի մեջ կատարում են նրանց բոլոր գործառույթները, բայց, ի տարբերություն ոջ-ի, ի-ն յց-ից առաջ չի հանդիպում, այլ գործուն է միայն առաջին կապարում՝ փոխարինելով նրան; նկատի ունենալով գործառույթների լիակատար ընդհանրությունը, այլև այն, որ ներ-ու և ներ-ու-ց ձևերի հետ համեմատելով բաղաֆի և բաղաֆից ձևերը՝ ի-ն կարելի է պայմանականորեն դիտել որպես ու-ին (և հետևաբար ոջ-ին) հավասարարժեք մասնիկ[4], մենք այն կդնենք II կարգի վերջամասնիկների շարքում:

Նկատի ունենալով անվանական վերջամասնիկների հաջորդականությունը՝ հայերենում կարելի է տարբերել անվանական հիմքերի հետևյալ տիպերը. 1) I կարգի (a) վերջավորությունների համար հիմք են ծառայում հիմնական բառաձևերը. 2) II կարգի (b) վերջավորությունների համար հիմք են ծառայում I կարգի (a) վերջամասնիկներով (ներառյալ զրո վերջամասնիկը) օժտված բառաձևերը. 3) III կարգի (c) վերջավորությունների համար հիմք են ծառայում II կարգի (b) վերջամասնիկներով (ներառյալ զրո վերջամասնիկը) օժտված բառաձևերը. 4) IV կարգի (d) վերջավորությունների համար հիմք են ծառայում III կարգի (c) վերջամասնիկներով (ներառյալ զրո վերջամասնիկը) օժտված հիմքերը:

---

3 Ինչպես նշվել է, յուրաքանչյուր հերթագայության կարելի է մեկնաբանել որպես վերջամասնիկավորում (տուն/տան = տուն + ու/ա) և, ընդհակառակն, յուրաքանչյուր վերջամասնիկավորում կարելի է մեկնաբանել որպես հերթագայություն (ճաց + ի = ճաց/ճացի, այսինքն՝ ճաց + 0/ի):

4 Իրականում, սակայն, յց-ի ի-ն զարձել է մեկ միասնական վերջամասնիկի՝ անրաժան մասը:

Անվանական հիմքերի և վերջավորությունների իդեալական (հնարավոր) հաջորդականությունը կարելի է արտահայտել 1-ին աղյուսակով.

Աղյուսակ 1

Հիմքեր	Վերջավորություններ			
	a	b	c	d
A	+	+	+	+
A+a	—	+	+	+
A(+a)+b	—	—	+	+
A((+a)+b)+c	—	—	—	+
A(((+a)+b)+c)+d	—	—	—	—

Սակայն հիմքերի և վերջամասնիկների իդեալական փոխհարաբերությունը խախտվում է գրական նորմայի մտցրած մի շարք սահմանափակումներով, որոնք կարող են լինել ընդհանրական և մասնակի: Ընդհանրական ենք կոչում տվյալ կարգի մասնիկների ընդհանուր բաշխական կանոններով որոշվող սահմանափակումները, մասնակի՝ տվյալ կարգի մասնիկներից մեկին կամ մի քանիսին հատուկ, ընդհանուր բնույթ չունեցող սահմանափակումները: Մասնակի սահմանափակումների քննությունը թողնելով առանձին բերականական կարգերին նվիրված հատվածներին՝ այստեղ խոսենք ընդհանրական սահմանափակումների մասին. ժամանակակից հայերենում կա այսպիսի մի քանի սահմանափակում, որոնք կապված են առաջին հերթին d կարգի ը. և վերջամասնիկների դործածության հետ. 1) d կարգի ը, և վերջամասնիկները կարող են հաջորդել c կարգի (ից. ով և այլն) մասնիկներին միայն խոսակցական-բարբառային տեքստերում ու լեզվագործածություններում. ընկերներից-ը, մարդկանցով-ը ձևերը դիտվում են որպես գրական լեզվի նորմաներից կատարվող շեղումներ. 2) d կարգի ը, և վերջամասնիկներից և-ն կարող է հանդիպել b, c և նույնիսկ d կարգի վերջամասնիկներից առաջ՝ b կարգի ձայնավորահանգ մասնիկներից հետո գոնված դիրքում (այսպես կոչված «փոխանուն սեռականի» կամ, ավելի հիշատ, «փոխանուն տրականի» դեպքում)՝ Հակո-

բինի, Հակոբինից, Հակոբինը. *3) ինչպես նշել ենք, հերթագայությունները հավասարարժեք են* b *տիպի վերջամասնիկներին, և, հետևաբար,* c *տիպի վերջամասնիկները կարող են նախորդել* a *տիպի վերջամասնիկներով օժտված հիմքերին հաճախ կամ միայն* b *տիպի վերջամասնիկների, կամ դրանց փոխարինող հերթագայությունների միջնորդությամբ. մեկնաբանելով հերթագայությունները որպես վերջամասնիկներ (ճոր=ճայր+այ/ա, կանանց=յ[f]/ց և այլն) և երկուսը միասին կոչելով թեքույթներ*[5]*՝ մենք կստանանք ժամանակակից հայերենի հիմքերի և թեքույթների փոխհարաբերության հետևյալ պատկերը (աղյուսակ 2).*

Աղյուսակ 2

Հիմքերի տիպեր	Թեքույթներ			
	a	b	c	d
A	+	+	+	+
A+a	—	+	+	+
A(+a)+b	—	—	+	+
A((+a)+b)+c	—	—	—	—/+
A(((+a)+b)+c)+d	+/—	+/—	+/—	+/—

Եթե բացենք հիմքերի և վերջավորությունների փոխհարաբերությունն արտահայտող բանաձևերի փակագծերը, ապա կստանանք հիմքերի և վերջավորությունների դուգորդման հետևյալ հնարավոր տիպերը (1 միանդամ, 4 երկանդամ, 6 եռանդամ, 4 քառանդամ և 1 հինգանդամ տիպ) (աղյուսակ 3, էջ 169)։

Այժմ անցում կատարելով արտահայտության պլանից դեպի բովանդակության պլանը՝ կարող ենք որոշել հիշյալ չորս կարգի մասնիկների բովանդակային հետևյալ արժեքները.

---

5 *Հակառակ մեկնաբանության դեպքում վերջավորություններով օժտելը կդիտվի որպես արտաքին թեքում, հերթագայությամբ օժտելը ներքին թեքում (հմմտ.* Հակոբ/Հակոբի և տուն/տան)։

6 *Բացառում ենք* ե*-ի՝* b, c և d *վերջավորություններին նախորդելու դեպքը, որպես մասնակի դրսևորում։*

№№	Զուգորդվող մխավորներ					Զուգորդման տիպեր	Օրինակներ
	A	a	b	c	d		
1	+	—	—	—	—	A կամ A + $\bar{a}$ + $\bar{b}$ + $\bar{c}$ + $\bar{d}$	քաղաք
2	+	+	—	—	—	Aa կամ A + a + $\bar{b}$ + $\bar{c}$ + $\bar{d}$	քաղաք-ներ
3	+	—	+	—	—	Ab կամ A + $\bar{a}$ + b + $\bar{c}$ + $\bar{d}$	քաղաք-ի
4	+	—	—	+	—	Ac կամ A + $\bar{a}$ + $\bar{b}$ + c + $\bar{d}$	քաղաք-ից
5	+	—	—	—	+	Ad կամ A + $\bar{a}$ + $\bar{b}$ + $\bar{c}$ + d	քաղաք-ը
6	+	+	+	—	—	Aab կամ A + a + b + $\bar{c}$ + $\bar{d}$	քաղաք-ներ-ի
7	+	+	—	+	—	Aac կամ A + a + $\bar{b}$ + c + $\bar{d}$	քաղաք-ներ-ից
8	+	+	—	—	+	Aad կամ A + a + $\bar{b}$ + $\bar{c}$ + d	քաղաք-ներ-ը
9	+	—	+	+	—	Abc կամ A + $\bar{a}$ + b + c + $\bar{d}$	կն-ոջ-ից
10	+	—	+	—	+	Abd կամ A + $\bar{a}$ + b + $\bar{c}$ + d	կն-ոջ-ը
11	+	—	—	+	+	Acd կամ A + $\bar{a}$ + $\bar{b}$ + c + d	քաղաք-ի-ս
12	+	+	+	+	—	Aabc կամ A + a + b + c + $\bar{d}$	մարդ-կ-անց-ից
13	+	+	+	—	+	Aabd կամ A + a + b + $\bar{c}$ + d	քաղաք-ներ-ի-ն
14	+	+	—	+	+	Aacd կամ A + a + $\bar{b}$ + c + d	քաղաք-ներ-ից-ս
15	+	—	+	+	+	Abcd կամ A + $\bar{a}$ + b + c + d	կն-ոջ-ից-ս
16	+	+	+	+	+	Aabcd կամ A + a + b + c + d	մարդ-կ-անց-ից-ս

1) I կարգի (a) վերջամասնիկները կոչված են արտահայտելու հիմնականում թվային իմաստներ, թեև դրանց մի մասը երկրորդաբար կարող է արտահայտել նաև դասային իմաստներ։ Նկատի ունենալով I կարգի վերջամասնիկների հիմնական իմաստային արժեքը՝ դրանք կոչենք թվանիշ կամ թվակերտ. դրո վերջամասնիկի բացառման դեպքում մենք կունենանք հիմնականում հոգնանիշ կամ հոգնակերտ մասնիկներ։

2) II կարգի (b) թեքույթները գրեթե համաստատապես արտահայտում են և՛ հոլովական, և՛ դասային իմաստներ, ընդ որում իրրև անկախ թեքույթներ հանդես գալու դեպքում գերակշռում է հոլովական իմաստը, III կարգի (c) վերջավորություններին նախորդելու դեպքում՝ դասանշային իմաստը։ Նկատի ունենալով այս հանգա-

մանքը և որոշ առումով լայն մեկնաբանություն տալով դասի հասկացությանը (ներառելով ձևական և պատմական դասերը, այլև «չեզոք» դասը)՝ II կարգի թեքույթները կոչենք դասա-հոլովանիշ կամ, եթե զանց առնենք դասի լայն մեկնաբանությունը, I կարգի հոլովանիշ թեքույթներ։

3) III կարգի (c) վերջամասնիկները արտահայտում են հիմնականում հոլովական իմաստներ, թեև կարող են (ում–ի դեպքում) արտահայտել նաև դասային իմաստներ։ Նկատի ունենալով հիմնական իմաստային արժեքը՝ սրանք կոչենք հոլովանիշ կամ, ի տարբերություն I կարգի հոլովանիշ թեքույթների, II կարգի հոլովանիշ վերջամասնիկներ։

4) Վերջապես IV կարգի (d) վերջամասնիկները (ը, և, ս, դ) անմիջականացնող, իրադրությունը որոշող արժեք ունեն (առկայացուցիչներ, ակտուալիզատորներ). դրվելով անունների վրա՝ այդ վերջամասնիկները որոշում են անունների հարաբերությունը դեպի հաղորդակցողները և հաղորդակցումը, ցույց տալիս, որ խոսողը որոշում է այդ անունների նշանակած առարկաները (կամ հենց իրենք անունները) ըստ հաղորդակցողներին ծանոթ լինելու աստիճանի կամ հաղորդակցողների հետ ունեցած առնչության։ Նկատի ունենալով, որ այս բոլոր վերջամասնիկներին հատուկ է որոշելու, անմիջականացնելու իմաստը, դրանք կարելի է կոչել առկայացական հոդեր։ Սրանք երկու տիպի են՝ որոշիչ հոդեր՝ ը, և և ցուցաստացական հոդեր՝ ս, դ, վերջիններս որոշում են առարկան՝ այն հարաբերելով հաղորդակցողների հետ։ Ավելորդ չէ նշել, որ զրո «հոդը» հակադրվում է բոլոր հոդերին որպես անառկայացականության (նեղ իմաստով՝ անորոշության) արտահայտիչ[7]։

Քերականական կարգերի իդեալական արտահայտության դեպքում վերջամասնիկների յուրաքանչյուր կարգի կհամապատասխաններ քերականական իմաստների մեկ խումբ, սակայն իրականում այդպիսի համապատասխանություն չկա. 1) դասի քերականական կարգը արտահայտվում է հիմնականում II կարգի (b) թեքույթներով, բայց՝ ա) այն կարող է արտահայտվել նաև I (a) և II (b) կարգի վերջամասնիկներով. բ) II կարգի (b) վերջամասնիկների մեջ դրված ի-ն դասանշային չեզոքություն ունի. 2) հոլովական իմաստները բաշխվում են միաժամանակ և՛ II կարգի (b) թեքույթ-

---

7 Ինչպես տեսանք, զրո վերջամասնիկը բազմարժեք է՝ ըստ այն բանի, թե ո՛ր վերջամասնիկներին է հակադրվում։

ների, և՛ III կարգի (c) վերջամասնիկների վրա. 3) որոշ կարգի բերականական իմաստներ կարող են արտահայտվել նաև այլ միջոցներով. այսպես, օրինակ, հետևողական քննության դեպքում հնչերանգային փոփոխությունների արտահայտած իմաստները, որոնք իրականում հաղորդողի սուբյեկտիվ վերաբերմունքի նշանակմանն են ծառայում, պետք է լայն առումով քննվեն հոդերի հետ միասին:

Վերանալով արտահայտության պլանից և առնելով միայն քերականական իմաստները՝ կարելի է ասել հետևյալը: Բովանդակության պլանով հոլովման քերականական կարգերի քննությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հոլովման համակարգում (գոյական անվանը կամ գոյականաբար առնված անուններին ուղեկցող ձևույթների և հերթագայությունների մեջ) հանդես եկող քերականական իմաստների փոխհարաբերության, այդ իմաստների խմբերի (կարգերի), վերջին հաշվով՝ հոլովման համակարգի իմաստային կառուցվածքի քննություն: Ինչպես արդեն նշել ենք, ժամանակակից հայերենի հոլովման համակարգում առկա է քերականական իմաստների չորս խումբ (կարգ)՝ հոլովական, թվային, դասային և որոշյալային (որոշյալության): Ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում այդ խմբերը (կարգերը) միմյանց նկատմամբ: Դրանք կարելի է բնորոշել երկու տիպի հատկանիշների օգնությամբ՝ ինքնակայություն (առարկաններին ինքնին հատուկ լինելը թե չլինելը) և բնութագրականություն կամ նկարագրականություն (առարկան բնութագրելը, նկարագրելը թե չբնութագրելը, չնկարագրելը). ինքնակա արժեք ունեն դասային և թվային իմաստները, որոնք ցույց են տալիս առարկաներին որակապես և քանակապես ամենից ավելի բնորոշ (տվյալ հանրության կողմից իբրև այդպիսին դիտվող) ամենաընդհանուր հատկանիշները. անինքնակա են հոլովական և առկայացական իմաստները, որոնք նպատակ ունեն ցույց տալու առարկաների կամ հաղորդակցողների և առարկաների հնարավոր հարաբերությունները՝ վերագրվելով անվանը որպես հատկանիշներ: Բնութագրական-նկարագրական արժեք ունեն դասային և հոլովական իմաստները, որոնք բնութագրում, նկարագրում, ներկայացնում են առարկաները որևէ էական հատկանիշով կամ որևէ հնարավոր հարաբերությամբ. ոչ բնութագրական են թվային և առկայացական իմաստները, որոնք առարկանները չեն բնութագրում, չեն նկարագրում, այլ նշում են նրանց քանակը և հաղորդակցողների՝ նրանց ծանոթ լինելը ամենաընդհանուր ձևով: Քերականական իմաստների խմբերի (կարգե-

քի) փոխհարաբերությունը կարելի է ներկայացնել 4-րդ աղյուսակով.

Աղյուսակ 4

Իմաստային կարգեր	Համեմատման հատկանիշներ	
	Ինքնակատարություն	Բնութագրականություն
Դաս	+	+
Թիվ	+	—
Չոլով	—	+
Առկայացում	—	—

Աղյուսակը կարելի է ներկայացնել և համադրական ձևով, որտեղ իմաստային կարգերի փոխհարաբերություններն ավելի լավ կերևան (աղյուսակ 5).

Աղյուսակ 5

Բնութագրականություն	Ինքնակատարություն	
	Ինքնակատարություն	Անինքնակատարություն
Բնութագրականություն	Դաս	Չոլով
Ոչ-բնութագրականություն	Թիվ	Առկայացում

Առաջիկա քննության ժամանակ, ավելորդ բարդություններից և տերմինների խճողումից խուսափելու նպատակով, ըստ հնարավորին կխուսափենք ձևակ (մորֆ) և այլաձևակ (ալոմորֆ) տերմինների գործածությունից՝ վերջավորություն կամ թեքույթ անվան տակ հասկանալով և՛ առաջինները, և՛ երկրորդները: Ինչ վերաբերում է ձևույթների և այլաձևակների տարբերակմանը, ապա այն հանդես կբերվի գերազանցապես «անփոփոխականներ» և «դիրքային տարբերակներ» անունների տակ:

2. ԹՎԻ ԿԱՐԳԸ

Թվանիշ թեքույթները ծառայում են առաջին հերթին թվային իմաստների արտահայտությանը: Թվանիշ թեքույթները թվանիշ

վերջավորություններն են. հնչութափոխությունները այս դեպքում, ինչպես նշել ենք, ինքնուրույն իմաստային բեռնվածություն չունեն, այլ հավելուրդային (избыточный) միջոցներ են՝ պայմանավորված հնչյունական և պատմական որոշ պայմաններով: Վերջիններս ոչ այլ ինչ են, եթե ոչ թվանիշ հիմքերի (թվանիշ վերջավորությունների զուրկ մասերի) կազմիչներ կամ հիմքակազմ տարրեր: Դրանք առաջ են բերում «մաքուր» և «ձևավոր» հիմքերի տարբերություններ, ընդ որում թվային բուն վերջավորությունները ավելացվում են ձևավոր հիմքերին: Այսպիսով, ստացվում են մի կողմում զրո հիմքակազմ տարրով և զրո վերջավորությամբ արտահայտված, մյուս կողմում՝ որոշ հիմքակազմ տարրերով (ներառյալ և զրո հիմքակազմ տարրը) ձևավորված և վերջավորություններ ունեցող թվաձևեր. եթե վերջիններս էլ տարբերակենք ըստ կազմության ձևի, ապա կստանանք թվաձևային կազմիչների փոխհարաբերության հետևյալ պատկերը (աղյուսակ 6).

Աղյուսակ 6

Թվաձևային տիպեր	Կազմիչներ		
	Մաքուր հիմքեր	Ձևավոր հիմքերի տարրեր	Վերջավորություններ
I տիպի թվանիշ ձև	+	—	—
II տիպի թվանիշ ձև	+	—	+
III տիպի թվանիշ ձև	—	+	+

Հետևելով աստիճանական բարդացման սկզբունքին՝ քննենք նախ ձևավոր հիմքերի կազմիչները:

Թվանիշ ձևերի դեպքում առկա են ձևավոր հիմքերի բոլոր չորս տիպերը. 1) անփոփոխ տիպ, որի դեպքում ձևավոր հիմքը հավասար է մաքուր հիմքին, այսինքն՝ առկա է զրո շեշտափոխություն (—′/—′). 2) շեշտափոխված տիպ, որի դեպքում ձևավոր հիմքը մաքուր հիմքից տարբերվում է անշեշտակրությամբ, այսինքն՝ առկա է —′/— շեշտափոխություն. 3) հնչութափոխված տիպ, որի դեպքում ձևավոր հիմքը հավասար է մաքուր հիմքին՝ զումարած —′/— շեշտափոխությունը և ի′/ա, ի′/(ը). ո′ւ/(ը) հնչութափոխությունները. 4) մասնիկավոր տիպ, որի դեպքում առկա է յ կամ ն հնչույթներից որևէ մեկը. տեսականորեն այն կարող է ավելացվել անփոփոխ, շեշտափոխված կամ հնչութափոխված տիպերի վրա: Այս դեպքում ևս գործում է վերջավորությունների հաջորդման կար-

կի վերաբերյալ մեր սահմանած բանաձևի նման մի բանաձև։ Եթե մաքուր հիմքը նշանակենք A-ով, ձևավոր հիմքը՝ A_1-ով, շեշտափոխությունը՝ a-ով, հնչութափոխությունը՝ b-ով, մատնիկը՝ c-ով, ապա կարելի է սրանց փոխհարաբերությունը արտահայտել 7-րդ աղյուսակով։

Աղյուսակ 7

Ձևավոր հիմքերի տիպը	Ձևավոր հիմքերի կազմիչներ			
	Շեշտափոխություն (a)	Հնչութափոխություն (b)	Մատնիկավորում (c)	Օրինակներ
A	—	—	—	քաղաքայի'-(ը)
A+a	+	—	—	հաց-(ե'ր)
A+b	—	+	—	չկա
A+c	—	—	+	չկա
A+a+b	+	+	—	տ(ը)ն-(ե'ր)
A+a+c	+	—	+	գառն-(ե'ր)
A+b+c	—	+	+	չկա
A+a+b+c	+	+	+	ղ(ը)ռն-(ե'ր)

Աստիճանական բացառման սկզբունքով կարելի է թվանիշ հիմքերի փոխհարաբերությունը արտահայտել հետևյալ կերպ (աղյուսակ 8).

Աղյուսակ 8

Շեշտափոխություն		Անշեշտափոխություն
Հնչութափոխություն	Անհնչութափոխություն	
Մատնիկավորություն	Անմատնիկավորություն	

Այժմ փորձենք աղյուսակով արտահայտել թվանիշ հիմքերի կազմիչների ընտրության պայմանները՝ հաշվի առնելով, որ դրանք կապված են ինչպես մաքուր հիմքերի, այնպես էլ վերջավորությունների առանձնահատկությունների հետ (դիսյունկտիվ և կոնյունկտիվ, այսինքն՝ կա՛մ—կա՛մ, և՛—և՝ առնչությամբ) (աղյուսակ 9)։

Եթե այստեղ բացառենք մաքուր զրարարատիպ կազմություն-

Թվաձևային հիմքակազմիչներ	Գրանց ընտրության պայմանները	Օրինակներ
1. Չրո շեշտափոխությունը (—′/—′)	ա. Չրո կիրչավորության ձևի դեպքում	քաղա՛ք/քաղա՛ք-(ՕՕ)
	բ. Չայնավորակուրկ ը վերջավորության առաջ	գյուղայի՛/գյուղացի՛-(ը)
2. Շեշտափոխությունը (—′/—)	Չայնավորակիր վերջավորությունների առաջ	քաղաքացի՛/քաղաքացի-(ներ)
3. Շեշտափոխական հնչույթափոխությունը		
ա. ի՛/ա	կին հիմքի դեպքում	կի՛ն/կան-(ա՛յք)
բ. ի՛/(ը)	ա. Բաղաձայնահաջորդ և ունեցող միավանկ հիմքերի դեպքում (բացի վոխատուություններից)	գի՛րք/գ(ը)րք-(ե՛ր)
	բ. Վերջին փակ վանկում և ունեցող մի քանի բազմավանկ հիմքերում, որոնց դիպքում հնարավոր են և չհնչույթափոխված ձևեր	երկի՛ր/երկ(ը)ր-(ներ)
գ. ո՛ւ/(ը)	Բաղաձայնահաջորդ ու ունեցող միավանկ հիմքերի դեպքում (բացի փոխատություններից)	ջո՛ւր/ջ(ը)ր-(ե՛ր)
4. Մասնիկավորում՝ շեշտափոխությամբ հանդերձ		
ա. —/յ	-ա-ով և ո-վ վաքուր հիմքերի և ձայնավորով սկսվող վերջավորությունների հանդիպման դեպքում	Մարո՛/Մարոյ-(ե՛նք)
բ. —/ն	Ցուցակով որոշվող մի քանի միավանկ հիմքերի դեպքում, որոնք ու չունեն	գա՛ռ/գառն-(ե՛ր)
5. Մասնիկավորում՝ շեշտափոխական հնչույթափոխությամբ հանդերձ՝ ո՛ւ/(ը)+—/ն	Ցուցակով որոշվող մի քանի միավանկ հիմքերի դեպքում, որոնք ու ունեն	դո՛ւռ/դ(ը)ռն-(ե՛ր)

Նները, որոնք կարող են հանդիպել միայն գրաբարից առնված արտահայտություններում կամ արխաիկ ոճավորման որոշ փորձերում, և նկատի առնենք անկախ գործածություն ունեցող տիպերը (ներառյալ նաև արխաիկ և խոսակցական ոճերին հատուկ որոշ տիպեր), ապա կարելի է նշել թվաձևային հետևյալ 8 վերջավորու-

թյունները՝ եր, ներ, իկ, այք, ք, անք (և յանք)[8], *ենք, ոնք: Եթե հիշյալ հիմքակազմ տարրերը հավասարապես հանդիպեին բոլոր վերջավորությունների զուգորդությամբ, ապա կունենայինք թվաձևային 8×8+1=65 տիպ կամ 65 թվաձև (բոլոր հիմքակազմ տարրերի թիվը բազմապատկած բոլոր վերջավորությունների թվով և գումարած բոլոր կարգի հիմքակազմ տարրերից ու վերջավորություններից զուրկ ձևը): Սակայն իրականում և՛ հիմքակազմ տարրերը, և՛ վերջավորությունները դիրքային սահմանափակություն (պայմանավորվածություն) ունեն, և կարող են հանդիպել միայն որոշ տիպեր: Նախքան թվային իմաստ ունեցող ձևերի (թվաձևերի) բոլոր հնարավոր տիպերի դասակարգում կատարելը փորձենք պարզել վերջավորությունների գործածության (ընտրության) պայմանները (բաշխումը) 10-րդ աղյուսակով.*

Աղյուսակ 10

Վերջավորություններ	*Վերջավորությունների ընտրության պայմանները*
եր	*1. Միավանկ հիմքերի դեպքում (հանած իկ-ի և այք-ի տակ նշված հիմքերը)*
	2. Այն բարդությունների դեպքում, որոնց վերջին բաղադրիչը միավանկ է, և նրա իմաստը հակադրվում է ամբողջ բարդության իմաստին ինչպես սեռը՝ տեսակին
ներ	*Բազմավանկ հիմքերի դեպքում (հանած նախորդի նկատմամբ պայմանով որոշվող հիմքերը)*
իկ	*Մարդ հիմքի և նրանով վերջացող բարդ հիմքերի դեպքում*
այք	*Կին հիմքի և նրանով վերջացող բարդ հիմքերի դեպքում*
ք	*-ի-ով վերջացող բազմավանկ հիմքերի դեպքում*
անք	*Հատուկ անուններով արտահայտված հիմքերի դեպքում (արխայիկ և խոսակցական-բարբառային ոճերում)*
ենք	*Հատուկ անուններով արտահայտված հիմքերի դեպքում (խոսակցական ոճում)*
ոնք	*Միավանկ ազգակցական անունների (պապ, տատ), այլև առարկայական գերանունների դեպքում*

Այժմ փորձենք աղյուսակով արտահայտել թվաձևերի բոլոր հնարավոր տիպերի կազմիչները՝ վերջավորություններով տարբերվող ձևերը դիտելով որպես տիպեր, իսկ ձևավոր հիմքերի կազմիչներով տարբերվող ձևերը՝ որպես ենթատիպեր (աղյուսակ 11).

---

8 *Այստեղ և այլուր անք-ի հետ հասկանում ենք և յանք-ը, որ նույն գործածություն ունի:*

Տիպեր (ըստ վերջավորությունների)	Ենթատիպեր (ըստ հիմքակազմ տարրերի)	Օրինակներ
I եր	1. —՛/—	հա՛ց/հաց-ե՛ր
	2. ի՛/(ը)	պի՛ը/պ(ը)ր-ի՛ր
	3. ո՛ւ/(ը)	տո՛ւն/տ(ը)ն-ե՛ր
	4. —/յ	չա՛ (տառանուն)/չա-յ-ե՛ր
	5. —/ն	պա՛ռ/պառ-ն-ե՛ր
	6. ո՛ւ/(ը) , —/ն	դո՛ւռ/դ(ը)ռ-ն-ե՛ր
II ներ	1. —՛/—	քաղա՛ք/քաղաք-ներ
III իկ	1. —՛/—	մա՛րդ/մարդ-ի՛կ
IV այք	1. ի՛/—	տիկի՛ն/տիկն-ա՛յք
	2. ի՛/ա	կի՛ն/կան-ա՛յք
V ք	1. —՛/—՛	գյուղացի՛/գյուղացի՛-ք
VI անք	1. —՛/—	(վարդա՛ն)/վարդան-ա՛նք
VII ենք	1. —՛/—	(չակո՛ր)/չակոր-ե՛նք
VIII ոնք	1. —՛/—	(պա՛պ)/պապ-ո՛նք

Այսպիսով՝ ժամանակակից հայերենում հնարավոր է տասնչորս մասնիկավոր ձև։ Եթե նրանց գումարենք այն ձևը, որ արտահայտված է զրո հիմքակազմ տարրով և զրո վերջավորությամբ (հաց, ֆաղաք), ապա կստացվի ընդամենը տասնհինգ թվաձև։

Մինչև այժմ մենք քննեցինք թվանիշ վերջավորությունների և հիմքակազմ տարրերի բաշխման հարցերը։ Սակայն վերջավորությունների բաշխման հարցը չի կարելի ամբողջացնել առանց հոլովանիշ թեքույթների և որոշիչ հոդերի հետ նրանց զուգորդելիության հարցերի քննության։ Քանի որ բոլոր թվանիշ վերջավորությունները կարող են հոլովանիշ վերջավորություններ ստանալ կամ հերթագայվել, ուստի և այստեղ հարկավոր է ընտրություն կատարել դրանց միջև, որպես զուգորդելիության քննության հիմք կարող է ծառայել հիմնական ի հոլովանիշի հետ զուգորդվելու հնարավորությունը։ Սա կարելի է արտահայտել 12-րդ աղյուսակով (էջ 178)։

Վերևում մենք բացահայտեցինք թվաձևային ութ վերջավորություն՝ արտահայտված հնչույթներով ու հնչույթների հետևողական

Թվանիշ վերջավորություններ	Զուգորդելիություն ի հոլովանիշի հետ	Զուգորդելիություն ը (և) հոդի հետ (հոդառության նեղ իմաստով)
եր	+	+
ներ	+	+
իկ	+	+
այք	—	—
ք	—	—
անք	—	—
ենք	—	—
ունք	—	—

շարքերով և մեկ վերջավորության՝ արտահայտված հնչույթների բացակայությամբ (զրո վերջավորություն), ընդամենը ինը վերջավորություն։ Եթե հաշվի առնենք քննվող միավորների բաշխումը անփոփոխականեր և փոփոխականեր (դիրքային տարբերականեր) առանձնացնելու նպատակով, ապա կարելի է պարզել հետևյալը.

1) Հիշյալ բոլոր ութ վերջավորությունները դիրքային սահմանափակություն ունեն թվանշանային հակադրության առումով։ Նրանց փոխարինումը միմյանցով հոգնակիության իմաստի փոփոխություն առաջ չի բերում, և, հետևաբար, հոգնակիի արտահայտության առումով դրանք անփոփոխականեր չեն, այլ միևնույն հոգնանիշ անփոփոխակի (ձևույթի) դիրքային տարբերակները. այդ ութ վերջավորություններն էլ հակադրվում են միևնույն զրո վերջավորությանը. բոլոր ութ միավորների դիրքերի ամբողջությունը հավասար է զրո ձևույթի դիրքերի ամբողջությանը. այսպիսով, մենք ունենք երկու անփոփոխակ՝ 1) 0 (մեկ անդամով) և 2) եր/ներ/իկ/այք/ք/անք/ենք/ունք (ութ անդամով կամ փոփոխակով)։

2) Սրանցից եր-ը և ներ-ը զուգորդվում են հայերենի հիմնական հոլովիչի՝ ի-ի հետ, հոդառության սահմանափակություն չունեն և ոճականորեն չեզոք են, հետևաբար մյուսների համեմատությամբ ավելի գործուն և ընդհանրացած տիպեր են. եթե վերանանք բարդության կանոններից, կարելի է ասել, որ եր-ը հանդիպում է միավանկ և ներ-ը՝ բազմավանկ բառերի դեպքում[9]։

9 Թուս-ներ ձևը բացատրվում է խոսակցական լեզվում հանդիպող (ը)ոցս արտասանությամբ։

3) եր–ը և ներ–ը *կարող են հանդիպել նաև մյուսներին հատուկ դիրքերում, այսինքն՝ նրանց փոխարինել. համմտ.* մարդ–ն–եր–ս, կին–ն–ներ–ս, գյուղացի–ներ, վարդան–ներ, Հակոբ–ներ, պապ–եր. *այս տեսակետից կարելի է տարբերել երեք դեպք. ա)* մարդ–ն–եր–ս և կին–ներ–ս *ձևերում* եր–ի *հանդես գալը դիրքային սահմանափակություն ունի (հանդիպում է միայն* ն—ս, ն—դ, ն—ր, ն—ն *զուգամանիկների զուգորդությամբ) և պայմանավորված է ընդարձակ կոնտեքստով, այսինքն՝ ոճական արժեք ունի (հատուկ է խոսակցական ոճին). բ)* գյուղացի–ներ, ֆաղաքացի–ներ *և նման տիպի ձևերում* ներ–ի *հանդես գալը* f–ի *փոխարեն նույնպես ոճական բնույթ ունի. գրական լեզվի համար սովորականն ու ընդհանրացածը* ներ–ով *ձևերն են, իսկ* f–ն *հանդես է գալիս միայն խոսակցական ոճում. գ)* Վարդան–աճf, Հակոբ–եճf, պապ–ոճf *ձևերը՝* Վարդան–ներ, Հակոբ–ներ, պապ–եր *ձևերի կողքին կապված են իմաստային լրացուցիչ տարբերություններով հետ, որոնք կարելի է որակել որպես դասային տարբերություններ, այլև ոճական բնույթ ունեն (հանդիպում են միայն որոշ ոճերում)։ Ի՞նչ իմաստային տարբերություններ են դրանք.* աճf–ը, եճf-ը և ոճf-ը *հանդես են գալիս որպես համանուններ՝ ներառելով երկու կարգի իմաստ՝* աճf = «*կողմնակից, հետևորդ*» + (ն)եր (Վարդանճաճf = Վարդան + կողմնակիցներ, Վարդանականներ), եճf = «*ազգակից*» + (ն)եր (Հակոբեճf = Հակոբ + ազգակիցներ, «Հակոբյաններ»), ոճf = «*մերձավոր, յուրային*» + (ն)եր (պապոճf = պապ + մերձավորներ)։

Ձրո վերջավորության և հիմնական (եր/ներ/իկ/այf) *վերջավորությունների հակադրությունը նպատակ ունի առաջին հերթին արտահայտելու բովանդակության պլանի միաթվության (եզակիության) և անմիաթվության (հոգնակիության) հակադրությունը («մեկ» և «մեկից ավելի»)։ Սակայն այս հիմնական հակադրությունը հանդես է գալիս գոյական անունների միայն որոշ տիպերի դեպքում, որոնց մեջ հիմնականը հաշվական բնույթի հասարակ անուններն են՝* գիրf, ֆաղաf, մարդ, կին *և այլն։ Այլ դեպքերում այս հիմնական հակադրությունը փոփոխվում կամ լրացվում է տարբեր չափով՝ ընդհուպ մինչև լիակատար չեզոքացում։ Թվի քերականական կարգի հիմնական իմաստային հակադրության փոփոխությունը կապված է ինչպես հիմքերի և հոգնանիշ վերջավորությունների որոշ տիպերի, այնպես էլ տվյալ լեզվի պատմական որոշ առանձնահատկությունների հետ։*

Եթե գոյական անունների հիմնական տիպը համարենք եզակի ձև ընդհանուր անունները, ապա կարելի է ասել, որ արտահայտության և բովանդակության պլաններում կարող են հանդես գալ մի շարք շեղումներ։

Արտահայտության պլանում զրո վերջավորությամբ բնորոշվող բառարանային տիպերի կողքին կարող են հանդիպել նաև միայն հոգնակի ձևեր ունեցող անուններ (անեզականներ, pluralia tantum*). ի տարբերություն գրաբարի, որտեղ անեզականները մեծ թիվ էին կազմում, ժամանակակից հայերենը գրեթե իսպառ զուրկ է անեզական բառերից (ամբ, եմբ, ոմբ վերջավորություններով կազմվող ձևերի մասին արդեն խոսվել է)։*

Բովանդակության պլանում ընդհանուր անունների կողքին կարող են լինել՝ ա) նյութի անհաշվական զանգված նշանակող բառեր (նյութական անուններ՝ ջուր, ճաց, փայտ *և այլն), բ) մեկից ավելի միավորներից կամ մասերից բազկացած (հավաքական) ամբողջություն նշանակող բառեր (հավաքական անուններ,* nomina collectiva՝ *արմատական՝* խումբ, դաս *և այլն*[10]*, ածանցավոր՝* ուսանողություն, ամանեղեն *և այլն), գ) միայն մեկ առարկայի տարբերիչ անուն հանդիսացող բառեր (հատուկ անուններ՝* Գրիգոր, Երևան, Հայաստան *և այլն), դ) վերացական հասկացություններ նշանակող բառեր (վերացական անուններ,* nomina abstracta՝ սպիտակություն, գրաղվածություն, հայրենասեր *և այլն)։ Բառերի այս իմաստային տիպերը հանդես են բերում թվի քերականական կարգի դրսևորման առանձնահատկություններ. ա) նյութական անունների դեպքում զրո վերջավորության փոխարինումը եր ևեր վերջավորություններով առաջ է բերում հաշվականության հակադրություն՝ անհաշվականություն (անընդհատականություն) և հաշվականություն (ընդհատականություն). եզակի ձևն արտահայտում է անհաշվական զանգված, հոգնակիի ձևը՝ հաշվական զանգված, եզակիում նշանակվածի տեսակը (*ջրեր=*ջրի տեսակներ, տարբեր տեսակի ջրեր,* ճացեր=*հացի տեսակներ, տարբեր տեսակի հացեր,* փայտեր=*=փայտի տեսակներ, տարբեր տեսակի փայտեր և այլն). բ) հավաքական անունների դեպքում կամ հոգնակին սովորական չէ (եթե եզակիի ձևը նշում է սահմանային բազմություն՝* տիեզերք, բուսականություն *և այլն), կամ ունի սովորական թվանշային արժեք (սովորաբար արմատական, երբեմն էլ ածանցավոր հավաքական-*

10 *Սրանք սովորաբար իսկական հավաքականներ չեն համարվում։*

ների դեպքում՝ խումբ—խմբեր, բազմություն—բազմություններ և այլն), կամ նյութական անունների հոգնակի ձևերի նման նշանակում է տեսակներ (սովորաբար ածանցավոր որոշ կազմությունների դեպքում՝ ամանեղեններ և այլն). գ) հատուկ անունների հոգնակին սովորական չէ և հանդիպում է կամ համանունության դեպքում (Հակոբյաններ, Գուրգեններ), կամ տվյալ հատուկ անունն ունեցող անձի, օբյեկտի հատկությամբ օժտված անձեր, օբյեկտներ նշանակելու դեպքում (այս դեպքում հատուկ անունը ձեռք է բերում հասարակի արժեք՝ դոն-ֆիխոտներ և սանչո պանսաներ և այլն). դ) վերացական անունները սովորաբար զուրկ են լինում հոգնակիի ձևերից. սակայն ժամանակակից հայերենում հոգնակիի եր և ներ վերջավորությունները կարող են դրվել վերացական անունների վրա կամ իմաստի որոշ կոնկրետացման հետ կապված (հատկապես անդրլեզուներում, համմտ. հասկացություններ), կամ շարահյուսական որոշ պայմաններում՝ մի քանի անգամ կրկնվելը կանխելու, այլև արտահայտած հատկանշի դրսևորման տարբերությունները ընդգծելու համար:

Վերջապես, հարկավոր է նկատի առնել ընդհանուր անունների գործածության՝ թվի քերականական կարգի հետ կապված մի կարևոր առանձնահատկություն: Տվյալ ընդհանուր անունը կարող է առնվել կամ որպես համընդհանուր անուն, այսինքն՝ նշանակել տվյալ ընդհանուր հատկանշով որոշվող առարկան, առարկան ընդհանրապես, կամ որպես մասնակի և առանձին անուն, այսինքն՝ նշանակել տվյալ առարկան կամ առարկաները. առաջին դեպքում անունը կարող է դրվել և՛ եզակի, և՛ հոգնակի թվով, այսինքն՝ տեղի է ունենում եզակիության և հոգնակիության հակադրության չեզոքացում (համմտ. «Շունը հավատարիմ կենդանի է» և «Շները հավատարիմ կենդանիներ են»)[11]. երկրորդ դեպքում անունը կարող է դրվել կամ միայն հոգնակի, կամ միայն եզակի թվով՝ ըստ նշանակվող առարկայի (դենոտատի) քանակի:

Մենք տեսանք, որ հատուկ անունների դեպքում հնարավոր է բառերի երկու կարգի գործածություն՝ ըստ բովանդակության պլանի (նշանակվողի) և ըստ արտահայտության պլանի (նշանակողի կամ նշանակիչի). առաջին դեպքում նկատի է առնվում առարկան (դենոտատը), երկրորդ դեպքում՝ անունը. համմտ. «Հակոբյաններ (=Հակոբյան ազգանունը կրողներ) Հայաստանում շատ կան»: Սա-

---

11 Եզակին այս դեպքում «նշանակի ամիասին առնված», հոգնակին՝ «զատված առնված» (անընդհատականության և ընդհատականության հակադրություն):

կայն բովանդակայինի հետ միասին ձևական կիրառություն կարող են ունենալ նաև թվանիշ վերջավորությունները՝ հանդես գալով որպես լոկ շարահյուսական կապակցության արտահայտիչներ: Հնարավոր է, ինչպես կտեսնենք շարահյուսության հատվածում, այսպիսի երկու դեպք՝ ըստ համաձայնության և խնդրառության: Թվային համաձայնություն հայերենում լինում է գոյականի և բայի՝ որպես ենթակայի ու ստորոգյալի, և երկու գոյականի՝ որպես բացահայտչի ու բացահայտյալի միջև. առաջին դեպքում բայի թիվն է պայմանավորված գոյականի թվով, ուստի և գոյականի թիվը ձևական արժեք չունի. սակայն երկրորդ դեպքում էլ լիակատար ձևականացում չի լինում, որովհետև բացահայտյալը լիովին չի կորցնում իր անկախությունը. համմտ. «Հակոբը և Գրիգորը՝ մեր դպրոցի ուսուցիչները»: Թվի խնդրառական կիրառությունը հազվադեպ է կախված բայիմաստից (հոգնակի օբյեկտ պահանջող բայերի դեպքում). համմտ. «Նստոտեցին տարբեր տեղերում». այս դեպքում էլ «թվառությունը» չի ձևականացել այն չափով, ինչ չափով այդ կարելի է դիտել, օրինակ, հոլովառության դեպքում, երբ տվյալ հոլովական ձևավորումը կարող է իմաստային որևէ հիմնավորում չունենալ:

Ի մի բերելով հիմքերի իմաստային տիպերի և որոշ կարգի վերջավորությունների (աոք, եոք, ոոք) իմաստային առանձնահատկությունների մասին ասվածը՝ մենք կարող ենք տարբերել եզակի և հոգնակի ձևերի հակադրությունների հետևյալ իմաստային արժեքները.

1) *Միաթվություն և անմիաթվություն (եզակիություն և հոգնակիություն)՝ տվյալ անվամբ նշանակվող մեկ առարկա թե մեկից ավելի առարկաներ նշանակելը՝* տուն—տոոներ, fադաf—fադաfոոներ, մարդ—մարդիոկ, կին—կանաոյք *և այլն.*

2) *Միասնականություն և անմիասնականություն (անընդհատականություն և ընդհատականություն, անբաժանականություն և բաժանականություն, անհաշվականություն և հաշվականություն)՝ տվյալ անվամբ նշանակվող առարկաները կամ զանգվածը որպես մեկ ամբողջություն, թե բաժանված, տեսակավորված առնելը՝* ջուր—ջրեոր, խնձոր—խնձորնեոր *և այլն.*

3) *Լիահատկանշայնություն և անլիահատկանշայնություն (մեննահատկանշայնություն)՝ տվյալ անվամբ նշանակվող առարկան որպ սեհատկանիշների մեկ ամբողջություն (որակ). թե որպես մեկ հատկանիշի կրող (այդ թվում՝ նաև որպես տվյալ անունը կրող) առնելը՝* Գրիգոր—Գրիգորնեոր *(Գրիգորի մեկ կամ մի քանի հատ-*

կանիչներն ունեցողներ կամ **Գրիգոր** *անունը կրողներ),* **Գրիգոր—Գրիգորեան** *(մարդիկ, որոնց համար ընդհանուր է Գրիգորի հետ կապված լինելու հատկանիշը) և այլն.*

4) Վերացականություն և անվերացականություն (թանձրացականություն)՝ ովկյալ անվամբ նշանակված հասկացության՝ վերացական, թե թանձրացական գործածությամբ առնվելը (հատկապես անդրլեզվում կամ մետալեզվում)՝ **հասկացություն—հասկացություններ** *և այլն:*

Վերջին երկու զեպքում փաստորեն ասկա են հատուկ → հասարակ, մեծահատուկ → բազմահատուկ, վերացական → թանձրացական անցումները, ընդ որում հատուկ → հասարակ և վերացական → թանձրացական անցումները կարող են տեղի ունենալ հենց եզակիի ներսում. հոգնակին (իսկական հոգնակին՝ **եր, ներ, իկ, այք***) միայն ավելի է ընդգծում այդ անցումները:*

Եթե նկատի առնենք հոգնակիի ձևերը անկախ իմաստից, ապա կարելի է ասել, որ բուն վերացականների հոգնակիի ձևերը գրեթե չեն հանդիպում (դրանք անհոգնական են), մինչդեռ հատուկ անունների հոգնակիի ձևերը բավական հաճախադեպ են:

Հասկանալի է, որ այս հակադրություններից միայն առաջինն է ԲՀի քերականական կարգի համար բնորոշ, այդ պատճառով էլ մնացած երեք հակադրություններով բնորոշվող հոգնակի ունեցող բառերի համար սովորաբար ասում են, որ նրանք հոգնակի չունեն:

Այսպիսով, թե՛ եզակիի, թե՛ հոգնակիի ձևերը կարող են բազմարժեք լինել, որով և առաջանում են եզակիի և հոգնակիի ձևերի իմաստային տարբեր հակադրություններ: Այլ կերպ ասած՝ և՛ զրո վերջավորությունը, և՛ հոգնակիի վերջավորությունները բազմարժեք են.

1) Զրո վերջավորությունը կարող է՝ ա) որևէ հոգնակի վերջավորության չհակադրվել [0≠(ն)եր]՝ աճուռություն. բ) հակադրվել հոգնակիին [0=(ն)եր]՝ fաղաf. գ) փոխարինվել **ներ**-*ով (թեթևակի իմաստային տարբերությամբ) [0=(ն)եր]՝ շուռը (հավատարիմ է). առաջին զրո վերջավորությունը կարելի է կոչել անհակադրական (նրանով օժտված հիմքը՝ անհոգնական), երկրորդը՝ հակադրական, երրորդը՝ չեզոքական (հոգնարժեքային):*

2) Հոգնակիի վերջավորությունը կարող է՝ ա) եզակիի 0 վերջավորությանը չհակադրվել [(ն)եր ≠ 0]. բ) հակադրվել եզակիի 0 վերջավորությանը [(ն)եր, իկ, այf=0]. գ) հակադրվել եզակիի 0 վերջավորությանը լրացմամբ, որևէ լրացական իմաստի գումար-

մամբ [(ն)եր=0+«տեսակ», (ն)եր=0+ «նման, նույն հատկանիշը, նույն աճուցը ունեցող»]. վերջին տիպի հոգնակիի մի տեսակն են աճ, եճ, ոճ վերջավորություններով հոգնակիները. եթե մյուս հոգնակիների դեպքում լրացուցիչ իմաստը ենթադրվում է ըստ հիմքի բնույթի, ապա այս դեպքում այն մտնում է վերջավորության մեջ [աճ=«կողմնակից»+(ն)եր, եճ=«ազգակից»+(ն)եր, ոճ = «մերձավոր, յուրային»+(ն)եր]. առաջին տիպի հոգնակիի վերջավորությունը կարելի է կոչել անհակադրական (նրանով օժտված հիմքը՝ անեզական), երկրորդը՝ հակադրական, երրորդը՝ լրացական (հմմտ. աղյուսակ 13, էջ 185):

Աղյուսակից երևում է, որ՝ 1) որոշ կարգի անուններ հոգնակի ձև չունեն, մյուսներն ունեն երկու կամ նույնիսկ երեք հոգնակի ձև (հմմտ. Վարդան–եեր, Վարդան–աճ, Վարդան–եճ՝ իմաստային համապատասխան տարբերությամբ). 2) ժամանակակից հայերենում գրեթե չկան անեզական անուններ:

Անվան թվի քերականական կարգի քննությունն ավարտենք մի քանի պատմական բացատրությամբ, որ կպարզաբանի նրա գործածության յուրահատկությունները: Պատմական առումով կին —կանայք և մարդ—մարդիկ տիպերի կազմության եղանակները գալիս են ժամանակագրական տարբեր մակարդակներից: Կին բառի հոգնակիի կազմության եղանակը արտակարգ հին է. այն արխաիկ ու առանձնական բնույթ է կրել նույնիսկ համահնդեվրոպական շրջանում: Մարդ բառի հոգնակի կազմության եղանակը սահմանափակ և առանձնական բնույթի է հին հայերենի շրջանում էլ, թեև այդ բառի հոլովման տիպը այդպիսին չէ. այն ընդհանրություն ունի իկ-ով կազմությունների հոլովման տիպի հետ (հմմտ. մարդիկ—մարդկանց և ծաղիկ—ծաղկանց): Եթե տվյալ ածանցը բացի հավաքական իմաստ արտահայտելուց ունի նաև այլ կարգի իմաստներ, և հավաքական իմաստի արտահայտումը նրա համար գլխավորը չէ (հմմտ. -ություն–ը ուսանողություն, ուսուցչություն և այլ բառերի մեջ), ապա մենք գործ ունենք իսկական հավաքական բառերի հետ. այլապես տվյալ ածանցը յուրատեսակ միջին տեղ է գրավում հավաքական ածանցի և հոգնանիշ վերջավորության միջև: Այս դեպքում հող կա անցման համար: Հայտնի է, օրինակ, որ արդի գրական հայերենի և բարբառների հոգնանիշ վերջավորությունները ծագում են նախկին հավաքական ածանցներից: Կարելի է ասել նույնիսկ, որ դրանցից եր–ը և ներ–ն են միայն վերածվել իսկական հոգնակերտ վերջավորությունների, իսկ իկ–ը և այք–ը դեռ լիովին

Ներկայացուցչական նախադասությունների ճշմարտաբանական արժեքները

Ներկայացուցչական նախադասություններ	Ճշմարիտ է, եթե ներկայացվող առարկան ունի հատկություն	Ճշմարիտ է, եթե ներկայացվող առարկան չունի հատկություն (ճշմարիտ է ժխտման համար)	Ճշմարիտ է, եթե ներկայացվող առարկան ունի հատկություն (ճշմարիտ է հաստատման համար)	Ճշմարիտ է, եթե ներկայացվող առարկան չունի հատկություն (ճշմարիտ է ժխտման համար)
Ես մարդ եմ։	+		+	
Ես կին եմ։		+		+
Ես ուսանող եմ։	+		+	
Ես ուսուցիչ եմ։		+		+
Ես ծնվել եմ Երևանում։	+		+	
Ես ծնվել եմ Գյումրիում։		+		+
Ես ծնվել եմ 2000 թվականին։	+		+	
Ես ծնվել եմ 2001 թվականին։		+		+
Ես ունեմ կարմիր մեքենա։	+		+	
Ես ունեմ կանաչ մեքենա։		+		+
Ես ունեմ կապույտ մեքենա։		+		+
Ես ունեմ սև մեքենա։		+		+
Ես ունեմ սպիտակ մեքենա։		+		+
Ես ունեմ մեքենա։	+		+	
Ես չունեմ մեքենա։		+		+
Ես ունեմ հեծանիվ։	+		+	
Ես չունեմ հեծանիվ։		+		+
Ես ունեմ մեքենա և հեծանիվ։	+		+	
Ես ունեմ մեքենա կամ հեծանիվ։	+		+	
Ես չունեմ մեքենա կամ հեծանիվ։		+		+
Ես ունեմ մեքենա, բայց չունեմ հեծանիվ։	+		+	
Ես չունեմ մեքենա, եթե ունեմ հեծանիվ։		+		+
Եթե ես ունեմ մեքենա, ապա ունեմ հեծանիվ։	+		+	
Եթե ես չունեմ մեքենա, ապա չունեմ հեծանիվ։		+		+
Ես ունեմ մեքենա, եթե և միայն եթե ունեմ հեծանիվ։	+		+	
Ես չունեմ մեքենա, եթե և միայն եթե չունեմ հեծանիվ։		+		+

չեն խզել կապերը ածանցներից և պահպանում են հավաքականության որոշ երանգ։ Դեռ ավելին, մարդիկ հոգնակի ձևը կարող է ածանցվել և ստանալ իսկական հավաքականի արժեք (մարդկություն), որ մյուս հոգնանիշ մասնիկների դեպքում հնարավոր չէ։ Եմք, եմք, ոմք վերջավորությունները ևս հավաքական որոշ արժեք ունեն՝ տարբերվելով սովորական հավաքականներից հոլովման հատուկ տիպով (հմմտ. աշխատանմք—աշխատանմքի և վարդանանմք—վարդանանց). դրանք իսկական հոգնանիշեր չեն. ինչպես տեսանք, նույն բառերի անածանց հիմքերը կարող են ունենալ նաև բուն հոգնանիշ վերջավորություններով ձևեր. հմմտ. վարդաններ և վարդանանմք: Ավելորդ ենք համարում խոսել գրաբարյան f հոգնակերտի մնացուկային դործածության մասին, որ հանդիպում է միայն արխաիկ բնույթի ոճավորված լեզվում կամ ի-ով վերջացող բազմավանկ բառերի դեպքում՝ խոսակցական լեզվում (հմմտ. գյուղացիf):

3. ՀՈԼՈՎԻ ԿԱՐԳԸ

Ինչպես նշել ենք, առաջին կարգի հոլովանիշ (դասա-հոլովանիշ) վերջավորություններ ունեցող ձևերի մեջ հիմքի հասկացությունը երկարժեք է. մի դեպքում մենք գործ ունենք հոգնանիշ վերջավորություններով ձևավորված հիմքերի, մյուս դեպքում՝ զրո թվանիշ վերջավորություն ունեցող հիմքերի հետ: Եթե թվանիշ ձևերում հանդես եկող հիմքերը համեմատենք առաջին կարգի հոլովանիշ վերջավորություններ ունեցող ձևերում հանդես եկող հիմքերի հետ, ապա կարելի է նշել վերջիններիս հետևյալ տարբերությունները. 1) քանի որ բացակայում են ձայնավորազուրկ վերջավորությունները, ուստի և չկա զրո (—′/—′) շեշտափոխությամբ բնորոշվող ձևավոր հիմք. 2) բացակայում է ի′/ա հնչութափոխությունը. 3) ի′/(ը), ո′ւ(ը) հնչութափոխությունները ավելի հաճախ են հանդես գալիս բազմավանկների դեպքում (հմմտ. կամո′ւրջ—կամրջի′, թեև կա նաև կամուրջի′ ձևը, ուսուցի′չ—ուսուցչի′ և այլն), հատկապես եթե դրանք փոխառություններ կամ գրական նորակազմություններ չեն. 4) սեր, տեր, մեջ հիմքերում տեղի է ունենում ե′/ի հնչութափոխությունը. 5) կաշի հիմքը բնորոշվում է ի′/վ հնչութափոխությամբ (կաշի′—կաշվի′). 6) ու-ով վերջացող բառերի դեպքում, եթե դրանք փոխառություններ և գրական նորակազմություններ չեն, տեղի է ունենում ո′ւ/վ հնչութափոխությունը (կա-

ատո՛ւ—կատվի՛, առո՛ւ—առվի՛ և այլն). 7) Ույր հիմքը բնորոշվում է ո՛ւյ/(ը) հնչութափոխությամբ. 8) բացակայում է և տիպի մասնիկավորումը (և–ով բնորոշվող հիմքերը հանդես են գալիս որպես հատուկ տիպի հոլովման կրողներ). 9) աստված հիմքը բնորոշվում է վա՛/(ը) հերթագայությամբ:

Եթե զանց առնենք զուտ դրաբարատիպ հոլովաձևերը, որոնք կարող են հանդիպել արխաիկ բնույթի կամ ոճավորված տեքստերում և կապակցություններում, ապա կարելի է նշել ժամանակակից հայերենի համար առաջին կարգի հոլովական տասնութ թեքույթ՝ տասը վերջավորություն և ութ հերթագայություն. 1) վերջավորություններ՝ ա (աղչկ+ա), ի (fաղաf+ի, հացեր+ի), ո (սիր+ո), ու (ձի+ու), ան (գառն+ան), անց (մարդկ+անց). յան (կոռստ+յան), ոչ (ընկեր+ոչ), վա (երեկ+վա), վան (մահ+վան). 2) հերթագայություններ՝ այ/ո (հայր+այ/ո)[12], (ը)/ե [դուստ(ը)ր+(ը)/ե], ի/ու (գինի+ի/ու), ու/ա (տուն+ու/ա, արյուն+ու/ա), ու/վա (ամուն+ու/վա). f/ց (վարդանանf+f/ց, Հակոբենf+f/ց, պապոնf+f/ց), յ–f/ն–ց (կանայf +յ–f/ն–ց). այլև, ինչպես նշվել է թվի քերականական կարգի քննության կապակցությամբ, որոշ վերապահությամբ՝ ի–f/ո–ց (գյուղացիf+ի–f/ո–ց):

Բաշխական առումով և հատկապես համադարձության սկզբունքով այս բոլոր թեքույթների քննությունը ցույց է տալիս, որ դրանք հակադրվում են մի կողմից՝ զրո վերջավորությանը, մյուս կողմից՝ երկրորդ կարգի հոլովանիշ վերջավորություններին և ինքնին հոլովական նոր իմաստ հանդես չեն բերում. այլ կերպ ասած՝ դրանց փոխարինումը մեկը մյուսով հոլովական իմաստի փոփոխություն չի առաջացնում, և, հետևաբար, հոլովական իմաստի արտահայտության տեսակետից այս բոլոր տասնութ թեքույթները համարժեք են (նույնանիշ): Իսկ ինչո՞վ է բացատրվում հոլովական մեկ իմաստի համար տասնութ հոլովական թեքույթի առկայությունը: Այդ տարբերությունները բացատրվում են հիմքերի իմաստային ու ձևական (բովանդակության ու արտահայտության պլաններին) առանձնահատկություններով և դիրքային պայմանավորվածություն ունեն: Եթե ավելի հշտելու լինենք հարցը, ապա կարելի է նշել այդպիսի մի քանի հատկանիշ՝ 1) իմաստորոշություն (հիմքերի իմաստային առանձնահատկություններով պայմանավորված լինելը),

---

12 (Աճեր—)աճեր, (տեզր—) տեզր տիպի հոլովաձևերը (փոխանակ աճերոջ, տեզրի ձևերի) հատուկ են բարբառային-խոսակցական լեզվին, ուստի և տեղ չեն գտել այս ցուցակում:

2) մանիկորոշություն (որևէ ածանց կամ թվանիշ վերջավորություն ունենալու դեպքում դրանցով պայմանավորված լինելը), 3) հիմքերի վանկաքանակություն և 4) հիմքերի վերջակերպություն. առաջին հատկանիշը պատկանում է բովանդակության պլանին, երրորդը և չորրորդը՝ արտահայտության պլանին, երկրորդը՝ և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններին: Սրանց կարելի է միացնել դուստ պատմականորեն որոշվող գործածություններըՍ Ավելի մասնավորելով մեր խոսքը՝ կարելի է ասել հետևյալը. 1) ի-ն այս բոլոր թեքույթներից ամենատարածվածն է և կարող է շատերին փոխարինել դրանց հատուկ դիրքերում (համմտ. բնկեր-ոջ և բնկեր-ի, առավոտ-վա և առավոտ-ի և այլն), այսինքն՝ լեզվի արդի էտապում առկա են տատանվող զուգաձևեր. սա հիմք է տալիս մեզ թեքույթների այս ամբողջությունը կոչել ի-ի խումբ. 2) թեքույթներից մի քանիսի ընտրությունը որոշվում է մասամբ հիմքերի միայն իմաստային առանձնահատկություններով, մասամբ միայն ձևական առանձնահատկություններով, մասամբ և՛ իմաստային, և՛ ձևական առանձնահատկություններով. հանդիպում են և այնպիսի թեքույթներ, որոնք մի դեպքում գործածվում են իմաստային որոշ խմբերի, երկրորդ դեպքում՝ ձևական որոշ խմբերի, երրորդ դեպքում դուստ պատմականորեն որոշվող («ցուցակային») հիմքերի համար. 3) հոգնանիշ հիմքերի համար գործածվում են ի, անց վերջավորությունները և f/g, յ-f/յ-g, ի-f/n-g հերթագայությունները. 4) հիմքերի իմաստային տարբերություններն արտացոլելու դեպքում առաջին կարգի հոլովանիշ թեքույթները փաստորեն հանդես են գալիս որպես դասանիշեր[13]. եթե սրանցով որոշվող տարբերությունները կոչենք իմաստային դասեր, ապա նույն հիմունքով կարելի է տարբերել ձևական և ձևա-իմաստային դասեր. 5) ինչպես թվածևերի, այնպես էլ առաջին կարգի թեքույթներ ունեցող (այլև մյուս) հոլովաձևերի դեպքում հնարավոր է և՛ հիմքերի, և՛ թեքույթների ձևական-շարահյուսական գործածություն. վերջինս հանդես է գալիս համաձայնության և խնդրառության դեպքում, երբ, ինչպես նշվել է, առարկայական իմաստը առկա է միջնորդված կերպով (համաձայնության դեպքում) կամ պատմականորեն (խնդրառության դեպքում):

Եթե այժմ մի կողմ թողնելով ձևական-շարահյուսական կի-

---

13 Դասային որոշ տարբերություններ, ինչպես ասվանք, արտահայտվում են նաև թվանիշ վերջավորություններով:

բառութիւնները և հոլովական թեքութիւնների գործածութեան տատանումները՝ փորձենք ի մի բերել և կոնկրետացնել դասա-հոլովանիշ թեքութիւնների ընտրութեան պայմանների վերաբերեալ ասվածները, ապա կստացվի 14-րդ աղյուսակը.

Աղյուսակ 14

Թեքութիւններ (վերջավորութիւններ և հերթագայութիւններ)	Դրանց գործածութեան պայմանները
ա	-իկ փոքրացուցիչ-փաղաքշական ածանցով իգականի անունների դեպքում
ի	1. Մնացած թեքութիւնների գործածութեան պայմաններով չսահմանափակված հիմքերի դեպքում
	2. Մասամբ նաև այլ թեքութիւններին հատուկ դիրքերում
ո	**Սեր, սուպ, նուր**, ածանված հիմքերի դեպքում
ու	1. -ի-ով վերջացող միավանկ հիմքերի դեպքում
	2. -ել-ով, -ալ-ով վերջացող անորոշ դերբայների դեպքում
	3. Յուցակով որոշվող [դրաբարյան -ու, -ոյ (>ու) հոլովումներին պատկանող] մի քանի հիմքերի դեպքում
ան	1. Տարվա եղանակ նշանակող և -ուն-ով վերջացող **գարուն, աշուն** բառերի դեպքում
	2. -ում-ով վերջացող բայանունների դեպքում
	3. Յուցակով որոշվող [գրաբարում ն-ով (>գրա) վերջացող և հոգնակիի կազմությունում ժամանակ այդ ն-ն որպես հիմքի տարր պահպանած] մի շարք միավանկ բառերի դեպքում
անց	Մարդիկ հոգնակի հիմքի դեպքում
յան	-ուստ-ով, մասամբ և -ուդ-ով վերջացող բայանունների դեպքում
ոջ	-այր-ով չվերջացող և իգական սեռի ապգակից նշանակող հիմքերի, այլև **տեր, ընկեր** հիմքերի դեպքում
վա	ժամանակացույց հիմքերի դեպքում
վան	**Մահ** հիմքի դեպքում
այ/ո	-այր-ով վերջացող ապգակցանիշ հիմքերի դեպքում
(ը)/ե	-(ը)ր-ով վերջացող անձնանիշ հիմքերի դեպքում
ի/ու	-ի-ով վերջացող բազմավանկ հիմքերի դեպքում
ու/ա	1. -ություն-ով վերջացող բայանունների դեպքում
	2. -ուն-ով և -յուն-ով վերջացող մի քանի բառերի դեպքում, **եթե -ուն-ը և -յուն-ը** ածանցներ չեն (**չուն, տուն, սյուն, ձյուն, աւյուն**)
ու/ա	-ուն-ով վերջացող անուն հիմքի դեպքում
ք/ց	-f-ով վերջացող հոգնանիշ հիմքերի դեպքում
յ-ք/ն-ց	-յf-ով վերջացող հոգնանիշ հիմքերի դեպքում
ի-ք/ո-ց	-իf-ով վերջացող հոգնանիշ հիմքերի դեպքում

Նթե աղյուսակով արտահայտենք հիշյալ հոլովանիշ թևքույթների գործածության պայմանները՝ ձևական, իմաստային և պատմական[14], *ապա կստացվի հետևյալ պատկերը (աղյուսակ 15).*

Աղյուսակ 15

Թևքույթներ	Դրանց գործածության պայմանները		
	ձևական	իմաստային	պատմական
ա	+	+	—
ի	—	—	—
ո	—	—	+
ու (ձի)ու	+	—	—
ու (տալ)ու	+	+	—
ու (մարդ)ու	—	—	+
ան (գարն)ան	+	+	—
ան (խոստ)ան	+	+	—
ան (մկ)ան	—	—	+
անց	+	+	—
յան	+	+	—
ոջ	—	+	—
վա	—	+	—
վան	—	—	+
այ/ո	+	+	—
(ը)/և	+	+	—
ի՛ու	+	—	—
ու/ա (մանկություն + ու/ա	+	+	—
ու/ա (ոսկի + ու/ա	+	—	—
ու/ա (տուն) + ու/ա	+	—	—
ու/վա	—	+	—
ք/ց	+	+	—
յ-ք/ն-ց	+	+	—
ի-ք/ո-ց	+	+	—

14 *Պատմական ասելով հասկանում ենք հոլովական վերչավորությունների համար որպես հիմք (հզակի կամ հոգնակի) ծառայող այն սկզբնաձևերի առաջացրած պայմանները, որոնք իմաստային կամ ձևական որևէ հատկանիշով չեն բնորոշվում։*

Աղյուսակից երևում է, որ քիչ են թեքույթների՝ «զուտ» ձևական, «զուտ» իմաստային և «զուտ» պատմական պայմաններով որոշվող գործածության դեպքերը. 1) «զուտ» ձևական պայմաններով է որոշվում միայն ի/ու հերթագայության, այլև ու վերջավորության և ու/ա հերթագայության որոշ ենթատիպերի գործածությունը. 2) «զուտ» իմաստային պայմաններով է որոշվում միայն ոջ, վա վերջավորությունների գործածությունը. 3) «զուտ» պատմական պայմաններով է որոշվում միայն ո, վան վերջավորությունների, այլև ու, ան վերջավորությունների որոշ ենթատիպերի գործածությունը. 4) ի վերջավորության գործածությունը չունի ոչ ձևական, ոչ իմաստային, ոչ էլ պատմական (այլև ոճական) սահմանափակություն. 5) մնացած թեքույթների գործածությունը որոշվում է թե՛ ձևական և թե՛ իմաստային գործոններով (տերազանցապես հիմքերի վերջին ձևույթներով):

Ի տարբերություն թվանիշ (և, ինչպես կտեսնենք, երկրորդ կարգի հոլովանիշ) վերջավորությունների, առաջին կարգի հոլովանիշ թեքույթները կարող են դրվել բոլոր կարգի հիմքերի վրա, այսինքն՝ ժամանակակից հայերենում բացակայում է անհոլով անունների կարգը:

Առաջին կարգի հոլովանիշ թեքույթների ձևաբանական (բառի սահմաններում) զուգորդելիության քննությունը ամբողջացնելու համար հարկավոր է մի քանի խոսք ասել հաջորդ միավորների հետ նրանցով ձևավորված հիմքերի զուգորդելիության պայմանների մասին: Քանի որ երկրորդ կարգի հոլովանիշ թեքույթների (վերջավորությունների) հետ նրանց զուգորդելիության հարցը քիչ հետո մանրամասնորեն քննարկվելու է երկրորդ կարգի հոլովանիշներին նախորդող հիմքերի կազմության հետ կապված, ուստի այստեղ կբավարարվենք որոշիչ հոդի հետ զուգորդվելու պայմանների քննությամբ: Դրանք կարող են արտահայտվել 16-րդ աղյուսակով (էջ 191):

Այսպիսով, հոդառության սահմանափակություն ունեն միայն որոշ կարգի հոգնակի ձևեր, որոնց հիմքային («ուղիղ») կամ անհոլովանիշ ձևերը նույնպես չեն զուգորդվում որոշիչ հոդի հետ: Նշանակում է՝ հոդառությունը և անհոդառությունը առաջին կարգի հոլովանիշ թեքույթներով ձևավորված հիմքերի համար ինքնուրույն ձևաբանական որևէ հատկանիշ չեն ավելացնում:

Եթե այժմ փորձենք պարզել զրո թեքույթի և առաջին կարգի հոլովանիշ թեքույթների հակադրության իմաստային արժեքը (բո-

Առաջին կարգի թեքություններով ձևավորված հիմքեր	Որոշիչ վերջավորությունների (որոշիչ հոդերի) հետ երանց զուգորդվելու հնարավորությունը
աղջկա	+
քաղաքի	+
սիրո (սիրու-)	+
մարդու	+
մթան	+
մարդկանց	—
կրակոտյան	+
քրոջ	+
օրվա	+
մահվան	+
հոր	+
գառներ	+ (?)
գինու	+
տան	+
անվան	+
հակոբենց	+
կանանց	—
գյուղացոց	—

վանդակության պլանում առաջ բերած հակադրությունը), ապա կարելի է ասել, որ զրո վերջավորությամբ բնորոշվում է իմաստի բացարձակությունը, անսահմանափակությունը կամ իմաստային լիածավալությունը (բառի նշած օբյեկտը առնվում է իր ողջ ծավալով, առանց իմաստային սահմանափակման), առաջին կարգի հոլովական թեքություններով՝ իմաստի սահմանափակությունը կամ իմաստային անլիածավալությունը (բառի նշած օբյեկտը առնվում է մասնակի առնչությամբ, իմաստային որոշ սահմանափակումներով)։

Երկրորդ կարգի հոլովանիշ թեքությունները, ի տարբերություն առաջին կարգի հոլովանիշ թեքությունների, ներկայացված են միայն վերջավորություններով. այստեղ, ինչպես թվանիշ թեքությունների դեպքում, հերթագայությունները ինքնուրույն իմաստային

բեռնվածություն չունեն: Երկրորդ կարգի հոլովանիշ վերջավորություններին նախորդող հիմքերը երկբնույթ են. որպես այդպիսի հիմքեր կարող են հանդես գալ և՛ առաջին կարգի հոլովանիշերով չձևավորված, և՛ դրանցով ձևավորված հիմքերը: Առաջին կարգի հոլովանիշերով չձևավորված հիմքերը չունեն որևէ այնպիսի առանձնահատկություն, որ նշված չլինի թվանիշ և առաջին կարգի հոլովանիշ վերջավորություններին նախորդող հիմքերի կազմության քննության կապակցությամբ: Նշելի է միայն, որ այստեղ մենք գործ ունենք այդ երկու տիպի հիմքերի կազմության առանձնահատկությունների յուրատեսակ զուգորդման հետ. 1) ի տարբերություն թվածևային հիմքերի՝ բացակայում է ի՛/ա հնչութափոխությունը. 2) ի տարբերություն առաջին կարգի հոլովանիշերին նախորդող հիմքերի՝ առկա է ե–ով մասնիկավորումը, և բազմավանկ բառերի վերջին փակ վանկի ի–ն ով–ից, ում–ից առաջ կարող է ընկնել (բացառությամբ նոր փոխառությունների և գրական նորակազմությունների): Ավելորդ ենք համարում խոսել այն հիմքերի մասին, որոնց կազմության պայմանները նույնն են և՛ առաջին, և՛ երկրորդ կարգի հոլովանիշերի դեպքում:

Ինչ վերաբերում է առաջին կարգի հոլովանիշերով ձևավորված հիմքերին, ապա նշելի է այսպիսի հիմքերի երեք առանձնահատկություն. 1) ա–ով վերջացողների դեպքում ավելանում է ն հիմքակազմ տարրը (աղչկա–ն–. օրվա–ն–). 2) ո–վ վերջացող սիրո, աստծո հիմքի դեպքում տեղի է ունենում ո/ու հնչութափոխություն. այսպիսով, տվյալ դիրքը հանդես է գալիս առաջին կարգի վերջավորությունների համար որպես թույլ դիրք, որտեղ առաջին կարգի ա և ան, վա և վան. ո և ու հոլովակազմիչների հակադրությունը չեզոքանում է. 3) բ վերջավորության մոտ ն–ն առնմանությամբ փոխվում է մ–ի:

Հիմքերի տիպերի և երկրորդ կարգի հոլովանիշ վերջավորությունների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 17-րդ աղյուսակով (էջ 194):

Աղյուսակի քննությունից կարելի է անել հետևյալ եզրակացությունները. 1) հիմնական հոլովանիշերն են իցը, ովը և ումը, իսկ ցն և բն հանդես են գալիս որպես առաջին երկուսի դիրքային տարբերակները՝ հանդիպելով սահմանափակ դիրքերում (ուից և ենից հետո). այսպիսով, առկա է հոլովական վերջավորությունների երեք խումբ՝ իցի (երկու անդամով), ովի (երկու անդամով) և ումի (մեկ անդամով). 2) ումի գործածությունը իցի և ովի հա-

Հիմքերի տիպեր		Երկրորդ կարգի հոլովանիշ վերջավորություններ				
անհոլովանիշ հիմքեր	առաջին կարգի հոլովանիշերով ձևավորված հիմքեր	ից	ց	ով	ը	ուս
1. աղջիկ	—	—	—	—	—	—
—	աղջկան	+	—	+	—	—
2. քաղաք	—	+	—	+	—	+
—	քաղաքի	—	—	—	—	—
3. սեր	—	—	—	+	—	—
—	սիրոյ, ու	—	+	—	—	—
սուգ	—	—	—	—	—	+
—	սգո	—	—	—	—	—
4. մարդ	—	—	—	+	—	—
—	մարդու	—	+	—	—	—
5. զարուն	—	—	—	—	—	—
—	գարնան	+	—	+	—	—
խոսում	—	+	—	+	—	—
—	խոսումն	—	—	—	+	—
եզ	—	+	—	+	—	—
—	եզան	—	—	—	—	—
մուք (մկն-)	—	+	—	+	—	+
—	մկան	—	—	—	—	—
6. մարդիկ	—	—	—	—	—	—
—	մարդկանց	+	—	+	—	—
7. կորուստ	—	+	—	+	—	+(?)
—	կորստյան	—	—	—	+	—
8. քուլր	—	—	—	—	—	—
—	քրոջ	+	—	+	—	—
9. օր	—	+	—	—	—	+
—	օրվա-ն	+	—	—	—	—
10. մահ	—	+	—	+	—	—
—	մահվան	+	—	—	—	—
11. հայր	—	—	—	—	—	—
—	հոր	+	—	+	—	—
12. դուստր	—	+	—	+	—	—
—	դստեր	—	—	—	—	—
13. գինի	—	—	—	+	—	+
—	գինու					
14. մանկություն	—	—	+	—	—	—
—	մանկության	+	—	+	—	—
15. անուն	—	+	—	+	—	—
—	անվան					
16. հակոբենք	—	—	—	—	—	—
—	հակոբենց	—	—	—	—	—
վարպանանք	—	+	—	—	—	—
—	վարպանանց	—	—	—	—	—
17. կանայք	—	—	—	—	—	—
—	կանանց	—	—	+	—	—
18. գյուղացիք	—	—	—	—	—	—
—	գյուղացոց	—	—	—	—	—

մեմատությամբ ավելի սահմանափակ է. ում-ը չի հանդիպում անձնանիշ բառերի և վերացական անունների, այլև մի շարք այլ բառերի դեպքում. մեր կողմից այն երկրորդ կարգի հոլովանիշների մեջ դասելը կատարված է տեսականորեն հնարավոր այնպիսի ձևերի հիման վրա, ինչպիսիք են **fրոջում** (ոչ **fայր**-ում), **կանանցում** (ոչ **կնում**) և այլն. 3) շատ հիմքեր չունեն հինգ հոլովաձև, այլ միայն չորս, երեք կամ երկու. 4) մի շարք դեպքերում առկա են տատանվող զուգաձևեր, որոնց գոյությունը որոշվում է ձևական, իմաստային և պատմական գործոններով. լայն առումով պատմական ասելով հասկանում ենք ավանդաբար հաստատված և համաբանությամբ ու միաձևականացման միտումով պայմանավորված լեզվագործածությունը. ընդհանրապես այս երեք գործոնները կարող են առաջացնել հիմքերի ամենաբազմազան բաշխումներ: Գործոնների փոխազդեցությունը կարող է հանգեցնել հետևյալ արդյունքներին. ա) որքան ավելի են համընկնում միտումները, այնքան ավելի է մեծանում հիմքերի բաշխման որոշակիությունը և դյուրանում հոլովման տիպի որոշումը. բ) չհամընկնելու կամ խաչաձևվելու դեպքում գործում են այսպես կոչված խաչաձևության դոմինանտության և խաչաձևման զուգաձևության օրենքները, ինչպես դրանք տրված են մեր «Գրաբարի հոլովման սիստեմը և նրա ծագումը» գրքում. այսպես, **ընկերի** և **ընկերոջ**, **տարու** և **տարվա** զուգաձևերի գոյությունը որոշվում է երկրորդ օրենքով, **տարու** և **տարվա** զուգաձևերի մեջ երկրորդ ձևի ավելի սովորական լինելը՝ առաջին օրենքով. 5) հնարավոր են այնպիսի բառեր, որոնց դեպքում վերջավորությունները դրվում են մասամբ առաջին կարգի հոլովանիշ վերջավորություններով ձևավորված, մասամբ չձևավորված հիմքերի վրա:

Երկրորդ կարգի թեքույթներով (վերջավորություններով) ձևավորված հիմքերը որոշիչ հոդ չեն ստանում, այսինքն՝ տվյալ դիրքում տեղի է ունենում որոշյալության կարգի արտահայտած որոշյալ—անորոշ հակադրության չեզոքացում: Որոշիչ հոդ ունեցող ձևեր կարող են հանդիպել միայն խոսակցական ոճի արտահայտություններում:

Այսպիսով, հայերենում առկա է հոլովական թեքույթների 5 խումբ՝ 1) 0-ի խումբ՝ 1 անդամով, 2) ի-ի խումբ՝ 18 անդամով, 3) ից-ի խումբ՝ 2 անդամով, 4) ով-ի խումբ՝ 2 անդամով և 5) ում-ի խումբ՝ 1 անդամով. ստացվում է ընդամենը 24 թեքույթ: Այս թեքույթների հակադրությունների պատկերը կարելի է արտահայտել հետևյալ կերպ (աղյուսակ 18, էջ 196).

Հոլովական փոփոխականները (դիրքային տարբերակները)	Հոլովական ածփոփոխականներ				
	1	2	3	4	5
1	0	ա	ից	ով	—
2	0	է	ից	ով	ում/—
3	0	ո	ից/ց	ով	ում
4	0	ու	ց	ով	ում/—
5	0	ան	ից	ով/ք	ում/—
6	0	անց	ից	ով	—
7	0	յան	ից	ով/ք	ում
8	0	ոջ	ից	ով	—
9	0	վա	ից	ով	ում
10	0	վան	ից	ով/ք	ում(?)
11	0	այ/ո	ից	ով	—
12	0	(ը)/ե	իե	ով	—
13	0	է/ու	ց	ով	ում/—
14	0	ու/ա	ից	ով	ում/—
15	0	ու/վա	ից	ով	ում(?)
16	0	ք/ց	ից/—	ով/—	—
17	0	յ-ք/ն-ց	ից	ով	—
18	0	է-ք/ո-ց	—	—	—

Վերևում մենք պարզեցինք զրո վերջավորության և առաջին կարգի թեքույթների իմաստային արժեքը. նշվեց, որ զրո վերջավորությունը բնորոշում է բառի իմաստային անսահմանափակությունը (բացարձակությունը, լիածավալությունը), առաջին կարգի թեքույթները՝ սահմանափակությունը, անլիածավալությունը: Այս տեսակետից զրո վերջավորությունը հակադրվում է նաև մյուս թեքույթնե-

րին, որոնք նույնպես բառի իմաստային սահմանափակություն են ցույց տալիս։ Այս դեպքում հարկավոր է պարզել հոլովական թեքույթների չորս խմբերի իմաստային փոխհարաբերությունը։ Կարելի է ասել, որ հակադրական իմաստով բնորոշվում են առաջին հերթին ի–ի և ից–ի խմբերը, որոնցից առաջինը արտահայտում է հատկացականություն կամ, եթե ավելի որոշակի դարձնենք նրա հակադրությունը ից–ին, հանգում (հանգակետայնություն), երկրորդը՝ անջատում (մեկնակետայնություն)։ Այս դեպքում ով–ի խումբը կարտահայտի և՛ անջատում, և՛ հանգում, այսինքն՝ ուղեկցում կամ մասնակցություն սկզբից մինչև վերջ, ում–ի խումբը՝ ո՛չ անջատում, ո՛չ հանգում, այլ ներկայություն, պարունակում։ Այսպիսով, հայերենի հոլովական իմաստները կարելի է արտահայտել երեք հատկանիշով՝ անսահմանափակություն, անջատում, հանգում (հատկացում) (աղյուսակ 19)[15].

Աղյուսակ 19

Հատկանիշներ		Հոլովական խմբեր				
		0–ի խումբ	ի–ի խումբ	ից–ի խումբ	ով–ի խումբ	ում–ի խումբ
Անսահմանափակություն (a)		+	—	—	—	—
Սահմանափակություն	Անջատում (b)	—	—	+	+	—
	Հանգում (հատկացում) (c)	—	+	—	+	—

Եթե այժմ ընդունենք հոլովաձևերի (տվյալ թեքույթներով բնորոշվող բառաձևերի) ավանդական անվանումները՝ կրճատ նշանակելով դրանք լատինական համարժեքների առաջին տառերով՝ ուղղական (N), տրական (D), բացառական (A), գործիական (I),

15 *Այս դեպքում չենք կիրառում ոչ է. ելմսլևի նշանակությունները, որոնք ընդհանրական բնույթ ունեն, և որոնց դեպքում խառնվում են ձևաբանական ու շարահյուսական չափանիշները (համմ. սուբյեկտ-օբյեկտայնություն, կոնտակտ և ուղղություն), ոչ էլ Ռ. Յակոբսոնի՝ հատկանիշների անվանումները, որոնք հատակ չեն տարբերակում բովանդակության ու արտահայտության պլանները և երբեմն երկրորդականից են դնում դեպի գլխավորը (համմ. ծավալայնություն, եզրայնություն, ուղղություն)։*

ներգոյական (L), տվյալ թեքությամբ բնորոշվող հիմքերը նշանակենք T-ով (thema բառի սկզբնատառը), իսկ հատկանիշները՝ a, b, c-ով, ապա բովանդակության պլանի համար կստացվեն հետևյալ բանաձևերը.

$$N = Ta$$
$$D = Tc$$
$$A = Tb$$
$$I = T(c \wedge b)$$
$$L = T(\bar{c} \wedge \bar{b})$$

Կառուցվածքային տեսակետից այդ հարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Սակայն հայտնի է, որ արդի հայ քերականները տարբերում են յոթ հոլով (նաև հայցական և սեռական), իսկ Մ. Աբեղյանը ձևաբանության մեջ նշելով հինգ հոլովական ձև և, հետևաբար, հինգ հոլով, շարահյուսության մեջ տալիս է հոլովական ութ իմաստ, այսինքն՝ նկատի է առնում հնդեվրոպական բոլոր ութ հոլովների արտահայտած իմաստները (ներառյալ և կոչականը)։ Ինչպիսի՞ն է հիշյալ հինգ հոլովների և այսպես կոչված «լրացուցիչ հոլովների» փոխհարաբերությունը։ Այդ «հոլովների» առանձնացման համար հիմք են ծառայում մասամբ ավանդույթը, մասամբ էլ այդ հոլովների շարահյուսական կիրառության առանձնահատկությունները։ Այլ կերպ ասած, եթե մի կողմ թողնենք ավանդույթը, հիշյալ հոլովներն առանձնացվում են շարահյուսական զուգորդելիության պայմանների տարբերության հիմնան վրա, որոնց կարող են միանալ և ձևաբանական զուգորդելիության որոշ առանձնահատկություններ, ընդ որում վերջիններս պայմանավորված են առաջիններով (շարահյու-

սական զուգորդելիությամբ) և ոչ թե ընդհակառակն, հանդես են գալիս շարահյուսական զուգորդելիության տարբերությունները լրացնողի դերում. այդ «լրացուցիչ» հոլովները ոչ այլ ինչ են եթե ոչ միևնույն ձևաբանական անփոփոխակների (ինվարիանտների) շարահյուսական տարբերակները (փոփոխակները): Ճշտենք այս միտքը:

Ուղղականը, որ, ինչպես տեսանք, բնորոշվում է ձևական և իմաստային որոշակի հատկանիշներով, շարահյուսական մակարդակում կարող է ունենալ տարբեր շրջապատներ և ըստ այդմ բնորոշվել ձևաբանական ու շարահյուսական ձևավորման որոշ առանձնահատկություններով. կարևոր է նշել առաջին հերթին շարահյուսական-իմաստային երկու կիրառություն՝ նախադասական և արտանախադասական. նախադասական կիրառության երկու տեսակներն էլ նկատի առնելով՝ ընդհանրապես կարելի է նշել երեք հիմնական կիրառություն. 1 ա) նախադասության անկախ անդամի (ենթակայի, ստորոգելիի) նշանակում (համմտ. «Հակոբը եկավ», «Սա մարդ է»), բ) նախադասության կախյալ (դիմավոր բայով արտահայտված ստորոգյալից կախված) անդամի (ուղիղ խնդրի, տեղի կամ ժամանակի պարագայի) նշանակում («Մարդ տեսա», «Գնացի տուն», «Գիշերը նա եկավ»). 2) նախադասության, որպես հաղորդման ակտի, ընկալողի (կոչականի) նշանակում («Հակո՛բ, ե՛կ»). սրանցից առաջինը հայտնի է որպես բուն «ուղղական», երկրորդը՝ որպես «հայցական», երրորդը՝ որպես «կոչական»: Ուղղականի այս երեք հիմնական կիրառություններից առաջին երկուսը ձևական որևէ տարբերություն չունեն. նշելի է միայն, որ կախյալ դիրքում հանդես եկող ուղիղ խնդրի ուղղականը հատուկ է միայն իրերի (ոչ անձերի) անուններին և երբեմն անորոշ առնված անձերի անուններին. որոշյալ անձերի անունները, երբեմն էլ անորոշ անձերի անունները (բնականաբար նաև անձնավորված իրերի անունները) ուղիղ խնդրի պաշտոնում հանդես են գալիս տրականով. այսպիսով, շարահյուսական մակարդակում ևս հանդես է գալիս անձի և ոչ-անձի (իրի) քերականական դասի տարբերությունը[16]: «Ուղղականի» և «կոչա-

16 Այս տարբերությունն արտահայտվում է խոսքի մեջ նաև հաղորդակցման կոնկրետ ակտի (հարց ու պատասխանի) ժամանակ, երբ տարբերվում են անձը և ոչ-անձը ո՞վ-ով և ի՞նչ-ով (տարբերությունը պահպանվում է դրանց՝ որպես հարաբերական դերանուններ գործածվելիս), այլև կրավորական դարձվածներում, որտեղ իրական ենթական (գործողը) անձի դեպքում դրվում է միայն բացառականով և կողմից կապով, իրի դեպքում՝ բացառականով և, իրական ենթակայի լայն

կանի» տարբերությունը ձևականորեն արտահայտվում է նրանով, որ ա) «կոչականը» երբեք որոշիչ հոդ չի ստանում (մինչդեռ ուղղականը կարող է ստանալ կամ չստանալ), բ) միշտ շեշտված է (մինչդեռ «ուղղականը» կարող է շեշտված լինել կամ չլինել) և գ) միշտ անջատվում է հաջորդ (և նախորդ) բառից որոշակի դադարով (կցութային տարբերություն) (մինչդեռ «ուղղականից» հետո կամ առաջ դադարը կարող է զգալի չլինել)։

Տրականը ևս առաջին հերթին ունի շարահյուսական երկու կիրառություն, որոնցից երկրորդի երկու տեսակներն էլ նկատի առնելով կարելի է նշել երեք հիմնական կիրառություն. 1) այն կարող է հանդես գալ որպես մի այլ գոյականից կամ բայի ոչ դիմավոր ձևից կախված անդամի (հատկացուցչի և կողմնակի ենթակայի) նշանակիչ («Հակոբի նամակը», «Հակոբի գրած նամակը», «Հակոբի նստելուն պես»). 2) այն կարող է հանդես գալ որպես դիմավոր բայից կախված անդամի (խնդրի կամ պարագայի) նշանակիչ, ընդ որում, ինչպես նշվեց, հնարավոր է երկու դեպք. ա) բոլոր բայերի դեպքում անուղղակի խնդրի և պարագաների նշանակում («Գիրքը տվեցի Հակոբին», «Մոտեցա Հակոբին», «Գլխարկը դրեցի գլխին»), բ) միայն անցողական բայերի դեպքում ուղիղ խնդրի նշանակում («Տեսա Հակոբին»). այս դեպքում, ինչպես նշել ենք, հանդես են գալիս միայն անձ նշանակող որոշյալ, երբեմն անորոշ անունները։ Առաջին կիրառությունը հայտնի է որպես «սեռական», երկրորդը՝ որպես բուն «տրական», երրորդը՝ որպես «հայցական»։ Այսպիսով, ուղղականի երկրորդ (նախադասության կախյալ անդամի նշանակումը) և տրականի երրորդ (ուղիղ խնդրի նշանակումը) կիրառությունները արդի քերականները միավորում են մեկ «հայցական» անվան տակ՝ տարբերելով «ուղղականաձև» և «տրականաձև» տեսակներ։ Տրականի երեք կիրառություններից առաջինը ձևականորեն տարբերվում է մյուս երկուսից նրանով, որ միշտ անհոդ է (մինչդեռ մյուս երկուսը կարող են որոշիչ հոդ ստանալ կամ չստանալ)։ Վերջին երկուսի տարբերությունը, ինչպես նշեցինք, հանդես է գալիս միայն ուղիղ խնդրի դեպքում և փաստորեն անձի ու ոչ անձի (իրի) քերականական (շարահյուսական և, ինչպես տեսել ենք ներգոյականի քննությունից, ձևաբանական) կարգի արտահայտություն է և ոչ հոլովի։

ըմբռնման դեպքում, գործիականով (համմտ. «Ծառերը ծածկվում են տերևներով», «Ծառերը սատանվում են քամուց», «Նամակ գրվեց Հակոբի կողմից». «Գրիգորն ազանվեց Հակոբից» կամ «Հակոբի կողմից»)։

Եթե լիովին վերանանք արտահայտության պլանից և խնդրո առարկա դիրքային տարբերակները կամ փոփոխակները դնենք անփոփոխակների հետ մեկ մակարդակի վրա, ապա կարելի է դրանք բնութագրել մի քանի հատկանիշով. «բացարձակություն» հատկանիշն այս դեպքում կարելի է փոխարինել «լիածավալություն» հատկանիշով, «անջատում» կամ «մեկնակետայնություն» ու «հանգում» կամ «ուղղվածություն» հատկանիշները առնել ընդհանուր ձևով, անկախ սահմանափակությունից, և մտցնել կոչականն ու սեռականը բնութագրող (հայերենի համար ոչ էական) հատկանիշներ՝ «արտահաղորդայնություն» կամ «արտանախադասականություն» և «անդիմազուգորդելիություն» (դիմավոր բայի հետ չզուգորդվելը)։ Կստացվի 20-րդ աղյուսակը.

Աղյուսակ 20

Տարբերիչ հատկանիշներ	Հոլովական միավորներ (անփոփոխակներ և փոփոխակներ)							
	Ուղղական	Տրական	Կոչական	Սեռական	Տրական	Բացառական	Գործիական	Ներգոյական
Լիածավալություն	+	+	-	—	—	—	+	—
Մեկնակետայնություն	+	—	—	—	—	+	+	—
Հանդակետայնություն	—	+	-	—	+	—	+	—
Արտահաղորդայնություն	—	—	+	—	—	—	—	—
Անդիմազուգորդելիություն	—	—	—	+	—	—	—	—

Վերևում ասվածից երևում է, որ մենք ձևաբանական մակարդակում ունենք հինգ հոլով (անփոփոխակ)՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական պայմանական անվանումներով (ավելի ճիշտ կլիներ դրանք կոչել բացարձակ, հանգական կամ հատկացական, անջատական կամ բացառական, ուղեկցական և ներգոյական)։ Սրանցից առաջին երկուսը ըստ ձևաբանական և շարահյուսական շրջապատների տարբերության հանդես են գալիս հինգ դիրքային տարբերակների ձևով՝ «ուղղական», «կոչական», «հայցական», «սեռական», «տրական», ընդ որում «ուղղականն»

ու «կոչականը» ուղղականի, «սեռականն» ու «տրականը» տրականի ձևաբանա-շարահյուսական դիրքային տարբերակներն են, իսկ «հայցականը» բաշխվում է այդ երկուսի վրա՝ որպես դրանց շարահյուսական տարբերակ. նրա բնույթը այս տեսակետից շատ նման է Մշո բարբառի ձայնեղներին, որոնք հանդես են գալիս մասամբ որպես շնչեղ ձայնեղների (ոչ բառասկզբային դիրքում. հմմտ. գ՚արեգին և գր. Գարեգին), մասամբ որպես խուլերի (միջձայնավորային դիրքում. հմմտ. կեռագուր և գր. կեռակուր) դիրքային տարբերակներ: Ուղղական ու տրական հոլովների և նրանց դիրքային տարբերակների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 21-րդ աղյուսակով.

Աղյուսակ 21

Հնչույթներ (անփոփոխականներ	Դիրքային տարբերակներ				
	«Ուղղականը»	«Կոչականը»	«Հայցականը»	«Սեռականը»	«Տրականը»
Ուղղական (բացարձակ)՝ 0 վերջավորությամբ	+	+	+	−	−
Տրական (հանգչական)՝ ի-ի համար թեքություններով	−	−	+	+	+

Այս նույն ձևով Մշո բարբառի բաղաձայնական համակարգը մինչև թյուրք-պարսկական նորագույն փոխառությունները պարունակել է հնչույթների 3 շարք՝ շնչեղ ձայնեղներ, խուլեր և շնչեղ խուլեր, ընդ որում շնչեղ խուլերը միարժեք են, իսկ շնչեղ ձայնեղները և խուլերը վերևում նշված դիրքերում ունեցել են իրենց ձայնեղ տարբերակները, այսինքն՝ ձայնեղները բաշխվել են մասամբ շնչեղ ձայնեղների, մասամբ խուլերի վրա (աղյուսակ 22).

Աղյուսակ 22

Հնչույթներ (անփոփոխականներ)	Դիրքային տարբերակներ (այլահնչականներ)		
	Շնչեղ ձայնեղներ	Ձայնեղներ	Խուլեր
Շնչեղ ձայնեղներ	+	−	−
Խուլեր	−	+	+

Մինչայժմյան քննությամբ մենք առանձնացրինք տարբերակների կամ փոփոխակների երկու խումբ. մի կողմից՝ միևնույն ձևույթների դիրքային տարբերակներ համարվեցին ի–ի, ից–ի և ավ–ի խմբերի մեջ մտնող թեքույթները, մյուս կողմից՝ ուղղականի և տրականի տարբերակներ համարվեցին այսպես կոչված «ուղղականը» (նեղ իմաստով), «կոչականը», «հայցականը», «սեռականը» և «տրականը» (նեղ իմաստով)։ Ի՞նչ կարգի տարբերակների կամ փոփոխակների մասին է խոսքը այս երկու դեպքում, ի՞նչ փոխհարաբերության մեջ են գտնվում դրանք։ Մինչայժմյան քննությամբ պարզվել է հետևյալը. 1) առաջին տիպի փոփոխակները կամ տարբերակները հանդիսանում են հիմքային տարբերությունների (լինեն դրանք իմաստային թե ձևական) նշանակումներ, այսինքն՝ թեքույթներն ընդունող միավորների իմաստային կամ ձևական տարբերությունների ցուցիչներ. այդ բանը շատ լավ երևում է fr–ոջ–ից, երեկ–վան––ից ձևերի օրինակով, որոնց մեջ դասանիշերն ու հոլովական վերջավորություններն առանձնացված են, մինչդեռ տրական հոլովում ոջ–ը և վա(ն)–ը ստանձնել են լրացուցիչ կերպով հոլովանիշ դեր (fr–ոջ = *fr–ոջ–ի. այստեղ ի–ն չկա, որովհետև ոջ–ը ինքնին հանդես է գալիս և՛ որպես դասանիշ, և՛ որպես հոլովանիշ՝ հակադրվելով և՛ fույr ձևի զրո վերջավորությանը և՛ fr–ոջ–ից ձևի ից–ին). երկրորդ տիպի փոփոխակները կամ տարբերակները կապված են ոչ թե հիմքային տարբերությունների, այլ ոչ հիմքային, գործառնական տարբերությունների կամ ձևաբանական ու շարահյուսական շրջապատների տարբերությունների հետ. 2) առաջինների դեպքում մենք ամբողջովին ձևաբանական (բառային) մակարդակում ենք, երկրորդների դեպքում՝ ձևաբանական-շարահյուսական կամ ամբողջովին շարահյուսական մակարդակներում։ Այժմ փորձենք ավելի ճշտել այս երկու կարգի փոփոխակների կամ տարբերակների փոխհարաբերությունը։ Առաջին դեպքում մենք գործ ունենք քերականական համանշության և համանունության, երկրորդ դեպքում՝ քերականական բազմիմաստության հետ։ Առաջին դեպքում միևնույն դասին պատկանող բոլոր թեքույթները հոլովապես նույնանիշ են, ընդ որում I կարգի ոջ, վա(ն), այ/ո և նման թեքույթները քերականորեն երկարժեք են, այսինքն՝ հանդես են գալիս որպես համանուններ՝ արտահայտելով երկու տեսակ քերականական իմաստներ՝ դասային և հոլովական. երկրորդ կարգի հոլովանիշերից առաջ դտնված դիրքում համանունությունը չեզոքանում է, և դրանք պահպանում են

միայն դասանշային արժեքը (հոլովանշային արժեքն իրենց վրա են առնում երկրորդ կարգի հոլովանիշերը). եթե ի-ն դիտենք որպես տրականի բուն նիշ, ապա ոջ-ը անկախ դիրքում, ինչպես նշել ենք, փաստորեն հավասար է ոջ+ի-ի: Երկրորդ դեպքում ինչպես զրո վերջավորությունը, այնպես էլ ի-ի խմբին պատկանող յուրաքանչյուր թեքույթ որպես հոլովանիշ բազմիմաստ է, այսինքն՝ ըստ զուգորդման բնույթի ստանում է իր գլխավոր իմաստի համար բնորոշ հատկանիշով որոշվող տարբեր առումներ (տարբեր շրջապատներում տարբեր առումներ):

Այսպիսով, ժամանակակից հայերենի հոլովի քերականական կարգի հետ կապված (ինչպես թվի քերականական կարգի դեպքում) հանդես են գալիս անունների իմաստային մի շարք խմբեր կամ դասեր, որոնց տարբերությունները արտահայտվում են մասամբ միայն հոլովանիշ թեքույթների տարբերություններով, մասամբ էլ զուգորդվում են իրենց իսկ հիմքերի վերջակերտական (այդ թվում՝ վերջածանցական) տարբերությունների հետ: Այդ խմբերը տարբերվում են իմաստային հետևյալ գլխավոր հատկանիշներով՝ անձնանշություն—անանձնանշություն, վերացականություն—ոչ վերացականություն (թանձրացականություն), ժամանականշություն—ոչ ժամանականշություն, ազգակցանշություն—ոչ ազգակցանշություն. սրանց միանում են մասնակի արժեք ունեցող մի շարք այլ հատկանիշներ էլ, որոնցով հակադրվում են՝ անորոշ դերբայները մնացած հիմքերին, որոշ կարգի բայանուններ՝ մնացած հիմքերին, մահ, անուն հիմքերը որպես առանձին դասեր՝ այլ խմբերի և այլն: Եթե այս դեպքում մի կողմ թողնենք՝ 1) այն տարբերությունները, որոնք արդեն հանդես են եկել թվի քերականական կարգի քննության դեպքում, հատկապես բացառենք հոգնակիածան հիմքերը, 2) անհոլովականության հատկանիշը, որ ժամանակակից հայերենում չի գործում (չ տարբերություն անհոգնականության հատկանիշի)[17], 3) զուտ ձևական և զուտ պատմական հանգամանքներով պայմանավորված տարբերությունները, 4) ոչ էական, ոչ բնորոշ կամ համաբանությամբ պայմանավորված գործածությունները,—ապա կստացվեն հոլովի քերականական կարգի հետ կապված ձևաիմաստային հետևյալ տարբերությունները (ձևաիմաստային դասերը) (աղյուսակ 23):

---

17 Ժամանակակից հայերենում անհոլով անուններ չկան:

Անվանական խմբեր	Հոլովական թեքույթներ												
	ի	ա	ու	ան	յան	ոջ	վա	վան	այ/ո	(ը)/ե	ու/ա	ու/վա	ում
1. «Վերացական» անուններ	+	–	–	–	–	–	–	–	–	–	+	–	–
2. Անձնանիշ անուններ													
ա. իկ-ով իգականանիշ-վարգաբշական անուններ	–	+	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
բ. Ազգակցանիշ անուններ	–	–	+	–	–	+	–	–	–	–	–	–	–
գ. (ը)ր-ով անձնանիշ անուններ	–	–	–	–	–	–	–	–	–	+	–	–	–
դ. Այլ անձնանուններ	+	–	+	–	–	–	–	–	–	–	–	–	+
3. Ժամանականիշ անուններ	–	–	+	+	–	–	+	–	–	–	–	–	+
4. Անորոշ դերբայներ	–	–	+	–	–	–	–	–	–	–	–	–	–
5. Բայանուններ													
ա. ուցիլ, ուսում-ով բայանուններ	–	–	–	–	+	–	–	–	–	–	–	–	–
բ. ություն-ով բայանուններ	–	–	–	–	–	–	–	–	–	–	+	–	–
գ. ում-ով բայանուններ	–	–	–	+	–	–	–	–	–	–	–	–	–
դ. Այլ բայանուններ													
6. Մաճ հիմք	+	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	–
7. Անուճ հիմք	–	–	–	–	–	–	–	+	–	–	–	–	–
8. Հոլովական «չեզոք» անուններ	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	+	–
	+	–	–	–	–	–	–	–	–	–	–	–	+

4. ԴԱՍԻ ԿԱՐԳԸ

Թվի և հոլովի բերականական կարգերի քննությունը բացահայտեց քերականական այնպիսի իմաստներ, որոնք հատուկ են դասի քերականական կարգին: Այսպիսով, ինչպես բազմիցս նշել ենք, ժամանակակից հայերենին հատուկ է դասի քերականական կարգը (քերականական դասը)՝ հանդես գալով թվի և հոլովի ցուցիչների միջոցով: Եթե ավելի ճշգրտելու լինենք մեր խոսքը, ապա կարելի է ասել, որ մենք գործ ունենք 1) իկ, այf, աճf, եճf, ոճf *և 2)* ա, յան, ոջ, վա, վան, այ/ո, (ը)/ե, ու/վա, ում *թեքույթների համանունության հետ: Այստեղ բացառում ենք* ու, աճ, ու/ա *թեքույթները, որոնցով ձևավորվող անունները մասամբ նույնպես կարծեք իմաստային խմբեր են կազմում. բայց այս դեպքում նրանք ինքնին դասային իմաստ չեն արտահայտում, այլ փաստորեն լրացնում են հիմքային ածանցների արժեքը [-ալ-ու, -ել-ու, -(ու)մ-աճ, -թյուճ+ու/ա]: Եթե սրանց միացնենք հոգնականության [իմա՛ (ճ)եr] հատկանիշը*[18]*, ապա կստանանք 6 թվադասանիշ [(ճ)եr, իկ, այf, աճf, եճf, ոճf/ և 9 հոլովադասանիշ /ա, յան, ոջ, վա, վան, այ/ո, (ը)/ե, ու/վա, ում], ընդամենը 15 դասանիշ թեքույթ:*

Քանի որ հոգնակիի վերջավորությունները ինքնին, առանց առաջին կարգի հոլովանիշ թեքույթների, չեն կարող լիովին որոշել տվյալ դասերը (իկ-ով, աճf-ով և այլն կարող են վերջանալ և այլ կարգի բառեր), ուստի բուն դասանիշեր պետք է համարել նրանց փոխարեն աճց, ա-յf/ճց, աճ-f/ց, եճ-f/ց, ոճ-f/ց թեքույթները: Տարածելով այս սկզբունքը նաև հոգնականության վրա՝ կստանանք ներ-ի փոխարեն ների նիշը, մանավանդ որ ներ-ը մենք օգտագործել էինք հոգնակիին հակադրվող զրո վերջավորությունը նշելու համար:

Առաջնորդվելով անփոփոխակների և փոփոխակների (տարբերակների) առանձնացման միևնույն սկզբունքով[19] *կարելի է առանձնացնել միևնույն անփոփոխակներին պատկանող փոփոխակների հետևյալ խմբերը. 1)* ների (ներից. ներով) *(1 անդամ), 2)* աճց, ա-յf/ճց, աճ-f/ց, եճ-f/ց, ոճ-f/ց. ա, ոջ. այ/ո, (ը)/ե *(9 անդամ-փոփոխակ), 3)* վա *(1 անդամ), 4)* ում *(1 անդամ), 5)* յան, վա, *որոշ վերապահությամբ,* ու/վա *(3 անդամ-փոփոխակ):*

---

18 *Հոգնականության և անհոգնականության եզրերով:*

19 *Փոփոխակներ են այն միավորները, որոնց փոխարկման դեպքում բովանդակության պլանում փոփոխություն չի լինում:*

Բովանդակության պլանում սրանք տարբերում են 1) վերացական անունների դասը (ների) 2) անձնանիշ անունների դասը, 3) ժամանականիշ անունների դասը, 4) իրանիշ անունների դասը[20] և 5) բայանունների դասը։ Սակայն 5-րդ դասը չի կարելի բառիս բուն իմաստով այդպիսին համարել. ա) այն պարունակում է բոլոր բայանունների միայն մի չնչին մասը (շատ ու շատ բայանուններ բնորոշվում են այլ թեքույթներով), բ) այդ «դասին» պատկանելը որոշելու համար բացի իմաստային հատկանիշից պետք է դիմել նաև այլ (ձևական, պատմական) հատկանիշների։ Բացառելով այն՝ մենք կունենանք 4 դաս, որոնք կարելի է արտահայտել 3 հատկանշով՝ վերացականություն, անձնանշություն և ժամանականշություն։ Կատարվի 24-րդ աղյուսակը.

Աղյուսակ 24

Դասեր			Հատկանիշներ		
			Վերացականություն	Ոչ վերացականություն (թանձրացականություն)	
				Անձնանշություն	Ժամանականշություն
Վերացական անունների դաս			+	—	—
Ոչ վերացական (թանձրացական) անուններ	Անձնանիշ անունների դաս		—	+	—
	Ոչ անձնանիշ անուններ	Ժամանականիշ անունների դաս	—	—	+
		Ոչ անձնանիշ (իրանիշ) անունների դաս	—	—	—

Աղյուսակը ցույց է տալիս, որ 1-ին, 2-րդ և 3-րդ դասերն ունեն առնվազն մեկ դրական հատկանիշ. միայն 4-րդ դասն է, որ զուրկ

20 Թեև ում-ը հատուկ է իրանիշ անուններին, բայց այն կարող են ստանալ նաև ժամանակացույց անունները։ Միաժամանակ ում-ով բնորոշվում են նախորդ երկու դասերը, այնինքն՝ այս դասերին պատկանող անունները ում չեն ստանում։

է դրական հատկանիշից (բնութագրվում է միայն բացառական հատկանիշներով)։

Անհրաժեշտ է նշել, որ հիշյալ դասերի ձևաբանական-թեքութային տարբերություններին կարող են միանալ նաև զուգորդային-շարահյուսական որոշ կարգի հատկանիշներ էլ։ Այսպես, անձնանշություն—ոչ-անձնանշություն դասային հակադրությունը բնորոշվում է ոչ միայն անունների՝ ում-ով ներգոյական ստանալով կամ չստանալով, այլև, ինչպես նշել ենք, հարցման և շարահյուսական որոշ կարգի պաշտոնների (գործողության առարկայի կամ ուղիղ խնդրի և կրավորական կառուցվածքում հանդես եկող իրական ենթակայի)՝ հոլովական ձևավորման տարբերություններով. անձնանիշ անունները՝ 1) պատասխանում են միայն ո՞վ հարցին, 2) գործողության առարկան նշանակելիս (որպես ուղիղ խնդիր հանդես գալիս) կարող են ձևավորվել տրականով (հատկապես որոշյալ առման դեպքում) և 3) կրավորական կառուցվածքում գործողության կատարողին նշանակելիս (որպես հեղինակային խնդիր հանդես գալիս) կարող են ձևավորվել միայն կողմից կապով և, հազվադեպ, բացառականով[21], բայց ոչ երբեք գործիականով։

Հիշյալ դասերի ներսում կարելի է տարբերել ենթադասեր՝ իմաստային և ձևական համապատասխան տարբերություններով, ընդ որում որոշ ենթադասեր, ինչպես վերևում ցույց տրվեց, կպատկանեն միաժամանակ երկու դասի (անձնանիշ և եզրահաշվական, իրանիշ և եզրահաշվական)։ Դասերի և ենթադասերի այս բոլոր կապերը կարելի է արտահայտել 25-րդ աղյուսակով (էջ 209)։

5. ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Առկայացման քերականական կարգը ունի երկու ենթակարգ՝ որոշյալության և ցուցա-ստացականության։ Որոշյալության ենթակարգը արտահայտության պլանում բնորոշվում է ը, և որոշիչ վերջավորությունների կամ հոդերի գոյությամբ և սրա հետ կապված Ø/ը, Ø/և հակադրություններով (մարդ—մարդը, տղա—տղան)։ Որոշիչ հոդերով օժտված բառաձևերում հանդես եկող հիմքերը բազմարժեք են. առկա են 1) «մաքուր» հիմքերին հավասար ձևավոր հիմքեր, այլև 2) թվանիշ վերջավորություններով, 3) առաջին կար-

21 Ենթական և բացառականով խնդիրը արտահայտում են գործողության սկզբնավորում (անջատում), որ հնարավոր է դարձնում այս կարգի գործածությունը։

Դասեր	Ենթադասեր	Ցուցանիշներ											
		հերի	ասց	ցմ/ցմ	ան-ք/ց	հն-ք/ց	ն-ք/ց	ա	ո՞	կա	ա/ո	(ը)/ի	ուժ
I Վերացական անուններ	1. Վերացական անունների ենթադաս	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
	2. Գերհավաքական անունների ենթադաս	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
II Անձնանիշ անուններ	3. Հատուկ անձնանունների ենթադաս	—	—	—	+	+	—	—	—	—	—	—	—
	4. Հասարակ պզակցանիշ անձնանունների ենթադաս	—	—	—	—	—	+	+	+	—	+	—	—
	5. «Զգոք» հասարակ անձնանիշ անունների ենթադաս (մասամբ պզակցանիշ արժեքով)	— (-)	+	+	—	—	—	—	—	—	—	+	—
III Ժամանականիշ անուններ	6.	+	—	—	—	—	—	—	—	+	—	—	+
IV Իրանիշ անուններ	7.	+	—	—	—	—	—	—	—	—	—	—	+

գի թեքույթներով և, 4) եթե նկատի առնենք խոսակցական լեզվին հատուկ ձևերը, նույնիսկ երկրորդ կարգի հոլովանիշ վերջավորություններով օժտված հիմքեր՝ fաղաfը, fաղաfները, fաղաfներին, fաղաfներից(ը): Քանի որ ը-ն հայերենում անշեշտ է, իսկ ե-ն բաղաձայն, ուստի ը-ին և ե-ին նախորդող հիմքերը շեշտի որևէ փոփոխություն չեն կրում: Ընդհանրապես որոշիչ հոդերին նախորդող հիմքերի կազմությունը թվանիշ և հոլովանիշ վերջավորություններին նախորդող հիմքերի կազմության հետ համեմատած խիստ պարզ է. այս դեպքում հիմքը սովորաբար որևէ փոփոխության չի

ննթարկվում և որևէ մասնիկ չի ստանում. միակ բացառությունը աիրո, ասատո *հոլովաձևերն են, որոնց* ո*-ն և հոդից, այլև* ս, ղ *հոդերից առաջ փոխարինվում է* ու*-ով* (աիրու-և, ասատու-և)*:*

Ժամանակակից հայերենի երկու որոշիչ հոդերը՝ ը-ն և և-ն որոշյալության իմաստի արտահայտության տեսակետից հանդես են գալիս որպես միևնույն անփոփոխակի դիրքային տարբերակներ. և-ն սովորաբար հանդիպում է ձայնավորից, ը-ն՝ բաղաձայնից հետո: Սակայն այս հարաբերությունը շարահյուսական որոշ շրջապատում կամ իմաստային որոշ պայմաններում կարող է փոխվել. և-ն կարող է հանդիպել նաև բաղաձայնից հետո, եթե նրան առանց ղգալի դադարի հաջորդում է որևէ ձայնավոր, և եթե այդ դեպքում հոդավոր բառը տրամաբանորեն խոսողի կողմից չի ընդգծվում («Հակոբն ասաց»): Այսպիսով, ը-ի և և-ի գործածությունը կախված է մասամբ հիմքի վերջակերպությունից (ձայնավորով թե բաղաձայնով վերջանալը), մասամբ ձևական-շարահյուսական և իմաստային-շարահյուսական որոշակի պայմաններից: Ը-ի և և-ի, որպես միևնույն անփոփոխակի դիրքային տարբերակների, փոխհարաբերությունը մոտավորապես այնպիսին է, ինչպիսին, օրինակ, ուղղականի «ուղղական» և «կոչական» կամ տրականի «տրական» և «սեռական» տարբերակների փոխհարաբերությունը: Եթե տարբերակենք հիմնական և լրացուցիչ դիրքեր, ապա այդ փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 26-րդ աղյուսակով (էջ 211):

Ինչպես նշել ենք, զրո և ը/և վերջավորությունների (հոդերի) հակադրությունը նպատակ ունի արտահայտել բովանդակության պլանի անորոշություն—որոշյալություն հակադրությունը: Իր բուն արժեքով որոշիչ հոդը պետք է նշանակի հաղորդակցողների համար որոշակի, նրանց հայտնի առարկա կամ առարկաներ («Տունը քանդեցին», «Տները քանդեցին»)։Սակայն ժամանակակից հայերենում որոշիչ հոդի կիրառությունը ունի որոշակի առանձնահատկություններ. 1) այն կարող է արտահայտել ոչ թե տվյալ որոշակի առարկան (իրը, անձը, դենոտատը), այլ տվյալ որոշակի հասկացությունը. այս տեսակետից ժամանակակից հայերենը տարբերվում է գրաբարից, որտեղ ընդհանուր հասկացությունը դրվում էր անհոդ [հմմտ. «Հաւատարիմ է շուն»=«Շուն կենդանին հավատարիմ է» և «Հաւատարիմ է շունն»=«Հավատարիմ է տվյալ (հայտնի) շունը»]. այսպիսով, գրաբարում որոշիչ հոդը նշանակում էր միայն հայտնի առարկան (դենոտատը), բայց ոչ հայտնի (բայց ընդհանուր) հասկացությունը. 2) այն կարող է արտահայտել հաղորդակցողներին

Անփոփոխակ-ներ	Փոփոխակ-ներ (տար-բերակներ	Դիրքային հատկանիշ	
		Հիմնական դիրքա-յին հատկանիշ	Լրացուցիչ դիրքում հիմ-նական դիրքային հատ-կանշի պահպանում
Որոշիչ հոդ	Ն հոդ	Զայնավորահա-ջորդում	+/−
	Ը հոդ	Բաղաձայնահա-ջորդում	+
Ուղղական	«Ուղղական» տարբերակ	Հոդառություն	+/−
	«Կոչական» տարբերակ	Անհոդառություն	+
Տրական	«Տրական» տարբերակ	Հոդառություն	+/−
	«Սեռական» տարբերակ	Անհոդառություն	+

ոչ թե իրականում հայտնի առարկա (իր, անձ), այլ խոսքով, միջնորդված կերպով, որևէ կողմով, արարքով հայտնի դարձած, նախապես խոսում հիշատակված առարկա (իր, անձ), այսինքն՝ ծառայել ոչ թե իրականության (առարկայական), այլ լեզվական (հաղորդակցային) պլանին («Մի մարդ էր գնում: Մարդը կանգ առավ»). 3) հոդը կարող է ստանձնել փոխարինման դեր՝ փոխարինել գոյականին՝ դրվելով նրան հատկացվող (այն լրացնող) բառի վրա, լինի այն ածականով թե տրականով (կամ, հազվադեպ, այլ հոլովով) արտահայտված գոյական. հմմտ. «Կարմիրը (=կարմիր գույնը) գեղեցիկ գույն է», «Գրիգորի տունը քանդեցին, Հակոբինը (=Հակոբի տունը)՝ ոչ». «սեռականը» որպես անկախ հոլով ընդունող քերականները այս վերջին գործածությունը կոչում են «փոխանուն սեռական» (իմա՛ «փոխանուն տրական»). այն տարածված է զրո հոլովանիշ վերջավորություն ունեցող հատկացյալների դեպքում, բայց որոշիչ հոդ կարող է հանդիսել նաև այլ վերջավորություններ ունեցող հատկացյալների համար (վերջիններից խուսափում են՝ չցանկանալով ոչ ծանրացնել): Այս դեպքում, օրի-

նակ, հատկացուցիչը ստանում է և որոշիչ հոդը և նրա հետ միասին հոլովվում հատկացյալի հոլովով, ընդ որում պահպանվում են հոդառության սովորական կանոնները՝ Հակոբին-ը, Հակոբին-ի-ն, Հակոբին-ից, Հակոբին-ով, Հակոբին-ում: «Փոխանուն սեռականը (իմա՛ «տրականը)» միակ դեպքն է, երբ հոլովական վերջավորությունները հանդիպում են որոշիչ հոդից հետո:

Որոշիչ հոդի քննությունն ավարտենք մի քանի այլ դիտողությամբ.

1) Անորոշ առումը հակադրվում է որոշյալ առմանը զրո ձևույթով, բայց անորոշությունը կարող է ուժեղացվել մի բառով, որ ձևականորեն տարբերարկվելով մնկ թվականից՝ փաստորեն ստացել է անորոշ հոդի արժեք. այլ կերպ ասած՝ հայերենում սկսել է զարգանալ անորոշության վերլուծական արտահայտությունը:

2) Արդի հայերենի որոշիչ հոդերը ունեն նաև ստացական արժեք (Համմտ. «Տունը քանդվեց»=«Նրա տունը քանդվեց»). մյուս կողմից՝ ս, դ ստացական հոդերը բառերին տալիս են նաև որոշյալ առում (գիրս. գիրդ նշանակում են «իմ, քո որոշյալ գրքերը»): Այսպիսով, և՛ որոշյալ, և՛ ստացական հոդերը հանդես են գալիս որպես համանուններ:

3) Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ ժամանակակից հայերենում գրաբարի համեմատությամբ որոշիչ հոդի գործածությունը մի կողմից՝ ավելի է ձևականացել և մյուս կողմից՝ դիրքային ավելի մեծ սահմանափակություն է ստացել:

Յուցա-ստացական ենթակարգը արտահայտության պլանում քնորոշվում է ս, դ, երբեմն էլ ր, և մասնիկների (հոդերի) առկայությամբ, որոնք բովանդակության պլանում արտահայտում են ցուցա-ստացական, բուն ցուցական և դիմորոշ իմաստներ: Այս բոլոր դեպքերում հիմնականը և ծագմամբ առաջնայինը ցուցական իմաստն է. ս, դ հոդերը ծագմամբ նույնն են այս, այդ (և սա, դա) որոշիչ դերանունների բուն արմատական մասերի հետ: Երկրորդաբար ցուցական իմաստի վրա ածել է ստացական իմաստը, իսկ դիմորոշ իմաստը արդյունք է անձնական (անձնանիշ) դերանունների հետ անունների համաձայնվելու (ես ուսուցիչս), ընդ որում հոդով օժտված անունը կարող է հանդես գալ և անկախաբար: Յուցական այս երեք իմաստների առկայությունը սովորաբար կախված է անվան բնույթից և հաղորդակցող անձերի ու հոդն ստացող անունների համապատասխանությունից, այսինքն՝ դիրքային արժեք ունի. մենք այստեղ գործ ունենք փաստորեն բազմիմաստության և ոչ թե հա-

ժանունության (փոփոխականների և ոչ թե անփոփոխականների) հետ. 1) ցուցական իմաստը հազվադեպ է և սովորաբար հանդես է գալիս ժամանակացույց անունների դեպքում (օրերս, վերջերս և այլն). 2) ստացական իմաստը հանդես է գալիս իրերի անունների և այն անձերի անունների դեպքում, որոնք չեն համընկնում հաղորդակցողների հետ (գիրս=իմ գիրը, կինս=իմ կինը. կինդ=ֆո կինը. այս ձևերում խոսողը կամ խոսակիցը հենց նշվող կանայք չեն). 3) դիմորոշ իմաստը հանդես է գալիս այն անձերի անունների դեպքում, որոնք համընկնում են հաղորդակցողների հետ (ուսուցիչս=ես առջես ուսուցիչ. ես՝ ուսուցիչս. այսինքն՝ խոսողը հենց ուսուցիչն է):

II. ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

1. ԹՎԻ ԿԱՐԳԸ

Դերանվանական թվակազմությունը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով. 1) եզակիի և հոգնակիի ձևերի տարբերակմամբ և տարահիմքությամբ. 2) ուղիղ և թեք հոլովների համար թվային հակադրության տարբեր արտահայտությամբ. 3) հոգնակիի տարածված տիպերից տարբեր ձևավորմամբ. այս բառերի հոգնակին ուղղական հոլովում սովորաբար f է պարունակում և մեծ մասամբ ձևով (ու իմաստով) հիշեցնում է վարդաձ—վարդաձաձ, Գրիգոր—Գրիգորեձ, պապ—պապոձ *լրացական-հավաքական հոգնակին: Այս բառերն են* ես—մեձ *(թեք հոլովների դեպքում՝* ինձ—մեզ), դու—դուք *(թեք հոլովների դեպքում՝* ֆեզ—ձեզ), իմքր—իրեձ[22] *(թեք հոլովների դեպքում՝* իրեն—իրենց), սա—սրաձ *(թեք հոլովների դեպքում՝* սրան—սրանց), դա—դրաձ *(թեք հոլովների դեպքում՝* դրան—դրանց), ձա—ձրաձ *(թեք հոլովների դեպքում՝* ձրան—ձրանց), ո՞վ—ովֆե՞ր (ով—ովֆեր) *[թեք հոլովների դեպքում՝* ո՞ւմ (ում)—*(չիք)]:*

Ի՞նչ կարգի բառեր են սրանք և ինչո՞վ է բացատրվում թվակազմության եղանակի այս տարբերությունը: Ավանդական քերականության մեջ այս բառերը հայտնի են որպես անձնական, ցուցական (առարկայանիշ ցուցական), հարցական (առարկայանիշ հար-

22 *Ունի և իմֆներ տիպի հոգնակին:*

ցական) և հարաբերական (առարկայանիշ հարաբերական) դերանուններ[23]։ Նկատելի է, որ առարկայանիշ հարցական ի՞նչ և համապատասխան հարաբերական ինչ դերանունները դուրս են մնում շարքից՝ ունենալով թվակազմության (և հոլովակազմության) տարածված տիպ՝ ի՞նչ—ինչե՞ր, ինչ—ինչեր։ Նշանակում է՝ միայն արտահայտության պլանի վրա հիմնվող զուտ (ձևական) դասակարգումները կարող են թերի լինել և չտալ բովանդակության պլանի տարբերություններն ամբողջությամբ՝ դրանց դիրքային և պատմական մասնակի չեզոքացման հնարավորության պայմաններում։ Սակայն լեզվի համակարգայնության գաղափարի լայն մեկնաբանությունը և նմանակության (անալոգիայի) սկզբունքը հնարավորություն են տալիս՝ ա) իմաստային տարբերություններ տեսնելու այն դեպքերում, երբ դրանք անմիջական ձևական արտահայտություն չունեն, և բ) իմաստային ընդհանրություններ տեսնելու այն դեպքերում, երբ դրանք ձևական տարբեր արտահայտություն ունեն։ Սրա հիման վրա է, որ մենք ի՞նչ (ինչ) ու ո՞վ (ով) դերանունները միավորում ենք, չնայած դրանց հարացուցային տարբերությանը և ի՞նչ (ինչե՞ր) դերանունը տարբերում ենք հա՞ց (հացե՞ր) տիպի բառերից՝ չնայած դրանց հարացուցային նույնությանը։

Առարկայական բառերի՝ քննարկվող խումբը, ինչպես նշել ենք, իմաստային տեսակետից բնորոշվում է մի կարևոր ընդհանուր հատկանիշով՝ իրադրականությամբ։ Այս բառերի իմաստը որոշվում է իրադրությամբ՝ առարկայական և կոնտեքստային։ Անձնական, ցուցական և հարցական բառերի համար բնորոշ է առարկայական իրադրականությունը, հաղորդակցման իրադրության հետ կապված լինելը. երկրորդաբար այն կարող է դառնալ կոնտեքստային (համմտ. սա, որ կարող է ցույց տալ հաղորդակցման ժամանակ անմիջապես առկա և խոսողին մոտ գտնվող առարկան, կոնտեքստում՝ մերձավոր բառը)։ Հարաբերական դերանունները միայն կոնտեքստային իմաստ ունեն։ Այս բոլոր բառերը, որպես իրադրական բառեր, հակադրվում են անվանական բառերին, որոնց ընդհանուր իմաստը կախված չէ իրադրությունից և կոնտեքստից։

Իրադրական և կոնտեքստային իմաստը բնորոշ է նաև մի շարք այնպիսի բառերի համար, որոնք, ինչպես ինչ-ը, հոլովվում են անվանական տիպի հոլովմամբ։ Դրանք մասամբ ինքնին առարկայանիշ են (միմյանց. իրար. մեկմեկու), մասամբ առարկայանիշ են

23 Մ. Աբեղյանը *որանք դիտում է որպես դերանուն գոյականներ։*

դառնում փոխանունաբար (մեր–ոնք, ձեր–ոնք, որ–ոնք, մի բանիսը, մենքը, ոչ մենքը):

Ինչպես վերևում նշվեց, դերանվանական հոգնակին ոչ միայն ձևով, այլև իմաստով հիշեցնում է անք, ենք, ոնք *վերչավորություններով կազմությունները, այսինքն՝ վերջիններիս նման լրացական բնույթ ունի՝* մենք=ես+այլ անձինք (դու, նա, դուք, նրանք). դուք=դու+այլ անձինք (նա, նրանք). իրենք=ինքը+այլ անձինք *և այլն:*

Հարցական և հարաբերական դերանունների դեպքում եզակիի և հոգնակիի հակադրությունը, հատկապես թեք հոլովաձևերում կարող է չեզոքանալ. ո՞վ և ո՞ւմ հարցերին կարող են համապատասխանել ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվաձևեր՝ ո՞վ՝ ես, մենք, ո՞ւմ՝ ինձ, մեզ և այլն:

2. ՀՈԼՈՎԻ ԿԱՐԳԸ

Կարելի է մատնանշել դերանունների հոլովակազմության հետևյալ առանձնահատկությունները:

1. Ինչպես թվակազմության ժամանակ, այստեղ ևս, ուղղականի և տրականի կազմության մեջ, հանդես է գալիս սուպլետիվիզմը՝ տարբերելով 1-ին և 2-րդ դեմքի անձնական դերանունների եզակի ու հոգնակի և մնացած դերանունների եզակի ձևերը՝ ես—ինձ, մենք—մեզ, դու—քեզ, դուք—ձեզ, *այլև* ինքը—իրենց, սա—սրան, դա—դրան, նա—նրան, ո՞վ—ո՞ւմ, ով—ում. *վերջին վեց դերանուններից չորսի հոգնակի ուղղականն ու տրականը տարբերվում են* անք–ով *և* ենք–ով *օժտված հոգնակի ձևերի տիպով՝* իրենք—իրենց, սրանք—սրանց, դրանք—դրանց, նրանք—նրանց, *իսկ հարցական ու հարաբերական դերանունները հոգնակիի թեք հոլովաձևեր չունեն:*

2. Բացառական և գործիական հոլովների կազմության եզանակը նույնն է անվանական համապատասխան հոլովների կազմության որոշ տիպերի հետ (կազմվում է տրականից), ընդ որում հարկավոր է նկատի առնել, որ այստեղ հնարավոր է մաքուր և ձևավոր հիմքերի տարբերություն (առանց ն–ի և ն–ով)՝ ինձ—ինձնից—ինձնով, մեզ—մեզնից—մեզնով, քեզ—քեզնից—քեզնով, ձեզ—ձեզնից—ձեզնով, իրեն—իրենից—իրենով, սրան—սրանից—սրանով, դրան—դրանից—դրանով, նրան—նրանից—նրանով, ո՞ւմ—ում(ն)ի՞ց—ում(ն)ո՞վ, ում—ում(ն)ից—ում(ն)ով:

3. Դերանունները, մանավանդ անձնանիշ դերանունները, ներգոյական հոլովաձև չունեն։

4. Անվանական ձևերի քննության ժամանակ մենք ցույց տվեցինք, որ ուղղականը կարող է հանդես գալ բուն ուղղական, հայցական և կոչական, իսկ տրականը՝ բուն տրական, հայցական և սեռական դիրքային տարբերակներով, այսինքն՝ հոլովական երկու անփոփոխակները հանդես են գալիս հինգ փոփոխակների (դիրքային տարբերակների) ձևով. եթե մի կողմ թողնենք կոչականը, որ դերանունների դեպքում սահմանափակ գործածություն ունի (դու—դուք դերանունների դեպքում) և որևէ առանձնահատկություն հանդես չի բերում, ապա հարկ կլինի խոսել մյուս տարբերակների փոխհարաբերության մասին. ա) որոշ դիրքերում անձնանիշ անունները կարող են հանդես գալ ուղղականի, դերանունները՝ տրականի ձևով՝ դեպի Հակոբը, ընկերը, մարդը, բայց դեպի ինձ, մեզ, ձեզ. ինքը և իրենց ձևերի դեպքում նկատվում է տատանում (դեպի ինքը, դեպի իրենց). բ) բուն անձնական դերանունների եզակի ու հոգնակի և ցուցական դերանունների հոգնակի թվի դեպքում անունների տրական հոլովի սեռական և տրական-հայցական տարբերակների դիմաց առկա են տարբեր ձևեր՝ իմ—ինձ, մեր—մեզ, ֆո—ֆեզ, ձեր—ձեզ, սրա—սրան, դրա—դրան, նրա—նրան, այլև իր—իրենց, թեև վերջինիս դեպքում նկատվում է տատանում (բուն տրականը կարող է հանդես գալ և սեռականի համար՝ իր տուն և իրենց տուն). այն հանգամանքը, որ ն-ն սրան, դրան, նրան ձևերում վերածվել է հոլովական տարբերիչի, բացատրվում է այդ բառերի իրաղրական՝ ինքնին որոշյալ իմաստով, որի հետևանքով չեզոքանում է որոշյալ-անորոշ հակադրությունը։ Այսպիսով, անձնական և ցուցական դերանունների դեպքում մենք կունենանք սեռական և տրական-հայցական հոլովաձևերի անփոփոխակային տարբերություն, երբ բովանդակության պլանում եղած տարբերությունը համապատասխանաբար դրսևորվում է արտահայտության պլանում։ Մ. Աբեղյանը իմ, ֆո, մեր, ձեր. իր ձևերը դիտում է ոչ թե որպես հոլովաձևեր, այլ որպես ստացական ածականներ. այս դեպքում ստացական ածականների շարքը պետք է դասել նաև սրա, դրա, նրա ձևերը, որ, սակայն, հարցը դժվարացնում է. այս ձևերը կարծես թե դեռևս գիտակցվում են ոչ թե որպես ածականներ, այլ որպես սա, դա, նա դերանունների հոլովաձևեր, մանավանդ եթե նկատի առնենք հոգնակի սրանից—սրանց. դրանից—դրանց. նրանից—նրանց զույգերը, որոնցից երկրորդները (սրանց. դրանց. նրանց) հանդես

են գալիս որպես և՛ «սեռական», և՛ «տրական», և՛ «հայցական». իհարկե, նրանց ածականացման պրոցեսն արդեն նկատելի է (համմտ. հայոց լեզու, որտեղ հայոց-ը ածականացել է՝ հայոց=հայկական):

3. ԴԱՍԻ ԿԱՐԳԸ

Դասի քերականական կարգի դրսևորման տեսակետից սուպլետիվ կազմությամբ բնորոշվող առարկայանիշ դերանունները բաժանվում են երկու խմբի՝ անձնանիշ և դասային տեսակետից չեզոք: Անձնական ես, դու, ինքր և հարցական ու հարաբերական ով դերանունները անձնանիշ դասին են պատկանում, ցուցական դերանունները (սա, դա, նա) դասի արտահայտման առումով չեզոք են: Սակայն այս դեպքում հարկավոր է նկատի ունենալ հետևյալը. 1) ո՞վ հարցական (և համապատասխանաբար ով հարաբերական) դերանվանը համապատասխանում է ի՞նչ հարցական (և համապատասխանաբար ինչ հարաբերական) դերանունը. կարելի է ասել, որ այս երկու հարցական դերանուններն ստանում են բառերի դասային խմբերը (քերականական դասերը) որոշող արժեք. բոլոր այն բառերը, որոնք պատասխանում են ո՞վ հարցին, կպատկանեն անձնանիշ դասին, և բոլոր այն բառերը, որոնք պատասխանում են ի՞նչ հարցին, կպատկանեն ոչ անձնանիշ (իրանիշ) դասին. 2) նա (հգն. նրանք) ցուցական դերանունը թեև մեր կողմից դրվեց դասային առումով չեզոք խմբում, բայց հիմնականում անձնանիշ արժեք ունի և փաստորեն հանդես է գալիս որպես երրորդ դեմքի անձնական դերանուն. երրորդ դեմքի համապատասխան իրանիշ արժեք արտահայտելու համար այն փոխարինվում է այն դերանվամբ և, երբ կոնտեքստը չի խանգարում, սա, դա դերանուններով. 3) մնացած դերանունների դասային պատկանելությունը որոշվում է կամ վերևում բերված ձևաբանական հատկանիշներով (օրինակ՝ ոնք-ով ստացականները՝ մերոնք, ձերոնք, անձնանիշ արժեք ունեն) կամ ո՞վ և ի՞նչ հարցական դերանուններին պատասխան լինելու հնարավորությամբ (օրինակ՝ փոխադարձ դերանունները անձնանիշ են, որովհետև պատասխանում են ո՞ւմ, ումի՞ց, ումո՞վ հարցերին՝ իրար—իրարից—իրարով, մեկմեկու—մեկմեկուց—մեկմեկով, միմյանց—միմյանցից—միմյանցով. վերջինս, որպես անք-անց հոլովման տիպի բառ, ձևաբանորեն նույնպես պատկանում է անձնանիշ դասին):

4. ԴԵՄՔԻ ԿԱՐԳԸ

Սուպլետիվ կազմությամբ բնորոշվող և ընդհանրապես ցուցական արժեք ունեցող դերանուններին բնականաբար հատուկ չէ որոշյալ—անորոշ հակադրությունը. ցուցական արժեք ունեցող բոլոր դերանուններն ինքնին որոշյալ են, ո՞վ (ով) դերանունը՝ ինքնին անորոշ: Պետք է նշել, սակայն, որ ո՞վ-ին համապատասխանող ի՞նչ դերանունը կարող է ունենալ որոշյալ և անորոշ ձևեր, ընդ որում անորոշ ձևով այն հանդես է գալիս նաև որպես առարկայանիշ բառերի լրացում (չեզոք դասային արժեքով)՝ ի՞նչ մարդ, ի՞նչ գիրք: Որոշյալության կարգի փոխարեն անձնական և ցուցական դերանունները բնորոշվում են ս. դ. ն (ը) հոդերին հատուկ դիմորոշ արժեքով, ընդ որում դեմքի քերականական կարգը դերանունների համար առաջնային է, գոյական անունների համար՝ երկրորդային. ինչպես նշվել է, գոյական անունների դեպքում այն սովորաբար արդյունք է համաձայնության՝ դերանվան հետագա հնարավոր զեղչմամբ (գոյական անունը դիմորոշ հոդով օժտվելու դեպքում ինքնին կարող է դեմք արտահայտել)՝ «ես՝ ուսուցիչս»: Դեմքի արտահայտությունը դերանունների էությունն է կազմում, ուստի և դիմային տարբերությունները արտահայտվում են սուպլետիվ եղանակով, այսինքն՝ դիմային տարբերիչները այդ դերանունների հենց բուն մասերն են. միայն իմս. իմդ, իմը դերանվանական ձևերի դիմային տարբերություններն են, որ արտահայտվում հոդերով, բայց սրանք էլ բառիս բուն իմաստով դերանուններ չեն, այլ ուժեղացող մասնիկներ (ես իմս=հենց ես, դու իմդ=հենց դու, նա իմը=հենց նա), որոնք, ս, դ, ը հոդերով հանդերձ կարող են դեմք արտահայտել և, հետևաբար, գործածվել անկախաբար:

Դեմքի քերականական կարգը ոչ այլ ինչ է, եթե ոչ առարկաների դասակարգումը ըստ հաղորդակցմանն ունեցած մասնակցության: Եթե դեմքի քերականական կարգի եղրերը տարբերակելու համար ընտրենք երկու հատկանիշ՝ հաղորդող լինելը և ընդունող լինելը, ապա այս հատկանիշների և դեմքերի փոխհարաբերությունը կարելի կլինի արտահայտել 27-րդ աղյուսակով (էջ 219):

Նույնը կարելի է արտահայտել 28-րդ համադրական աղյուսակով (տե՛ս էջ 219):

Դերանունների և դերանվանական հոդերի դիմային փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 29-րդ աղյուսակով (էջ 219).

Աղյուսակ 27

Դիմային հատկանիշներ	Դիմային եղրեր (դեմքեր)			
	(հաղորդակցող)	հաղորդող կամ 1-ին դեմք	ընդունող կամ 2-րդ դեմք	հաղորդումը չվաստակցող կամ 3-րդ դեմք
հաղորդող լինելը	+	+	—	—
ընդունող լինելը	+	—	+	—

Աղյուսակ 28

հաղորդող լինելը	հաղորդող լինելը	
	հաղորդող լինելը	հաղորդող չլինելը
ընդունող լինելը	(հաղորդակցող)	2-րդ դեմք (ընդունող)
ընդունող չլինելը	1-ին դեմք (հաղորդող)	3-րդ դեմք (հաղորդումը չվաստակցող)

Աղյուսակ 29

Դեմքեր	Դերանունների տեսակներ և հոդեր			
	Անձնական դերանուններ	Ցուցական դերանուններ	Սեռական դերանուններ	Հոդեր
1-ին դեմք	ես (մենք)	սա (սրանք)	իմ (մեր)	ս
2-րդ դեմք	դու (դուք)	դա (դրանք)	քո (ձեր)	դ
3-րդ դեմք	[նա (նրանք)]	[նա (նրանք)]	[նրա (նրանց)]	ն(ը)

ՍՏՈՐՈԳԱԿԱՆ ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ՀԱՐԱՑՈՒԹՅՈՒՆ

(ԽՈՆԱՐՀՈՒՄ)

I. ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԶԵՎԵՐ

1. ԲԱՅԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՐՈԳԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

Խոնարհման համակարգի քննության ժամանակ կփորձենք պահպանել հոլովման համակարգի քննության նկատմամբ կիրառված սկզբունքները։ Սակայն այս դեպքում հարկավոր է նկատի ունենալ խոնարհման համակարգի մի շարք առանձնահատկություններ։

1. Հոլովման համակարգի քննության ժամանակ մենք բոլոր դեպքերում մնում էինք մեկ բառի սահմաններում՝ իբրև այդպիսին դիտելով ձևաբանորեն անխոցելի, կազմությամբ անտեղափոխելի և գրության մեջ առանց բացվածքի պատկերվող հնչյունական կապակցությունները (հայերենի բայական հարացույցում չկա մեկ հնչյունից բաղկացած բայական ձև)[1], որովհետև հոլովման հարացույցի բոլոր միավորները և՛ հնչապես, և՛ գրապես մեկ ամբողջություն են ներկայացնում։ Սակայն խոնարհման համակարգի քննությունը սահմանափակելով այդ կարգի միավորներով՝ մենք կանգնում ենք այն թերի կերպով ներկայացնելու վտանգի առջև։ ա) Եթե մենք, հետևելով միևնույն սկզբունքին, դուրս թողնենք խոնարհման համակարգի քննությունից գրում եմ, գրել եմ *տիպի ձևերը և նկատի առնենք միայն* գրեմ, գրեցի *տիպի ձևերը, ինչպես այդ անում էինք հոլովման դեպքում, ապա կունենանք հայերենի խոնարհման թերի պատկեր. եթե հոլովման դեպքում կապերով ձևերը բուն հոլովման ձևերի նկատմամբ այնուամենայնիվ լրացական արժեք ունեն (համմտ.* ֆաղաքի մեջ = ֆաղաքի + մեջ), *ապա նույնը չի կարելի ասել այնպիսի ձևերի մասին, ինչպիսիք են* գրում եմ *տիպի ձևերը, որոնք գրեթե լիովին անկախ են* գրեմ, գրեցի *ձևերից, ընդորում* գրում, գրել *ձևերը անկախ գործածություն չունեն (*գրում եմ *ձևը չի կարելի հանգեցնել մեկ բառի սահմաններում ամփոփված որևէ ձևի)։ բ)* Գրում եմ, գրել եմ *տիպի ձևերը դուրս թողնելը սխալ կլիներ նաև մի այլ տեսակետից. գրային առումով առանձին միա-*

[1] Այնինչ համմտ. լաո ի «գնա»։

վորներ ներկայացնելով հանդերձ՝՝ դրանք հնչապես փաստորեն մեկ բառային ամբողջություն են ներկայացնում՝ ունենալով բառային մեկ միասնական շեշտ. դրանց առանձնակի գրությունը և որպես առանձին բառեր դիտվելը ունի ձևաբանական հիմք. եմ-ը կարող է անջատվել և փոխել իր տեղը՝ հանդես բերելով, այսպիսով, ձևաբանական անկախություն. պետք է նշել, սակայն, որ չեմ գրում, չեմ գրել կազմությունները նույնպես հնչապես բառային մեկ ամբողջություն են ներկայացնում: Ինչ վերաբերում է այսպես կոչված երկրորդական բաղադրյալ ժամանակներին, ապա դրանք բուն խոնարհման մեջ մտցնելու հարցը միշտ էլ կասկածներ է հարուցել:

գ) Եթե այդ ձևերը մենք ներառում ենք խոնարհման համակարգի մեջ, ապա այն հիմունքով, որ հոլովումն ու խոնարհումը քերականական առումով համարժեք չեն և պատկանում են բոլորովին տարբեր մակարդակների. հոլովումը պատկանում է նշանային մակարդակին, խոնարհումը՝ ստորոգական մակարդակին. խոնարհումը հանդես է գալիս որպես նախադասության ամենաէական (ըստ էության՝ բառից և բառակապակցությունից տարբերող միակ) հատկանիշի՝ ստորոգման կրողը. հետևաբար, այստեղ կարող են առնվել այնպիսի զուգորդումներ, որոնք ամբողջովին առնված ստորոգման (լայն առումով) կրողներն են:

2. Հոլովման քննության ժամանակ հիմնական (ելակետային) բառաձևի ընտրությունը դժվարություն չէր հարուցում. բոլոր կարգի վերջավորություններից զուրկ (բառարանային) անվանական ձևը կարող է հանդես գալ որպես անկախ դործածություն ունեցող բառաձև, այսինքն՝ փաստորեն համընկնել ուղղականի (որպես զրո ձևույթով օժտված բառաձևի) հետ. հմմտ. **fադաf. արյուն, կին՝** *ի տարբերություն* **fաղաfից. fաղաfներից. արյամբ. կանայf, կանանցից** *ձևերի:* Խոնարհման համակարգում խոնարհման բոլոր կարգի մասնիկներից զուրկ ձևերը անկախ գործածություն ունեն միայն սահմանափակ թվով դեպքերում՝ որոշ հրամայականների (**բե՛ր, ա՛ռ** և այլն) և անվանածանց բայաձևերի դեպքում (հմմտ. **մեծ—մեծացամ**): Այս տեսակետից էլ խոնարհման համակարգում «մաքուր» և «ձևավոր» հիմքերի՝ շեշտի հետ կապված տարբերությունները որևէ էական դեր չեն խաղում (մանավանդ որ անկախ հրամայականները չունեն շեշտափոխական հնչյունափոխության ենթարկվող ձայնավորներ). խոնարհման դեպքում «մաքուր» հիմքը կարող է ընդհանրապես չգործածվել (հմմտ. **գն–ա–մ, կարդ–ա–մ** և այլն) և կամ նույնիսկ վերականգնելի չլինել (**հր–է–մ**, որի դեպքում

հայտնի չէ հր-ի ձայնավորման բնույթը)։ Սրանով իսկ դժվարանում է խոնարհման ելակետային ձևերի ընտրությունը։ Հայերենում հնարավոր է մի քանի ելք։ ա) Կարելի է վարվել հնդիկ քերականների նման և քննման ելակետ համարել բայերի արմատական ձևերը. այս սկզբունքը թեև առաջին հայացքից թվում է շատ գրավիչ, բայց ավելի մոտիկից քննելու դեպքում հանդես է բերում որոշ թերություններ. նախ՝ ժամանակակից հայերենով խոսողների գիտակցության մեջ ամենայն հավանականությամբ արմատական ձևերը որպես ելակետային ձևեր չեն գիտակցված հենց այն դեպքերում, երբ դրանք իրրև այդպիսիներ պետք է գիտակցվեին առաջին հերթին, այն է՝ բուն բայարմատների դեպքում. իրրև այդպիսին նրանք գիտակցվում են մեծ մասամբ անվանական (անվանածանց) բայերի դեպքում (verba denominativa). հմմտ. մի կողմից՝ ջնջել—ջինջ և մյուս կողմից՝ մեծանալ—մեծ. երկրորդ՝ որոշ բայարմատների որոշումը դժվար է կամ էլ անհնար է, որովհետև, ինչպես նըշվեց, բայերի «մաքուր» արմատական հիմքերը ոչ միշտ են առանձին գործածվում. երրորդ՝ ինչպես հայտնի է, կան ածանցավոր և բարդ բայական հիմքեր, որոնց համար հարկ կլինի տալ լրացուցիչ կանոններ, այսինքն՝ բառակազմությունը մտցնել ձևաբանության մեջ. պետք է նշել, որ բնաձայն բառերի դեպքում ընդհանրապես հիմքը կարող է լինել բ-ով, որ չի ծագում ոչ ու-ից, ոչ էլ ի-ից (խշշալ, վզզալ, շխկալ և այլն)։ բ) Կարելի է վարվել արաբ քերականների նման և հիմք ընդունել անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքը. այս սկզբունքը խոցելի է նախ՝ ավանդապես ու հոգեբանորեն, որովհետև իրրև ելակետ է ընդունվում մի ձև, որ ավանդապես ու հոգեբանորեն ելակետային չի կարող դիտվել, և երկրորդ՝ ձևաբանորեն, որովհետև այն անմիօրինակ է և իրեն արդարացնելով զրեց, գնաց տիպի ձևերի դեպքում, չի արդարացնում մատեցրեց, արդարացվեց, խոստացավ ձևերի դեպքում։ Հետաքրքրական է, սակայն, նշել, որ Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի քերականության» մեջ խոնարհման տիպերի բաժանումը փաստորեն հենվում է կատարյալի և հրամայականի ձևերի վրա. նա այստեղ տարբերում է բայերի խոնարհման երեք խումբ՝ ի՝ գնացի, գրեցի. ա՝ զարմացա, մոռեցա, մտա. ի, ե՝ զարմացրի, մատուցի։ գ) Կարելի է հիմք ընդունել եզակի հրամայականը, որի ձևերը երբեմն համընկնում են արմատի հետ. հմմտ. բերել—բե՛ր. սակայն այսպիսի «համընկումը» շատ հազվադեպ է, և հրամայականը երբեմն հանդես է բերում կազմության զգալի բարդություն ու անմիօրինակություն. հմմտ. իմացի՛ր.

մոտեցրո՛ւ: դ) Կարելի էր ընտրել՝ ըղձականի առաջին դեմքի ձևերը, որոնք բավականաչափ միօրինակ են, և որոնց ընտրությունը արդարանում է ավանդապես. ինչպես հայտնի է, դրանք գրաբարի ներկայի ձևեր են և գրաբարի քերականների համար կազմում էին քննության ելակետ (ինչպես դասական լեզուների՝ հունարենի, լատիներենի դեպքում). սակայն աշխարհաբարում դրանք մերժելի են հոգեբանորեն, որպես բայական ոչ հիմնական ձևեր: ե) Բնականաբար չեն կարող ելակետային համարվել նաև բայանվանական ձևերը, որովհետև դրանք միօրինակ չեն և կարող են լինել ոչ միայն արմատական, այլև ամենաբազմազան ածանցներով կազմված (ցատկել—ցատկ, ճաղթել—ճաղթանակ, շարժվել—շարժում, մոտեճալ—մոտեցում և այլն): զ) Այս բոլոր նկատառումները հանգեցնում են նրան, որ ժամանակակից հայերենի քերականները (և բառարանագիրները) հիմք են ընդունում անորոշ դերբայի ձևերը, որոնք, ունենալով ըղձականի առաջին դեմքի ձևերի արժանիքները, չունեն նրանց հոգեբանական թերությունը և կարող են դիտվել որպես ելակետային ձևեր: Այս դեպքում, սակայն, ստեղծվում է մի այլ դժվարություն. հիմք ընդունելով գր-ել, կարդ-ալ տիպի ձևերը («արմատ+ել» կամ «արմատ+ալ» կաղապարներ)՝ քերականներն ստիպված են փախ-չ-ել, մոտ-ենձ-ալ, իմ-անձ-ալ ձևերի դեպքում ընդունել, որ ձևաբանական առումով գրել ու կարդալ ձևերը ելակետային կաղապարներ համարվել չեն կարող, և որ փախչել, մոտենալ, իմանալ ձևերը անկախ կաղապարներ են. հակառակ դեպքում մենք ստիպված ենք խոնարհման դեպքում ընդունել միջմասնիկավորման եղանակ և դժվարացնել խոսքի մոդելավորումը (կաղապարումը) գործողությունը ետադարձ շարժումով:

3. Հոլովման համակարգի դեպքում հիմք ընդունելով ուղղականը՝ հետագա գործողությունը (պրոցեդուրան) կարելի էր հանգեցնել բառի վերջին մասի փոփոխության և վերջամասնիկավորման (վերջամասնիկների հավելման). եթե դրա վերջավորությունը նույնպես համարենք որոշ տեղ զբաղեցնող միավոր, ապա այդ երկուսն էլ վերջին հաշվով կարելի է հանգեցնել բառի վերջամասի (ներառյալ և զրոն) փոփոխության (փոխարկման): Բայի դեպքում հնարավոր է գործողության երկու այլ տիպ ևս՝ ա) ներմասնիկավորում, եթե հիմք ընդունենք ել-ով և ալ-ով վերջացող դերբայական ձևերը, ինչպես նշվեց նախորդ կետի վերջում (համմտ. գր-ել և փախչ-ել օրինակները), և բ) նախամասնիկավորում (համմտ. կասեմ, կգրեմ): Այսպիսով, եթե հոլովման դեպքում հնարավոր էին

միայն շարժում տեղում և դեպի առաջ, ապա խոնարհման դեպքում հնարավոր է նաև շարժում դեպի ետ, որ դժվարացնում է կաղապարի գործողության ավտոմատացման հնարավորությունը: Այնտեղ գործ ունեինք միայն հերթագայության և վերջամասնիկավորման, այստեղ՝ նաև միջամասնիկավորման և նախամասնիկավորման հետ: Պարզեցումը հնարավոր է միայն երկու ձևով՝ ա) ելակետ ընդունել բայահիմքերը և ոչ թե անորոշ դերբայները՝ պայմանականորեն վերականգնելով նաև այն բայահիմքերը, որոնք շեշտված դիրքում ընդհանրապես չեն հանդիպում, և բ) առանձնացնել ելակետային երկու հիմք՝ առանց **կ**-ի և **կ**-ով (աս- և կաս-): Սակայն այս դեպքում էլ խոնարհման տիպը որոշելու հարցում հարկ կլինի դիմել լրացուցիչ ձևաբանական և իմաստային կանոնների, որոնք զգալիորեն կբարդացնեն հարցի քննությունը:

4. Հոլովման ժամանակ բոլոր իմաստակիր վերջամասնիկները կարող են հանդես գալ որպես վերջավորություններ, այսինքն՝ հանդիպել վերջնային դիրքում. այդպես չէ խոնարհման ժամանակ, երբ վերջնային դիրքում կարող են հանդիպել միայն որոշ կարգի վերջամասնիկներ, իսկ մյուսները հանդիպել չեն կարող: Հոլովման ժամանակ փաստորեն հնարավոր է վերականգնել մաքուր հգյական վիճակ, որի դեպքում I կարգի (թվային) վերջավորություններով օժտված ձևերը հիմք էին ծառայում II կարգի (դասա-հոլովանիշ) վերջավորությունների, սրանցով օժտված ձևերը՝ III կարգի (հոլովանիշ) վերջավորությունների, վերջիններով օժտված ձևերն էլ՝ IV կարգի վերջավորությունների (ցուցա-որոշչային հոդերի) համար: Այդ կարելի է արտահայտել 1-ին գծագրով (էջ 225): Այլ է վիճակը խոնարհման դեպքում: Ինչպես նշեցինք, այստեղ խոնարհման հարացույցը կազմող ոչ բոլոր մասնիկները կարող են հանդես գալ որպես վերջավորություններ, և եթե վերջիններս նյութականորեն (հնչյունապես ու գրապես) չկան, ապա ենթադրելի են (զրո վերջավորություններ՝ զրոյի բազմազան արժեքներով). համմտ. գնա+մ, գնա+ս, գնա+0: Այսպիսով, բազմարժեք զրո վերջավորությունների գաղափարի ներմուծման դեպքում մենք կարող ենք տարբերել՝ 1) խոնարհման նախամասնիկներ, 2) խոնարհման հիմքակազմ վերջամասնիկներ, որոնք մենք վերևում պայմանականորեն կոչեցինք միջամասնիկներ և որոնք հանդիպում են միայն բուն վերջավորություններից առաջ (ներառյալ նաև զրո վերջավորությունները) և 3) խոնարհման բուն վերջավորություններ: Զարմանալի կերպով՝ առանց խոնարհման բուն վերջավորու-

Աղյուսակ 1

	Վերջավորություններ			
	I կարգի	II կարգի	III կարգի	IV կարգի
A	a	b	c	d
Համար				
I կարգի մասնիկավոր				
II կարգի մասնիկավոր				
III կարգի մասնիկավոր				
Հիմք				

բյուններ չկա խոնարհում, բայց այդ բուն վերջավորություններն առաջին հերթին արտահայտում են ոչ անմիջապես բայի հետ կապված իմաստներ՝ թվային (առարկաների թիվը) և դիմային (առարկաների դեմքը խոսքի կամ հաղորդակցման մեջ)։ Բայական հիմքերի և վերջավորությունների փոխհարաբերությունը, ի տարբերություն հոլովման (գծագիր 1), կարելի է արտահայտել 2-րդ գծագրով (էջ 226)։

5. Հոլովման գեպքում հոլովման վերջավորությունները արտահայտում են առաջին հերթին անմիջապես գոյական անվան (որպես առարկայի նշանակման) հետ կապված իմաստներ՝ թվային և հոլովական։ Այլ է խոնարհման դեպքում. թեև առանց խոնարհման բուն վերջավորությունների չկա խոնարհում, բայց այդ բուն վերջավորություններն առաջին հերթին արտահայտում են ոչ անմիջապես բայի հետ (որպես եղելության նշանակման) կապված իմաստներ՝ թվային (առարկաների թիվը) և դիմային (առարկաների դերը հաղորդակցման մեջ)։ Սա նշանակում է, որ բայը հանդես է գալիս ոչ միայն որպես բայ, այսինքն՝ գործողության, վիճակի, եղելության նշան (փաստորեն որպես դրանց անուն), այլև որպես նախադասության ստորոգման (լայն առումով) արտահայտիչ։ Պետք է նկատի ունենալ, որ խոնարհման հիմքակազմ վերջամասնիկները նույնպես իմաստների կրողներ են, թեև, ինչպես



հոլովման դեպքում, առկա են և ոչ իմաստակիր հիմքակազմ տարրեր: Ձևաբանական տեխնիկայի առումով բայական մասնիկների այս երեք կարգերից նախամասնիկները բավական անկախ են (իսկական կցականություն), իսկ հիմքակազմ վերջամասնիկներն ու վերջավորությունները սերտորեն կապված են նախորդ բաղադրիչներին՝ մինչև դրանց սահմանների կորստի աստիճան (ձուլում կամ ֆուզիա). համմտ., օրինակ, **տաճեմ—տարա**, որտեղ **ա–ի՝** «մաքուր» հիմքին պատկանելու, թե հիմքակազմ տարր լինելու հարցը դժվար լուծելի է, թեև ավելի հավանական է խոսել առաջին ենթադրության օգտին:

6. Հոլովման ժամանակ վերջամասնիկների համանունությունը մեծ տեղ չի գրավում, մինչդեռ խոնարհման ժամանակ այն խիստ տարածված երևույթ է: Սրա հետ կապված՝ բայի մեջ կարևոր դեր է խաղում միևնույն իմաստի արտահայտումը մեկից ավելի մասնիկներով: Կարելի է ասել, որ հոլովման ժամանակ վերջավորությունների չորս կարգերից յուրաքանչյուրը սովորաբար հանդես է գալիս որպես քերականական մեկ իմաստի կրող, մինչդեռ խոնարհման դեպքում քերականական իմաստները հաճախ արտահայտվում են մասնիկների ամբողջ կոմպլեքսներով: Այստեղ, կարելի է ասել,

մեկ բառի սահմաններում իշխում է թևքականությունը՝ կցականության որոշակի տարրերով։

7. Խոնարհման համակարգում, ի տարբերություն անունների և ի նմանություն դերանունների հոլովման, կարևոր դեր է խաղում արմատների և հիմքերի սուպլետիվիզմը (տարահիմքությունը և տարարմատությունը), այսինքն՝ միևնույն իմաստի արտահայտման համար տարբեր հարացուցային ձևերում տարբեր արմատների և հիմքերի առկայությունը։

8. Խոնարհման համակարգի քննության մեջ մենք ստիպված ենք մեծ տեղ հատկացնել փոխարկման (սուբստիտուցիայի) եղանակին, որ հոլովման դեպքում կիրառեցինք միայն սահմանափակ դեպքերում (համմտ. կանանցից ձևի մեջ –անց– մասնիկի դերի պարզաբանմանը նվիրված հատվածը)։ Փոխարկելով մեկ բայական ձևը մյուսով՝ մենք կարողանում ենք պարզել դրանց նույնականությունը և միավորել քերականական միևնույն դասերի (մասնիկները՝ կարգերի) մեջ։ Իհարկե, այս դեպքում ևս մեր ըմբռնումը ունի իր յուրահատկությունները. մենք այս դեպքում փոխարկումը կատարում ենք անկախ շարահյուսական շրջապատից։ Փոխարկման հանապարհով միայն հնարավոր է պարզել այսպես կոչված բաղադրյալ ձևերի՝ խոնարհման համակարգի մեջ մտցնելու անհրաժեշտությունը։

9. Հոլովման համակարգի քննության ժամանակ մենք պարզեցինք, որ հոլովման հարացույցը կազմող վերջամասնիկները իրար են հաջորդում որոշակի կարգով։ Բնականաբար պետք է ենթադրել, որ նույնպիսի վիճակ գոյություն ունի նաև խոնարհման հարացույցը կազմող մասնիկների դեպքում։ Հոլովման հարացույցի քննության ժամանակ մենք այս նպատակով վերցրինք վերջամասնիկների ըստ հնարավորին մեծ քանակ պարունակող կառուցվածքային կաղապարները և դրանց հիման վրա պարզեցինք վերջամասնիկների ընդհանուր փոխհարաբերությունը։ Խոնարհման համակարգի քննության դեպքում հարացույցը կազմող վերջամասնիկների առանձնացման և հաջորդման կարգի որոշումը որոշ դժվարություններ ունի, որոնք միայն մասամբ էին հանդես գալիս հոլովման քննության ժամանակ։

ա) Առաջին դժվարությունը կապված է խոնարհման հարացույցի մեջ հանդես եկող, այսպես կոչված, լծորդ ձայնավորների դերի հետ, որ առաջին հայացքից կարծես լիովին նույնական է հոլովման մեջ մասնիկների երկրորդ կարգը կազմող («դասահոլովա-

նիշ») վերջավորությունների դերին։ Բայց, ի տարբերություն «հոլովիչների», «խոնարհիչ» ձայնավորները կամ «լծորդները» հանդես չեն գալիս որպես ինքնուրույն վերջավորություններ և չունեն որոշակի տեղ[2]։ Դրանք կարող են նախորդել ամենատարբեր բնույթի մասնիկների և փաստորեն նրանց հետ մեկ որոշակի ամբողջություն կազմել՝ պատկանելով մերթ հիմքին և մերթ վերջավորությանը։ Այսպես, մոտ-եցն-եմ ձևի մեջ ե-ն նախորդում է մերթ պատճառական սեռանիշ ցն-ին, մերթ դիմանիշ մ-ին. գր-եց ձևի մեջ այն նախորդում է կերպանիշ ց մասնիկին և այլն։ Որոշ դեպքերում էլ դժվար է որոշել ձայնավորի «մաքուր», թե ձևավոր հիմքին պատկանելը (համմտ. տամ)։ Այսպիսով, խոնարհման քննության ժամանակ «լծորդները» որպես անկախ մասնիկներ քննելու դեպքում մենք պետք է ընդունեինք, որ խոնարհման համակարգում գոյություն չունի մասնիկների հաջորդման որոշակի կարգ։ Այս բանից խուսափելու համար նպատակահարմար է դրանք քննել և՛ առանձին, և՛ որպես բուն մասնիկների կազմիչներ՝ նրանց հետ կապված[3]։ Այս սկզբունքը մենք տարածում ենք նաև գր-եիր ձևի եիր կոմպլեքսի վրա՝ այն դիտելով որպես մեկ ամբողջություն. այլապես մենք ստիպված կլիներ հատուկ դեր հատկացնել միջամասնիկավորմանը. այս սկզբունքն արդարանում է նաև նրանով, որ եիր կոմպլեքսն հակադրվում է ել և եր կոմպլեքսներին, որոնց մեջ կորչում է ի-ի հատուկ դերը. այլ կերպ ասած՝ ապառնի և անցյալ ժամանակների տարբերման դերը իր վրա է վերցնում ոչ միայն ի-ի առկայությունը (համմտ. գր-ե-ս և գր-ե-ի-ր), այլև բուն դիմային վերջավորությունների (ս-ի և ր-ի) հակադրությունը։ Կարելի է նկատել, որ լծորդ ձայնավորներից ե-ն և ի-ն իմաստային չեզոքություն ունեն. դրանց փոխարեն ա-ի (կամ զրոյի) առկայությունը կապված է իմաստային որոշ արժեքների հետ։ Այդ պատճառով էլ ե-ն և ի-ն կարելի է դիտել որպես ֆոն կազմող ձայնավորներ։

բ) Երկրորդ դժվարությունը կապված է լեզվի մեջ գործող նվազագույն ձիգի և դրան զուգահեռ՝ հավելուրդայնությունից խուսափե-

---

2 Նոր քերականները լծորդներ են համարում տվորարար միայն բուն վերջավորություններին նախորդող ձայնավորները. մենք այդ անվանումը գործածում ենք ավելի լայն առումով։

3 Առաջվում է յուրատեսակ կրկնակի կաղապար՝ 1) ֆոն կազմող լծորդային և 2) նրա (որպես յուրատեսակ հիմքի) վրա ելնող՝ բուն վերջամասնիկային։ Այս հակասությունը լուծվում է, հենց որ մենք նկատի ենք ունենում լիակազապարի և այն կազմող մասնիկների մասնակազապարների տարրերման հնարավորությունը։

յու միտման օրենքների հետ։ Երբ լեզվի մեջ միևնույն իմաստը արտահայտվում է մեկից ավելի միջոցներով, ապա առաջանում է դրանցից մեկը ըստ հնարավորին վերացնելու միտում։ Այս է պատճառը, որ մնացրեցիր ձևի փոխարեն տարածվում է մնացրիր ձևը, որի մեջ կատարյալ կերպի իմաստը արտահայտվում է ացե/ր մասնիկի ե/ր հերթագայությամբ, և եց-ը դառնում է ավելորդ։ Սրա հետևանքը լինում է այն, որ եց-ը հիմքակազմ կերպամասնիկից վերածվում է դիմային վերջավորության՝ մնացր-ի, մնացր-իր, մնացր-եց շարքի մեջ։

ը) Հոնարհման համակարգում շատ ուժեղ է համաբանության (անալոգիայի) ազդեցությունը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ հարացույցի բովանդակության պլանում հանդես եկող զուգորդումների ազդեցությունը արտահայտության պլանի վրա՝ այստեղ առաջացվող համապատասխան փոփոխություններով։ Բովանդակության և արտահայտության պլանների փոխազդեցությունը առաջացնում է տատանվող զուգաձևեր, որոնցից մեկը վերջին հաշվով դուրս է մղում մյուսը և դառնում տիրապետող։ Այսպես, գնա՛—գնացե՛ք ձևերի անալոգիայով (մի՛) գնա—(մի՛) գնաք ձևերից երկրորդը փոխարինվում է (մի՛) գնացեք ձևով։ Անալոգիական ազդեցությունը կարող է հանդեցնել ձևաբանական բաղադրիչների (արմատի և վերջամասնիկի կամ երկու վերջամասնիկների) ձուլման՝ պարզեցման (опрощение), ինչպես կաղչ-եմ բայի մեջ (կաղ-չ-եմ-ից)։ Այս միտումների ազդեցությամբ պետք է բացատրել, որ գտ-ն-եմ ձևի դիմաց առկա է գտն-վ-եմ ձևը, փոխանակ սպասելի գտ-ցվ-եմ ձևի (համմտ. փախ-չեմ—փախ-ց-վ-եմ)։ Ակնհայտ է, որ գտն- խումբը գտնվում է պարզեցման ճանապարհին՝ արմատական հիմք ունեցող բռն-եմ—բռն-վ-եմ, մատն-եմ—մատն-վ-եմ և այլ բայերի օրինակով, որոնց մեջ ն-ն նույն տիպի է, ինչ մատն-եր, դռն-եր ձևերի մեջ։

դ) Հոլովման ժամանակ մենք գործ ունենք մասնիկների հաջորդման սովորական կարգը խախտող մի այնպիսի դեպքի հետ, ինչպիսին է այսպես կոչված փոխանուն տրականը («փոխանուն սեռական»)։ Փոխանուն տրականի դեպքում՝ ա) միևնույն վերջամասնիկը կարող է կրկնվել, ն բ) մի այլ մասնիկի սովորաբար հաջորդող մասնիկը կարող է նրան նախորդել. Գրիգոր-ի-ն-ի-ր ձևում («Իմ գրքի կազմը պոկված էր, Գրիգորինինը՝ ոչ») ի-ն ու ն-ն կրկնվում են, և ի-ն հանդիպում է իր համար ոչ տիպական դիրքում՝ ն-ից հետո։ Հոնարհման համակարգի ուսումնասիրությունը ևս բացահայտում է համատիպ մի դեպք՝ կապված (ա. ն)ցե/ր մասնիկի գործա-

փության հետ, մանավանգ երբ այն դուգորդվում է վ մասնիկին։ Այսպես, չ-մոտ-եց-վ-եց-իր, չ-մն-աց-վ-եց-իր ձևերի դեպքում ստացվում է եց տիպի տարրի կրկնություն. իհարկե, այս դեպքում կարելի է նշել, որ մենք գործ ունենք մասնիկների սովորական համանունության հետ, սակայն այս ձևերի համեմատությունը եց-վ չպարունակող չ-մոտ-եց-ար, չ-մնաց-իր ձևերի հետ ցույց է տալիս, որ ձևականորեն մենք գործ ունենք երկու տիպերի զուգորդման (տարասեռ կաղապարի) հետ՝ չ-մոտ-եց//-վ-եց-իր ձևի առաջին մասը անալոգիական է չ-մոտ-եց-(ար), չ-մն-աց-(իր), իսկ երկրորդը՝ (չ-փոխ)-վ-եց-իր կաղապարին։ Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ վ-ն կարող է հանդիպել միայն չ-փոխ-(վ)-եց-իր կաղապարի դեպքում, և այդ մասնիկն ստանալու համար մյուս կաղապարները պետք է զուգորդվեն այդ կաղապարի հետ։ Այս երկվությունը, իհարկե, կարող է վերացվել բովանդակության պլանի հաշվառմամբ, երբ մենք կպարզենք դրանց տարիմաստությունը, բայց առայժմ լրացուցիչ դժվարություն չառաջացնելու համար հանենք (ա, ե)ց-վ մասնիկախումբը բուն կաղապարներից։ Այս նույն նկատառումով, նկատի ունենալով, որ, ասենք, փախ-ցր-եց, փախ-ցն-եմ ձևերի ցր-եց, ցն-եմ մասնիկախմբերը տիպային որևէ տարբերություն չունեն գր-վ-եց, գր-վ-եմ ձևերի վ-եց, վ-եմ մասնիկախմբերից, առանձին (ա, ե)ցն/ր մասնիկը նույնպես բաց թողնենք կաղապարների քննության ժամանակ, մանավանդ որ այստեղ ևս մենք գործ ունենք տարասեռ կաղապարի հետ. համմտ. (փախ)-ավ և (փախ)-ցր-եց, (փախ)-չ-եմ և (փախ)-ցն-եմ։ Գր-վ-եց-իր կաղապարը քննելուց հետո փոխարկման սկզբունքով վ-ն կտեղակայենք (ե,ա)ցվ կոմպլեքսով և ապա կառանձնացնենք այդ կոմպլեքսից առանձին գործածվող (ե, ա,)ցն/ր ձևույթը։ Նպատակահարմարության տեսակետից մենք ընտրում ենք որպես ելակետային ձևեր բառակազմական մեկ ամբողջություն ներկայացնող «մաքուր» հիմքերը՝ լինեն դրանք անկախ գործածված, թե ոչ (մեծ-, առ-, կարդ-), արմատական, ածանցավոր, կրկնավոր, թե բարդ (խոս-, կտրատ-, վազվզ-, ինձաղաղ-)։ Այն դեպքում, երբ բայական ելակետային («մաքուր») հիմքերը անկախ գործածություն չունեն, դրանք վերջից օժտում ենք դծիկով (կարդ-, խոս,- կտրատ- և այլն). պետք է նկատի ունենալ, որ այս կարգի բայական հիմքերը, անկախ գործածություն չունենալով հանդերձ, որոշ դեպքերում, նախամասնիկով կամ որպես բարդ բառերի երկրորդ բաղադրիչ, կարող են հանդիպել և վերջնադիրքում (համմտ. պատմ- և նշմարտա-պա-

տում, վազ– և առագա–վազ և այլն)[4]։ Ավելորդ չենք համարում նշել, որ բայական որոշ հիմքերի անվանական անկախ գործածություն ունեցող ձևերը կարող են ծագմամբ իրոք անվանական լինել (համմտ. մեծ) կամ իրրև այդպիսին առանձնացված լինել բայական կապված ձևերից (համմտ. ցատկ), բայց արդի լեզվի կառուցվածքային քննության տեսակետից այդ հարցը էական նշանակություն չունի։ Ավելորդ չէ նշել նաև, որ բանաստեղծները շատ անուններ կարող են ազատ կերպով գործածել որպես բայական հիմքեր։ Այս բոլորը ցույց են տալիս, որ մեր ընտրած ուղին շատ դեպքերում իրեն արդարացնում է նաև ընտրված ելակետային ձևերի անկախության տեսակետից։

Բայական «մաքուր» հիմքերը անվանական «մաքուր» հիմքերի համեմատությամբ ունեն այն առանձնահատկությունը, որ վերջիններս գործածվում են միշտ իրրև եզակի ուղղականի ոչ որոշյալ ձևեր, մինչդեռ բայական հիմքերը տարարժեք են, այսինքն՝ 1) եզակի երկրորդ դեմքի հրամայականի ձևեր, 2) քայանվանական ձևեր և 3) կապված բայական հիմքեր։ Ինչպես կտեսնենք, «մաքուր» ձևերը կարող են ինքնին կերպային արժեք ունենալ (կատարյալ և անկատար), որով և որոշվում է նրանց հետագա կերպանիշ փոփոխությունների բնույթը (այս կամ այն կերպանիշ մասնիկն ստանալը կամ չստանալը. համմտ. առ–ից առ–ա և առ–ն–եմ, փախ–-ից՝ փախ–ա և փախ–չ–եմ, դարձ–ից՝ դարձ–ա և դառ–ն–ամ, գր–ից՝ գր–եմ և գր–եց–ի և այլն)։

Հաշվի առնելով վերևում ասվածները՝ հետագա քննությունը կկատարենք հետևյալ սկզբունքներով. 1) եթե լծորդ ձայնավորները անկախ (վերջնային) դիրքում չեն հանդիպում, այսինքն՝ վերջավորությունների արժեք չեն ստանում, ապա դրանք կմիացնենք հաջորդ բաղաձայնների հետ. այս դեպքում մասնիկի արժեք կվերագրենք անկախ դիրքում հանդիպող ձայնավորներին և «ձայնավոր+բաղաձայն» կապակցություններին. վերջիններիս առանձնացումը կկատարենք երկրորդաբար՝ կոմպլեքսները քննելուց հետո՝ սրանց հետ կապված. 2) քանի որ, ի տարբերություն հոլովման, որտեղ հիմքի և վերջավորության հասկացությունները փոփոխվում են

---

[4] Այդպիսի դիրքում կարող են հանդիպել նաև կերպանիշ մասնիկով օժտված հիմքերը՝ ներ–ա–գգաց, բան–իմաց և այլն։ Ինչ վերաբերում է բաց և բաց անկախ հիմքերին, ապա դրանք այժմ դիտակցվում են որպես բացել, բացել ձևերի «մաքուր» հիմքեր (բանում ձևի կողքին, իսկ բանամ ձև չկա)։ Բացառություն է կազմում դարձ արմատը (համմտ. գառնամ)։

(որոշ վերջավորություններ կարող են նախորդել այլ վերջավորություններ՝ ծառայելով նրանց համար որպես հիմքակազմ տարրեր, սրանք էլ այլ վերջավորությունների և այլն), խոնարհման ժամանակ վերջավորությունները (վերջնային դիրքում հանդիպող ձայնավորները և «ձայնավոր+բաղաձայն» կապակցությունները) հանդիպում են միայն վերջնային դիրքում, ուստի վերջավորություններին նախորդող բոլոր մասնիկները կհամարենք հիմքակազմ վերջամասնիկներ՝ անկախ իրար նկատմամբ զրաված դիրքից. նրանց դիրքային տարբերությունները ևս, ձայնավորների նման, կքննենք ամբողջական կոմպլեքսները քննելուց հետո՝ սրանց հետ կապված. այն վերջամասնիկները, որոնք այլ վերջամասնիկներից առաջ չեն հանդիպում՝ հանդես գալով միայն վերջնային դիրքում, կհամարենք վերջավորություններ (դրանք կարող են լինել մեկ կամ երկու ձայնավորից և հաջորդող մեկ կամ երկու բաղաձայնից կազմված կոմպլեքսներ՝ ա, եի, եմ, ենք, եիր, եիմք). այն վերջամասնիկները, որոնք կարող են հանդիպել այլ վերջամասնիկներից առաջ և, բացի նց-ից, ա/աց-ից, վերջնային դիրքում չեն հանդիպում, կկոչենք հիմքակազմ վերջամասնիկներ:

Այսպիսով, խոնարհման ժամանակ մենք կունենանք բառանդամ լիակազապար՝ (a+)A(+h)+c)), ընդ որում b և c տարրերը կարող են վերլուծելի լինել՝ ունենալով իրենց մանրակազապարները: Այս կազապարի համար որպես օրինակ (նմուշ) կարող է ծառայել (չ-)բեր(-եց)-ի)) բայաձևը: Եթե նկատի ունենանք, որ «մաքուր» հիմքը անկախ գործածությամբ հանդիպում է հազվադեպ, և որ այդ դեպքում էլ պետք է ենթադրել զրո վերջավորություն, ապա հիշյալ կազապարի համար հնարավոր տիպերը կարելի է արտահայտել 1-ին աղյուսակով (էջ 232):

Աղյուսակի կապակցությամբ կարելի է ասել հետևյալը. 1) բայական հնարավոր 8 տիպից ($2^3=8$) համադրական ձևերի սահմաններում իրականանում է միայն 7-ը. միայն նախամասնիկով օժտված բայաձև չի կարող հանդիպել. արտաքնապես հնարավոր չ-բեր ձևը բայական արժեք չունի. 2) (չ-)բեր(-եց)-ի))) օրինակը կարելի է ասել, միակն է, ինչպես անվան դեպքում հոլովման լիակազապարի մարդ-կ-անց-ից օրինակը. մնացած դեպքերում մենք գործ ունենք մասնակազապարների հետ. 3) նկատելի է, որ հիմքակազմ մասնիկներից զուրկ ձևերը հանդիպում են միայն որոշ կարգի վերջավորությունների դեպքում, թեև բերեմ բայի համար հնարավոր են նաև հիմքակազմ մասնիկներից զուրկ ձևեր՝ միևնույն վերջավո-

	Զուգորդման սեմպերը	Զուգորդվող միավորներ				Օրինակներ
1	A *կամ* $\overline{a}$+A+$\overline{b}$+$\overline{c}$		—	—	—	*բե՛ր*
2	aA *կամ* a+A+$\overline{b}$+$\overline{c}$	—	—	—	—	—
3	Ab *կամ* $\overline{a}$+A+b+$\overline{c}$	—	—	—	—	*բեր-եց*
4	Ac *կամ* $\overline{a}$+A+$\overline{b}$+c	—	—	—	—	*բեր-եմ, բեր-է*
5	aAb *կամ* a+A+b+$\overline{c}$	—	—	—	—	*չ-բեր-եց*
6	aAc *կամ* a+A+$\overline{b}$+c	—	—	—	—	*չ-բեր-եմ, չ-բեր-է*
7	Abc *կամ* $\overline{a}$+A+b+c	—	—	—	—	*բեր-եց-է*
8	aAbc *կամ* a+A+b+c	—	—	—	—	*չ-բեր-եց-է*

րութիւնների դեպքում (Համմտ. բեր-եմ և բեր-եց-է ու բեր-է. վերջին ձևը հատուկ է խոսակցական ոճին):

Ասածներից բխում է հետևյալ տրամաբանական տարբերությունը հոլովման և խոնարհման կազապարների միջև: Հոլովման դեպքում յուրաքանչյուր անուն ունենում է մեկ մասնակազապար՝ վերջամասնիկների տվյալ կազմով ու դասակարգությամբ (Համմտ. ընկեր-ոջ-ից-ս և fաղաք-ից-ս. որտեղ ոջ-ով ձևը հատուկ է միայն ընկեր բառին, այսինքն՝ ոջ-ը դիրքային պայմանավորվածություն ունի). եթե միևնույն գոյական անունն ստանում է մեկից ավելի (երկու) մասնակազապարներ՝ վերջամասնիկների տարբեր քանակով ու դասակարգությամբ, ապա այդ արդյունք է տարածված կազապարի անալոգիական ազդեցության, և տարածված տարբերակները ոճական (գործառական ոճ), բայց ոչ քերականական արժեք ունեն (Համմտ. ընկեր-ոջ-ից-ս և ընկեր-ից-ս): Այլ է վիճակը խոնարհման դեպքում. այստեղ մեկ բայի համար հնարավոր է միաժամանակ երեք կարգի մասնակազապար: Բերեմ բայի դեպքում, եթե բացառենք բերի, չբերի *զուգաձևերը, որոնք* բերեցի, չբերեցի *ձևերից տարբերվում են միայն ոճականորեն, հնարավոր է մասնակազապարների 3 դաս. 1) եմ տիպի վերջավորություններ ունեցող ձևերի համար. 2) ի տիպի վերջավորություններով օժտված ձևերի համար. 3) նախամասնիկազուրկ-շեշտավոր ձևերի համար: Մասնակազապարային այս տարբերությունները կարելի է արտահայտել 2-րդ աղյուսակով (էջ 234).*

Դասը	Մատնահատվածների բառնանձները	Օրինակներ
I	1. (a+)A+c	ա) (կ-)գր-եմ, (չ-)գր-եմ բ) (կ-)գն-ամ, (չ-)գն-ամ
	2. (a+)A+b+c	ա) (կ-)տես-ն-եմ, (չ-)տես-ն-եմ բ) (կ-)փախ-չ-եմ, (չ-)փախ-չ-եմ գ) (կ-)մոտ-ենն-ամ, (չ-)մոտ-ենն-ամ դ) (կ-)իմ-ան-ամ, (չ-)իմ-ան-ամ ե) (կ-)դ-ն-եմ, (չ-)դ-ն-եմ զ) (կ-)տա-ն-եմ, (չ-)տա-ն-եմ է) (կ-)դառ-ն-ամ, (չ-)դառ-ն-ամ ը) (կ-)վեր-ցն-եմ, (չ-)վեր-ցն-եմ
	3. A+c	ա) (մի՛) գր-իր, գր-եք բ) (մի՛) գն-ա(ր), գն-աք
	4. A+b+c	ա) (մի՛) տես-ն-իր, տես-ն-եք բ) (մի՛) փախ-չ-իր, փախ-չ-եք գ) (մի՛) մոտ-ենն-ա(ր), մոտ-ենն-աք դ) (մի՛) իմ-ան-ա(ր), իմ-ան-աք
II	1. (a+)A+c	ա) (չ-)փախ-ար, (չ-)տես-ար
	2. (a+)A+b+c	ա) (չ-)գր-եց-ի բ) (չ-)գն-աց-ի գ) (չ-)մոտ-եց-ա դ) (չ-)իմ-աց-ա ե) (չ-)դ-ր-ի զ) (չ-)տա-ր-ա է) (չ-)դար-ձ-ա ը) (չ-)վեր-ցր-ի
	3. (a+)A(+b)+c	ա) (չ-)բեր(-եց)-ի
III	1. A(+c) 2. A+c	ա) տես-է՛ք (տե՛ս, տես-է՛ք) ա) անց-ի՛ր (անց-ի՛ր, անց-է՛ք) բ) փախ-ի՛ր (փախ-ի՛ր, փախ-է՛ք)
	3. A((+b)+c)	ա) բեր-եց-է՛ք [բե՛ր, բեր(-եց)-է՛ք]
	4. A+b(+c)	ա) գն-աց-է՛ք (գն-ա՛, գնա-աց-է՛ք)
	5. A(+b)+c	ա) գր-եց-է՛ք [գրի՛ր, գր(-եց)-է՛ք]
	6. A+b+c	ա) մոտ-եց-ի՛ր, (մոտ-եց-ի՛ր, մոտ-եց-է՛ք) բ) իմ-աց-ի՛ր (իմ-աց-ի՛ր, իմ-աց-է՛ք)

Բոլոր բայերը ըստ մասնակազապարների դասերի կարելի է բաժանել 1) բոլոր դասերի մեջ ընդգրկված և 2) բոլոր դասերի մեջ չընդգրկված խմբերի. առաջին խմբի բայերը կարելի է կոչել լիաձև, երկրորդները՝ պակասավոր (հմմտ. եմ, եկա, գամ և այլն)։ Տարբեր դասերում իրար փոխարինող մասնակազապարներ ունեցող պակասավոր բայերը միասին առնված կոչվում են սուպլետիվ բայեր (հմմտ. գամ, եկա, ե՛կ. եմ, եղա, եղի՛ր և այլն). այս կարգի բայերը հայտնի են նախ տարարմատ բայեր անունով. եթե մենք գործ ունենք տարբեր դասերում հանդես եկող ձևավոր հիմքերի տարբերությունների հետ, ապա այսպիսի բայերը կոչվում են տարահիմք [հմմտ. ս–ամ, տվ–(եց)–ի, տո՛ւր]։

Եթե ա) 1-ին և 2-րդ դասերի տարբերությունները դիտենք իբրև հիմնական, և դրանց հիման վրա առանձնացնենք բայախմբեր, բ) 3-րդ դասի երկու ենթադասերի տարբերությունները դիտենք որպես երկրորդական, և դրանց հիման վրա առանձնացնենք ենթախմբեր, այլև գ) համառոտության համար հիմքակազմ մասնիկ չունեցող տիպը կոչենք հիմքազուրկ, ապա կարելի է առանձնացնել բայերի հետևյալ խմբերը (աղյուսակ 3).

Մասնակազապարների երեք դասերից ժամանակակից հայերենում ամենատարածվածը, ամենագործունն ու ամենաշատ հիմքերով ներկայացվածը առաջինն է, և մյուսները միտում ունեն անցնելու այս դասին. դրա հետևանքով՝ ա) որոշ բայեր ունեն կատարյալի կրկնաձևեր՝ հաճախ մյուս հատկանիշների հետ զուգորդված՝ աճ–(եմ) և աս–(ի)—աս–եց–(ի), դճ–(եմ) և դռ–(ի)—դռ–եց–(ի), տամ և տվ–(ի)—տվ–եց–(ի). բ) որոշ բայեր ունեն անկատարի (և համապատասխանաբար կատարյալի) կրկնաձևեր՝ բաճամ—բացեմ և բացի—բացեցի, լամ—լացեմ (լաց լինեմ և լացի—լացեցի և այլն)[5]։

Ըստ առաջին և երկրորդ դասերի կարելի է տարբերել հավասարավանկ և անհավասարավանկ խմբեր՝ անհավասարավանկ՝ գբեմ—գրեցի, գնամ—գնացի և հավասարավանկ՝ իմանամ—իմացա, մոտենամ—մոտեցա, տեսնեմ—տեսա, փախչեմ—փախա։

Բայի խոնարհման հարացույցի կազապարների և տիպերի քննությունը առաջին հայացքից հանդեցնում է այն մտքին, թե ան-

---

5 Ասեմ բայի 2-րդ և 3-րդ դասի մասնակազապարային ձևերը սովորաբար համընկնում են մնամ բայի ձևերի հետ (աս–աց–ի. աս–ա՛, աս–աց–ե՛ք), այսինքն՝ առկա է կազապարային տարասեռություն։

Բայեր		Մասնակցությունների դասեր			
խմբեր	ենթախմբեր	1-ին դաս	2-րդ դաս	3-րդ դաս	
				1-ին ենթադաս	2-րդ ենթադաս
I	1	խոս-եմ	խոս-ել	խոս-ի՛ր	խոս(-ել)-ի՛ք
	2	բեր-եմ	բեր-ել	բե՛ր	բեր-ե՛ք
	3	քող(ն)-եմ	քող-ել	քո՛ղ	քող-ե՛ք
	4	մն-ամ	մն-ալ	մն-ա՛	մն-ալ-ե՛ք
	5	ա-ամ (տա-մ)	ա(-ել)	առ՛	ա(-ել)-ե՛ք
II	1	առն-ում	առն-ալ	առ՛	առն-ե՛ք
	2	հաղ-ն-ում	հաղ-ալ	հաղ-ի՛ր	հաղ-ե՛ք
	3	փախ-չ-ում	փախ-ել	փախ-ի՛ր	փախ-ե՛ք
III	1	մտա-ն-ամ	մտա-նել	մտա-նի՛ր	մտա-նի՛ք
	2	իմ-ան-ամ	իմ-անալ	իմ-ացի՛ր	իմ-ացե՛ք
	3	տա-ն-ում	տար-ել	տա՛ր	տա-ր-ե՛ք
	4	գ-ն-ում	գ-ալ	գ-ի՛ր	գ-ե՛ք
	5	դառ-ն-ամ	դարձ-ել	դարձ-ի՛ր	դարձ-ե՛ք
	6	վեր-ցն-ում	վեր-ցել	վեր-ցրո՛ւ	վեր-ցրե՛ք

վան հոլովման հարացույցի կազապարներն ու տիպերն ավելի շատ են, և հետևաբար հոլովման համակարգն ավելի բարդ է։ Սակայն իրականում ավելի բարդ է խոնարհման համակարգը. 1) այստեղ մեր կողմից որպես մեկ վերջամանիկ դիտված յուրաքանչյուր կոմպլեքս ձևաբանորեն վերլուծելի է, և նրա մեջ կարելի է բացահայտել ավելի փոքր ձևաբանական տարրեր. հատկապես այդպիսին են ձայնավորները, որոնք մասամբ հայտնի են «լծորդ» անվամբ. 2) մեկ բայի խոնարհման հարացույցը կազմող ձևերը սովորաբար (եթե բացառենք «պակասավոր» բայերը) ավելի շատ են, քան մեկ անվան հոլովաձևերը. 3) մեծ թիվ են կազմում վերլուծական բայաձևերը։

Եթե առայժմ համեմատելու լինենք համադրական (մեկ բառի մեջ հանդես եկող) ձևերը, ապա կստացվի հետևյալ պատկերը.

1) Ամենալրիվ կազապարն ունեցող մարդ բառի հոլովման

Հարացույցը կընդգրկի ձևերի հետևյալ շարքերը (ներառյալ ս, ղ հոդերով ձևերը) (աղյուսակ 4).

Աղյուսակ 4

	1	2	3	4
1	մարդ	մարդը/ն	մարդս	մարդ
2	մարդա-	մարդան	մարդաս	մարդուդ
3	մարդուց	—	մարդուցս	մարդուցդ
4	մարդով		մարդովս	մարդովդ
5	մարդիկ	—	մարդիկս	մարդիկդ
6	մարդկանց	—	մարդկանցս	մարդկանցդ
7	մարդկանցից	—	մարդկանցիցս	մարդկանցիցդ
8	մարդկանցով	—	մարդկանցովս	մարդկանցովդ

2) Ամենատարածված կաղապարն ունեցող **fադաf** բառի հոլովման հարացույցը կընդգրկի ձևերի հետևյալ շարքերը (աղյուսակ 5).

Աղյուսակ 5

	1	2	3	4
1	քաղաք	քաղաքը/ն	քաղաքս	քաղաքդ
2	քաղաքի	քաղաքին	քաղաքիս	քաղաքիդ
3	քաղաքից	—	քաղաքիցս	քաղաքիցդ
4	քաղաքով	—	քաղաքովս	քաղաքովդ
5	քաղաքում	—	քաղաքումս	քաղաքումդ
6	քաղաքներ	քաղաքները/ն	քաղաքներս	քաղաքներդ
7	քաղաքների	քաղաքներին	քաղաքներիս	քաղաքներիդ
8	քաղաքներից	—	քաղաքներիցս	քաղաքներիցդ
9	քաղաքներով	—	քաղաքներովս	քաղաքներովդ
10	քաղաքներում	—	քաղաքներումս	քաղաքներումդ

Ըստ աղյուսակների՝ մարդ բառի հոլովման հարացույցն ունի $(4\times8)-6=26$ ձև, **fադաf** բառինը՝ $(4\times10)-6=34$ ձև։ Եթե զանց առնենք ս-ով և դ-ով ձևերը, ապա այս թվերը կպակասեն ավելի քան կիսով չափ (համապատասխանաբար 10 և 14)։

Այլ է վիճակը խոնարհման հարացույցի դեպքում։ Եթե զանց առնենք վերլուծական-նկարագրական ձևերը և թողնենք միայն մեկ

բառի սահմաններում հանդես եկողները, ապա նույնիսկ այդ դեպքում խոնարհման հարացույցի ձևերը քանակապես մեծ չափով կգերազանցեն հոլովման հարացույցի ձևերը։ Վերցնելով բայական ամենալրիվ օրինակի կազապարի ամենատարածված չ–խnu–վ–եց–իր օրինակի ձևերի հարացույցը և տեղ խնայելու համար առայժմ նրա մեջ զանց առնելով նախամասնիկներով և վ-ով ձևերը՝ կունենանք հետևյալ շարքերը (աղյուսակ 6).

Աղյուսակ 6

	1	2	3	4	5
1	խոսեմ	խոսեի	խոսեցի	—	—
2	խոսես	խոսեիր	խոսեցիր	(մի՛) խոսիր	խոսի՛ր
3	խոսի	խոսեր	խոսեց	—	—
4	խոսենք	խոսեինք	խոսեցինք	—	—
5	խոսեք	խոսեիք	խոսեցիք	(մի՛) խոսեք	խոսեցե՛ք
6	խոսեն	խոսեին	խոսեցին	—	—

Ըստ աղյուսակի՝ խոսեցիր ոչ լրիվ կազապարն ունի $(6\times5)-8=22$ կամ, եթե զանց առնենք շեշտի և բաշխման տարբերությունը և իբրև նույնական դիտենք խոսիր և խոսի՛ր ձևերը, 21 ձև։ Նկատի ունենալով, որ վ–ն կարող է հանդիպել բոլոր ձևերում, և կրկնապատկելով 21-ը, կունենանք 42 ձև։ Միաժամանակ նկատի ունենալով, որ 1-ին, 2-րդ և 3-րդ սյունակները կարող են ունենալ չ(ր) նախամասնիկը $(6\times3=18)$, իսկ 1-ին ու 2-րդ սյունակները՝ կ(ը) նախամասնիկը $(2\times6=12)$, կունենանք $42+18+12=72$ ձև։ Սակայն հարցը սրանով չի սպառվում. վերևում բերված հիմունքներով մենք զանց ենք առել այսպես կոչված տարասեռ կազապարները։ Եթե այժմ ավելացնենք (ա, ե)ցն/ր մասնիկով ձևերը, որոնք ուղղահայաց 4-րդ ու 5-րդ շարքերում, ի տարբերություն խոսիր–ի ու խոսի՛ր–ի, տարբերակված են՝ խոսեցնի և խոսեցրո՛ւ, ապա կստացվի $(72\times2)+1=145$ ձև։

Անցում կատարելով արտահայտության պլանից դեպի բովանդակության պլանը՝ կարելի է որոշել մեր առանձնացրած երեք կարգի մասնիկների բովանդակության պլանի հետևյալ արժեքները.

1) I (a) կարգի մասնիկները (նախամասնիկները) հիմնակա-

նում եղանականիշ արժեք ունեն (եղանակ բառի լայն առումով), այսինքն՝ արտահայտում են հաղորդողի վերաբերմունքը դեպի հաղորդումը, հաղորդման և իրականության փոխհարաբերության նրա գնահատումը։ Երկրորդաբար դրանք մասամբ կարող են արտահայտել նաև կերպային և ժամանակային իմաստներ։ Նկատի ունենալով I (a) կարգի մասնիկների հիմնական իմաստային արժեքը՝ դրանք կոչենք եղանականիշ նախամասնիկներ։

2) II (b) կարգի մասնիկները (հիմքակազմ վերջամասնիկներ) արտահայտում են հիմնականում կերպային, տիպարային և սեռային իմաստներ, այսինքն՝ ա) եղելության ընթացքը (սկսվելը, ընթացքի մեջ լինելը, թե ավարտվելը) և քանակը (մեկ, թե մեկից ավելի անգամ կատարվելը), բ) եղելության առարկայականությունը կամ «արժեքականությունը» (մեկ, թե մեկից ավելի առարկայի հետ և ինչպե՛ս կապված լինելը), գ) խոսողի կողմից եղելության օտարումը (տվյալ եղելությամբ ուրիշին օժտելը)։ Նկատի ունենալով II (b) կարգի մասնիկների հիմնական իմաստային արժեքները՝ դրանք կոչենք նաև կերպա-տիպարա-սեռանիշ վերջամասնիկներ։

3) III (c) կարգի մասնիկները (վերջավորությունները) արտահայտում են հիմնականում ժամանակային, թվային, դիմային և, վերջինիս հետ կապված, դասային իմաստներ։ Երկրորդաբար նրանք ևս կարող են արտահայտել տիպարային տարբերություններ՝ կապված լծորդ ձայնավորների հետ։ Նկատի ունենալով III (c) կարգի մասնիկների հիմնական իմաստային արժեքները՝ դրանք կոչենք նաև ժամանակա-թվա-դիմանիշ վերջավորություններ։

Խոնարհման համակարգում, այսպիսով, մենք բացահայտեցինք ութ կարգի իմաստներ՝ եղանակ, կերպ, տիպար, սեռ, ժամանակ, թիվ, դեմք և դաս։ Եթե սրանք համեմատենք անվան հոլովման համակարգում հանդես եկող քերականական իմաստների հետ, ապա կարելի է նշել հետևյալ ընդհանրություններն ու տարբերությունները։

1) Անվան թիվը զուգահեռ ունի մի կողմից՝ բայական թվի, մյուս կողմից՝ կերպի մեջ։ Բայական թիվն արտահայտում է բայի նշանակած եղելության տիրոջ քանակը։ Բայական կերպն արտահայտում է եղելության քանակը (մեկ թե մեկից ավելի անգամ կատարվելը) և ամբողջովին թե մասամբ (ըստ մասերի կարգի՝ սկզբով, վերջով թե ընթացքի մեջ) առնվելը։ Բայական կերպը բայի համար բնորոշ է և առաջնային, բայական թիվը երկրորդային բնույթ

ունի. այն արդյունք է հայերենում շարահյուսական կապակցության մի այնպիսի եղանակի առկայության, ինչպիսին համաձայնությունն է, որ ենթադրում է քերականական նիշերի կրկնություն՝ Sa—Va *ձևով:*

2) Անվան հոլովը զուգահեռ ունի տիպարի և սեռի կարդերի մեջ: Հոլովը, ինչպես հայտնի է, արտահայտում է տվյալ անվան նշանակած առարկայի հնարավոր հարաբերությունները դեպի այլ առարկաներ՝ միջնորդված եղելությամբ կամ չմիջնորդված (մտովին առնված). սեռական հոլովը[6] սովորաբար ցույց է տալիս տվյալ առարկայի հնարավոր հարաբերությունը դեպի մի այլ առարկա՝ առանց եղելության միջնորդության, մյուս հոլովները՝ դոյական անվան նշանակած առարկայի հնարավոր հարաբերությունը դեպի այլ առարկաները որևէ եղելության միջնորդությամբ կամ, կարելի է ասել, վերջին հաշվով դեպի եղելությունը: Հասկանալի է, որ եղելություն նշանակող բառերը՝ բայերը, նույնպես կարող են ունենալ ձևաբանական զանազան նիշեր, որոնք ցույց կտան առարկաների հետ նրանց նշանակած եղելությունների հնարավոր հարաբերությունները (ինչքա՜ն առարկաներ են անհրաժեշտ տվյալ եղելության իրականացման համար, և այդ առարկաներն ի՜նչ դեր են կատարում այդ իրականացման մեջ): Լայն առումով տիպարի անվան տակ ընդգրկում ենք եղելության իրականացման համար անհրաժեշտ բոլոր առարկաների առկայության հնարավորությունը. տիպարի մասնակի դրսևորումն է խնդրառությունը (տիպարից հանած ենթակայի արտահայտման հնարավորությունը), վերջինիս մասնակի դրսևորումը՝ անցողականությունը (միայն ուղիղ խնդիր ստանալու հնարավորությունը)[7]: Հայերենում, ինչպես կտեսնենք, տիպարը ձևաբանական թերի արտահայտություն ունի միայն: Տիպարի հետ կապված է սեռը, որ անցողականության ենթակարգի և հաղորդողի կողմից այն ներկայացնելու տարբերության դրսևորումն է: Սեռի կարգը կապված է մասամբ եղանակի և մասամբ տիպարի հետ:

3) Անվան դասը զուգահեռ ունի բայական դասի և դեմքի կարգերի մեջ: Բայական դասը դեմքի կարգի մասնակի արտահայտությունն է, որչափով հաղորդողը և հաղորդակիցը անձեր են՝ ի հակադրություն հաղորդման առարկայի, որ կարող է անձ չլինել: Անվան դեմքը ևս առարկաների խմբավորում է, միայն թե ըստ

---

6 *Հայերենում՝ արտական հոլովի սեռական տարբերակը:*

7 *Անդիմությունը նույնպես տիպարի դրսևորումներից մեկն է:*

հաղորդման մեջ նրանց կատարած դերին։ Այս կապակցությամբ բայական դեմքը կապվում է գոյական անվան ցուցա-դիմային հոդերի և դերանունների դեմքի հետ. կարելի է ասել նույնիսկ, որ դեմքը առաջնային է դերանվան համար և երկրորդային՝ բայի համար։ Եթե ելակետային համարենք դերանունը, ապա դեմքը կարելի կլինի դիտել որպես համաձայնության շարահյուսական եղանակի գործողության արդյունք, այսինքն՝ որպես դերանունների և անվանն ուղեկցող դիմորոշ հոդերի քերականական տվյալ հատկանիշի կրկնության՝ նույն Sa—Va բանաձևով։

4) Անվան առկայացման կարգի (լայն առումով) դրսևորումներից մեկը՝ դիմորոշությունը, ինչպես տեսանք, զուգահեռ ունի բայական դեմքի մեջ, երկրորդը՝ որոշյալությունը՝ եղանակի կարգի մեջ, որպես հաղորդողի սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորում, երրորդը՝ ցուցականությունը՝ ժամանակի կարգի մեջ, որպես հաղորդման իրադրության որոշում ըստ տեղի և ժամանակի։

Անվան և բայի քերականական կարգերի միջև անցկացված իմաստային զուգահեռները հիմք են տալիս բայական կարգերի տարբերակման համար նկատի ունենալու առաջին հերթին այն հատկանիշները, որոնց մասին խոսվել է հոլովման կարգերի կապակցությամբ, այն է՝ ինքնակայությունը և բնութագրականությունը։ Եթե հաշվի առնենք, որ անվան և բայի, որպես ենթակայի և ստորոգյալի, համաձայնությունն արտահայտում է դրանց իրական միասնականությունը, գոյակների և դրանց շարժման անխզելի կապը, ապա պետք է պահպանենք այդ երկու հատկանիշները այն կարգերի համար, որոնք բայի մեջ հանդես են գալիս երկրորդաբար՝ որպես բայի նշանակած գործողության սուբյեկտի համար ինքնակա ու բնութագրական և այդ կապակցությամբ նրա գործողության «անվան» մեջ նշանակվող կողմեր։ Միաժամանակ՝ պետք է պահպանենք այդ հատկանիշները բայական այն կարգերի համար, որոնք ներհատուկ են բային որպես նրա նշանակած եղելությունը (շարժումը, գործողությունը, վիճակը) բնորոշող կողմեր։ Հասկանալի է, որ այս դեպքում ինքնակայությունը կլինի միջնորդական (գոյական անվան՝ որպես եղելության տիրոջ հետ կապված) և անմիջական (բային ներհատուկ)։ Այս դեպքում, սակայն, հարկավոր է նշել, որ եթե հոլովը անվան համար մենք դիտեցինք որպես անինքնակա, ապա բայի համար, որպես առարկաների հարաբերությունների արտահայտչի, տիպարը կլինի ինքնակա։ Այսպիսով, ինքնակա կլինեն տիպարը, կերպը (անմիջաբար), դասն ու թիվը (միջնորդաբար)։

նույն հիմունքով բնութագրականությունը (նկարագրականությունը) հատուկ կլինի տիպարին, սեռին (անմիջաբար), դասին և դեմքին (միջնորդաբար)։ Այս երկու հատկանիշին միացնենք ներհատուկությունը (բայի էությունը կազմելը, նրան ներհատուկ լինելը)՝ ի հակադրություն աննհատուկության (այլ խոսքի մասերին ևս հատուկ լինելը և բայը երկրորդաբար, համաձայնությամբ կամ հաղորդման հետ կապված, բնութագրելը). ներհատուկ են տիպարը, կերպը, սեռը և ժամանակը, աննհատուկ են դասը, թիվը, դեմքը և եղանակը։ Չի կարելի չնկատել, որ ինքնակայության և բնութագրականության հատկանիշները բայական կարգերի նկատմամբ նույնությամբ կիրառելը որոշ արհեստականություն ունի և հնարավորություն չի տալիս անմիջապես բացահայտելու բայական կարգերի ներքին փոխհարաբերությունը։ Կարելի է նկատել, որ բնութագրականության հատկանիշով միավորվող կարգերը արտահայտում են առարկաների զանազան խմբավորումներ՝ լեզվա-իմացական ու հաղորդակցային պլաններով. և սա հասկանալի է. բնութագրականությունը կարող է լինել միայն առարկայական՝ առարկաների բնութագրում։ Սրա հիման վրա բնութագրականության փոխարեն կարելի է օգտագործել առարկայականություն անվանումը՝ իմաստային համապատասխան մեկնաբանությամբ։ Կարելի է նկատել նաև, որ ինքնակայության հատկանիշով միավորվող կարգերը (տիպար, կերպ, դաս, թիվ) լեզվա-իմացական արժեք ունեն՝ ի տարբերություն անինքնակա կարգերի (եղանակ, սեռ, ժամանակ, դեմք), որոնք լեզվա-հաղորդակցային և, վերջին հաշվով, իրադրական արժեք ունեն։ Եթե, այսպիսով, ինքնակայություն—անինքնակայության հակադրության փոխարեն մտցնենք անիրադրականություն—իրադրականություն հակադրությունը, և իբրև մեկնակետ ընդունենք իրադրականության (resp. որոշյալության, հաղորդակցայնության, ստորոգության) հատկանիշը (=անինքնակայություն)[8], ապա խոնարհման կարգերի և դրանց առանձնացման համար հիմք ծառայած հատկանիշների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 7-րդ աղյուսակով (էջ 243)։

Բայական ներհատուկ կարգերը հիմնականում արտահայտվում են հիմքակազմ մասնիկներով, ոչ-ներհատուկները՝ վեր-

8 Հաղորդակցայնության կամ իրադրականության հատկանիշը փաստորեն նույնն է ստորոգության հետ՝ այդ բառի լայն առումով։

Ի՞նչ հատկություններ ունեն մետաղները (ոչ մետաղները)	մեխ	մետաղներ	ժանգոտվում է	ներկում է	ալկալիներում լուծվում է	ալկալիներում չի լուծվում է	ջրածին է անջատում թթուների հետ	ջրածին չի անջատում թթուների հետ	ալկալիներում լուծվում է ջրածին անջատելով	ալկալիներում չի լուծվում ջրածին չի անջատում	ալկալիներում լուծվում է ջրածին չանջատելով	ալկալիներում չի լուծվում ջրածին անջատում է
Ելրշտաոոտ մետաղներ են (ոսկի, պլատին)	+	+				+		+		+		+
Մետաղներ են, որոնք ալկալիներում լուծվում են ջրածին անջատելով (բեռիլ, ցինկ, ալյումին, կապար)	+	+	+	+	+		+		+			
Մետաղներ են, որոնք ալկալիներում լուծվում են ջրածին չանջատելով (պղինձ, արծաթ, սնդիկ, պղնձի սուլֆատ)	+	+	+									

ջամասնիկներով ու վերջավորություններով։ Արտաքնապես բացառություն է կազմում ժամանակի կարգը. սակայն ավելի խորացված քննությունը բացահայտում է ժամանակի երկու դրսևորում՝ հաչորդականություն և իրադրական ժամանակ։ Հաչորդականությունը սերտորեն կապված է կերպի հետ և սովորաբար նույնացվում է նրա հետ. այն արտահայտվում է ինքնուրույն դրծածության չունեցող ու փաստորեն հիմքային արժեք ստացած գրում, գրել, գրի (գնում, գնացել, գնա) «դերբայական» ձևերի միջոցով, և, հետևաբար, հիմքակազմ տարրերի հետ է կապված։ Իրադրական ժամանակը իրադրային (որոշյալ) արժեք ունի և կապված է դիմային, այլև, որոշ վերապահությամբ, եղանակային տարբերությունների հետ։ Այսպիսով, սեռը, տիպարը, կերպը և հաչորդականությունը հանդես են գալիս նաև անդեմ ձևերի մեջ, մնացած կարգերը՝ միայն դիմավոր ձևերի մեջ (verbum finitum)։

Պահպանելով Հոլովման համակարգի քննության մեջ կիրառված սկզբունքը՝ մենք այստեղ ևս հիմք կընդունենք արտասանության և գրության բնական կարգը (արտասանության մեջ նախորդից հաչորդը և գրության մեջ ձախից աչ)։ Այս դեպքում կքննվի նախ եղանակը, ապա կերպը, տիպարն ու սեռը և վերջապես ժամանակը, դեմքն ու թիվը (դեմքի հետ կապված նաև «դասը»)։ Քննությունը փաստորեն կկատարվի ըստ մասնիկների կարգի՝ նախամասնիկներ, հիմքակազմ վերջամասնիկներ և վերջավորություններ։

2. ԵՂԱՆԱԿԻ ԿԱՐԳԸ

Եղանականիշ բուն մասնիկները չ(ը) և կ(ը) նախամասնիկներն են. երկրորդաբար եղանականիշ արժեք են ձեռք բերում վերջավորությունները՝ հիմքային որոշ տարբերությունների հետ միասին. վերջիններիս եղանակային արժեքը պարզելու համար որոշենք նրանց զուգորդելիությունը նախամասնիկների հետ (աղյուսակ 8, էջ 245)։

Ըստ աղյուսակի՝ առկա է բայական վերջավորությունների և դրանցով օժտված բայաձևերի 3 խումբ՝ 1) և՛ չ(ը)-ի, և՛ կ(ը)-ի հետ զուգորդվող, 2) չ(ը)-ի հետ զուգորդվող և կ(ը)-ի հետ չզուգորդվող, 3) ո՛չ չ(ը)-ի և ո՛չ կ(ը)-ի հետ զուգորդվող։ Վերջին կարգի բայաձևերն ունեն առոգանական և շարակարգային լրացուցիչ տարբերիչներ ևս՝ մի մասը հանդես է գալիս միշտ շեշտված, մյուս մասը՝ շեշտակիր մի՛ բառ-մասնիկից հետո։

Վիճակավորության թյուններ	Ներգործական դերբայական թյուններ		Օրինակներ
	չ(ը)-ի հետ	կ(ը)-ի հետ	
(ա, ե)մ	+	+	չգնամ, չգրեմ, կգնամ, կգրեմ
(ա, ե)ս	+	+	չգնաս, չգրես, կգնաս, կգրես
(ա, է)	+	+	չգնա, չգրի, կգնա, կգրի
(ա, ե)նք	+	+	չգնանք, չգրենք, կգնանք, կգրենք
(ա, ե)ք	+	+	չգնաք, չգրեք, կգնաք, կգրեք
(ա, ե)ն	+	+	չգնան, չգրեն, կգնան, կգրեն
[ա(յ), ե]մ	+	+	չգնամ, չգրեմ, կգնամ, կգրեմ
[ա(յ), ե]ս	+	+	չգնաս, չգրես, կգնաս, կգրես
(ա, ե)ր	+	+	չգնար, չգրեր, կգնար, կգրեր
[ա(յ), ե]ինք	+	—	չգնայինք, չգրեինք, կգնայինք, կգրեինք
[ա(յ), ե]իք	+	+	չգնայիք, չգրեիք, կգնայիք, կգրեիք
[ա(յ), ե]ին	+	+	չգնային, չգրեին, կգնային, կգրեին
(ա, է)	+	—	չիմացա, չգնացի
(ա, է)ր	+	—	չիմացար, չգնացիր
—	+	—	չգնաց
(ա)վ	+	—	չիմացավ
եց	+	—	չմոտեցրեց
(ա, է)նք	+	—	չիմացանք, չգրեցինք
(ա, է)ք	+	—	չիմացաք, չգրեցիք
(ա, է)ն	+	—	չիմացան, չգրեցին
ու	—	—	մոտեցրո՛ւ
—	—	—	առի՛ա, գնա՛
ր		—	տո՛ւր
իր	—	—	գրի՛ր, (մի՛) դրիր
ա(ր)	—	—	(մի՛) մոտենա(ր)
եք	—	—	գրեցեք, (մի՛) գրեր
աք	—	—	(մի՛) գնաք

Անցնելով բայանգակության՝ պետք է պարզել հետևյալը. 1) առաջին խմբի բայաձևերը (գնամ, գրեմ, գնայի, գրեի) ցույց են տալիս հաղորդակի համար ցանկալի և հնարավոր (գնամ,

գրեմ) կամ ցանկալի, բայց ոչ հնարավոր (գնայի, տեսնեի) եղելություններ. օգտագործելով ավանդական անվանումը՝ սրանք կարելի է կոչել ըղձական բայաձևեր. 2) երկրորդ խմբի բայաձևերը (գնացի, գրեցի, իմացա, փախա) ցույց են տալիս՝ հաղորդողի կողմից հավաստի համարվող եղելություններ. օգտվելով ավանդական անվանումից՝ սրանք կոչենք սահմանական բայաձևեր. 3) երրորդ խմբի բայաձևերը (տե՛ս, գնա՛, գրի՛ր) ցույց են տալիս հաղորդողի կողմից ընդունողին (խոսակցին) պարտադրվող եղելություններ. օգտվելով ավանդական անվանումից սրանք կարելի է կոչել հրամայական բայաձևեր։

Իսկ ի՞նչ լրացուցիչ իմաստներ են արտահայտում չ(ը) և կ(ը) նախամասնիկները։ Սրանցից երկրորդը՝ կ(ը)-ն, ինչպես տեսանք, կարող է դրվել միայն ըղձական բայաձևերի վրա. այն ցույց է տալիս հաղորդողի կողմից հաստատաբար, որոշակիորեն ենթադրվող եղելություն։ Օգտագործելով ավանդական անվանումը՝ կ(ը)-ով օժտված բայաձևերը կարելի է կոչել ենթադրական։ Քանի որ կ(ը)-ն հաստատ, որոշակի ենթադրություն արտահայտող մասնիկի արժեք ունի, ուստի կ(ը)-ով օժտված կ(ը)գնամ, կ(ը)գրեմ տիպի բայաձևերը սահմանական եղանակի արժեք են ստանում, մանավանդ որ որպես հավաստի արձանագրվող յուրաքանչյուր ապագա (ապառնի) եղելություն ենթադրական է։ Մյուս կողմից՝ յուրաքանչյուր ենթադրություն հենվում է որոշ պայմանի վրա, ուստի առանց կ(ը)-ի (ըղձական) ձևերի հետ զուգորդվելու դեպքում՝ վերջիններս արտահայտում են պայման, կ(ը)-ով (ենթադրական) ձևերը՝ որոշ պայմանով կատարելի եղելություն (հմմտ. «եթե գա, կգնամ» կամ «եթե գար, կգնայի»). այստեղից էլ ծագում է կ(ը)-ով ձևերի պայմանական անվանումը։

Չ(ը) նախամասնիկը ժխտական արժեք ունի, այսինքն՝ ցույց է տալիս, որ հաղորդողը հաղորդվող եղելությունների կատարման ցանկալիությունը կամ հավաստիությունը ժխտում է (չգնամ, չգնայի, չգնացի)։ Քանի որ գնայի, գրեի ձևերն արտահայտում են հնարավոր ցանկություն կամ իղձ, ուստի և չգնայի, չգրեի ձևերը արտահայտում են կատարված, բայց ոչ ցանկալի եղելություն (եղելություն, որի կատարված չլինելը ցանկալի է)։ Հրամայական բայաձևերի դեպքում, երբ հարկ կա արտահայտել, որ հաղորդվող եղելությունը չպետք է կատարվի, չ(ը)-ի փոխարեն հանդես է գալիս շեշտակիր մի՛ բառ-մասնիկը, որով օժտված ձևերը հայտնի

են «արգելական հրամայական» անունով։ Իսկ ինչպե՞ս է արտահայտվում եղթադրության ժխտումը, քանի որ երկու նախամասնիկների հաջորդումը հայերենում անհնար է (*չ-կ-գնամ), ուստի և լեզվի մեջ հանդես են գալիս չեմ գնա, չեմ գրի, չէի գնա, չէի գրի վերլուծական (բաղադրյալ) ձևերը, որոնք համապատասխանում են կգնամ, կգնայի, կգրեմ, կգրեի ձևերին՝ որպես ժխտականների՝ հաստատականներին։

Այն հանգամանքը, որ ժխտական—ոչ-ժխտական (հաստատական) բաժանումը, համադրական և ոչ համադրական ձևերի օգտագործմամբ, տարածվում է մնացած բոլոր ձևերի վրա (ըղձական, ենթադրական, սահմանական, հրամայական՝ վերջինիս համար արգելական—ոչ-արգելական տարբերակմամբ), մեզ հիմք է տալիս ժխտման կարգը առանձնացնելու բուն եղանակի կարգից։ Թերևս ավելի ճիշտ կլիներ ընդունել եղանակի երկու ենթակարգ՝ ժխտման և վերաբերողական։ Ժխտման ենթակարգը կունենա երկու եզր՝ ժխտական և ոչ-ժխտական կամ հաստատական, ընդ որում արգելականը կլինի ժխտականի դիրքային տարբերակը։ Վերաբերողական ենթակարգը կամ բուն եղանակը ոչ այլ ինչ է, եթե ոչ հաղորդման (խոսքի) եղանակավորման (մոդալականության) մասնակի դրսևորումը բայի խոնարհման հարացույցի մեջ՝ հատուկ եղանականիշ թեքույթների օգնությամբ։ Եղանակավորումը հաղորդող (խոսող) սուբյեկտի և հաղորդման օբյեկտիվ բովանդակության, այլ կերպ ասած՝ հաղորդողի վերաբերմունքի դրսևորումն է ոչ միայն բայի հարացույցի, այլև եղանականիշ բառերի, հնչերանգի, շարադասության միջոցով։ Վերևում մենք տեսանք, որ ըղձականի և ենթադրականի հակադրությունն իրականացվում է կ(ը)-ի բացակայությամբ և առկայությամբ։ Իսկ ի՞նչ միջոցներով են իրականացվում ըղձականի և սահմանականի, սահմանականի և հրամայականի, հրամայականի և ըղձականի հակադրությունները բայի համադրական ձևերի մեջ։ Դրանք իրականանում են վերջավորությունների և վերջավորությունների ու հիմքակազմ տարրերի զուգորդումների միջոցով։ Բայի խոնարհման կարգերի ընդհանուր քննության ժամանակ մենք տարբերեցինք մասնակազապարների 3 դասեր, արդ կարելի է ասել հետևյալը. 1) սահմանականին են պատկանում՝ ա) II դասի մասնակազապարներն ամբողջությամբ, բ) I դասի 1 ա մասնակազապարներն ունեցող առժեմ, գիտեմ, ունեմ, եմ, կամ բայերը (սրանցից առաջին երեքը ունեն նաև 2 գ մասնակազապարին պատկանող ձևեր՝ առժ-են-ամ, գիտ-են-ամ, ուն-են-

ամ, որոնք եմ-ին ու կամ-ին համապատասխանող սուպլետիվ լինեմ և կենամ ձևերի հետ միասին պատկանում են ըղձական եղանակին). գ) այս նույն բայատիպերի մ-ից զրկված առժե-, գիտե-, ե-, կա- հիմքերի և II դասի 2բ, 2գ, 3ա մասնակազապարներին հատուկ ի, իր, ր, իճ, իֆ, իճ վերջավորությունների զուգորդմամբ կազմվող ձևերը (ա-ից հետո ավելանում է յ ձայնակապը). 2) ըղձական եղանակն ընդգրկում է I դասի 1 ու 2 մասնակազապարներին պատկանող բոլոր բայաձևերը՝ բացառությամբ վերևում հիշված ահմանական հինգ բայատիպերի, որոնց համապատասխանում են առժ-են-ամ, գիտ-են-ամ, ուն-են-ամ, լինեմ, կենամ ըղձական բայատիպերը. 3) հրամայական ընդգրկում է I դասի 2, 4 և III դասի բոլոր մասնակազապարներին պատկանող ձևերը:

Եթե վերանանք արտահայտության պլանից և նկատի ունենանք բուն եղանակային իմաստները (եզրերը), ապա դրանց հակադրությունը կարելի է արտահայտել երկու հատկանիշի օգնությամբ՝ ցանկականություն և ուղղվածություն (ուղղվածություն դեպի հաղորդակիցը) (աղյուսակ 9).

Աղյուսակ 9

Հատկանիշներ	Եղանակային իմաստներ			
	հրամայական	ըղձական	ահմանական	ենթադրական
Ցանկականություն	+	+	−	−
Ուղղվածություն	+	−	+	−

Եղանակային իմաստների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել նաև 10-րդ համադրական աղյուսակով.

Աղյուսակ 10

Ուղղվածություն	Ցանկականություն	
	ցանկականություն	ոչ-ցանկականություն
Ուղղվածություն	հրամայական	ահմանական
Ոչ-ուղղվածություն	ըղձական	ենթադրական

Նշելի է նաև, որ՝ ա) հրամայականն ու ենթադրականը բնութագրվում են հաղորդողի սուբյեկտիվ ակտիվությամբ, սահմանականն ու ըղձականը՝ ոչ, բ) ենթադրականը, որպես որոշակի (հաստատ) եղելության արտահայտիչ, ձեռք բերելով ուղղվածություն՝ ստանում է սահմանականի արժեք, ձեռք բերելով ցանկական երանգ և ուղղվածություն՝ հրամայականի արժեք:

3. ԿԵՐՊԻ ԿԱՐԳԸ

Կերպի քերականական կարգը արտահայտության պլանում բնութագրվում է առաջին հերթին աճ, ացՙ եճ, եցՙ ձ, ճ, շ, ր հիմքակազմ վերջամասնիկներով: Երկրորդաբար կերպային արժեք է ստանում կ(ը) նախամասնիկը: Ինչ վերաբերում է ոչ-բաղադրյալ ու բաղադրյալ (համադրական ու վերլուծական) և բաղադրյալ ու կրկնաբաղադրյալ (երկրորդական բաղադրյալ) ձևերի հակադրությամբ արտահայտվող կերպային իմաստներին, ապա այդ մասին կխոսվի առանձին: Ինչպե՞ս են բաշխվում հիշյալ կերպանիշ վերջամասնիկները. 1) դիմելով քերականական կարգերի ընդհանուր քննության ժամանակ բացահայտված մասնակաղապարների աղյուսակին՝ պարզում ենք, որ աճ, եճ, ճ, շ վերջամասնիկները հանդիպում են միայն I դասի, ացՙ եցՙ ճՙ ր վերջամասնիկները՝ II և III դասերի դեպքում. 2) դիմելով ըստ մասնակաղապարների դասերի բաշխվող բայերի խմբերին ու ենթախմբերին՝ պարզում ենք, որ այդ վերջամասնիկները բաշխվում են ոչ հավասարապես. այլ կերպ ասած՝ մեկ շարքին պատկանող տվյալ մասնիկի դիմաց միշտ չէ, որ գրտնում ենք մյուս շարքին պատկանող մի այլ մասնիկ, այլ երբեմն գրո, երբեմն էլ մեկից ավելի մասնիկներ: Կերպային մասնիկների հակադրությունները ըստ բայերի 3 խմբերի արտահայտվում են հետևյալ ձևով (աղյուսակ 11).

Աղյուսակ 11

Կերպային վերջամասնիկներ	Բայերի խմբեր ըստ մասնակաղապարային դասերի							
	I խումբ		II խումբ		III խումբ			
	գր-	պն-	առն-	փախ-	մոտ-	իմ-	տա-ղ(ը)-վերց-	դառ/բ-
I շարք	—	—	ն	շ	են	ան	ն	ն
II շարք	եց	ացՙ	—	—	եց	ացՙ	ր	ճ

Աղյուսակը ցույց է տալիս, որ կերպային իմաստների (եզրերի) հակադրության եղանակները միանգամայն տարբեր են բայերի 3 խմբերի համար։ Եթե սրանք համեմատելու լինենք հոլովման համակարգում հանդես եկող այնպիսի մի կարգի արտահայտության եղանակի հետ, ինչպիսին թիվն է, ապա կարելի է նշել, որ անվան թվի դեպքում դրա վերջավորությունը միշտ հանդես է գալիս որպես հակադրության մեկ (եզակիի), իր. ներ և այլ մասնիկները՝ որպես մյուս եզրի (հոգնակիի) արտահայտիչ. կերպի դեպքում զրոն հանդես է գալիս մերթ որպես մեկ, մերթ որպես մյուս եզրի արտահայտիչ, այսինքն՝ մենք գործ ունենք երկու տարբեր (հակադիր իմաստներ արտահայտող) զրո մասնիկների հետ։ Նկատի ունենալով և դրո մասնիկի տարբեր արժեքները՝ հիշյալ աղյուսակը ավելի ճիշտ կլիներ արտահայտել հետևյալ կերպ (աղյուսակ 12).

Աղյուսակ 12

Կերպային վերջամասնիկներ	Բայերի խմբեր ըստ մասնակատարողական դասերի					
	I խումբ	II խումբ		III խումբ		
I շարք	(ա, ե)ց	ն	∅	(ա, ե)ն	ն	ն
II շարք	(ա, ե)ց	$\overline{\text{ն}}$	$\overline{\text{∅}}$	(ա, ե)ց	ր	∅

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ մենք գործ ունենք կերպի արտահայտության երկու տիպի հետ՝ մասնիկավորում և հերթագայություն, ընդ որում հերթագայությունն այս դեպքում հանդես է գալիս որպես մասնիկների կամ մասնիկային տարրերի հերթագայություն. միայն տամ/տվեցի/տա՛ր տիպի դեպքում առկա է ա/վ/ու կերպային լրացուցիչ հերթագայությունը. I և II խմբի բայերի դեպքում կերպի արտահայտության համար օգտագործվում է մասնիկավորումը [որ կարելի է մեկնաբանել որպես —/(ա, ե)ց, ն/—, չ/— հերթագայություններ], III խմբի բայերի դեպքում՝ ն/ց, ն/ր, ն/∅ և, լրացուցիչ կերպով, ա/վ/ու հերթագայությունները։

Անցնելով արտահայտության պլանից բովանդակության պլանին՝ կարելի է պարզել, որ I և II շարքերի տարբերությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ անկատարի և կատարյալի կամ, ավելի ճիշտ, ոչ-եղրայնության և եղրայնության իմաստային հակադրության արտա-

հայտություն։ Կատարյալ կամ եզրային կերպը ցույց է տալիս եղելության սկսվելը կամ ավարտվելը, անկատարը՝ ընթացքի մեջ գտնվելը՝ առանց եզրային (սկզբի կամ ավարտի) սահմանափակման։ Այսպիսով, կատարյալ կերպը կարող է ունենալ երկու դրսևորում՝ սկսնական և ավարտային. կատարյալ ասելով հասկանում են երկրորդը։ Կերպի եզրերի փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 3-րդ և 4-րդ գծագրերով.

Գծագիր 3



Գծագիր 4



Անցյալ և ապառնի ժամանակների դեպքում, երբ խոսողը (հաղորդողը) որոշ իմաստով գնահատում է եղելությունը, կատարյալ և անկատար կերպերի հակադրությունը հանդես է գալիս որպես որոշակիության (հավաստիության) և անորոշության յուրատեսակ արտահայտություն։ Մասամբ սրա հետ է կապված այն հանգամանքը, որ՝ 1) բուն հրամայականը կատարյալ կերպին հատուկ հիմք ունի՝ ի տարբերություն մի՛-ով ուղեկցվող (արգելական) հրամայականի, որ ունի անկատարի հիմք [համմտ. իմացի՛ր, իմացե՛ք և (մի՛) իմանա(ր), (մի՛) իմանա՛ք]. 2) կ(ը) նախամասնիկը, որ հիմնականում եղանակային արժեք ունի, ձեռք է բերում կերպային արժեք

(կատարյալ ապառնի) և իրեն այդպիսին հակադրվում է անկատար ապառնիի ձևերին (այդ թվում յու-ով կազմվող բաղադրյալ ձևերին. համմտ. կգնամ և գնալու եմ, որոնց փոխհարաբերությունը նույնն է, ինչ գնացի և գնացել եմ ձևերինը):

Այս բոլոր ասածների հիման վրա կարելի է անել այն բնական եզրակացությունը, որ բայական արմատներին ինքնին հատուկ է կերպային արժեք, և որ բայերի 3 խմբերը դրսևորում են կերպիմաստային տարբերություններ. 1) I խմբի բայերի արմատները (գր-, գն-) ինքնին անկատարի արժեք ունեն, և դրանք կատարյալ դարձնելու համար հարկավոր է կցել կատարյալություն արտահայտող հատուկ վերջամասնիկներ (եց. ացնել). 2) II խմբի բայերի արմատները (տես-, փախ-) ինքնին կատարյալ են, և դրանք անկատար դարձնելու համար հարկավոր է կցել անկատարություն արտահայտող հատուկ վերջամասնիկներ (ն, չ). 3) երրորդ խմբի բայերի արմատները [մոտ-, իմ-, տա-, դ(ր)-, դառ/ր-, վեր-] կերպային չեզոքություն ունեն և անկատար կամ կատարյալ արժեք ստանալու համար պետք է օժտվեն մի դեպքում՝ ան, են, ն, մյուս դեպքում՝ ացնել, եցնել, ն, չ, մասնիկներով:

Համադրական (ոչ բաղադրյալ) բայական ձևերի մեջ կա՞ն արդյոք այլ կարգի կերպային տարբերություններ:

I շարքի ան և են մասնիկների ուսումնասիրությունը բացահայտում է մի շարք բայերի դեպքում, հենց միևնույն դասի ներսում, ան-ով, են-ով և առանց դրանց արտահայտված ձևերի տարբերություն՝ 1) լող-(ամ)/լող-ան-(ամ). ցոլ-(ամ)/ցոլ-ան-(ամ), այլև ծխ-(ամ)/ծխան-(ամ). կաղ-(ամ)/կաղ-ան-(ամ). 2) ուզ-(եմ)/ուզ-են-(ամ), արժ-(եմ)/արժ-են-(ամ), գիտ-(եմ)/գիտ-են-(ամ), ուն-(եմ)/ուն-են-(ամ): Կարելի է նկատել, որ —/ան տարբերիչն ունեցող բոլոր բայերի և ուզ-(եմ)/ուզ-են-(ամ) բայի դեպքում զույգ ձևերի առաջին և երկրորդ խմբերի տարբերությունն առաջ է բերում նաև խոնարհման մասնակատարական տարբերություններ II դասի ձևերում՝ լողամ—լողացի և լողանամ—լողացա, ուզեմ—ուզեցի և ուզենամ—ուզեցա. մնացած բայերի դեպքում առկա է II դասի միայն մեկ ձև՝ են-ով ձևերին համապատասխան՝ արժեմ—արժենամ և արժեցա (չկա արժեցի). գիտեմ—գիտենամ և գիտեցա (չկա գիտեցի). ունեմ—ունենամ և ունեցա (չկա ունեցի):

Եթե այժմ համադարձության սկզբունքով փորձենք պարզել բերված զույգերի իմաստային տարբերությունները, ապա կարելի է ասել, որ մենք այստեղ գործ ունենք երեք կարգի տարբերություն-

ների հետ՝ կերպային, տիպարային և ժամանակային[9]։ Եթե բացառենք տիպարային ու ժամանակային տարբերությունները և հաշվի չառնենք ուզեմ—ուզեցամ տիպի զույգերի ձևական երանգի տարբերությունը (գրական և խոսակցական-բարբառային), ապա կարելի է ասել, որ տարբերությունը հանգում է հիմնականում տևականության և, մի շարք դեպքերում, երբ տիպարային տարբերությունները մղվում են երկրորդ պլանը, միակատարություն-բազմակատարության կերպային հակադրությանը. համմտ. լող(ամ) և լողաց(ամ), ցոլ(ամ) և ցոլաց(ամ). առժ(եմ) և առժեց(ամ). գիտ(եմ) և գիտեց(ամ). ուց(եմ) և ուցեց(ամ)։

Առժ–եց–(ամ)/առժ–(եմ), գիտ–եց–(ամ)/գիտ–(եմ), ուց–եց–(ամ)/ուց–(եմ) զույգերի համեմատությունը հանդես է բերում բաշխման մի հետաքրքիր տարբերություն. եց–ով ձևերը կարող են զուգորդվել կ(ը)– նախամասնիկի հետ (կառժեցաս, կգիտեցաս, կուցեցաս), իսկ առանց եց–ի ձևերը՝ ոչ (առժես. գիտես. ուցես). այս սկզբունքով մենք հայտնաբերում ենք երկու այլ բայ ևս, որոնք կ(ը)–ի հետ չեն զուգորդվում և, հետևաբար, բաշխման բնույթով նույնարժեք են այս բայաձևերի հետ, թեև ինքնին եց–ով ձևեր չունեն (լրացվում են այլ բայերի ձևերով)՝ եմ [լրացվում է լինե–(եմ) և եղ–(ա) բայերի ձևերով] և կամ [լրացվում է կենե–(ամ) բայի ձևերով, ընդ որում կատարյալի վերջավորությունները շեղվում են համապատասխան գնամ բայի ձևերից, որոնք ավելի ընդհանրացած են՝ կացար՝ գնացիր–ի դիմաց]։

Այսպիսով, անկատար-կատարյալ կերպային հակադրությանը միանում է մասնակի դրսևորում ունեցող (սահմանափակ բայեր ընդգրկող) միակատար—բազմակատար (և, սրա հետ կապված, ոչ երկարատև—երկարատև) հակադրությունը, որը, ինչպես ցույց է տալիս անվանումը, եղելության քանակական (երկարատևության դեպքում՝ չափական) արտահայտությունն է՝ եղելության մեկ, թե մեկից ավելի անգամ կատարվելու ձևաբանական արտահայտությունը։ Հետևողականության դեպքում մենք պետք է այստեղ միացնենք նաև այսպես կոչված բազմապատկական կերպի իմաստ արտահայտող այնպիսի միջոցները, ինչպիսիք են արմատի կրկնությունը (վազվզեմ, գոռգոռամ և այլն) և հատուկ ածանցների առկայությունը (կտրատեմ, խոցռտեմ և այլն)։ Սրանք առանձնացվում են

[9] Նկատելի է, որ լողամ–լողանամ զույգի դեպքում բերականական տարբերությունը ուղեկցվում է բառային (լողանամ ձևը կազմված է լոգանամ ն լողամ ձևերի խառնումով (կոնտամինացիայով)։

միայն այն պատճառով, որ այդ միջոցները անմիջապես չեն կապված խոնարհման հարացույցի տարբերությունների հետ, այլ ավելի շուտ բառակազմական արժեք ունեն: Այդպես է վիճակը նաև մի անգամ—մի ֆանի անգամ—շատ անգամ բառերի գործածության դեպքում, որ առաջացնում է կերպային տարբերություն, բայց դուրս է բայի խոնարհման հարացույցից:

Խոնարհման բերականական կարգերի ընդհանուր քննության ժամանակ մենք մատնանշեցինք, որ բայական կերպը զուգահեռ է անվանական թվին: Ավելի հիշտ կլիներ ասել, որ կերպային իմաստների արտահայտման միջոցների ամբողջությունը զուգահեռ է անվան թվի արտահայտման միջոցների ամբողջությանը: Ինչպես հայտնի է, անվան թիվն արտահայտվում է ոչ միայն թվանիշ մասնիկներով, այլև կրկնությամբ և առանձին բառերով՝ թվականներով ու դերանուններով: Բայական կերպի երկու դրսևորումներից անկատար-կատարյալությունը համապատասխանում է դասական թվականների ընդհանուր իմաստներին՝ առաջին, միջին, վերջին. անկատարը համապատասխանում է միջինին, եզրայինը՝ առաջինին և վերջինին: Միակատարություն-բազմակատարության եզրերը համապատասխանում են թվի կարգի երկու եզրերին՝ մեկ և մեկից ավելի: Սակայն ինչպես որ անվան դեպքում այս հակադրությունը կարող է փոխարինվել ընդհատական-անընդհատական (զանգվածային) հակադրությամբ, բայի կերպի դեպքում ևս առկա է համատիպ իմաստային երանգ:

Հնարավո՞ր է արդյոք կերպի երկու դրսևորումները բերնց երկուական եզրերով նկարագրել երկու միասնական հատկանիշով, թե՞ դրանք միանգամայն տարբեր բերականական կարգեր են: Բնականաբար միակատարության հատկանիշը կիրառելի չէ կատարյալության որևէ եզրի նկատմամբ, և ընդհակառակն: Այդպիսի հատկանիշներ այնուամենայնիվ կարելի է գտնել: Ամենից առաջ որոշենք այս երկու դրսևորումների տարբերիչ հատկանիշը. այն ամբողջականությունն է. 1) միակատարության դեպքում եղելությունը կամ եղելությունները դիտվում են որպես ամբողջություններ, նրանց առանձին մասերի (կազմիչների) վրա ուշադրություն չի դարձվում. 2) եզրայնության դեպքում, ընդհակառակն, եղելությունը մասնատվորվում է, և ուշադրությունը կենտրոնացվում է նրա սկզբի, վերջի կամ միջին մասի վրա: Որպես երկու դրսևորումներից յուրաքանչյուրի եզրերի տարբերիչ հատկանիշ կարելի է ընտրել տևականությունը. անկատար և բազմակատար կերպերը երկարատևային են,

կատարյալ և միակատար կերպերը՝ ոչ։ Կերպային իմաստների (4 եզրերի) և դրանց նկարագրության համար հիմք ընդունվող հատկանիշների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 13-րդ վերլուծական աղյուսակով.

Աղյուսակ 13

Կերպային հատկանիշներ	Կերպային իմաստներ			
	Միակատարություն		Եզրայնություն	
	միակատար կերպ	բազմակատար կերպ	կատարյալ կերպ	անկատար կերպ
Ամբողջականություն	+	+	—	—
Երկարատևություն	—	+	—	+

Աղյուսակը կարելի է ներկայացնել և համադրական ձևով (աղյուսակ 14).

Աղյուսակ 14

Ամբողջականություն	Տևականություն	
	երկարատևություն	աներկարատևություն
Ամբողջականություն	Բազմակատար (տևական) կերպ	Միակատար (ոչ-տևական) կերպ
Անամբողջականություն	Անկատար կերպ	Կատարյալ կերպ

Առնելով միևնույն ժամանակների և, ըստ հնարավորության, միևնույն եղանակների ներսում եղած հակադրությունները՝ կունենանք համադրական ձևերի հետևյալ շարքերը (աղյուսակ 15, էջ 256).

Համադրական ձևերի մեջ ներկա ժամանակի համար կերպային հակադրություն չի իրականանում. այն իրականանում է համադրական և ոչ համադրական (պարզ կամ ոչ բաղադրյալ և բաղադրյալ) ձևերի միջոցով (համմտ. ունեմ—ունենում եմ), բայց այդ մասին հետո։

Աղյուսակը պարզում է, թե ինչո՛ւ կ-ով ձևերը կարող են փոխարինել հրամայականին՝ արտահայտելով հորդորական հրամանն

Կերպ		Համառակներ	
		անցյալ	ապառնի
Ամբողջական	Անկատար	Ունի	1. (Մի՛) ունենա 2. Ունենաս
	Կատարյալ	Ունեցա	1. Ունենա՛ր 2. Կունենաս
Սերնդական	Միակատար (ներկարատ)	Լողացի (1. Գրեցի) (2. Վազեցի)	Լողամ (1. Գրեմ) (2. Վազեմ)
	Բազմակատար (երկարատ)	Լողայի (1. գրոտեցի) (2. վազվզեցի)	Լողանամ (1. գրոտեմ) (2. վազվզեմ)

4. ՏԻՊԱՐԻ ԿԱՐԳԸ[10]

Կերպի քննարկման ժամանակ պարզվեց, որ միևնույն անկատարություն—կատարյալություն կերպային հակադրությունն իրականացվում է տարբեր միջոցներով և այդ միջոցների օգտագործման տարբեր եղանակներով։ Օգտագործման եղանակների տարբերությունը կապելով արմատների կերպիմաստային տարբերությունների հետ՝ մենք չբացատրեցինք միևնույն եղանակի դեպքում տարբեր միջոցների առկայության փաստը. այսպես, I խմբի բա-

[10] *Տիպարի բերականական կարգի ըմբռնումը, որին հեղինակը հասել է ինքնուրույն հանապարհով՝ բայի ձևաբանական կատեգորիաների վերլուծության և անվան բերականական դասի հետ անցկացված զուգահեռի հիման վրա, մասամբ համապատասխանում է արժույթի (արժեբականություն, ВАЛЮТНОСТЬ) ըմբռնմանը։ Այս դեպքում էլ տարբերությունն այն է, որ հեղինակը հենվում է ձևաբանական չափանիշների վրա, մինչդեռ արժույթի ելակետը շարահյուսական հարաբերություններն են. կարելի է ասել, որ արժույթը տիպարի շարահյուսական, տիպարը՝ արժույթի ձևաբանական արտահայտությունն է։ Արժույթը, ինչպես հայտնի է, բնութագրվում է բայի արտահայտած եղելության մեջ ընդգրկված առարկաների բանակով և հարաբերության ուղղությամբ (այդ իմաստով հատկապես անցողական բայերի դեպքում)։ Սևով բերականական կարգը, որի մեջ պայմանականորեն միավորում ենք պատճառականության և կրավորականության ենթակարգերը, բնութագրում է արժույթի այս երկու կողմերի՝ եղելության մեջ ընդգրկված առարկաների քանակի ավելացմամբ (պատճառականություն) և ուղղության փոփոխությամբ (կրավորականություն)՝ ըստ հաղորդակցման կարիքների։*

յերի դեպքում կերպային հակադրությունն իրականացվում էր մասնիկների —/եց և —/աց, II խմբի բայերի դեպքում՝ ն/—, չ/—, III խմբի բայերի դեպքում՝ են/եց, ան/աց, ն/ր, ն/ձ հերթագայություններով: Պետք է կարծել, որ այս տարբերությունները մոտավորապես այն տիպի են, ինչ անվան հոլովման համակարգում այսպես կոչված հոլովումների, այն է՝ դասա-հոլովանիշ վերջամասնիկների (վերջավորությունների) միջոցով արտահայտվող տարբերությունները: Նշվեց, որ դրանք պայմանավորված են հիմքերի հնչական, իմաստային, հնչա-իմաստային կամ բառակազմական և պատմական առանձնահատկություններով: Բացահայտելով և բացառելով հնչական (ձևական), բառակազմական և պատմական գործոններով պայմանավորված տարբերությունները՝ մենք հանգեցինք անվանական դասի (համմտ. տիպար) քերականական կարգի առկայության գաղափարին՝ մի կարգ, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ անվանական դասակարգում՝ ըստ տվյալ հասարակության (ներկա դեպքում՝հայերենով խոսողների) ընկալման, ըստ այն բանի, թե առարկաների և հասկացությունների դասակարգման հիմքում տվյալ հասարակության անդամները ի՛նչ հատկանիշներ են դնում, ի՛նչ տարբերություններ են կարևոր համարում և մղում առաջին պլանը:

Այս կապակցությամբ նախ պարզենք, թե կերպանիշ հերթագայությունների ո՛ր տարբերություններն ունեն իմաստային հիմք և որո՛նք են պայմանավորված բայական հիմքերի հնչական (ձևական), բառակազմական և պատմական առանձնահատկություններով: Եթե բացառենք եզակի դեպքերը, այդ թվում ն/ձ–ն, որ արդի հայերենում միայն դառն/րձ հիմքի հետ է կապված (դառնամ—դարձա, իսկ բառնամ—բարձեցի զույգի առաջին անդամը փոխարինվել է բարձեմ–ով), ապա կերպանիշ հերթագայությունների և նրանց ոչ-կերպանիշ տարբերությունները պայմանավորող գործոնների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 16-րդ աղյուսակով (էջ 258).

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը. 1)—/եց–ը ժամանակակից հայերենի ամենատարածված և ամենագործուն տիպն է, որի առկայությունը գրեթե չի պայմանավորված հիշյալ գործոններից որևէ մեկով (նրան պատկանելը շատ հազվադեպ միայն որոշվում է պատմական գործոնով). այլ կերպ ասած՝ —/եց-ի գործածությունը հնչական, բառակազմական ու իմաստային որևէ սահմանափակություն չունի, և նրանով ձևավորվում են բոլոր այն

Կերպային տարբերիչներ	Սրանց ոչ-կերպային տարբերությունները պայմանավորող գործոնները			
	հնչական	բառակազմական	պատմական	իմաստային
—/եց	−	−	+(?)	−
—/աց	+	+	+	+
ն/—	+	+	+	−
չ/—	+	+	+	+
են/եց	+	+	+	−
ան/աց	−	−	+	+
ն/ր	+	+	−	+

հիմքերը, որոնց գործածությունը չի սահմանափակվում մյուս տարբերիչների համար նշված պայմաններով. այն բնականաբար պետք է հանվի տիպարային տարբերիչների թվից. 2) ն/—-ի ու են/եց-ի գործածությունը նույնպես իմաստային հիմք չունի, և նրանք նույնպես պետք է հանվեն տիպարային տարբերիչների թվից. 3) կերպատիպարային բոլոր տարբերիչների գործածությունը այս կամ այն չափով պատմական հիմք ունի. բացառություն չի կազմում նույնիսկ —/եց-ը. 4) հնչական և բառակազմական գործոններով պայմանավորված է —/աց. ն/—, չ/—, են/եց. ն/ր տարբերիչների գործածությունը:

Նախքան իմաստային գործոնի քննությանն անցնելը պարզենք մյուս գործոնների ազդեցության կոնկրետ պայմանները կերպատիպարային տարբերիչների համար 17-րդ աղյուսակով (էջ 259)[1].

Մենք վերևում առանձնացրինք իմաստային գործոնով պայմանավորված գործածություն ունեցող —/աց. չ/—, ան/աց, ն/ր մասնիկները: Դժվար չէ նկատել, որ —/աց և ան/աց տարբերիչների դեպքում տիպային իմաստի հիմնական կրողները ձայնավորներն են («լծորդները»), իսկ բաղաձայնական տարրերը արտահայտում են հիմնական կերպային իմաստներ. չ/— և ն/ր տարբերիչների դեպքում այդպիսի տարբերակում չկա, և մենք գործ ունենք համանունության հետ:

Երկրորդաբար տիպարային արժեք են ձեռք բերում բաղադրյալ (ա, ե)ցն/ր և պարզ վ մասնիկները (համմտ. ճալ-չ-իմ և

[1] *Բացառում ենք —/եց ինդիանրական տարբերիչը:*

Հոլովման տիպերի համարները	Դրանց բնորոշման պայմանները
—/ա,յ	1. Կ, կա, կլա, կրա, ռա/ռա վերջածանցներով օժտված հիմքերի դեպքում. 2. Յուցակով որոշվող մի շարք հիմքերի դեպքում, որոնք՝ ա) բառակազմական տեսակետից բնորոշվում են վերջածանցավոր ու բարդ տիպերի բացակայությամբ և կրկնավոր տիպի հաճախականությամբ, բ) հնչյունական տեսակետից՝ երկուսից ավելի ոչ-նախամասնիկավոր և երկրորդ վանկում ա ունեցող տիպերի բացակայությամբ, գ) իմաստային տեսակետից՝ բնաձայնությունների հաճախականությամբ դ) պատմական տեսակետից՝ ա-ով բայական հիմքով.
ն/—	1. Ինչների հրամայականի արմատ ունեցող միավանկ հիմքերի դեպքում (բացի բե՛ր-ից և գա՛ր-ից, որոնցից երկրորդը ունի և գարի՛ր զուգահեռ ձևը)՝ ա՛ռ, ե՛լ (ելի՛ր զուգահեռով), բո՛ղ, առ՛ա. 2. Ածց-, բուս-, գա-, ընկ-, իջ-, կալ-, հապ-, հաս-, հատ-, հեծ-, մեռ-, մոռ-, պրծ- միավանկ հիմքերի և դրանցից բաղադրված հիմքերի դեպքում, եթե վերջիններս ն-ն չեն կորցնում. 3. Բոբրաս- երկվանկ հիմքի դեպքում.
չ/—	Թիպ-, թաֆ-, թռ-, կոռ-, կպ-, հանգ-, սառ-, ուռ-, փախ-, փակ-, փլ- միավանկ հիմքերի դեպքում.
ան/ացը	1. Ընից եկող և առանձին անգործածական բաղկ-, գլ-, բնթ-, իմ-, լվ-, խոստ-, հասկ-, ճի-, մռո-, ուր- միավանկ և ձանձր-(ձանձիր-ից) միավանկացած հիմքերի դեպքում. 2. Անկախ գործածությամբ ածականի արժեք ունեցող հիմքերի դեպքում. 3. Անկախ գործածությամբ գոյականի արժեք ունեցող գոգ, լող, մահ, վ(ի)շտ, ցավ և այլ հիմքերի դեպքում.
ենք/ենց	Առժ-, արբ-, գիտ-, կամ-, կար-, կ(ե)-, հագ-, հոռ-, մեռ-, մոռ-, վախ-, ուզ-, ուն- հիմքերի դեպքում, որոնք պատմականորեն վերջում ի կամ ե են ունեցել (կամ այժմ ի ունեն), և որոնց այդ ձայնավորը ձուլվել է հաջորդ ա-ի հետ՝ տալով նոր մասնիկ (իա>ե, եա>ե, եա>է).
ե/ը	1. Ա-(ե/ը-), դ-(ե/ը-), առա-(ե/ը-) միավանկ հիմքերի դեպքում. 2. Պատմականորեն ց վերջամասնիկ ունեցող լց-, հարց- հիմքերի դեպքում. 3. ցն/ը վերջամասնիկով բնորոշվող (ապառնիական) հիմքերի դեպքում. 4. ալ-ով վերջացող փոխառյալ հիմքերի դեպքում, որոնց [illegible]

հալ–վ–եմ), որոնց բուն ֆունկցիան սեռային տարբերությունների արտահայտումն է, այսինքն՝ հաղորդակցային պլանի ապատարկումը:

Անցնելով բովանդակության պլանին և օգտագործելով ավանդական անվանումները՝ կարելի է ասել, որ —/ացⷭ աճ/ացⷭ չ և վ տարբերիչները անանցողականության, ճ/ր, (ա, ե)ցճ/ր տարբերիչները՝ անցողականության արտահայտիչներ են: Սակայն այս անվանումները հենվում են շարահյուսական հարաբերությունների առաջնության վրա, շարահյուսական մակարդակից են գնում դեպի ձևաբանականը. նրանք նկատի ունեն տվյալ բայի մոտ ուղիղ խնդրի առկայությունը կամ բացակայությունը. այնինչ ձևաբանական մակարդակում մենք գործ ունենք ոչ թե հարաբերությունների, այլ հարաբերությունների հնարավորության՝ որպես հատկանիշների հետ, ուստի և ավելի ճիշտ կլիներ ընտրել բայիմաստի տիպարային տարբերությունները ավելի լավ բնորոշող անվանումներ: Այս դեպքում անցողականությունը կարելի է մեկնաբանել որպես գործողայնություն (գործողության նիշի առկայություն), անանցողականությունը կամ ներակայությունը՝ որպես վիճակայնություն. այլ կերպ ասած՝ հիշյալ տարբերիչները արտահայտում են գործողայնություն և վիճակայնություն: Սրանց տարբերությունը հեշտ կլինի հասկանալ իմացաբանորեն, եթե ներմուծենք պատճառի և հետևանքի գաղափարները. գործողությունն առնվում է բուն հետևանքի (որպես պատճառ), վիճակը՝ անկախ հետևանքից: Այս բանն առանձնապես լավ է երևում (ա, ե)ցճ/ր մասնիկի դեպքում, որ և կոչվում է պատճառական:

Եթե մի կողմ թողնենք (ա, ե)ցճ/ր և վ մասնիկները, որոնք սեռանիշ մասնիկներ են, ապա մյուս մասնիկներից որպես անանցողականության կամ վիճակայնության արտահայտիչներ հանդես են գալիս երեքը՝ —/ացⷭ աճ/ացⷭ չ: Իսկ ինչո՞ւ միևնույն վիճակայնության համար մենք ունենք երեք տարբերիչ: Ինչպես նշվել է, չ-ն հանդես է գալիս միայն որոշ կարգի հիմքերի դեպքում և, հետևաբար, դիրքային տարբերակ է (փոփոխակ) և ոչ թե անփոփոխակ: Ինչ վերաբերում է —/ացⷭ և աճ/ացⷭ տարբերիչներին, ապա, նրանց փոխհարաբերությունը պարզելու համար կարելի է դիմել այնպիսի զույգերի, որոնք տարբերվում են միայն այդ մասնիկներով: Այս դեպքում էլ հարկավոր է բացառել կերպային այնպիսի տարբերությունները, ինչպիսիք են ցոլ–/ցոլ–աճ– և լող–/լող–աճ– զույ-

գերինը։ Դիմելով ծխ–/ծխ–ած–, կաղ–/կաղ–ած– *գույգերին՝ մենք պարզում ենք, որ նրանց դեպքում առկա է իմաստային այնպիսի հակադրություն, որ կարելի է մեկնաբանել որպես տիպարային (կերպային երանգով). ած/ացը արտահայտում է փոխարկում, վերածում, նոր հատկանշի ձեռքբերում, —/ացը՝ ոչ։ Այսպիսով, մենք գործ ունենք փոխարկայնություն—ոչ-փոխարկայնություն հակադրության հետ, որի ելակետային եզրի տարբերիչը ած/ացն է։*

Ինչպես անվանական դասի (ներառյալ անվան սեռը), այնպես էլ տիպարի դեպքում հնարավոր են արտահայտության և բովանդակության պլանների հակասություններ։ Գործողայնություն—վիճակայնություն հակադրության դեպքում այդ հակասությունը առանձնապես ցայտուն է դառնում, երբ հակադրությունը մեկնաբանում ենք որպես անցողականություն—անանցողականություն հակադրություն։ Այսպես, —/ացի դեպքում անցողական են ած–, ափսոս–, (?), բաղձ–, զգ(ա)–, ըղձ–, կարդ–, ճոգ–, հոտոտ– (?), մուր–, որս–, տենչ–, ած/ացի դեպքում՝ գող–, զլ–, իմ–, լվ–, խոստ–, հասկ–, ճդ–, մոռ–, ուր–, ստ(ա)–, են/եցի դեպքում՝ գիտ–, կամ–, ուզ–, ունհիմքերը։

Մի շարք դեպքերում տիպարային առումով չեզոք —/եցը կարող է ձեռք բերել տիպարային արժեք և հակադրվել մերթ —/ացին, մերթ ած/ացին. 1) երեր–եց– և երեր–ացգ, թվ–եց– և թվ–ացծխ–եց– և ծխ–ացկրճտ–եց– և կրճատ–ացգույգերի դեպքում, ինչպես տեսնում ենք, գործողության և վիճակայնության հակադրությունն իրականանում է —/եց և —/աց մասնիկների (վերջին հաշվով, ե, ա լծորդների) միջոցով, թեև վերջինս սահմանափակվում է գրեթե միայն նշված դեպքերով, ընդ որում՝ ա) երեր–եց– ձևը խիստ սակավադեպ է, բ) թվ–եց– և թվ–ացձևերի տարբերությունն ըմբռնվում է որպես առանձին (համանուն) բայական հիմքերի տարբերություն, գ) այս հակադրությունն էլ չեզոքանում է մի շարք բաղադրյալ ձևերի մեջ (համմտ. երերում եմ, թվում եմ. ծխում եմ, կրճտում եմ). 2) կոպտ–/կոպտ–եց– և կոպտ––ած–/կոպտ–ացչերմ–/չերմ–եց– և չերմ–ած–/չերմ–ացտիր–/տիր–եց– և տիր–ած–/տիր–ացգույգերի դեպքում փոխարկայնություն—ոչ-փոխարկայնություն հակադրությունն իրականանում է —/եց և ած/ացտարբերիչների միջոցով, ընդ որում՝ ա) բարդ–(եմ) և բարդ–ած–(ամ), գնդ–(եմ) և գնդ–ած–(ամ), դիզ–(եմ) և դիզ–ած–(ամ), ձև–(եմ) և ձև–ած–(ամ), սեղմ–(եմ) և սեղմ–ած–(ամ), օտար–(եմ) և օտար–ած–(ամ) գույգերի դեպքում տեղի է ունենում ոչ-փոխարկայ-

նության—փոխարկայնության և անանցողականության—անցողականության հակադրությունների համատեղում. բ) ծանծաղ-(եմ) և ծանծաղ-ան-(ամ), ծարավ-(եմ) և ծարավ-ան-(ամ), կարմր-(եմ) և կարմր-ան-(ամ), կծվ-(եմ) և կծվ-ան-(ամ), ցրտ-(եմ) և ցրտ-ան-(ամ) դույզերի դեպքում առկա է փոխարկայնության իմաստային եզրերի հակադրության չեզոքացում՝ դրա վերածումով ազատ բաշխման (դույզերի առաջին անդամները գալիս են հնից, նորմավորված գրական են և նույնիսկ հատուկ գրքային ոճին, երկրորդները նոր են կազմված և ավելի հատուկ են խոսակցական ոճին): Այսպիսի չեզոքացում հնարավոր է նաև շ-ի դեպքում՝ սառ-շ-(եմ) և սառ(ն)-ան-(ամ). գ) —/եց-ի դեպքում փոխարկայնության և ոչ-փոխարկայնության իմաստների հանդես գալը կախված է հիմքերի բնույթից. ածականների դեպքում մենք սովորաբար գործ ունենք փոխարկային իմաստների հետ (համմտ. ազատեմ=«ազատ գարձնեմ», աղտոտեմ «աղտոտ դարձնեմ» և զառամեմ «զառամ դառնամ, զառամանամ», բնդեմ «թունդ դառնամ, թնդանամ» և այլն): Առանձնապես հաճախ է հանդիպում ան/ացֆ-ի փոխարինո —/եց-ի փոխարկային իմաստով գործածությունը գոյականական «մաքուր» հիմքերի դեպքում՝ գնդ-եմ «գունդ դարձնեմ», խմբեմ «խումբ դարձնեմ» և այլն: Երկրորդաբար հնարավոր է, որ ածականակերտ որոշ ածանցներ ստանան բայածանցների արժեք և արտահայտեն փոխարկական իմաստ: Այդպիսի ածանցի տիպական օրինակ է ավոր-ը. լինելով ածականակերտ ածանց՝ այն սովորաբար գոյականներից կերտում է «տվյալ բանն ունեցող» իմաստով ածականներ. դառնալով բայահիմք և ստանալով ե ֆ-ի հետ միասին նշանակում է «տվյալ բանն ունեցող դարձնել»=«օժտել»: Սա հիմք է տալիս գոյականներից անմիջաբար բայեր կերտելու ավոր-ի միջնորդությամբ, այսինքն՝ թև → թևավոր — թևավորեմ տիպի եռանդամ շարքը փոխարինվում է ոգի → **ոգևորեմ** (*ոգիավորեմ) տիպի երկանդամ շարքով: Այսպիսով, ոչ միայն վիճակի, այլև գործողության ներսում նկատվում է փոխարկայնություն—անփոխարկայնության հակադրությունը, բնականաբար, գոյականական անկախ գործածություն ունեցող բայական հիմքերի դեպքում՝ դասեմ—դասավորեմ, նևեմ—նևավորեմ և այլն, թեև մեծ թվով դեպքերում առանց ավոր-ի ձևերը ևս կարող են փոխարկական իմաստ արտահայտել՝ բեռնեմ=բեռնավորեմ, շղթայեմ=շղթայավորեմ և այլն՝ երանգային մասնակի տարբերությամբ: Հնարավոր է նույնիսկ եմ—ավորեմ ձևերի դեպքում «զրկեմ»—«օժտեմ» իմաստային հա-

կատրուիլյունը՝ փեաուիմ—փեուրավուրեմ: Որոշ դեպքերում ավոր-ը կարող է արտահայտել անցողական—անանցողականի հակադրությունը՝ դիմեմ—դիմավուրեմ:

Վերանալով արտահայտության պլանից և ամփոփելով տիպարային իմաստների մասին վերևում ասվածները՝ կարող ենք սահմանել տիպարային երեք իմաստ՝ գործողային (անցողական, արտակայական), վիճակային (անանցողական, ներակայական) և փոխարկային: Այս իմաստները սերտորեն կապված են կերպային իմաստների հետ, և պատահական չէ, որ նրանք արտահայտվում են կերպային տարբերիչների միջոցով: Գործողային տիպարի դեպքում իրական աշխարհի երևույթների շղթայից տվյալ լեզվով խոսողները առանձնացնում են մի օղակ (եղելություն)՝ բնութագրելով այն որպես պատճառա-հետևանքային հնարավոր հարաբերություն: Վիճակային տիպարի դեպքում այդ օղակը՝ եղելությունն առնվում է ինքնակայուն՝ անկախ այդ հարաբերությունից: Փոխարկային տիպարի դեպքում նկատի է առնվում արտահայտվող հատկանշի փոփոխականությունը՝ այն, որ տեղի է ունենում հատկանշի անցում իր հակադիր եզրին: Եթե առարկան նշանակենք մեծատառերով, հատկանշները՝ փոքրատառերով, ապա փոխարկային տիպարը կարելի է արտահայտել (Aā)→a բանաձևով [ոչ-փոխարկայինը՝ (A)ā /(A)a-ով], այսինքն՝ լեզվի մեջ նշվում է ոչ թե այն հատկանիշը, որ կորավում է, այլ այն հատկանիշը, որ ձեռք է բերվում՝ «(Հակոբը) խելոքացավ»=«(Հակոբը ոչ խելոքից) դարձավ խելոք»:

Եթե գործողության և վիճակայնության հակադրությունն արտահայտենք որպես մեկ հատկանշի երկու հնարավոր հակադիր եզրեր՝ գործողայնություն—ոչ-գործողայնություն կամ անցողականություն—անանցողականություն (օբյեկտ ստանալու հնարավորություն), իսկ փոխարկայնությունը՝ որպես փոխարկայնություն—ոչ-փոխարկայնություն, ապա տեսականորեն հնարավոր կլինեի 4 եզր՝ անանցողական-փոխարկային, անանցողական-ոչ-փոխարկային, անցողական-փոխարկային և անցողական-ոչ-փոխարկային: Բայական հայերենում տիպարի կարգի ներսում այս 4 եզրերից իրականանում է միայն 3-ը. անցողականի ներսում չկա փոխարկային—ոչ-փոխարկային հակադրությունը. ճիշտ է, ան/ացո-ով բայերից (ա, ե)ցն/ր սեռանիշ մասնիկի օգնությամբ երկրորդաբար կարելի է կերտել անցողական բայեր (ծխ-ան-ամ—ծխ-ացն-եմ), բայց այս դեպքում էլ չեզոքանում է —/ացո-ի և ան/ացո-ի հակադրությունը (ծխ-ամ → ծխ-ացն-եմ և ծխ-ան-ամ → ծխ-ացն-եմ):

Հայերենի տիպարային իմաստների և նրանց խմբավորման համար հիմք ծառայած հատկանիշների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 18-րդ աղյուսակով.

Աղյուսակ 18

Հատկանիշներ	Տիպարային իմաստներ		
	վիճակայնություն		գործողայնություն
	փոխադարձային	ոչ-փոխադարձային	
Ներակայություն (անանցողականություն, անօբյեկտայնություն, վիճակայնություն)	+	+	—
Փոխադարձայնություն	+	—	—

Տիպարային իմաստները կարող են արտահայտվել համադրական և վերլուծական-նկարագրական եղանակներով։ Համադրական եղանակների մասին վերևում խոսվեց և լրացուցիչ կերպով կխոսվի սեռի քերականական կարգի քննության կապակցությամբ։ Եթե նկատի առնենք համադրական միջոցներն ու եղանակները, ապա կստացվի հետևյալ պատկերը (աղյուսակ 19)[12].

Աղյուսակ 19

Տիպարային իմաստներ		Արտահայտության միջոցներ					
		—/ացող	ան/ացող	չ/—	ն/ր	վ	(ա,ե)ցն/ր
Գործողայնություն		—	—	—	+	+	—
Վիճակայնություն	ոչ-փոխադարձային	+	—	+	—	—	+
	փոխադարձային	—	+	—	—	—	+

5. ՍԵՌԻ ԿԱՐԳԸ

Ժամանակակից հայերենի սեռանիշ վերջամասնիկները երկուսն են՝ (ա, ե)ց(ն/ր) և վ։

[12] Ձանց ենք առնում վերևում բերված բացատրությունները (ա յծորդով արտահայտվող անցողականությունը և այլն)։

(Ա, ե)ց(ն/ր) *մասնիկը փաստորեն եռաբաղադրիչ է՝ բաղկացած հետևյալ երեք տարրերից. 1) ց, որ մասնիկի իմաստի բուն կրողն է և ծագմամբ նույնը կատարյալի ց-ի հետ. 2)* ա, ե *ձայնավորներ, որոնք նույնն են կատարյալի հիմքի* ա, ե *ձայնավորների հետ և որոնց բացակայությունը որոշվում է կատարյալի հիմքում նրանց բացակայությամբ (զրո մասնիկով կատարյալի դեպքում)՝* խոս-ե-ց→խոս-ե-ց-ն/ր-, մն-ա-ց → մն-ա-ց-ն/ր-, մոռ-ե-ց-→մոռ-ե-ց-ն/ր-, իմ-ա-ց-→իմ-ա-ց-ն/ր, մտ-→մտ-ց-ն/ր-, փախ-→փախ-ց-ն/ր. *3)* ն/ր, *որ նույն է ն/ր կերպա-տիպարանիշ մասնիկի հետ* (ա-ն/ր-, դ-ն/ր-, տա-ն/ր-), *և որի բացակայությունը որոշվում է հաջորդող վ-ի առկայությամբ: Այսպիսով, այս մասնիկը հանդես է գալիս դիրքային 9 տարբերակով (փոփոխակով)՝* անց, եցն, ցն, ացր, եցր, ցր, աց, եց, ց[13]: *Առաջին 6 տարբերակներով օժտված բայաձևերը խոնարհվում են III խմբի 6-րդ ենթախմբի բայերի նման՝* վեր-ցն-եմ, վեր-ցր-ի, վեր-ցր-ո՛ւ, վեր-ցր-ե՛ք, *վերջին երեք տարբերակներով (և վ-ով) օժտված ձևերը՝ I խմբի 1-ին ենթախմբի բայերի նման՝* խոս-եց-վ-եմ, խոս-եց-վ-եց-ի, խոս-եց-վ-ի՛ր, խոս-եց-վ-ե՛ք:

վ *մասնիկը դիրքային տարբերակներ չունի, բայց նրա առկայությունը մի շարք դեպքերում կապված է հիմքային և մասնակազապարային փոփոխությունների հետ. 1)* վ-ն *կարող է հանդիպել ինչպես նախորդ* (ա, ե)ց(ն/ր) *մասնիկի ուղեկցությամբ, այնպես էլ առանց նրա. 2)* վ-ն *դրվում է պարզ հիմքի վրա միայն I խմբի 1-ին և 2-րդ ենթախմբերի բայերի դեպքում՝* գր-(եմ)—գր-վ-(եմ), բեր-(եմ)—բեր-վ-(եմ). *մնացած բոլոր բայերի դեպքում այն կարող է դրվել միայն հիմքակազմ զանազան մասնիկներից հետո՝ ա) I խմբի 3-րդ և II խմբի 1-ին ու 2-րդ ենթախմբերի բայերի դեպքում՝* ն-ից *հետո՝* թող-(ն)-(եմ)—թող-(ն)-վ-(եմ), տես-ն-(եմ)—տես-ն-վ-(եմ), հագ-ն-(եմ)—հագ-ն-վ-(եմ). *բ) I խմբի 5-րդ և III խմբի 3-րդ ու 4-րդ ենթախմբերի դեպքում՝* ր-ից *հետո՝* տու-ր-—տ-ր-վ-(եմ), տա-ր-(ա)—տա-ր-վ-(եմ), դ-ր-(ի)—դ-ր-վ-(եմ). *գ) III խմբի 5-րդ ենթախմբի դեպքում՝* ձ-ով՝ դար-ձ-(ա)—դար-ձ-վ-(եմ). *դ) III խմբի 6-րդ ենթախմբի դեպքում, որ ունի* (ա, ե)ցն/ր-*ով օժտված բայերի խոնարհման տիպը,* ր-ից *հետո ևս նրա անկմամբ՝* վեր-ց(ր)-վ-(եմ). *ե) մնացած դեպքերում՝* (ա, ե)ց-ից *հետո՝* մն-ացվ-(եմ), մոռ-եցվ-(եմ), իմ-ացվ-

13 *Կարելի է առանձնել* (ա+) β (+γ) *մանրակազապարը (միկրոմոդելը):*

(եմ), փախ-ց--փախ-ց-վ-(եմ). 3) վ-ի համեմման դեպքում մասնակատարային փոփոխություն չեն կրում միայն I խմբի 1-ին ենթախմբի բայերը՝ խոս-եմ—խոս-վ-եմ, խոս-եց-ի—խոս-վ-եց-ի, խոս-ի՛ր—խոս-վ-ի՛ր, խոս-(եց)-ե՛ք—խոս-վ-(եց)-ե՛ք. մնացած բոլոր բայերի խոնարհման մասնակատարները փոխվում են այս բայերի խոնարհման մասնակատարներին՝ մն-աց-վ-եմ (հմմտ. մն-ամ), մնաց-վ-եց-ի (հմմտ. մն-աց-ի), մն-աց-վ-ի՛ր (հմմտ. մն-ա՛), մն-աց-վ-(եց)-ե՛ք. մոտ-եց-վ-եմ (հմմտ. մոտ-եմ-ամ), մոտ-եց-վ-եց-ի (հմմտ. մոտ-եց-ա), մոտ-եց-վ-ի՛ր (հմմտ. մոտ-եց-ի՛ր), մոտ-եց-վ-(եց)-ե՛ք) (հմմտ. մոտ-եց-ե՛ք) և այլն:

Վերևում ասածներից բխում է, որ տարբեր խմբերի բայերի համար առկա են (ա, ե)ց(ն/ր) և վ մասնիկների գուգորդման տարբեր հնարավորություններ. 1) այն բոլոր դեպքերում, երբ վ-ն միանում է պարզ հիմքին (ա, ե)ց-ի միջոցով, բնականաբար հնարավոր է միայն պարզ հիմքի և (ա, ե)ց-ով-ով օժտված ձևերի միայն մեկ հակադրություն՝ մն-/մն-աց-վ-, փախ-/փախ-ց-վ-, մոտ-/մոտ-եց-վ-, իմ-/իմ-աց-վ-, այլ կերպ ասած՝ (ա, ե)ց(ն/ր) մասնիկի միջոցով հաղորդվող իմաստը չեզոքանում է. 2) այն դեպքերում, երբ վ-ն կարող է միանալ ոչ (ա, ե)ց-ի օգնությամբ, հնարավոր է երկու հակադրություն, բայց այդ հնարավորությունն օգտագործվում է միայն վ-ի՝ պարզ հիմքին անմիջապես կամ ն-ի միջնորդությամբ միանալու, այսինքն՝ տիպարային չեզոքության ունեցող —եց և ն տարբերիչների առկայության դեպքում և չի օգտագործվում ր-ով միանալու, այսինքն՝ ն/ր տիպարային տարբերիչի դեպքում. հմմտ. խոս-(եմ) և խոս-վ-(եմ) ու խոս-եց-վ-(եմ). տես-ն- և տես-ն-վ-(եմ) ու տես-ց-վ-(եմ), հագ-ն-(եմ) և հագ-ն-վ-(եմ) ու հագ-ց-վ-(եմ): Ինչպես կտեսնենք, այս տարբերություններն օգտագործվում են իմաստային (տիպարա-սեռային) հակադրություններ առաջացնելու համար:

Անցնելով բովանդակության պլանին՝ կարելի է պարզել, որ սեռանիշ մասնիկները ծառայում են հաղորդակցման պլանին և արտահայտում են եղելության (գործողության) հեղինակի օտարումը եղելությունից (գործողությունից): Այս ակտը կապված է հաղորդակցման կաբիքների հետ, այն բանի հետ, թե ա) հաղորդողը ի՛նչն է մղում առաջին պլանի վրա և բ) ի՛նչ չափով է տեղյակ հաղորդվող գործողության կողմերին: Սեռի քերականական կարգը տարբերվում է տիպարի կարգից նրանով, որ վերջինս սպասարկում է լեզվա-իմացական պլանը, հանդես է գալիս որպես տվյալ կոլեկ-

տիվի կողմից եղելությունների խմբավորման դրսևորում, մինչդեռ, ինչպես նշվեց, սեռը սպասարկում է հաղորդակցման պլանի կարիքները։ Եթե (ա, ե)g(ճ/ր) և վ մասնիկների իմաստների համար պահպաննենք ավանդական կրավորական ու պատճառական անվանումները և վերանանք նրանց իմաստային մասնակի դրսևորումներից, ապա տիպարի և սեռի եղրերի փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 5-րդ գծագրով.

Գծագիր 5



Գծագիրը ցույց է տալիս, որ «ներգործական» և «չեզոք» սեռերի դեպքում սովորաբար հակասություն չկա իմացական և հաղորդակցային պլանների միջև, այսինքն՝ «ներգործականը» հավասարարժեք է գործողայնությանը, «չեզոքը»՝ վիճակայնությանը. այս առումով դերակշռող մեծամասնությամբ վ-ի առկայությունը նշանակում է կրավորականություն, բացակայությունը ($\overline{\text{վ}}$)՝ գործողայնություն (անցողականություն). (ա, ե)g(ճ/ր)-ի առկայությունը նշանակում է պատճառականություն, բացակայությունը [$\overline{(\text{ա, ե})\text{g}(\text{ճ/ր})}$]՝ վիճակայնություն (անանցողականություն)։ Եղած մասնակի բացառությունները, որոնք գծագրում արտահայտված են կետագծով, կքննարկվեն հետո։ Տիպարային եղրերը տարբերող շարահյուսական հատկանշի օբյեկտային ուղղվածության առումով գործողությունը կհամընկնի պատճառականության հետ (աղյուսակ 20, էջ 268)։

Վ և (ա, ե)g(ճ/ր) մասնիկների համար ընդհանուրն այն է, որ բայահիմքի նշած գործողությունը կամ եղելությունը դրանք օտարում են հաղորդման ենթակայից. այսպես. «Գրիգորն սպանեց Հակոբին» և «Գրիգորը նստեց» հաղորդումներում և՛ սպանելը, և՛ նստելը բնորոշում են հաղորդման ենթական (հաղորդման ելակետա-

Էնդվական պլաններ	Տիպարային եզրերի տարբերիչ շարահյուսական հատկանիշ	
	սբյեկտայնություն (անցողականություն)	անսբյեկտայնություն (անանցողականություն)
իմացական	Գործողայնություն	Վիճակայնություն
Հաղորդակցային	Պատճառականություն	Կրավորականություն

յին առարկան), բնութագրում այն որևէ շարժմամբ կամ գործողությամբ, մինչդեռ «Հակոբն ապանվեց Գրիգորից» կամ «Հակոբը Գրիգորին նստեցրեց» հաղորդումներում ապանելը և նստելը բնութագրում են ոչ հաղորդման ենթական (Հակոբին)։ (Ա, ե)ց(ն ր)-ով օժտված բայերի դեպքում տվյալ եղելությունը կամ գործողությունը հաղորդման ենթակայի ինչ-որ գործողության հետևանքն են, և պատճառի նշումը համարվում է կարևոր, մինչդեռ առանց այդ մասնիկի պատճառը համարվում է ներքին կամ անուշադրության է առնվում։ Ե՛վ պատճառականի, և՛ կրավորականի դեպքում ուշադրության կենտրոնում է ներգործվողը (կրողը), որ և դարձվում է հաղորդման ելակետ։ Սեռային երկու եզրերի՝ պատճառականության և կրավորականության տարբերիչ հատկանիշը կլինի պատճառի ընդգծվածությունը կամ չընդգծվածությունը. պատճառականի դեպքում պատճառողն ընդգծվում է և մղվում առաջին պլանը, կրավորականի դեպքում պատճառողը դադարում է ընդգծվելուց և մղվում է երկրորդ պլանը։

Սեռանիշ վ մասնիկը, եթե պահպանենք սեռերի ավանդական անվանումը, ունի կրավորական արժեք, այսինքն՝ ցույց է տալիս, որ բայահիմքի նշանակած գործողությունը անցնում է հաղորդման ելակետային առարկայի (հաղորդակցային ենթակայի) վրա։ Իր բուն արժեքի պահպանման դեպքում վ-ն պետք է ցույց տա, որ բայահիմքի նշանակած գործողության կատարողը ենթական չէ, այլ մի ուրիշը, որ հաղորդման (խոսքի) մեջ կարող է և չնշվել. համմտ. «Հակոբն ապանվեց (Գրիգորի կողմից»)։ Այս դեպքում մենք գործ ունենք մեկ առարկայական հարաբերության՝ որպես անփոփոխակի հետ, որ հաղորդակցման պլանում կարող է հանդես գալ երկու փոփոխակով (տարբերակով)՝ ներգործական (ոչ-կրավորական) և

կրավորական, որոնք ունեն կառուցվածքային տարբեր սխեմաներ. դրանցից ներգործական սխեման կհամընկնի առարկայական սխեմայի հետ (ուղղությունը նույնն է), կրավորականը՝ ոչ (ուղղությունը հակադիր է). ներգործական սխեմայի դեպքում առարկայական ենթակայի (գործողությունը կատարողի) նշումը պարտադիր է (որոշյալ կամ անորոշ ձևով՝ «Հակոբը» կամ «մի մարդ»), կրավորականի դեպքում՝ ոչ. ներգործական սխեմայի դեպքում գործողություն կատարողը հաղորդման ենթական է, կրավորական սխեմայի դեպքում՝ մի ուրիշը: Այս բոլորը կտրելի է արտահայտել 21-րդ աղյուսակով.

Աղյուսակ 21

Պլան		Սխեմա	Օ ր ի ն ա կ ն ե ր
Առարկայական (իմացական)		A — B	Գրիգորն սպանեց Հակոբին
Հաղորդակցական	Ներգործական կառուցվածք	A — B	Գրիգորն սպանեց Հակոբին
	Կրավորական կառուցվածք	B — A	Հակոբն սպանվեց (Գրիգորից)

Այսպիսով, վ-ն հանդես է գալիս որպես գործողության հակառակ ուղղվածության (հակադարձության) նիշ. նրա առկայությունը ցույց է տալիս գործողության հեղինակի օտարում, բացակայությունը՝ գործողության հեղինակի ինքնություն: Այստեղից բխում է, որ վ կարող են ունենալ միայն այն բայերը, որոնք ցույց են տալիս ոչ թե ինքնակա եղելություն, վիճակ, պրոցես, շարժում՝ որպես առարկայի (ենթակայի) բնութագրում, այլ գործողություն, պատճառա-հետևանքային հարաբերություն. վ-ով կարող են օժտվել այն բայերը, որոնք ենթադրում են առնվազն երկու եզր (պատճառ և հետևանք, ներգործող և ներգործվող կամ կրող). վ-ով չեն կարող օժտվել այն բայերը, որոնք ենթադրում են մեկ եզր, որը բնութագրվում է բայի նշանակած եղելությամբ, վիճակով, պրոցեսով, շարժմամբ:

Այն հանգամանքը, որ անանցողական բայերը վ են ստանում սովորաբար (ա, ե)ց(ն/ր) մասնիկի առկայության դեպքում, ցույց է տալիս, որ այդ մասնիկը առաջին հերթին անանցողական բայերին

հաղորդում է անցողական (գործողանիշ) արժեք՝ դրանց հետագա ներգործական (ոչ-կրավորական)—կրավորական հակադրության հնարավորությամբ։ Իրականում, սակայն, այս կանոնը ևս բացառություններ ունի. (ա. ե)ց(ն/ր) մասնիկը կարող է հանդիպել նաև բուն անցողական (գործողության նշանակող) բայերի դեպքում՝ դրանց հաղորդելով կրկնանցողական (նեոդրային) արժեք։ Այս մասնիկն ստացող անցողական (գործողության նշանակող) բայերի թիվը մեծ չէ, եթե բացառենք այն դեպքերը, երբ՝ ա) անցողական բայերը, ստանալով այս մասնիկը, սովորաբար կորցնում են սկզբնական անցողական իմաստը[14] (համմտ. ծնեմ—ծնեցնեմ, սիրեմ—սիրեցնեմ), բ) անցողական-անանցողական իմաստները զուգորդելու (այսինքն՝ և՛ որպես անցողական, և՛ որպես անանցողական գործածվելու) դեպքում սովորաբար պահպանում են սկզբնական անանցողական իմաստը (համմտ. երգեմ—երգեցնեմ, խոսեմ—խոսեցնեմ), գ) ընկալվում են որպես -ացամ տիպի բայերի յուրատեսակ տարբերակներ, որոնց եցն-ը գրեթե ոչինչ չի ավելացնում սկզբնական իմաստի վրա (ածականական հիմքերի դեպքում՝ ապականեմ—ապականեցնեմ, դատարկեմ—դատարկեցնեմ, վարժեմ—վարժեցնեմ և այլն, այլև գայթակղեմ—գայթակղեցնեմ և այլն) և դ) իմաստի փոփոխություն են կրում (համմտ. բռնեմ—բռնեցնեմ, խոսակցական՝ բռնացնեմ «վրա հասնեմ, հարկավոր պահին գտնեմ», վիժեմ—վիժեցնեմ. պնդեմ—պնդեցնեմ (պնդացնեմ) և այլն)։ Այն բայերի մեջ, որոնք իրենց սկզբնական անցողական իմաստը պահում են և դառնում պատճառական-անցողական («կրկնակի անցողական»), առաջին հերթին հիշատակելի են անվելու գործողության արտահայտող բայերը՝ խմեմ—խմեցնեմ. ծծեմ—ծծեցնեմ, ուտեմ—ուտեցնեմ (կատարյալի տարատիպ կերա ձևից կազմված կերցնեմ ձևը այլ իմաստ ունի)։ Այլ բայերից հիշելի են հիշեմ—հիշեցնեմ, մարսեմ—մարսեցնեմ։ Պատճառական-անցողական («կրկնակի անցողական») իմաստ արտահայտելու համար անցողական (գործողության նշանակող) բայերից պատճառականներ են կազմվում անորոշ դերբայ+տամ կապակցությամբ՝ գրել տամ, երգել տամ և այլն։

Մեզի քննության ավարտենք վ-ի գործածության վերաբերյալ մի շարք տեղեկություններով։

1) վ-ն, ինչպես նշվեց, առաջին հերթին հանդես է գալիս

---

14 Այսինքն՝ երկրորդ ուղիղ խնդիր չեն առանում։

որպես կրավորականություն—ոչ-կրավորականություն (ներգործականություն) հակադրության արտահայտիչ, բայց երկրորդաբար, որոշ բայական հիմքերի դեպքում այն կարող է արտահայտել անդրադարձություն—ոչ-անդրադարձություն և փոխադարձություն—ոչ-փոխադարձություն հակադրությունները: Առաջին դեպքում վ-ն ցույց է տալիս, որ գործողը նաև ներգործվող է, և ունի «իրեն, ինքն իրեն» իմաստը (համմտ. սանր-վ-եմ՝ ի հակադրություն սանր-եմ-ի. հագ-ն-վ-եմ՝ ի հակադրություն հագն-եմ-ի և այլն): Երկրորդ դեպքում գործողը և ներգործվողը առնվում են նաև որպես ներգործվող և գործող, այսինքն՝ կապվում են փոխադարձ գործողությամբ. այս դեպքում վ-ն ունի «իրար, միմյանց» իմաստը. կառուցվածքային տեսակետից հնարավոր է երկու դեպք. ա) հաղորդողը երկու կողմերը հավասարեցնում է, և այս դեպքում երկու կողմերն էլ հանդես են բերվում որպես ենթակա՝ «Գրիգորը և Հակոբը համբուրվեցին». բ) հաղորդողը երկու կողմերից մեկին առանձնացնում է և ձևավորում որպես ենթակա, իսկ մյուսը արտահայտում է որպես ուղեկցման խնդիր՝ ինստ կապով՝ «Գրիգորը Հակոբի հետ համբուրվեց»:

2) Կան մի քանի բայեր, որոնք առանց վ-ի չեն գործածվում, և վ-ն այս դեպքում գործողության նշանակություն չի արտահայտում, այլ անանցողականություն, վիճակայնություն՝ **սիրահարվեմ. ճարճատվեմ:**

3) Վ մասնիկի հակադարձ գործողություն արտահայտելը ցայտուն կերպով հանդես է գալիս գործողի մատնանշման դեպքում: Երբ գործողը չի նշվում, լեզվա-իմացական ու լեզվա-հաղորդակցային սլանների հակադրությունը չեզոքանում է, և կրավորական—ոչ-կրավորական (ներգործական) սեռային հակադրության փոխարեն հանդես է գալիս անանցողական—անցողական տիպարային հակադրությունը. այլ կերպ ասած՝ վ-ն ստանում է տիպարային մասնիկի արժեք. համմտ. **գլորեցի—գլորվեցի** *«1. մեկի կողմից գլորվեցի. 2. ինքս ինձ գլորվեցի»:*

4) Քանի որ **(ա, ե)ց(ն/ր)** *մասնիկը հանդես է գալիս որպես անցողականության արտահայտիչ, որի դեպքում գործողը միշտ ենթադրվում է, ուստի վ-ն կայուն կերպով պահպանում է կրավորականի իմաստը այդ մասնիկի դեպքում: Մյուս կողմից՝ քանի որ* **(ա, ե)ց(ն/ր)**-*ը, ինչպես նշվել է, հաճախ անցողական բայերի նախնական անցողականությունը սովորաբար չեզոքացնում է, ապա անցողական բայերի դեպքում հայերենում հանդես է գալիս ներգործական—չեզոք—կրավորական եռակի շարքը՝* **մաշեց—մաշ-**

վեց—մաշեցվեց: *Անանցողական բայերի դեպքում առկա է չեզոք—պատճառական—կրավորական նոակի շարքը՝* մոտեցավ—մոտեցրեց—մոտեցվեց, *ընդ որում պատճառականն այս դեպքում գրեթե նույնանում է ներգործականի հետ (համմտ.* բարձրացավ—բարձրացրեց—բարձրացվեց), *այսինքն՝ դրանց տարբերությունը չեզոքանում է:*

6. ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՐԳԸ

Եթե առայժմ զանց առնենք հրամայական եղանակը, որ իր բնույթով ժամանակային տարբերություններ չի տալիս, ապա կարելի է ասել, որ մնացած դեպքերում ժամանակային տարբերությունները արտահայտվում են առաջին հերթին վերջավորությունների միջոցով: Իբրև այդպիսի վերջավորություններ ձևականորեն կարող են հանդես գալ առանձին ձայնավորները (յծորդները), ձայնավորների խմբերը, ձայնավորների ու ձայնավորների խմբերի և բաղաձայնների զուգորդումները. սրանց կարող է միանալ նաև զրո վերջավորությունը. բաղաձայնները անկախաբար հանդես գալ չեն կարող: Դիմելով բայական մասնակազապարներին՝ տեսնում ենք, որ ոչ-հրամայական ձևերը պատկանում են մասնակազապարների երկու դասի, և որ դրանցից առաջինը անկատար հիմքերով և արտահայտված, երկրորդը՝ կատարյալ: Ըստ այս հիմքերի հետ զուգորդվելու մենք կունենանք վերջավորությունների երկու խումբ՝ 1) եմ, ես, ի, ենք, եք, են, ամ, աս, ա, անք, ած, ան *և 2)* ի, իր,— *(և, երկրորդաբար,* եց), ինք իք, ին, ա, ար, ավ, անք, ած, ան: *Հեշտ է նկատել, որ 1-ին խմբի* եմ, ես, ի, ենք, եք, են *ու* ամ, աս, ա, անք, ած, ան *վերջավորությունների և 2-րդ խմբի* ի, իր,—, ինք, իք, ին *ու* ա, ար, ավ, անք, ած, ան *վերջավորությունների առաջին ու երկրորդ ենթախմբերի տարբերությունները դիրքային են. 1-ին խմբի 1-ին ենթախմբի* եմ, ես, ի, ենք, եք, են *վերջավորությունները հանդիպում են 1 դասի մասնակազապարային որոշ խմբերի դեպքում* (գր–եմ, տես–ն–եմ, փախ–չ–եմ, դ–ն–եմ, տա–ն–եմ, վեր–ցն–եմ), ամ, աս, ա, անք, ած, ան *վերջավորությունները՝ այլ խմբերի դեպքում* (գն–ամ, մոտ–ենք–ամ, իմ–անք–ամ, դատ–ն–ամ). *այդ նույն ձևով էլ* ի, իր,—, ինք, իք, ին *վերջավորությունները հանդիպում են II դասի մասնակազապարային որոշ խմբերի դեպքում [*գր–եց–ի, գն–աց–ի, դր–(եց)–ի, բեր–(եց)–ի, վեր–ցր–ի, *ընդ որում վերջինս զրոյի փոխարեն ունի* եց՝ վերցր–ի, –իր, –եց*]*, ա, ար, ավ, անք, ած,

ան վերջավորությունները՝ այլ խմբերի դեպքում (տես–ա, փախ–ա, մոտ–եց–ա, իմ–աց–ա, տա–ր–ա, դար–ձ–ու): Վերջավորությունների այս խմբերի դիրքային տարբերակների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 22-րդ աղյուսակով.

Աղյուսակ 22

Վերջավորություններ	Դիրքային տարբերակներ	
	I խումբ (ե-ի-է խումբ)	II խումբ (ա-է խումբ)
I խումբ (մ-ի խումբ)	եմ	ամ
	ես	աս
	ի	ա
	ենք	անք
	եք	աք
	են	ան
II խումբ (ր-ի խումբ)	ի	ա
	իր	ար
	ø/—, ց/եց	ավ
	ինք	անք
	իք	աք
	ին	ան

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը. 1) անի, աի, ան վերջավորությունների դեպքում արտահայտության պլանի տարբերություններ չկան, ուստի և լեզուն այս դեպքում տարբերակում է մտցնում հիմքային տարբերությամբ (իմ–ան–անի և իմ–աց–անի), այսինքն՝ այս դեպքում ø/ց հերթագայությունն արտահայտում է և՛ կերպային, և՛ ժամանակային հակադրություններ. 2) վերջավորությունների I խմբում դիրքային տարբերությունները կապված են ձայնավորների հետ, II խմբում ձայնավորների և մասամբ բաղաձայնների հետ (համմտ. —, եց, ավ):

Դիրքային տարբերակների խմբերից ժամանակակից հայերենում գործունը և ֆոն ստեղծողը առաջինն է. երկրորդը սովորաբար տիպարային տարբերություններ է ստեղծում: Սրա հետ է կապված այն հանգամանքը, որ կրկնալծորդ վերջավորություններից դեպքում հանդես են գալիս որպես երկրորդ տարր ի ենթախմբի վերջավորությունները, ընդ որում զրոյին փոխարինում է ր–ն (ի, իր, ր, իանի, իի,

ին): Կրկնալծորդ վերչավորությունները ներկայացնում են մասնակաղապարների I և II դասերի խառնուրդ. I դասից առնվում են անկատարի հիմքերը՝ հաչորդող լծորդ ձայնավորով հանդերձ (գր-ե-, գն-ա-, տես-ն-ե-, փախ-չ-ե-, մոտ-ենն-ա-, իմ-աճ-ա-, դ-ն-ե-, տա-ն-ե-, դառ-ն-ա-, վեր-ց-ն-ե-). II դասից՝ հիշյալ վերչավորությունները, ընդ որում ա-ի և ի-ի հանդիպելու դեպքում հորանչը վերացվում է յ ձայնակապի օգնությամբ գր-ե-ի, գն-ա(յ)-ի, տես-ն-ե-ի, փախ-չ-ե-ի, մոտ-ե-ն-ա(յ)-ի, իմ-աճ-ա(յ)-ի, դ-ն-ե-ի, տա-ն-ե-ի, դառ-ն-ա(յ)-ի, վեր-ցն-ե-ի:

Անցնելով բովանդակության պլանին՝ կարելի է ասել, որ մ-ի և ր-ի խմբերի վերչավորությունները արտահայտում են բովանդակության պլանի ոչ-անցյալ—անցյալ հակադրություններ: Սահմանական եղանակի դեպքում ր-ի խումբն արտահայտում է մի եղելություն, որ հաղորդողն առնում է անցյալի մի ժամանակակետի համեմատությամբ որպես կատարյալ (արժնցա, գիտեցա, ունեցա, եղա, կացա) կամ անկատար (արժնի, գիտեի, ունեի, էի, կայի). մ-ի խումբն արտահայտում է մի եղելություն, որ հաղորդողն առնում է հաղորդման պահի համեմատությամբ՝ որպես այդ պահին ընթացքի մեջ գտնվող (արժնիմ, գիտեմ, ունեմ, եմ, կամ): Վերլուծական ձևերի մեջ ոչ-անցյալ—անցյալ հակադրություն արտահայտող էի—եմ բայի ձևերը զուգակցվելով հաչորդականության կարգի տարբեր եղրեր (նախորդում, հաչորդում, համաժամանակություն արտահայտող վերլուծական հիմքերի հետ [գնացել (չեմ) գնա, գնում]՝ արտահայտում են բազմազան ժամանակա-հաչորդային հարաբերություններ: Իսկ հնարավո՞ր է արդյոք ոչ-անցյալի դեպքում ժամանակային տարբերակում. հիշյալ բայերի դեպքում այդպիսի տարբերակում ստեղծվում է կ-ի և հիմքային տարբերությունների կամ սուպլետիվ ձևերի միջոցով՝ 1) արժնիմ, գիտեմ, ունեմ, կամ, եմ և 2) կարժենամ, կգիտենամ, կունենամ, կկենամ, կլինեմ. առաջին խումբը, ինչպես նշել ենք, ցույց է տալիս եղելություններ, որոնք հաղորդողն առնում է հաղորդման պահի համեմատությամբ որպես այդ պահին ընթացքի մեջ գտնվող. երկրորդ խումբը ցույց է տալիս եղելություններ, որոնք հաղորդողն առնում է ապագայի որևէ ժամանակակետի համեմատությամբ, ընդ որում, ինչպես նշել ենք, կ-ն արտահայտում է նաև եղանակային երանգ՝ ենթադրականություն: Ըղձական եղանակի դեպքում գնամ և գնացի ձևերն արտահայտում են հաղորդման պահին կամ անցյալի որևէ ժամանակակետի համար հաղորդողի կողմից ցանկալի համարվող եղելություն-

ներ: Ենթադրական եղանակի դեպքում կգնամ և կգնայի ձևերն արտահայտում են հաղորդման պահին կամ անցյալի որևէ ժամանակահատի համար ենթադրվող, այլև որոշ պայմանով առնվող եղելություններ, բնդ որում պայմանականությունն ավելի ուժեղ է անցյալի դեպքում:

Մի կողմ թողնելով հաջորդականության ենթակարգը, որ, ինչպես նշել ենք, կապված է վերլուծական հիմքերի հետ, համադրական ձևերի ժամանակային տարբերությունները (նկատի է առնվում իրադրական ժամանակը) կարող ենք արտահայտել երկու հատկանիշով՝ անցյալայնություն և ապառնիություն, որոնք բնականաբար պետք է տան ժամանակային 4 եզր. 4-րդ եզրը կլինի ընդհանրական ժամանակը: Իրադրական ժամանակի եզրերի և դրանց տարբերակման համար հիմք ընդունված հատկանիշների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 23-րդ աղյուսակով.

Աղյուսակ 23

Հատկանիշներ	Իրադրական ժամանակի եզրեր			
	ընդհանրական ժամանակ	անցյալ	ապառնի	ներկա
Անցյալայնություն	+	+	—	—
Ապառնիություն	+	—	+	—

Համադրական ձևով հատկանիշների և եզրերի փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 24-րդ աղյուսակով.

Աղյուսակ 24

Ապառնիություն	Անցյալայնություն	
	անցյալայնություն	ոչ-անցյալայնություն
Անցյալայնություն	Ընդհանրական ժամանակ	Ապառնի (ժամանակ)
Ապառնիություն	Անցյալ (ժամանակ)	Ներկա (ժամանակ)

Մի քանի խոսք ընդհանրական ժամանակի մասին. այն սովորաբար արտահայտվում է ներկա ժամանակի միջոցով. համադրական ձևերի մեջ չի արտահայտվում, բայց կարող է որոշ արտահայտություն ստանալ բաղադրյալ ձևերի միջոցով. ունեմ և ունենում եմ ձևերի հակադրությունը և՛ կերպային, և՛, որոշ առումով, ժամանակային հակադրություն է («ունենում եմ»=«ունեցել եմ, ունեմ և կունենամ»): Այլ դեպքերում տարբերությունը որոշվում է կոնտեքստով, իմաստով կամ հիմա, այժմ և միշտ, բնդհանրապես տիպի մակբայների ուղեկցությամբ (համմտ. «Հակոբը պտտվում է ծառի շուրջը» և «Երկիրը պտտվում է արեգակի շուրջը», «ես հիմա սովորում եմ» և «ես սովորում եմ համալսարանում» և այլն):

7. ԴԵՄՔԻ ԵՎ ԴԱՍԻ ԿԱՐԳԵՐԸ

Դիմային իմաստների կրողները առաջին հերթին մ, ս, ր, վ, ն, ֆ, ն բաղաձայններն են, որոնց երկրորդաբար միանում են զրոն, ի լծորդը և ց՝ հիմքակազմ տարրը (վերչինս ն/ր-ով, հատկապես պատճառական, հիմքերի դեպքում): Սակայն այս դեպքում մենք գործ ունենք համանունության և համանշության մի շարք դրսևորումների հետ. տիպարային և ժամանակային տարբերությունների մասին մենք արդեն առիթ ենք ունեցել խոսելու. այժմ կարելի է խոսել այլ կարգի տարբերությունների մասին: Ժամանակի քերականական կարգի քննության կապակցությամբ բերված աղյուսակի հիման վրա կարելի է պարզել, որ ն, ֆ, ն բաղաձայնական տարրերը դիրքային պայմանավորվածություն չունեն և հանդիպում են բոլոր լծորդների ու ժամանակային բոլոր տարբերությունների դեպքում: Հիմք ընդունելով այս տարրերը և հաշվի առնելով մյուս տարրերի ներքին փոխհարաբերությունը՝ կարելի է պարզել վերչիններիս հետևյալ արժեքները. 1) ր-ն երկարժեք է. որպես —, ր, վ շարքի երկրորդ անդամ (փախա, փախա-ր, փախա-վ) այն համապատասխանում է ֆ-ին (փախա-ն, փախա-ֆ, փախա-ն), իսկ որպես եի, եիր, եր շարքի երրորդ անդամ՝ ն-ին (գրե-ի, գրե-իր, գրե-ր և գրեիմ, գրեիֆ, գրեին). 2) ա) ի, իր, —, բ) ի, իր, ց և գ) ե-ի, ե-իր, ե-ր շարքերում իր-ը փաստորեն հանդես է գալիս որպես մեկ միասնական դիմային վերջավորություն, որ հակադրվում է մի կողմից՝ ի-ին, մյուս կողմից՝ զրոյին, ց-ին կամ ր-ին. 3) զրոն եռարժեք է. ա) մ, ս, — և ի, իր, — շարքերում այն համապատասխանում է ն-ին, բ) —, ր, վ շարքում՝ ն-ին, գ) հրամայականի մեջ՝ ֆ-ին

/բե՛ր—բեր-(եց)-ե՛ք, գնա՛—գնացե՛ք/: Այսպիսով, կարելի է առանձնացնել դիմանիշ հետևյալ ցուցիչները՝ մ,—, ի, ս, ր, իր,—, վ, ր, եց,—, ճք, ք, ն, ընդամենը՝ 14: Այս ցուցիչները, ըստ դիմանիշ արժեքի, խմբավորվում են հետևյալ կերպ՝ 1) մ, ի,—, ճք, 2) ս, ր, իր,—, ք, 3) վ, ր, եց,—, ն: Այս երեք շարքերի տարբերակների ընդհանուր փոխհարաբերությունը կարելի է ներկայացնել 25-րդ աղյուսակով.

Աղյուսակ 25

Շարքեր	I խումբ							II խումբ
	I (մ—ի) ենթախումբ	II (ր—ի) ենթախումբ						
		Ներգործական	Հրամայականի		կատարյալի			
			արդելական	ցուցական դեմք	1	2	3	
I շարք	մ	ի			ի	—	ի	նք
II շարք	ս	իր	ր	ր,—	իր	ր	իր	ք
III շարք	—	ր			—	վ	եց	ն

Անցնելով բովանդակության պլանին՝ կարելի է պարզել, որ շարքերն արտահայտում են դիմային (3 դեմք՝ առաջին, երկրորդ, երրորդ), խմբերը՝ թվային (2 թիվ՝ եզակի, հոգնակի) իմաստներ, ընդ որում յուրաքանչյուր դեմքի համար առկա է թվի արտահայտության տարբեր եղանակ: Առայժմ մի կողմ թողնելով թվային տարբերությունները՝ զբաղվենք դիմային տարբերությունների հարցով: Դիմային իմաստները լեզվա-հաղորդակցային պլանին են պատկանում և կապված են հաղորդակցման իրականացման, վերջին հաշվով՝ ստորոգման հետ: Այս դեպքում անձերի և իրերի խմբավորման համար հիմք է ծառայում հաղորդակցման ակտի ժամանակ նրանց խաղացած դերը՝ հաղորդող, ընդունող և հաղորդման առարկա: Սրանք կարելի է նկարագրել երկու հատկանիշով՝ հաղորդող և ընդունող: Կստացվի հետևյալ պատկերը (աղյուսակ 26, էջ 278):

Դիմանիշ մասնիկները բայի համար երկրորդային բնույթ ունեն: Նրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ ենթակայի դեմքի հետ համաձայնելու արդյունք, ընդ որում ենթակայի՝ առաջին և երկրորդ դեմքի դերանուններով (ես—մկճք, դու—դուք) արտահայտվելու և ս, դ ցուցական հոդերով օժտվելու դեպքում բայն ունենում է

Աղյուսակ 26

Հատկանիշներ	Դիմային եղբեր			
	(հաղորդակցող)	I դեմք (հաղորդող)	II դեմք (ընդունող)	III դեմք (հաղորդման առարկա)
Հաղորդող (խոսող)	+	+	—	—
Ընդունող (լսող)	+	—	+	—

I և II դեմք, մնացած դեպքերում (ցուցական և այլ դերանուններ, պոյական անուններ՝ առանց ս, դ դիմորոշ-ցուցական հոդերի)՝ III դեմք։

Դեմքի քերականական կարգը երկրորդաբար արտահայտում է դասային տարբերություններ։ Բնականաբար՝ քանի որ իրենց բնույթով հաղորդողն ու ընկալողը պետք է լինեն անձեր, ուստի մենք գործ ունենք դասի յուրատեսակ արտահայտության հետ ըստ 27-րդ աղյուսակի.

Աղյուսակ 27

Դասային իմաստներ	Դիմային իմաստներ		
	I դեմք	II դեմք	III դեմք
Անձ	+	+	+
Իր (ոչ-անձ)	—	—	+

Ըստ աղյուսակի՝ I և II դեմքերը անձ նկատի ունեն, իսկ III դեմքը չեզոք է անձի դասային տարբերակման երկու դրսևորումների (եղերի) նկատմամբ[15]։ Երկրորդաբար իրերը կարող են հանդես բերվել անձնավորմամբ։

15 *Բնականաբար դասային իմաստների մասին խոսելիս նկատի ունենք մասնիկներով և հերթագայություններով արտահայտված իմաստները, այլապես բայիմաստի մեջ ինքնին առկա են դասային տարբերություններ. համմտ. մեռնել, խոսել, կարդալ, պատմել, բայլել և այլն (անձերի մասին), ուտկել, բառաչել և այլն (կենդանիների մասին), զնգալ և այլն (իրերի մասին), շարժվել և այլն (ընդհանուր) և այլն։*

Նկատի ունենալով վերևում ասվածները՝ ըստ ելակետային ձևերի կարելի է տարբերել երկու տիպ՝ ա) արխաիկ, որի դեպքում ելակետային արժեք ունի II դեմքը, և որ խոսում է հաղորդակցման ակտի և հրամայականի առաջնայնության մասին, բ) համեմատաբար նոր տիպ, որտեղ ելակետային է III դեմքը, և որ խոսում է երկրորդաբար, սահմանային եղանակի դեպքում, III դեմքի առաջնայնության, այսինքն՝ հաղորդման առարկայի՝ առաջին պլանը մղելու մասին:

8. ԹՎԻ ԿԱՏԳԸ

Ինչպես նշվեց դեմքի բերականական կարգի քննության ժամանակ, թվի քերականական կարգի երկու եզրերը՝ եզակին և հոգնակին արտահայտվում են I և II խմբերի վերջավորությունների միջոցով: Ի տարբերություն անվանական թվի, որտեղ իշխում էր մասնիկավորումը, բայական թվի արտահայտության միակ միջոցը հերթագայությունն է, ընդ որում յուրաքանչյուր դեմքի համար առկա է հերթագայության իր տիպը՝ մ/ճ, ս/ֆ, —/ճ, այլև —/ճ, ր/ֆ, վ/ճ և այլն: Այս տեսակետից բայական թվի կարգը հիշեցնում է դերանվանականը. և սա հասկանալի է, եթե նկատի ունենանք, որ բայական թիվը կարելի է դիտել որպես դերանվան հետ բայի թվային համաձայնության արդյունք. շատ լեզուներում բայը կարող է ըստ դեմքի չփոխվել, և այդ դեպքում դիմային իմաստն իր վրա է վերցնում դերանունը: Լինում է և հակառակը. թեքական այնպիսի լեզուներում, ինչպիսին հունարենը, լատիներենը, գրաբարն են, բայական դեմքը բավական է արտահայտելու անձնական դերանունների իմաստները, և վերջիններս դրվում են միայն ընդգծման համար (տրամաբանական շեշտ կրելու դեպքում): Բայական դիմավոր ձևերի և դերանունների միաժամանակյա գործածությունը առանց դեմքի ընդգծման անհրաժեշտության՝ հավելուրդայնություն է (ИЗБЫТОЧНОСТЬ):

Եթե փորձենք բացահայտել հոգնակիի իմաստային լրացական իմաստները, ապա կստացվի հետևյալը (աղյուսակ 28, էջ 280).

Դեմքեր	Թվային հակադրության արտահայտման միջոցներ	Հոգնակի ձևի արտահայտած իմաստներ	
		բուն հոգնակի իմաստ («մեկից ավելի»)	լրացական իմաստներ
I դեմք	մ/նք —/նք	«խոսող +	խոսողի հետ կապված այլ անձինք (ներառյալ կամ բացառյալ խոսակիցը և խոսքի առարկան)»
II դեմք	ս/ք ր/ք —/ե՛ր ի՛ր/ի՛ք	«խոսակից +	խոսակցի հետ կապված այլ անձինք (ներառյալ կամ բացառյալ խոսքի առարկան)»
III դեմք	—/ն ր/ն վ/ն ց/ն	«խոսքի առարկաներ (անձեր կամ իրեր)»	—

II. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՁԵՎԵՐ

Նախորդ տեղեկություններից հետո ավելորդ համարելով բայի, ավելի ճիշտ՝ բայ-ստորոգյալի վերլուծական ձևերի հանգամանալից քննությունը՝ այստեղ հարկ ենք համարում կանգ առնել միայն հիմնական ձևերի վրա։ Քանի որ խոսքը վերաբերում է խոնարհմանը, ապա հասկանալի է, որ պետք է նկատի ունենալ դիմավոր բայաձևերի և այնպիսի միավորների գուգորդումը, որոնք անվանական ծործածություն չունեն, և որոնք կարող են հանդես գալ միայն դիմավոր բայական ձևերի գուգորդմամբ։ Այսպիսի միավորները երկու տիպի են՝ 1) զանազան կարգի բառ-մասնիկներ և 2) բայական անդեմ ձևեր։

Բառ-մասնիկները հանդես են գալիս որպես բայ-ստորոգյալի հետ կապված որևէ քերականական կարգին կամ ենթակարգին հատուկ իմաստների արտահայտիչներ։ Եթե այս դեպքում էլ հանենք ստորադասական շաղկապներն ու եղանակիչ բառերը և կանգ առնենք միայն այն բառ-մասնիկների վրա, որոնք հանդես են գալիս որպես համադրական այս կամ այն մասնիկի դիրքային տարբերակ, ապա հարկ կլինի խոսել առաջին հերթին մի՛-ի մասին։ Վերջինս փաստորեն հանդես է գալիս որպես չ- ժխտական մասնիկի

դիրքային տարբերակ՝ փոխարինելով վերջինիս հրամայականի ձևերում և կազմելով այսպես կոչված արգելական հրամայականը։ Նշենք, որ հայ քերականները, Մանուկ Աբեղյանից սկսած, բայական այսպիսի բառ-մասնիկի իմաստ են հատկացնում պիտի եղանակիչին՝ նրանով և ըղձականի ձևերով կազմվող վերլուծական ձևերը կոչելով հարկադրական եղանակի ձևեր (պիտի գնամ, պիտի գնաս, պիտի գնա և այլն)։

Միայն բայական դիմավոր ձևերի, այն էլ հատկապես եմ բայի ձևերի հետ զուգորդվող բայական ձևերը բնորոշվում են ում (գրում, գնում), ել (գրել, գնացել), ի/ա (գրի, գնա) մասնիկներով և արդի հայ քերականության մեջ հայտնի են «անկատար, վաղակատար, ժխտական դերբայներ» անուններով։ «Դերբայական» այս ձևերի (ինչպես նաև անվանական արժեք ունեցող, այսինքն՝ առարկայանիշ բառերի) և եմ-ի զուգորդումները հայտնի են որպես բաղադրյալ ձևեր. այս զուգորդումների մեջ եմ-ը կոչվում է օժանդակ բայ։ Բայ-ստորոգյալի համադրական ձևերի մեջ հանդես եկող քերականական կարգերի այն մասը, որ արտահայտվում է բայահիմքային մասնիկներով (կերպ, տիպար, սեռ), բաղադրյալ ձևերի մեջ արտահայտվում է «դերբայական» մասի միջոցով. վերջավորությունների միջոցով արտահայտվող քերականական կարգերը (ժամանակ, դեմք, թիվ, դաս) բաղադրյալ ձևերի մեջ արտահայտվում են օժանդակ բայի միջոցով. այսպիսով, բաղադրյալ ձևերի «դերբայական» մասը համապատասխանում է բայական հիմքին, օժանդակ բայը՝ վերջավորությանը։ Իսկական դերբայներից տարբերելու համար անկախ գործածություն չունեցող անդեմ ձևերը կոչենք վերլուծական բայահիմքեր։ Եղանակային կ(ը) նախամասնիկը բաղադրյալ ձևերում չի հանդիպում, չ-ն հանդիպում է՝ դրվելով օժանդակ բայի վրա, որ դառնալով շեշտակիր՝ փոխում է իր տեղը (գնում եմ—չեմ գնում)։

Մի քանի խոսք հիշյալ վերլուծական բայահիմքերի կազմության մասին, որ կպարզի նաև նրանց հարաբերությունը քերականական այնպիսի կարգերին, ինչպիսին տիպարը և կերպն են։

1) Անկատար «դերբայը» կազմվում է անկատարի հիմքի վրա ում մասնիկի հավելմամբ։ Բացառություն են կազմում գամ, լամ, տամ բայաձևերը, որոնց անկատարը ունի (ա)լիս-ով ձև՝ գալիս, տալիս, լալիս. վերջիններս կարող են ունենալ նաև մակբայական գործածություն, այսինքն՝ դրվել բայական այլ (դիմավոր և ոչ դիմավոր) ձևերի վրա՝ որպես տվյալ եղելությանն ուղեկցող մի այլ

Եղելության արտահայտիչ (գալիս տեսա)։ *Անկատարի կազմության եղանակը ցույց է տալիս, որ՝ ա) տիպարային տարբերությունները բաղադրյալ այս ձևերում հիմնականում չեզոքացած են և բ) այս «դերբայը» իրոք անկատար կերպի արտահայտիչ է։ Քանի որ ում-ը կարող է դրվել (ա. ե)ցի և վ սեռանիշ մասնիկներից հետո, ուստի և սեռային տարբերությունները պահպանվում են* (գր-ում, գրվում, գրեցն-ում, գրեցվ-ում և այլն)։ Տամ *բայից կրավորական է կազմվում սովորական ձևով՝ ում-ի հավելմամբ* (տրվում)։

2) Վաղակատար «դերբայի» ել մասնիկը դրվում է անցյալ կատարյալում ա)-եց-ի-ով վերջացող բայերի դեպքում՝ այդ եցի-ից դուրկ հիմքային ձևերի վրա՝ խոս-(եց-ի)—խոս-ել, բեր-(եց-ի)—բեր-ել, թող-(եց-ի)—թող-ել, տվ-(եց-ի)—տվ-ել, *բ) մնացած դեպքերում՝ վերջավորություններից զուրկ հիմքային ձևերի վրա՝* մն-աց-(ի)—մնաց-ել, տես-(ա)—տես-ել, փախ(ա)—փախ-ել, մոտ-եց-(ա)—մոտ-եց-ել *և այլն։ Այլ կերպ ասած՝ ել-ը դրվում է՝ բայերի 1-ին խմբի 1-ին ու 2-րդ ենթախմբերի դեպքում* (խոսեմ, բերեմ)՝ *ներկայի հիմքի, 3-րդ ու 4-րդ ենթախմբերի դեպքում* (թող-նեմ, տամ)՝ *կատարյալի հիմքակազմ մասնիկից զուրկ հիմքային ձևի, մնացած բոլոր դեպքերում՝ կատարյալի հիմքի վրա։ Այստեղից կարելի է անել այն բնական եզրակացությունը, որ վաղակատար «դերբայի» դեպքում՝ ա) տիպարային տարբերությունները պահպանվում են միայն մասամբ և բ) կերպային տարբերությունները դադարում են իմաստային արժեք ունենալուց։ Սեռային տարբերությունները բնականաբար պահպանվում են՝* խոս-վ-ել—խոս-եցր-ել—խոս-եց-վ-ել, տեսն-վ-ել—տես-ցր-ել—տես-ց-վ-ել, իմ-աց-վ-ել—իմ-ացր-ել *և այլն։*

3) Ժխտական «դերբայը» կազմվում է անկատարի (մասնակաղապարային 1-ին դաս)՝ ս-ից զուրկ ձևերից, ընդ որում ե-ն փոխվում է ի-ի՝ խոս-ե(ս)—խոս-ի, մն-ա(ս)—մն-ա, տես-ն-ե(ս)—տես-ն-ի, փախ-չ-ե(ս)—փախ-չ-ի, մոտ-ենն-ա(ս)—մոտ-ենն-ա, իմ-ասն-ա(ս)—իմ-ասն-ա *և այլն (ձևով այս դերբայը համընկնում է ըղձականի 3-րդ դեմքի հետ)։ Այստեղից բխում է, որ ժխտական «դերբայի» դեպքում՝ ա) տիպարային տարբերությունները պահպանվում են, բ) այդ «դերբայն» ինքնին ունի անկատար կերպի արժեք։ Սակայն այս «դերբայի» և օժանդակ բայի զուգորդումը* (չեմ խոսի, չեմ գնա) *համապատասխանում է կ-ով (ենթադրական) ձևերին* (կխոսեմ, կգնամ), *ինչպես հաստատականը՝ ժխտականին. կ-ով ձևերը, ինչպես նշել ենք, ունեն կատարյալ կերպի արժեր, ուս-*

տի պետք է կարծել, որ կատարյալի իմաստը տրվում է ոչ թե բուն դերբայական մասի, այլ օժանդակ բայի վրա դրվող շ-ի միջոցով, որ կ-ի նման որոշակիության արժեք է տալիս բայաձևին։ Սեռային տարբերությունները այս դերբայի դեպքում ևս պահպանվում են։

Վերլուծական այս երեք բայահիմքերի կազմության քննությունը բերում է հետևյալ ընդհանուր եզրակացություններին. 1) տիպարային և կերպային տարբերությունները պահպանվում են միայն մասամբ. ա) անկատարի դեպքում տիպարային տարբերությունները հիմնականում կորչում են, ժխտականի դեպքում լիովին պահպանվում, վաղակատարի դեպքում հանդես գալիս միայն մասամբ. բ) այս ձևերից երկուսը՝ անկատարը և ժխտականը, անկատար կերպի արժեք ունեն, իսկ վաղակատարի դեպքում կատարյալի հիմքային ձևերի մասնակի պահպանումը տեխնիկական-ձևական արժեք է ստացել. հասկանալի է, որ «անկատար» անվանումը պայմանական է և չի հենվում բուն «դերբայական» մասնիկների իմաստի վրա։

Ի՞նչ իմաստներ են արտահայտում վերլուծական բայահիմքերը կազմող մասնիկները՝ ում. եղ. ի/ա։ Մեր բերականները, Մանուկ Աբեղյանից սկսած, սրանց վերագրում են կերպային իմաստ՝ տարբերելով կատարվող, կատարված և կատարելի կերպեր։ Կերպային իմաստների՝ մեր կողմից կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ այս դեպքում մենք գործ չունենք իսկական կերպային իմաստների, այլ ժամանակի ոչ-իրադրական (անորոշ) արտահայտության հետ. իրադրական ժամանակի դեպքում նշվում է հաղորդողի ընտրած համեմատության եղրը՝ խոսելու պահը կամ անցյալում ու ներկայում ընտրված որևէ պահ. այլ կերպ ասած՝ իրադրական ժամանակի եղրերը տարբերակվում են այնպես, որ ներկան ցույց է տալիս հաղորդվող եղելության համընկումը խոսելու պահի, անցյալը՝ անցյալի որևէ պահի, ապառնին՝ ապագայի որևէ պահի հետ։ Ոչ-իրադրական ժամանակը ցույց է տալիս պարզապես ժամանակային հաջորդականություն՝ անկախ հաղորդողից. ոչ-իրադրական ժամանակը, ինչպես նշվել է, կարելի է կոչել հաջորդականություն։ Այսպիսով, ժամանակի կարգն ունի երկու ենթակարգ՝ իրադրական ժամանակ և հաջորդականություն, որոնց փոխհարաբերությունը կարելի է համեմատել սեռի և տիպարի տարբերությունների հետ, այսինքն՝ հաջորդականությունը պատկանում է տարակայական-իմացական, իրադրական ժամանակը՝ հաղորդակցային պլանին։ Սրանց կարգեր թե ենթակարգեր լինելու հարցը վերջ ի

վերջո էական նշանակություն չունի. թերևս հնարավոր է սրանք դիտել որպես առանձին կարգեր։ Հաջորդականության երեք եղրերը՝ նախորդում, հաջորդում և համընթացություն (միաժամանակություն) կարելի է նկարագրել երկու հատկանիշով՝ նախորդայնություն և հաջորդայնություն (աղյուսակ 29).

Աղյուսակ 29

Հատկանիշներ	Հաջորդականության եղրեր			
	մշտակա-նություն	նախորդում (նախընթա-ցություն)	հաջորդում	համընթա-ցություն (միաժամա-նակություն)
Նախորդայնություն	+	+	—	—
Հաջորդայնություն	+	—	+	—

Հաջորդականության եղրերի փոխհարաբերությունը կարելի է արտահայտել նաև համադրական աղյուսակով (աղյուսակ 30).

Աղյուսակ 30

Հաջորդայնություն	Նախորդայնություն	
	Նախորդայնություն	Ոչ-նախորդայնություն
Հաջորդայնություն	Մշտականություն	Հաջորդում (չեմ) խոսի, գնա)
Ոչ-հաջորդայնություն	Նախորդում (նախընթացություն) (խոսել, գնացել)	Համընթացություն (միաժամանակություն) (գնում)

Նպատակահարմար է անկատար «դերբայը» կոչել համընթացային, վաղակատարը՝ նախորդային (նախընթացային), ժխտականը՝ ժխտա-հաջորդային վերլուծական բայահիմքեր։ Նկատի ունենալով, որ սրանց և օժանդակ բայի զուգորդությամբ կազմվող վերլուծական (բաղադրյալ) ժամանակային ձևերը պատկանում են սահմանական եղանակին, կարելի է գծել այդ եղանակի վերլուծական ժամանակային ձևերի հետևյալ պատկերը (աղյուսակ 31, էջ 285).

Համադրական բայաձևերի մեջ դրսևորվող կերպային իմաստների քննությունը բացահայտեց կերպային երկու կարգի հակադրություն՝ կատարյալություն—անկատարություն և միակատարու-

Իրադրական ժամանակի եզրեր	Հաջորդականության եզրեր		
	Համընթացություն (միաժամանակություն)	Նախորդում	Հաջորդում
Ներկա	Ներկա (խոսում եմ)	Նախաներկա (խոսել եմ)	Ժխտական ապառնի (չեմ խոսի)
Անցյալ	Անցյալ (խոսում էի)	Նախանցյալ (խոսել էի)	Ժխտական ապառնյալ (չէի խոսի)
Ապառնի			

թյուն—բազմակատարություն: Սակայն հայերենի բայական ձևերի կերպային տարբերությունների պատկերը չի կարելի գծել առանց հաշվի առնելու վերլուծական ձևերի առաջացրած տարբերությունները: Սկսենք միակատարություն—բազմակատարություն հակադրությունից:

Քննելով արժեմ—արժենամ, գիտեմ—գիտենամ, ունեմ—ունենամ *զույգերը, այև* եմ—լինեմ, կամ—կենամ *սուպլետիվ ձևերը՝ պարզեցինք, որ մենք գործ ունենք երեք կարգի քերականական իմաստների հետ՝ կերպային, ժամանակային և եղանակային: Իսկ կա՞ն այնպիսի բայաձևային զույգեր, որոնց հակադրությունը լինի միայն կերպային: Այս հարցին այժմ կարելի է դրական պատասխան տալ, երբ արդեն խոսվել է բայական վերլուծական (բազադրյալ) ձևերի մասին: Նկատի ունենալով որ* արժեմ, գիտեմ, ունեմ, լինեմ, եմ, կամ *բայաձևերը ներկայի բայաձևեր են, և որ այս բայերի դեպքում առկա են բազադրյալ ներկայի զուգահեռ ձևեր՝* արժեում եմ, գիտենում եմ, ունենում եմ, լինում եմ, կենում եմ. *մենք պարզում ենք, որ այս ձևերի տարբերությունը հենց կերպային է (եղանակը և ժամանակը նույնն են՝ սահմանական. ներկա):*

Ներկայի համադրական և վերլուծական զուգահեռ ձևեր ունեցող բայերի թիվը սահմանափակ է, ընդ որում արժենում եմ, գիտենում եմ *ձևերը սակավադեպ են, իսկ* կամ *և* կենամ *բայերը իմաստային նույնություն հանդես են բերում միայն հարադիրների դեպքում, այն էլ ոչ բոլոր դեպքերում (Համմտ.* աճց կենամ և աճց կացա, *բայց չկա* աճց կամ, *այլ միայն* աճց եմ կենում):

Սակայն այն հանգամանքը, որ սրանց շարքում դռնվում են նաև օժանդակ բայը և համապատասխան լինում եմ բայածևը, հնարավորություն է տալիս միակատար—բազմակատար և սրա հետ կապված՝ ոչ երկարատև—երկարատև հակադրությունը տարածելու այլ բայերի վրա[16]. եմ-ը գուգորդվում է ում-ով, ել-ով, ի/ա-ով, լինում եմ-ը՝ ելիս/ալիս-ով (հայտնի է նույնպես «անկատար» անվամբ), ած-ով («հարակատար» կոչված) և ելու/ալ-ու-ով («ապառնի» կոչված) «դերբայների» հետ։ Վերջիններս, ի տարբերություն նախորդների, ունեն մակբայական ու ածականական գործածություն (գնալիս տեսա, գնացած տեղը, գնալու օրը) և, հետևաբար, ժամանակային ձևերի կազմությանը մասնակցում են միայն երկրորդաբար, բայց, նախորդների նման, տարբերակված են ըստ հաչորդականության։ Եթե պահպանենք այս կարգի վերլուծական ձևերի համար արդի հայ քերականության մեջ ընդունված երկրորդական բաղադրյալ անվանումը, ապա բաղադրյալ և երկրորդական բաղադրյալ ձևերի փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 32-րդ աղյուսակով.

Աղյուսակ 32

Հաջորդականություն	Վերլուծականության աստիճաններ	
	բաղադրյալ ձևեր (միակատար և ոչ երկարատև)	երկրորդական բաղադրյալ ձևեր (բազմակատար և երկարատև)
Համընթացություն	1. գնում եմ 2. գնում էի	1. գնալիս եմ լինում 2. գնալիս էի լինում
Նախորդում (Նախընթացություն)	1. գնացել եմ 2. գնացել էի	1. գնացած եմ լինում 2. գնացած էի լինում
Հաջորդում	1. չեմ գնում 2. չէի գնում	1. գնալու եմ լինում 2. գնալու էի լինում

Աղյուսակում բերված ձևերի հետագա համեմատությունը պարզում է հետևյալը։

1) Հաջորդում արտահայտող չեմ գնա—գնալու եմ լինում և չէի գնա—գնալու էի լինում զույգերը արտահայտում են ոչ միայն միակատար—բազմակատար (ոչ տևական—տևական), այլև կատարյալ—անկատար, ժխտական—ոչ ժխտական (հաստատական) հակադրությունները։ Իսկ կա՞ն այնպիսի ձևեր, որոնց մեջ արտա-

16 Մեկ դեպքում ասվա է միակատար—բազմակատարի կարող եմ—կարողանում եմ տիպի հակադրության։

հայտվի միայն միակատար-բազմակատար կերպային հակադրություններ։ Պարզվում է, որ գնալու ձևը կարող է գուգորդվել ոչ միայն լինում եմ, լինում էի, այլև եմ, էի ձևերի հետ. սրա հիման վրա է, որ արդի հայ բերականները գնալու եմ, գնալու էի ձևերը դնում են բաղադրյալ ժամանակային ձևերի շարքը. թեև, իհարկե, դրանք այնպիսի ժամանակային ձևեր չեն, ինչպես գնում եմ, գնացել եմ տիպի բայաձևերը, բայց փաստորեն լրացնում են այդ շարքը մասամբ էլ որպես անկատար իմաստի արտահայտիչներ՝ ի տարբերություն կգնամ, կգնայի բայաձևերի (համապատասխանաբար չեմ գնալու, չէի գնալու ձևերը հակադրվում են չեմ գնա, չէի գնա ձևերին)։ Այսպիսով, գնալու եմ, գնալու էի ձևերը հակադրվում են մի կողմից՝ կգնամ, կգնայի ձևերին ըստ անկատարության և կատարյալության, ըստ խոսելու պահի և ապառնի ժամանակակետի հետ համեմատվելու, մյուս կողմից՝ գնալու եմ լինում, գնալու էի լինում ձևերին՝ ըստ միակատարության և բազմակատարության։

2) Գնալիս եմ տիպի բաղադրյալ ժամանակային ձևեր հնարավոր են միայն գալիս եմ, լալիս եմ, տալիս եմ բայերի համար. մնացած դեպքերում գնալիս տիպի ձևերը ժամանակային ձևեր չեն կազմում։

3) Գնացած եմ, գնացած էի տիպի բաղադրյալ ժամանակային ձևեր հնարավոր են ոչ բոլոր բայերի և բայահիմքերի համար. այս տեսակետից կարելի է տարբերել երկու կարգի ձևեր, որոնց արտահայտած իմաստային հակադրությունը մի դեպքում կերպա-տիպարային է, մյուս դեպքում կերպա-տիպարա-սեռային. 1) վ չստացող և ինքնին վիճակ արտահայտող մի շարք (սահմանափակ թվով) բայերի դեպքում ում-ով ձևերն արտահայտում են վիճակային անցում կամ տվյալ վիճակի սկիզբը, ած-ով ձևերը՝ տվյալ վիճակը. այլ կերպ ասած՝ ում-ով ձևերը հանդես են գալիս որպես յուրատեսակ սկսնական կերպի արտահայտություններ՝ ի տարբերություն այս դեպքում բուն անկատարը ներկայացնող ած-ով ձևերի. համմտ. կանգնում եմ. նստում եմ. պառկում եմ. ննում եմ և կանգնած եմ, նստած եմ. պառկած եմ. ննած եմ. 2) վ-ով ուղեկցվող անցողական և ինքնին գործողություն արտահայտող բայերի դեպքում ու-ով ձևերը ցույց են տալիս տվյալ գործողությունը որպես անկատար, իսկ ած-ով ձևերը՝ նախկինում կատարված գործողության հետևանքը որպես վիճակ. այլ կերպ ասած՝ ած-ով ձևերը հանդես են գալիս որպես յուրատեսակ կատարյալ (ավարտական) կերպի դրսևորումներ. համմտ. գրվում եմ և գրված եմ։ Թեև տվյալ դեպքում փաստո-

րեն առկա է ած–ով և ում–ով ձևերի կերպիմաստային հակառակ հարաբերություն, բայց ընդհանուր առմամբ ած–ով ձևերն արտահայտում են վիճակ, նրանց հակադրվող ում–ով ձևերը՝ գործողություն, շարժում, վիճակային անցում։ –ում–ով և ած–ով բաղադրյալ ձևերի հակադրության կապակցությամբ նշենք հետևյալը. ա) քանի որ վ–ն ած–ի դեպքում կորցնում է ետադարձ անցողականության կամ կրավորականության արտահայտիչ լինելու իր բնույթը, ուստի կարող է զանց առնվել. համմտ. «ասածս ասած է» փոխանակ «ասվածս ասված է». բ) քանի որ կամ և ունեմ միակատար բայաձևերը վիճակային արժեք ունեն, նրանք կարող են այս ած–ով ձևերի դեպքում փոխարինել եմ–ին՝ գրած կամ. գրած ունեմ և այլն։

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

I ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ձևաբանության մեջ մենք քննեցինք բառերի ձևաբանական փոփոխության (թեքման) երկու հիմնական դրսևորումները՝ հոլովումը և խոնարհումը: Այս հիմունքով տարբերվեցին բառերի հետևյալ խմբերը. 1) Հոլովվող բառեր՝ գոյականներ (առարկայանիշ բառեր)՝ ա) գոյական անուններ, որոնք տրվում են որպես ինքնակա անուններ առարկաներին և հասկացություններին՝ ըստ դրանց տարբեր հատկանիշների, և բ) դերանուններ (գոյական դերանուններ), որոնք տրվում են առարկաներին և հասկացություններին՝ ըստ դրանց խոսքային (խոսքա-իրադրական և կոնտեքստային) դերերի. 2) խոնարհվող բառեր՝ դիմավոր բայեր, որոնք ցույց են տալիս առարկայական վիճակներ և միաժամանակ նշում դրանց առարկայական ընդհանուր վերաբերությունը. 3) ոչ հոլովվող և ոչ էլ խոնարհվող բառեր՝ ձևաբանական բառ-մասնիկներ, որոնք հանդես են գալիս որպես հոլովվող և խոնարհվող բառերի վերլուծական ձևերի կազմիչներ՝ հարաբերակից լինելով համադրական ձևերում հանդես եկող մասնիկներին (մի, pn՛ղ, մի՛, պիտի):

Գոյականական բառակապակցությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բառերի այնպիսի կապակցություն, որի գլխավոր անդամը՝ գոյականը, լրացված է մեկ կամ մի քանի լիիմաստ բառով: Գոյականական բառակապակցությունը տարբերվում է վերլուծական գոյականական բառաձևից նրանով, որ վերջինս, բացի գոյականից, այլ լիիմաստ բառ չի պարունակում: Գոյականական բառակապակցու-

թյունը հանդես է գալիս որպես յուրատեսակ ձևակցություն (կոնֆիգուրացիա), որ նախադասության կազմում ունի նույն գործառույթները, ինչ գոյականական առանձին բառաձևը: Քանի որ բոլոր միավորների քննության ժամանակ, առաջնորդվելով զուգաձևության սկզբունքով, մենք փորձում ենք սահմանել կառուցվածքային որոշ համաբանական (անալոգիական) տիպեր, և քանի որ քերականական հարցերի քննությունը մենք սկսել ենք ձևաբանությունից, նշանակում է՝ գոյականական բառակապակցությունը կարելի է դիտել որպես գոյականական բառաձևի հետագա ծավալում: Այս դեպքում գոյականական բառակապակցության լրացական անդամները կլինեն գոյականական բառաձևի մեջ հանդես եկող քերականությունների յուրատեսակ փոխարինողներ: Այսպիսով, գոյականական բառաձևի ծավալումը այդ բառաձևի քերականությունների փոխարինումն է իմաստա-գործառական առումով և երբեմն էլ բաշխմամբ նրանց համապատասխանող բառերով և բառախմբերով: Այս սկզբունքը հետևողականորեն կիրառելու դեպքում գոյականական բառակապակցության կազապարի մեջ հանդես կգան ոչ միայն լիիմաստ (որոշիչ), այլև ոչ լիիմաստ (հարաբերիչ) բառեր, որոնցով ծավալվում ու լրացվում են հոլովական քերականությունների իմաստները: Այս մոտեցմամբ կապական (նախդրավոր և եզդրավոր) կառույցները (կապերով օժտված բառաձևերը) հանվում են ձևաբանությունից և մտցվում բառակապակցության մեջ:

Ե՛վ գոյական անունը, և՛ դերանունը հանդես են գալիս որպես առարկայանիշ բառեր, ուստի և ունեն համատիպ քերականական կարգեր, թեև դրանց տարբեր արտահայտությամբ: Այդ տարբերությունը կապված է գոյական անունների և դերանունների բնույթի՝ վերևում նշված տարբերության հետ. գոյական անունների դեպքում առարկաները տարբերակվում են ըստ այդ առարկաների հատկությունների, դերանունների դեպքում՝ ըստ հաղորդակցման մեջ նրանց կատարած դերի: Առաջիններում հանդես են գալիս առարկաների որակական տարբերությունները՝ ըստ հասարակության կողմից նրանց կարևորության ընկալման, երկրորդ դեպքում առարկաների՝ խոսքա-իրադրական տարբերությունները:

Եթե համեմատելու լինենք գոյական անվան և դերանվան քերականական կարգերը, ապա դժվար չի լինի նկատել, որ գոյական անվան թվի, հոլովի, դասի և առարկայացման կարգերը զուգահեռ ունեն դերանվան թվի, հոլովի, դասի և դեմքի կարգերի մեջ: Հանելով առարկայացման կարգից ցուցա-ստացականության ենթակար-

գր, որի դեպքում մենք գործ ունենք երկու առարկայանիշ միավորների զուգորդման հետ[1] (մենք առայժմ մնում ենք մեկ առարկայանիշ բառաձևի՝ բառի կամ բառախմբի սահմանում), կտեսնենք, որ դեմքի կարգը զուգահեռ ունի որոշյալության կարգի մեջ։ Տարբերությունն այն է, որ դեմքը որոշում է առարկայի դիրքը խոսքային իրադրության, որոշյալությունը՝ կոնտեքստի մեջ. այդ պատճառով էլ, եթե դեմայինն տարբերությունը հաղորդակցման խոսքային իրադրության մեջ էական է, ապա կոնտեքստում (պատմողական խոսքում) էական չէ, և միևնույն բառի նշանակած առարկան կարող է արտահայտվել բոլոր դեմքերով. համմտ. «վերջապես նա տեսավ տունը. սա (=դա=նա կամ այն) կիսախարխուլ վիճակում էր»։ Որոշյալության կարգը ցույց է տալիս առարկայի հայտնիության աստիճանը և հարաբերակից է որոշյալ ու անորոշ դերանուններին։ Դերանվան թվի և դասի արտահայտությունը յուրահատուկ բնույթ ունի. թիվը նույնարժեք չէ գոյականի թվի հետ, դասն ունի սահմանափակ դրսևորում (անձ և ոչ-անձ)։

Համեմատելով քննարկված կարգերը՝ մենք նկատում ենք, որ պայմանականորեն «հոլովում» անվան տակ միավորված բառաձևերը խիստ տարբեր իմաստներ ունեն։ Թվի, դասի և դեմքի ու որոշյալության կարգերը փաստորեն առարկաների տարբերիշներ են, հոլովի կարգը՝ հարաբերիչ։ Առաջինները տարբերում են առարկաները քանակապես, որակապես և խոսքա-իրադրականորեն (սուբյեկտիվորեն՝ խոսողի դիրքով). վերջինը ծառայում է առարկաների հարաբերմանը այլ առարկաների հետ՝ անմիջականորեն կամ բայական միջնորդությամբ։

Անցնելով ծավալման գործողությանը՝ նկատում ենք, որ դերանունը փաստորեն ծավալվում է միայն ըստ հարաբերիչի, բայց ոչ ըստ տարբերիչների. և այդ հասկանալի է. դերանվանական դեմքի, թվի և դասի կարգերը արտահայտվում են փաստորեն ոչ թե մասնիկներով, այլ դերանվանական հատուկ (առանձին) ձևերի միջոցով, այսինքն՝ կազմում են դերանվան էությունը։ Հարաբերիչներից, այսպես կոչված, սեռականը (ստացական դերանուն) նույնպես արտահայտվում է հատուկ (առանձին) բառաձևով (ոչ մասնիկավորմամբ) և, հետևաբար, կազմում է դերանվան էությունը. մյուս հոլովաձևերը հանդես են գալիս նույն արտահայտությամբ, ինչ գոյական անվան դեպքում։

---

[1] *Օրինակ՝* ուսուցիչ—ս ոսպես ուսուցիչ, գիրս—իմ գիրը (համմտ. Հակոբ որպես ուսուցիչ և Հակոբի գիրը)։

Ի՞նչ պատկեր է բացահայտում բառաձևերի ծավալումը։ Անվանական բառակապակցության անդամների կազապարը կլինի հինպանդամ, ինչպես բառաձևի անդամների կազապարը. առաջին դեպքում կենտրոնական (գլխավոր) անդամ կլինի ինքը գոյական անունը, երկրորդ դեպքում՝ գոյականական բառաձևը։ Ի տարբերություն բառաձևային կազապարի, որ միանական է, և որտեղ թեքույթները միայն ետադաս դիրք են գրավում կենտրոնական անդամի նկատմամբ, բառակապակցական կազապարը երկակի է, և լրացական անդամները գրավում են կամ միայն նախադաս դիրք, կամ թե՛ նախադաս (տարբերիչները), թե՛ ետադաս դիրք (հարաբերիչները)։ Համեմատության համար պահպանելով բառաձևի թեքական մասնիկների տառային նշանակումները՝ ըստ իմաստային-գործառական ընդհանրության՝ կստանանք գոյականական բառակապակցության հետևյալ երկու կազապարները.

1. ((((c+) d) a+) b+) A
   Դեպի այն երկու նոր տները
2. (((d+) a+) b+) A (+c)
   Այն երկու նոր տների մոտ

Առարկայանիշ-անվանական բառակապակցության կազապարներից առաջինը ակնհայտորեն պատմականորեն ավելի հին է և ժամանակակից հայերենի համար ոչ տիպական։

Անվանական բառակապակցության և անվանական բառաձևի անդամների իմաստային համեմատությունը բացահայտում է հետևյալ պատկերը. 1) բառակապակցության c անդամը, որ հանդես է գալիս որպես առաջին կազապարի առաջին և երկրորդ կազապարի վերջին բաղադրիչ, համապատասխանում է բառաձևի c անդամին. բառակապակցության մեջ այն կապն է (նախադրություններ ու ետադրություններ), բառաձևի մեջ՝ հոլովական թեքույթը. 2) բառակապակցության d անդամը համապատասխանում է բառաձևի d անդամին. բառակապակցության մեջ այն դերանվանական որոշիչն է, բառաձևի մեջ՝ որոշյալության կարգի թեքույթը. 3) բառակապակցության a անդամը համապատասխանում է բառաձևի a անդամին. բառակապակցության մեջ այն թվական որոշիչն է, բառաձևի մեջ՝ թվանիշ թեքույթը. 4) բառակապակցության b անդամը համապատասխանում է բառաձևի b անդամին. բառակապակցության մեջ այն գոյական անվան ածական որոշիչն է, բառաձևի մեջ՝ դասանիշ թեքույթը. երկուսն էլ ծառայում են առարկանների

որակական խմբավորմանը՝ երկրորդը՝ ընդհանուր գծերով՝ հատատրակության մեջ ամենից ավելի կարևոր համարվող հատկանիշներով, առաջինը՝ ավելի հանգամանորեն:

Ինչպես տեսանք, բառակապակցության անդամների և բառաձևի անդամների իմաստային խմբերի՝ կաղապարի մեջ դրված դիրքը տարբեր է. սա խոսում է ձևական և իմաստային կողմերի դրսևորման մակարդակային և աստիճանային անհամապատասխանությունների մասին: Համեմատենք բառաձևի կաղապարը բառակապակցության երկու կաղապարների հետ (գծագիր 1).

Գծագիր 1



Այս բանը ավելի ակնառու ձևով կարելի է արտահայտել 2-րդ գծագրով (էջ 296).

Բոլոր որոշիչ բառերը կարող են ուղեկցվել ուժեղացնող (եղանակավորող) բառ-մասնիկներով՝ **հենց այն, հենց երկու, հենց նոր** *և այլն, որոնց մասին կխոսենք փոխկապակցման ենթաբաժնում:*

Քանի որ գոյականական բառակապակցության լրացական անդամների թիվը չորս է, մենք կունենանք տիպերի նույն քանակն ու փոխհարաբերությունը, այսինքն՝ 1 միանդամ, 4 երկանդամ, 6 եռանդամ, 4 քառանդամ և 1 հինգանդամ տիպ (աղյուսակ 1, էջ 297).

Գոյականական բառակապակցության կաղապարի քննության հետ կապված ծագում է մի քանի հարց, որոնք հարկավոր է պարզաբանել:

Գծագիր 2



1) Վերևում քննված կաղապարում տեղ չեն գտել գոյականական այնպիսի բառակապակցությունները, որոնց լրացական անդամները գոյականներ են։ Այսպիսի գոյականական բառակապակցությունները կոչելով բազմեզր՝ ի տարբերություն մեներզր՝ մեկ գոյական (որպես գլխավոր անդամ) պարունակող գոյականական բառակապակցությունների, այստեղ նշենք միայն, որ բազմեզը գոյականական բառակապակցությունների քննությունը տեղադրված է փոխկազապարմանը և հատկապես փոխակերպմանը նվիրված հատվածում, որովհետև գոյականը այլ գոյականից կախյալ դիրքի մեջ է դրվում նախադասության մեջ, իսկ բազմեզր գոյականական բառակապակցությունը անմիջական հարաբերությամբ կապված՝ մեկից ավելի գոյականական եզրեր պարունակող նախադասության փոխակերպման արդյունք է (համմտ. «Գրիգորը տուն ունի» → «Գրիգորի տունը», «Գրիգորը մեր դպրոցի ուսուցիչն է» — «Մեր դպրոցի ուսուցիչ Գրիգորը» կամ «Գրիգորը՝ մեր դպրոցի ուսուցիչը» և այլն)։ Այլ կերպ ասած՝ գոյականական բառակապակցության բուն կաղապարի լրացական անդամները որոշվում են ըստ հիմնական գործառության («ըստ բնության»), իբրև լրացում հանդես եկող գոյականները՝ ըստ երկրորդական գործառության («ըստ դրության»)։

2) Գոյականական բառակապակցության կաղապարի յուրաքանչյուր անդամ կարող է արտահայտված լինել միևնույն տիպի՝ համադասական հարաբերությամբ կապված մի քանի բառով՝ «այս և այդ», «երկու, երեք կամ չորս», «հին և նոր», «տները և փողոց-

	Ջուդրզման տիպեր	Օրինակներ
1	A	տներ (տները, տների, տուն, տան և այլն)
2	cA/Ac	դեպի տները/տների մոտ
3	dA	այն տները
4	aA	երկու տները
5	bA	նոր տները
6	cdA/dAc	դեպի այն տները /այն տների մոտ
7	caA/aAc	դեպի երկու տները/երկու տների մոտ
8	cbA/bAc	դեպի նոր տները/նոր տների մոտ
9	daA	այն երկու տները
10	dbA	այն նոր տները
11	abA	երկու նոր տները
12	cdaA/daAc	դեպի այն երկու տները/այն երկու տների մոտ
13	cdbA/dbAc	դեպի այն նոր տները/այն նոր տների մոտ
14	cabA/abAc	դեպի երկու նոր տները/երկու նոր տների մոտ
15	dbaA	այն երկու նոր տները
16	cdabA/dabAc	դեպի այն երկու նոր տները/այն երկու նոր տների մոտ

ները» և այլն: Այս առնչությամբ հարկավոր է նշել հետևյալը. ա) համադասական հարաբերությամբ կապված բառերը ոչ այլ ինչ են, եթե ոչ կաղապարի տվյալ անդամի իրացումները (իրական դրսևորումները), այսինքն՝ այն բառերը, որոնք մտնում են բառային տվյալ կարգի (տվյալ խոսքի մասի) ծավալի մեջ, տեսականորեն կազմում են բաց շարքեր և անվերջ կարող են շարունակվել, մինչդեռ կաղապարի անդամների (կարգերի) թիվը սահմանափակ է. իրականում, սակայն, համադասական լրացումների քանակը սահմանափակված է իրական, ընկալողական և կապակցելիական (տվյալ բառերի հետ կապակցվելու կամ չկապակցվելու) հնարավորություններով. բ) համադաս անդամներ ունեցող գոյականները կարելի է դիտել որպես գոյականական մի քանի այնպիսի բառակապակցությունների միացություններ, որոնք ունեն ընդհանուր անդամներ՝ «նոր տունը»+«հին տունը»→«նոր և հին տները». գ) ածականն անունները երբեմն կարող են հանդես գալ իրար կողքի ոչ թե իսկական համադասությամբ, այլ որոշ ստորադասությամբ, որի

դեպքում տվյալ ածականներից մեկը դառնում է արդեն ածական ունեցող գոյականական բառակապակցության նոր լրացումը. «նոր գեղեցիկ տունը» կարող է նշանակել ոչ թե «նոր և գեղեցիկ տունը», այլ «նոր՝ գեղեցիկ տունը» (ի հակադրություն «հին գեղեցիկ տան»). այս դեպքում էլ կազապարի մեջ հատուկ փոփոխություն չի լինում, այլ հանդես է գալիս միևնույն անդամի բարդացված կազապարը:

3) Հայտնի է, որ Ո. Եսպերսենը, Լ. Տենիերը, Մ. Աբեղյանը և ուրիշ հետազոտողներ տարբերում են գոյականական բառակապակցություն անկախ, կախյալ և երկրորդական կարգի կախյալ բառեր, այլ կերպ ասած՝ գոյականներ, ածականներ (հատկանիշ նշանակողներ) և մակբայներ (հատկանիշի հատկանիշ նշանակողներ). այսպիսով, նրանք հաստատում են ստորադասության տարբեր աստիճաններ: Ինչպե՞ս է հարաբերում այս կազապարը մեր բացահայտած կազապարի հետ: Բանն այն է, որ մեր կազապարը գոյականական բառակապակցության բուն կազապարն է, որի մակարդակով դեռևս հաշվի չեն առնվում կազապարի անդամների մանրակազապարները. ամեն մի անդամ տեսականորեն կարող է ունենալ իր մանրակազապարը, և մակբայը կմտնի այդ կազապարների մեջ, որպես ածականական և թվականական բառակապակցությունների լրացական անդամ. այս դեպքում էլ պետք է նկատի առնել, որ ածականական և թվականական բառակապակցությունների լրացական անդամները մակբայներով չեն սահմանափակվում. ինչպես նշվեց 1-ին կետում, այդ դերով կարող են հանդես գալ նաև գոյականները որպես արդյունք փոխակերպման:

II. ՈՐՈՇԻՉ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՌԱԽՄԲԵՐ

1. ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՈՐՈՇԻՉ

Ժամանակակից հայերենում որպես պարզ դերանվանական որոշիչներ հանդես են գալիս հետևյալ բառերը՝ ի՞նչ, ո՞ր (ինչ, որ), այս, այդ, այն, նույն, այլ, ուրիշ, բոլոր, (ամբ)ողջ, ամեն, մի[2]: Երկրորդաբար սրանցից կարող են կազմվել այլ դերանվանական որոշիչներ –ման,–չափ,–պիսի բազադրիչներով (ինչ՞ման այսման, այսչափ, ինչպիսի՞, այսպիսի և այլն), ինչպես և թվարկված ինչ, որ, մի դերանվանական որոշիչներով (ինչ–ը և որ–ը՝ առանց հարցի):

---

2 Արդի խոսողի գիտակցմամբ նույն–ը, բոլոր–ը և այլն ոչ բազադրյալ են, և նրանց կազմության մասերը՝ ոչ արտադրողական:

Հիշյալ դերանվանական որոշիչների բաշխումը միևնույնը չէ։ Նրանք տարբեր ձևով են կապակցվում գոյական անվան տարբեր ձևերի հետ։ Թվական և ածական որոշիչները և հարաբերիչ թեքույթներն ու բառերը (հոլովներն ու կապերը) բաշխական տարբերություններ չեն առաջացնում։

Թվի, դասի և որոշյալության կարգերի տարբեր դրսևորումները ներկայացնող բառաձևերի հետ դերանվանական որոշիչների զուգորդելիությունը կարելի է արտահայտել 2-րդ աղյուսակով.

Աղյուսակ 2

Դերանվանական որոշիչներ	Նրանց կապակցելիությունը բնական կարգերի տարբեր դրսևորումների հետ					
	Թվի կարգ		Դասի կարգ		Որոշյալության կարգ	
	եզակի պատ(ր) բնկեր(ր)	հոգնակի պատեր(ր) բնկերներ(ր)	անձնական բնկեր(ներ)(ր)	երանիշ պատ(եր)(ր)	որոշյալ պատ(եր)(ր), բնկեր(ներ)(ր)	անորոշ պատ(եր) բնկեր(ներ)
ի՞նչ (ինչ)	−	−	−	+	−	+
ո՞ր (որ)	+	−	+	+	+	−
այս	+	+	+	+	+	−
այդ	+	+	+	+	+	−
այն	−	+	−	+	+	−
նույն	+		+		+	−
այլ	−	+	+	−	−	+
ուրիշ		+	−	+	−	+
բոլոր	−	+	+	−	+	−
(ամբ)ողջ	+	−	−	−	+	−
ամեն	+	−	−	+	−	+
մի	+	−	+	−	−	+

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1 (ի՞նչ (ինչ), ո՞ր (որ), այս, այդ, այն, նույն, այլ, ուրիշ դերանվանական որոշիչները անտարբեր են թվի ու դասի կարգերի նկատմամբ և տարբերակված ըստ որոշյալության. ո՞ր (որ), այս, այդ, այն, նույն դերանվանական որոշիչները զուգորդվում են միայն որոշյալ, ի՞նչ (ինչ), այլ, ուրիշ դերանվանական որոշիչները՝ միայն անորոշ ձևերի հետ։

2) Բոլոր, (ամբ)ողջ, ամեն, մի դերանվանական որոշիչները տարբերակված են և՛ ըստ որոշյալության, և՛ ըստ թվանշության, (ամբ)ողջ-ը՝ նաև ըստ դասանշության. այս դեպքում՝ ա) բոլոր-ը և (ամբ)ողջ-ը գործածվում են միայն որոշյալ, ամեն-ը և մի-ն՝ միայն անորոշ ձևերի հետ. բ) բոլոր-ը գործածվում է միայն հոգնակի, մնացածները՝ միայն եզակի ձևերի հետ:

Այս դերանունների տարբերակման համար կարևոր է նկատի առնել երկու այլ հանգամանք՝ ա) դիմային տարբերակվածությունը (գեմքի կարգի առկայությունը) և բ) հաղորդակցային իրադրականությունը: Դիմային տարբերակվածություն ունեն այս, այդ, այն դերանվանական որոշիչները. նույն-ը գրաբարում դիմային տարբերակում ուներ, բայց այժմ նույն-ի և հնացած-ոճական արժեք ունեցող սույն-ի տարբերությունը չի գիտակցվում որպես այդպիսին: Հաղորդակցային իրադրականության դրսևորմանն են ծառայում ի՞նչ, ո՞ր, այս, այդ, այն դերանունները. սրանցից ի՞նչ, ո՞ր դերանուններն առանց հարցի, այս, այդ, այն-ը՝ առանց դիմային արժեքի և մյուս դերանվանական որոշիչները հանդես են գալիս կոնտեքստային, հաղորդակցի առկայությամբ չպայմանավորված, գործածությամբ:

Նկատի ունենալով, որ բաշխական վերլուծության մեջ ընդգրկված կարգերից միայն որոշյալության կարգն է ընդհանրական տարբերակում տալիս և հաշվի առնելով հաղորդակցա-իրադրականության առաջացրած տարբերությունները[3]՝ դերանվանական որոշիչները կարելի է դասակարգել հետևյալ կերպ (աղյուսակ 3).

Աղյուսակ 3

Հատկանիշներ	Դերանվանական որոշիչների կարգեր			
	1. Ցուցական այս, այդ, այն 2. Որոշյալ-հարցական ո՞ր	Որոշյալ նույն, բոլոր, (ամբ)ողջ	Անորոշ-հարցական ի՞նչ	Անորոշ այլ, ուրիշ, ամեն մի
Որոշյալություն	+	+	—	—
Հաղորդակցային իրադրականություն (ուղղվածություն խոսակցին)	+	—	+	—

3 Դիմորոշությունը առկայացականության մի դրսևորումն է:

Ավելորդ չենք համարում նշել, որ այլ-ն ու ուրիշ-ը հակադրվում են նույն-ին (նույն—ոչ նույն=այլ, ուրիշ):

Ընդհանուր առմամբ դերանվանական որոշիչները հարաբերակից են թվականներին ու ածականներին և կարող են բաժանվել «քանակական» ու «որակական» տեսակների: Այս դեպքում բոլոր որոշիչները ըստ քանակականության և առկայացականության հատկանիշների կբաժանվեն չորս խմբի՝ 1) «քանակական» դերանվանական որոշիչ, 2) «որակական» դերանվանական որոշիչ, 3) «քանակական» որոշիչ (թվական) և 4) «որակական» որոշիչ (ածական):

2. ԹՎԱԿԱՆ ՈՐՈՇԻՉ

Ժամանակակից հայերենի բուն թվական որոշիչները (որոնցից կարող են կազմվել մնացածները) կարելի է բաժանել երեք խմբի՝ 1) մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը (ինն), 2) տասը, հսան, երեսուն, հարյուր, հազար, միլիոն, միլիարդ և ավելի բարձր: Առաջին և երրորդ խմբի թվականները կազմությամբ լիովին անկախ են, երկրորդ խմբի թվականների մի մասի և առաջին խմբի թվականների կապը թեև գիտակցվում է, բայց ավելի նպատակահարմար է դրանք դիտել որպես անկախ կազմություններ, որովհետև գրեթե ամեն մեկի համար գործում է կազմության ուրույն սկզբունք: Մնացած թվականները կազմվում են հետևյալ սկզբունքով՝ 1) բազմապատկման դեպքում 1-ին խմբի թվականները նախադասվում են 3-րդ խմբի թվականներին (հինգ հարյուր=հինգ անգամ հարյուր), 2) դումարման դեպքում ավելի ցածր կարգի թվականները ետադասվում են ավելի բարձր կարգի թվականներին, ընդ որում 1-ին խմբի թվականների՝ 2-րդ խմբի թվականներին հաջորդելու դեպքում տեղի է ունենում անմիջական կցում՝ առանց դադարի (գրության մեջ՝ առանց բացատի), երբեմն և շաղկապի մուտքով (տասներկու, հսանչորս—հսանևչորս և այլն):

Թվի քերականական կարգի քննության ժամանակ մենք բացահայտեցինք արտահայտության և բովանդակության պլանների հակասություններ. նշվեց, որ եզակի ձևը երբեմն կարող է արտահայտել հոգնակի իմաստ (հավաքական անունների դեպքում): Այս տեսակետից մեկ թվականը մյուսների համեմատությամբ կիրառության տարբերություն ունի. 1) եզակիի և հոգնակիի իմաստային սովորական հակադրության դեպքում (միաթվություն—անմիաթվու-

թյուն) մեկ–ը *դրվում է եզակիի իմաստը ավելի ընդգծելու համար (համմտ.* տունը *և* մեկ տունը*). 2) եզակի ձևի՝ հավաքական և ընդհանրական իմաստ արտահայտելու դեպքում* մեկ–ը *հանդես է գալիս որպես առանձնացական իմաստի կրող (համմտ.* խնձոր *և* մեկ խնձոր*,* մարդ *և* մեկ մարդ*): Մնացած թվականները սովորաբար օգտագործվում են հոգնակիի՝ «մեկից ավելի» ընդհանուր իմաստի բաղադրիչները ճշգրտելու համար՝ հանդես գալով որպես հոգնակիի իմաստի յուրատեսակ լրացումները: Այստեղից կարծես թե բխում է, որ այդ թվականները պետք է դրվեն հոգնակիի ձևերի հետ: Սակայն ժամանակակից հայերենում հնարավոր է նրանց գործածությունը և՛ եզակիի, և՛ հոգնակիի ձևերի հետ: Հիմնական գործածությունը առաջինն է, որ հնարավորություն է տալիս խուսափելու հավելուրդայնությունից (երկու և ավելի թվականներն ինքնին արտահայտում են հոգնակիի ձևերին հատուկ «մեկից ավելի» իմաստը): Հոգնակիի ձևը կամ պայմանավորված է շրջապատով (համմտ. «երկու նժույգ», բայց «երկու սքանչելի նժույգներ»), կամ իմաստային արժեք ունի՝ արտահայտելով լրացուցիչ «առանձին-առանձին, տարբեր» իմաստը (համմտ. «հինգ քաղաք», բայց «հինգ քաղաքներ»):*

Վերևում բերված թվականները հայտնի են քանակական թվականներ անունով. դրանք թվի քերականական կարգի արտահայտած իմաստների մասնավորմանն են ծառայում: Սակայն կա այս կարգի թվականներից ածանցվող թվական ածականների մի ամբողջ խումբ, որի անդամները նպատակ ունեն որոշելու առարկայի կարգը: Եթե քանակական թվականի դեպքում առարկաների կարգը և դասավորությունը ուշադրության չի առնվում, ապա այդ դեպքում դրանք ուշադրության կենտրոնում են (համմտ. հինգ *և* հինգերորդ*): Դասական թվականներից* առաջին–ը *(մեկ քանակականի դիմաց) կազմվում է տարբերմատային (սուպլետիվ) եղանակով.* երկ–րորդ–ը*,* եր–որդ–ը*,* չոր–որդ-ը *կազմվում են* երկու*,* երեք*,* չորս *թվականներից՝ դրանց մասնակի կրճատմամբ, իսկ մնացած դասականները կազմվում են քանակականներից* երորդ *մասնիկի օգնությամբ (*հինգերորդ*,* վեց–երորդ*,* յոթ–երորդ *և այլն):*

*Քանակական թվականներից կարող են կազմվել նաև բաշխական (*մեկ–ական*,* երկու–ական*,* երեք–ական *և այլն), քանակական ու դասական թվականներից կոտորակային թվականներ (*մեկ հինգերորդ*,* երկու երորդ*,* հինգ վեցերորդ *և այլն), որոնցից առաջիններն արտահայտում են տվյալ քանակն ունեցող խմբեր, երկրորդները՝*

տվյալ քանակի մասերը։ Կոտորակային թվականների դեպքում՝ ա) մեկ-ով սկսվողների մեկ-ը կարող է դանց առնվել («հինգերորդ մասը» = «մեկ հինգերորդ մասը»), բ) մեկ երկրորդ-ի փոխարեն գործածվում է կես բառը։

Թվականների քննությունն ավարտենք ավոր ածանցով կազմվող թվականների քննությամբ։ Այս թվականները պահպանում են ավոր-ի բուն իմաստը («ունեցող, պարունակող»)՝ հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր. այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե որոշչային, այլ գոյականական թվականներից կազմված բառերի հետ՝ «հարյուրավոր» = «հարյուր միավոր պարունակող»։ Գոյականական գործածությամբ միավոր, տասնավոր, հարյուրավոր, հազարավոր և այլն ձևերը ցույց են տալիս տասնորդական համակարգի հաշվման կարգերը։

3. ԱՆԱԿԱՆ ՈՐՈՇԻՉ

ա. Արմատական ածականները և նրանց կապակցելիությունը

Ածական որոշչի անվան տակ պետք է միավորել բառերի երկու խումբ՝ բուն ածականներ և դերբայական ածականներ (դերածականներ)։ Այստեղ կքննարկվեն բուն ածականները. ինչ վերաբերում է դերբայական ածականներին, ապա դրանց քննարկումը հատկացվում է փոխակազապարմանը և հատկապես փոխակերպմանը նվիրված հատվածին, որովհետև դերբայները ոչ այլ ինչ են, եթե ոչ պիմավոր բայերի գոյականական, ածականական և մակբայական փոխակերպման արդյունք։ Այս առումով դերբայների քննությունը որևէ էական տարբերություն չունի խոսքի մասերի փոխանցումների և փոխակերպումների ընդհանուր քննությունից։

Ինչպես հայտնի է, հայ քերականության մեջ դերբայները դրվում են բայական համակարգի մեջ՝ այն պատճառաբանությամբ, որ նրանց հատուկ են բայիմաստը սեռը և խնդրառությունը[4]։ Իրականում՝ ա) խնդրառությունը բառիս բուն իմաստով հատուկ է ոչ բոլոր բայերին և, ընդհակառակն, կարող է հանդես գալ, նաև ուրիշ խոսքի մասերի դեպքում. բ) սեռը հատուկ է միայն դերբայների որոշ մասին (անցողական բայերից սերած դերբայներին). գ) բայիմաստը, այն ըմբռնմամբ, ինչպիսին ունեն մեր քե-

---

4 Համմ. հատկապես Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 192։

բականները (որպես գործողության արտահայտություն), կարող է հանդես գալ նաև այլ խոսքի մասերի, այդ թվում նաև ածականների մեջ (համմտ. սպանություն, սպանիչ): Եթե բայիմաստ ասելով հասկանանք ոչ թե բայարմատի իմաստը (այս դեպքում սպանությունը և սպանիչ–ը նույնպես պետք է համարվեն բայեր), այլ որոշ պրոցեսայնության, որոշ հարաբերության ժամանակային առանցքի հետ, այսինքն՝ վերջին առումով սովորաբար որոշ մասնիկներով արտահայտվող իմաստներ (հանդես գան դրանք դիմավոր թե անդեմ ձևերում), ապա այս դեպքում սահմանն ավելի որոշակի կլինի, բայց ոչ շատ հաստատուն: Բուն ածականների և դերբայների որոշակի սահմանազատում չի կարող տալ նաև սերումը, որովհետև նախ՝ բայերից կարող են սերվել ոչ միայն դերբայներ, այլև բուն ածականներ, երկրորդ՝ շատ ածականներ ներկայացնում են չձևավորված բայական արմատներ՝ դերբայական արժեքով (համմտ. կախ, զուրկ և այլն):

Կարելի է ասել, որ հիմնականում ածական որոշչի ֆունկցիան կատարող բառերը կազմում են մի շղթա, որի մի ծայրում գտնվում են ածական որոշչի համար հնարավոր քերականական բոլոր կարգերն ունեցող, մյուս ծայրում՝ դրանցից զուրկ բառերը: Այդ քերականական կարգերն են՝ համեմատության աստիճանը, խնդրառությունը, կերպը (լայն մեկնաբանությամբ), հաջորդականությունը և սեռը:

Ահավասիկ մի աղյուսակ, որ ցույց է տալիս ածականների այդ խմբերի կարգային (կատեգորիալ) փոխհարաբերությունը (աղյուսակ 4, էջ 305): Պետք է նշել, որ համեմատության աստիճանի կարգը բուն արժեքով հատուկ է ածականներին և ներկայացնում է նրա հիմնական տարբերակիչներից մեկը:

Ըստ մինչև այժմ մեր դավանած սկզբունքի՝ մենք պետք է նախ բերենք հայերենի նախատիպ ածականների ցանկը և դրանք դասակարգենք ըստ կապակցելիության, ապա քննենք ածականներից կազմվող ածականները, իսկ այլ խոսքի մասերից ածանցված ածականների քննությունը թողնենք փոխակերպման հատվածին: Սակայն նախատիպ (արմատական) ածականների հստակ տարբերակում լեզվի զարգացման յուրաքանչյուր էտապում գրեթե անհնար է[5]: Եթե հիմք ընդունենք Հ. Աճառյանի «Հայերեն արմատական

5 Ս. Կ. Շահումյանի հարակցային մոդելի թերություններից մեկն էլ այն է, որ հաշվի չի առնվում ելակետային ածականների, բայերի, գոյականների, մակբայների որոշման հաճախ անհնար լինելը:

Ածական որոշչի տիպերը	Վերականական կարգեր					Օրինակներ
	Համեմատության աստիճան	Ենթրադրություն	Կերպ	Ժամանակային հաջորդականություն	Սեռ	
Հարաբերական ածական	+	—	—	—	—	փայտե
Որակական՝ ոչ խնդրառու ածական	+	—	—	—	—	գեղեցիկ
Որակական՝ խնդրառու ածական	+	+	—	—	—	գերծ
Անանցողական դերբայ	+/—	+	+	+	—	մոռնցող, մոռեցած
Անցողական դերբայ	+/—	+	+	+	+	կարդացող, կարդացած

բառարանը» և այնտեղից հանենք ժամանակակից հայերենում գործածվող «արմատական» ածականները, ապա մնացած ածականները կլինեն կամ ածանցյալ, կամ ուշ ժամանակներում փոխառյալ (օտարազգի)։ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» ածականները հետևյալներն են՝ ազաճ, ազապ, ազատ, ազոխ, ախոռժ, ակամա, աղավաղ, աղճատ, աղճատ, աղոտ, ամայի, ամբարիշտ, ամբարտավան, ամեհի, ամոլ, ամուր, ամուրի, ամոթ *«մեղմ»*, ամփոփ, այրի, անագորույն, անապակ, անդորր, անդրանիկ, անհեթեթ, անձուկ, անճոռնի, անուշ, անջատ, (ա)նոսր, աշխետ, աշխույժ, աշկարա, ապաճով, ապերասան, ապիրատ, ապստամբ, աջ, առատ, առաքինի, առույգ, ասպնջական, արթուն (զարթուն), արձակ, արու, արտաքին, ավագ, ավազակ, բամբ, անբասիր, բարբարոս, բարգավան, բարդ, բարի, բարկ, բարձր, բերրի, բիրտ, բնդոր (փնթոր), բոզ, բոսոր, բարբ, բութ, բուն *«իսկական»*, բուռն, գաղջ, գաճաճ, գանգուր, գարշ, գեշ *«վատ»*, գեջ *«խոնավ»*, գեր, գիժ, գիրգ, գծուծ (գձուձ), գոլ, գոհ, գող, գողտր(իկ), գոռոզ, գորշ, դաժան, դալար, դալուկ, դանդաղ, դառն, դատարկ, դավաճան, դեղին, դժգույն, դժկամ, դժնդակ, դժնի, դժվար, դժպին, դյուր(ին), դողդոջ, երեր, երիտասարդ, երկայն, երկար, երջանիկ, զազիր, զատ,

զգույշ. զեղխ. զերծ. զիլ. զվարթ. զուսպ. զուրկ. զուտ. զուր. էգ. ըմբոստ. ընտիր (<ընդդիր). բաղկ. բանկ (բանգ). բառամ. բարշամ. բարմ. բարս. բավ. բափուր. բեթև. բերի. բրու (*բիբ *կամ* *բուբ+ու). բյուր. բշվառ. բոթով. բույլ. բուխ. բուճդ. ժանտ. ժիր. ժլատ. լայն. լավ. լերկ. լի. լիրբ. լկտի. լոպոր (–որ-ը *ածանց է*). լույծ. լուռ. լուրթ. լուրջ. լպիրշ. խաժ. խախուտ. խակ. խաղաղ. խամ. խարդախ. խարխուլ. խարտյաշ. խավար. խեթ. խեո. խև. խիզախ. խիտ. խոժոռ. խոճարճ. խոճավ. խոշոր. խոտոր. խուր. խորթ. խույ. խոպոտ. խրթին. խռոխտ. խոյ. ծածուկ. ծանծաղ. ծանոթ. ծանր. ծարավ. ծավի. ծեր. ծույլ. ծուռ. կախարդ. կակազ. կակուղ. կաղ. կամակոր. կայտառ. կանաչ. կապույտ. կարճ. կարմիր. կավատ. կենդանի. կեղծ. կեռ. կիրթ. կից. կծիծ. կով. կոշտ. կույտ. կոր. կուզ. կունդ. կուռ. հախուռն. հակիրճ. հաղթ. համառոտ. համր. հանդարտ. հանդուգն. հաշմ. հաշտ. հասարակ. հաստ. հարազատ հարթ. հարմար. հավասար. հալեժ. հավետ. հեգ. հեզ. հնշտ. հեռ. հզոր. հիդկ. հիմար. հին. հիվանդ. հյու. հղի. հմուտ. հնազանդ. հոժար. հոծ. (ան)հողդողդ. հոռի. հորդ. հույժ (հ+ույժ). հստակ. հուռթի. հպարտ. հտպիտ. հստակ. ձախ. ձիգ. ձույլ. ճաղատ. (խայտա)ճամուկ. ճապաղ. ճապուկ. ճարպիկ. ճարտար. ճերմակ. ճիշտ. ճղճիմ. ճշգրիտ. ճշմարիտ. ճոխ. ճոռոմ. մեղմ. մատաղ. մատղաշ. մանր. մառ. մոտ. մարմանդ. մեծ. մեղկ. մեղմ. մերկ. մուր. մունչ. մռայլ. մտերիմ. նա–խանձ. նաճիր. նեղ. նեռնգ. նիհար. նկուն *«գլխիկոր»*, նման. նվազ. նվաղ. նվաստ. նուրբ. նսեմ. (ա)նոթի. շաղակրատ. շատ. շեղ. շեկ. շեն. շիլ. շիտակ. շոգ. շողոմ. շվայտ. շվար. շռայլ. շտապ. շփոթ. ոլոր. ողորկ. որբ. որձ. որոշ. ուղիղ. ուճայն. ուշ. ուրախ. ուրիշ (*հմմտ.* որոշ). ուրույն. չար. չոր. չքնաղ. պակաս. պակշոտ. պաղ. պայծառ. պապակ. պառավ. պատեհ. պատիր. պատրաստ. պարապ. պարարտ. պարզ. պարկեշտ. պերճ. պիղծ. պինդ. պիրկ. պղտ–որ· չերմ սառն. սև. սերթևեթ. սեղմ. սերտ. սեգ. սին. սթափ (ս+թափ). սխալ. ճսկա. սոսկ. սովոր. սույղ. սուտ. սուր. սուրբ. սպիտակ. ստահակ. ստերջ. ստույգ. ստոր. սրիկա. վաղ. վատ. վատ. վատթար. վարար. վարժ. վավաշ. վավեր. վեհ. վիթխարի. վհատ. վնիտ. վսեմ. վստահ. վտիտ. տամուկ. տափ–ակ. տաք (<տապ–ք). տեղյակ. տ–խեղծ. տխմար. տխուր. տափակ. տրտում. տոթ. ցած. ցամաք. ցանցառ. ցիր. ցուրտ. փակ. փաղաքուշ. փարթամ. փափուկ. փնթի. փոս. փուխր. փուշ. փոխր. քաղցր. քաջ. քարթու. քիչ. օժանդակ. օտար:

Քանի որ ածական որոշիչների կարգը Հարաբերակից է դասի քերականական կարգին, ամենից առաջ որոշենք դասի քերականա-

կան կարգի՝ ածականների բաշխման մեջ մտցրած սահմանափակումները։ Դասի քերականական կարգի մեր վերլուծությունը հայերենի համար բացահայտեց գոյական անունների չորս հիմնական դաս՝ վերացական, անձնանիշ, ժամանականիշ և իրանիշ։ Նկատի ունենալով, որ ժամանականիշ անունների դասը վերջիվերջո պատկանում է վերացական անունների դասին՝ թողնենք երեք դաս՝ անձնանիշ, իրանիշ, վերացական։ Ըստ այսմ մենք կունենանք ածականների ութ տիպ (աղյուսակ 5)։

Աղյուսակ 5

Դասային հատկանիշներ	Ածականների տիպեր							
	1. Ընդհանրական	2. Անձնանիշ	3. Անձնանիշ-վերացական	4. Իրանիշ-վերացական	5. Անձնանիշ	6. Իրանիշ	7. Վերացական	8. Կենդանանիշ
Անձնանշություն	+	+	+	−	−	−	−	−
Իրանշություն	+	+	−	+	−	+	−	−
Վերացականություն	+	−	+	+	−	−	+	−

Ածականական յուրաքանչյուր տիպի (կարգի) համար բերենք համապատասխան օրինակներ (աղյուսակ 6[6]).

Աղյուսակ 6

Կարգեր	Չու գորգման տիպեր	Օրինակներ
1	ASabc	լավ մարդ, տուն, խոսք
2	ASab	մեծ մարդ, տուն
3	ASac	ճարպար մարդ, խոսք
4	ASbc	քանկ տուն, խոսք
5	ASa	երջանիկ մարդ
6	ASb	փակ տուն
7	ASc	ճիշտ խոսք
8	AS	ատելի կենդանի

6 A-ով նշանակում ենք ածականը, S-ով՝ գոյականը, a, b, c-ով՝ դասային հատկանիշները։

Աղյուսակի կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը.

1) Մեր կողմից առանձնացված դասերը բխում են հայերենի ձևաբանական կառուցվածքի առանձնահատկություններից։ Ջուտ տրամաբանական մանրամասն դասակարգում կատարելու դեպքում քննականաբար կմեծանա ածականների տիպերի թիվը։ Հնարավոր է կամ կատարել ստացված խմբերի ներսում ենթադասակարգումներ, կամ ընտրել դասային այլ հատկանիշներ։ Դժվար չէ հաշվել, որ ինը հատկանիշ ընտրելու դեպքում, եթե, իհարկե, պահպանենք հատկանիշների ոացիոնալ ընտրության սկզբունքը, կարելի է ընդգրկել մեր բերած բոլոր ածականները. ինը հատկանիշը կտա $2^9=512$ միավոր։

2) Հատկանիշների ոացիոնալ ընտրության դեպքում ածականները կդասավորվեն դասային հատկանիշների աստիճանական բարդմամբ. մի կողմում կլինի դասային լիակատար չեզոքություն ունեցող ածական, մյուս ծայրում՝ բոլոր դասերին վերաբերող ածական։

3) Ընդհանրական՝ բոլոր դասերին վերաբերող ածականները երկու տիպի են՝ սուբյեկտիվ գնահատման և չափական։ Եվ սա հասկանալի է. առանձնացվող դասային հատկանիշները օբյեկտիվ և որակական բնույթի են, ուստի և հիշյալ երկու տիպերը կարող են բնութագրել այդ հատկանիշներն ունեցող առարկաները սուբյեկտիվ գնահատմամբ և քանակապես. համմտ. լավ, վատ, շատ, քիչ և այլն։

Ապագայում հարկավոր է կատարել ածականների հնարավորին չափ լրիվ դասակարգում՝ ըստ գոյականների տարբեր դասերի հետ նրանց ունեցած կապակցելիության, որ կլինի աշխատատար, բայց կարևոր խնդիր։

բ. Բաղադրյալ ածականներ. համեմատության աստիճանի կարգը

Հայերենում մեծ թիվ են կազմում բաղադրյալ ածականները։ Սրանցից բարդ ածականների և տարբեր խոսքի մասերից ածանցված ածականների մասին կխոսենք փոխկաղապարմանը (հատկապես փոխակերպմանը) նվիրված հատվածում։ Այստեղ կանգ առնենք այն ածականների վրա, որոնք ածանցված են ածականներից։ Այս կարգի ածականները գալիս են մասամբ գրաբարից, մասամբ բար-

բառերից և ժամանակակից հայերենում արտադրողական (պրոդուկտիվ) տիպեր չեն. սրանցից են ա–ժեռ (կարմրաժեռ «կարմրավուն»), ա–ժետ (ենգաժետ), աչ (թթվաչ, մատաղաչ՝ մատաղ–ից), կնկ (կարմրկեկ. մաճրկեկ), նի (գաղտնի. հայտնի). ոգ (նորոգ). ունկ (խորունկ), ունչ (անտերունչ):

Ժամանակակից հայերենի արտադրողական և գործուն մասնիկները երկու կարգի են՝ բուն ածանցներ և վերաբերական (հարաբերիչ) մասնիկներ. սրանց հարաբերությունը նույնն է, ինչ գոյականական բառակապակցության մեջ որոշիչ և հարաբերիչ բառերինը, միայն թե հարաբերիչ մասնիկները կարող են հանդես գալ նաև առանց որոշակի հարաբերիչ արժեքի: Երկրորդ տեսակի մասնիկները հանդես են գալիս որպես ածականի համեմատության աստիճանի քերականական կարգի արտահայտիչներ:

Ածականներից ածականներ կերտող ածանցները արտահայտում են երկու կարգի իմաստներ՝ սուբյեկտիվ-վերաբերմունքային (եղանակական) և օբյեկտիվ-չափական: Առաջին դեպքում արտահայտվում է հաղորդողի դրական կամ բացասական վերաբերմունքը, երկրորդ դեպքում՝ հատկության արտահայտման չափը՝ սաստկական կամ նվազական: Այս երկու կարգի իմաստները հարաբերակից են և հաճախ հանդես են գալիս միասնաբար. նվազականությունը զուգակցվում է դրական-փաղաքշական, սաստկականությունը՝ բացասական-արհամարհական իմաստների հետ: Կան այնպիսի ածանցական կազմություններ, որոնց իմաստը որևէ էական տարբերություն չունի համապատասխան արմատական ածականների իմաստից. տարբերությունը գերազանցապես ոճական բնույթ է:

Նվազական-փաղաքշական են ակ, իկ, ուկ փոքրացուցիչ մասնիկներով, նվազական՝ ավուն–ով կազմությունները՝ կլորակ, ձախորդակ, հաջողակ հանդարտիկ. մեղմիկ. մտերմիկ, փոքրիկ, բաղցրիկ, գիրուկ. երկարուկ, տափուկ և այլն, դեղնավուն, երկարավուն, կանաչավուն. մեծավուն. սպիտակավուն և այլն. ինչպես տեսնում ենք օրինակներից, ավուն–ը գործածական է հատկապես գույների անվանումների համար. իկ ածանցը միանալով լ և ռ աճականների հետ՝ առաջին դեպքում բառին տալիս է փաղաքշական, երկրորդ դեպքում՝ արհամարհական երանգ՝ հաստ–լ–իկ. հաստ–ռ–իկ. ռ–ով կազմությունները ժամանակակից գրական հայերենում գործուն չեն և գալիս են բարբառներից:

Սաստկական են գին ածանց- [illegible] կազմությունները, թեև այդ

սաստկականությունը ոչ բոլոր դեպքերում է որոշակի արտահայտություն ստանում՝ զվարթագին, հիվանդագին, մոլեգին *և այլն։*

Նվազական և սաստկական բնույթի ածանցներով որոշ կազմություններ երբեմն իմաստի որոշակի տարբերություն չեն առաջացնում։ Իմաստային հատուկ բեռնվածություն չունեն նաև իճ-ով կազմությունները (խավարիճ, խորիճ, հեշտիճ, նրբիճ *և այլն)։ Որակ բառը երբեմն հանդես է գալիս որպես հատուկ ածականակերտ մասնիկ՝ բառերին տալով միայն ոճական երանգ՝* սառնորակ, սևորակ *և այլն։*

Որոշ կարգի ածանցական մասնիկներ, որոնք ածականներ են կերտում գոյականներից, կարող են հանդիպել նաև ածականական հիմքերի դեպքում. այդպիսին են ան, դժ *ժխտական նախամասնիկները և* ական, ավոր, ոտ *վերջածանցները։ Սրանցից* ան-ը և դժ-ը *ավյալ դեպքում ձեռք են բերում* ոչ-ի արժեք *(*տեղյակ—անտեղյակ = ոչ-տեղյակ, գութ—դժգոհ = ոչ գոհ *և այլն).* ական-ը և ավոր-ը *փաստորեն պահպանում են իրենց բուն արժեքը, և ածականական հիմքերը պետք է մեկնաբանել որպես համապատասխան գոյականական հիմքեր՝* արդիական = արդի ժամանակին վերաբերող, զգուշավոր = զգուշություն ունեցող, կեղծավոր = «կեղծիքավոր» *և այլն. վերջապես,* ոտ-ը *ունի նվազացուցիչ արժեք՝* դեղնոտ—դեղնավուն, հիվանդոտ—հիվանդավուն *և այլն։*

Եթե բուն ածանցական կազմությունները բառարանային բառաձևեր են, այսինքն՝ բառարաններում բերվում են որպես բառարանային ինքնուրույն միավորներ, ապա (ա)գույն *մասնիկը, բացառությամբ որոշ դեպքերի, երբ այն արտահայտում է պարզապես սաստկականություն, հանդես է գալիս որպես համեմատության քերականական իմաստի արտահայտիչ։ Առանց* ագույն-ի և ագույն-ով *ձևերի համեմատությունը ցույց է տալիս, որ առաջին դեպքում առկա է ընդհանրապես հատկանիշ, երկրորդ դեպքում հատկանիշի դրսևորման ծայրագույն աստիճան։ Քանի որ ամեն մի հատկանիշ վերջիվերջո հատուկ է որևէ առարկայի, ապա կարելի է ասել, որ առաջին դեպքում առարկայի համար նշվում է տվյալ հատկանիշի առկայությունը, երկրորդ դեպքում տվյալ հատկանիշն ունեցող առարկան համեմատության մեջ է դրվում այդ հատկանիշն ունեցող այլ առարկաների հետ, և ցույց տրվում, որ տվյալ առարկան տվյալ հատկանշի դրսևորման չափով գերազանցում է այդ հատկանիշն ունեցող մյուս առարկաներին։ Նշելով տվյալ առարկայի համար տրվ-*

յալ հատկանիշը՝ խոսողը առարկան մի կողմից՝ տարբերակում է այն առարկաներից, որոնք չեն պատկանում տվյալ հատկանիշն ունեցողների դասին (չունեն տվյալ հատկանիշը), մյուս կողմից՝ հատկացնում է այն առարկաների դասին, որոնք ունեն տվյալ հատկանիշը. այլ կերպ ասած՝ խոսողը կատարում է առարկաների տարբերակում և նույնացում ըստ տվյալ հատկանիշի: Այսպիսով, համեմատելով տվյալ առարկան տվյալ հատկանիշն ունեցող այլ առարկաների հետ՝ խոսողը որոշում է նրա տեղը տվյալ հատկանիշով օժտված դասի ներսում, նշում առարկաների տվյալ դասը բնորոշվող հատկանիշի ծայրադույն (գերադրական) արտահայտությունը:

Որոշելով ածականի համար համեմատության աստիճանի համադրական երկու արտահայտություն՝ գերադրական և ոչ-գերադրական՝ մենք կարող ենք կատարել երկու այլ գործողություն ևս՝ գործառական-իմաստային փոխարկում և համեմատության աստիճանի եղրերի բնույթի պարզաբանում:

Մեծագույն, լավագույն տիպի ածականները գործառական-իմաստային առումով կարելի է փոխարինել **ամենամեծ, ամենալավ** տիպի ածականներով: Ինչպես նախադաս և ետադաս կապերը ստեղծում են գոյականական բառակապակցության երկու տարբեր կաղապարներ, այնպես էլ ածականի գերադրական աստիճանը կարող է հանդես գալ երկու կաղապարով՝ (a+)A և A(+a)՝ **ամեն(ա)-մեծ** և **մեծ-(ա)գույն**: Այս երկու կաղապարների համեմատությունը ցույց է տալիս, որ առաջին կաղապարն ավելի ընդհանրական է և ոճականորեն չեզոք. երկրորդ կաղապարը գործում է միայն որոշ կարգի՝ հնից եկող (գրաբարին ևս հատուկ), բայց ոչ ժողովրդական-բարբառային ածականների դեպքում. **չաղագույն, ազիզագույն** տիպի ձևեր հնարավոր չեն:

Համեմատելով **մեծ** և **մեծագույն** ձևերը՝ մենք տեսանում ենք, որ երկրորդ դեպքում տվյալ առարկան համեմատվում է առարկաների տվյալ հատկանիշն ունեցողն ողջ դասի հետ. հասկանալի է, որ հնարավոր է առարկայի համեմատությունը նաև տվյալ դասի մեջ մտնող մեկ կամ մի քանի այլ առարկաների հետ: Դժվար չէ պարզել, որ շատ ուրիշ լեզուներում ածականի գերադրական աստիճանի կողքին համադրական արտահայտություն ունի նաև համեմատության բաղդատական կոչված աստիճանը. հայերենում այն ունի միայն վերլուծական արտահայտություն: Համեմատության բաղդատական աստիճանը բնականաբար կունենա երկու դրսևորում՝ բաղդատական-առավելական և բաղդատական-նվազական՝ նրանից

ավելի գեղեցիկ—ճրաքից ավելի ֆիշ (պակաս) գեղեցիկ: *Քանի որ բացառականով համեմատյալը ինքնին, առանց ավելի բառի, կարող է արտահայտել բաղդատական աստիճան, ուստի և ավելի-ն դառնում է հավելուրդային, և բաղդատական աստիճանը հանդես է գալիս ոչ թե ածականի, այլ համեմատյալի (համեմատվող խնդրի) բացառական հոլովով: Ածական որոշչի դեպքում բացառական հոլովը սովորաբար* ևան *կապով չի փոխարինվում:* Ինձնից (ավելի) գեղեցիկ մարդը, *բայց ոչ* Քան ես ավելի գեղեցիկ մարդը *կամ* Ավելի գեղեցիկ ևան ես մարդը:

Ոչ բոլոր ածականներն են ստանում համեմատության աստիճաններ: Ըստ համեմատության աստիճան ստանալու հատկանիշի կարելի է տարբերել երկու տեսակ ածականներ՝ ա) համեմատության աստիճաններ ստացող կամ, ըստ ավանդական անվանման, որակական և բ) համեմատության աստիճաններ չստացող կամ հարաբերական: Հարաբերական ածականները միայն գոյականական գործառության բառերից ածանցված ածականներ են, որոնք ցույց են տալիս առարկայի հարաբերությունը նրա համար նյութ ծառայած, նրա կազմի մեջ մտնող առարկայի հետ՝ փայտյա, ոսկեղեն և այլն:

4. ՈՐՈՇՉԱՅԻՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. Որոշչային բառակապակցությունների տեսակները

Որոշչային բառերի երեք կարգերը՝ որոշիչ դերանունները, թվականները և ածականները, իրենց հերթին կարող են ունենալ կախյալ բառեր և հանդես գալ որպես գոյականական բառակապակցության ծավալուն անդամներ, այլև, ինչպես կտեսնենք, որպես նախադասության ծավալուն ստորոգելիներ: Այսպիսով, բառակապակցության և նախադասության կազապարի մեջ մտնող այս բառերն ու բառախմբերը կարող են ունենալ իրենց բառակապակցական մանրակազապարները:

Որպես որոշչային բառերի լրացումներ կարող են հանդես գալ երկու կարգի բառեր՝ ա) հատուկ բառեր, որոնց համար բնորոշ է հենց մակորոշչային գործառությունը, և որոնք հայտնի են «մակբայներ» ընդհանուր անունով, թեև տարբերակված մոտեցման դեպ-

քում հարկավոր կլիներ առանձնացնել «մակածականները» և «մակբվականները» (դերանվանական որոշիչները, որպես ինքնին որոշյալ, կամ ինքնին անորոշ բառեր, մակորոշիչ բառեր չեն ստանում), բ) գոյականներ, որոնք հանդես են գալիս կախյալ դերով շնորհիվ նախադասության համապատասխան փոխակերպման և ըստ նախադասության մեջ ունեցած գործառության կարող են կոչվել բուն ու պարագայական խնդիրներ. հմմտ. «Քաղաքում (այդ) մարդը բոլորին սիրելի էր»→«Քաղաքում բոլորին սիրելի (այդ) մարդը», որտեղ քաղաքում–ը պարագայական խնդիր է, բոլորին–ը՝ բուն խնդիր:

Որոշչային բառակապակցությունների կախյալ անդամներ կազմող բառերի հիշյալ երկու խմբերից գոյական խնդիրները կքննարկվեն փոխակերպմանը նվիրված հատվածում: Ինչ վերաբերում է մակբայներին, ապա դրանք կքննարկվեն այստեղ այն չափով, որ չափով վերաբերում են բուն թվականներին և ածականներին, այսինքն՝ հանդես են գալիս որպես «մակբվականներ» և «մակածականներ»:

Որոշչային բառակապակցությունների երեք խմբերը բառակապակցություններ կազմելու միևնույն կարողությունը չունեն.

1) Դերանվանական որոշիչները ընդհանրապես լրացում չեն ստանում. գոյականաբար գործածվելու դեպքում նրանք կարող են ստանալ կամ բացառականով խնդիր (ցույց է տալիս այն ամբողջը՝ որին պատկանում է տվյալ դերանվան նշանակած առարկան), կամ համեմատության խնդիր. հմմտ. ձեզնից յուրաքանչյուրը, ձեզնից ո՞րը և ձեզ նման մեկը:

2) Թվական անունները, որոնք կարող են բաղադրվել ըստ թվային կարգերի (միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ և այլն), անորոշ դերանունների նման կարող են ստանալ բացառականով խնդիր՝ գոյականական գործածությամբ՝ մեզնից հինգը, նրանցից հինգերորդը. հազվադեպ միայն նրանք կարող են ստանալ բուն որոշչային գործառությամբ տեղի և ժամանակի պարագայական խնդիրներ՝ իմաստի սահմանափակմամբ՝ տանը երկու, դրսում երեք հոգով, երեկ մեկ, այսօր երկու անձնավորություն և այլն: Իհարկե, այս դեպքում նկատի չունենք սահմանափակման եղանակիչները, որոնք կարող են դրվել որոշչային բոլոր կարգերի, այլև գոյականների վրա՝ միայն այս, միայն երկու, միայն կարմիր, միայն փողոցը, միայն ես և այլն:

3) Ածական որոշիչները, ի տարբերություն նախորդների, կա-

րող են կազմել ընդարձակ բառակապակցություններ։ Ածականական բառակապակցությունները որպես լրացական անդամներ ունեն և՛ պարագայական ու առարկայական խնդիրներ, և՛ հատուկ որոշիչ բառեր՝ ածականական որոշիչներ կամ մակբայներ։ Մենք կխոսենք ածական անվան մակբայական լրացումների մասին, իսկ խնդիրների բնութագրությունը կթողնենք փոխակերպման հատվածին՝ նշելով միայն, որ այդ խնդիրները մասամբ պայմանավորված են իրենց իսկ ածականների բնույթով, մյուսները կապված են ածականների համեմատության աստիճանների հետ։

բ. Մակորոշիչ բառեր՝ «մակբայներ»

Ի տարբերություն գոյականների և ածականների՝ մակբայները հայերենում գրեթե չունեն այնպիսի ածանցներ, որոնք մակբայներ կազմեն հենց մակբայներից՝ նրանց հաղորդելով իմաստային որևէ նոր երանգ։ Այդ պատճառով էլ այստեղ կքննենք միայն արմատական մակբայները և նրանց բաշխական տիպերը. այլ խոսքի մասերից կերտված մակբայները կքննվեն փոխակերպման հատվածում։

Ըստ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» տրվյալների՝ հայերենի բուն (արմատական կամ իբրև այդպիսի գիտակցվող) մակբայները հետևյալներն են՝ ակամա, ամուր, ամփոփ. [այժմ<այս ժամ], անդ *«այնտեղ» (հնց.)*, անջատ, աշխույժ, աշկարա, ապա, ապ (առաջ), առաս, աստ *«այստեղ» (հնց.)*, արագ, արդ [արդեն, արդյոք], դանդաղ, դեռ, դժկամ, դուրս (դուռ–ի *հետ ընդհանուր ծագմամբ)*, եռ, երկար, զատ (<զ–հատ), զգույշ (<զ–գույշ) զվարթ, զուրկ, թյուր, ժիր, իբր, [իմովսաճն (իմ–ով–սաճն, *հմմտ.* յուռովսաճն, մեռովսաճն, ձեռովսաճն)], իսկույն (իսկ+ույն), լավ, լոկ *(եղանակիչ բառ)*, լուռ, խաղաղ. խեթ, խիստ, խոժոռ, խոտոր, խռոխռտ, ծուռ, կամա *(գործածվում է* ակամա–*ի հետ միասին)*, կաճուխ, կարճ, կից *(նաև կապ և ած.)*, կուշտ, [կրկին (<երկ–կին)]. [հազիվ], հաճախ, համառոտ (համ–առոտ. *հմմտ.* կարճառոտ). [միա–համուռ], հանդարտ, հաշտ, [հապ–ճեպ], հար *«շարունակ»*, հարթ, հարմար, հավասար, հեշտ, [հեռ–ու], [հեռ–ո], հերու, [հ–ույժ], [հ–լու], հիմար, ձախ, ձիգ, ճիշտ. ճշմարիտ, մոտ *[հմմտ.* մատ–չ–իմ*]*, մարմանդ, մեղ–մ, [մերթ]. մեջ, միայն *(եղանակիչ)*, միշտ, [մուճջ] (լուռ ու մունջ)], մոայլ, նավեռ, նավերժ, նախ, [ներ–ս], նոր, նվազ, շատ, շեղ. շիտակ, շուտ, շուր–չ (շուռ–ի *հետ ստուգաբանորեն կապված) [նաև* չուրջ *«մոտավորա-*

պես»՝ շուրջ [առն], շոայլ, շտապ, ոյր, ուղիղ, ուշ, ուրախ, պակաս (հմմտ. նվազ) պարապ, պարկեշտ, չոկ, [սակ-ավ], սեղմ (հմմտ. ամփոփ), սերտ (սերտ կապել), սխալ, սոսկ (հմմտ. լոկ, մի-այն), սուտ, ստեպ (հնց.), ստույգ, վաղ [նաև վաղ-ը], վայր (վար) «ցած», վատ, վարժ, վեր, վհատ, վոազ, տխուր, տրտում, ցած, փիշ:

Սրանցից արդյոք, իբր, լոկ, միայն, սոսկ հանդես են գալիս որպես եղանակական բառ-մասնիկներ և կարող են դրվել ոչ միայն ածականների ու բայերի, այլ գոյականների և դերանունների վրա. Մնացած մակբայների մեծ մասը միաժամանակ նաև ածական է, ընդ որում երբեմն գերակշռում է ածականական գործածությունը: Կան մակբայներ, որոնք հանդես են գալիս ըստ գործածության որպես կապեր (գոյականների մոտ) և որպես մակբայներ (բայերի մոտ)՝ առաջ, ճետո, ճետու, մոտ, վեր, ցած, բոլորն էլ տեղային և ժամանակային իմաստով: Կան մակբայներ նաև շաղկապական արժեքով՝ մանավանդ կրկնությամբ կամ այլ մակբայների հետ զուգորդվելով՝ մերթ—մերթ, նախ—ճետո, ապա և այլն: Աստ, անդ արխաիկ մակբայները վաստորեն ունեն դերանվանական մակբայների արժեք: Եթե բացառենք առաջին հերթին ածականական արժեք ունեցող մակբայներն ու եղանակիչ բառերը և պայմանականորեն թողնենք որոշ բազադրյալ մակբայներ (միչակ փակագծերի մեջ), ապա կստացվի «բուն» մակբայների հետևյալ կազմը՝ անդ, ապա, [առաջ], աստ, արդ, [արդեն], [դուրս], եռ, իսկույն, [կամա], կանուխ, [կրկին], [ճազ-իվ], ճաճախ, ճար «շարունակ», [ճետու], [ճետ-ո], ճերու, [ճ-ույժ], ճիմա, միշտ, մոտ, ճավետ, ճավերժ, նախ, [ներս], չուտ, [շուրջ «մոտավորապես»], [սակավ], վաղ [և վաղ-ը], վայր «ցած» [և վար]), վեր, վոազ, ցած, ուշ:

Այս մակբայները իմաստային տեսակետից կազմում են երեք խումբ՝ 1) տեղանիշ՝ առաջ, դուրս, եռ, ճետու, մոտ, ներս, վայր [>վար], վեր, ցած, այլև աստ, անդ. 2) ժամանականիշ՝ ապա, առաջ, արդ, արդեն, իսկույն, կանուխ, ճար, ճետո, ճերու, ճիմա, միշտ, ճավետ, ճավերժ, նախ, չուտ, վաղ [վաղ-ը], վոազ, ուշ. 3) չափ ու քանակ նշող մակբայներ՝ կրկին, ճազիվ, ճաճախ, ճույժ, շուրջ «մոտավորապես», սակավ: Ժամանականիշ մակբայների մեջ մենք դրեցինք նաև ժամանակի չափ արտահայտողները:

Ինչպես տեսնում ենք, չափ ու քանակ արտահայտող մակբայների մեջ այստեղ դրվեցին ինչպե՞ս հարցին պատասխանող, բայց չափ ու քանակի իմաստ արտահայտող մակբայները: Այսպես կոչված «որակական» մակբայները բնույթով ածականներ են:

«Արմատական» մակբայների երեք խմբերը ունեն տարբեր կարգի կապակցելիություն, որ երևում է 9-րդ աղյուսակից.

Աղյուսակ 9

Մակբայներ	Նրանց կապակցելիությունը		
	Թվական որոշչի հետ (երեք)	Բուն ածականի հետ (կատմիր)	Դերբայական ածականի հետ (գնացած)
1 Տեղաձի?			
առաջ	—	—	+
դուրս	—	—	+
ետ	—	—	+
հետու	—	—	+
մոտ	+	—	+
ներս	—	—	+
վայր (վար)	—	—	+
վեր	—	—	+
ցած	—	—	+
աստ	+?	+?	+
անդ	+?	+?	+
2 Ժամանակաձի?			
ապա	+	+	+
առաջ	+	+	+
արդ	+	+	+
արդեն	—	—	—
խակուչն	—	—	+
կանուխ	—	—	+
հար	—?	—	+
հետո	+	+	+
հերու	+	+	+
հիմա	+	+	+
միշտ	+	+	+
հավետ	+	+	+
հավերժ	+	+	+
նախ	+	+	+
չուտ	—	—	+
վաղ	—	—	+
վաղը	+	—	+
վառ	—	—	+
ուշ	—	—	—
3 Չափ ու քանակի			
կրկին	—	+	—
հազիվ	+	+	+
հաճախ	—	+	+
հազ	—	—	—
չուրջ	—		—

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1. Տեղանիշ մակբայները հիմնականում կապակցվում են դերբայական ածականների (և ընդհանրապես բայերի) հետ. բացառություն են կազմում հնացած և դերանվանական բնույթի անդ, աստ մակբայները. մոտ մակբայի բացառությունը կազմելը թվացող է. այն զուգորդվում է թվական որոշիչների հետ «մոտավորապես» իմաստով, այսինքն՝ փաստորեն այլ մակբայ է (չափ ու քանակի):

2. Ժամանականիշ մակբայները մեծ մասամբ կապակցվում են որոշիչների երեք կարգի հետ էլ՝ թվական որոշիչների և բուն ածականների դեպքում ցույց տալով տվյալ հատկանիշի կամ քանակի ժամանակային սահմանափակությունը. բացառություն են կազմում իսկույն, կաճուխ, շուտ, վաղ, վռազ, ուշ մակբայները, որոնք թվական որոշչի և բուն ածականի հետ չեն կապակցվում: Դրանք ցույց են տալիս կամ եղելությունների ժամանակային հարաբերությունը (կաճուխ, վաղ, ուշ), կամ արագությունը (իսկույն, շուտ, վռազ):

3. Չափ ու քանակի մակբայների մեծ մասը կապակցվում է որոշիչների՝ նշած երեք կարգերի հետ էլ. հույժ-ը ցույց է տալիս որակի սաստկություն և զուգորդվում է միայն որակական ածականների հետ. շուրջ-ը «մոտավորապես» իմաստով, ինչպես նաև վերևում հիշված մոտ-ը՝ նույն իմաստով, կապակցվում է միայն թվական որոշիչների հետ:

III. ՀԱՐԱԲԵՐԻՉ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՌԱԽՄԲԵՐ՝ ԿԱՊԵՐ

Հարաբերիչ բառերը կամ, ինչպես ընդունված է անվանել հայ քերականության մեջ, կապերը երկու տիպի են՝ նախադրություններ ևետադրություններ. նախադրությունները հանդես են գալիս գոյականական բառակապակցության առաջին, ետադրությունները՝ երկրորդ կազապարում. առաջին դեպքում նրանք նախորդում են բառակապակցության մնացած բոլոր անդամներին, երկրորդ դեպքում՝ հաջորդում:

Ժամանակակից հայերենի բուն նախադրություններն են առանց, բացի, դեպի, ըստ, ի, իբր(և), մինչ(և), ցաւ: Ճիշտ է առանց-ը կազմված է առ-անց, բացի-ն՝ բաց-ի, դեպի-ն՝ դեպ-ի բաղադրիչներից, բայց արդի հայերենի առումով դրանք գրեթե անբաղադիր կազմություններ են: Գրաբարից ավելի վաղ շրջանը գնալու դեպքում հնարավոր է պարզել նաև ըստ, իբր, մինչ նախադրությունների բաղադրականությունը, բայց այդ չի մտնում լեզվի համաժամանակյա ուսումնասիրության խնդիրների մեջ: Որպես նախադրություններ

կարող են հանդես գալ նաև՝ ա) ի և սրա հին տարբերակը ներկայացնող ն- (<յ-՝ ձայնավորից առաջ), բնդ. բան նախադրություններով ու դեմ, պես եռադրություններով որոշ բաղադրություններ՝ ի դեմս, ի հաշիվ, ի հեռուկս, ի փառս, հանձին, հանձինս, հանուն, նախման, ընդդեմ, ինչպես, որպես. բ) որոշ քարացած կամ դեռևս գիտակցվող հոլովաձևեր և խոնարհաձևեր՝ բացառությամբ, շնորհիվ, փոխանակ, բացառյալ, նայած, ներառյալ, չնայած, չհաշված. գ) որոշ խնդրառու ածականներ՝ հակառակ, համաձայն: Սովորաբար նախադրությունների մեջ դրվող առ, բնդ, ց դրաբարյան նախդիրները հանդիպում են որոշ քարացած արտահայտություններում և չեն կարող գործուն նախդիրներ համարվել. համմտ. առ այծ, ընդամին, բնդ որում, ցտեսություն, ցպահանջ: Հակառակ, համաձայն և շնորհիվ, երբեմն էլ բացի նախադրությունները կարող են գործածվել նաև որպես եռադրություններ, ընդ որում վերջին երկուսի համար ավելի տիպական է եռադաս գործածությունը՝ հակառակ իմ չանճերին—իմ չանճերին հակառակ, համաձայն բաղսովեռի որոշման—բաղսովեռի որոշման համաձայն, շնորհիվ Գրիգորյանի—Գրիգորյանի շնորհիվ:

Ժամանակակից հայերենի եռադրությունները գրեթե առանց բացառության գոյականական քարացած կամ դեռևս գիտակցվող հոլովաձևեր են, բայական հիմքեր և բայաձևեր, խնդրառու ածականներ: Եթե բուն նախադրություններ համարենք արդի հայերենի առումով անբաղադրիր և միևնույն ծագումն ունեցող գոյականների հետ ծագումնաբանական կապը կորցրած եռադրությունները, ապա կարելի է նշել հետևյալները՝ աճց, առաջ, դեմ, զատ, կից, համար, հանդերձ, հանդեպ, հետ, մեջ, մոտ, նման, շուրջ(ը), պես, վրա, տակ: Սրանցից աճց-ը, զատ-ը և կից-ը ակնհայտորեն բայահիմքեր են և պայմանականորեն կարող են դրվել բուն եռադրությունների մեջ. համար-ը և հանդերձ-ը ծագումնաբանորեն նույնն են համար և հանդերձ գոյականների հետ, բայց իմաստային կապը նրանց միջև արդեն խզված է. առաջ-ը թեև համարվում է առ և աջ բաղադրիչներից[7], բայց աջ անկախ բաղադրիչ առանձնացնելը քիչ հավանական է[8]. հանդեպ-ը կազմված է հան-դեպ բաղադրիչներից, բայց, արդի հայերենի դիրքերից անբաղադրիր է (թերևս իրանական կազմություն է ամբողջովին): Իբրև եռադրություններ հանդես են գալիս նաև՝ ա)

---

[7] Համմտ. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 1, 1926, էջ 475:

[8] Համմտ. J. Pokorny, Indogermanishes etymologisches Wörterbuch, I 1959, էջ 816:

անփոփոխ ձևով (հայցականի արժեքով) զանազան վերացական գոյականներ՝ ընդհանուր-կատեգորիական իմաստով՝ ժամանակ, չափ, տեղ, բ) քարացած կամ գիտակցվող հոլովաձևերով գոյականներ՝ աճունից, աճունով, առթիվ, առջև, գծով, դեպքում, դիմաց, դուրս, ընթացքում, կողմից, մասին, նպատակով *և այլն, գ) քարացած կամ գիտակցվող խոնարհաձևեր՝* վերաբերյալ. *դ) խնդրառու ածականներ՝* համապատասխան, հավասար *և այլն:*

Եթե ի մի բերենք վերևում ասվածները, ապա կարելի է ասել, որ ժամանակակից հայերենի հիմնական եղադրություններն են աց, ացած, աճունից, աճունով, առաջ, առընթեր, առթիվ, առջև, գծով, դեմ, դեպքում, դիմաց, դուրս, զատ, զուգընթաց, ընթացքում, ժամանակ, ի վար, ի վեր, կից, կողմ, համապատասխան, համար, համեմատ, նանդեպ, հանդերձ, հանդիման, հավասար, հետու, հետո, հետևաճոով, հիման վրա. ձևոիով, մասին, մեջ, միջոցին, միջոցով, միջև, մոտ, ներս, ներքո, ներքև, նկատմամբ, նման, նպատակով, շուրջ(ը), չափ, պատճառով, պես, սկզբում, վերաբերմամբ, վերաբերյալ, վերջում, վերև, վրա, տակ, տեղ, փոխարեն, ուղղությամբ, օրոք:

Կապերը տարբերվում են իրենց բաշխմամբ. գոյականական որոշ հոլովաձևերի հետ նրանք կարող են զուգորդվել, մյուսների հետ՝ ոչ: Ի տարբերություն գոյականական որոշիչների տարբեր կարգերի, որոնց զուգորդելիությունը սահմանափակվում էր սովորաբար անվան քերականական կարգերից որևէ մեկով, կապերի գործածությունը կարող է սահմանափակվել անվանական համադրական հարացույցի բոլոր կարգերով. այլ կերպ ասած՝ որոշ կապեր կարող են հանդես գալ միայն անորոշ, միայն եզակի, միայն որոշ դասի, միայն որոշ հոլովի գոյականների հետ: Կապերի հանդես գալը միայն որոշ հոլովաձևերի հետ հայտնի է կապերի խնդրառություն կամ հոլովառություն անվամբ. կապերի գործածության մյուս սահմանափակումների համար հատուկ անվանումներ չկան: Քննենք կապերի գործածության սահմանափակման դեպքերն առանձին-առանձին: Նկատի ունենալով կապերի բառային կարգի՝ հոլովի քերականական կարգին զուգահեռ լինելը՝ քննությունն սկսենք կապերի՝ տարբեր հոլովաձևերի հետ կապակցվելու հարցի քննարկումից:

Նախադրությունների խնդրառությունը (հոլովական կապակցելիությունը) կարելի է ներկայացնել 10-րդ աղյուսակով (էջ 320).

Նախադրություններ	Չուղղվող հոլովաձևեր		
	Ուղղական	Տրական	Բացառական
առանց	—	—	—
բացի	—		+
դեպի	+		—
ընդդեմ	—	+	—
ըստ	—		—
ի	+	—	—
ի դեմս	—		—
ի հաշիվ	—	+	—
ի հեճուկս	—		—
ի փառս	—		—
իբրև	+	+	+
ինչպես	+		+
հակառակ	—	+	—
համաձայն	—		
հանձին	—	+	—
հանձինս	—	+	—
հանուն	—	+	—
մինչև	+	+	—
նախքան	+		
նայած	—		—
շնորհիվ	—	+	—
որպես	+	+	+
ջգրուռ		+	—
չհաշված	+		—
չնայած		+	—
փոխանակ	—	+	—

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1. *Նախադրություններից երեքը՝* իբրև, ինչպես, որպես, *որոնք իմաստային արժեքով նույնն են և տարբերվում են միայն ոճականորեն, հանդիպում են բոլոր հոլովաձևերի հետ. նրանք (հազվադեպ) կարող են հանդիպել նաև գործիական և ներգոյական հոլովաձևերի հետ, ըստ կապվող գոյականների համաձայնության՝* (Հակոբը) իբրև ուսուցիչ, (Հակոբի) իբրև ուսուցչի, (Հակոբից) իբրև ուսուցչից *և այլն. բացառական, գործիական և ներգոյական հոլովները կարող են փոխարինվել տրականով՝* (Հակոբից) որպես ուսուցչի:

2. Դեպի, *չհաշված նախադրությունները կարող են հանդիպել և՛ ուղղական, և՛ տրական հոլովաձևերի հետ՝ ըստ հոլովվող բառերի դասային և խոսքի մասային արժեքի՝* դեպի տուն, դեպի Հակոբ, դեպի նա, դեպի ես, չհաշված Հակոբին, չհաշված նրան, չհաշված ես: Չհաշված *ձևը փաստորեն պահպանում է հաշ-*

վել անցողական բայի խնդրառությունը և դեռ չի վերածվել իսկական նախադրության։ Դեպի խնդրառությունը ցույց է տալիս, որ անձնական դերանուններն իրենց բնույթով տարբեր են ընկալվում անձի առում ունեցող գոյականներից և ցուցական դերանուններից. համմտ. դեպի ինձ, բայց դեպի Հակոբը, դեպի նա։

3. Նախադրությունները հանդես են գալիս գերազանցապես ուղղական և տրական հոլովներով։ Նույնիսկ բացի–ն, որ գրական լեզվի նորմաներով դրվում է բացառականի հետ, կարող է հանդիպել նաև դեպի–ի գործածությամբ՝ բացի տունը, բացի Հակորը, բացի նա, բացի fեզ։ Իրև, ինչպես, որպես կապերի՝ բացառականով (այլև գործիականով ու ներգոյականով) խնդրի՝ տրականով փոխարինվելու հնարավորության մասին խոսվեց վերևում. բացի այս նախադրություններից, մնացածները չեն կարող հանդիպել գործիական և ներգոյական հոլովների հետ։

4. Միայն ուղղականի հետ են գործածվում ի նախդիրը և նախման նախադրությունը[9]։ Սրանցից ի–ն այժմ անձերի անունների, դերանունների և ընդհանրապես նյութական անունների հետ չի գործածվում, իսկ նախման–ն ունի ժամանակային արժեք. նրա խնդիրը կամ ժամանակ ու գործողություն է նշանակում, կամ մի առարկա, որի համար ենթադրվում է որևէ գործողություն՝ նախման առավոտը, նախման ճաշը, նախման ճաշելը, նախման Հակորը (համ՝ նախման Հակորի գնալը, ճաշելը և այլն)։

5. Ժամանակակից հայերենի համար ամենից ավելի բնորոշ է նախադրությունների գործածությունը տրականի հետ։ Բոլոր նոր նախադրությունները, եթե միայն նրանք անցողական բայաձևեր չեն, հանդես են գալիս տրականի հետ։

Ետադրությունների խնդրառությունը կարելի է ներկայացնել 11-րդ աղյուսակով (էջ 322—323)։

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1. Ինչպես նախադրությունները, այնպես էլ ետադրությունները ամենից ավելի հաճախ գործածվում են տրական հոլովի հետ. այլ կերպ ասած՝ հայերենի կապերի խնդրառական ամենագործուն տիպը տրականառու կապերն են։ Հայերենի նոր կապերը հանդես են գալիս հիմնականում տրականաձև խնդրառությամբ։

2. Բայահիմքային անց և դերբայաձև անցած ետադրություն-

---

[9] Գրաբարի բնականները ի–ն համարում էին նախդիր (որպես տարրեր հոլովների հետ դրվող), նախման–ը՝ նախադրություն (որպես մեկ հոլովի հետ դրվող)։

Եռատրամյուններ	Ջուգորդովող հոլովաձևեր			
	Ու դպահան 1	Ցրտհան 2	Բացառական 3	Գոթերեն 4
1	2	3	4	5
անց	+	—	+	—
անցած	+	—	+	—
անուն	—	+	—	—
անունով	—	+	+	—
առաջ	—	+	+	—
առընթեր	—	+	+	—
առիթով	—	+	—	—
առջև	—	+	—	—
գծով	—	+	—	—
դեմ	—	+	—	—
դեպքում	—	—	—	—
դիմաց	—	+	—	—
դուրս	—	—	—	—
գաս	—	—	—	—
գուգընթաց	—	+	+	—
ընթացքում	—	+	+	—
ժամանակ	—	+	—	—
ի վար	+	—	—	—
ի վեր ջրերի վերև	—	—	—	—
ի վեր ջանգած	—	—	+	—
կից	—	—	—	—
կողմ	—	+	—	—
համապատասխան	—	+	—	—
համար	—	+	—	—
համեմատ	—	—	—	—
հանդեպ	—	+	—	—
հանդերձ	—	—	—	—
հանդիման	—	+	—	—
հավատար	—	+	—	—
հետև	—	+	+	—
հետո	—	+	—	—
հետո	—	+	+	—
հետևանքով	—	—	—	—
հիման վրա	—	+	—	—
ձեռքով	—	+	—	—
մասին	—	+	—	—
մեջ	—	+	—	—
մինչև	—	—	—	—
մոտ	—	—	—	—
նեղ	—	—	—	—
նեղը	—	—	—	—
նեղին	—	—	+	—

1	2	3	4	5
նկատմամբ	—	+	—	—
նման	—	+	—	—
նպատակով	—	+	—	—
շուրջ(ը)	—	+	—	—
չափ	—	+	—	—
պատճառով	—	+	—	—
պես	—	+	—	—
սկզբում	—	+	—	—
վերաբերմամբ	—	+	—	—
վերաբերյալ	—	+	—	—
վերջում	—	+	—	—
վեր	—	+	+	—
վրա	—	+	—	—
տակ	—	+	—	—
տեղ	—	+	—	—
փոխարեն	—	+	—	—
ուղղությամբ	—	+	—	—
օրոք	—	+	—	—

նները պահպանում են անց բայի ուղղականաձև խնդրառությունը՝ հինգ տարի անց, հինգ տարի անցած, *բայց կարող են առանալ, այդ բայի նման, նաև բացառականով խնդիր՝* ժամանակից անց, ժամանակից անցած:

3. Միայն ուղղականաձև խնդիր են առանում ի վար և ի վեր *տեղանիշ եռադրությունները, որոնք կարող են գործածվել միայն իրանիշ գոյականների հետ:*

4. Միայն գործիականով խնդիր է առանում հանդերձ *եռադրությունը, որ գալիս է գրաբարից:*

5. Առաջ, դուրս, հեռու, ներս, ներքև, վերև *եռադրությունները կարող են հանդես գալ և՛ տրականի, և՛ բացառական հոլովաձևերի հետ:* Առաջ *նախադրությունը տրականի հետ գործածվում է տեղանիշ (համմտ.* առջև*), բացառականի հետ՝ ժամանականիշ իմաստով (համմտ.* հետո*): Մնացած նախադրություններն ունեն տեղանիշ իմաստ և անհոլով ձևով գործածվում են բացառականի, հոլովված ձևով՝ տրականի հետ՝* դաղաթից դուրս, հեռու, ներս, պատշգամբից ներքև, վերև, *բայց* դաղաթի դրսից *(ավելի ճիշտ՝* դաղաթի դրսի կողմից), հեռվից, ներսից, պատշգամբի ներքևից, վերևից: *Սրանցից* դուրս—ներս, ներքև—վերև *կապերը կազմում են հականիշ զույգեր.* հեռու *բառի համար հականիշ է մոտ եռադրությունը, որ հանդիպում է (խիստ հազվադեպ) նաև բացառականով՝* դաղաթից մոտ: *Միայն բացառականով են գործածվում* զատ, ի վեր «սկսած»

(այլև սկսած) եռադրությունները, որոնցից առաջինը համարժեք է բացի-ին, երկրորդն ունի ժամանականիշ իմաստ (ի տարբերություն ուղղականով գործածվող ի վեր եռադրության, որ տեղ է ցույց տալիս):

6. Կապերի խնդրառության հարցի կապակցությամբ ամենից առաջ հարկավոր է նշել նախադրությունների և եռադրությունների գործածության արմատական մի տարբերություն: Եթե «նախադրություն+խնդիր» կապակցության բաղադրիչներն անփոփոխ են մնում, ապա «խնդիր+եռադրություն» կապակցության որոշ տիպեր կարող են փոփոխվել՝ հոլովվել. այս դեպքում փաստորեն հոլովվում է ոչ թե ինքը կապը որպես անկախ գոյական, ինչպես ընդունված է ասել մեր քերականության մեջ, այլ ողջ կապակցությունը: Այսպիսի եռադրությունները ծագումով գոյականներ են (ուղղականաձև կամ իբրև այդպիսին գիտակցվող) և իրենց կապը դեռ լիովին չեն խզել գոյականների հետ՝ առաջ. առջև. դեմ. դիմաց. դուրս. ժամանակ. կողմ. հետու, մեջ, մոտ, ներս, նման, պես, վերև. վրա, տակ. տեղ-ը որպես կապ ունի «փոխարեն» իմաստը, ուստի և տեղ գոյականի հոլովաձևերը չի կարելի խառնել տեղ կապի հոլովաձևերի հետ. չափ բառը հոլովված ձևով հանդես է գալիս որպես իսկական գոյական: Կապերի այս գործածությունը զուգահեռ ունի Առաջավոր Ասիայի մի շարք հին ու նոր լեզուների համապատասխան գործածությունների մեջ և ավելացնում է լեզվի արտահայտչական հնարավորությունները. այսպես, գրաբարյան ի վերայ տեղական կապակցությունն անհոլովելի է, մինչդեռ աշխարհաբարյան տեղանի վրա կապակցությունը կարող է հոլովվել (տեղանի վրայի, տեղանի վրայից, տեղանի վրայով) և արտահայտել լրացուցիչ տարբերություններ: Դերանվան՝ որպես կապի խնդիր հանդես գալու դեպքում երբեմն այն, ըստ կապի հոլովաձևի, կարող է հանդես գալ կամ սրական հոլովով (կապի անփոփոխ ձևի դեպքում), կամ սեռական հոլովով (կապի հոլովված լինելու դեպքում). սա ցույց է տալիս, որ հոլովված կապի դեպքում կապի խնդիրը դեռ գիտակցվում է որպես հատկացուցիչ՝ ինձ մոտ—իմ մոտից (ավելի հազվադեպ է ինձ մոտից). ինձ վրա—իմ վրայից: Երբեմն նկատվում է տատանում. ինձ մոտ, ինձ վրա ձևերի կողքին հանդիպում են նաև իմ մոտ, իմ վրա խոսակցական ձևերը:

7. Ընդհանուր առմամբ կապի խնդրի հոլովաձևը պայմանավորված է կապի խնդրառությամբ, կապի գործածությունը՝ նրա խնդրի՝ նախադասության մեջ ունեցած դերով կամ այլ բառերի խնդրառությամբ, այսինքն՝ խնդրի հոլովը այս դեպքում ունի ներքին, կապը՝

արտաքին պայմանավորվածություն։ Այս կապակցությամբ հարկավոր է պարզել կապերի և հոլովների իմաստային փոխհարաբերությունը։ Հոլովների իմաստային խմբավորման համար մենք հիմք ընդունեցինք երեք հատկանիշ՝ անսահմանափակություն (լիածավալություն), անջատում, հանգում (հատկացում)։ Առաջին հատկանիշը բնութագրում է ուղղականն ինքնին և կապերի համար տիպական չէ։ Մյուս երկու հատկանիշները որոշ չափով հանդես են գալիս կապերի խնդրառության ժամանակ։ Այս առումով հատկանիշս բնորոշ է բացառական հոլովի և նրանով դրվող կապերի փոխհարաբերությունը։ Մենք տեսանք, որ բացառական հոլովով խնդիր են սառնում **բացի** նախադրությունը և **անց, անցած, առաջ, դուրս, զատ, հետու, հետո, ներս, ներքև, վերև** ետադրությունները։ Սրանցից **բացի** նախադրությունը և համանիշ **զատ** ետադրությունը (մասամբ և **դուրս**-ը) արտահայտում են բացառման տրամաբանական գործողություն՝ հանում տվյալ ամբողջությունից, որևէ բանի չմասնակցելը. այս տեսակետից նրանք հակադրվում են **հետո, հետ** միասին ետադրություններին, որոնք արտահայտում են հավելում, մասնակցություն։ Բացառականով դրվող մնացած կապերը (ետադրությունները) արտահայտում են կամ տարածական, կամ ժամանակային հարաբերություններ. որոշ ետադրություններ արտահայտում են միաժամանակ և՛ տարածական, և՛ ժամանակային հարաբերություններ. **անց, անցած** ետադրություններն արտահայտում են ժամանակային, **դուրս, ներս, հետու, ներքև, վերև** ետադրությունները՝ տարածական, **առաջ, հետո** նախադրությունները՝ և՛ տարածական, և՛ ժամանակային հարաբերություններ, ընդ որում զուտ տարածական իմաստով **առաջ**-ին փոխարինում է **առջև**-ը։ Այսպիսով բացառականով գործածվող նախադրությունների և ետադրությունների խմբավորման համար մենք ստացանք երեք կարգի լրացուցիչ հատկանիշ. դրանք արտահայտում են տրամաբանական, տարածական և ժամանակային հարաբերություններ. դժվար չէ նկատել, որ այդ հատկանիշները գործում են նաև մյուս հոլովների հետ գործածվող նախադրությունների և ետադրությունների համար։

Ինչպես արդեն նշվել է, և ինչպես մասամբ երևաց խնդրառության քննությունից, կապերի գործածությունը սահմանափակվում է նաև դասի, թվի, առկայացման և, համապատասխանաբար, ածականի, թվականի անունների ու դերանվանական որոշիչների որոշ դրսևորումներով։ Կապերի կապակցելիության այս սահմանափակումները կարելի է արտահայտել 12-րդ ընդհանուր աղյուսակով (էջ 326).

Կապեր	Կապակցելի կարգեր						
	Գոյականի թիվ		Գոյականի դասեր			Գոյականի որոշյալություն	
	Եզակի	Հոգնակի	Անձնանիշ	Իրանիշ	Կենսաձևի	Անորոշ	Որոշյալ
1	2	3	4	5	6	7	8
1. Նախադրություններ							
առանց	+	+	+	+	+	+	—
բացի	+	+	+	+	+	—	—
գեպի	+	+	+	+	+	+	+
ընդդեմ	+	+	+	+	+	+	—
ըստ	+	+	+	+	+	+	—
ի	+	—	—	—	+	+	—
ի դեմս	+	+	—	—	—	+	—
ի հաշիվ	+	+	+	+	+	+	—
ի հեճուկս	—	+	—	—	—	+	—
ի փառս	+	+	+	—	+	—	—
իբրև	—	+	+	+	+	—	?
ինչպես	—	+	—	+	+	—	—
հակառակ	+	—	—	+	+	+	+
համաձայն	+	—	—	+	+	+	+
հանձին	+	—	—	—	—	+	—
հանձինս	—	+	+	—	—	+	—
հանուն	+	+	+	+	+	+	—
մինչև	+	+	+	+	+	+	+
նախքան	+	+	—	+	+	—	+
նայած	+	+	—	+	+	—	+
շնորհիվ	+	+	+	+	+	+	+
որպես	—	+	—	+	+	+	—
չհաշված	+	—	—	—	+	—	+
չնայած	+	—	+	+	+	—	+
վրախառնակ	+	+	+	+	+	—	—
2. Շաղկապներ							
անց	+	+	—	—	+	—	+
անցած	—	+	—	—	+	—	+
անուղիղ	+	+	+	—	—	+	—
անուղղակի	—	+	—	—	—	—	—
ասընթեր	—	—	—	—	—	—	+
առիթով	+	—	+	+	—	—	—
առջև	+	+	+	+	+	+	—
գծով	+	+	—	—	+	+	—
գեմ	+	+	+	—	+	+	—
գեպքում	+	+	—	—	+	+	—
դիմաց	+	+	+	+	—	+	—



Թվային, դասային, որոշյալային իմաստների՝ կապերի գործածության մեջ մտցրած սահմանափակումների քննությունը մեզ համոզում է, որ եզակի ու հոգնակի և անձի ու իրի անունների հետ կապերի գործածությունը չնչին սահմանափակումներ ունի. շատ ավելի կարևոր են թանձրացական (թե՛ անձերի, թե՛ իրերի անունների) ու վերացական անունների և որոշյալ ու անորոշ առումների անցկացրած տարբերությունները: Թանձրացական ու վերացական անունների հետ կապակցվելու տարբերությունների արժեքը է՛լ ավելի մեծ կլիներ, եթե մենք նկատի առնեինք կապերի հիմնական ու, կարելի է ասել, սկզբնական գործածությունները և դանց առնեինք նրանց երկրորդական ու, որոշ իմաստով, փոխաբերական գործածությունները: Այսպես, ակնհայտ է, որ վրա եռադրության նախնական իմաստը տարածական է, ուստի և այն գործածվում է անձերի և իրերի անունների հետ՝ **սեղանի վրա, Հակոբի վրա.** միայն երկրորդաբար (նմանակությամբ) այն կարող է դրվել վերացական անունների հետ՝ **հարցի վրա** (ուշադրություն դարձնել): Նկատի ունենալով առաջնային գործածությունները՝ մենք տեսնում ենք, որ տարածական և ժամանակային իմաստների տարբերությունները կապված են հենց թանձրացական և վերացական, ավելի ճիշտ՝ առարկայանիշ և վիճականիշ անունների (ներառյալ անորոշ դերբայը) տարբերության հետ. համմտ. **սեղանի առաջ և ճաշելուց առաջ, մինչև ճաղաթ և մինչև ճաշելը** և այլն: Այլ կերպ ասած՝ ժամանականիշ կապերը գերազանցապես տարածանիշ կապերն են՝ գործածված վիճականիշ անունների և մանավանդ անորոշ դերբայի հետ:

Որոշյալ, թե անորոշ անունների հետ գործածվելը կապերի համար ավելի շատ պատմական արժեք ունի, քան իմաստային. այն պայմանավորված է մեծ մասամբ կապերի ծագումով. 1) գոյականներից ծագող և նրանց հետ դեռ իմաստով կապված եռադրությունները գործածվում են գերազանցապես անհոդ գոյականների հետ. անհոդ են գործածվում նաև գրաբարյան ծագում ունեցող նախադրությունների մի զգալի մասի հետ կապվող բառերը. 2) հոդ են ստանում գերազանցապես ածականական և բայական ծագում ունեցող կապերի խնդիրները. 3) **դեպի, իբրև, ինչպես, հակառակ, համաձայն, մինչև** նախադրությունները, **աց, ացած, դեմ, համեմատ, որպես, պես** եռադրությունները գործածվում են և՛ հոդով, և՛ առանց հոդի խնդիրների հետ՝ ըստ անհրաժեշտության և իմաստի (համմտ. **Հակոբի պես և տեսնելուն պես**):

Եթե այժմ, որոշ փոփոխություն մտցնելով դասային հատկանիշների մեջ, նկատի առնենք կապերի՝ անորոշ դերբայի և նյութա-

կան առարկաների անունների հետ կապակցվելու կարողությունը, ապա կունենանք հետևյալ չորս խմբերը (աղյուսակ 13).

Աղյուսակ 13

Հատկանիշներ	Կապերի դասակային խմբեր			
	Ընդհանրական	Վիճակային	Առարկայական	Չեզոք
Զուգորդելիություն ներքայի հետ	+	+	—	—
Զուգորդելիություն նյութական առարկայի անվան հետ	+	—		—

Հայերենի կապերը հիշյալ հատկանիշներով կբաշխվեն հետևյալ կերպ (աղյուսակ 14).

Աղյուսակ 14

Կապեր	Կապակցող միավորներ		Կապեր	Կապակցող միավորներ	
	Ներքին վիճակային դրսևորում	Ելքային		Ներքին վիճակային դրսևորում	Ելքային
1. Նախադրություններ			չնայած	+	+
առանց		+	մինչև	+	
բացառությամբ	—	+	2. Եռադրություններ		
բոլի	+	+	անց(ած)	—	—
դեպի	—	—	անուղղակի	+	
ընդդեմ		+	անուղղակի	+	
ըստ	?	+	արդյոքեր	+	—
ի	—	—	առթիվ	+	+
ի դեմս		—	առջև		—
ի հաշիվ	+	+	դիմաց	+	
ի հեճուկս	+	—	դեմ	+	
ի վառս	+	?	դեպքում	—	+
իբրև		—?	ղիմաց		+
ինչպես	+	?	դուրս	+	
հակառակ		+	դառս	+	
համաձայն	+		դուրդյոքում	—	
հանձին(ս)	+	—	ընթացքում	—	
հանուն	+		ժամանակ	—	
հօգուտ	+	—	ի վար	+	—
մինչև		+	ի վեր	+	—
նախքան		+	ի վեր ելնող	—	+
նայած		+	հարուկություն	+	+
շնորհիվ		+	կից	+	
որպես	+	—	կողմ		+
չհաշված		+	կողմից	+	—

Կապեր	Չստորոգյալի վիճակներ		Կապեր	Չստորոգվողի վիճակներ	
	Նյութական առարկայի անուն	Անորոշ դերբայ		Նյութական առարկայի անուն	Անորոշ դերբայ
Համապատասխան	+	−	Ներքո	+	−
Համաձայն	+	+	Ներքև	+	−
Համեմատ	+	+	Նկատմամբ	+	+
Հանդերձ	+	−	Նման	+	+
Հանդերձ	+	+	Նպատակով	−	−
Հանդիման	+	−	շուրջ(ը)	−	−
Հավասար	−	+	չափ	+	+
Հետ	+	+?	պատճառով	+?	+
Հետ	+	+	պես	+	+
Հետո	−	+	սկզբում	−	+
Հետևանքով	−	+	վերաբերմամբ	+	+
Հիման վրա	−	+	վերաբերյալ	−	−
Ձեռքով	+	−	վերջում	−	+
Մասին	+	+	վեր	−	−
Մեջ	+	−	վրա	+	−?
Միջոցին	−	−	տակ	−	−
Միջոցով	+	+	տեղ	+	+
Միչև	−	+	փոխարեն	−	−
Մոտ	+	−	ուղղությամբ	+	+
Ներս	+	−	օրոք	−	+

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1. Սովորաբար միայն նյութական առարկաների անունների հետ են գործածվում դեպի, ի դեմս, ի հեճուկս, ի փառս, իբրև, ինչպես, հանձին(ս), հանուն, որպես *նախադրությունները և* անուճից, անուճով, առջևբեր, առջև, դուրս, ի վար, ի վեր *(տեղանիշ)*, կից, կողմից, հանդիման, ձեռով, մեջ, ներս, ներքո, ներև, վերև, վրա(?), տակ *եռադրությունները։ Սրանք կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝ ա) տեղանիշ (տարածական)՝* դեպի, առջև, առջևբեր, դուրս, ի վար, ի վեր, կից, հանդիման, մեջ, ներս, ներքո, ներև, վերև, վրա, տակ և *բ) գործառական-ուղղանիշ՝* ի դեմս, ի հեճուկս, ի փառս, իբրև, ինչպես, հանձին(ս), հանուն, հօգուտ, որպես, անուճից, անուճով, կողմից, ձեռով. ի դեմս, հանձին

նախադրությունները և կողմից, ձեռով եռադրությունները ենթակայի, իբրև, ինչպես, որպես նախադրությունները՝ ստորոգելիի փոխակերպման արդյունք են. համմտ. Գրիգորյանը դեկավարում է խմբակը → *ա)* Ի դեմս (հանձին) Գրիգորյանի մենք ունենք խմբակի դեկավարի, *բ)* խմբակը դեկավարվում է Գրիգորյանի կողմից (ձեռով). Գրիգորյանը ուսուցիչ է → Գրիգորյանը իբրև (ինչպես, որպես) ուսուցիչ. ի հեճուկս, ի փառս, հաճուն, անունից, անունով *կապերը արտահայտում են որևէ անձի (երբեմն էլ անձնավորվող առարկայի) օգտին, հակառակ նրա կամ նրա փոխարեն կատարվող գործողության:*

2. Սովորաբար միայն անորոշ դերբայի (երբեմն էլ բայանունների և ոչ նյութական այլ բառերի) հետ են կապակցվում դեպումն, զուգընթաց, ընթացքում, ժամանակ, հետևանքով, հիման վրա, միջոցին, նպատակով *եռադրությունները, որոնք արտահայտում են վիճակային=պարագայական տարբեր հարաբերություններ՝ կերպա-ժամանակային* (ընթացքում, զուգընթաց, ժամանակ, միջոցին), *պայմանի* (դեպումն), *հիմունքի* (հիման վրա), *նպատակային* (նպատակով). *այս կապերը դերբայներով հանդերձ կարող են փոխարինվել համապատասխան երկրորդական նախադասություններով՝ ա)* զուգընթաց, ընթացքում, ժամանակ, միջոցին → երբ, *բ)* դեպումն → եթե, հիման վրա → ըանի որ *(որովհետև), գ)* նպատակով → որպեսզի:

3) Ի նախդիրը և անց, անցած եռադրությունները երկու տիպի միավորների նկատմամբ էլ չեզոք են՝ առաջինը շնորհիվ իր սահմանափակ գործածության (գրաբարում այն կապակցվում էր և՛ նյութական անուններին, և՛ դերբայների հետ). ի-ն կապակցվում է բայանունների (ի լրացումն, ի գիտություն և այլն), անց-ը և անցած-ը՝ միայն ժամանակային անունների հետ:

4. Մնացած նախադրություններն ու եռադրությունները ընդհանրական բնույթ ունեն և բաժանվում են երկու հիմնական խմբի. ա) մի մասը համանվանական բնույթի է, այսինքն՝ արտահայտում է տեղի ու ժամանակի, շահի ու նպատակի և այլ կարգի զուգահեռ պարագայական հարաբերություններ (անվան հետ կապակցվելու դեպքում՝ նաև անվան նշած առարկայի համապատասխան գործողությունը. համմտ. շնորհիվ Գրիգորի, *այսինքն՝* շնորհիվ Գրիգորի այս կամ այն գործողության). *բ) մյուս մասը հավասարապես կիրառելի է երկուսի նկատմամբ էլ որպես սուբյեկտիվ-դատողական, այլև համեմատության ու փոխակերպման արտահայտիչ.*

առաջին տիպի կապերը զուգահեռ են ստորադասական, երկրորդները՝ հատկապես համադասական շաղկապներին։ Վերջիններս արտահայտում են հավելման, փոխարկման, հակադրման, վերջին հաշվով, փոխակերպման ու համեմատության հարաբերությունները՝ առանց, բացի (բացառությամբ, բացառյալ), չհաշված, զատ, հետ, հետ միասին (ներառյալ), ի հաշիվ, փոխանակ, փոխարեն ասել, բնդդեմ, դեմ, հակառակ, չնայած։ Վերջին երկուսը, այլ քան, համաձայն, նայած, համապատասխան, համեմատ կապերը արտահայտում նաև խոսքային-սուբյեկտիվ հիմունքի առկայության կամ բացակայության։

ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԲԱԺԻՆ

ԲԱՅԱԿԱՆ ԲԱՅԻԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

I. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ

1. ԲԱՅԱ-ՍՏՈՐՈԳԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ

Երբ անվանական կարգերի ծավալումը հանգեցնում է անվանական բառակապակցության, ապա բայա-ստորոգական կարգերի ծավալումից վերջ ի վերջո ստացվում է նախադասություն։ Ինչպես որ անվանական բառակապակցության միջուկը գոյական անունն է, այնպես էլ որպես նախադասության միջուկ հանդես է գալիս բայ-ստորոգյալը։ Սակայն այս դեպքում վիճակն ավելի բարդ է, երբ նկատի առնենք հետևյալ երկու հանգամանքները։

1. Լեզվաբանության մեջ սովորաբար տարբերում են բայական բառակապակցությունը նախադասությունից, թեև դրանց տարբերակման որոշակի չափանիշներ, կարելի է ասել, չեն նշվում. բայական բառակապակցություն ասելով սովորաբար հասկանում են բայը իրենից կախված խնդիրների և մակբայների հետ միասին, այլև դիմավոր բայի և անորոշ դերբայի կապակցությունը։ Այլ կերպ ասած՝ բայական բառակապակցությունների դեպքում բայերն առնվում են անկախ ստորոգական կարգերից, և կարող

են իբրև բառակապակցության գլխավոր (միջուկային) անդամ հանդես գալ ինչպես դիմավոր, այնպես էլ անդեմ (դերբայական) ձևերով։ Թեև այս դեպքերը գրեթե հավասարարժեք են ածականական կապակցություններին, որոնք ունեն բայական բառակապակցությունների բոլոր երեք տիպերը՝ ավելի թույլ կերպով արտահայտված, բայց նկատի ունենալով, որ անդեմ ձևերը կարող են հանդես գալ ոչ միայն ածական որոշչի, այլև գոյական անվան և մակբայի գործառույթամբ, մենք գերադասում ենք դրանք քննել առանձին՝ փոխակերպմանը նվիրված ենթաբաժնում։

2. Նախադասության անդամների փոխհարաբերությունը քննելիս հարկավոր է տարբերել առնվազն երկու մակարդակ՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ կամ հաղորդային և հաղորդակցային[1]։ Առաջին դեպքում բայ-ստորոգյալը հանդես է գալիս որպես առարկաների հարաբերության դրսևորում, և քանի որ առարկաները տվյալ նախադասության մեջ հանդես են գալիս հենց տվյալ հարաբերությամբ, ուստի և բայ-ստորոգյալը դառնում է յուրատեսակ կենտրոն։ Այդ կենտրոնը, բնականաբար, գոյություն ունի միայն առարկաների մեջ և նրանց միջոցով։ Երկրորդ դեպքում որպես նախադասության կենտրոն հանդես է գալիս այսպես կոչված ենթական՝ մտքի այն առարկան, որը խոսողի ուշադրության կենտրոնում է, և որին վերագրվում է որևէ հատկանիշ (լայն առումով) իբրև ստորոգյալ։ Նախադասության սուբյեկտիվ պլանը հաղորդային իրագրության անմիջական դրսևորումն է։

Եթե բայական բառակապակցությունը դիտենք լայն առումով՝ ներառելով ոչ միայն բայի խնդրառությամբ պայմանավորված խնդիրները, այլև բայի արժույթով պայմանավորված բուն (գործող) ենթական և ստորոգելին (ստորոգելիական վերադիրը՝ ստորոգյալի անվանական մասը), ապա նախադասության օբյեկտիվ պլանը հանդես կգա հենց որպես բայական բառակապակցություն՝ ստորոգմամբ կամ առանց դրա, և նախադասությունը կլինի բայական բառակապակցություն՝ լրացված ստորոգումով։ Նախադասության էական կողմը ստորոգումն է. առանց ստորոգման նախադասությունը լոկ բառակապակցություն է։

Բայական բառակապակցությունը բնորոշվում է բայական այն կարգերի ծավալմամբ, որ հանդես են գալիս բայահիմքերի միջոցով՝ անկախ ստորոգումից։ Նախադասությունը հանդես է գալիս

---

1 Համմտ. նախադասության այսպես կոչված առարկայական անդամատումը (актуальное членение предложения).

որպես բայական բառակապակցության + ստորոգման (հաղորդակցման իրադրության) դրսևորման բոլոր միջոցները:

Ինչպես տեսանք ձևաբանության բաժնում, հայերենի բայական և գոյականական բառաձևերի կաղապարները ունեն մեկ էական տարբերություն. գոյականական կաղապարն ավելի բազմանդամ է ըստ իրար հաջորդող միավորների առավելագույն քանակի, բայց մեծապես զիջում է բային ըստ քերականական կարգերի իրական քանակի, որ դրսևորվում է ոչ թե իրար հաջորդող միավորներով, այլ այդ միավորների ներքին (հերթագայական) տարբերություններով: Բայական ամենաբազմանդամ կաղապարը քառանդամ է՝ բառակազմական բայահիմքը և նրան նախորդող ու հաջորդող մասնիկների երեք կարգերը՝ ըստ (a+)A(+b(+c)) բանաձևի: Վերլուծությունը ցույց տվեց, որ՝ 1) I կարգի (a) մասնիկներն ունեն հիմնականում եղանականիշ արժեք՝ այս բառի ամենալայն իմաստով (բուն եղանակը և ժխտականությունը). 2) II կարգի (b) մասնիկներն ունեն կերպանիշ, տիպարանիշ և սեռանիշ արժեք, այսինքն՝ ցույց են տալիս եղելության ընթացքը (սկավելը, ընթացքի մեջ գտնվելը, թե ավարտվելը) և քանակը (մեկ, թե մեկից ավել անգամ կատարվելը, կայուն, թե փոփոխական լինելը), առարկայական մեկ, թե մի քանի եզրի հետ կապված լինելը (արժույթը) և խոսողի կողմից եղելության ո՛ր եզրը ուշադրության կենտրոնում պահելը. 3) III կարգի (c) մասնիկներն ունեն ժամանականիշ, թվանիշ, դիմանիշ և, վերջինիս հետ կապված, դասանիշ արժեք: Վերլուծական ձևերի քննության ժամանակ ժամանակի գաղափարը երկփեղկվեց. պարզվեց, որ ժամանակային հաջորդականությունն արտահայտվում է երկրորդ, իրադրական ժամանակը՝ երրորդ կարգի մասնիկներով:

Որպեսզի որոշենք, թե ի՛նչ է ստացվում բայական կարգերի ծավալման ժամանակ, փորձենք պարզել բայական մասնիկների երեք կարգերի ընդհանուր արժեքները: Ամենից առաջ հայտնի է, որ առաջին և երկրորդ կարգի մասնիկները հիմնականում մակաշերտվում են երկրորդ (բուն բայական, բայահիմքի մեջ մտնող) կարգի մասնիկների վրա՝ ձևացնելով սուբյեկտիվ-ստորոգական կամ, ավելի ճիշտ հաղորդակցման պլանը. հատուկ դիտք են գրավում սեռանիշ մասնիկները, որոնք փոստորեն չեն մտնում բուն բայական կաղապարների մեջ, այլ նույնպես մակաշերտվում են բուն բայական կարգերի վրա՝ ընկնելով երկու տարբեր կաղապարների սահմանում և առաջ բերելով անհամասեռ (տարասեռ) կաղապարներ: Այսպիսով, եթե մենք տարբերենք հաղորդումը (հա-

ղորդման բովանդակությունը) և հաղորդակցումը (հաղորդումն իրականացնող կողմերի, հատկապես հաղորդակցող անձերի հարաբերությունը իրար և հաղորդման հանդեպ), ապա կարելի է ասել, որ առաջին կարգի մասնիկները հաղորդակցային, երրորդ կարգի (ինչպես և սեռանիշ մասնիկները)՝ հաղորդա-հաղորդակցային արժեք ունեն: Առաջին կարգի մասնիկները արտահայտում են հաղորդողի վերաբերմունքը դեպի հաղորդակիցը և հաղորդումը, սեռանիշ և երրորդ կարգի մասնիկները՝ բնութագրում են հաղորդումն ըստ հաղորդակցման անդամների: Որոշ պայմանականությամբ արտահայտվելու դեպքում կարելի է արձանագրել, որ առաջին, սեռանիշ և երրորդ կարգի մասնիկները արտահայտում են նախադասության հատկապես սուբյեկտիվ, երկրորդ կարգի մասնիկների մեծ մասը՝ օբյեկտիվ պլանը:

Խոսելով բայի առարկայական-անվանական և բուն բայական կարգերի մասին՝ մենք եղանակը չդրեցինք բուն բայական կարգերի մեջ. այն փաստորեն հանդես է գալիս որպես ամբողջ նախադասության հատուկ կարգ, որ լրացնում է նախադասության իմաստը՝ երրորդ կարգի մասնիկների առկայության դեպքում: Սակայն եթե բայականությունը մեկնաբանենք գոյաբանորեն՝ որպես վիճակի դրսևորում, իսկ առարկայականությունը հասկանանք օբյեկտիվ-իրական (մատերիական) գոյականների իմաստով, ապա եղանակը հանդես կգա որպես վիճակ: Այս դեպքում մենք կունենանք առարկա-վիճակային և հաղորդա-հաղորդակցային հակադրություններ, և ա) I կարգի (a) մասնիկները կլինեն հաղորդակցա-վիճակային, բ) սեռանիշ և II կարգի (b) մասնիկները՝ հաղորդակցա-առարկայական, գ) III կարգի (c) մասնիկների հիմնական մասը՝ հաղորդա-վիճակային ու հաղորդա-առարկայական: Առաջին կարգի մասնիկները կբնութագրեն հաղորդողին (իր հարաբերությամբ դեպի հաղորդակիցն ու հաղորդումը), սեռանիշ և երրորդ կարգի մասնիկները՝ հաղորդման ենթական (իր հարաբերությամբ դեպի իրական «ենթական»՝ գործողը և հաղորդակցողները), երկրորդ կարգի մասնիկների հիմնական մասը՝ հաղորդակցման առարկաներն ու նրանց հարաբերությունները իրենց տարբեր հանգամանքներով:

Ի՞նչ կատարվի բայական այս կարգերի ծավալումից, և ի՞նչ հարաբերության մեջ են բայական բառակապակցության ու նախադասության անդամների կարգերը բայական մասնիկների կարգերի նկատմամբ: Գոյականական կարգերի ծավալման համեմատությամբ բայական կարգերի ծավալումը հանդես է բերում երկու կարևոր առանձնահատկություն:

1) Ե՛վ գոյականական մասնիկների, և՛ գոյականական բառակապակցության անդամների մեջ մենք առանձնացրինք որոշիչ և հարաբերիչ տիպեր. գոյական մասնիկների մեջ հարաբերիչներ են հոլովական մասնիկները, գոյականական բառակապակցության մեջ՝ կապերը։ Եթե որոշիչ անդամները վերաբերում են գոյականական բառաձևի դեպքում բառահիմքին և գոյականական բառակապակցության դեպքում՝ գոյականական անդամին (գլխավոր բառին), ապա հարաբերիչները արտահայտում են դրանց հարաբերությունը այլ բառաձևերի և բառակապակցություններին. որոշիչների դեպքում առկա են փակ, հարաբերիչների դեպքում՝ բաց (հնարավոր, իրականանալի) կապեր։ Բայական բառաձևի և բայական բառակապակցության միջև հարաբերիչ տարրերի առումով էական տարբերություն կա. հարաբերիչ տարրերը բայական բառաձևերի մեջ չեն դրսևորվում (մասնիկներ չեն լինում), այլ հանդես են գալիս միայն որպես բառեր։ Գոյականական և բայական բառաձևերի և բառակապակցությունների տարբերությունը ըստ հարաբերիչ տարրերի կարելի է արտահայտել 1-ին աղյուսակով.

Աղյուսակ 1

Առանձնահատկություններ	Տիպեր	
	Գոյականական հարաբերիչներ	Բայական հարաբերիչներ
Բառային առանձնահատկություն	+	—
Բառակապակցական առանձնահատկություն	+	+

Բնականաբար այս բոլոր դեպքերում մենք նկատի ենք առնում հնչույթները և հնչութակոմպլեքսները՝ ուղեկցվեն նրանք դադարով (բառեր), թե ոչ (մասնիկներ)։ Այլապես հնչերանգային փոփոխությունները կարող են նույնպես ստանձնել հարաբերիչ արժեք։

2) Գոյականական բառաձևերի բոլոր մասնիկների ծավալումն էլ հանգեցնում է գոյականական բառակապակցության անդամների, մինչդեռ բայական բառաձևի բոլոր մասնիկների ծավալումը չի հանգեցնում բայական բառակապակցության անդամների. բայական առաջին կարգի (եղանակիչ) մասնիկների ծավալումը հանգեցնում է հաճախ այնպիսի բառային միավորների, որոնք երան-

գավորում են նախադասությունը՝ առանց անմիջապես նրա կազմի մեջ մտնելու: Այս պատճառով էլ նրանք թեև սովորաբար նախորդում են մյուս կարգի բառերին, բայց կարող են և հաջորդել:

Այժմ, եթե մենք նկատի ունենանք նախադասություն կազմող բայական բառակապակցության կազմիչ տարրերի (բառերի ու բառախմբերի) ամենից ավելի բնորոշ շարադասությունը, այլև ա) սեռանիշ մասնիկը պայմանականորեն հատկացնենք երրորդ (c)կարգին, բ) b կարգի մասնիկները ըստ հաջորդման կարգի բաժանենք երկուական խմբերի՝ b և b_1, գ) հարաբերիչ տարրերը նշանակենք d-ով, ապա բայական կարգերի և նախադասություն կազմող բայական բառակապակցության կազմիչ տարրերի փոխհարաբերությունը կարելի է ներկայացնել կաղապարային հետևյալ բանաձևերով.

1. (a+) A (+ b (+ c)).
   (չ+)բեր(+ից(+ի))
2. ((((a+) d +) c +) b +) A (+b_1)
   ((((Ոչ+)կիմ+)նա+)գիրքը)+տամ(+Հակոբին)

Երկու կաղապարների համեմատությունը տալիս է հետևյալ պատկերը (գծագիր 1).

Գծագիր 1



Քանի որ նախադասության կաղապարը, խիստ սխեմատիկ ձևով առնված, պարունակում է հինգ լրացական անդամ, մենք կունենանք 1 միանդամ, 5 երկանդամ, 10 եռանդամ, 10 քառանդամ, 5 հինգանդամ և 1 վեցանդամ, ընդամենը՝ 32 տիպ: Իհարկե, սրանցից յուրաքանչյուրը կունենա իր մանրակազապարը, որոնք կքննվեն հաջորդաբար:

Այսպիսով, քննել նախադասությունը նշանակում է քննել հետևյալ հինգ կարգի միավորները՝ 1) եղանակավոր բառեր և բառախմբեր, 2) հարաբերիչ բառեր և բառախմբեր, 3) ենթակայական բառեր և բառախմբեր, 4—5) լրացական բառեր և բառա-

խմբեր. վերջիններս դիմավոր բայի հետ կապված են տարբեր սերտությամբ և ըստ այսմ էլ նրա նկատմամբ գրավում են տարբեր դիրքեր. նրանք ավանդաբար հայտնի են ստորոգելի, խնդիրներ ու պարագաներ անուններով և կազմում են նախադասության, այսպես կոչված, երկրորդական անդամները[2]: Քանի որ մենք նախապես քննել ենք գոյականական, ածականական և մակբայական բառակապակցությունները, ուստի և այս դեպքում նախադասության անդամներ ասելով կհասկանանք 3—5-րդ կարգի միավորները՝ անկախ դրանց՝ բառաձևով թե բառակապակցությամբ արտահայտված լինելուց:

Ինչպես որ գոյականական բառաձևերի և բառակապակցությունների հարաբերիչ տարրերը՝ հոլովական վերջավորությունները ու կապերը, արտահայտում են այն բոլոր հարաբերությունները, որոնց մեջ մտնում են գոյականական բառերն ու բառակապակցությունները նախադասության մեջ, այնպես էլ նախադասությունների հարաբերիչ բառերն արտահայտում են այն բոլոր հարաբերությունները, որոնց մեջ մտնում են նախադասությունները, այսպես կոչված, բարդ նախադասության մեջ:

Նպատակահարմար է նախ քննել նախադասության անդամների ներքին փոխհարաբերությունները, ապա անցնել նրանց արտաքին կապերին. այս սկզբունքի համաձայն մենք նախ կքննենք մյուս բառերն ու բառախմբերը, հետո միայն կանցնենք հարաբերիչ բառերին ու բառախմբերին. սրանով իսկ նախադասության քննության եղանակը զուգահեռ կլինի գոյականական բառակապակցությունների քննության եղանակին: Այսպիսի քննությունը ընդհանուր սկզբունքի խախտում չի լինի, որովհետև որոշ կարգի հարաբերիչ տարրեր, հանդես գալով կախյալ նախադասությունների սկզբում, ունենում են հատուկ «հուշող»՝ հարաբերյալ տարրեր նաև գլխավոր նախադասությունների վերջում՝ «Ես վերադարձա (այն ժամանակ), երբ արդեն արևը ծագում էր», «Գրիգորը դուրս եկավ այնտեղից, որտեղից սկսվում էր սահմանը»: Այսպիսով, գլխավոր նախադասությունը նկատի ունենալու դեպքում հարաբերական բառերը և բառախմբերը («հարաբերյալները») կգրավեն հենց այն կարգը, որ մենք ընդունում ենք նախադասության անդամների քննության ժամանակ: Ավելորդ չէ նշել, որ եղանակային բառերն

2 Ստորոգելին այստեղ դնում ենք որոշ պայմանականությամբ՝ որպես «էական բայի խնդիր»:

ու բառախմբերը երանգավորում են նախադասությունները ընդհանրապես՝ լինեն դրանք պարզ թե բարդ. այլ կերպ ասած՝ նախադասությունների կապակցության դեպքում եղանակային բառերն ու բառախմբերը վերաբերում են ոչ թե կապակցության մեկ մասին, այլ ամբողջ կապակցությանը (հատկապես գլխավոր նախադասությանը. համմտ. «Ո՛չ, եթե նա չգա, ես չեմ գնա»):

Տիպարի կարգի քննության ժամանակ մենք առանձնացրինք փոխարկայնության ենթակարգը և ցույց տվեցինք, որ դիմավոր բայի կազմում չկա փոխարկային—ոչ փոխարկային հակադրությունը. այստեղ հանդես է գալիս միայն փոխարկայնությունը՝ մեծանալ, փոխրանալ, ուժեղանալ և այլն: Սակայն փոխարկային բայերի իմաստը կարող է արտահայտվել նաև վերլուծական-նկարագրական ձևով (մեծանալ մեծ դառնալ, փոխրանալ→փոխր դառնալ, ուժեղանալ → ուժեղ դառնալ). այս դեպքում բացահայտ է դառնում փոխարկային—ոչ փոխարկային հակադրությունը, որ կարտահայտվի եմ և դառնալ բայերի միջոցով՝ մեծ է—մեծ է դառնում (մեծանում է): Այսպիսով, հետևողական լինելու դեպքում մենք պետք է քննենք դիմավոր բայերի հետ միասին մեծ է, փոխր է տիպի ձևերը: Սա առաջ է բերում նոր պրոբլեմ: Նշանակում է՝ հարկավոր է ընդարձակել դիմավոր բայի սահմանները և քննել նաև այն բոլոր ձևերը, որոնց դեպքում դիմավոր բայը հանդես է գալիս ոչ փոխարկային ձևերի հետ՝ ներառյալ նաև անորոշ դերբայի հետ կազմվող ձևերը (ուզում է գնալ, անհրաժեշտ է գնալ և այլն): Նկատի ունենալով այս բոլորը՝ նախադասության քննության մեջ հարկավոր է մտցնել նաև այն բոլոր բառակապակցությունները, որոնք դիմավոր բայի արժեք ունեն: Սրանք ավանդական ձևով կոչենք ստորոգյալ: Քանի որ ստորոգյալը այսպիսի լայն իմբռնմամբ կպարունակի և՛ դիմավոր, և՛ ոչ դիմավոր մասեր, ուստի այն յուրատեսակ միջին դիրք կգրավի գլխավոր և լրացական անդամների միջև. դիմավոր մասը կլինի կենտրոն և կարտահայտի նախադասության բուն ստորոգումը, իսկ ոչ դիմավոր մասը հանդես կգա որպես ենթակայի վիճակի դրսևորիչ, այսինքն՝ լրացական դիրք կգրավի ենթակայի՝ նկատմամբ: Եմ և դառնալ բայերի լրացական մասը սովորաբար կոչվում է ստորոգելի. եթե այլ կարգի բայեր հանդես են գալիս եմ-ի և դառնալ-ի իմաստով՝ կորցնելով իրենց մասնահատուկ իմաստները, ապա ստորոգելին կոչվում է ստորոգելիական վերադիր:

Վերևում ասվածներից բխում է, որ նախադասության հետագա

քննությունը կընդգրկի նաև ստորոգյալը և կկատարվի հետևյալ հաջորդականությամբ. 1) եղանականիշ բառեր և բառախմբեր, 2) ենթակայական բառեր և բառախմբեր, 3) ստորոգյալային բառեր և բառախմբեր, 4) խնդրա-պարագայական բառեր և բառախմբեր, 5) հարաբերական բառեր և բառախմբեր: Այլ կերպ ասած՝ կքննվեն 1) եղանակային բառերն ու բառախմբերը և, վերջին հաշվով, եղանակավորությունը, 2) ենթական, 3) ստորոգյալը, 4) խնդիրները և պարագաները: Կատարենք մասնակի մի փոփոխություն նպ՝ միացնենք ենթակայի և ստորոգյալի քննությունը՝ նկատի առնելով, որ նրանք իրար նկատմամբ գրավում են երկակի դիրք, և չի կարելի մեկը համարել գլխավոր, մյուսը՝ լրացական անդամ. ա) ենթական հաղորդակցային առումով կենտրոնական անդամ է, հաղորդային առումով՝ դիմավոր բայով արտահայտված հարաբերության կողմերից մեկը, այսինքն՝ բայական արժույթի մի դրսևորումը, հետևաբար դիմավոր բայի համեմատությամբ լրացական անդամ. բ) ստորոգյալը որպես նախադասության կենտրոնական հարաբերության արտահայտություն, հաղորդման մակարդակով կենտրոնական անդամ է, և ենթական նրա արտահայտած հարաբերության կողմերից մեկը. ստորոգյալի ստորոգելիական մասը ակնհայտորեն ծառայում է ենթակայի վիճակի բացահայտմանը և կախյալ դիրք ունի նրա նկատմամբ, իսկ ստորոգող մասը (հանգույցը) ծառայում է այդ կախման արտահայտությունը: Այսպիսով, մենք կքննենք նախադասության 1) եղանականիշ բառերն ու բառախմբերը և, վերջին հաշվով, եղանակավորությունը, 2) գլխավոր անդամները՝ ա) ենթական և բ) ստորոգյալը, 3) երկրորդական անդամները՝ ա) խնդիրները և բ) պարագաները, 4) հարաբերական բառերը՝ նախադասությունների կապակցության միջոցները:

Պետք է նկատի առնել, որ եղանականիշ ու հարաբերական բառերը չեն մտնում բուն նախադասության կառուցվածքի մեջ և կարող են հաշվի չառնվել նախադասության բուն կազապարը կառուցելիս: Առաջինները ներկայացնում են տվյալ նախադասության համար լրացական այնպիսի նախադասությունների փոխակերպումներ, որոնց մեջ հարաբերության եզրեր են հաղորդակցման կողմերը, և որոնք, հետևաբար, նոր բան չեն ավելացնում նախադասությունների կառուցվածքային ընդհանուր բնութագրի վրա: Երկրորդները արտահայտում են նախադասության արտաքին հարաբերություններ և փաստորեն այլ միջոցներով (օրինակ՝ հոլովներով ու կապերով) դրսևորվում են նաև նախադասության ներսում:

Այսպիսով, եթե մենք կառուցենք նախադասության անդամների ընդհանուր կաղապարը, ապա այն բավարար կլինի բառերի և բառախմբերի հիշյալ երկու խմբերի արտահայտած իմաստները ըստ փոխկապակցման հավելյալ բանաձևերի բացահայտելու համար:

Քննել նախադասության կառուցվածքային ընդհանուր կաղապարը՝ նշանակում է դասակարգել նախադասության անդամները: Դժվար չէ կռահել, որ նախադասության այս կաղապարը կներկայացնի մեր կողմից ներածության մեջ տրված ընդհանուր կաղապարի կարգերի՝ հատկանիշի հատուկ դասավորությունը: Այս դեպքում առարկայական կարգերը հանդես կգան առաջին հերթին որպես խնդիրներ և տարածական բնույթի պարագաներ, իսկ վիճակայինները՝ որպես պարագաներ: Սրանց կգումարվեն իմացության հետ կապված առարկայական և վիճակային եզրերը: Ընդհանրապես նախադասության առարկայական եզրերը կարտահայտվեն՝ ա) գոյականի քերականական կարգերով, բ) ածականների և գ) հոլովներով ու կապերով ձևավորված առարկայական (նյութական) գոյականներով, իսկ վիճակային եզրերը՝ ա) բայական քերականական կարգերով, բ) մակբայներով և գ) հոլովներով ու կապերով ձևավորված բայանուններով ու դերբայներով:

1) Առարկայական անդամները հանդես կգան ըստ կախման, կարգի, կազմի, քանակի, ձևի, չափի, ուղղության և տեղի (դիրքի) ընդհանրական կարգերի (կատեգորիաների), ընդ որում արդի քերականություններում՝ ա) այս կարգերի մասնակի դրսևորումները երբեմն դիտվում են որպես առանձին կարգեր (հմմտ. անջատման և հանգման խնդիրները, որոնք ուղղության կարգի մասնակի դրսևորումներն են), բ) ընդհակառակն, այս կարգերից մի քանիսը երբեմն միավորվում են որպես մեկ ընդհանուր կարգ (հմմտ. չափ ու քանակի «պարագան») և գ) որոշ կարգեր ընդհանրապես նկատի չեն առնվում (հմմտ. կազմի կարգը): Նշված կարգերից հատուկ մեկնաբանության կարիք են զգում կախման, կազմի և ձևի կարգերը: Կախման կարգի տարբեր դրսևորումները կլինեն՝ ենթակայի հարաբերությամբ՝ ա) ստորոգելին (=R), բ) անդրադարձության ուղիղ խնդիր (անդրադարձ օբյեկտ) ( )R), գ) ուղիղ խնդիր (→ R), դ) ներգործող խնդիրը (←R), ե) փոխադարձության ուղիղ խնդիրը (փոխադարձ ներգործման ուղիղ խնդիր) (⇄R) և զ) միջոցի խնդիրը (→R→): Կազմի կարգը հանդես կգա որպես բաղադրության (համասեռության) խնդիր (=R)՝ հատկապես բացառական հոլովով («Սեղանը պատրաստված է փայտից»), բացի հետ միասին,

փոխարեն կապերով և այլն։ Ձևի կարգը հանդես կգա առաջին հերթին որպես որակական բաղդատության խնդիր (պես, նման կապերով և այլն)։

2) Վիճակային անդամները հանդես կգան որպես կախման, կարգի, կազմի, քանակի, ձևի, չափի, ուղղության և տեղի ընդհանրական կարգերի (կատեգորիաների) վիճակային դրսևորումներ՝ պատճառականություն (վիճակների կախում՝ պատճառի պարագա, հետևանքի պարագա և այլն), ընթացք (կերպ՝ սկզբի, ավարտի արտահայտության և այլն), վիճակակազմ (փոփոխականության և այլն), քանակի պարագա (հաճախականություն), ձև (ձևի պարագա), չափ (չափի և հատկապես ժամանակաչափի՝ տևողության պարագա), նպատակ (նպատակի պարագա, ելակետային և ուղեկցող գործողության պարագաներ և այլն) և ժամանակ (ժամանակի պարագա՝ վիճակային դիրք)։

3) Իմացական բնույթի կարգերը հանդես կգան որպես առարկայական և վիճակային կարգերի մասնակի դրսևորումներ. այսպես, առարկայական բնույթի է վերաբերության խնդիրը (մասին, վերաբերյալ կապերով և այլն), վիճակային բնույթի են հիմունքի և հակառակ հիմունքի պարագաները և այլն։

Վերևում մենք մատնանշեցինք նախադասության կաղապարի ամենաընդհանուր կարգերը՝ խնդիրները և պարագաները դիտելով որպես մեկ (լրացական անդամների) կարգ։ Առայժմ բավարարվենք հարցի այս ընդհանուր լուծմամբ՝ խնդիրների և պարագաների առանձին ենթակարգերի (ներքին բաժանումների) քննությունը դիտելով որպես մասնակի կաղապարներին նվիրված հատվածների նյութ։

2. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Նախորդ հատվածում բայական բառաձևերի ծավալման գործողությունը քննարկելիս մենք կարծես թե տարբերություն չդրեցինք բայական բառակապակցության և նախադասության միջև։ Սակայն իրականում այդպիսի տարբերություն կա։ Ինչպես որ գոյականական բառակապակցությունների դեպքում առկա են բառակապակցության անդամներ (գոյական+որոշիչ, գոյական+գոյականական խնդիր), իսկ բուն գոյականի հոլովները և կապերը ցույց են տալիս գոյականի և գոյականական բառակապակցության հնարավոր հարաբերությունները, այնպես էլ բայական բառակապակցությունը կկազմեն նախադասության գլխավոր և երկրորդական

անդամները, իսկ հարաբերիչները ցույց կտան դրանց հնարավոր հարաբերությունները. եղանակային բառերը և բառախմբերը բայական բառակապակցության մեջ ընդհանրապես չեն մտնի. ավելորդ չենք համարում նշել, որ եղանակի կարգը մենք չենք մտցրել նաև բուն բայական (բային ներհատուկ) կարգերի մեջ, այլ դիտել ենք որպես զուտ ստորոգական կարգ: Սակայն եղանակային բառերն ու բառախմբերը կազմում են նախադասության անհրաժեշտ տարրեր, թեև նախադասության անդամներ չեն համարվում: Կարելի է ասել, որ եղանակային բառերն ու բառակապակցությունները զանց առնելու դեպքում բայական բառակապակցության և նախադասության երկրորդ տարբերությունը կլինի ստորոգման պարտադրականությունը. նախադասության համար ստորոգման առկայությունը պարտադիր է, բայական բառակապակցության համար՝ ոչ: Այս պատճառով էլ նախադասության փոխակերպումը գոյականի, ածականի (որոշչի) կամ մակբայի (պարագայի) գործառություն ունեցող բառակապակցության («Ես գնացի տուն» — «Իմ տուն գնալը», «Իմ տուն գնալու ժամանակ» և այլն) ուղեկցվում է բայի ստորոգական տարրերի կորստով: Բայական բառակապակցության և նախադասության երրորդ տարբերությունը կլինի այն, որ նախադասությունը կարող է հանդես գալ առանց բայի, մինչդեռ առանց բայի բնականաբար չի կարող լինել բայական բառակապակցություն: Վերջապես, չորրորդ տարբերությունն այն է, որ բայական բառակապակցությունը միշտ ենթադրում է մեկից ավելի լիիմաստ բառերի առկայություն, մինչդեռ նախադասությունը կարող է արտահայտվել մեկ բառով:

Բայի խոնարհման ձևաբանական քննությունը կատարելիս մենք թվարկեցինք խոնարհման հարացույցի ընդգրկած հետևյալ ութ քերականական կարգերը՝ 1) տիպարի (անցողականության կամ գործողայնության և փոխարկայնության ենթակարգերով), 2) կերպի (բազմապատկականության և եզրայնության կամ ընթացքայնության ենթակարգերով), 3) դասի, 4) թվի, 5) եղանակի (ժխտման և բուն եղանակի կամ վերաբերողականության ենթակարգերով), 6) ժամանակի (ժամանակային հաջորդականության և իրադրաժամանակի ենթակարգերով), 7) սեռի (բուն սեռի ու պատճառականության ենթակարգերով) և 8) դեմքի:

Այս կարգերը մենք խմբավորեցինք երեք հատկանիշով՝ առարկայականություն, բայականություն և ստորոգականություն (իրադրականություն): Քննենք սրանց դրսևորումները բայաձևի և նա-

խոդասության մեջ, պարզենք, թե ի՛նչ հարաբերության մեջ են այս կարգերը բայական բառակապակցության և նախադասության անդամների հետ, այլ կերպ ասած՝ ի՛նչ է տալիս բայական քերականական կարգերի ծավալումը, և ի՛նչ այնպիսի հավելյալ կարգեր են հանդես գալիս բայական բառակապակցության ու նախադասության մեջ, որոնք բայական քերականական կարգերի մեջ ձևաբանորեն չեն դրսևորվում:

Նախադասությունը օբյեկտիվ-առարկայական պլանով քննելու դեպքում բայ-ստորոգյալի, որպես հարաբերության կենտրոնի, շուրջը հանդես կգան երկու կարգի բառեր՝ ա) առարկայանիշ բառեր և բառակապակցություններ և բ) բայահատկանշային ու բայահարաբերական բառեր ու բառակապակցություններ: Սրանք չի կարելի լիովին նույնացնել խնդիրների և պարագաների հետ, որովհետև նախ՝ տեղի պարագան հանդես կգա առաջին խմբում և երկրորդ՝ բացի խնդիրներից առաջին խմբի մեջ կմտնեն նաև ենթական և ստորոգելին: Հասկանալի է, որ նախադասության երկու տիպերի դեպքում՝ բայական և անվանական՝ մենք կունենանք առարկայանիշ բառերի ու բառակապակցությունների տարբեր խմբավորումներ. բայականի դեպքում՝ ենթակա և խնդիրներ, անվանականի դեպքում՝ ենթակա և ստորոգելի: Բայականի դեպքում առկա է իրական կամ ենթադրական իրադարձության արձանագրում, անվանականի դեպքում՝ մտածողական ակտ՝ մտքում եղած հասկացությունների և մտապատկերների բազայի վրա: Այլ կերպ ասած՝ առաջին դեպքում առկա է սուբյեկտիվ-ճանաչողական ակտ՝ օբյեկտիվ հիմքի ոչ-անմիջական դրսևորմամբ, երկրորդ դեպքում՝ օբյեկտիվ ակտի արձանագրում՝ սուբյեկտիվ գնահատմամբ:

Նախադասության առարկայանիշ անդամները կարող են փոխարինվել նախադասություններով, որոնց առկայության նիշ են ծառայում հարաբերական դերանունները:

Նախադասության բայահատկանշային և բայահարաբերական անդամներն արտահայտում են մակբայներով և բայական անդեմ կապակցություններով, որոնք կարող են փոխարինվել առանձին նախադասություններով, և այս դեպքում իբրև նիշ են ծառայում շաղկապները:

1. Բայի առարկայական կարգերից սեռը և դեմքը հանդես են գալիս միաժամանակ նաև որպես ստորոգման կարգեր, որոնց դեպքում առարկաները խմբավորվում և վերախմբավորվում են ըստ հաղորդակցմանն ունեցած մասնակցության (դեմք) և ըստ

հաղորդողի՝ հաղորդակցման ո՛ր կողմի վրա ուշադրություն դարձնելու։ Սեռի կարգի կապակցությամբ հարկավոր է միայն նշել, որ, նկատի ունենալով հայերենի առանձնահատկությունները, մենք բուն սեռի հետ քննեցինք նաև պատճառականությունը որպես սեռի կարգի պատճառական ենթակարգ։ Սակայն բուն սեռը և պատճառականությունը մի կարևոր տարբերություն ունեն. սեռի դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է ներգործվողի վրա, և հակում է նկատվում իրական գործողին երկրորդ պլանը մղելու, նույնիսկ հաղորդումից հանելու. պատճառականության դեպքում ներքաշվում է գործողության մի նոր մասնակից՝ տվյալ գործողության պատճառը, որ դառնում է ուշադրության կենտրոնը։ Կարելի է ասել, որ սեռի երկու դրսևորումների տարբերությունը նաև բայի նշանակած գործողության՝ հաղորդման մեջ արտահայտվող մասնակիցների՝ քանակային տարբերությունն է. հակում կա բուն սեռի դեպքում այդ թիվը կրճատելու (հասցնելու նվազագույնի), պատճառականության դեպքում՝ ավելացնելու։ Այստեղից կարելի է անել այն բնական եզրակացությունը, որ հաղորդման մեջ բայ-ստորոգյալի ընդգրկած առարկաների քանակի հաշվառումը հատուկ նշանակություն ունի։ Սա չպետք է շփոթել թվի կարգի արտահայտության հետ, որովհետև մասնակիցներից յուրաքանչյուրը կարող է ինքնին հանդես գալ թվի կարգի որևէ արտահայտությամբ՝ եզակի կամ հոգնակի։ Թվի կարգը ինքնին հատուկ չէ բային և բայ-ստորոգյալի մեջ հանդես է գալիս որպես նախադասության քերականական ձևավորման, նրա գլխավոր անդամների՝ ենթակայի (հաղորդման կենտրոնի) և ստորոգյալի (հաղորդվող հարաբերության կենտրոնի) կապի սերտության արտահայտություն։ Իմաստային տեսակետից բայի մեջ սեռը արտահայտվում է հավելուրդայնորեն, որովհետև այն արդեն պարունակվում է ենթակայի մեջ։ Թվի կրկնակի արտահայտությունը ծառայում է նախադասության քերականական կազմակերպմանը։

Բայի մնացած առարկայական կարգերից դասի կարգը հայերենում հանդես է գալիս առաջին հերթին դեմքի միջոցով և այս առումով կապվում է ստորոգման հետ։ Սակայն դասային իմաստների տարբերությունները բայիմաստի մեջ արտահայտվում են լրացուցիչ կերպով։ Բայական դասի քննությանը նվիրված հատվածի ծանոթության մեջ մենք նշեցինք, որ այնտեղ «դասային իմաստների մասին խոսելիս նկատի ունենք մասնիկներով և հեր-

թագավորություններով արտահայտված իմաստները, այլապես բայիմաստի մեջ ինքնին առկա են դասային տարբերություններ. համմատ. մեռնել, խոսել, կարդալ, պատմել, խայլել և այլն (անձերի մասին), սատկել, բառաչել և այլն (կենդանիների մասին), զնգալ և այլն (իրերի մասին), շարժվել և այլն (ընդհանուր) և այլն»: Դասային տարբերությունները նախադասության մեջ կապված են ենթակայի արտահայտության հետ, ընդ որում, ըստ ո՞վ, ի՞նչ հարցերի պատասխանների կարող են տարբերակվել ոչ միայն անունները, այլև դրանց գործողություններն արտահայտող բայերը:

Բայի առարկայական կարգերից նախադասության ծավալման համար հատուկ դեր է խաղում տիպարի կարգը: Վերջինիս համար մենք տարբերեցինք երկու ենթակարգ՝ անցողականության կամ գործողայնության և փոխարկայնության: Դիտարկենք սրանք առանձին-առանձին:

ա) Անցողականությունը, ինչպես նշվել է, հանդես է գալիս որպես բայական արժույթի մասնակի դրսևորում: Եթե այս անվան տակ հասկանանք այն բոլոր առարկաների արտահայտությունը, որոնք միավորվում են բայի արտահայտած եղելության մեջ, ապա արժույթը կընդգրկի ոչ միայն սովորաբար նշվող ենթակատուությունը (ձախակողմյան արժույթ) և խնդրատությունը (սրա մեջ հասկանանք նաև անցողական բայերին հատուկ խնդրատությունը՝ ուղիղ խնդիր պահանջելը), այլև ստորոգելի և տեղի պարագա ստանալը: Այս դեպքում արժույթը, որ կապվում է բայի հետ, բայց որի անվան տակ պետք է հասկանալ բայ-ստորոգյալի արտահայտած եղելությանը մասնակցող առարկաների արտահայտությունը, բացահայտ զուգահեռ կունենա անվան հոլովա-կապական համակարգի մեջ. տարբեր հոլովներով և կապերով ձևավորված առարկայանիշ բառերն ու բառակապակցությունները հանդես կգան որպես բայական արժույթի դրսևորումներ և վերջին հաշվով՝ որպես նախադասության առարկայանիշ անդամներ:

բ) Փոխարկայնության ենթակարգը բայի համակարգում հանդես է գալիս որպես նախադասության անվանական ստորոգյալի համառոտ արտահայտություն՝ «դառնալ» իմաստով: Նախադասության մեջ փոխարկայնությունը հանդես կգա ամենից առաջ որպես անվանական ստորոգյալի երկու տիպերի հակադրության դրսևորում՝ է և դառնում է՝ Հակորը մեծ է և Հակորը դառնում է մեծ. առաջին դեպքում հատկանիշն առնվում է որպես կայուն, երկրորդ դեպքում՝ որպես ձեռք բերվող հատկանիշ: Սակայն այս տարբերու-

թյունն ավելի խոր է և փաստորեն դառնալ–ը հանդես է գալիս որպես բայականության անհրաժեշտ տարր:

2. Բայի բուն բայական (բային ներհատուկ) կարգերից երկուսը՝ սեռը և տիպարը միաժամանակ առարկայական կարգեր են, ուստի նրանց մասին արդեն խոսվել է: Այստեղ հարկ ենք համարում միայն նշել, որ տիպարի կարգերից անցողականության ենթակարգը փաստորեն բուն առարկայական է, փոխարկայնությանը՝ բուն բայական (վերջին հաշվով՝ առարկայական): Մնացած երկու կարգերի՝ կերպի և ժամանակի մասին հարկ կա խոսել առանձին:

ա) Կերպի կարգի երկու դրսևորումներն էլ՝ բազմապատկականությունը (միակատարություն—բազմակատարություն եզրերով) և եզրայնությունը (ընթացքայնությունը՝ կատարյալ—անկատար, սկզբնական—ընթացական եզրերով) լիովին բայական են՝ բային ներհատուկ: Բայի համար, որպես որոշ վիճակի արտահայտության, բնորոշ են կերպի տարբեր դրսևորումները: Կերպի այս երկու դրսևորումները նախադասության մեջ կարող են արտահայտվել բայական տարբեր միջոցներով՝ կերպացույց մակբայներով (հաճախակի, երբեմն, բազմիցս և այլն), թվականների և անգամ բառի զուգորդմամբ (մեկ անգամ, երկու անգամ և այլն), կերպային բովանդակություն ունեցող դիմավոր բայերի (սկսել, ավարտել, դադարել, շարունակել և այլն բայերի դիմավոր ձևերի) և հիմնական գործողությունն արտահայտող բայերի անորոշի զուգորդումով (սկսեց. գրել. դադարից աշխատելուց և այլն): Բնականաբար այս դեպքում ևս կարող են հանդես գալ երկրորդական նախադասություններ՝ այնքան անգամ — nrfաճ (անգամ). fաճի դեռ և այլն հարաբերիչ տարրերով:

բ) Ժամանակի կարգի երկու ենթակարգերից միայն հաջորդականության ենթակարգն է, որ բայական արժեք ունի՝ առանց ստորոգմանը վերաբերելու. իրադրական ժամանակը ակնհայտորեն արտահայտված ստորոգական արժեք ունի և պետք է քննվի ստորոգման կարգերի մեջ: Հաջորդականությունը բնականաբար կարող է արտահայտվել մակբայաբար, բայանունների ու դերբայների հոլովաձևերով և կապական կառույցներով (ճաշից առաջ, աշխատանքից հետո. գրելու ժամանակ և այլն), ժամանակի երկրորդական նախադասություններով՝ երբ, այն բանից հետո, երբ, հենց nr և այլն կապական միջոցներով: Այլ կերպ ասած՝ ժամանակային հաջորդականության կարգի ծավալումը հանգեցնում է ժա-

մանակի պարագային և ժամանակի պարադայական նախադասությունների։

3. Ստորոգումը մտավոր ակտ է, որի դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է իրական աշխարհի (այդ թվում՝ նաև այդ իրական աշխարհի մի դրսևորումը ներկայացնող մտավոր աշխարհի՝ ներքնաշխարհի) որևէ կողմի վրա, հաստատվում է մտավոր հարաբերություն։

Բայ-ստորոգական կարգերի աղյուսակից և վերևում ասածից պարզվեց, որ «զուտ» ստորոգական է եղանակի կարգը, ստորոգա-առարկայական՝ դեմքի կարգը, ստորոգա-բայական՝ ժամանակի կարգը և ստորոգա-առարկայա-բայական՝ բայաձևի կարգը։ Սրանք բնականաբար այն կարգերն են, որոնք հանդես են գալիս բայի դիմավոր ու եղանակային ձևերի մեջ և կարող են արտահայտվել նաև միայն օժանդակ բայով (հանգուցյով)։ Եղանակի կարգի քննության դեպքում էլ նշվեց, որ պետք է տարբերել եղանակի կարգի երկու դրսևորում կամ երկու ենթակարգ՝ ժխտման և վերաբերողական կամ բուն եղանակի. վերաբերողական ենթակարգի մասին նշվեց, որ այն «հաղորդման (խոսքի) եղանակավորման (մոդալականության) մասնակի դրսևորումն է բայի խոնարհման հարացույցի մեջ՝ հատուկ եղանականիշ թեքույթների օգնությամբ։ Եղանակավորումը հաղորդող (խոսող) սուբյեկտի և հաղորդման օբյեկտիվ բովանդակության, այլ կերպ ասած՝ հաղորդողի վերաբերմունքի դրսևորումն է ոչ միայն բայի հարացույցի, այլև եղանականիշ բառերի հնչերանգի, շարադասության միջոցով»։

Այսպիսով, եթե ենթակարգերը դիտենք որպես առանձին կարգեր և կատարենք ժամանակի գաղափարի ճշգրտում, փաստորեն տարբերվում է ստորոգական հինգ կարգ՝ ա) բայաձևի, բ) իրադրա-ժամանակի, գ) դեմքի, դ) ժխտման և ե) եղանակի։ Այժմ, եթե նկատի առնենք բայական եղանակի ու եղանակավորման վերաբերյալ ասածները և այդ կարգերը քննենք ոչ թե բայի հետ կապված, այլ նախադասության առումով, ապա դժվար չի լինի նկատել հետևյալը։

Բայաձևի կարգը ոչ այլ ինչ է, եթե ոչ գործողության եղրերի՝ ներգործողի և ներգործվողի, օբյեկտիվ փոխհարաբերության սուբյեկտիվ փոխակերպում, այլ կերպ ասած՝ գործողության օբյեկտիվ էությունը մնում է նույնը, բայց փոխվում է գործողության եղրերի արտացոլման սուբյեկտիվ կարգը։ Իրականության մեջ գործողությունն սկսվում է գործողից՝ որպես գործողության պատ-

ճառից։ Համապատասխան գուգահեռ արտացոլման դեպքում ուշադրության կենտրոնում պետք է լիներ գործողը, որը պետք է բնութագրվեր իր որևէ գործողությամբ. սակայն սուբյեկտիվ արտացոլումը հենց նրանով է սուբյեկտիվ արտացոլման ակտ, որ այստեղ ուշադրությունը կարող է կենտրոնացվել գործողության եղրերից ոչ միայն առաջինի, այլև երկրորդի վրա. այս դեպքում ներգործական սեռը դառնում է ոչ նշանակիր անդամ և հակադրվում կրավորական սեռին որպես նշանակիր անդամի. այդ տարբերությունը հայերենում ձևականորեն արտահայտվում է վ մասնիկի բացակայությամբ և առկայությամբ։ Այս բանը կարելի է արտահայտել մի աղյուսակով (12), որտեղ կիրառվում են հետևյալ համառոտագրումները. լատինական տառերով նշված են իրական առարկաները, հայերենով՝ դրանց սուբյեկտիվ արտացոլումները՝ գոյական անունները, ընդ որում M-ը նշանակում է Materia, S-ը՝ Status (վիճակ, կացություն), Գ-ն՝ գոյական անուն, Վ-ն՝ վիճակի նշանակում՝ **բայ, →նշանը՝** անցում,— նշանը դրված տառի վերևից՝ տվյալ վիճակի բացառում։

Աղյուսակ 12

Իմացության եղրեր	Բայական եղրեր	
	Բանաձևեր	Օրինակներ
Օբյեկտիվ (իրական) գործողության (իմացվող՝ իմացության պասիվ եղր)	$M_1 \rightarrow M_2 (S \rightarrow \bar{S})$	«Պետրոսն ապտնել է Հակոբին»
Սուբյեկտիվ արտացոլում (իմացող՝ իմացության ակտիվ եղր)	1. $Գ_1 \rightarrow Գ_2 (Վ \rightarrow \bar{Վ})$ 2. $Գ_2 (\bar{Վ} \rightarrow Վ) \rightarrow Գ_1$	Պետրոսը ապտնել է Հակոբին Հակոբը ապտնվել է Պետրոսի կողմից

Այսպիսով, եկանք առաջին հայացքից փոքր-ինչ պարադոքսային թվացող այն եզրակացությանը, որ բայասեռը որևէ իրական գործողության հիմնական եղրերի փոխակերպումն է (ըստ այն բանի, ինչ գտնվում է խոսողի ուշադրության կենտրոնում)։ Այժմ, եթե նկատի առնենք, որ նախ՝ ամեն մի իրական գործողություն ունի մեծաթիվ եղրեր (բացի ներգործողից և ներգործվողից նաև գործողության միջոցը, այլ մասնակիցները, ինքը գործողությունը, այդ գործողության հանգամանքները և այլն), և որ դրանցից յուրաքանչյուրը կարող է լինել ուշադրության կենտրոնում, երկրորդ՝

փոխակերպումն ընդգրկում է հավելա-ժխտումը (գումարում-բացառումը), փոխարկումը (սուբստիտուցիան՝ մի բացառում և մի գումարում), շրջումը կամ տեղափոխությունը (երկու փոխարկում), ապա կարելի է համաատել, որ բայասեռը փոխակերպման դրսևորումներից մեկն է, և որ փոխակերպումը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրական գործողության եզրերի և հանգամանքների արտացոլման սուբյեկտիվ տարբերությունների դրսևորում (գործողության ելակետի և նախադասության ելակետի տարբերակում)։ Այս դեպքում կունենանք զուգահեռություն (=), երբ սուբյեկտիվ արտացոլումը կառուցվում է անդամների միևնույն թվով և կազմով, և 2) ոչ-զուգահեռություն ≠ կամ փոխակերպվածություն, որ կարտահայտվի որպես անդամների հավելում (+), զեղչում (—), փոխարկում (/) և տեղափոխություն ⇄)։

Իրադրաժամանակը տարբերվում է ժամանակի մյուս դրսևորումից՝ հաջորդականությունից, նրանով, որ առաջին դեպքում օբյեկտիվ գործողության ժամանակը որոշվում է խոսելու կամ խոսողի նկատի ունեցած որևէ կոնկրետ ժամանակով։ Այս առումով իրադրաժամանակը հարաբերակից է դեմքի կարգին, որտեղ օբյեկտիվ առարկաները (անձերը և իրերը) որոշվում են՝ նրանց խոսքի հետ ունեցած հարաբերությամբ։ Իրադրաժամանակը այնպես է հարաբերում հաջորդականությանը, ինչպես դիմանիշ դերանունը՝ անվանը։

Ժխտման կարգը իմացական ակտ է, որի էությունը հասկանալու համար դիմենք հաղորդակցման պրոցեսին։ Հաղորդակցման պրոցեսը ոչ այլ ինչ է, եթե ոչ միջնորդված իմացության պրոցես։ Այստեղ ենթադրվում են, բացի հաղորդման առարկայից, նաև երկու եզրեր՝ հաղորդող և հաղորդումն ընդունող։ Ամեն մի իմացական հաղորդակցման պրոցես սկսվում է հարցումից. հարցումը բուն նշանի բացակայության նշան է, այսինքն՝ այն թանի նշան, որ հարցնողի մոտ չկա իրականության որևէ կողմի վերաբերյալ անմիջական կամ միջնորդված տեղեկություն, և նա ձգտում է այդ ձեռք բերել։ Հնարավոր է հարցման երկու տեսակ՝ անհմացության և կասկածի. առաջին դեպքում բացակայում է նշանն ընդհանրապես, երկրորդ դեպքում այն կա, բայց լիովին չի հավաստված իրականությամբ։ Առաջին տիպի հարցման մեջ առկա են հատուկ հարցական բառեր, երկրորդ տիպի հարցման մեջ բերվում են պատասխանի մեջ հաստատվող կամ ժխտվող բառերը՝ հարցմամբ՝ հմմտ. «Ի՞նչ է եղել. Պետրոսն ապանել է Հակոբին» և «Պետրոսն ապանե՞լ է Հա-

կոբին (թե ոչ). սպանել է (այո՛) / չի սպանել (ո՛չ)»: Առաջին տիպի Հարցման պատասխանը պետք է լինի կամ առարկայի (եղելության) մատնանշումը կամ անվանումը, երկրորդ տիպի Հարցմանը՝ Հաստատումը կամ ժխտումը: Այսպիսով, Հաստատումն ու ժխտումը ոչ այլ ինչ են, եթե ոչ Հարցման պատասխաններ:

Առաջին տիպի Հարցման պատասխանները կարող են լինել կամ ցուցական (երբ Հարցման առարկան անմիջականորեն առկա է), կամ բուն նշանային բառեր (ներառյալ և մակբայական բառերը՝ որպես Հատկանիշային նշանակումներ), երբ առարկան անմիջապես առկա չէ: Ցույց տալու դեպքում առարկաները տարբերակվում են ըստ խոսողի, խոսակցի և խոսքի առարկայի դիրքի կամ Հեռավորության:

Երկրորդ տիպի Հարցման պատասխանը կարող է լինել Հաստատումը և ժխտումը Հետևյալ եղրերով (աղյուսակ 13).

Աղյուսակ 13

Պատասխանի Հատկանիշներ	Պատասխանի եղրեր			
	Կատկած (թերևս, գուցե, կամ)	Հաստատում (այո՛, իհա՛րկե և այլն)	Ժխտում (ո՛չ)	Անիմացություն (չգիտեմ)
Հաստատականություն	—	+	—	—
Ժխտականություն	+	—	+	—

Հարց ու պատասխանի ակտը բուն երկախոսությունն է: Սակայն նրա միջոցները երկրորդաբար կարող են օգտագործվել մենախոսության (պատողության) մեջ: Այս դեպքում բուն իրադրական բառերը, որոնք կամ նշանների բացակայության նշաններ են (Հարցական դերանունները), կամ առարկաների անմիջական առկայության նշաններ, վերածվում են խոսքի կապակցական միջոցների, ընդ որում ցուցականների տարբերակումը կամ կորցնում է արժեքը [«Ես տեսա մեղանը. Նա (սա, դա) ջարդված եր»—«Ես տեսա մեղանը, որ ջարդված էր»— «Ես տեսա այն, ինչ ջարդված էր» և այլն], կամ ստանում նախորդող ու Հաջորդող, Հեռու և մոտ անունները կապողի արժեք. իրադրությանը փոխարինում է կոնտեքստը. այստեղ ցուցականությունը վերածվում է որոշյալության, այսինքն՝ դեմքի կարգը վերածվում է որոշյալության կարգի:

Դատողության ժամանակ տեղի է ունենում նաև հաստատման ու ժխտման համակցում (կոմբինավորում), հաստատման և ժխտման տարբեր աստիճաններ արտահայտող բառերը վերածվում են այսպես կոչված համադասական շաղկապների: Այսպիսով, համադասական շաղկապները, ինչպես կտեսնենք նրանց քննության ժամանակ, առաջին հերթին ոչ այլ ինչ են, եթե ոչ հաստատում և ժխտում պարունակող խոսքային միավորների հարաբերության նիշեր:

Այժմ պարզենք եղանակավորման էությունը: Բայական եղանակը սովորաբար համարվում է արտահայտության բովանդակության հարաբերությունը դեպի իրականությունը[3]: Եղանակավորությունը սահմանվում է որպես հասկացական կարգ, որ ցույց է տալիս խոսողի հարաբերությունը արտահայտության բովանդակության և արտահայտության բովանդակության հարաբերությունը՝ իրականության հետ (հաղորդման հարաբերությունը նրա ռեալ իրականացման հետ) և իրականացվում է քերականական ու բառային տարբեր միջոցներով (ինչպես բայի եղանակը, եղանակավորող բառերը, հնչերանգը և այլն)[4]:

Վերանալով եղանակավորման դրսևորման միջոցներից՝ դժվար չէ պարզել, որ եղանակավորման մեջ մտնում են զգայական, կամային և սուբյեկտիվ գնահատման դրսևորումները: Այս բոլոր դեպքերում մենք գործ ունենք իրական և սուբյեկտիվ պրոցեսների փոխհարաբերությունների հետ: Այլ կերպ ասած՝ առկա է օբյեկտիվի (իրականի) և սուբյեկտիվի անմիջական հարաբերություն, առարկայի և հոգևոր նշանի փոխհարաբերություն: Եթե իմացա-հաղորդակցային ակտը ըստ հաստատա-ժխտականության ևռակողմանի պրոցես է՝ աշխարհի միջնորդված ընկալման պրոցես, ապա եղանակավորումը անմիջական չիման պրոցես է: Ըստ վերևում բերված բաժանման՝ պետք է տարբերել եղանակավորման երեք հիմնական դրսևորում՝ 1) զգացմունք, 2) ցանկություն և կամք, 3) սուբյեկտիվ-հաստատական գնահատում. վերջինս տարբերվում է նախադասության ստորոգման ակտից նրանով, որ սա առարկայական հարաբերություն է, եղանակավորումը՝ վիճակային անցման, պատճառա-հետևանքային հարաբերություն. ստորոգման դեպքում ուշադրության կենտրոնում գործողության (եղելության)

---

3 Համմ. О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1966, էջ 248:

4 Նույն տեղը, էջ 237:

որևէ կողմն է որպես խոսքի (նախադասության) ելակետ. նղանակավորման դեպքում գործողության եզրերը հանդես են գալիս օբյեկտիվ և սուբյեկտիվ վիճակների պատճառակցային հարաբերակցության կամ համեմատության մեջ: Զգացմունքը կրավորական (հետևանքային) երևույթ է (վիճակ) կամ, ինչպես ճշտորեն ասվում է՝ կիրք (կրում), սուբյեկտիվ պատիվություն. ցանկությունը հակառակ հարաբերությունն է՝ ներքին շարժում դեպի իրականացում, սուբյեկտիվ ակտիվություն՝ ուղղվածություն դեպի նպատակը: Եթե մի կողմ թողնենք պատմողական նախադասությունները, ընդհանրապես հնարավոր է հարաբերության երեք տիպ՝ օբյեկտիվ — սուբյեկտիվ (կիրք, զգացմունք), սուբյեկտիվ → սուբյեկտիվ (ենթադրություն), սուբյեկտիվ → օբյեկտիվ (կամք): Այս նույն ձևով հնարավոր է համեմատության երեք եզր՝ օբյեկտիվի գերակշռություն (հարկադրանք), սուբյեկտիվի գերակշռություն (հրաման) և օբյեկտիվի ու սուբյեկտիվի համապատասխանություն (կարողություն):

3. ՇԱՐՈՒՅԹ

Քերականության մեջ երկար ժամանակ ընդունված է եղել նախադասությունը անմիջապես բաժանել բառերի՝ տարբերելով նախադասության նախ՝ գլխավոր և ապա՝ երկրորդական անդամները: Ժամանակակից լեզվաբանությունը նախադասության անդամատումը կատարում է աստիճանաբար՝ սկսելով ավելի մեծ հատվածներից և սրանց հետագա բաժանմամբ գնալով դեպի ավելի փոքր հատվածները: Սովորական երկկազմ (բառային դրսևորում ունեցող ենթակայով և ստորոգյալով) նախադասությունը կբաժանվի նախ ենթակայի և ստորոգյալի խմբերի, սրանք էլ կմասնատվեն ավելի փոքր խմբերի՝ մինչև նախադասության և նրա մեջ մտնող բառակապակցությունների անդամներին հասնելը: Եթե բացառենք բացահայտչական արժեքի բառակապակցությունները (երեկ առավոտյան ժամը երկուսին տիպի) և մեկ բառային միավորի արժեք ունեցող բառախմբերը (ոչ մի կերպ տիպի), ապա կարելի է ասել, որ նախադասության նվազագույն միավորները կլինեն լիիմաստ բառերը՝ համապատասխան հարաբերիչ տարրերով, ինչպիսի արտահայտություն էլ որ այդ հարաբերիչ տարրերն ունենան (մասնիկավորում, օժանդակ բայ, համապատասխան առոգանություն, որոշակի շարադասություն՝ **ֆաղաֆից, տան մոտ, Հակո՛բ, Հակոբը** —): Շարահյուսական այս նվազագույն միավորները

կարող են հանդես գալ կամ նախադասության կազմում՝ որպես նախադասության անդամներ, կամ նախադասությունից դուրս՝ որպես եղանակավորող, պարզաբանող, ուշադրություն հրավիրող տարրեր. այսպես, Հակոբ գոյականը Հակոբից ձևով կարող է հանդես գալ որպես նախադասության անդամ («Գրիգորը Հակոբից նամակ ստացավ») և Հակո՛բ ձևով (համապատասխան առոգանությամբ)՝ որպես կոչական:

Նախադասության անդամատման աստիճանականությունը հնարավորություն է տալիս որոշելու բառի և բառակապակցության տեղը նախադասության մեջ և միաժամանակ նրա կազմում բացահայտելու բառից ավելի ծավալուն հատվածներ: Նախադասության այն հատվածները, որոնք բաղկացած են մեկ բառից, բառախմբից կամ բառակապակցությունից, և որոնք հանդես են գալիս որպես որոշակի դադարներով և հնչերանգով առանձնացվող միավորներ, կոչվում են շարույթներ: Շարույթները երկպլանային միավորներ են, որոնց արտահայտության (հնչական) պլանում համապատասխանում են հնչատակները (որպես միապլանային միավորներ): Այսպես, «Ես Գրիգորի հետ ոչ մի կերպ գյուղ չեմ գնա» նախադասությունը բաժանվում է չորս շարույթի և, համապատասխանաբար, եթե իմաստը նկատի չառնենք, չորս հնչատակի՝ 1) ես, 2) Գրիգորի հետ, 3) ոչ մի կերպ և 4) գյուղ չեմ գնա: Սրանցից առաջինը արտահայտված է մեկ բառով և կազմում է նախադասության մեկ անդամ (ենթակա). երկրորդը արտահայտված է երկու (մեկ լիիմաստ և մեկ օժանդակ) բառով և կազմում է նախադասության մեկ անդամ (միասնության կամ ուղեկցման խնդիր). երրորդը արտահայտված է երեք բառով (բառախմբով) և կազմում է նախադասության մեկ անդամ (ձևի պարագա). չորրորդը արտահայտված է երեք բառով (բայական բառակապակցությամբ) և կազմում է նախադասության երկու անդամ (տեղի պարագա և բայական ստորոգյալ): Այսպիսով, շարույթը չի կարելի նույնացնել ոչ բառի, ոչ բառակապակցության, ոչ բառախմբի, ոչ նախադասության անդամի հետ: Առաջին երեքը կարող են քննվել նախադասությունից դուրս, վերջինը առնվում է նախադասության մեջ, բայց չի համընկնում շարույթի հետ: Սակայն եթե մենք փորձենք որոշել շարույթի տեղը լեզվաբանական երկպլանային միավորների մեջ, ապա դժվար չէ պարզել, որ նա հանդես կգա ոչ թե բառի (խոսքի մասի), բառախմբի և բառակապակցության, այլ նախադասության անդամի և նախադասության շարքում:

II. ԵՂԱՆԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՌԱԽՄԲԵՐ

1. ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ա. Եղանակավորության առոգանական արտահայտությունը. նախադասության եղանակա–առոգանական տեսակները

Հայտնի է, որ բայեղանակը եղանակավորության ընդհանուր կարգի մասնակի դրսևորումն է բայի համակարգում: Եղանակավորության մյուս դրսևորումը եղանականիշ բառերի և բառախմբերի գործածությունն է: Սակայն եղանակավորությունը սրանցով չի սպառվում. նախադասության ողջ եղանակավորումը, որի տակ պետք է հասկանալ հաղորդողի վերաբերմունքի դրսևորումը հաղորդակցման կողմերի և հաղորդման նկատմամբ, իրականացվում է և այլ միջոցներով՝ ենթակայի ընտրությամբ, բառային համանիշների ընտրությամբ ու գործածությամբ, տրամաբանական շեշտով, հնչերանգով, շարադասության փոփոխությամբ և այլն: Մտորև մի քննենք եղանակավորության արտահայտությունը նախադասության առոգանական միջոցներով, ապա կանցնենք եղանականիշ բառերին ու բառախմբերին[5]:

Այն հանգամանքը, որ հայերենում հնչերանգը (ելևէջը՝ բարձրության կամ տոնի տարբերությունները) և շեշտը (ուժգնության տարբերությունը) բառերի օբյեկտիվ իմաստների տարբերակման համար չեն օգտագործվում[6]*, հիմք է տալիս դրանք օգտագործելու առորոգական-հաղորդակցային նպատակներով՝ հաղորդման նկատմամբ արտահայտվող անձի սուբյեկտիվ (զգացական, կամային և իմացական) հարաբերությունը (ինչպես կտեսնենք, նաև տեքստա-շարահյուսական հարաբերություններ) արտահայտելու համար: Այս առումով հնչերանգի և շեշտի տարբերությունները կարող են արտահայտել այն հիմնական եղանականիշ իմաստները, որոնք ավելի լայնորեն ու հանդամանորեն արտահայտվում են եղանականիշ բառերի ու բառախմբերի միջոցով: Կոպիտ ընդհանրաց-*

---

5 *Առայժմ բաց կթողնենք բառերի, հատկապես համանիշ բառերի, ընտրության և շարադասության եղանակները. առաջինը վերաբերում է բուն ոճաբանությանը, երկրորդը քննվում է քան կաղապարից կատարվող շեղումներին:*

6 *Բացառությունները խիստ հազվադեպ են: Մինչդեռ համմտ. չինարենն ու վիետնամերենը, որտեղ հնչերանգը օգտագործվում է բառատարբերակիչ գործառույթամբ, կամ սուսերինը, որտեղ այդպիսի դեր է կատարում շեշտը:*

մամբ կարելի է ասել, որ բացականչական առոգանությունը ունի հիմնականում զգացական, շեշտը՝ կամային, հարցական առոգանությունը՝ իմացական արժեք: Այս է պատճառը, որ ձայնարկություններն ունեն հիմնականում բացականչական, հրամայական եղանակի բայաձևերը և կոչականը՝ շեշտային, հարցական բառերն ու բառախմբերը՝ հարցական առոգանություն: Այս նույն պատճառով պատասխանական բառերը ստանում են շեշտային առոգանություն՝ արտահայտելով պատասխանողի համոզվածության աստիճանը: Բնականաբար, ձայնարկություններով, կոչականով, հարցական և հաստատական բառերով ուղեկցվող նախադասությունների առոգանությունն ավելի թույլ է լինում, քան առանց այդպիսի բառերի հանդես եկող և զգացական, կամային ու իմացական հատուկ երանգավորում ունեցող նախադասություններինը: Այս կապակցությամբ հարկավոր է խոսել նախադասությունների եղանակային տիպերի կամ, ինչպես հայ քերականության մեջ ընդունված է ասել, բնույթի մասին:

Խոսելով նախադասությունների բնույթի մասին՝ քերականները սովորաբար չեն տարբերում արտահայտության և բովանդակության պլանները, դրանք առնում են միասնաբար: Սա մասամբ հասկանալի է, որովհետև ամենից առաջ այստեղ է հանդես գալիս այդ երկու պլանների հիմքում ընկած՝ առարկայական-նյութական միասնությունը: Մեր քերականության մեջ սովորաբար տարբերում են պատմողական, հարցական, բացականչական և հրամայական նախադասություններ[7]: Այս դեպքում պատասխանական նախադասությունները և նախադասության դատողական տիպերը սովորաբար միավորվում են պատմողականի հետ, իսկ կոչական ունեցողները բաշխում են եղած տիպերի վրա՝ ըստ կոչականին ուղեկցող նախադասության եղանակային բնույթի:

Ինչպես տեսնում ենք, վերևում բերված դասակարգման մեջ չկա սկզբունքի միասնություն. ա) «բացականչական» են համարվում իմաստային առումով զգացական և զգացա-կամային բնույթի նախադասությունները՝ ըստ բացականչական հնչերանգի. բ) պատմողականի մեջ միավորվում են ամենատարբեր բնույթի նախադասություններ՝ ինչպես բուն պատմողական, այնպես էլ դատողական. գ) միևնույն բնույթն ունեցող պատասխանական նախադասու-

---

7 Համմ., օրինակ, Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1947, էջ 13—14, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Երևան, 1958, էջ 13—28:

թյուններըբաշխվում են նախադասությունների տարբեր տիպերի վրա, ընդ որում շեշտակիր-հավաստական նախադասությունները փաստորեն իրենց իսկական տեղը չեն գտնում։

Հետևելով մեր ընդհանուր սկզբունքին՝ նախադասությունների եղանակային տիպերի խմբավորման համար նախ դիմենք արտահայտության պլանին, ապա բացահայտենք բովանդակության պլանի կառուցվածքը։ Ըստ արտահայտության պլանի պետք է տարբերել, ինչպես տեսանք, բացակատնչական, շեշտական, հարցական և չեզոք տիպեր։ Կողմնակի հանգամանքներից վերանալու համար վերցնենք մեկ բառով արտահայտված նախադասություններ. սրանք կարելի է միավորել երկու հատկանիշով՝ պարտադիր երկարատևություն և պարտադիր սրաշեշտություն (տոնի պարտադիր բարձրացում)։ Այս դեպքում նախադասության չորս տիպերի փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 4-րդ աղյուսակով։

Աղյուսակ 4

Առոգանական հատկանիշներ	Առոգանական տիպեր			
	Հարցական	Բացակատնչական	Շեշտական	Չեզոք
Պարտադիր երկարատևություն	+	+	—	—
Պարտադիր սրաշեշտություն	+	—	+	—

Անցնելով բովանդակության պլանին՝ կարելի է բացահայտել սրանց հետևյալ իմաստային արժեքները.

1) Հարցումն իր բուն առումով արտահայտում է նշանի անօբյեկտայնություն կամ օբյեկտի անհավաստիություն. այսինքն՝ կա նշանը, չկա նրա որոշակի օբյեկտը։ Հարցական առոգանություն և, համապատասխանաբար, հարցական նշան ունեցող նախադասությունները ցույց են տալիս, որ հարցնողը որևէ բան որոշակիորեն չգիտի և ուզում է իմանալ։ Այսպիսով, հարցումը կամա-իմացական երևույթ է։

2) Բացականչությունն արտահայտում է զգացմունք՝ կամ

առանց կամային ու իմացական երանգի (որպես զուտ կիրք՝ կրում), կամ դրանց ուղեկցությամբ։ Հաճախակի են ըղձական, այ-սինքն՝ կամա-զգացական բնույթի, նախադասությունները, որոնք արտահայտում են կամք՝ առանց անմիջական ուղղվածության (հրամանի)։

3) Շեշտն իր բնույթով (ձայնի ուժգնության մեծացում) արտահայտում է ընդհանրապես կամ կամային որոշակի ուղղվածություն (ի տարբերություն ըղձականի) դեպի խոսակիցը՝ մի բան անելու հրամանը, կամ ուշադրության կենտրոնացում. վերջինս ունի երկու դրսևորում՝ ա) տրամաբանական շեշտ, որի դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է այս կամ այն օբյեկտի վրա (գերազանցապես պատասխանական արժեքով) և բ) կոչական, որի դեպքում որևէ անձի ուշադրությունը հրավիրվում է խոսքի (հաղորդման վրա)։ Այսպիսով, շեշտի բնույթը երկու տիպի է՝ կամային և իմացական։

4) Վերջապես, չեզոք առոգանությունն արտահայտում է խոսող սուբյեկտի չեզոքություն՝ իրականի օբյեկտիվ արձանագրում, հավաստում, պատմություն, իրականության շուրջը օբյեկտիվ դատողություն, վերջին հաշվով՝ իմացական-ճանաչողական ակտ։

Նկատի ունենալով բովանդակության պլանը և բացառելով միջանկյալ եղանակները՝ մենք փաստորեն պիտի խմբավորենք հոգեկան հիմնական պրոցեսները։ Սա կարելի է կատարել երկու հատկանիշով՝ սուբյեկտիվ (կամային) ակտիվություն և իմացականություն (աղյուսակ 5).

Աղյուսակ 5

Հատկանիշներ	Կարգեր			
	Իմացության ձգտում (հարցում)	Կամք	Իմացություն (դատողություն)	Զգացմունք
Սուբյեկտիվ ակտիվություն	+	+	—	—
Իմացականություն	+	—	+	—

Իրականում լեզվի մեջ, ինչպես մասամբ տեսանք, հոգեկան այս պրոցեսները «մաքուր» ձևով հանդես չեն գալիս. կամքը կարող է դրսևորվել զգացականորեն և իմացականորեն, իմացությու-

նը կարող է լինել զգացական բնույթի և այլն։ Լեզվական կարգերը հանդես են գալիս որպես այս հոգեբանական ընդհանուր կարգերի դրսևորումները՝ առոգանական տարբեր տիպերով, լրացական ու զուգակցային տարբեր իմաստներով, արտահայտության և բովանդակության պլանների տարբեր անցումներով. հավաստումը (հատկապես ժխտումը) կարող է դրսևորվել հարցական ձևով («Չգնա՞նք կինո = «Գնա՛նք կինո», «Դա քեզ վայե՞լ է» = «Դա քեզ վայել չէ»), հարցը՝ հավաստական ձևով («Հարցնում եմ Գրիգորի գնալու մասին») և այլն։ Մասնավորապես պետք է նշել, որ խոսքին աշխուժություն տալու և խոսքի ներգործության ուժեղացնելու համար սուբյեկտիվ-հաղորդակցական բնույթի նախադասություններր կարող են ներառվել պատմողական խոսքի մեջ։ Եվ այս բոլորն այն պատճառով, որ մարդկային խոսքը, բացի անմիջական հաղորդակցման և իմացական կարիքները բավարարելուց, ձեռք է բերում գեղագիտական հաճույք պատճառելու և, սրա հետ կապված, ուժեղ ներգործելու գործառություն, որ երբեմն իմացականը մղում է երկրորդ պլանը։

բ. Եղանականիշ բառերի և բառախմբերի տեսակները

Բայեղանակի կարգի քննության ժամանակ մենք առանձնացրինք երկու ենթակարգ՝ ժխտման և վերաբերողական։ Ժխտման ենթակարգի համար տարբերեցինք երկու եզր՝ հաստատում և ժխտում, վերաբերողական ենթակարգի համար չորս եզր՝ հրամայական, ըղձական, սահմանական և ենթադրական (ցանկականություն և ուղղվածություն հատկանիշներով)։ Հետագա քննության համար խիստ կարևոր է երկու ենթակարգերի փոխհարաբերության պարզաբանումը։ Ամենից առաջ կարևոր է նշել, որ գոյաբանական մակարդակով առարկաներ և վիճակներ տարբերակելու դեպքում սրանք կպատկանեն վիճակի բնութագրիչներին և սրանով կհակադրվեն հաղորդակցման իրականացման մյուս երկու կարգերին՝ բայասեռին և դեմքին, որոնք առարկայական բնույթի են։ Այսպիսով, երկու ենթակարգերի կամ, ավելի ճիշտ, կարգերի համար ընդհանուրը վիճակայնության հատկանիշն է։ Հապա ո՞րն է նրանց տարբերիչ հատկանիշը. դժվար չէ պարզել, որ հաստատա-ժխտականությունը ակնհայտ իմացական բնույթի է և հաղորդակցական արժեք ունի. այստեղ ուշադրության կենտրոնում է իր իսկ հաղորդման (խոսքի) և այդ հաղորդման (խոսքի) առարկայի հարաբերությունը

(դենոտատի մասին մի բան հաստատվում է կամ ժխտվում). վերաբերողականության դեպքում ուշադրության կենտրոնում է հաղորդման (խոսքի) և հաղորդումը (խոսքը) իրականացնող անձի (սուբյեկտի) և այլ անձերի փոխհարաբերությունը, սուբյեկտի կամքի և ակտիվության դրսևորումը։ Այս առումով հաստատա-ժխտականությունը հարաբերակից է բայասեռին, վերաբերողականությունը՝ դեմքին (աղյուսակ 6).

Աղյուսակ 6

Հատկանիշներ	Կարգեր			
	Բայասեռ	Դեմք	Հաստատա-ժխտականություն	Վերաբերողականություն
Առարկայականություն	+	+	−	−
Դենոտատային ուղղվածություն (իմացականություն)	+	−	+	−

Հաստատա-ժխտականության կարգը հաղորդակցման ընդհանուր ակտի մի կողմն է։ Դժվար չէ պարզել, որ հաստատա-ժխտականությունը հարց ու պատասխանի ավելի ընդհանուր կարգի մասնակի դրսևորումն է և այն էլ՝ պատասխանի դրսևորումը վիճակային առումով. առարկայական առումով մենք կունենանք դերանվանական եզրեր (հարցական, անձնա-ցուցական, որոշյալ, անորոշ), բայց այդ մասին հետո։ Հարց ու պատասխանի կարգի մի դրսևորումը պետք է համարել և բուն եղանականիշ բառերից և բառախմբերից առանձնացնել այն բառերն ու բառախմբերը, որոնք վերաբերում են ոչ թե ամբողջ նախադասությանը, այլ նախադասության առանձին անդամների (վերջիններս շեշտվում են, ընդգծվում և փաստորեն վերածվում հոգեբանական ստորոգյալի)։ Սրանք կարող են վերաբերել և՛ բայերին, և՛ գոյականներին, և՛ ածականներին ու մակբայներին (միայն ուտում է, միայն Հակոբը, միայն կարմիր, միայն ջանասիրաբար)։

Սակայն բացի հարցուպատասխանական և վերաբերողական բառերից ու բառախմբերից, որոնք մասնակի զուգահեռ ունեն բայական համակարգի ձևերի մեջ, պետք է տարբերել բառերի և բառախմբերի երկու այլ կարգեր ևս, որոնք բայի ձևաբանական կառուցվածքի մեջ զուգահեռ չունեն և որոշ չափով արտահայտվում են

հնչերանգի ու շեշտի միջոցով. դրանք ձայնարկութիւնները և կոչական բառերն են։ Ձայնարկութիւնները, եթե նկատի առնենք այդ բառի բուն արժեքը, արտահայտում են մարդու զգացմունքը և կամքը անմիջաբար. դրանք հիմնականում ոչ-հաղորդակցական, արտահայտչական բնոյթի են, այսինքն նախատեսված են ոչ թե հաղորդակցման, այլ արտահայտութեան համար։ Կոչական բառերն, ընդհակառակն, հաղորդակցական արժեք ունեն. նրանց նպատակն է գրավել այն մարդու ուշադրութիւնը, որին ուղղված է խոսքը։ Մենք առայժմ բացառում ենք միջանկեալ բառերն ու բառախմբերը, որոնք ներմուծվում են վերհիշելու հետ կապված կամ բացատրութեան համար. դրանք իրենց բնոյթով հատուկ կարգ չեն կազմում, այլ հանդես են գալիս որպես այլ կարգերի՝ հաղորդողի սուբյեկտիվ ընկալմամբ ու առանձնահատկութիւններով պայմանավորված արտացոլում։

Այսպիսով, մենք կարող ենք առանձնացնել լայն առումով եղանականիշ բառերի ու բառախմբերի չորս հիմնական կարգ՝ ա) հարցուպատասխանական, բ) սուբյեկտիվ-վերաբերողական, գ) ձայնարկական և դ) կոչական-դիմողական։ Ավելորդ չէ նշել, որ այս չորս խմբերի տարբերակումը հիմնվում է ոչ թե տրամաբանական հատուկ չափանիշների, այլ մասամբ արտաքին-արտահայտչական միջոցների բնոյթի և մասամբ ավանդական պատկերացումների վրա։

Եղանականիշ բառերի այս չորս խմբերը հազվադեպ են հանդես գալիս միևնույն շարքում. սակայն նկատի ունենալով լրիվ կաղապարը՝ կարելի է տալ հետևյալ նմուշը՝ Ա՛խ, Հակո՛բ, այո՛, դժբախտաբար միայն ես եմ եկել։ Այստեղ եթե բացառենք միայն-ը, որ ոչ այնքան խոսքա-նախապատասական, որքան բառա-ընդգծողական արժեք ունի, ապա կարելի է տահմանել ((((a+) b+) c+)d+)P կաղապարը, որտեղ a-ն եղանականիշ բառերի առաջին կարգը՝ ձայնարկութիւնն է, b-ն՝ կոչականը, c-ն՝ հարցուպատասխանական բառերը, d-ն՝ եղանակա-վերաբերողական բառերը, P-ն՝ բուն նախադասութիւնը (հաղորդումը)։ Եթե ձայնարկութիւնը բացակայում է, ապա ավելի սովորական է կոչականի և հարցուպատասխանական բառերի հակադիր շարադասութիւնը՝ «Ո՛չ, Հակոբ», «Այո՛, սիրելի՛ս» և այլն, այլ կերպ ասած՝ առկա է (((c+)b+)d+)P կաղապարային տարբերակը։

Եղանականիշ բառերի այս չորս կարգերը հաջորդականութեան տեսակետից որևէ զուգահեռ չունեն եղանականիշ ենթակարգերի

մեջ. չ-ն և կ-ն բայաձևի կազապարի մեջ հանդիպում են միևնույն դիրքում՝ առանց միմյանց հաջորդելու, թեև տեսականորեն չ-ն կարող էր նախորդել կ-ին (*չ-կ-գնամ, փոխարինվում է չեմ գնա բառախմբով):

Ի՞նչ հարաբերության մեջ են եղանականիշ բառերի ու բառախմբերի այս չորս կարգերը իմաստային առումով (բառ բովանդակության պլանի): Հարցուպատասխանական և կոչական բառերն ու բառախմբերը ընդգծված հաղորդակցային արժեք ունեն. նրանք ծառայում են կամ բուն հաղորդակցմանը (իմացական նպատակով), կամ հաղորդակցի ուշադրությունը գրավելուն: Երկրորդ հատկանիշը, որով նրանք կտարբերվեն, գնահատողականությունն է. հարցուպատասխանական և վերաբերողական բառակարգերը գնահատողական բնույթի են (եթե մանավանդ նկատի առնենք պատասխանը), ձայնարկությունը և կոչականը՝ ոչ: Այս փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով (աղյուսակ 7).

Աղյուսակ 7

Հատկանիշները	Կարգեր			
	Հարց ու պատասխանական բառեր	Կոչական	Վերաբերողական բառեր	Ձայնարկություն
Հաղորդակցայնություն	+	+	—	—
Գնահատողականություն	+	—	+	—

Այս բոլոր կարգերի բնույթը շատ լավ կերևա, եթե դիմենք փոխակերպության և բառերի ու բառախմբերի այս չորս կարգերն արտահայտենք հաղորդակցային՝ դգացական ու գնահատողական բնույթի բայեր ունեցող, գլխավոր նախադասություններով, որոնց կենթարկվի բուն հաղորդումը որպես երկրորդական նախադասություն՝ որ շաղկապով. 1) «Վա՛հ, միայն դո՞ւ ես եկել»—«ես զարմանում եմ, որ միայն դու ես եկել». 2) «Հակո՛բ, (լսի՛ր,) Գրիգորն եկել է»—«ես Հակոբին ասում եմ (Հակոբը ինձնից լսում է), որ Գրիգորը եկել է». 3) «Այո՛, Գրիգորը եկել է»—«ես հաստատում եմ, որ Գրիգորը եկել է». 4) «Ծրագրաբար Գրիգորը դեռ չի եկել»—«ես ցավում եմ, որ Գրիգորը դեռ չի եկել»:

Ըստ մեր ընտրած սկզբունքի՝ քերականական կարգերի քննությունը պետք է կատարել խոսքի մեջ նրանց հաջորդման բնական կարգի համաձայն։ Այս սկզբունքով հարկավոր է ընտրել հետևյալ կարգը՝ 1) ձայնարկություններ, 2) կոչական, 3) հարցուպատասխանական բառեր և բառախմբեր, 4) վերաբերողական-եղանակային բառեր ու բառախմբեր։

2. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հայերենի արմատական ձայնարկությունների քիչ թե շատ լրիվ ցանկը դժվար է սահմանել, որովհետև դրանք պատկանում են կենդանի-ստեղծագործվող բառերի թվին. յուրաքանչյուր անձնավորություն կարող է լայնացնել ձայնարկությունների շրջանակը՝ ըստ իր տպավորության կազմելով նորանոր տեսակներ։ Այնուամենայնիվ կա ձայնարկությունների մի որոշ սահմանափակ շրջանակ, որ հատուկ է հավերժով խոսողների մեծ մասի խոսքին ընդհանրապես։ Հայերենի բուն ձայնարկությունները մեծ մասամբ միավանկ են (ա՛խ, օ՛), հազվադեպ երկվանկ (ավա՛ղ, օխա՛յ) և եռավանկ (ծուղրուղո՛ւ). նրանց զգալի մասը կարող է գործածվել կրկնությամբ (վա՛յ վա՛յ վա՛յ, պա՛հ պա՛հ պա՛հ)։ Իբրև ձայնարկություններ կարող են գործածվել նաև այլ կարգի բառեր՝ համապատասխան բացականչական կամ շեշտային առոգանությամբ։ Ըստ արտաքին հատկանիշների ձայնարկություններ են այն բառերը, որոնք՝ ա) գործածվում են բացականչական կամ բացականչականին (առանց գործառական-իմաստային էական փոփոխության) փոխարինող շեշտային առոգանությամբ, բ) նախադասության ուղեկցող բառերի կազապարում գրավում են առաջին տեղը (թեև երկրորդաբար կարող են այլ տեղ գրավել) և գ) ձևաբանական ու բառակազմական հատուկ փոփոխություններ չեն կրում (կրելու դեպքում վերածվում են այլ խոսքի մասերի՝ ախը, վայել և այլն)։

Հայերենի հիմնական ձայնարկություններն են հետևյալները՝ ա՛, ա՛խ, ա՛հ, ամա՛ն, ա՛յ, ավա՛ղ, բա՛, եռանի՛, է՛, է՛հ, եհէ՛, էհե՛յ, է՛յ, ը՛, ը՛հ, ըհը՛, թյո՛ւհ (թյո՛ւհ), թո՛ւ, (թո՛ւ), թո՛ւհ (թո՛ւհ), ի՛, ի՛հ, ի՛ֆ, հ՛ա, հա՛յ, հարա՛յ, հե՛յ, պա՛, պա՛հ, ջա՛ն, վա՛, վա՛հ, վա՛յ, վա՛շ, ո՛ւ, ուխա՛յ, ո՛ւհ, փո՛ւ(ֆ), (փո՛ւ), օ՛, օխա՛յ, օ՛ֆ, օհո՛, օ՛ֆ, ֆո՛ւ, ֆո՛ւհ. *Ստարաբանությամբ գործածվում են* դա՛, է՛խ, փա՛հ փա՛հ փա՛հ, ֆի՛. *Բարբառային-խոսակցական եղանակով և գավառաբանությամբ՝* բե՛, բի՛, բո՛, էրեե՛կ,

պահո՛, պի՛, պո՛, վի՛, վո՛յ, հնաբանութ յամբ՝ օ՛ճ ձայնարկութ յունները կա ձայնարկութ յունների մեջ մտցվող բառերի մի հատուկ խումբ, որ ուղեկցվում է բացականչական կամ շեշտային առոգանութ յամբ, ձևաբանական ու բառակազմական փոփոխութ յուններ չի կրում, բայց նախադասութ յանն ուղեկցող եղանականիշ բառերի մյուս կարգերի հետ չի զուգակցվում՝ բը՛զզ, դրա՛խկ, դրը՛խկ, թըր՛խկ, խը՛ռռ, ծուղրուղո՛ւ, հա՛ֆ–հա՛ֆ (հա՛ֆ–հա՛ֆ), ղա՛ (ղա՛ ղա՛ ղա՛), ղո՛ւ (ղո՛ւ ղո՛ւ ղո՛ւ), ևր՛ռռ, շը՛խկ, շը՛խկ, վը՛զզ, տը՛զզ և այլն։ Իմաստային առումով ձայնարկութ յունների այս երկու խմբերը տարբերվում են նրանով, որ բուն ձայնարկութ յուններն արտահայտում են անմիջական զգացմունք և կամք, երկրորդ խմբի՝ բնաձայնական ձայնարկութ յունները՝ բնական ձայների ընդօրինակում՝ ըստ հայերենի հնչական առանձնահատկութ յունների և բնական ձայների յուրահատուկ ընկալման։ Իմաստային առումով երկու կարգի ձայնարկութ յունների համար ընդհանուրն այն է, որ նրանք հանդես են գալիս որպես բնական ձայներ։ Այսպիսով, ձայնարկութ յուններն արտահայտում են անմիջական զգացմունք ու կամք կամ հանդես են գալիս որպես ձայնական ազդավորութ յան անմիջական արտահայտութ յուն։

Ձայնարկութ յունների՝ եղանակային տարբեր բայաձևերի ու եղանականիշ բառերի հետ գործածվելու հաճախականութ յան և խնդիր ստանալու կարողութ յան մասին գաղափար է տալիս 8-րդ աղյուսակը (էջ 365)։

Աղյուսակի կապակցութ յամբ կարելի է նշել հետևյալը.

1) Խնդրառութ յունը հատուկ է ձայնարկութ յունների մի փոքր մասին միայն՝ ավա՛զ, բո՛ւ(հ), վա՛յ, վո՛ւ(հ), օ՛հ (?), ֆո՛ւ(հ)։ Տրականով խնդրառութ յունը հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք, որ ձայնարկութ յունների արտահայտած իմաստը այս դեպքում մասնավորվում է, վերագրվում մեկին։

2) Ձայնարկութ յունների մեծ մասը կարող է գործածվել ըղձականի հետ, բայց ոչ հաճախակի։

3) Հրամայականի հետ հաճախակի գործածվող ձայնարկութ յունները կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) ձայնարկութ յուններ, որոնք հաճախակի են գործածվում և՛ հրամայականի, և՛ կոչականի հետ՝ ղե՛(հ). էհե՛յ. հե՛յ, չա՛ն և բ) ձայնարկութ յուններ, որոնք հաճախակի են գործածվում հրամայականի, բայց ոչ կոչականի հետ։ Առաջին տիպի ձայնարկութ յունները կամային-դիմողական բնույթի են, երկրորդները՝ կշտամբական-պարսավական (ա՛յ ա՛յ

Ձայնարկություններ	Ինքնատիպություն (թեզ)	Փոխածծվելու հաճախականությունը (բնորոշությունը)					
		Եղանակային բայաձևերի հետ			Եղանականիշ բառերի խմբերի հետ		
		Ըղձական (գնամ)	Հրամայական (գնա)	Ապառնի (գնալ)	Կապական (Հակո՛ւ)	Ժխտական (գիտի, գիտե)	Վերաբերական (վաճառա-վաճառ)
ա՛	—	—	—	—	—	+	—
ա՛խ	—	—	—	—	—	—	+
ա՛հ	—	—	—	—	—	—	—
ամա՛ն	—	—	—	—	—	—	+
այ՛ ա՛յ այ՛	—	—	+	—	—	—	—
ավա՛ղ	+	—	—	—	—	—	—
դե՛(հ)	—	—	+	—	—	—	—
է՛(հ)	—	—	—	—	—	—	+
էհե՛	—	—	—	—	—	—	—
էհե՛յ	—	—	—	—	—	—	—
ըհը՛	—	—	—	+	—	—	—
թու՛(հ)	—	—	+	—	—	—	—
ի՛հ	—	—	—	—	—	—	+
հա՛	—	—	—	—	—	—	—
հե՛յ	—	—	+	—	—	—	—
պա՛հ	—	—	—	—	—	—	—
ջա՛ն	—	—	—	—	—	—	—
վա՛(հ)	—	—	—	+	—	—	—
վա՛յ	+	—	—	—	—	—	+
փու՛(հ)	—	—	+	—	—	—	—
օ՛	—	—	—	+	—	—	—
օխա՛յ	—	—	—	—	—	—	+
օ՛հ	+	—	—	—	—	—	+
օհո՛	—	—	—	+	—	—	—
օ՛ֆ	—	—	—	—	—	—	+
ֆու՛(հ)	—	—	—	—	—	—	—

ա՛յ) և հատկապես զգվանք արտահայտող՝ թո՛ւ(հ), փո՛ւ(հ), ֆո՛ւ(հ) (թքելու բնաձայնության երանգով):

4) Սահմանական եղանակի հետ հաճախակի գործածվող ձայնարկությունները արտահայտում են գերազանցապես զարմանք՝ էհե՛, պա՛հ, վա՛(հ), օ՛, օհո՛, և երբեմն կատարվածի հավաստում՝ րհը՛: Զարմանքը ապառնիի և իրականացվողի տարբերության դրսևորումն է. ընդհակառակն, ըհը՛-ի դեպքում խոսողն արձանագրում է ապառնեիքի և իրականացման համընկումը, երկու դեպքում էլ իրական եղելությունը դրվում է սահմանականով:

5) Հարցուպատասխանական բառերի հետ հաճախ գործած-

վող ա՛, հա՛ ձայնարկություններն արտահայտում են խոսողի՝ հանկարծակի գլխի ընկնելը և լրացնում են զրույցը։

6) Վերջապես, վերաբերողական բառերի հետ հաճախակի գործածվող ձայնարկություններն արտահայտում են ցավի (վշտի) (ա՛ի, ա՛խ, ամա՛ն, ավա՛ղ, վա՛յ, օ՛ի, օ՛), ուրախության, գոհունակության (օխա՛յ) և դժգոհության [է՛(ի), ի՛հ] զգացմունքներ։

Ձայնարկությունների զգալի մասը բազմիմաստ է. այսպես, ախ–ը ըստ հնչերանգի և զուգորդվող նախադասության բնույթի կարող է արտահայտել ցավ, ափսոսանք, կշտամբանք և այլն։

Ավելորդ չէ նշել, որ ձայնարկություններին և որոշ այլ եղանականիշ բառերին իրենց բնույթով մոտ են՝ ա) չտարորոշված զանազան կարգի ձայները՝ ծը՛ ծը՛ ծը՛ (ճթթոցային-ներշնչական ձայն՝ կշտամբական-զարմացական բնույթի), պպը՛ (ներշնչական-շրթնային ձայն՝ օդային համբույր և քնքշանք արտահայտող), տը՛ (ճթթոցային ձայն՝ ժխտական բնույթի) և այլն. բ) զանազան կարգի ժեստերն ու բնորոշ միմիկական շարժումները, որոնք երբեմն տարբերվում են ժողովրդից ժողովուրդ և տարածքից տարածք՝ գլխի շարժում վերից վար, ձախից աջ, զարմանքի, տհաճության միմիկա և այլն։

Ձայնարկությունների մեջ պետք է մտցնել և դիտել որպես նրբանց կամային-դիմողական տիպի մի դրսևորումը կենդանիներին ուղղված ձայները, որոնք կանչելու դեպքում ասվում են կրկնությամբ և հեռացնելու դեպքում՝ մեկ անգամ՝ փի՛ս փի՛ս փի՛ս, ջո՛ւ ջո՛ւ ջո՛ւ և այլն, փի՛շտ, ֆշա՛ և այլն։

Ձայնարկությունների բաշխման քննությամբ մենք կարողացանք առանձնացնել որոշ իմաստային խմբեր։ Այս իմաստային խմբերի բնույթն ավելի ակնհայտ կլինի, եթե նկատի առնենք, որ ձայնարկությունների փոխարեն կարող են փոխակերպորեն գործածվել որոշ դիմավոր և միադեմ (անդեմ) ձևեր՝ «Վա՛հ, եկե՞լ ես» — «Զարմանալի է, որ եկել ես», «Զարմանում եմ, որ եկել ես», «Էհե՛յ, եկե՛ք»—«Լսեցե՛ք, եկե՛ք» և այլն։

Բոլոր բուն ձայնարկություններն ամենից առաջ կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ զգացական և կամային. առաջին դեպքում արտահայտվող անձը պասիվ կրող է և արտահայտում է իր կրածը (կիրքը). երկրորդ դեպքում նա ակտիվ կողմ է, որ ցանկանում է, հորդորում, հրամայում։ Առաջին դեպքում առկա է շարժում դեպի խոսողը, և ձայնարկությունը խոսողի կամքից անկախ գործող պատճառի առաջացրած ձայնական հետևանքն է, երկրորդ դեպքում

խոսողի արձակած ձայնը պատճառ է դառնում գործողության համար: Եթե առարկաները (անձերը) նշանակենք M_1, M_2-ով, գործողությունը՝ S-ով, ձայնական նշանը՝ Շ-ով (շրջված S), ապա զգացական և կամա-դիմողական ձայնարկությունների համար կստացվեն հետևյալ բանաձևերը.

1) $(M_1)Շ\ (\leftarrow M_{1-2}S)$
2) $(M_1)Շ\ (\rightarrow M_{1-2}S)$

Զգացական ձայնարկությունը հակազդում է (ռեակցիա), կամադիմողականը՝ ազդակ (ստիմուլ): M_{1-2} ցույց է տալիս, որ ձայնարկությունը կարող է լինել՝ 1) ինչպես ներքին (իր իսկ առարկայի մեջ գործող), այնպես էլ արտաքին (մի այլ առարկայի կողմից գործող) պատճառի հետևանք, 2) ուղղված լինել ինչպես իրեն, այնպես էլ ուրիշ առարկայի (անձի):

Ըստ բովանդակության պլանի խմբավորել ձայնարկությունները՝ նշանակում է տալ զգացմունքների և զգացական բնույթ ունեցող կամային ու իմացական վիճակների դասակարգումը: Սա հոգեբանության խնդիրն է, բայց հոգեբանությունը չի տվել այս խնդրի քիչ թե շատ գոհացուցիչ լուծում: Առաջիկա դասակարգումը այդպիսի մի փորձ է: Ձայնարկությունների իմաստային դասակարգման համար կարելի է հիմք ընդունել հետևյալ չորս հատկանիշները.

1) Իրական գործողության հակազդում (ռեակցիա) լինելը. այս հատկանիշով միավորվում են այն բոլոր ձայնարկությունները, որոնք յուրատեսակ ռեակցիա են իրական գործողության հանդեպ: Սրանք հակադրվում են այն ձայնարկություններին, որոնք կամ ազդակ են գործողության համար, կամ ռեակցիա ենթադրական գործողության հանդեպ: Առաջին ձայնարկությունների դեպքում առկա է անմիջական իրական պատճառ, երկրորդ դեպքում՝ ենթադրական պատճառ կամ հետևանք:

2) Կամային ակտիվություն. այս հատկանիշով միավորվում են այն ձայնարկությունները, որոնց մեջ դրսևորվում է արտահայտվող անձի սուբյեկտիվ ակտիվությունը, արտահայտածին ակտիվ վերաբերմունք ցույց տալը:

3) Իմացականություն. այս հատկանիշով միավորվում են իմացական բնույթ ունեցող ձայնարկությունները. դրանք կամ հակազդումներ (ռեակցիաներ) են հաղորդումների և իրական ու ենթադրական գործողությունների հանդեպ, կամ ազդակներ իմացական-հաղորդակցային գործողությունների համար:

4) Դրականություն. այս հատկանիշով միավորվում են դրական վերաբերմունք և գնահատում արտահայտող ձայնարկությունները։

Ձայնարկությունների խմբերը կարելի է արտահայտել 9-րդ աղյուսակով (էջ 369)։

Ձայնարկությունները, բացի գոյականական լրացումներից, կարող են ստանալ բացահայտչի տիպի յուրատեսակ լրացումներ, որոնք նույնպես ձայնարկությունների արժեք ունեն և կարող են գործածվել ինքնուրույնաբար. համմտ. «Հե՛յ, ձե՛զ մատաղ, բանվոր տղերք» (ՀՀ), «Ամո՛թ fեզ, Մոսի՛, թուf ու ճախատիճf» (ՀԹ)։

Ձայնարկությունները կարող են գործածվել նաև միջադաս և ետադաս դիրքերում։ Որոշ դեպքերում էլ նրանք փոխարինում են դիմավոր բայերին և հանդես գալիս ոչ թե հաղորդակցային, այլ հաղորդային գործառույթամբ՝ որպես նախադասության անդամ. այդ գործառույթը հատուկ է մանավանդ բնաձայնական ձայնարկություններին՝ «Հակոբը շրը՛խկ նրա երեսին»։ Հաճախակի է նաև ձայնարկությունների որոշ տիպերի, այդ թվում բնաձայնական ձայնարկությունների անվանական գործածությունը՝ «Վայ-վայն ընկավ», «Նրա ախից ցնցվեցի» և այլն։

3. ԿՈՉԱԿԱՆ

Կոչականը, ինչպես նշվել է հոլովների քննության ժամանակ, ձևավորվում է ուղղականի կոչական տարբերակով, որ, ի տարբերություն բուն ուղղականի, ա) երբեք հոդ չի ստանում, բ) միշտ շեշտված է լինում և գ) միշտ անջատվում է նախորդ և հաջորդ բառերից որոշակի դադարով։ Կոչականը, բացի համադրական ձևից, ունի նաև վերլուծական ձևեր, որոնք արտահայտվում են հատուկ կոչական բառ-մասնիկներով։ Հայ քերականները այդ բառ-մասնիկները սովորաբար դնում են ձայնարկությունների մեջ, սակայն բուն արժեքով դրանք ձայնարկություններ չեն. ի տարբերություն բուն ձայնարկությունների՝ այդ բառ-մասնիկները՝ ա) ունենում են հիմնականում շեշտային և միայն երկրորդաբար բացականչական առոգանություն, բ) կոչական բառերից դադարով չեն անջատվում և գ) իրենց վրա են վերցնում կոչականի շեշտը՝ այն թողնելով անշեշտ (սովորական ձայնարկությունների ժամանակ կոչականն իր շեշտը չի կորցնում)։ Բուն գրական լեզվի կոչական բառ-մասնիկները երկուսն են՝ ա՛յ և ո՛վ։ Առաջինը գործածվում է միայն անձի առման դեպքում՝ ա՛յ մարդ, ա՛յ տղա, ա՛յ ընկեր, ա՛յ

Աղյուսակ 6

Հիվանդության տարածման հիմնական ուղին	Հիվանդության անվանումը	Հարուցիչի տեսակը	Հարուցիչի կրողները	Հարուցիչի փոխանցման գործոնները
Ջրային	Թարախային մենինգիտ (հետևանքային)	+	+	+
	Ամեբային դիզենտերիա	+	+	+
	Ղեղձ	+	+	+
	Ռինոսկլերոմա (պատվական)	+	+	+
	Ռինոսկլերոմա (հետևանքային)	+	+	+
	Ղեղձ	+	+	+
	Տուլյարեմիա (ջրային)	+	+	+
	Լեպտոսպիրոզ (հետևանքային)	+	+	+
	Ջրգողտրոզ	+	+	+
	Տրիխոցեֆալյոզ	+	+	+
	Ասկարիդոզ	+	+	+
	Ենթամաշկային դրոշմանման	+	+	+
	Ստրեպտոկոկային	+	+	+
	Ստաֆիլոկոկային	+	+	+
	Ֆուրունկուլյոզ	+	+	+
	Ֆլեգմոնա	+	+	+
	Ֆուրունկուլ	+	+	+
	Ֆուրունկուլյոզ (հետևանքային)	+	+	+
	Կարբունկուլ (հետևանքային)	+	+	+

տիկին և այլն, և որոշ գործածություններում ունի հանդիմանական երանգ։ Ոչ-անձերի անունները կարող են ստանալ կոչականի այս մասնիկը միայն անձի առման դեպքում (անձնավորում՝ ա՛յ կով, ա՛յ գետ և այլն)։ Կոչականի ո՛վ բառ-մասնիկը, ի տարբերություն ա՛յ-ի (որ խոսակցական ոճի է), հատուկ է ավելի գրքային-հանդիսավոր ոճին և դասային տարբերակում չի առաջացնում՝ ո՛վ մարդ, ո՛վ գեղեցկություն, ո՛վ սեր և այլն։ Խոսակցական-բարբառային գործածությամբ որպես կոչականի նիշեր հանդես են գալիս նաև ա՛, ծո՛, տո՛, ֆա՛ բառ-մասնիկները. սրանցից ծո՛-ն և տո՛-ն հիմնականում արական սեռի անձերի համար են գործածվում, ֆա՛-ն՝ իգական սեռի. բոլորն էլ անձերի դասի մասնիկներ են[8]։ Եթե բուն կոչականը լրացում ունի, ապա սա դրվում է կոչական բառ-մասնիկների և բուն կոչականի միջև՝ «Ա՛յ սիրելի ընկեր»։

Որպես կոչական գործածվում են սովորաբար գոյական անունները. հազվադեպ այդ գործառույթյամբ կարող են հանդես գալ դերանունները, որոնք այս դեպքում կարող են ստանալ բուն գոյականական կոչականը որպես բացահայտիչ՝ «Դո՛ւ, լսի՛ր» կամ «Դո՛ւ, Հակո՛բ լսի՛ր»։ Բուն գոյականական կոչականը ևս կարող է ունենալ բացահայտիչ՝ «Հեյ, ու՞ր ես, Դավիթ, հայոց պահապան» (ՀԹ)։ Ինչպես նշվել է ձայնարկությունների քննության կապակցությամբ, կոչականի գործառույթյամբ կարող են հանդես գալ և ձայնարկությունները՝ է՛յ, էհե՛յ, հե՛յ, հե՛յ-հե՛յ, հարա՛յ, հայ-հարա՛յ՝ իմաստային այս կամ այն երանգով, ընդ որում այս դեպքում ևս նրանք կարող են ուղեկցվել բուն կոչականով՝ էհե՛յ, տղե՛րք. հայ-հարա՛յ, ժողովո՛ւրդ և այլն։ Ածականները գոյականաբար՝ որպես կոչական գործածվելիս ս հոդն են ստանում՝ սովորաբար փաղաքշական երանգով՝ սիրելի՛ս. անուշ(ի՛կ)ս և այլն։

Հայերենի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ փաղաքշական երանգի դեպքում կոչականը կարող է ուղեկցվել ջա՛ն ձայնարկությամբ, որ այս դեպքում փաստորեն վերածվում է եւս մեկ կոչական բառ-մասնիկի և կորցնում շեշտը՝ Հակո՛բ ջան, ընկե՛ր ջան և այլն։

Կոչականը երբեմն, ինչպես և եղանականիշ այլ բառերը, կարող են դրվել նախադասության մեջ և վերջում։ Կոչական ձայնարկությունները թեև սովորաբար նախորդում են բուն կոչականներին.

8 Համմ. այս առումով Հայ հին բերականների (հատկապես Դավիթ Ջելթունցու) դիտողությունները։ Գ. Բ. Ջահուկյան, Բերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—VX դդ.), Երևան, 1954, էջ 331։

բայց կարող են և հաջորդել. վերջին դեպքում նրանք արտահայտում են բայական լրացուցիչ իմաստ կամ ուժեղացնում են կոչականի իմաստը՝ Ա՛յ չորաճ, հե՛յ (ձի)։ Միջադաս ու ստորադաս կոչականները սովորաբար կոչական ավելի թույլ արժեք ունեն և ավելի շատ ոճական ու այլ կարգի գործառույթամբ են հանդես գալիս։

Խոսակցական-բարբառային լեզվում սովորական է կոչականի դեր կատարող հատուկ անունների կրճատ և -ո վերջածայնով գործածությունը՝ Կարո՛ (Կարապետ), Հայրո՛ (Հայրապետ), Մարո՛ (Մարգարիտա) և այլն, ընդ որում սրանք կարող են ընդունվել որպես բուն ուղղականներ և գործածվել նաև այլ դիրքերում։

Կոչականները բաշխական առումով իմաստային նշանակալից տարբերություններ հանդես չեն բերում. նրանց հիմնական գործառույթյունը մնում է հաղորդման վրա հաղորդակցի (խոսակցի) ուշադրության հրավիրումը։

4. ՀԱՐՑՈՒԱՏԱԽԱՆԱԿԱՆ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՌԱԽՄԲԵՐ

Հարցուպատասխանական բառերը, պատկանելով եղանակային բառերի ու բառախմբերի ընդհանուր կարգին, բուն եղանակային-վերաբերողական բառերից տարբերվում են և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններում։ Արտահայտության պլանում նրանք, ի տարբերություն եղանակա-վերաբերողական բառերի, 1) նշանակալից մասով ունենում են հարցական և շեշտական առոգանություն և գրության մեջ սովորաբար ուղեկցվում համապատասխան նշաններով[9], 2) այդ բառերի հետ միասին հանդիպելու դեպքում գրավում են նախորդող դիրք, եթե առկա է դադար («Այո՛, դժբախտաբար պիտի գնամ»), հազվադեպ, հաջորդող դիրք, եթե դադար չկա («Դժբախտաբար այո՛»). Բովանդակության պլանում նրանք, ի տարբերություն վերաբերողական բառերի, որոնք արտահայտում են առաջին հերթին վերաբերմունք ու գնահատում, հանդես են գալիս որպես իմացության ձգտման ու բավարարման արտահայտիչներ։

Ի տարբերություն ձայնարկության և կոչականի, որոնք միշտ առանձնանում են բուն նախադասությունից որոշակի դադարով

9 Երբեմն շեշտի նշանը չի դրվում, բայց շեշտական առոգանությունը ակնհայտ է։

և նախադասության անդամ չեն լինում, հարցուպատասխանական բառերը երկու տեսակ են. դրանք մասամբ իբրև նախադասության անդամներ հանդես չեն գալիս՝ կազմելով հարցուպատասխանական բառերի առնական խումբ, մասամբ հանդես են գալիս որպես այդպիսիներ՝ ունենալով սրանց համար բնորոշ գործառական դերեր։ Առաջին կարգի հարցուպատասխանական բառերը կոչենք անկախ, երկրորդները՝ գործառական։ Բուն հարցուպատասխանական բառերը առաջիններն են. սրանք, ի տարբերություն գործառականների, ա) տեղ են գրավում նախադասության ուղեկցող բառերի և ոչ թե բուն նախադասության կաղապարում. բ) ձևաբանորեն ու բառակազմորեն (ածանցմամբ) չեն փոխվում՝ չեն հոլովվում, չեն խոնարհվում[10] և չեն ածանցվում. գ) կարող են հանդես գալ բոլոր խոսքի մասերի ուղեկցությամբ՝ առանց սահմանափակության։

Անկախ հարցուպատասխանական բառերը և բառախմբերը հետևյալներն են՝ ա) հարցական՝ արդյո՞ք, մի՞թե, բ) պատասխանական՝ այո, ասենք թե, արդարև, գուցե (մի գուցե), երևի, թերևս, իբր (իբր թե), իբրև թե, իհարկե, ինչ խոսք (ինչ խոսք որ), ինչպես չէ, իսկապես (իսկապես որ), կարծեմ, կարծես, (կարծես թե), ոչ, ոչ մի կերպ, չէ և այլն։

Եթե տարբերենք, ըստ կազապարի մեջ գրաված դիրքի, հարցուպատասխանական բառերի ձախակողմյան և աջակողմյան բաշխում, ապա կարելի է ասել, որ ձախակողմյան բաշխումը քննված է մասամբ ձայնարկություններին և մասամբ կոչականի քննության հետ կապված։ Այստեղ հարկավոր է նշել միայն, որ՝ ա) հարցուպատասխանական բառերի հետ ամենից ավելի գործածվում են իմացական տիպի ձայնարկությունները (հատկապես գլխի ընկնելու՝ ա՛, հա՛ և զարմանքի՝ վա՛ հ, օհո՛ և այլն). բ) կոչականի հետ գործածվելու տեսակետից հարցուպատասխանական բառերը որևէ սահմանափակում չունեն. ընդհակառակն, կոչականը նրանց մոտ հասկացվում է անմիջաբար կամ ենթադրաբար։

Ձախակողմյան արժույթի դեպքում հարկավոր է նկատի առնել հարցուպատասխանական բառերի ու բառախմբերի գործածությու-

---

10 Հաճախ ներկայացնում են բարացած հոլովաձևեր և անիսկական բարդություններ։

նը՝ ա) վերաբերողական բառերի և բ) բայեղանակային տարբեր ձևերի հետ։ Ստացվում է հետևյալ պատկերը (աղյուսակ 10, էջ 274)[11]։

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1) Վերաբերողական բառերի հետ սովորաբար գործածվում են բուն հաստատական և ժխտական բառերն ու բառախմբերը՝ այո, իհարկե, իսկապես (որ), ոչ, ոչ մի կերպ, չէ, ընդ որում սրանցից այո, ոչ և, որոշ վերապահությամբ, ոչ մի կերպ, չէ բառերն ու բառախմբերը կարող են զուգորդվել վերաբերողական բառերի ու բառախմբերի հետ նեղադաս դիրքում և առանց դադարի՝ դժբախտաբար ոչ։

2) Հարցուպատասխանական բառերից միայն բուն հաստատական այո և ժխտական ոչ, ոչ մի կերպ, չէ բառերն ու բառախմբերն ունեն հաստատական և ժխտական բայաձևերի հետ գործածվելու սահմանափակություն։ Հաստատական բայաձևով դրված հարցի դեպքում («Գրիգորը մեկնո՞ւմ է Երևան») այո-ն դրվում է հաստատական և մյուսները՝ ժխտական բայաձևերի հետ [«Այո՛, (Գրիգորը) մեկնում է (Երևան)», «Ո՛չ, (Գրիգորը) չի մեկնում (Երևան)»]։ Ժխտական բայաձևով դրված հարցի դեպքում («Գրիգորը չի՞ մեկնում Երևան») պատասխանը պետք է լինի ժխտական բառով [«Ո՛չ, (Գրիգորը) չի մեկնում (Երևան)»], բայց երբեմն լինում է նաև հաստատական այո բառով [«Այո՛, (Գրիգորը) չի մեկնում (Երևան)»]. այս դեպքում այո-ն վերաբերում է ոչ թե հաղորդման բովանդակությանը, այլ հարցմանը, այսինքն՝ պատասխանողը համաձայնում է հարցնողի հաղորդման ժխտականությանը։ Որոշ լեզուներում այո-ի այս երկու գործառույթները տարբերակված են. համմտ. ֆրանս. oui և si։

3) Սահմանական եղանակի հետ գործածվելու հարցում մասնակի սահմանափակություն ունեն ասեմ թե, գուցե, մի գուցե, երևի, թերևս, իբր (թե), իբրև (թե), կարծեմ, կարծես (թե) բառերն ու բառախմբերը, որոնք երկբայական բնույթ ունեն, արտահայտում են պատասխանողի կասկածը հաղորդման նկատմամբ, ընդ որում ասեմ թե, գուցե, մի գուցե, երևի, թերևս, կարծեմ, կարծես (թե) բառերն ու բառախմբերն արտահայտում են պատասխանողի իմացության անհավաստիությունը, իբր (թե)-ն, իբրև (թե)-ն՝ նրա թե-

11 Մասնակի սահմանափակում կա կատարյալի և վաղակատարի հետ գործածվելու դեպքում, որ խոսում է սրանց տարբերության որոշ եղանակային արժեքի մասին (հավաստիություն—անհավաստիություն կամ ակնհայտություն—անակնհայտություն՝ երևի գնացել է, բայց լավ չէ երևի գնաց)։

Աղյուսակ 10

| Ընտրված գործոնների ազդեցությունը | Ընտրանքի ծավալը | Ծխախոտային տերևների որակական ցուցանիշների վրա ազդող գործոնների ազդեցության ուժգնությունը | | |

բահավաստությունը հաղորդման աղբյուրի նկատմամբ։ Երկբայական բառերն ու բառախմբերը սահմանական եղանակի բայաձևերից ավելի շատ գուգակցվում են վաղակատարի և հազվադեպ՝ կատարյալի հետ. սրա պատճառն այն է, որ կատարյալը ցույց է տալիս ավելի հավաստի, անցյալի որևէ ժամանակակետի հետ հարաբերվող, սովորաբար հաղորդողի կողմից դիտված գործողություն, վաղակատարը՝ ընդհանրապես անցյալում կատարված, անցյալի որևէ ժամանակակետի հետ չհարաբերվող՝ սովորաբար հաղորդողի կողմից չդիտված գործողություն. այլ կերպ ասած՝ առկա է ակա-նատեսության—անականատեսության (очевидность—неочевидность) քերականական կարգի մի դրսևորումը[12]։

4) Ղեձական բայաձևերի հետ առանց սահմանափակության գործածվում են հարցական և գուցե, մի գուցե, երևի, թերևս երկբայական բառերը. հաստատական, ժխտական, այլև ուրիշի հաղորդումը կասկածի տակ դնող իբր (թե), իբրև թե երկրորդական բառերն ու բառախմբերը, ղեձական բայաձևերի հետ սովորաբար չեն գործածվում։ Սա հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք ղեձական բայաձևերի ենթադրական բնույթը։

5) Ենթադրական բայաձևերի հետ գործածության սահմանափակություն ունեն ասեմ թե, իբր (թե), իբրև թե երկբայական բառերն ու բառախմբերը. գուցե (մի գուցե), թերևս, երևի երկբայական բառերի գործածությունը փաստորեն նույնպես պետք է սահմանափակվեր, բայց դրանք այնուամենայնիվ գործածվում են՝ մասամբ ենթադրական բայաձևերի՝ ինքնին ենթադրական լինելու, մասամբ գործածողների որոշ անփութության հետևանքով։ Միաժամանակ՝ հաստատական և ժխտական բառերի՝ ենթադրական բայաձևերի հետ գործածվելու անսահմանափակությունը ցույց է տալիս, որ այդ բայաձևերը նշանակում են որոշակի, խոսողի կողմից համոզմունքով արտահայտվող գործողություն։

6) Վերջապես, հրամայականի և արգելական հրամայականի բայաձևերի հետ գործածվում են միայն հաստատական և ժխտական, բայց ոչ հարցական և երկբայական բառերն ու բառաձևերը։

Ի մի բերելով հարցուպատասխանական բառերի բաշխական քննության արդյունքները՝ ըստ բերված տվյալների կարելի է առանձնացնել հարցուպատասխանական բառերի չորս հիմնական խումբ՝ 1) հարցական, 2) հաստատական, 3) ժխտական և 4) երկ-

12 Համմ. Ա. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 231—232. Ի. Ի. Շիլականե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիանները, «Լեզվի և ոճի հարցեր», II, Երևան, 1964, էջ 254։

բայական։ Եթե հարց ու պատասխանի կարգը քննենք ավելի լայն ձևով՝ հաշվի առնելով ոչ միայն բառային, այլև քերականական ու հնչական դրսևորման միջոցները, ապա կստանանք նախադասությունների արժեք ունեցող բառերի հետևյալ չորս խմբերը՝ ըստ հարցականության և պատասխանականության (որպես իմացական ազդակայնության և իմացական հակազդայնության) հատկանիշների (աղյուսակ 11).

Աղյուսակ 11

Հատկանիշներ	Դարգեր			
	Ճարտասանական հարց	Հարց	Պատասխան	Պատմողական նախադասություն
Հարցականություն	+	+	—	—
Պատասխանականություն	+	—	+	—

Հիմնական պատասխանական բառերը չորսն են՝ այո՛, ո՛չ, կամ (կամ—կամ), գուցե: Մնացած բառերն ու բառախմբերը ներկայացնում են նրանց եղանակային և ոճական տարբեր դրսևորումները՝ հաստատման և ժխտման ուժգնության տարբեր աստիճաններ (ուժեղացում և մեղմացում), գրքային-գրական և խոսակցական-բարբառային ոճեր, քաղաքավարական տարբերություններ։

Բուն իմաստով պատասխանական բառերը բայական-նախադասական արժեք ունեն, այսինքն՝ կարող են փոխարինվել դիմավոր բայերով և հանդես գալ որպես ամբողջական նախադասություններ՝ այո←հաստատում եմ (ճիշտ է). ո՛չ←ժխտում եմ (ճիշտ չէ), կամ—կամ ← և՛ հաստատում եմ, և՛ ժխտում (կարող է ճիշտ լինել և՛ մեկը, և՛ մյուսը), գուցե←կասկածում եմ, (հաստատ) չգիտեմ (հակադարձ փոխակերպում)։ Հարցական ա՞ոդյո՞ք, մի՞թե բառերը ունեն զուտ հարցման արժեք և փաստորեն փոխարինում են հարցական առոգանությանը՝ գնո՞ւմ է ≈ մի՞թե գնում է:

Այսպիսով, կամ—կամ շաղկապը ժխտա-հարաբերական և վերջին հաշվով եղանականիշ արժեք ունի. այստեղ պատասխանողը հնարավոր է համարում երկու ելք, որոնցից յուրաքանչյուրը հավասարապես հնարավոր է, և մեկի ընտրության դեպքում մյուսը ժխտվում է։ Կամ-ին և կամ—կամ-ին հարաբերակից է թե՞ հարցական շաղկապը։

Այժմ մի քանի խոսք գործառական հարցուպատասխանական բառերի մասին, որոնք այստեղ կքննվեն ոչ թե գործառական, այլ հարցուպատասխանական առումով։

Գործառական հարցուպատասխանական բառերը ցույց են տալիս առարկաներ, հատկանիշներ և հատկանիշների հատկանիշներ՝ հանդես գալով գոյականի, որոշչի (ածականի) և մակորոշչի (մակբայի) գործառույթյամբ։ Եթե լայնացնենք հարցական և պատասխանական բառերի շրջանակը, ապա, բացի դիմավոր բայից, նախադասության մնացած անդամները կարող են արտահայտվել հարցուպատասխանական բառերով։ Երկրորդաբար դիմավոր բայի համար հարցական բառախմբի արժեք կունենա ի՞նչ անել–ը։

Այս բառերի առաջին խումբը կկազմեն հարցական դերանունները՝ ըստ եռակի գործառույթյան՝ գոյականական (անկախ), որոշչային-ածականական (կախյալ) և մակորոշչային-մակբայական (երկրորդական-կախյալ) գործառական կարգերով (խմբերով)՝ 1) ո՞վ, ի՞նչ, 2) ո՞ր, ինչպիսի՞, ֆանի՞ և այլն, 3) ինչպե՞ս, ինչֆա՞ն և այլն։ Բուն հարցականներին հաջորդող –պիսի,–պես,–ֆան և այլ բաղադրիչները ցույց կտան այն գոյաբանական կարգերը, որոնք պետք է պարունակվեն պատասխանների մեջ. որոշ դեպքերում գոյաբանական այդ կարգերն արտահայտվում են բուն հարցականների մեջ՝ առանց այդ բաղադրիչների (հմմտ. ֆանի՞)։ Քանի որ առաջին՝ գոյականական կարգը ոչ այլ ինչ է, եթե ոչ որոշչային-ածականական կարգի անկախ գործածությունը, ուստի և բավական է երկու խմբերի իմաստային-գոյաբանական կարգերի բացահայտումը։

Ըստ գոյաբանական հայեցակետի՝ կարելի է տարբերել հարցական դերանունների հետևյալ խմբերը (աղյուսակ 12)[13]։

Հարցական ո՞ր-ը կարող է գործածվել առանց տարբերակման ընդհանրապես առարկայի հատկանիշ նշելու համար։

Գործառական-պատասխանական բառերը երկու տիպի են՝ ըստ առարկաների տարբերակման բնույթի՝ 1) ցուցական, երբ տարբերակման հիմք է ընդունվում հաղորդակցման մեջ կատարած դերը (հաղորդող, հաղորդակից և ոչ-հաղորդող—ոչ-հաղորդակից)՝ այս—այդ—այն, սա—դա—նա և այլն, և 2) անվանական, երբ տարբերակման հիմք են ընդունվում առարկաների իսկ հատկությունները (նե-

13 «Դերանուն» բառը այսպիսի լայն ըմբռնման դեպքում չի արտացոլում ճիշտ պատկերը («դեր-անուն» բառը գործածվում է նաև մակրայական դերանունների համար)։

Դերանվանական կարգեր		Գոյականական կարգեր	
		Առարկայական հատկանիշ	Վիճակային (բայական) հատկանիշ
Ոչ ակտիվ	1. Ներգործական	ի՞նչ կապիր (ինչի՞ց)	ի՛նչ կապիրով
	2. Կրավորական	ի՞նչ կախում	ի՛նչ կախումով (ինչու՞ ինչի՞ համար և այլն)
Ակտիվ	3. Ներգործական	ի՞նչ ձև (ինչպիսի՞)	ի՛նչ ձևով (ինչպե՞ս)
	4. Կրավորական	ի՞նչ ուղղություն	ի՛նչ ուղղությամբ
Ոչ ակտիվ	5. Ներգործական	ի՞նչ քանակի (ինչքա՞ն, քանի՞)	1. ի՛նչ քանակով (ինչքա՞ն, որքա՞ն) 2. (քանի՞ անգամ)
	6. Կրավորական	ի՞նչ կարգի (ո՞րեորդ)	1. (ի՛նչ կարգով) 2. ո՞ր անգամ
Ակտիվ	7. Ներգործական	ի՞նչ չափի	1. ի՛նչ չափով 2. ինչքա՞ն ժամանակ
	8. Կրավորական (դերբ)	ի՞նչ տեղի (ի՞նչ դիրքի, որտեղի՞, ո՞ր դիրքի)	1. ի՛նչ տեղ (որտե՞ղ) 2. ի՛նչ ժամանակ (ո՞ր ժամանակ, ե՞րբ)

բառայալ նաև նրանց պայմանական անվանումները՝ հատուկ անուն-ները)։ Բուն գործառական-պատասխանական են առաջինները։

Ոչ հարցապատասխանական («պատմողական») նախադասու-թյունների մեջ գործառական հարցապատասխանական բառերը մասնակցում են հարաբերական գործառութեամբ՝ որպես հարաբե-րական բառեր՝ հարաբերիչներ և հարաբերյալներ, ընդ որում հայե-րենում հարցական բառերը առանց հարցի դառնում են հարաբերիչ-ներ, ցուցականները՝ հարաբերյալներ. այս դեպքում նրանք առար-կաներին հարաբերում են ոչ թե անմիջաբար, այլ հարակից բառե-րի միջոցով։ Սա ցույց է տալիս, որ լեզվի հաղորդակցման գործա-ռությունը առաջնային է արտահայտման և դատողության նկատ-մամբ, այսինքն՝ հաղորդակցումն է, որ հիմք է տալիս մտածողու-թյան համար։

5. ՎԵՐԱԲԵՐՈՂԱԿԱՆ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՌԱԽՄԲԵՐ

Ի տարբերություն եղանականիշ բառերի նախորդ երեք խմբ-բերի, որոնք զուրկ են բառակազմական-ձևաբանական որոշակի հատկանիշներից և բնորոշվում են միայն առոգանական տարբերու-թյուններով, վերաբերողական բառերի նշանակալից մասը բնորոշ-վում է բառակազմական-ձևաբանական որոշակի առանձնահատ-կություններով։ Ընդհանուր առմամբ կարելի է տարբերել վերաբե-րողական բառերի կառուցվածքային հետևյալ հիմնական տիպերը.

1) Մակբայաձև վերաբերողական բառեր՝ ձևավորված մակ-բայական –(ա)բար, –(ա)պես, –որեն ածանցներով՝ անհրաժեշտա-բար, անպայմանորեն, բարեբախտաբար, բնականաբար, դժբախ-տաբար, հասկանալիորեն, հավանաբար և այլն։ Սա հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք, որ վերաբերողական բառերը լրաց-նում են ամբողջ նախադասության և, հետևաբար, առաջին հերթին նրա միջուկը հանդիսացող դիմավոր բայը (resp. ստորոգյալը)։ Բուն մակբայներից վերաբերողական բառերը տարբերվում են ոչ միայն իմաստով, այլև կազապարային տեղով ու բաշխմամբ. ա) նրանք սովորաբար նախորդում են ողջ նախադասությանը, մինչդեռ նույն մասնիկներն ունեցող բուն մակբայները նախորդում են ան-միջապես ստորոգյալին. համմտ. «Դժբախտաբար, մենք չկարողա-ցանք ժամանակին ներկայանալ» և «Մենք բարեկամաբար սեղմե-ցինք նրա ձեռքը» (բայց ոչ՝ «Բարեկամաբար մենք սեղմեցինք նրա ձեռքը»). բ) ի տարբերություն բուն մակբայների՝ նրանք կարող են

նախադասությունից անջատվել դադարով, հանդես գալ միջանկյալ բառերի ձևով և նույնիսկ որպես այդպիսին ընկնել նախադասության մեջ՝ «Մենք, դժբախտաբար, չկարողացանք ժամանակին ներկայանալ» կամ «Մենք չկարողացանք, դժբախտաբար, ժամանակին ներկայանալ»։

2) Անդեմ նախադասությունների արժեք ունեցող միադեմ ձևեր, որոնք nr *կամ* թե *շաղկապներով ուղեկցվելու դեպքում ձևականորեն հանդես են գալիս որպես գլխավոր նախադասություններ, առանց դրանց՝ որպես միջանկյալ նախադասություններ. ա) –լի է* (nr) *տիպի՝* հասկանալի է (nr), հաճելի է (nr), ցանկալի է (nr) *և այլն. բ) երկրորդ դեմքի հարցական, հրամայական կամ սահմանական-ընդհանրացնող բայաձևեր՝* կճավատա՞ս (nr), ներեցեք (nr), չմոռանես (թե) *և այլն. գ) հոգնակի երրորդ դեմքի ընդհանրացնող բայաձևեր՝* ասում են (nr, թե). *դ) կրավորական եզակի երրորդ դեմքի բայաձևեր՝* նշվում է (nr), ասվում է (nr) *և այլն. ե) քարացած որևէ դեմքով հանդես եկող բայաձևեր՝* կարծեմ, կարծես, ասես (թե) *և այլն. զ) ստորոգական այլ միադեմ ձևեր՝* նիշտ է, հայտնի է (nr), մեկ է, միևնույնն է *և այլն։*

3) Որ, թե *շաղկապներով ուղեկցվող ածականներ և մակբայներ՝* նիշտ nr, նշմարիտ nr, դժվար թե, հազիվ թե *և այլն։*

4) Գիտակցվող կամ չգիտակցվող գործիական, հազվադեպ նաև բացառական հոլովով դրված ձևեր, հատկապես բայանուններ՝ արդարև, իրոք (nr), ցավոք:

5) Ամբողջական բառակապակցություններ և բառախմբեր՝ այսպես ասած, նիշտն ասած, ինչ էլ լինի, ըստ երևույթին, ո՞վ իմանա, ցավոք սրտի *և այլն. երբեմն այս բառակապակցություններն ու բառախմբերը, գալով, հնից, դարձել են հարադրական և կցական բարդություններ՝* այսուհանդերձ, այնուամենայնիվ, բայց և այնպես, ինչևիցե, վերջիվերջո *և այլն։*

6) Ան– *ածանցով եղանակային իմաստ ունեցող բայանուններից կազմված բառեր՝* անտարակույս, անկասկած *և այլն։*

7) Եղանակային իմաստ ունեցող՝ քաղաքավարական բառեր՝ ներողություն, շնորհակալություն *և այլն։*

8) Վերջապես, վերոհիշյալ հատկանիշներից զուրկ սակավաթիվ այլ բառեր՝ նախ (առաջին, նախ և առաջ, երկրորդ, երրորդ *և այլն՝ խոսքի հատվածները թվարկելու համար),* արդ *և այլն։ Սրանց մեջ պետք է դրվեն* ահա՛, ահավասի՛կ *ցուցական-առկայացական բառերը։*

Եղանակային-վերաբերողական բառերի ու բառախմբերի թվարկումից, ինչպես դժվար չէ նկատել, դուրս մնացին մի շարք բառեր, որոնք հայ լեզվաբանները սովորաբար դնում են եղանակավորող բառերի շարքը[14]։ Այս կապակցությամբ հարկ ենք համարում դարձյալ նշել, որ ըստ բառերի կազապարային, բաշխական, գործառական և, սրանց հետ կապված, իմաստային արժեքի մենք առանձնացնում ենք բառերի երկու կարգ ևս. սրանք, ի տարբերություն բուն եղանականիշ բառերի, որոնք լրացնում են նախադասության կազապարը և փաստորեն հանդես գալիս որպես ոչ ինքնուրույն նախադասություններ, լրացնում են նախադասության և բառակապակցության առանձին անդամները՝ առանձին բառերը և բառաձևերը։ Այդ բառերը կկոչենք բառ-մասնիկներ և կբաժանենք երկու խմբի՝ մենագործառական և տարագործառական.

1) Մենագործառական բառ-մասնիկները, ինչպես նշվել է, կատարում են ճիշտ այն գործառույթները, ինչ համադրական բառաձևերի մասնիկները, հանդես գալով որպես վերլուծական ձևերի կազմիչներ. սրանք բնականաբար քննվում են վերլուծական ձևերի կազմում և բառակապակցությունների մեջ. այդպիսիք են՝ ա) գոյականն անվան կազմում մի (անորոշ հոդ), բ) ածականի կազմում՝ ավելի, գ) բայի կազմում՝ մի՛, թող՛, պիտի, մի, հապա, երանի բառերը և այլն։ Ավելի լայն մեկնաբանության դեպքում բառ-մասնիկներ պետք է համարվեն նաև անորոշ դերբայի հետ գործածվող այն դիմավոր ու անդեմ բայաձևերը, որոնք արտահայտում են եղանակային, կերպային և այլ իմաստներ՝ ուզում եմ (գնալ), հարկավոր է (գնալ), սկսեց (fայլել), դադարեց [fայլել(ուց)], շարունակում է (գնալ), և այլն։

2) Տարագործառական բառ-մասնիկները, ինչպես նշվել է հիմնականում եղանակային արժեք ունեն և կարող են ուղեկցել բառակապակցությունների և նախադասությունների բոլոր անդամներին՝ անկախ խոսքի մասային պատկանելությունից, այսինքն՝ կարող են դրվել և՛ գոյականների, և՛ ածականների, և՛ մակբայների, և՛ բայերի վրա՝ սաստկական կամ սահմանափակական իմաստով՝ անգամ, իսկ, հենց, մանավանդ, նամանավանդ, մինչև անգամ, մինչև իսկ,

---

14 Համմ. Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերություններ ժամանակակից հայերենում*, Երևան, 1965, էջ 498—534. *В. Г. Авакян*, Модальные слова современного армянского языка, автореферат канд. дисс., Ереван, 1972.

նույնիսկ և գեթ, գոնե (գոնյա), թեկուզ, լոկ, միայն, միմիայն. *համմտ.* միայն Դրիգորը, միայն կարմիր մատիտը, միայն արագ գնալու դեպքում, միայն ֆայլում է:

Վերաբերողական բառերն ու բառախմբերը, ինչպես տեսանք, զգալի թիվ են կազմում, և նրանց բաշխման լիակատար քննությունը խիստ ծավալուն կլիներ: Այդ պատճառով էլ կկատարենք որոշ նախնական ընտրություն՝ ընդգրկելով հիմնական խմբերի ըստ հնարավորին կարևոր տիպերը և բացառելով համանիշները:

Ձախակողմյան բաշխման քննությունը ցույց տվեց հետևյալը.

1) Ըստ բերված տվյալների վերաբերողական բառերի հետ ամենից առաջ զուգակցվում են զգացական բնույթի ձայնարկություններ՝ ցավի և ուրախության, զոհունակության և դժգոհության. սակայն մենք ձայնարկությունների բաշխման աղյուսակում որպես օրինակներ վերցրինք վերաբերողական բառերից ամենախտաբար և դժբախտաբար բառերը. դժվար չէ համոզվել, որ այլ բառեր ընտրելու դեպքում զուգորդման մեջ կընդգրկվեն նաև «իմացական» բնույթի (զարմանք, համոզմունք և այլն արտահայտող) ձայնարկությունները. ավելի սակավ կզուգորդվեն կոչական բնույթի ձայնարկությունները՝ դե՛(հ), էհե՛յ: Սա նշանակում է, որ վերաբերողական բառերն ու բառախմբերը առաջին հերթին զգացական և իմացական բնույթի են: Կարելի է ասել, որ այստեղ ընդգրկվում են ձայնարկությունների արտահայտած հիմնական իմաստները, բայց ոչ անմիջական ընկալմամբ, այլ վերլուծությամբ և որոշակի վերաբերմունքով:

2) Կոչականների հետ վերաբերողական բառերը զուգորդվում են առանց տեմպանափակման. նշանակում է՝ հաղորդողը, ակտիվորեն արտահայտելով իր վերաբերմունքը, միշտ նկատի ունի ընկալողների (ի տարբերություն ձայնարկությունների որոշ՝ զգացական — ոչ կոչական տիպերի):

3) Վերաբերողական բառերի հետ զուգորդվում են հաստատական և ժխտական բառերը և չեն զուգորդվում հարցական ու երկբայական բառերն ու բառախմբերը. վերջիններս ինքնին վերաբերողական արժեք ունեն և կարող են զուգորդվել բուն հաստատական ժխտական բառերի հետ որպես վերաբերողական բառեր (ո՛չ մի՞թե ես..., Այո՛, թերևս...՝ Այո՛, կարծեմ... և այլն): Ընդհանուր առմամբ, բացի այո՛ և ո՛չ բառերից մնացած հարցապատասխանական բառերը նաև վերաբերողական արժեք ունեն:

Վերաբերողական բառերի աջակողմյան բաշխման մասին զեղափար է տալիս 13-րդ աղյուսակը (էջ 383).

Վերաբերողական բառեր և բառախմբեր	Նրանց դուզորդելիությունը եղանակային բայձևերի հետ						
	Հաստատա-ժխտական	Բուն եղանակային-վերաբերողական					
	Հաստատական (գնաց, գնա՛, կգնա, գնա՛ր)	Ժխտական (չգնաց, չգնա, չի գնա, մի՛ գնա)	Սահմանական (գնաց, չգնաց)	(գնացել է, չի գնացել)	Ըղձական (գնա՛ր, չգնա՛ր)	Ենթադրական (կգնա, չի գնա)	Հրամայական (գնա՛, մի՛ գնա)
1. թարեւախառաբար	+	+	+	+	—	—(+)	—
բնականաբար	+	+	+	+	—	—(+)	+
հասկանալիորեն	+	+	+	+	—	—(+)	+
հավանաբար	+	+	—	+	+	+	—
հարկադրաբար	+	+	+	+	—	+	—
2. զարմանալի է (որ)	+	+	+	+	—(+)	—	—
կասկածելի է (որ)	+	+	—	+	+	—	—
հաճելի է (որ)	+	+	+	+	+	—	—
հասկանալի է (որ)	+	+	+	+	—	—	—
ցանկալի է (որ)	+	+	—	—	+	—	—
կհավատա՞ս (որ)	+	+	+	+	—(+)	—(+)	—
Ներեցեք (որ)	+	+	+	+	—	—	—
չկարծես/ք (թե)	+	+	+	+	—	—(+)	—
ասում են (որ, թե)	+	+	—	+	—	—(+)	—
նշվում է (որ)	+	+	—	+	—	—(+)	—
ճիշտ է (որ)	+	+	+	+	—	—(+)	—
հայտնի է (որ)	+	+	+	+	—	—(+)	—
3. ժամ թե	+	+	—	—	+	—	—
հագիվ թե	+	+	—	—	+	—	—
ճիշտ որ	+	+	+	+	—	—(+)	—
4. իբրեւ (որ)	+	+	+	+	—	—(+)	—
ցավոք	+	+	+	+	—	—(+)	—
5. ըստ երեւույթին	+	+	—	+	+	+	—
ցավոք սրտի	+	+	+	+	—	—(+)	—
այնուամենայնիվ	+	+	+	+	—	+	+
6. անտարակույս	+	+	+	+	—	—	+
7. Ներողություն	+	+	+	+	—	—	+
8. Նախ	+	+	+	+	+	+	+
ահա	+	—	+	—	—	—	+

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1) Վերաբերողական բառերն ու բառախմբերը հիմնականում անտարբեր են հաստատա-ժխտական կարգի նկատմամբ, այսինքն՝ կարող են գործածվել ինչպես հաստատական, այնպես էլ ժխտական ձևերի հետ։ Միակ բացառությունը կազմում է ահա անմիջականացնող-ցուցական բառը, որ ժխտական ձևերի հետ սովորաբար չի գործածվում. այն ցույց է տալիս անմիջապես՝ աչքերի առջև

գնավող առարկա կամ կատարվող գործողություն՝ Ահա Հակոբը, Ահա գնում է և այլն։

2) Սահմանական եղանակի ականատեսական ձևերի հետ (գնաց և այլն) *սովորաբար չեն գործածվում վերաբերողական այն բառերը, որոնք արտահայտում են խոսողի՝ ա) ուրիշի վրա հենվելը, համոզվածությունը կամ անհամոզվածությունը (կասկածը), հաղորդվող գործողության ականատես չլինելը՝* հավանաբար, կասկածելի է (nr), ասում են (nr, թե), նշվում է (nr), դժվար թե, հազիվ թե, ըստ երևույթին, անտարակույս. *բ) ցանկությունը, որ հաղորդումն իրականացվի՝* ցանկալի է (nr)։ *Ոչ-ականատեսական ձևերի հետ* (գնացել է և այլն) *սովորաբար չեն գործածվում՝ ա) ցանկական* [ցանկալի է (nr)], *բ) ենթադրական* (դժվար թե, հազիվ թե) *և գ) անմիջական-ցուցական* (ահա) *բառերը։ Սրանցից վերջինը թեև ցույց է տալիս անմիջական գործողություն, բայց գնաց տիպի ձևերի հետ զուգորդվում է՝ ցույց տալով գործողության սկիզբը կամ ավարտը, որ կատարվում է աչքերի առաջն՝* ահա գնաց. ահա եկավ *(ընթացքը առանց ավարտի նշման, արտահայտվում է ներկայով՝* ահա գնում է, ահա գալիս է)։

3) Ըղձական եղանակի հետ զուգորդվում են կասկած, ցանկություն, հավանականություն (ենթադրություն) արտահայտող հավանաբար, կասկածելի է (nr), դժար թե, հազիվ թե, ըստ երևույթին *բառերն ու բառախմբերը.* զարմանալի է (nr), կհավատաս (nr) *բառերն ու բառախմբերը գործածվում են ըղձականի հետ* nr-*ի՝ «եթե» իմաստով առնվելու դեպքում, ընդ որում* nr-*ը կարող է փոխարինվել* եթե-*ով։ Երբեմն զուգորդումը լինում է այն պատճառով, որ ըղձականն օգտագործվում է ենթադրականի արժեքով։*

4) Ենթադրականի հետ զուգորդվում են՝ ա) ըղձականի հետ զուգորդվող այն բառերը, որոնց դեպքում խոսողն ավելի մեծ համոզմունք է արտահայտում՝ հավանաբար, ըստ երևույթին. *բ) ըղձականի հետ չզուգորդվող՝* անհրաժեշտություն, համոզմունք *արտահայտող* հարկադրաբար, անտարակույս *բառերը. գ) սովորաբար սահմանականի հետ զուգորդվող մի շարք բառեր, որոնց հետ ենթադրականը գործածվում է սահմանականի արժեքով* (կգնա ≈ գնալու է)՝ բարեբախտաբար, բնականաբար, չկարծես թե, ճիշտ nr և այլն։

5) Հրամայականի հետ վերաբերողական բառերն ու բառախմբերը քիչ են զուգորդվում. դրանք հատատատակամության արտահայտող և քաղաքավարական տիպի բառերն են՝ բնականաբար,

ճասկաճալիորեն, իրոք (nr), այնուամենայնիվ, անտարակույս, ներողություն:

6) Կարգ և թվարկում (խոսքի հաջորդական մասեր) ցույց տվող նախ, երկրորդ, երրորդ և այլն բառերը գործածվում են եղանակային բոլոր ձևերի հետ՝ առանց սահմանափակման: Սա նշանակում է, որ այդ բառերն ավելի շատ շաղկապական արժեքի են և պետք է հանել բուն եղանականիշ-վերաբերողական բառերի թվից:

Վերաբերողական բառերի բաշխական քննությունը բացահայտեց մի շարք իմաստներ, որոնք մասամբ հայտնի էին բայեղանակների և եղանականիշ մյուս բառերի ու բառախմբերի (հատկապես ձայնարկությունների և հարցուպատասխանական բառերի) քննությունից, մասամբ դրսևորվում են հենց միայն վերաբերողական բառերի մեջ: Այս իմաստներից առաջին հերթին պետք է նշել ցուցա-անմիջականությունը, որ դրսևորվում է ահա, ահավասիկ բառերի միջոցով և բառիս բուն առումով վերաբերողական իմաստ չէ: Մյուս կարգի իմաստներից նշելի են ցանկությունն ու հարկադրանքը, ենթադրականությունն ու հավաստիությունը, հավանականությունն ու անհրաժեշտությունը, երկբայությունն ու համոզմունքը և այլն: Կարելի է ասել, որ եթե ձայնարկությունների մեջ իշխող է զգացմունքը որպես կրում (կիրք), ապա այս դեպքում գերակշռում է խոսողի իմացական ակտիվությունը և խոսքի տարբեր հանգամանքների մատնանշումը, իրականության և իմացության համեմատությունը:

Ձայնարկությունների քննության հետ կապված մենք նշեցինք տասնվեց հիմնական իմաստ, որոնք ոչ-անմիջական դրսևորմամբ հանդես են գալիս նաև վերաբերողական բառերի մեջ: Սրանք մեծ մասամբ արտահայտվում են համապատասխան բայերի և բայահիմքերի միջոցով, հատկապես –լի է (nr) տիպի ձևերով. խիստ տիպական է, որ –լի է տիպի ձևերը գերազանցապես զգացական բայերից կազմված ձևեր են և շնորհիվ արտահայտողի սպասիվության հանդես են գալիս անդեմ արժեքով. այլ կարգի բայերից այդպիսի ձևեր չեն կազմվում:

1) Խրախուսանք (հավանություն)՝ գովելի է (nr), ընդունելի է (nr), խրախուսելի է (nr), fաջալերելի է (nr), բարեբախտաբար, շնորհակալություն, իրոք (nr), ճիշտ է (nr).

2) Հանդիմանություն՝ կշտամբելի է (nr), հանդիմանելի է (nr), նախատելի է (nr), պարսավելի է (nr).

3) Պարծանք (դրական)՝ հպարտանալի է (nr), պարծենալի է (nr).

4) Արհամարհանք (անտեսում)՝ արհամարհելի է (nr), ծիծաղելի է (nr), այնուամենայնիվ.

5) Զարմանք՝ անակնկալելի է (nr), անապատելի է (nr), ապշելի է (nr), զարմանալի է (nr).

6) Զղջում՝ ափսոս է (nr), ափսոսալի է (nr), զղջալի է (nr), ներեցեք (nr), ներողություն (nr), դժբախտաբար, ցավոք, ցավոք սրտի.

7) Հաճույք (ուրախություն)՝ ախորժելի է (nr), զվարճալի է (nr), հաճելի է (nr), ուրախ(ան)ալի է (nr).

8) Տհաճություն (վիշտ)՝ գարշելի է (nr), հաճելի չէ (nr), ձանձրալի է (nr), տաղտկալի է (nr), տհաճ է (nr), ցավալի է (nr).

9) Լսելու կոչ՝ անսալի է (nr), ճնշազանգելի է (nr), ուսանելի է (nr).

10) Զգուշացում՝ զգուշ(ան)ալի է (nr), խուսափելի է (nr).

11) Հորդոր՝ հանձնարարելի է (nr.).

12) Սպառնալիք՝ անհանդուրժելի է (nr). դատապարտելի է (nr), հանձնարարելի չէ (nr) (անհանձնարարելի է).

13) Երանում (ցանկալիություն)՝ մաղթելի է (nr), տեղչալի է (nr), ցանկալի է (nr), փափագելի է (nr).

14) Վախ՝ երկյուղալի է (nr), զարհուրելի է (nr), սարսափելի է (nr), սոսկալի է (nr).

15) Կարեկցանք (խղճահարություն)՝ խղճալի է (nr), ողբալի է (nr), ցավալի է (nr).

16) Անտարբերություն՝ մեկ է, միևնույնն է:

Հարցուպատասխանական բառերի իմաստների հետ կապված են իմացության տարբեր աստիճաններ արտահայտող բառերի իմաստները՝ կասկած, համոզմունք և այլն:

Ինչպես հոգեկան գործունեության այլ բնագավառների դեպքում, այստեղ ևս հանդես են գալիս՝ ա) իրական գործողության հակազդում (ռեակցիա) լինելու թե ենթադրական բնույթ ունենալու, բ) դրական (համապատասխան) թե բացասական (անհամապատասխան) լինելու հատկանիշները, որոնք մենք հիմք ընդունեցինք ձայնարկությունների և զգացական բնույթի՝ վերաբերողական բառերը խմբավորելու ժամանակ:

Այստեղ մտցնենք երրորդ հատկանիշը՝ իրականի իմացական միջնորդվածություն, և սրա տակ հասկանանք իրական կամ ենթադրական գործողության՝ անմիջաբար թե կողմնակի ճանապարհով

ընկալվելը, իրականության, թե իրականության վերաբերյալ իմացության (տեղեկությունների) գնահատումը (աղյուսակ 14).

Աղյուսակ 14

Հատկանիշներ	Կարգեր							
	Համապատասխանություն գոյին	Անհամապատասխանություն (երկբայություն)	Անհրաժեշտություն (ճշմարիտ կամ կեղծ)	Պատահականություն գոյի	Հնարավորություն	Ինքնաբավություն գոյի	Ներգործություն գոյի	Անկախություն գոյի
Իրական հիմք (իրականացածի կամ իրականացող հակադրում լինելը)	+	+	+	+	−	−	−	−
Իրականի իմացական միջնորդվածություն	+	+	−	−	+	+	−	−
Իրական գնահատում	+	−	+	−	+	−	+	−

Վերաբերողական բառերը ըստ այս խմբերի կդասավորվեն հետևյալ կերպ[15].

1) Համաստիություն՝ հավասարի է, հավասարալի է, ճիշտ է (nr), իրոք (nr), իսկապես nr.

2) Անհամաստիություն (երկբայություն, կասկած)՝ կասկածելի է (nr), հազիվ թե, դժվար թե և այլն.

3) Անհրաժեշտություն (հարկադրանք)՝ բնականաբար, անպայմանորեն, անհրաժեշտաբար և այլն.

4) Պայմանականություն՝ պայմանով nr, nrոշ առումով, nrոշ պայմաններում և այլն.

5) Համոզմունք՝ անպայման, ինչ էլ nr լինի, ամեն գնով, անառարակույս, անկասկած և այլն.

6) Ենթադրություն՝ թերևս, մի գուցե, ենթադրաբար և այլն.

7) Հնարավորություն՝ կարող է, թերևս, կարող է պատահել nr և այլն.

8) Անհնարինություն՝ անհնար է (nr), չի կարող պատահել nr և այլն:

15 Բնականաբար, միջնորդված և ոչ միջնորդված երևույթները կարող են գնահատվել միատեսակ բառով:

III. ԵՆԹԱԿԱ

1. ԵՆԹԱԿԱՅԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ենթական նախադասության, որպես հաղորդման ակտի, կենտրոնն է։ Թվարկել ու բնութագրել նախադասության բոլոր մնացած անդամները, որոնց մեջ անմիջաբար կամ ստորոգյալի միջոցով լրացվում է ենթակայի այս կամ այն կողմը, նշանակում է բացահայտել ենթակայի տրված բովանդակությունը։ Քանի որ ենթական ոչ այլ ինչ է, եթե ոչ իրական առարկայի կամ առարկայացված հասկացության դրսևորվում, և քանի որ յուրաքանչյուր իրական առարկա կամ առարկայացված հասկացություն լեզվի մեջ հանդես է գալիս իր անվանմամբ,—իսկ անվանման հիմքում ընկած է առարկայի որևէ հատկանիշ,—ուստի նախադասության մնացած անդամներից յուրաքանչյուրը կարող է հիմք դառնալ ենթակայի այս կամ այն կողմի հատկանշման և, հետևաբար, անվանման համար։ Անվանումն, այսպիսով, կարելի է դիտել որպես յուրատեսակ փոխակերպում, որի ժամանակ նախադասության մյուս անդամները, որոնք բացահայտում են ենթակայի հետ կապված որևէ հատկանիշ, փոխակերպվում են ենթակայի։ Նախադասության մնացած բոլոր անդամների՝ ենթակայի փոխակերպվելու բոլոր հնարավոր դեպքերի թվարկումը անվանման բոլոր հնարավոր ուղիների թվարկումն է։

Եթե ենթական նախադասության կենտրոնն է, ապա ինչպե՞ս պետք է բացատրել, այսպես կոչված, անենթակա և զեղչված ենթակայով նախադասությունների գոյությունը։ Այս նպատակով հարկավոր է տարբերել ենթակայի երեք կարգի ըմբռնում՝ իրական ենթակա, հոգեբանական-տրամաբանական ենթակա և լեզվա-քերականական ենթակա։

1) Յուրաքանչյուր նախադասություն ունի որևէ իրական հիմք՝ որևէ իրական գործողություն կամ իրական առարկայի որևէ իրական հատկություն՝ լինի այն մշտական թե առարկայի կողմից ժամանակավորապես ձեռք բերված։ Այս իրական պլանով առաջին դեպքում մենք կունենանք ներգործող (ակտիվ կողմ), ներգործվող (պասիվ կողմ), գործողություն և սրանց հետ կապված բազմաթիվ այլ առարկաներ ու հանգամանքներ։ Կոչենք սրանք իրական ենթակա (ներգործող), իրական օբյեկտ (ներգործվող), իրական գործողություն և այլն։ Երկրորդ դեպքում կունենանք որևէ իրական

առարկա, որ ունի կամ ձեռք է բերել (բերում) որևէ իրական հատկություն: Կոչենք սրանք իրական առարկա, առարկայի իրական հատկություն, առարկայի հատկության իրական փոփոխություն և այլն:

2) Յուրաքանչյուր նախադասության հիմքում ընկած է հոգեբանական կամ տրամաբանական որևէ ակտ՝ զգացական, կամային, իմացական բնույթի: Զգացական և կամային ակտերի դեպքում հոգեբանական պրոցեսն անմիջական բնույթի է, այսինքն՝ անմիջական շփում (կոնտակտ) կա իրականի և հոգեկանի միջև. երկու դեպքում էլ մի եզրն իրական է, մյուսը հոգեկան, այն տարբերությամբ, որ առաջին դեպքում ակտիվ կողմը (իրական ենթական, ներգործողը) գտնվում է ընկալողից և արտահայտվողից դուրս, երկրորդ դեպքում ակտիվ կողմը ինքը արտահայտվողն է: Իմացական ակտը, ի տարբերություն զգացական և կամային ակտերի, երկբնույթ է. այն կարող է լինել անմիջական փորձի արդյունք (արտահայտվողն ինքն է, զգայողը՝ ականատեսը) կամ միջնորդված (ուրիշի հաղորդմամբ): Հասկանալի է, որ իմացական ակտի դեպքում հոգեբանական-տրամաբանական ենթական կարող է չհամընկնել իրական ենթակայի հետ. ըստ այն բանի, թե ի՛նչն է արտահայտվողի ուշադրության կենտրոնում կամ ի՛նչ չափով է նա տեղյակ իրական փաստին, որպես հոգեբանական-տրամաբանական ենթակա կարող է հանդես գալ կամ իրական ենթական, կամ իրական գործողության որևէ կողմը: Եթե արտահայտվողի ուշադրության կենտրոնում ներգործվողն է, մենք գործ ունենք այսպես կոչված կրավորական կառուցվածքի հետ. եթե ուշադրության կենտրոնում ինքը գործողությունն է, գործողության հետ կապված որևէ այլ առարկա կամ հանգամանք, ապա հանդես է գալիս հոգեբանական-տրամաբանական որևէ այլ փոխակերպում («Հակոբն սպանեց Գրիգորին նրա բնակարանում» → «Գրիգորի բնակարանում տեղի ունեցավ նրա սպանությունը Հակոբի ձեռքով» կամ «Հակոբի կողմից Գրիգորի սպանվելու տեղը Գրիգորի բնակարանն էր» և այլն):

3) Յուրաքանչյուր նախադասության հիմքում ընկած է լեզվա-քերականական որոշակի կաղապար, որի մասերն են ենթական, ստորոգող բառը (հանգույցը), ստորոգելին, ուղիղ խնդիրը և այլն: Սակայն այդ կաղապարի օղակները արտահայտվողը լրացնում է ըստ հաղորդման կարիքների, այսինքն՝ հնարավոր է ոչ միայն իրական և հոգեբանական-տրամաբանական ենթակաների, այլև հոգեբանական-տրամաբանական և լեզվա-քերականական ենթա-

կանների չհամընկում։ Այս դեպքում հարկավոր է նկատի առնել հետևյալ հանգամանքները. ա) որոշ առարկաներ ու հանգամանքներ որպես ինքնին հասկանալի (հատկապես անմիջաբար տրված կամ նախորդ հաղորդումից հայտնի) կամ ոչ կարևոր կարող են զանց առնվել, այսինքն՝ նախադասության կազապարի որոշ օղակներ բաց կթողնվեն. բ) արտահայտվողը կարող է որոշ բաներ հաղորդելու համար կարևոր չհամարել կամ դիտումնավոր կերպով զանց առնել դրանք ու փոխել. այս դեպքում ևս լեզվա-քերականական կազապարի որոշ օղակներ բաց կմնան կամ տեղաշարժ կկատարեն. գ) արտահայտվողը կարող է լեզվա-քերականական կազապարը թողնել իմացական կազապարին համապատասխան, բայց զանազան միջոցներով հաղորդակցի ուշադրությունը հրավիրել կազապարի այս կամ այն օղակի վրա. այդպիսի լեզվական միջոցներից են շեշտը (տրամաբանական շեշտը՝ «Հակոբը Գրիգորին ապանել է տա՛նը»), շարադասության փոփոխությունը, այդ թվում (հայերենում)՝ հանգույցի (ստորոգող բառի) տեղաշարժը ընդգծվող բառի մոտ («Հակոբը Գրիգորին տա՛նն է ապանել»), հատուկ ընդգծող բառի գործածությունը («Հակոբը Գրիգորին հենց տանն է ապանել»), ընդգծվող բառի վերածումը որոշվող բառի (որոշյալի), որ լրացվում է մնացած մասով, ինչպես որոշիչ երկրորդական նախադասությամբ («Հակոբը Գրիգորին տանն է, որ ապանել է», «Այնտեղ Սև ջրի եզերքին էր, որ ապրում էր Հասոն»—ՎՓ). դ) վերջապես, նախադասության իմացական և լեզվա-քերականական կազապարների սահմանները կարող են չհամընկնել. իմացական կազապարի երկու կամ ավելի անդամներ կարող են արտահայտվել մեկ բառով (համմտ. գնացի, որտեղ ենթական, ստորոգելին և հանգույցը արտահայտված են մեկ բառով)։

Վերևում ասվածներից պարզ է դառնում անենթակա և զեղչված ենթակայով նախադասությունների բնույթը։ Եթե իրական ենթական անմիջաբար տրված է, հաղորդակցի համար ինքնին հասկանալի, տվյալ իրադրությամբ որոշելի, ոչ կարևոր, ընդհանրացական բնույթի (բոլորին հատուկ), այն լեզվականորեն սովորաբար չի արտահայտվում. այսպիսի նախադասությունները հայտնի են որպես անենթակա նախադասություններ։ Եթե ենթական արդեն հայտնի է հաղորդման նախորդ ընթացքից (կոնտեքստից) և հնարավորությամբ կարող է վերականգնվել, նախադասությունը կոչվում է զեղչված ենթակայով նախադասություն։ Նշենք, որ զեղչման կարող

են ենթարկել նախադասության և ուրիշ անդամներ, հատկապես ստորոգելին և հանգույցը։

Ենթական կարող է լինել ձևական և ոչ ձևական։ Ձևական է կոչվում այն ենթական, որ արդեն արտահայտված է դիմավոր բայաձևի մեջ՝ (ես) **գնացի**, (դու) **գնացիր**, (մենք) **գնացինք**, (դուք) **գնացիք**։ *Նա* **գնաց** *և նրանք* **գնացին** *նախադասություններում* **ևա-**ն *և* **նրանք-**ը *ձևական կլինեն, եթե իրական ենթակաները իրադրությունից ու կոնտեքստից հայտնի են կամ խոսողի կողմից անմիջապես ցույց են տրվում։ Ոչ-ձևական կլինեն առաջին և երկրորդ դեմքի ցուցա-դերանվանական այն ենթակաները, որ դրվում են ընդգծման նպատակով (Ե՛ս* **գնացի** *և այլն), երրորդ դեմքի ցուցա-դերանվանական ենթականերն ընդհանրապես (բացի* **ևա-ի** *և* **նրանք-ի** *համար մատնանշված դեպքերից), այլև ոչ ցուցական-դերանվանական բառերը* (**Գրիգորը գնաց, Իմ ընկերները գնացին** *և այլն)։*

Ինչպես նշել ենք ստորոգման և հարցուպատասխանական բառերի քննության ժամանակ, ենթական կարող է արտահայտվել իրադրական բնույթի բառերով՝ հարցական, ցուցական, որոշյալ, անորոշ և ժխտական դերանուններով։ Սակայն այս նույն իմաստները կարող են արտահայտվել նաև բուն բայական դիմավոր ձևերի միջոցով՝ դեմքերի տարբեր (վերևում բերված իմաստների) մեկնաբանությամբ։ Հարցական և ցուցական դերանունների դեպքում մենք գործ ունենք իրադրացման հետ, որ կարող է լինել անմիջական կամ ոչ-անմիջական (կոնտեքստի նախորդ կամ հաջորդ բառերի մատնանշմամբ)։ Բուն դերանունները անմիջական իրադրության հետ են կապված և ցույց են տալիս անմիջական առարկաներ. եթե նրանք առարկաները ցույց են տալիս ոչ անմիջապես, այլ ուրիշ բառերի միջնորդությամբ, կոնտեքստում իմաստավորվում են այլ բառերի օգնությամբ, ապա ստանում են հարաբերական արժեք, հանդես գալիս որպես հարաբերիչ և հարաբերյալ։ Որոշյալ և անորոշ դերանուններով արտահայտված ենթականների իմաստները կարող են արտահայտվել նաև բայական դիմավոր ձևերի միջոցով, որոնք այս դեպքում ձեռք են բերում անդեմ ձևերի արժեք և համարվում անորոշ ու ընդհանրական բնույթի աննենթակա նախադասություններ։

***Այսպիսով,** ըստ ենթակայի արտահայտության մենք կունենանք երկու հիմնական դեպք՝ 1) ենթակայի՝ բառային արտահայտություն չունեցող նախադասություններ և 2) ենթակայի՝ բառային արտահայտություն ունեցող (ենթակայական բառով կամ բառա-*

խմբով արտահայտված) նախադասություններ։ Առաջինները կոչենք բայաձևային (բայադիմային), երկրորդները՝ բառային ենթակայով նախադասություններ։

Բայաձևային ենթակայով նախադասությունները կարող են լինել՝ ա) որոշյալ-դիմավոր, բ) անորոշ-դիմավոր, գ) ընդհանրական-դիմավոր և դ) անդեմ։ Որոշյալ-դիմավոր են կոչվում այն նախադասությունները, որոնց դեպքում բայադիմային ձևերն ինքնին բավական են իրական և իմացական ենթակաների բնույթը բացահայտելու. այդպիսիք են առաջին և երկրորդ դեմքերի բայաձևերով, այլև անմիջական օբյեկտ ունեցող՝ երրորդ դեմքի բայաձևերով արտահայտված նախադասությունները։ Որոշյալ-դիմավոր նախադասությունները հակադրվում են մնացած երեք տիպերին, որոնք ավանդաբար միավորվում են «աննենթակա» անվան տակ։ Այս երեք տիպի նախադասությունների դեպքում բայի դեմքի ձևը դադրում է իր բուն գործառույթը կատարելուց՝ արտահայտելով՝ ա) անորոշ թողնված իրական ենթակա («Նրա մասին ամեն ինչ ասում են»), բ) կամ ընդհանրացված (բոլոր անձերին վերագրելի՝ դրանք ընդգրկող) ենթակա («Ինչ որ ցանես, այն էլ կհնձես», «Երիտասարդ ժամանակ շատ երկար չեն մտածում»), գ) կամ առանց բառային միջնորդության տրված վիճակը որպես իրական ենթակա, որի ընկալումը կամ գնահատումը ցույց է տրվում ստորոգյալի միջոցով («Լուսանում է», «Ցուրտ է», «Պատերազմ է», «Ձորս կողմը լռություն է»)։

Բառային ենթակայով նախադասությունների ենթակաները կարող են լինել՝ ա) ձևական, բ) դիմաշեշտային, գ) դիմատարբերական (դիմալրացական) և դ) հարաբերական։ Ձևական է կոչվում այն ենթական, որ, ինչպես տեսանք, ոչինչ չի ավելացնում բայադեմքի արտահայտածի վրա («Ես գնացի տուն» = «Գնացի տուն»)։ Դիմաշեշտային է կոչվում այն ենթական, որի դեպքում բայադեմքի արտահայտածը դերանվան օգնությամբ շեշտվում է, ընդգծվում (նրա վրա է գրավվում հաղորդակցի ուշադրությունը) («Ե՛ս եմ գնում»)։ Դիմատարբերական (դիմալրացական) է կոչվում այն ենթական, որ բայադեմքի նշած առարկաները (լինեն դրանք իրական թե հասկացական) տարբերակում է ըստ անվանման հիմքում ընկած հատկանիշների. դիմատարբերական ենթակաները արտահայտվում են հարցական դերանուններով, գոյականներով, անուններով կամ գոյականացված բառերով («Գրիգորը գնաց տուն», «Կարմիրը արյան գույն է»)։ Հարաբերական է կոչ-

վում այն ենթական, որի բուն առարկայական արժեքը (իրական ենթական) պարզվում է միայն հարակից (նախորդող, երբեմն էլ հաջորդող) բառերով, բառակապակցություններով և նախադասություններով («Գրիգորը, որ բոլորիս հայտնի է իբրև բարի անձնավորություն, այս անգամ էլ ամեն ինչ արեց», «Միծաղում է նա, ով վերջում է ծիծաղում»)։ Հարաբերական ենթական երբեմն կարող է բառային արտահայտություն չառանալ, այսպիսի նախադասությունները կոչվում են զեղչված ենթակայով նախադասություններ («Գրիգորին ասացին, որ գնա. չգնաց»)։

Որոշ կարգի դերանուններ միայն հարաբերական արժեք ունեն՝ անդրադարձ (իրեն), փոխադարձ (միմյանց, իրար, մեկ մեկու) և հարաբերական [հարցականներն առանց հարցի և ցուցականները առանց իրականության մեջ անմիջաբար տրված օբյեկտի՝ բուռ հարաբերող գործառույթամբ. սրանցից հարաբերականների միայն որոշ տիպերն են (ով, ինչ, սա, դա, նա, այս, այդ, այն), որ կարող են ենթակայի պաշտոն կատարել]։

Նախադասության մեջ ենթակայի պաշտոն բնականաբար կատարում են առարկայանիշ բառերը (գոյականները) և բառակապակցությունները (գոյականական բառակապակցությունները)՝ լինեն դրանք իրադրական (դերանվանական), թե ոչ-իրադրական բնույթի (անվանական արժեքով)։ Որոշչային բառերը կարող են իբրև ենթակա հանդես գալ երկու դեպքում՝ ա) երբ գոյականը ենթադրվում է [«Սև մատիտը կորավ, կարմիրը (=կարմիր մատիտը)՝ ոչ»], բ) երբ որոշիչը, հատկապես ածականը, առնվում է որպես հատկության անուն [«Կարմիրը (=կարմրությունը, կարմիր գույնը) արյան գույն է»]։ Երկրորդ դեպքը կարելի է դիտել որպես առաջինի մի դրսևորումը, երբ որպես գոյական լրացյալ ենթադրվում է տվյալ հատկությունները խմբավորող որևէ վերացական գոյական անուն (գույն, ձև, ուղղություն, բաճակ և այլն)։ Մնացած բոլոր կարգի բառերը և բառախմբերը, այդև նախադասությունները ենթակայի և ընդհանրապես գոյականի գործառույթամբ կարող են հանդես գալ երկու դեպքում՝ ա) երբ նախապես ասվել են և տարբեր նկատառումներով կրկնվում են (հատկապես հաղորդակցի ասածները) («Մի կերպ կգնամ։—Մի կերպ–ը ավելորդ է»), բ) երբ գործածվում են անդրլեզվում (մետալեզվում), այսինքն՝ լեզվի վերաբերյալ (լեզվաբանական-քերականական) աշխատության լեզվում («Եվ–ը շաղկապ է», «Դեռ–ը մակբայ է», «Ես գնում եմ տուն»-ը նախադասություն է»)։

դող-դիմավոր, երբ ենթական թողնվում է անորոշ՝ հաղորդողին անհայտ լինելու, հաղորդողի՝ նրա հիշատակումը կարևոր չհամարելու պատճառով կամ հատուկ դիտավորությամբ (հաղորդողը թաքցնում է իրական գործողներին կամ հաղորդողներին), և բ) ընդհանրական-դիմավոր, որի դեպքում հաղորդումը վերագրվում է մարդկանց ընդհանրապես, ընդհանրացվում է իրականության որևէ կողմը՝ որպես խրատ, արգելք և այլն։ Համմտ. անորոշ-դիմավոր՝ Երեկ ինձ ասացին, որ Գրիգորը եկել է. Թույլ չեն տալիս ժամանակին գնամ առնակուռդ *և այլն, ընդհանրական-դիմավոր՝* Մեխի գլխին բռունցքով չեն խփում, ճառերը աշնանն են հաշվում *և այլն։*

3. Եզակի և հոգնակի երկրորդ դեմքով «անենթակա» նախադասությունները ունեն ընդհանրական-դիմավոր արժեք՝ Դու մի օր աշխերդ կփակես *(ԵՉ),* Երբ մտածում եմ, թե ինչքան դժվարություններ կան, բևեռային եմ լինում *և այլն։*

Ընդհանրացնելով «անենթակա» նախադասությունների վերաբերյալ վերևում նշածները՝ կարելի է ասել, որ դրանք հիմնականում երկու տիպի են՝ վիճակա-եղանակային և առարկայա-քանակական։ Վիճակա-եղանակային ենք կոչում այն «անենթակա» նախադասությունները, որոնց մեջ արձանագրվում կամ գնահատվում է որևէ անմիջական իրավիճակ կամ հոգեվիճակ որպես իրական ենթակա (Ցրտում է, Ցուրտ է, Լավ է, Հիանալի է, Հարկավոր է գնալ *և այլն)։ Առարկայա-քանակական ենք կոչում այն «անենթակա» նախադասությունները, որոնց մեջ ենթական կամ որևէ պատճառով (հաղորդողը չգիտի, կարևոր չի համարում կամ չի ուզում բացահայտել իրական ենթական) մնում է անորոշ, կամ ընդհանրացված է (նրա տակ կարելի է հասկանալ բոլոր անձերին)։ Վերջին դեպքում ենթական կարող է ձևականորեն արտահայտվել* մարդ *բառով և անորոշ ու որոշյալ դերանուններով՝* Ասում են (=ինչ որ մարդիկ ասում են), որ Գրիգոր եկել է. Մի ձեռով երկու ձմերուկ չեն բռնի (=Բոլոր մարդիկ էլ մի ձեռով երկու ձմերուկ չեն կարող բռնել). Մարդ ասում է՝ վեր կենա գնա *և այլն։*

3. ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես կարելի է եզրակացնել նախորդ տեղեկություններից, ենթակայի մեր ըմբռնումը չի համընկնում ենթակայի ավանդական ըմբռնման հետ։ Ավանդաբար ենթակա է համարվել միայն

մեկ բառ՝ լինի այն առանձնակի գործածված թե գոյականական բառակապակցության գլխավոր անդամ[17]։ Մեզ համար ենթակա է այդ գործառնությունն ունեցող յուրաքանչյուր միավոր՝ լինի այն բառ, բառակապակցություն թե ամբողջական նախադասություն։

Ենթակայի ընդհանուր քննության նվիրված հատվածում արդեն նշվել է, որ ենթական կարող է արտահայտվել առաջին հերթին առարկայանիշ (գոյականական) զանազան դերանուններով՝ անձնական (ես, դու, նա, մենք, դուք, նրանք, իմը, իրենք), ցուցական (սա, դա, նա, այլև, գոյականական գործածությամբ, այս, այդ, այն), հարցական-հարաբերական (ով, ինչ, ոմանք), որոշյալ-ընդհանրական (բոլոր, ամենը, ողջ, յուրաքանչյուր ոք, ամեն ոք ամեն ինչ), անորոշ (մեկը, ինչ որ մեկը, մի ոմանք, մի ուրիշը, այսինչը, այնինչը), ժխտական (ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ)։ Այս դերանունները կարող են հանդես գալ իրենց խնդիրներով (մեզնից յուրաքանչյուրը, ձեզնից ո՞վ, նրանցից մեկը, ընկերներից ոչ ոք) և ուժեղացնող բառերով (ես իմս, դու իմդ, նա իմը, մենք իմներս, դուք իմներդ, նրանք իմները)։

Ենթակայի գործառույթամբ հաճախակի են հանդես գալիս գոյականները և գոյականական բառակապակցությունները։ Հարցական դերանվամբ արտահայտված ենթակայի դեպքում (Ո՞վ է գալիս, Ի՞նչ կա) պատասխանը կարող է արտահայտվել ինչպես գոյականական դերանվամբ, այնպես էլ գոյական անվամբ և գոյականական բառակապակցությամբ (Գրիգորն է գալիս, Մեր սիրելի Գրիգորն է գալիս)։

Հայերենում որոշիչ բառերը, հատկապես ածականը կարող է գոյականաբար գործածվել և որպես ենթակա հանդես գալ միայն հոդով՝ անորոշ կամ որոշյալ. բացառությունները պատկանում են միայն դերանունների բնագավառին (ողջ, ոչ ոք, ոչինչ) և գալիս են գրաբարից։ Թվական որոշիչներից ձայնավորով վերջացող երկու-ն հոդից առաջ ստանում է ս (երկուսը). այդպես նաև ոմանք—ոմանք, մի ոմանք—մի ոմանք։

Մակբայների և մյուս բառերի ենթակայական (գոյականացված) գործածության մասին խոսվել է։

---

17 Այս հարցում ավանդական քերականությունը հետևողական չէ. ենթակա է համարվում նաև ենթակայի գործառույթ ունեցող երկրորդական նախադասությունը։

IV. ՍՏՈՐՈԳՅԱԼ

1. ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ստորոգյալի համար ամենաբնորոշ կարգը տիպարի կարգն է, որ, ինչպես արդեն նշվել է, ունի արտահայտության համադրական և ոչ համադրական միջոցներ: Համադրական արտահայտություն ունեցող տիպարային իմաստները մենք խմբավորեցինք ներակայության (անանցողականության, անօբյեկտայնության, վիճակայնության) ու փոխարկայնության հատկանիշներով և նշեցինք, որ չորս հնարավոր եզրերից (անանցողական-փոխարկային, անցողական-անփոխարկային և անանցողական-անփոխարկային) առկա է միայն երեքը. չկա անցողական-անփոխարկային եզրը: Սակայն իրականում, եթե նկատի ունենանք տիպարի արտահայտության ոչ միայն համադրական-մասնիկային, այլև ոչ համադրական և ոչ մասնիկային (վերլուծական, նկարագրական, տարահիմք-առնչեությով) միջոցները, ապա կարելի է ասել, որ տիպարային այդ չորս իմաստներն էլ արտահայտված են: Եթե մենք առանձնացնենք բայի բուն-հատկանշային մասերը, ապա տիպարի արտահայտիչներ կարելի է համարել եմ—դառնում եմ (լինում եմ), ունեմ—դարձնում եմ (անում եմ) բայաձևերի արտահայտած իմաստները: Այսպիսով մենք կունենանք ըստ հիշյալ հատկանիշների հետևյալ եզրերը (աղյուսակ 15).

Աղյուսակ 15

Հատկանիշներ	Տիպարային իմաստներ			
	Փոխարկային վիճակ (դառնում եմ, լինում եմ)	Ոչ-փոխարկային վիճակ (եմ)	Փոխարկային անցողականություն (դարձնում եմ, անում եմ)	Ոչ-փոխարկային անցողականություն (ունեմ)
Ներակայություն	+	+	—	—
Փոխարկայնություն	+	—	+	—

Այս նույնը կարելի է արտահայտել 16-րդ համադրական աղյուսակով (էջ 399):

Տիպարային այս իմաստները, ինչպես նշվել է, կարող են ար-

Ներկայություն	Փոխարկայնություն	
	Փոխարկայնություն	Անփոխարկայնություն
Ներկայություն	դառնում եմ (լինում եմ)	եմ
Աններկայություն (անցողականություն)	դարձնում եմ (անում եմ)	ունեմ

տահայտվել համադրական և ոչ-համադրական ձևերի միջոցով, ընդ որում հայերենում կան ոչ-համադրական արտահայտության տարբեր աստիճաններ՝ շնորհիվ վերլուծական հատուկ բայաձևերի առկայության: Այս ձևերի փոխհարաբերության մասին գաղափար է տալիս 17-րդ աղյուսակը (էջ 400):

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1. Ոչ-փոխարկական (կայուն) վիճակը (եմ–ի իմաստը)՝ ա) վերլուծական արտահայտության առաջին և երկրորդ աստիճանների տարբերություն չունի և բ) համադրական-մասնիկավոր ձևով չի արտահայտվում: Ինչ վերաբերում է անվանական գոյականով արտահայտված «քաղաք» ձևին, որ դրված է փակագծերի մեջ, ապա այն արտահայտության վերլուծական ձև ունի. այստեղ որպես տվյալ իմաստի արտահայտիչներ են հանդես գալիս վերջավորվող հնչերանգը և դադարը: Հնչերանգը և դադարը մնացած իմաստների արտահայտության համար բավարար չեն, ուստի վերլուծականության այս տիպի արտահայտությունը հատուկ է միայն ոչ-փոխարկային վիճակի իմաստին:

2. Հիմնականում որոշչային գործածություն ունեցող բառերը՝ ածականներն ու թվականները փոխարկային իմաստների (դառնում եմ և դարձնում եմ) դեպքում կարող են ունենալ աղյուսակում ընդգրկված վերլուծական-բառային և համադրական-մասնիկավոր արտահայտության բոլոր հնարավոր ձևերը:

3. Որոշչային գործածություն ունեցող բառերը՝ ածականներն ու թվականները, անցողական-ոչ-փոխարկային իմաստի (ունեմ) դեպքում հանդես չեն գալիս. նրանք ունեմ–ի հետ գործածվում են միայն գոյականական (համմտ. 2. ա. հաղաք) ձևով (մեծություն): Ավելի սովորական է գոյա-կամային բնույթի (ցանկություն—ցանկանալ, սեր—սիրել, հիացմունք—հիանալ և այլն) բառերի գործա-

Տիպարային իմաստներ	Արտահայտության ձևեր		
	Ոչ համադրական (վերլուծական ասպիճան)		Համադրական-մանրիկավոր
	I աստիճան	II աստիճան	
Եմ	1. ա. Մեծ է բ. Երկուս է 2. ա. Քաղաք է բ. Սա է	(1. Մեծ է) (բ. Երկուս է) (2 ա. Քաղաք է) (բ. Սա է)	1. — — 2. — (Քաղաք) —
Դառնում եմ	1. ա. Մեծ է դառնում բ. Երկուս է դառնում 2. Քաղաք է դառնում բ. Դառնում է սա	1. ա. Մեծանում է 2. ա. — բ. —	1. ա. Մեծացավ բ. Երկու(ս)ացավ 2. ա. — բ. —
Ունեմ	1. Ճանկուքիյուն ունի 2. ա. Քաղաք ունի բ. Սա ունի	1. Ճանկանում է 2. ա. — բ. —	1. Ճանկացավ 2. ա. — բ. —
Դարձնում եմ	1. ա. Մեծ է դարձնում բ. Երկու(ս) է դարձնում 2 ա. Քաղաք է դարձնում բ. դարձնում է սա	1. Մեծացնում է բ. Երկու(ս)ացնում է 2. ա. — բ. —	1. ա. Մեծացրեց բ. Երկու(ս)ացրեց 2. ա. — բ. —

ծությունը՝ աղյուսակում բերված ցանկություն ունի—ցանկանում է—ցանկացավ ձևերի օրինակով։

4. Գոյականական (անկախ բառի) գործառույթամբ հանդես եկող գոյական անուններն ու դերանունները փոխարկային (դառնում եմ, դարձնում եմ) և անցողական-ոչ-փոխարկային (ունեմ) իմաստների դեպքում չեն ունենում երկրորդ աստիճանի վերլուծական-բառային և համապատասխան համադրական-մանրիկավոր ձևեր։

Տիպարային չորս կարգի իմաստների փոխհարաբերությունը կարելի է պարզել՝ հիմք ընդունելով գոյաբանական առարկայի

(իրական մարմին) և վիճակի (առարկայի իրական վիճակի) հասկացություններ։ Այս դեպքում տիպարային տարբերություններ հանդես կգան որպես այս երկու եզրերի քանակական տարբերության հետ կապված՝ հարաբերության տիպերի փոփոխություն։ Եթե գոյաբանական առարկան նշանակենք C-ով (Corpus «մարմին»), վիճակը՝ S-ով (Status «վիճակ»), ապա եմ-ը (R_1) կարտահայտի մեկ առարկայական եզրի (հարաբերվողի) մեկ վիճակ՝ CR_1S (Գրիգորը մարդ է, Գրիգորը մեծ է և այլն), դառնում եմ-ը (R_2)՝ մեկ առարկայական եզրի երկու վիճակ՝ $CR_2S_1S_2$, գ) ունեմ-ը (R_3)՝ երկու առարկայական եզրերի մեկ ընդհանուր վիճակ՝ $C_1C_2R_3S$ և դ) դարձնում եմ-ը (R_4)՝ երկու առարկայական եզրերի երկու վիճակ՝ $C_1C_2R_4S_1S_2$։ Այս բոլորի փոխհարաբերությունը կարելի է արտահայտել $(C_2)C_1R_n\ S_1(S_2)$ կամ, եզրերի լրացուցիչ հարաբերությունների տարբերակման դեպքում, $(C_1R_1)C_1RS_1(R_1S_2)$ ընդհանուր բանաձևով, եթե եզրերի թիվը դարձնենք կայուն (պահպանենք բոլոր չորս եզրերը բոլոր տիպարային իմաստների դեպքում), ապա հարկ կլինի տարբերակել հարաբերիչները. հնարավոր է R-ի երկու դրսևորում՝ → և =։ Այս դեպքում, տիպարային չորս իմաստները կարտահայտվեն հետևյալ ձևով՝

1. Եմ	$(C_2 = C_1)\ R_1\ (S_1 = S_2)$
2. Դառնում եմ	$(C_2 = C_1)\ R_2\ (S_1 \rightarrow S_2)$
3. Ունեմ	$(C_2 \rightarrow C_1)\ R_3\ (S_1 = S_2)$
4. Դարձնում եմ	$(C_2 \rightarrow C_1)\ R_4\ (S_1 \rightarrow S_2)$

Դառնում եմ և դարձնում եմ բայաձևերի կապը հայերենում ակընհայտ է ստուգաբանորեն, եմ-ը և ունեմ-ը հայերենում ստուգաբանորեն կապված չեն. ռուսերենում, ընդհակառակն, բացահայտ է иметь («ունենալ») և иметься («լինել») բայերի ստուգաբանական կապը, իսկ стать («դառնալ») և сделать («դարձնել, անել») բայերն ստուգաբանորեն չեն կապված։

Նշենք, որ այս բայերի միջև իմաստային փոխակերպումը որոշ դեպքերում կատարվում է բառակազմական փոփոխությամբ (դառնում եմ—դարձնում եմ), ուրիշ դեպքերում՝ բառային փոխարկոմով (եմ—ունեմ)։ Պատճառական բայաձևերը հնարավորություն են տալիս ավելացնելու առարկայական և վիճակային եզրերի թիվը, բայց հայերենում ոչ ավելի, քան երեքականից (այս հաշվարկման մեջ բացառվում են անուղղակի եզրերը՝ անուղղակի խնդիրները)։

լինել և ունենալ, դառնալ և դարձնել բայերի փոխհարաբերության մասին ասվածը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպե՞ս են որոշ անցողական բայեր (ունենալ և դարձնել բայերին մոտ իմաստներով) կրավորական ձևով (վիճակ արտահայտելիս) դառնում հանգույցներին համարժեք «վերացական» բայեր՝ իմաստային որոշ նրբերանգով կամ հավելյալ որոշ իմաստով՝ ընդունվել, ճամարվել, կարծվել և այլն. հաճախակի են մանավանդ որպես, ինչպես, իբրև կապերով կրավորակերպ դարձվածքները:

լինել և ունենալ բայերի իմաստային կապը հնարավոր է դարձնում, հատկանիշի գոյականացմամբ, եմ-ով նախադասությունը փոխել ունեմ-ով նախադասության՝ Հակորը fաջ է — Հակորն fաջություն ունի:

Քերականության մեջ ստորոգյալի անվան տակ հասկացվում է երկու բան՝ ա) ստորոգվող (ենթակային վերագրվող) հատկանիշը կամ, ավելի ճիշտ, ենթակայի վիճակը արտահայտող մասը և բ) այդ վիճակի կայունությունը կամ փոփոխականությունն արտահայտող մասը:

Ընդունված է այն ստորոգյալները, որոնց դեպքում եմ և դառնում եմ տիպարային իմաստներն արտահայտված են վերլուծականության առաջին աստիճանով (մարդ է, մարդ է դառնում), կոչել բաղադրյալ. քանի որ այս դեպքում ենթակայի վիճակն արտահայտող կամ, ինչպես սովորաբար նշվում է, հատկանիշ ցույց տվող մասը հիմնականում անվանական արտահայտություն ունի (ածական կամ գոյական անուն, բացառված չէ նաև դերանվանական արտահայտությունը), բաղադրյալ ստորոգյալ ունեցող նախադասություններն կոչվում են անվանական: Բաղադրյալ ստորոգյալի վիճակացույց կամ հատկանշացույց մասը կոչվում է ստորոգելի, մյուս մասը՝ հանգույց: Եմ և դառնում եմ բայերը, որոնք հանդես են գալիս որպես հանգույց (ենթական և ստորոգելին միացնող, երկրորդն առաջինին վերագրող), կոչվում են վերացական բայեր: Ինչպես ստորև կտեսնենք երկրորդաբար իրենց լրացուցիչ իմաստները կարող են կորցնել և իբրև հանգույց հանդես գալ նաև ոչ բուն վերացական բայերը:

Մնացած բոլոր ստորոգյալները, որոնք արտահայտված են ոչ վերացական բայերով, կոչվում են պարզ, իսկ նրանցով արտահայտված նախադասությունները՝ բայական: Պարզ ստորոգյալները, ինչպես կարելի է հեշտությամբ համոզվել վերևում բերված աղյուսակից, համարժեք չեն. բայական մեկ արժեք ունեցող

են համարվում՝ ա) մի դեպքում մեծանում է, մեծացավ, ցանկանում է, ցանկացավ, մեծացնում է, մեծացրեց տիպի ձևերը, որոնք փաստորեն համարժեք են մեծ է դառնում, մեծ դարձավ, ցանկություն ունի, ցանկացավ, մեծ է դարձնում, մեծ դարձրեց ձևերին՝ այն տարբերությամբ, որ առաջին տիպի ձևերում «դառնալ» «ունենալ», «դարձնել» տիպարային իմաստներն արտահայտված են համադրական-մասնիկավոր, երկրորդ դեպքում՝ վերլուծական-բառային ձևերով, բ) մյուս դեպքում՝ ունի, դարձնում է, դարձրեց ձևերը՝ առանց անվանական ցանկություն, մեծ մասերի (թեև մեծ դարձրեց կապակցության դեպքում մեծ-ի ստորոգյալին պատկանելու հարցը կարող է վիճելի համարվել, բայց ուսուցիչ դարձրեց կապակցության դեպքում ուսուցիչ բառի՝ ստորոգյալին չպատկանելը կասկած չի հարուցում)։ Իրականում բուն բաղադրյալ պետք է համարվեր ստորոգյալի դրսևորման միայն այն դեպքը, երբ հանգույցն արտահայտված է եմ-ով, բայց հետագա քննության մեջ կպահենք ընդունված կարգը, մանավանդ որ դառնում եմ բայի դեպքում՝ ա) փոխվում է վիճակային եղրերի, բայց ոչ առարկայական եղրերի քանակը և բ) առարկայի վիճակի փոփոխության միայն մեկ եղրն է նշվում (փոփոխության արդյունքը)՝ $C(S_2) \rightarrow S^1$ ձևով՝ Հակոբը (ոչ մեծից) դառնում է մեծ: Այսպիսով, իմացաբանական առումով անվանական նախադասությունները դենոտատային մեկ եղր ունեցողներն են, ընդ որում այդ առարկայական դենոտատին կարող է հատկացվել մեկ (եմ-ի դեպքում) կամ երկու (դառնում եմ-ի դեպքում) վիճակ։ Բայական նախադասությունների դեպքում մենք գործ ունենք երկու կամ երեք (հազվադեպ ավելի) դենոտատային եղր ունեցող միավորների հետ, ընդ որում դրանց կարող է հատկացվել մեկ (ունեմ-ի դեպքում), երկու (գործողություն ցույց տվող բայերի դեպքում) կամ երեք (պատճառական որոշ բայերի դեպքում) վիճակ։

Ստորոգյալի քննության հետ կապված հարկավոր է մատնանշել նրա դրսևորման երկու կարևոր դեպք ևս. ա) ինչպես նշվել է, կան դեպքեր, երբ անվանական ստորոգյալի ավարտային հնչերանգը և դադարը բացի եղանակային արժեքից ստանում են նաև հանգուցային արժեք. այսպիսի նախադասությունները կոչվում են միակազմ անվանական նախադասություններ. բ) կան դեպքեր, երբ կերպա-եղանակային իմաստներն արտահայտվում են դիմավոր բայաձևերի միջոցով, իսկ բուն հատկանշա-ստորոգելիական իմաստն արտահայտվում է անորոշ դերբայի միջոցով՝ սկսում

է fայլել, ուզում է գնալ և այլն. այս տիպի կապակցություններն ընկալվում են որպես մեկ միասնական ստորոգյալ և կոչվում են բարդ ստորոգյալ:

Ինչպես հայտնի է բայի ձևաբանական կառուցվածքի քննությունից, նրա դիմավոր ձևերի մեջ արտահայտվում են քերականական այնպիսի կարգեր, որոնք բուն բայական չեն, այլ հատուկ են գոյական անվանը և դերանվանը՝ դեմք, թիվ, դաս: Եթե նկատի ունենանք, որ դասը բայի կազմում դեմքի կարգի յուրատեսակ մասնակի դրսևորումն է, ապա կարելի է ասել, որ ենթակայի գործառություն ունեցող հիմնական բառատիպերի՝ գոյական անունների և դերանունների հետ դիմավոր բայ նունի հիմնականում երկու ընդհանուր քերականական կարգ՝ դեմք և թիվ: Քանի որ, ինչպես նշվել է ստորոգման և հատկապես բայատեռի քննության կապակցությամբ, նախադասության կենտրոնը ենթական է, և ստորոգյալը կոչված է բացահայտելու նրա այս կամ այն վիճակը, ուստի վերջինս, ըստ նախադասության կառուցման սուբյեկտիվ կողմի, որոշ կախման մեջ է ենթակայից. այս կախումը հանգեցնում է նրան, որ ենթակայի թվի և դեմքի դրսևորումներին համապատասխան ձևավորվում են բայ-ստորոգյալի կամ ստորոգյալի բայական մասի թիվը և դեմքը: Ենթակայի և ստորոգյալի ընդհանուր քերականական կարգերի՝ թվի ու դեմքի դրսևորումների (եզրերի) համապատասխանությունը կոչվում է համաձայնություն:

Վերևում ասածների հիման վրա կարելի է սահմանել ստորոգյալի տեսակների և նրա ձևավորման հարցերի քննության հետևյալ կարգը՝ ա) միակազմ անվանական նախադասություններ, բ) բաղադրյալ ստորոգյալ, գ) բարդ ստորոգյալ և դ) ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը: Պարզ բայական ստորոգյալը քննվել է խոնարհման կապակցությամբ, և նրա մասին խոսելը կլիներ ավելորդ:

2. ՄԻԱԿԱԶՄ ԱՆՀԱՆԳՈՒՅՑ-ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միակազմ անվանական նախադասություն ասելով պետք է հասկանալ այն գոյականներն ու գոյականական բառակապակցությունները, որոնք հանդես են գալիս առանց հանգույցի, բայց ունեն ստորոգում՝ արտահայտված համապատասխան ավարտական հնչերանգով և դադարով: Այս նախադասության մի տեսակն է համարվում նաև կոչականը, սակայն այն չունի բուն անվանական նախա-

դասությունների ինքնուրույնությունը և փաստորեն հանդես է գալիս որևէ նախադասության հաղորդակցային իրադրության կողմերից մեկը բացահայտողի, այդ նախադասությունը լրացնողի դերում: Միակազմ նախադասությունները յուրատեսակ ստորոգելիներ են՝ հանգույցի ոչ-բառային արտահայտությամբ. ենթական այս դեպքում կամ անմիջաբար տրված է իրականության մեջ որպես իրական ենթակա, կամ բացահայտ է ըստ կոնտեքստի՝ կից նախադասություններից:

Ըստ արտահայտության պլանի միակազմ անվանական նախադասությունները, ինչպես նշվել է, բնութագրվում են՝ ա) որոշակի դադարով, որ գրության մեջ արտահայտվում է վերջակետով, ընդ որում նախադասությունը, ըստ հուզական արժեքի, կարող է կրկնվել երկու կամ ավելի անգամ (սովորաբար երեքից ոչ ավելի). բ) ավարտական հնչերանգով, որ կարող է լինել իջնող («Ահա քաղաքը:», «Ամառ կեսօր:»—ԱՎ), կամ բարձրացող-բացականչական («Լռութի՜ւն, լռութի՜ւն, լռութի՜ւն անսահման»—ՎՏ, «Ցամա՜ք:»): Այս նախադասությունների գոյականները կարող են հանդես գալ որոշիչ հոդով («Ահա քաղաքը», «Երևա՜նը») կամ առանց հոդի («Ամառ կեսօր»—ԱՎ, «Երևան, Աստաֆյան փողոց»—ԵՉ). կոչականները, որոնք, ինչպես հայտնի է, միշտ անհոդ են և միշտ շեշտված, կարող են հատկացվել միայն երկրորդ տիպին:

Միակազմ անվանական նախադասությունները կարելի է դասակարգել երկու տարբերակիչ հատկանիշով՝ բացականչականություն—ոչ-բացականչականություն և որոշյալություն—անորոշություն, որոնք կբացահայտեն հետևյալ չորս տիպերը (աղյուսակ 18).

Աղյուսակ 18

Հատկանիշներ	Միակազմ անվանական նախադասությունների տիպեր			
	Իմացական-բացական-չական	Հուզական-բացական-չական	Ցուցական-որոշական	Գոյանիշ-անվանողական
Բացականչականություն	+	+	—	—
Որոշյալություն	+	—	+	—

Ընդհանրապես միակազմ անվանական նախադասությունների հիմքում ընկած է առարկայի և նրա անվանման հարաբերությունը. առարկան հանդես է գալիս որպես անմիջականորեն տրված իրա-

կան ենթակա, անվանումը՝ որպես ստորոգելի. շնորհիվ հարաբերության անմիջականության ստորոգումը բառա-մասնիկային հատուկ արտահայտություն չի ստանում։ Այս ընդհանուր հարաբերությունը, ինչպես տեսնում ենք աղյուսակից, ստանում է ճանաչողական և զգացական տարբեր դրսևորումներ. 1) իմացական-բացականչական նախադասությունները («Երևա՜նը», «Հակո՜բը» և այլն) արտահայտում են իմացական գոհունակություն, զարմանք և այլն՝ իմացական ակտի հուզական-զգացական դրսևորում. այլ կերպ ասած՝ առարկայի ճանաչումը հանդես է գալիս որպես անվանում՝ համապատասխան հուզական երանգավորմամբ. 2) հուզական-բացականչական նախադասությունները («Քաղա՜ք», «Հրդե՜հ», «Դա՜վ» և այլն) արտահայտում են անմիջաբար տրված առարկայի և երևույթի հուզական ընկալում և արտահայտում. ի տարբերություն նախորդի՝ այստեղ առաջին պլանում է ոչ թե իմացական-ճանաչողական, այլ հուզա-զգացական կողմը. 3) ցուցական-որոշական նախադասությունները («Ահա՛ քաղաքը», «Իմ ընկերը» և այլն) արտահայտում են ցուցադրում, մատնացույց են անում որևէ առարկա կամ երևույթ. 4) գոյանիշ-անվանողական նախադասությունները («Քաղաք», «Երևան։ Աստաֆյան փողոց», «Ամառ։ Կեսօր», «Նամուս», «Պատվի համար», «Ոսկի աքաղաղ» և այլն) արտահայտում են անմիջաբար տրված առարկա, հանդես են գալիս որպես այդ առարկայի անվանում. այստեղ են մտնում զանազան վերնագրերը, ցուցանակները, պիտակները և այլն։

Հակառակ ընդունված կարծիքի՝ մենք միակազմ անվանական նախադասությունների մի տեսակն ենք համարում անորոշ դերբայի հիմքի վրա հանդես եկող՝ անորոշական նախադասությունները, որոնք, ինչպես նշվել է, արդյունք են կրկնակի փոխակերպման. տեղի է ունենում նախ դիմավոր բայի փոխակերպում գոյականի (իր լրացումներով հանդերձ), ապա վերջինիս փոխակերպում ստորոգական միավորի՝ ստորոգման արտահայտման՝ միակազմ անվանական նախադասություններին հատուկ եղանակով (հնչերանգով և դադարով)։ Սրանք կարող են ինքնին արտահայտել եղանակային այն բոլոր իմաստները, որ հանդես են գալիս անորոշի և միադեմ եղանակային ձևերի զուգորդմամբ՝ «Ջոխել» (=«Ջի կարելի ծխել»), «Դուրս գրել» (=«Հարկավոր է դուրս գրել») և այլն։ Այս կարգի նախադասությունները բնականաբար կարող են ունենալ եղանակավորության առոգանական տարբեր արտահայտություններ, որոնք փոխարինում են եղանականիշ բառերին և տվյալ

նախադասություններին հաղորդում եղանակային տարբեր իմաստներ. դրանք լինում են՝ 1) շեշտված-հրամայական՝ «Լռե՛լ», 2) բացականչական-ցանկական՝ «Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, ամենին մոռանալ»—ՎՏ), 3) հարցական-տարակուսական («Լինե՞լ, թե՞ չլինել»—ՎՇ, «Գնա՞լ») և 4) պատմողական-պատահականական («Ի՞նչ է մնում մեզ: Քարոզել տնտեսական խնդիրը, քարոզել մարդը»—ՄՆ): Այս տեսակները ոռոգանության տարբեր տիպերի իմաստային դրսևորումներն են և ոչ թե անորոշ դերբայների ներքին իմաստային հատկությունները: Քանի որ անորոշ դերբայներ կարող են կազմվել գրեթե բոլոր բայերից (բացի եմ–ից և միակատար կերպի մի քանի այլ բայերից), և քանի որ բայերն արտահայտում են նախադասության մեջ հանդես եկող բոլոր հարաբերությունները, ուստի և անորոշ-դերբայական միակազմ նախադասությունների իմաստային դրսևորումները կարող են բազմազան լինել. նրանք ունեն և՛ բուն անվանական նախադասությունների, և՛ անեղթակա (միադեմ) նախադասությունների եղանակային տարբեր տիպերը: Առանց հատուկ առոգանության և առոգանական հատուկ նշանների անորոշական նախադասություններն արտահայտում են հատկապես հնարավորություն և անհրաժեշտություն:

3. ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անվանական նախադասությունը առարկայական (գոյաբանական) առումով յուրատեսակ նույնաբանություն է, **որտեղ հավասարության** մեջ է դրվում առարկան ինքն իր հետ: Նախադասությունն այս դեպքում ոչ թե որևէ եղելության (լինի այն իրականացած, իրականացող թե իրականանալի, հավաստի, ենթադրական թե ցանկալի) արտահայտություն է, այլ մտավոր, սուբյեկտիվ-իմացական ակտի դրսևորում: Այստեղ մենք գործ ունենք ոչ թե երկախոսության, այլ մենախոսության հետ, որի դեպքում մտածողը իր ունեցած մտապատկերների և հասկացությունների բազայի վրա փորձում է որևէ բան ինքն իր համար պարզել: Անվանական նախադասության մեջ առկա է առարկայի (կամ առարկաների որոշ՝ ավելի կամ պակաս ընդհանուր խմբի) վիճակի (լինի այն կայուն թե փոխվող) արձանագրում՝ ըստ այդ վիճակը բնորոշող որևէ հատկանիշի: Ըստ այսմ անվանական նախադասության մեջ բայական մասը հանդես է գալիս որպես երկու եզրի՝ ենթակայի և ստորոգելիի

հարաբերության դրսևորում, ընդ որում առարկայական-գոյաբանական առումով այդ եզրերը նույնն են (A=A), սուբյեկտիվ-իմացաբանական առումով՝ տարբեր. այս դեպքում ուշադրության կենտրոնում առարկան է իր որևէ կողմով (հատկանիշով) կամ հարաբերությամբ, և նախադասությունը ծառայում է ուշադրության կենտրոնում եղած այդ կողմի կամ հարաբերության ընդգծմանը: Անվանական նախադասության մեջ առկա է հարաբերության երկու կարգի արտահայտություն՝ եմ և դառնում եմ բայական ձևերով, որոնք կոչվում են հանգույց:

Եմ-ը արտահայտում է հավասարության հարաբերություն A(nm)=Am[+(n—1)m] բանաձևով, որտեղ A-ն առարկան է, m-ը՝ առարկայի հատկանիշը, n-ը՝ այդ հատկանիշների քանակի նշանակումը. բանաձևը ցույց է տալիս, որ անվանական նախադասության մեջ ենթակայի ունեցած հատկանիշների տվյալ քանակից առանձնացվում է մեկը և ընդգծվում՝ Գրիգորը մարդ է, ուսուցիչ է և այլն. հաճախ հավասարության մեջ են դրվում միևնույն առարկայի տարբեր նշանակումները՝ «Այդ ծաղրածուն ես եմ» (այսինքն՝ այն ծաղրածուն, որի մասին խոսվել է, հենց տվյալ նախադասությունն արտասանողն է): Այն դեպքում, երբ ստորոգելին արտահայտված է ածական որոշչով («Այս տերևը դեղին է»), պետք է հասկանալ ենթակայի նշանակած առարկան տվյալ հատկանիշով («Այս տերևը դեղին տերև է»):

Դառնում եմ հանգույցն արտահայտում է միևնույն առարկայի՝ վիճակի փոփոխություն՝ նոր հատկանիշի ձեռքբերում A(nm) → A(nm)+m բանաձևով. «Գրիգորը դառնում է ուսուցիչ» նախադասության մեջ ցույց է տրվում, որ Գրիգորը ձեռք է բերում մի նոր հատկանիշ, կրում է վիճակի փոփոխություն: Այն դեպքերում, երբ ստորոգելին արտահայտված է որակական ածականի արժեքով (փոխաբերաբար) գործածված գոյականով, «դառնում է+ածական» կապակցությունը կարող է արտահայտվել բայականորեն՝ «Երեխան մեծ է դառնում»=«Երեխան մեծանում է», «Մարմնի անդամները փայտ դարձան» (իմա՛ «փայտի նման անզգայացան»)=«Մարմնի անդամները փայտացան»:

Երկկազմ անվանական նախադասությունը հայերենում ունի «ենթակա+ստորոգելի+հանգույց»՝ A_1+A_2+a կաղապարային բանաձևը, որտեղ A_1-ը ենթական է, A_2-ը՝ ստորոգելին, a-ն՝ հանգույցը՝ Հակոբը ուսանող է, Հակոբը ուսանող դարձավ: Ավելորդ չէ նշել, որ եմ-ը ցույց է տալիս կայուն, բուն սկզբի և ավարտի չբնութա-

գլխող, տվյալ պահին հանդես եկող հատկանիշ, ուստի գործածվում է միայն ներկայի և անցյալի անկատարի ձևերով՝ Հակոբը ուսանող է, Հակոբը ուսանող էր. մինչդեռ դառնալ-ը կարող է հանդես գալ և՛ անկատար, և՛ կատարյալ կերպերին հատուկ ձևերով՝ դառնում է, դառնում էր, այլև դարձավ, կդառնա, որովհետև հատկանիշի ձեռքբերումը (վիճակի փոփոխությունը) կարող է բնութագրվել ըստ ավարտականության: Այս բոլոր ասվածները հաշվի են առնում, թե ինչո՞ւ եմ-ին կատարյալ կերպաձևերում փոխարինող բայաձևերը (եղա, կլինեմ) ստանում են նաև դառնալ բայի ձևերի արժեք՝ «ես ուսանող կլինեմ»=«ես ուսանող կդառնամ» «ես ուշակորույս եղա»=«ես ուշակորույս դարձա»:

Եմ և դառնում եմ բայերը հանգույցի դերում կարող են փոխարինվել զանազան այլ կարգի բայերով՝ իմաստային զանազան երանգներով և հավելյալ իմաստներով կամ օտարաբանությամբ: Եմ բայի փոխարեն ռուսական ազդեցությամբ, հատկապես պաշտոնական փաստաթղթերում, հրապարակախոսության և գիտական գրականության մեջ գործածվում են հանդիսանալ, ներկայացնել, իրենից ներկայացնել, ներկայանալ, հանդես գալ որպես բայերն ու բայական դարձվածքները՝ «Զարենցը մեր օրերի մեծ բանաստեղծն է» =«Զարենցը հանդիսանում է մեր օրերի մեծ բանաստեղծը» =«Զարենցը հանդես է գալիս որպես մեր օրերի մեծ բանաստեղծը» և այլն:

Դառնալ բայի փոխարեն դարձվածաբար և ժողովրդա-խոսակցական ոճով կարող են գործածվել ընկնել, կտրել, կանգնել բայերը՝ դաշաղ ընկնել, far կտրել, պաշտպան կանգնել և այլն: Դառնալ բայի ժխտական ձևը, որ ցույց է տալիս, թե փոփոխությունը տեղի չի ունեցել, համարժեք է մնալ բային. վերջինս, այսպիսով, փաստորեն համարժեք է չդառնալ ձևին՝ իմաստային թեթև երանգով (շեշտվում է փոփոխության տեղի չունենալը)՝ «Գրիգորը մնում էր նախկին սիրելի բարեկամը»:

Որոշ այլ կարգի բայեր ևս ավելի կամ պակաս չափով կարող են կորցնել իրենց բուն իմաստները և հանդես գալ հանգույցի դերում՝ նստած էր թագավոր=թագավոր էր:

Մի շարք բայեր ունեն «եմ+եղանակիչ բառ» կապակցության արժեք՝ թվալ, երևալ, ձևանալ և այլն, ընդ որում թվալ, երևալ բայերը կասկածի տակ են դնում հաղորդումը՝ անկախ ենթակայի նշանակած առարկայի (անձի) կամքից՝ ըստ հաղորդողի ընկալման, իսկ ձևանալ-ը՝ ենթակայի նշանակած առարկայի (անձի) կամքով՝

նրա հատուկ դիտավորությամբ՝ «նա կարգին մարդ էր թվում» (=«նա կարծես թե կարգին մարդ էր»), «նա կարգին մարդ էր ձևանում»:

Անվանական նախադասության հատուկ տիպ են ներկայացնում համեմատության նախադասությունները, որոնք, ի տարբերություն մինչև այժմ նկարագրված տրամաբանական-սահմանողական տիպի նախադասությունների, արտահայտում են երկու առարկա-եզրերի որևէ ընդհանուր հատկանիշի դրսևորման նույնությունը կամ տարբերությունը (վերջին դեպքում՝ առավել կամ պակաս լինելը, ծայր աստիճան ներկայացնելը): Այստեղ բնականաբար ուշադրության կենտրոնում եզրերից միայն մեկն է (ենթակայի արտահայտած առարկան), իսկ մյուսը ծառայում է որպես սրա ունեցած հատկության պարզաբանիչ՝ համեմատության խնդիր՝ «Հակոբը Գրիգորի պես քաջ է», «Հակոբը Գրիգորից (ավելի) քաջ է», «Հակոբը Գրիգորից նվազ քաջ է», «Հակոբը բոլորից քաջ է (=ամենաքաջն է)»:

Մենք վերևում նշեցինք, որ եմ–ը արտահայտում է յուրատեսակ հավասարության հարաբերություն՝ հաղորդողի կողմից ենթակայի այս կամ այն կողմի ընդգծումով: Այստեղից բխում են եմ–ի իմաստի որոշ այլ առանձնահատկություններ. քանի որ այս դեպքում ընդգծվում է առարկայի որևէ կողմը (հատկանիշը, հարաբերությունը)՝ ուստի և առարկան դրանով իսկ՝ ա) մտցվում է առարկաների մի դասի մեջ, որ բնորոշվում է տվյալ հատկանիշով, և բ) տարբերացվում է այլ առարկաներից. «Հակոբը մարդ է» նախադասության մեջ Հակոբը հատկացվում է մարդկային հատկանիշ ունեցող առարկաների դասին և տարբերացվում ոչ մարդկային առարկաների դասից. «Հակոբը գեղեցիկ մարդ է» նախադասության մեջ Հակոբը հատկացվում է մարդ-առարկաների մեջ մի ավելի նեղ՝ գեղեցիկ մարդկանց դասին և տարբերացվում ոչ-գեղեցիկներից:

Եթե ստորոգելին որոշյալ առարկա է, ապա այդ նշանակում է, որ ենթակայի առարկայական կոնկրետ բովանդակությունը պարզ չէ և պարզվում է ստորոգելիի միջոցով. ստորոգելին որոշյալ արժեք է ստանում կամ դերանվան, կամ որոշիչ հոդ ունեցող բառերի միջոցով. այս դեպքում ստորոգելին նշում է խոսողի՝ ենթակայի նշանակած առարկան ճանաչելու աստիճանը՝ «Գրիգորն ո՞վ է»—«Գրիգորն իմ բարեկամն է», «Գրիգորը ես եմ» և այլն:

Ստորոգելիի գործառություն կարող են ունենալ ոչ միայն գո-

յական անուններն ու գոյականական դերանունները (առարկայանիշ բառերը) և գոյականական բառակապակցությունները (առարկայանիշ բառակապակցությունները), այլև գոյականի լրացումները։ Վերջիններիս գործածությունը որոշվում է հետևյալ կանոններով.

1) Դերանվանական որոշիչները ինքնին (առանց գոյականի) գործածվել չեն կարող, եթե զուգահեռաբար գոյականական արժեք չեն ստանում՝ հոդով կամ առանց հոդի (այսինքն՝ նրանց հետ միասին առարկան չի ենթադրվում). այս դեպքում՝ ա) **ո՞ր, նույն, բոլոր** դերանվանական որոշիչները հոդ են ստանում («Ո՞ր ասած տունը ո՞րն է», «Այստեղ եղածները բոլորն են», «Բոլորը նույնն են». բ) **ի՞նչ, այս, այդ, այն, այլ** դերանվանական որոշիչները՝ ոչ («Սա ի՞նչ է» «Ո՞ր գործն այս է» և այլն). գ) **ոչ, ամեն, մի** դերանվանական որոշիչներն ընդհանրապես առանձին չեն գործածվում. դ) **ուրիշ**–ը սովորաբար անհոդ է գործածվում (մի-ի հետ՝ հոդով՝ «Սա մի ուրիշն է»). ե) **ամբողջ**–ի հոդառությունը և ընդհանրապես միայնակ իբրև ստորոգելի գործածվելը անսովոր է. զ) **մի**-ն իբրև ստորոգելի գործածված հանդիպում է արխաիկ լեզվում՝ «նույն, միևնույն» իմաստով («Ամենայն տեղ մահը մի է»—Մն)։

2) Եթե թվական որոշիչները իբրև ստորոգելի դրվում են իրական (ոչ վերացական) առարկա նշանակող ենթակայի հետ, ապա մեկից ութ թվականները հոդ են ստանում, ընդ որում **երկու**–ն ստանում է **երկուս** ձևը («Հակոբը դրանցից մեկն էր». «Նրանք երկուսն էին» և այլն). **ինը** և **տասը** թվականների ը-ն գործում է որոշիչ հոդի արժեքով («Նրանք տասն էին»), իսկ ավելի բարձր թվականները ոճական նկատառումներով սովորաբար անհոդ են գործածվում («Նրանք քսանվեց էին» և այլն)։ Վերացական առարկա արտահայտող ենթակայի (հատկապես **թիվ, գումար** և այլն բառերի) դեպքում թվական որոշիչները սովորաբար հոդ չեն ստանում («Նրանց թիվը երկուս է», «Գումարը ութ է» և այլն)։ Թանձրացական առարկա արտահայտող ենթակաների դեպքում ավելի սովորական է հաշվական միավորի արժեք ունեցող զանազան բառերի գործածությունը՝ «Նրանք հինգ հոգի են» «Բերածս հինգ կտոր է» և այլն։

3) Ածական որոշիչները կարող են գործածվել և՛ հոդով, և՛ անհոդ. անհոդ գործածության դեպքում հաղորդողը պարզապես ընդգծում է առարկայի հատկանիշը, հոդի առկայության դեպքում ճշտվում է, ինչպես նշվեց, ենթակայի արտահայտած առարկայի քնույթը. համմտ. «Այս նվերը թանկարժեք է»—«Այս նվերը թանկարժեքն է»։

Մենք ցույց տվեցինք, որ անվանական նախադասությունների դեպքում առկա է միևնույն դենոտատը (նշանակյալը)։ Սակայն ստորոգելիի մատում այն սովորաբար արտահայտվում է թերի կերպով, ընդ որում վերականգնման դեպքում ենթական կարող է կրկնվել կամ փոխարինվել ավելի լայն ծավալ ունեցող գոյականով. «Տերևը կարմիր է»=«Տերևը կարմիր տերև է» (իմա՛ «պատկանում է կարմիր տերևների դասին»). «Հակոբն ուսուցիչ է»=«Հակոբը ուսուցիչ մարդ է») (իմա՛ «պատկանում է մարդկանց հատարակական տվյալ՝ ուսուցիչների, դասին»). «Մարդը մահկանացու է» =«Մարդը մահկանացու առարկա է» (իմա՛ «պատկանում է նյութական առարկաների՝ մահի ենթակա դասին»)։

4. ԲԱՐԴ ՍՏՈՐՈԳՅԱԼ

Բարդ կոչվում է պարզ կամ բաղադրյալ ստորոգյալի և անորոշ դերբայի զուգորդումը՝ ուզում է գնալ, կարող է գնալ, պարտավոր է գնալ և այլն։ *Անորոշ դերբայը երբեմն կարող է հանդես գալ տրականի, հազվադեպ նաև բացառականի ու գործիականի ձևերով՝* պատրաստ է գնալու, դադարում է գրելուց, խոսելով է ընկել։ *Ինչպես տեսնում ենք, ամենից ավելի սովորական է «դիմավոր բայաձև ունեցող ստորոգյալ+անորոշ դերբայ» շարադասությունը.* խոսելով է ընկել *կապակցությունը ունի դարձվածային արժեք և ավելի շատ հատուկ է խոսակցական լեզվին։ Բարդ ստորոգյալի արժեք ունեն նաև դարձվածային-հարադրական զանազան կապակցությունները, որոնք կազմվում են՝ ա) բայահիմքային արժեք ունեցող բառերի (լինեն դրանք առանձին գործածվող թե չգործածվող, պարզ թե բաղադրյալ, գոյական թե ածական) և* ածում է, աճում է, աճցնում է, առնում է, բերում է, գալիս է, գնում է, գտնում է, գցում է, դառնում է, դարձնում է, դնում է, ելնում է, ընկնում է, թողնում է, թռչում է, կենում է, կտրում է, ճաշում է, ձգում է, մնում է, մտնում է, պրծնում է, ստանում է, վազում է, տալիս է, տանում է, fաշում է, fշում է *և այլն բայերի միացությամբ՝* աճց է կենում, բաց է անում, բացուխուփ է անում, խայտառակ է անում *և այլն. բ) ոչ-բայահիմքային գոյականների, այլև դերանունների, թվականների (լինեն դրանք հոլովված թե ուղիղ ձևով) և ա կետում հիշված ու մի շարք այլ բայերի միացությամբ՝* աշխարհ է գալիս, ականջ է դնում, գլխի է ընկնում, կանաչին է տալիս, աչfից գցում է, գլխով է անում *և այլն. գ) որպես մակբայ և կապ, երբեմն էլ որպես նախածանց*

գործածվող առաջ, դեմ, դեն, դես, դուրս, ետ, ընդառաջ, հեռու, մեջ, մոտ, ներս, շուրջ, շուտ, վայր (վար), վեր, վրա, ցած բառերի («առաջադիրների») և շարժում ցույց տվող բայերի միացությամբ՝ առաջ է գալիս, առաջ է գնում, առաջ է ընկնում և այլն. դ) երկու դիմավոր բայերի միացությամբ, որոնք կամ իրար հետ միասին բայական մի նոր՝ դարձվածային իմաստ են արտահայտում, կամ հանդես են գալիս որպես կերպային արժեք ունեցող և բուն հատկանշային բայի կապակցություններ, կամ աստիճանավորում-ուժեղացնում են միևնույն իմաստը՝ իջնում–բարձրանում է, գրում–վերջացնում է, գնում–հեռանում է և այլն[18]:

Այս բոլոր դեպքերում փաստորեն տեղի է ունենում բուն բայական հատկանիշն արտահայտող և կերպային, եղանակային ու այլ կարգի լրացուցիչ իմաստ ունեցող միավորների զուգորդում. այլ կերպ ասած՝ հանդես է գալիս բայական քերականական կարգերի իմաստների վերլուծական-նկարագրական արտահայտության յուրահատուկ եղանակ:

1) Եղանակային իմաստներն արտահայտվում են առաջին հերթին «պարզ կամ բաղադրյալ ստորոգյալ + անորոշ դերբայ» կապակցության առաջին (դիմավոր) մասով՝ ուզում է գրել, ցանկանում է խոսել, կարողանում է գրել և այլն. եղանակային և բայահատկանշային իմաստների այսպիսի տարբերակում առկա է նաև ճարկավոր է գրել, անհրաժեշտ է ասել, պետք է նշել տիպի անդեմ (միադեմ) կապակցությունների դեպքում՝ այն տարբերությամբ որ առաջին դեպքում ենթական դիտվում է որպես ակտիվ, երկրորդ դեպքում՝ որպես պասիվ կողմ (Համմտ. «Ես ուզում եմ գնալ» և «Ինձ հարկավոր է գնալ»), թեև հնարավոր են արտահայտության հակառակ ձևերը ևս (Համմտ. «Ես պարտավոր եմ գնալ»):

2) Բավականին բազմազան են կերպի արտահայտության ձևերը. ա) անորոշ դերբայ ունեցող բարդ ստորոգյալի դեպքում կերպային իմաստը կարող են արտահայտել դրսավոր բայաձևերը՝ սկսում է fայլել, դադարում է fայլել(ուց), շարունակում է fայլել. բ) երկու դիմավոր բայերից մեկը հարադրական կապակցության մեջ կարող է արտահայտել կերպային իմաստ՝ գրում–վերջացնում է, խոսում–պրծնում է և այլն. գ) բայահիմքային հարադիր ունեցող բայերի դեպքում վերջիններս կարող են կերպային (հատկապես սկսնական կերպի) իմաստ արտահայտել՝ ցավով է բռնվում

---

18 Համմտ. Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 81:

(*համմտ.* ցավում է), վեճի է բռնվում (*համմտ.* վիճում է), ճալ է ընկնում (*համմտ.* հալչում է) *և այլն:*

3) Տիպարային իմաստներից փոխարկականի և ոչ-փոխարկականի հակադրության արտահայտման մասին մենք խոսեցինք պարզ և բաղադրյալ ստորոգյալների տարբերության կապակցությամբ: Ինչ վերաբերում է անցողականության և անանցողականության հակադրության արտահայտությանը, ապա այն բավականաչափ լայնորեն է ներկայացված հարադրական-դարձվածային արտահայտության երկրորդ և երրորդ տիպերի միջոցով. «բայահիմք + դիմավոր բայ» և «առաջադիր + դիմավոր բայ» կապակցությունների դեպքում այդ հակադրությունն արտահայտվում է դիմավոր բայերի անցողական և անանցողական տիպերի գործածությամբ՝ անց է կացնում *և* անց է կենում, բաց է անում *և* բաց է լինում, առաջ է բերում *և* առաջ է գնում, մեջ է գցում *և* մեջ է ընկնում *և այլն. այս հակադրությունն արտահայտվում է մասամբ միևնույն բայերի սեռային տարբերակներով (*դառնում է—դարձնում է, կանգնում է—կանգնեցնում է *և այլն), մասամբ տարահիմք և տարարմատ բայերի զուգորդմամբ՝* կացնում է—կենում է, անում է—լինում է, բերում է—գնում է, գցում է—ընկնում է *և այլն:*

4) Սեռային իմաստներից բարդ ստորոգյալի զանազան տիպերի մեջ հատուկ արտահայտություն է գտնում պատճառականը, որ հանդես է գալիս տալիս է *դիմավոր բայի և անորոշ դերբայի զուգորդությամբ՝* գրել է տալիս, պատմել է տալիս *և այլն: Որոշ դեպքերում այս զուգորդումը գրեթե համարժեք է* (ա/ե)ցն *մասնիկով կազմվող ձևերին* (հասկանալ է տալիս—հասկացնում է, խոսել է տալիս—խոսեցնում է *և այլն), այլ դեպքերում այն զուգահեռ չունի այդ մասնիկով կազմվող ձևերի մեջ* (fաշել է տալիս, *բայց ոչ* fաշեցնում է, բերել է տալիս, *բայց ոչ* բերեցնում է *և այլն): Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ* տալիս է *դիմավոր բայի և անորոշի զուգորդումները, ի տարբերություն* (ա/ե)ցն *մասնիկով ձևերի, գրեթե անսահմանափակ գործածություն ունեն.* տալիս է *ձևի հետ կարող են գործածվել ոչ միայն անանցողական և անցողական, այլև երբեմն նույնիսկ պատճառական ձևերը (*խոսեցնել է տալիս): *Ի տարբերություն «դիմավոր բայ + անորոշ» տիպի այլ զուգորդումների՝ այս դեպքում սովորական է «անորոշ + տալիս է» շարադասությունը:*

Ներգործականի և կրավորականի հակադրությունը բարդ ստորոգյալի տիպերի մեջ հատուկ արտահայտություն չի ստանում.

նշելի է միայն, որ բարդ ստորոգյալի անցողական բայով կազմված բաղադրիչները կարող են հանդես գալ կրավորական ձևով և ամբողջ նախադասությանը տալ կրավորական արժեք՝ անց է կացնում—անց է կացվում, բաց է անում—բաց է արվում և այլն: Բարդ ստորոգյալի՝ երկու անցողական բաղադրիչ ունենալու դեպքում՝ ա) եթե երկու դիմավոր բայերն էլ լիարժեք հատկանիշային բնույթի են, ապա երկուսն էլ ստանում են կրավորականի վ մասնիկը՝ զուգում-զարդարում է և զուգվում-զարդարվում է, գերում-տանում է և գերվում-տարվում է և այլն. բ) եթե երկու դիմավոր բայերից մեկը կերպային արժեք ունի (գրում-վերջացնում է, խոսում-պրծնում է և այլն), ապա ընդհանրապես սովորական չէ կապակցության կրավորական ձևի գործածությունը (լավ չէ՝ գրվում-վերջացվում է, թեև կա գրվում-ավարտվում է և այլն.) գ) եթե մի մասը դիմավոր բայ է, մյուսը՝ անորոշ, ապա միայն անորոշն է կրավորական ձև ստանում՝ ցանկանում է սիրել—ցանկանում է սիրվել, սկսում է գրել—սկսում է գրվել և այլն:

Կարելի է կազմել բարդ ստորոգյալի ընդհանուր մեծակաղապարը՝ մասնակաղապարային և մանրակաղապարային տարբեր դրսևորումներով: Այն կարտահայտվի a(+b(+c(+d(+e)))) բանաձևով, որ կունենա պատրաստ է գրել-վերջացնել տալ նմուշը (օրինակը): Այստեղ a-ն նշանակում է ստորոգելին, b-ն՝ հանգույցը, c-ն՝ անորոշը, d-ն՝ անորոշի կերպային, e-ն՝ սեռային լրացումը. վերջին երեքը ստացվում են դիմավոր ձևերի փոխակերպմամբ, որ կարող է լինել միայն ստորոգելիի՝ որոշ (եղանակային և կերպային արժեք ունեցող) բայերով արտահայտվելու դեպքում. սրանք նույնպես կարող են արտահայտվել դիմավոր ձևերով և դիմավոր ու ոչ դիմավոր ձևերի զուգորդմամբ. Համմտ. գրել-վերջացնել է տալիս, վերջացնում է գրել(ը), գրում է: Այսպիսով, տարբեր մասնակաղապարներում կարգերի իմաստային արժեքը փոխվում է՝ ըստ ստորոգելիի արժեքի, որ կարող է լինել բուն հատկանիշային (մեծ է, մեծանում է). կերպային (սկսում է գրել), եղանակային (ուզում է գրել), սեռային (գրել է տալիս). տիպարային արժեքները սովորաբար այս դեպքերում կարտահայտվեն անցողական դիմավոր բայերի փոխարինմամբ անանցողականներով, և ընդհակառակն:

Ստորոգյալի մասերից պարտադիր է ստորոգելին (նկատի չունենք նախորդ նախադասության մեջ կրկնված լինելու հետևանքով առաջացող զեղչումը). մնացած մասերը կարող են լինել կամ չլի-

նել ըստ հնարավոր 16 տիպերի, ընդ որում որոշ տիպերի զուգակցություններ կարող են լինել պարտադիր, մյուսները՝ ոչ, այսինքն՝ կարող են հանդես բերել մասնակաղապարային տարբերություններ։

Իրականում ստորոգյալի բուն կաղապարը կարող է լինել միայն եռանդամ՝ «ստորոգելի+հանգույց+անորոշ», բայց վերջինս կարող է աճել (հմմտ. c, d, e) դիմավոր բայերի փոխակերպմամբ՝ վերջացնում է գրելը → գրել-վերջացնել. գրել-վերջացնել է տալիս→ գրել-վերջացնել տալ։

Բարդ ստորոգյալը որոշ առումով պետք է դիտել որպես դիմավոր նախադասությունների փոխակերպման արդյունք՝ «ես ուզում եմ, որ նա գնա» (ենթակաների տարբերություն) և «ես ուզում եմ, որ գնամ» (ենթակաների նույնություն) → «ես ուզում եմ գնալ»։

5. ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ենթակայի և ստորոգյալի համաձայնության մասին կարելի է խոսել բնականաբար միայն այն դեպքում, երբ ենթական համապատասխան բառային արտահայտություն ունի։ Այս դեպքում ենթակայի դեմքը և թիվը իրական արժեք են ունենում, իսկ բայի դեմքը և թիվը ստանում են ձևական արժեք՝ կրկնելով ենթակայից հայտնի իմաստները։ Ինչպես նշել ենք, գոյականական և բայական կարգերից համընկնում և որոշակի ձևաբանական արտահայտություն են ստանում դեմքը և թիվը, ուստի և համաձայնությունը կատարվում է ըստ դեմքի և թվի։

Ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնություն տեղի ունի առաջին հերթին ենթակայի՝ անձնական դերանվամբ արտահայտված լինելու դեպքում. այստեղ անձնական դերանվան առաջին դեմքին համապատասխանում է բայի առաջին դեմքը, երկրորդին՝ երկրորդը, երրորդին՝ երրորդը՝ ես գնում եմ տուն—Դու գնում ես տուն—Նա գնում է տուն։ Ինչպես նշվել է, անձնական դերանունների հետ որպես բացահայտիչ հանդես եկող և համապատասխան դիմորոշ հոդով օժտված բառերը (մենք բոլորս, դուք բոլորդ։ ես՝ ուսանողս, դու՝ ուսանողդ) կարող են հանդես գալ և ինքնուրույնաբար. այս դեպքում նույնպես տեղի է ունենում դիմային համաձայնություն՝ Բոլորս պատասխանատու ենք—Բոլորդ պատասխանատու եք։ Մնացած բոլոր դեպքերում բայը ձևավորվում է դիմային չեզոքություն ունեցող երրորդ դեմքով՝ Դրիգորը գնում է. Մխե-

լը վճռական է, Յուրաքանչյուրը պատասխանատու է և այլն։ Այս կանոնից բացառություն չեն կազմում նաև դիմային տարբերակում ունեցող ցուցական դերանունները (սա գեղեցիկ է—դա գեղեցիկ է—նա գեղեցիկ է) և ցուցական ու ստացական դերանուններով ու հոդերով օժտված բառերը. և սա հասկանալի է. բուն ենթական այս բոլոր դեպքերում ոչ խոսողն է և ոչ խոսակիցը։

Իրադրության և խոսքի ոճական նպատակների հետ կապված խոսքի մասնակիցների իրական բաշխումը կարող է չհամընկնել դեմքերի սովորական-քերականական բաշխման հետ. 1) արտահայտվողը (խոսողը, հաղորդողը) կարող է ինքն իրեն դիմել երկրորդ դեմքով կամ իր մասին խոսել որպես օտարի. առաջինը սովորաբար տեղի ունի գեղարվեստական խոսքում (Համմտ. Սարոյի մենախոսությունն ինքն իր հետ Հ. Թումանյանի «Անուշում»), երկրորդը՝ գիտական աշխատություններում («Հեղինակն այս գրքում նպատակ է դրվել...»). 2) խոսողը խոսակցին ներկայացնում է երրորդ դեմքով («Շատ ուրախ եմ, որ իմ բարեկամն իմ տանն է»=«...որ դու իմ տանն ես». «Ձերդ մեծությունը գիտի...»=«Դուք գիտեք»). 3) ժողովրդա-խոսակցական լեզվում, հատկապես հեքիաթներում, երբեմն երրորդ դեմքը դրվում է երկրորդ դեմքով՝ խոսքին կենդանություն տալու նպատակով («Կեցցե՛ս, տղա՛, տալուն պես գլուխը կտրում է»)։

Միակազմ անենթակա նախադասությունների քննությունից հայտնի է, որ երկրորդ և երրորդ դեմքերը կարող են գործածվել ընդհանրական և անորոշ իմաստով. նշենք, որ նույնիսկ երկրորդ դեմքի դու դերանվան առկայության դեպքում հնարավոր է բայի երկրորդ դեմքի այսպիսի գործածությունը (Համմտ. «Ինչ որ ցանես, այն էլ կհնձես» և «Դու կանես, դու էլ կպատժվես»)։

Այն դեպքերում, երբ ենթական արտահայտված է տարբեր դեմքի բառերի կապակցությամբ, ստորոգյալի դեմքը որոշվում է ըստ խոսքի մասնակիցների դիմային-հաղորդակցական գերադասության, այսինքն՝ առաջին դեմքի առկայության դեպքում՝ առաջին դեմքով, սրա բացակայության և երկրորդ դեմքի առկայության դեպքում՝ երկրորդ դեմքով՝ ես և դու գնում ենք—ես և նա գնում ենք—Դու և նա գնում եք։

Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնություն, ի տարբերություն դիմային համաձայնության, երկու դրսևորում ունի՝ 1) ենթակայի ու ստորոգելիի թվային համաձայնություն (այս դեպքում դիմային համաձայնության մասին խոսք լինել չի կարող)

և 2) ենթակայի ու ստորոգյալի մեջ հանդես եկող դիմավոր բայի (պարզ ստորոգյալի և հանգույցի) թվային համաձայնությունը:

Կարելի է տարբերել ենթակայի և ստորոգելիի թվային համաձայնության երկու դեպք. 1) ստորոգելին գոյականով կամ գոյականաբար գործածված բառով չի արտահայտված. այս դեպքում համաձայնություն տեղի չունի՝ Գործը լավ է—Գործերը լավ են. 2) ստորոգելին ուղղական հոլովով գոյական, գոյականաբար գործածված բառ կամ բառախումբ է. հոգնակի թվով կամ բազմակի անդամներով ենթակայի դեպքում ստորոգելին դրվում է եզակի, եթե ենթակայի նշանակած առարկաներն առնվում են միասնաբար, և հոգնակի, եթե առանձնաբար են առնվում կամ ածական որոշիչ ունեն՝ Մենք ամենից առաջ մարդ ենք և Սրանք գրքեր են, Սրանք հայոնի մարդիկ են:

Ենթակայի և դիմավոր բայի համաձայնության մասին կարելի է ասել հետևյալը. եզակի ենթակայի հետ գրեթե անպայմանորեն դրվում է եզակի և հոգնակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ (իմա՛ դիմավոր բայ): Սակայն նշելի է հետևյալը. ա) եթե ենթական արտահայտված է եզակի թվով դրված մի քանի համադաս գոյականով, ապա ստորոգյալը դրվում է հոգնակի թվով՝ Գրիգորը և Հակոբը գնացին. բ) եթե ենթական արտահայտված է մեկից բարձր թվական որոշիչ ունեցող գոյականական կապակցությամբ, ապա ստորոգյալը անորոշ և եզակի գոյականի հետ դրվում է սովորաբար եզակի (Հինգ մարդ եկավ), հազվադեպ՝ հոգնակի թվով (Երեք մարդ անցնում էին փողոցով). որոշյալ և եզակի գոյականի հետ սովորաբար դրվում է հոգնակի ստորոգյալ (Հինգ հոգին էլ գնացին). գ) հավաքական արժեք ունեցող եզակի գոյական անունների հետ ստորոգյալը դրվում է սովորաբար եզակի թվով՝ Ամանեղենը ցուցադրված է խանութում, Ուսանողությունը լցվել է փողոց. դ) հավաքական իմաստով դերանունների հետ դրվում է հոգնակի ստորոգյալ՝ Բոլորը գնացին, Քանիսն են գնում. ե) ենթակայի հոգնակի թվի՝ հոգնակի ստացող նշանակելու դեպքում ստորոգյալը դրվում է եզակի՝ «Սրտները (=նրանց սիրտը) ցավում է». զ) ժողովրդախոսակցական լեզվում իրերի հոգնակի անունների հետ դրվում է եզակի ստորոգյալ, որ գրական լեզվի նորմաների խախտում է՝ «Իմ գործերը վատ է» (փոխանակ «Իմ գործերը վատ են»), «Վաճառվում է պաղպաղակ և սուրճ» (փոխանակ՝ «Վաճառվում են պաղպաղակ և սուրճ»):

IV. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԼՐԱՑԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ

*Խնդիրները և պարագաները ավանդաբար դիտվում են որպես ստորոգյալի լրացումներ։ Սակայն այս դեպքում հարկավոր է նկատի ունենալ հետևյալը. 1) խնդրային և պարագայական լրացումներ կարող են ունենալ ոչ միայն ստորոգյալի գործառույթամբ հանդես եկող դիմավոր բայերը, այլև բայի անդեմ ձևերը. դիմավոր բայի՝ դերբայի վերածվելու դեպքում նրա խնդրային և պարագայական լրացումները հաճախ նույնությամբ պահպանվում են. նշանակում է՝ սրանք բնորոշում են ոչ թե ստորոգյալը, այլ բայը, ինչպես էլ որ այն հանդես գա՝ ստորոգական թե ոչ ստորոգական գործառույթամբ. 2) ինչպես նշել ենք ածականի քննության կապակցությամբ, շատ ածականներ նույնպես կարող են ունենալ խնդրային և պարագայական լրացումներ. խնդրառությունն ընդհանրապես ավելի կամ պակաս չափով հատուկ է ոչ միայն բային, այլև ուրիշ խոսքի մասերի. 3) նախադասության կազմում ենթական ու ստորոգյալը հանդես են գալիս որպես մեկ միասնություն, և բայը ոչ այլ ինչ է, եթե ոչ առարկաների տարբեր հարաբերությունների արտահայտիչ. հետևաբար. եթե մենք վերանանք հարցի զուտ քերականական կողմից և քննենք նախադասության իրական-գոյաբանական հիմքերը, ապա կհամոզվենք, որ խնդրային և պարագայական լրացումները հիմնականում վերաբերում են նախադասությանն ընդհանրապես՝ ինչպես ստորոգյալին, այնպես էլ ենթակային. այսպես, օրինակ, տեղի պարագան նշում է ոչ միայն այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը, այլև որտեղ գտնվում է այդ գործողության տերը՝ ենթական. վերջին հաշվով այն ցույց է տալիս ենթակայի և նրա վիճակային բնութագրման տարածական սահմանափակումը. այս դրույթը չի վերանում դիմավոր բայի՝ դերբայի փոխարկվելու դեպքում. համմտ. «Գրիգորը տանը գիրք է կարդում» → «Տանը գիրք կարդացող Գրիգորը». նշելի է նաև, որ որոշ կարգի խնդրային լրացումներ ավելի շատ հակված են դեպի ենթական, քան դեպի ստորոգյալը. համմտ. «Հակոբը Գրիգորի հետ միասին նստած էր տանը» նախադասությունը, որտեղ **Գրիգորի հետ** միասին խնդրային լրացումը ավելի շատ կապված է ենթակայի հետ։*

Խնդիրների և պարագաների ուսումնքի երկրորդ թույլ կողմը

այդ երկու հասկացությունների տարբերակման սկզբունքի անհրաժեշտությունն է։ Սովորաբար նշվում է, որ խնդիրները ցույց են տալիս նախադասության հետ կապված առարկաները, պարագաները՝ հանգամանքները[19]։ Այլ սահմանմամբ խնդիրները դիտվում են որպես թեք հոլովներով կիրառվող գոյականական լրացումներ, պարագաները՝ որպես ստորոգյալի այնպիսի լրացումներ, որոնք արտահայտում են գործողության ձևը, որակական, քանակական առանձնահատկությունները, գործողության կատարման ժամանակը, տեղը, նպատակը, պատճառը, պայմանը[20]։ Իրականում խնդիրների երկու սահմանմամբ էլ, օրինակ, առարկայանիշ-գոյականական դրսևորում ունեցող և հոլովներով ու կապերով ձևավորվող տեղի պարագան պետք է համարվի խնդիր։ Մինչդեռ տեղի պարագան պարագա է համարվում միայն այն պատճառով, որ նրա արտահայտած առարկան չի մասնակցում ենթակայի գործողության, այլ հանդես է գալիս ենթակայի և նրա գործողության տարածական բնութագրման համար։ Այսպիսով, կարելի է ասել, որ խնդիրները ցույց են տալիս ենթակայի գործողության հետ կապված՝ այդ գործողությանը մասնակցող առարկաներ, պարագաները՝ ենթակայի գործողություններ այս կամ այն կողմից բնութագրող առարկաներ ու հանգամանքներ։ Սրանով պետք է բացատրել, որ որպես երկրորդական նախադասություն հանդես է գալիս տեղի պարագան (և առարկայանիշ այլ պարագաներ), արտահայտվում է խնդիրների արտահայտմանը հատուկ միջոցներով՝ հարաբերական բառերով և ոչ շաղկապներով (այն տարբերությամբ, որ այստեղ ավելանում է տեղ բառը՝ այնտեղից—որտեղից. համմտ. նրանից—ումնից)։

Վերևում ասվածները վերաբերում էին խնդիրների և պարագաների տարբերակման իմաստաբանական հիմքերին։ Իսկ քերականական օբյեկտիվ հիմքեր կա՞ն արդյոք այդ երկու կարգերը տարբերակելու համար։ Այս հարցին պատասխանելու համար քննենք տարբերակման հնարավոր հիմքերը։

1) Բառերի քերականական-իմացաբանական կարգերը (կատեգորիաները) կարելի է տարբերակել ըստ այն բանի, թե նրանք ի՛նչ հարցերի են պատասխանում։ Եթե հայտնի են հարցական դերանունների և (լայն առումով) հարցական այլ բառերի խմբերը, ա-

19 Համմտ., օրինակ, Գ. Սևակ. Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1947, էջ 37—40։

20 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ա. Երևան, 1958, էջ 283 և 331—332.

պա ըստ պատասխանի համապատասխանության կարելի է առանձնացնել բառերի խմբեր (կարգեր, կատեգորիաներ)։ Պատահական չէ, որ Արիստոտելը կատեգորիաները տարբերակում էր հատկապես ըստ հարցերի բնույթի [Համմտ. հայերեն թարգմանությամբ՝ ման(ի)—ման ակ, որ—որակ բառերը]։ Այս առումով, եթե ըստ գործառության տարբերակենք գոյականական, որոշչային (ածականական) և մակորոշչային (մակբայական) հարցական բառեր («դերանուններ»), ապա խնդրային լրացումները կլինեն գոյականական ո՞վ, ի՞նչ հարցականների անմիջական հոլովաձևերի և այդ հոլովաձևերի ու կապերի միացությունների, իսկ պարագայական լրացումները՝ կամ ի՞նչ, ո՞ր հարցականների և կարգային (կատեգորիական) պատկանելիություն ցույց տվող բաղադրիչների (պես, ման, չափ, տեղ, ժամանակ և այլն) հոլովաձևերի միացություններ, կամ սրանց փոխարինող և մակորոշչային (մակբայական) գործառություն ունեցող ե՞րբ, ինչու՞ տիպի հարցականների պատասխաններ։ Խիստ հատկանշական է, որ ո՞վ և ո՞ր (վերջինս գոյականական գործածությամբ) բառերն ընդհանրապես չունեն ներգոյականի ձևեր, իսկ ինչո՞ւմ ձևը գործածվում է խնդիրների (Համմտ. «ինչու՞մ են նրան կասկածում»), բայց սովորաբար ոչ պարագաների համար. վերջին դեպքում նրան փոխարինում է որտե՞ղ մակորոշչային (մակբայական) հարցականը։ Այսպիսով, խնդիրները գոյականական, պարագաները՝ մակորոշչային (մակբայական) հարցականների (ավելի ճիշտ՝ որոշչային ածականական հարցականների ու դրանց միացող ու ամբողջ հարցական խմբին մակորոշչային արժեք տվող խմբերի) պատասխաններ են։ Կարելի է ասել, որ խնդիրների և պարագաների տարբերակման հիմնական ցուցանիշը սա է։

2) Խնդիրների և պարագաների տարբերակման համար կարելի է նկատի առնել նաև խոսքի մասային փոխարկելիության չափանիշը. քանի որ խնդիրներն արտահայտվում են միայն գոյականներով, իսկ պարագաները՝ և՛ գոյականներով, և՛ մակբայներով, ուստի կարելի է տալ խնդիրների և պարագաների տարբերակման հետևյալ սկզբունքը. եթե նախադասության տվյալ անդամի գործառությունը կարող է կատարել որևէ մակբայ (այն կարելի է փոխարինել մակբայով), ապա մենք գործ ունենք պարագայի հետ, եթե ոչ, ապա առկա է խնդիր։ Այսպիսով, խնդիրների և պարագաների տարբերությունը կարելի է որոշել փոխարկման սկզբունքով։

3) Ընդհանուր առմամբ խնդիրները ցույց են տալիս առարկաների, իսկ պարագաները՝ վիճակների հարաբերություններ։ Այս

պատճառով էլ բուն պարագաները կարող են արտահայտվել առաջին հերթին շաղկապներով և միայն երկրորդաբար հոլովներով ու կապերով. ընդհակառակն, բուն խնդիրները արտահայտվում են առաջին հերթին հոլովներով ու կապերով և երկրորդաբար հարաբերական բառերով։ Երկրորդական նախադասությունների դեպքում պարագաների համար տիպական է շաղկապներով, իսկ խնդիրների համար՝ հարաբերական բառերով արտահայտվելը։ Սակայն այս դեպքում էլ տեղի պարագայի դրսևորումները միավորվում են խնդիրների հետ՝ ունենալով ձևավորման որոշ յուրահատկություններ՝ ըստ հարցական և համապատասխան ցուցական բառերի համար վերևում տրված ընդհանուր սկզբունքների։

4) Խնդիրների և պարագաների ձևավորման միջոցների՝ հոլովների ու դրանց հարող կապերի բաշխումը բավարար հիմքեր չի տալիս լրացական անդամների այդ երկու խմբերի հստակ տարբերակման համար. ա) քիչ թե շատ որոշակի պարագայանիշ արժեք ունի միայն ներգոյականը, որ ցույց է տալիս հիմնականում տեղ (տեղի պարագա) և ժամանակի չափ, սակայն ներգոյականով կարող են արտահայտվել նաև այնպիսի բառեր, որոնց հոլովական ձևավորումը ձևական բնույթ ունի՝ կապված լինելով բայի խնդրառական պահանջի հետ և հիմք ունենալով հոլովի փոխաբերական գործածություններ. այդպիսի բառերը բայանուններ են (համաձայնել մեկի հետ մի բանում, կասկածել մի բանում, գործակցել մեկի հետ մի բանում և այլն). մնացած բոլոր հոլովները կարող են ձևավորել ինչպես խնդիրները, այնպես էլ պարագաները. համմտ. «Հակոբը վերցրեց գիրքը» և «Հակոբը մեկ ժամ քայլեց». «Հակոբը նամակ ստացավ Գրիգորից» և «Հակոբը դուրս եկավ տնից». «Հակոբը ձեռով բռնել է փայտը» և «Հակոբը քայլում էր փողոցով». «Հակոբը գիրքը տվեց Գրիգորին» և «Գլխարկը դրված էր Հակոբի գլխին». բ) կապերը ևս կարող են արտահայտել ինչպես խնդրային, այնպես էլ պարագայական հարաբերություններ. կարելի է ասել, որ այս դեպքում վճռական դեր է խաղում այն հանգամանքը, թե ի՛նչ կարդի բառերի (հիմքերի) հետ են գուգորդվում կապերը (և հոլովները)՝ դերանվանական ու անվանական՞ն, թե՞ բայական (բայանվանական ու դերբայական), թեև սա էլ ընդհանուր չափանիշ չէ։

5) Խնդիրները և պարագաները ստորոգյալի (դիմավոր բայի) հետ կապված են սերտության տարբեր աստիճաններով. ընդհանուր առմամբ կարելի է ասել, խնդիրների կապն ավելի ուժեղ է, քան պարագաներինը, և որ դիմավոր բայի լրացումների կազապարում

խնդիրները դիմավոր բայի նկատմամբ ավելի մոտ դիրք են գրավում, քան պարագաները. սակայն բոլոր խնդիրների և բոլոր պարագաների սերտության աստիճանը նույնը չէ. ա) կան պարագաներ, որոնք դիմավոր բայի նկատմամբ ավելի մերձավոր դիրք են գրավում, քան որոշ կարգի խնդիրներ (հմմտ. «Գրիգորը Հակոբից շատ վախեցավ»). բ) կան խնդիրներ, որոնք ավելի շուտ կապված են ենթակայի (և երբեմն խնդիրների) հետ, և հետևաբար նրանց դիրքը ավելի շատ որոշվում է ենթակայի, քան դիմավոր բայի նկատմամբ. դրանք այսպես կոչված «կազմի» խնդիրներն են՝ հետ միասին, փոխարեն, բացի կապերով արտահայտված («Գրիգորը Հակոբի հետ միասին փողոցից վազում էր տուն»). գ) մակբայներով արտահայտված պարագաները հաճախ ավելի սերտորեն են կապած դիմավոր բայի հետ, քան բառաձևերով և բառախմբերով արտահայտվածները (հմմտ. «Քաղաքում նրանք հարցը լուծեցին» և «Նրանք հարցը տեղնուտեղը լուծեցին»). դ) խնդիրների և պարագաների տեղը հաճախ կարող է փոխվել ըստ տրամաբանական շեշտի. ե) ուղղականով ձևավորված գոյականների դիրքի համար կարևոր է որոշյալության և անորոշության տարբերությունը. զ) ընդարձակ (մի քանի բառով արտահայտված) լրացումները, այդ թվում՝ դերբայական անդամները սովորաբար բերվում են առաջ կամ տարվում հետո՝ նախադասության ամբողջականությունը չխախտելու նպատակով։

Նախադասության լրացական անդամների կապը դիմավորների (տվյալ դեպքում՝ հատկապես ստորոգյալի) հետ կարող է իրականացվել երկու եղանակով՝ առդրություն և կառավարություն։ Այս եղանակների ընտրությունը կախված է լրացումների խոսքի-մասային պատկանելիությունից. մակբայների դեպքում, որոնք ձևաբանորեն չեն փոխվում, հանդես է գալիս առդրությունը, գոյականների դեպքում, որոնք հոլովվում և կապեր են ստանում, կառավարությունը։ Առդրությունը քերականական կախման իրականացման այն եղանակն է, որ հանդես է գալիս շարադասության միջոցով, այսինքն՝ ընդհանուր կաղապարի մեջ լրացումները դրավում են որոշակի դիրք լրացյալի և իրար նկատմամբ՝ «Հիմա կրկին շարժվում է հեռու»։ Կառավարությունը քերականական կախման այն եղանակն է, որ իրականացվում է առաջին հերթին լրացումների հոլովական և կապային ձևավորմամբ. կառավարությունը փաստորեն մակաշերտվում է առդրության եղանակի վրա, որ տվյալ դեպքում ստանում է երկրորդական արժեք։

Հայ քերականագիտության մեջ, «տոդրության» փոխարեն հաճախ գործածվում է «շարադասություն» տերմինը, իսկ «կառավարության» փոխարեն՝ «խնդրառություն» և «հոլովառություն» տերմինները։ Այս տերմիններն անհաջող են. առաջին դեպքում շարահյուսական կապակցության եղանակը շփոթվում է սրա իրականացման միջոցի հետ. երկրորդ դեպքում հասկացությունը նեղացվում է. հայտնի է, որ՝ ա) կառավարությունը կարող է լինել ոչ միայն «խնդրառություն», այլև «պարագաառություն» (համմտ. «Պատկանում է քաղաքին» և «Բնակվում է քաղաքում»). բ) կառավարությունը կարող է արտահայտվել ոչ միայն իբրև «հոլովառություն», այլև որպես «կապառություն»։

Կառավարության կապակցությամբ պետք է նշել, որ այն կարող է լինել գործառական-շարահյուսական և ձևական-ավանդական, ուժեղ և թույլ, պարտադիր և ոչ պարտադիր, միակի և բազմակի (բազմակի տարարժեք և բազմակի միարժեք)։

1) Գործառական-շարահյուսական է կոչվում այն կառավարությունը, որի դեպքում լրացման («խնդրի») հոլովական ձևավորումը անմիջականորեն բխում է նախադասության մեջ նրա ունեցած գործառույթից (պաշտոնից), որոշվում նախադասության ընդհանուր իմաստով. ձևական-ավանդական է կոչվում այն կառավարությունը, որի դեպքում լրացման հոլովական ձևավորումը պայմանավորված է տվյալ լրացյալի հետ տվյալ լրացման՝ պատմականորեն ավանդված գործածությամբ (համմտ. «Գոհ եմ քեզնից» և ռուս. «Доволен тобою», «Վախենում եմ քեզնից» և ռուս. «Боюсь тебя», որոնց դեպքում միևնույն խնդիրների հոլովական ձևավորումը տարբեր է)։ Ձևական-ավանդական խնդրառությունը արդյունք է կամ հնում գործող գործառական-շարահյուսական հիմքի մթագրնման և հատկապես տվյալ հոլովաձևի գործառական իմաստների նեղացման, կամ լրացյալի՝ սովորական հիմքերով արտահայտվելու փոխարեն այլ կարգի հիմքերով արտահայտվելու և, հետևաբար, հոլովական իմաստի լայնացման (սովորականից տարբեր դեպքեր ընդգրկելու)։

2) Ուժեղ է կոչվում այն կառավարությունը, որի դեպքում լրացյալը պահանջում է որոշակի հոլովով կամ կապով ձևավորված խնդիր («Դիմանալ վշտերին», «Ակնածել ավագներից»)։ Թույլ է կոչվում այն կառավարությունը, որի դեպքում լրացյալների հոլովական ձևավորումը ավելի շատ կախված է նրանց գործառույթից, շարահյուսական դերից ու պաշտոնից, այսինքն՝ լրացյալի և

և լրացման դուգորդումը ազատ բնույթ է կրում, և լրացյալը կարող է զուգակցվել տարբեր հոլովներով ու կապերով խնդիրների հետ («Գնալ ընկերներով, տուն, fաղաfից»):

3) Պարտադիր է կոչվում այն կառավարությունը, որի դեպքում լրացման առկայությունը պարտադիր է, այսինքն՝ լրացյալը չի կարող գործածվել առանց լրացման (եթե, իհարկե, կրկնության կամ ինքնին հասկանալի լինելու պատճառով չի զեղչվում) (սիրել մեկին, լցվել մի բանով): Ոչ-պարտադիր (ֆակուլտատիվ) է կոչվում այն կառավարությունը, որի դեպքում խնդրի առկայությունը պարտադիր չէ (գնալ մեկի հետ): Պարտադիր կառավարությունը սովորաբար ուժեղ է, ոչ պարտադիրը՝ թույլ:

4) Միակի է կոչվում այն ուժեղ կառավարությունը, որի դեպքում լրացյալը պահանջում է մեկ լրացում (թիկնել մի բանի): Բազմակի է կոչվում այն ուժեղ կառավարությունը, որի դեպքում լրացյալը պահանջում է մեկից ավելի՝ տարբեր հոլովներով ու կապերով ձևավորված լրացումներ (լցնել մի բան մի բանով): Երբեմն միևնույն լրացյալը (բայը) կարող է ստանալ տարբեր հոլովներով ու կապերով ձևավորված համարժեք լրացումներ (հարցնել մեկին, մեկից. տեսնել մի բանում, մի բանի մեջ):

Վերևում ասվածների հիման վրա, ըստ կապակցության դրսևորման եղանակների ու միջոցների՝ կարելի է սահմանել նախադասության խնդրային և պարագայական լրացումների երեք խումբ՝ 1) մակբայական լրացումներ, 2) հոլովական լրացումներ և 3) կապական լրացումներ: Մակբայական լրացումները միայն պարագայական են, հոլովական և կապական լրացումները կարող են լինել և՛ խնդրային, և՛ պարագայական բնույթի:

Քննենք նախ հոլովական և կապական, ապա մակբայական լրացումները՝ նկատի ունենալով, որ մակբայական լրացումները ծագել են մեծ մասամբ հոլովական ու կապական լրացումների հիմքի վրա, և որ նրանք այդ երկու կարգի լրացումների արտահայտած իմաստների վրա նոր իմաստներ չեն ավելացնում:

2. ՀՈԼՈՎԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Հայերենի բոլոր հինգ հոլովները կարող են հանդես գալ որպես նախադասության լրացական անդամների գործառական տարբերիչներ: Հոլովական իմաստների քննության ժամանակ մենք բացահայտեցինք յուրաքանչյուր հոլովի համար նրա անփոխարա-

կային խմաստը և միաժամանակ մատնանշեցինք որոշ փոփոխական իմաստներ, որոնք համընկնում էին հայկական հոլովներով ձևավորված բառերի հիմնական գործառական իմաստների հետ։ Այսպես, ուղղականի համար մատնանշվեցին ենթակայի, ստորոգելիի, կոչականի և ուղիղ խնդրի գործառույթյունների արտահայտումը, տրականի համար՝ հատկացուցչի, ուղիղ խնդրի և անուղղակի խնդիրների ու պարագաների տարբեր տիպերի գործառույթյունների արտահայտումը։ Այն հանգամանքը, որ ուղիղ խնդրի գործառույթյունը կարող է արտահայտվել և՛ ուղղական և՛ տրական հոլովաձևերով՝ ըստ ձևավորվող հիմքերի բնույթի (իր, թե անձ նշանակելու), ցույց է տալիս, որ խնդիրների ու պարագաների ավանդական տարբերակումը հենվում է ոչ այնքան քերականական արտահայտության միջոցների, որքան այդ միջոցներով ձևավորվող միավորների (հիմքերի) դասային պատկանելիության տարբերությունների վրա։ Դեռ ավելին. այստեղ դեր են խաղում նաև բայերի իմաստային տարբերությունները (տարածական փոփոխություն կամ շարժում ցույց տվող, գործողություն ցույց տվող և այլն) և ավանդաբար (պատմականորեն) հաստատված կառավարություն (վարույթը, խնդրառություն)։

Մի քանի խոսք արդեն քննարկված ստորոգելիի երկակի գործառական արժեքի մասին։

Ստորոգյալի և սրա հետ կապված տիպարային իմաստների քննության ժամանակ մենք տարբերեցինք անվանական նախադասություններին հատուկ տիպարային իմաստներ՝ «եմ» և «դառնում եմ» և բայական նախադասություններին հատուկ տիպարային իմաստներ՝ «ունեմ» և «դարձնում եմ» («անում եմ»)։ Սրանցից առաջին երկուսի ժամանակ, ինչպես նշվել է, մենք գործ ունենք առարկայական մեկ եզրի հետ՝ իր անփոփոխ կամ փոփոխական վիճակներով։ Հասկանալի է, որ անվանական նախադասությունների դեպքում խոսք չի կարող լինել խնդրային իմաստների մասին, եթե, իհարկե, միևնույն առարկայի վիճակի փոփոխության տարբեր եզրերը գոյականական դրսևորման դեպքում (համմտ. «Հակոբը գյուղացուց դարձավ բանվոր») չդիտենք որպես առարկայական եզրեր և, հետևաբար, խնդիրներ։ Այս հարցը հեշտ լուծելի հարց չէ և ավելի մեծ դժվարություններ է հարցում հատկապես «դարձնում եմ» իմաստի դրսևորման դեպքում, երբ հիշյալ եզրերը կապվում են ներգործվող (կախյալ, գործողությունը կրող) խնդրի հետ (համմտ. «Քաղաքը Հակոբին գյուղացուց դարձրեց բանվոր»)։ Հայոց լեզվի

Հոլովներ	Լատինական անդամների դրական արժեքները՝ ըստ ամյոլ հոլովներով ձևավորված հիմքերի					
	Անձնանիշ անուններ (բանվոր)	Իրանիշ անուններ			Վերացական անուններ (հատկանիշ բայանուն և անորոշ) (գործ, ամոր, գրել)	Ժամանականիշ անուններ (ժամ, երեկ)
		Տեղանիշ (քաղաք)	Ձափանիշ (մեծ, կոպեկ)	Այլ իրանիշ (քար)		
Ուղղական	1) ատորոգելիական խնդիր («բանվոր գործարկեց») 2) անորոշ ուղիղ խնդիր («բանվոր վարձակ»)	1) ատորոգելիական խնդիր («քաղաք գործարկեց») 2) ուղիղ խնդիր («քաղաքը քանդեց») 3) ուղղության տեղի պարագա («քաղաք գնաց»)	1) ատորոգելիական խնդիր («հինգ անտիմետրը մեծ գործարկեց») 2) ուղիղ խնդիր («մեծերը հաշվեց») 3) տարածական չափի պարագա («մի մեծ գնաց»)	1) ատորոգելիական խնդիր («քար գործարկեց») 2) ուղիղ խնդիր («քարը ջարդեց»)	1) ատորոգելիական խնդիր («գործ գործարկեց») 2) ուղիղ խնդիր («գործ ատացավ»)	1) ատորոգելիական խնդիր («ժամ գործարկեց») 2) ուղիղ խնդիր («ժամը որոշեց») 3) ժամանակի պարագա («երեկ եկավ»)
Տրական	1) ուղիղ խնդիր («բանվորին տվաւ») 2) անուղղակի խնդիր («մոտեցավ բանվորին»)	1) հանգման տեղի պարագա («մոտեցավ քաղաքին») 2) մակագրական տեղի պարագա («պլախին գլխարկ կար»)	արժեչափի պարագա («հինգ կոպեկի գնեց»)	հանգման անուղղակի խնդիր («քարի մոտեցավ»)	1) նպատակի պարագա («գնաց գործի, գրելու») 2) հեռանքի պարագա («պատճառ եկավ ամորի»)	ժամանակի պարագա («հինգ ժամին եկավ»)
Բացառական	1) էլակետային անուղղակի խնդիր («բանվորից պահանջեց») 2) վերաբերության խնդիր («խոսում էր բանվորից») 3) համեմատության խնդիր «բանվորից ավելի (աշխատասեր)»	1) էլակետային տեղի պարագա («քաղաքից հեռացավ») 2) վերաբերության խնդիր («խոսում էր քաղաքից»)	1) գերպանցման չափի պարագա («հինգ կիլոմետրից անցավ») 2) վերաբերության խնդիր («խոսում էր մետրերից»)	1) էլակետային անուղղակի խնդիր («քարից վնասվեց») 2) վերաբերության խնդիր («խոսում էր քարերից»)	պատճառի պարագա («ամարից գլուխը կախեց, գործից հոգնեց»)	էլակետային ժամանակի պարագա («այդ ժամից ապասում էր»)
Դերբայական	1) միջոցի անուղղակի խնդիր («բանվորներով գործ արեց») 2) ուղեկցման անուղղակի խնդիր («բանվորներով գնաց»)	անցման տեղի պարագա («քաղաքով անցավ»)	1) միջոցի չափի պարագա («հինգ կոպեկով գնեց», «հինգ մետրով գերազանցեց») 2) տարածության չափի պարագա («կիլոմետրերով գնում էր»)	միջոցի անուղղակի խնդիր («քարով ջարդեց»)	1) ձևի պարագա («ամբով ասաց», «գրելով գնաց») 2) հիմունքի պարագա («կարգապրությամբ գործուղվեց») 3) միջոցի անուղ. խնդիր («գործով ատացուցեց») 4) նպատակի պարագա («գործով գնաց»)	ժամանակի չափի պարագա («մեկ ժամով գնաց»)
Ներգոյական		Ներգոյական տեղի պարագա («բնակվում էր քաղաքում»)	Ներգոյական չափի պարագա («մետրում հարյուր սանտիմետր կա»)	Ներգոյական տեղի պարագա՝ ժամանակի հիմունքով («գրքում շատ բան կա»)	վիճակի ժեղի» (ժամանակի) պարագա («գործում է երեսուն»)	ժամանակի չափի պարագա («մեկ ժամում ավարտեց»)

շարահյուսությանը նվիրված աշխատություններում ելակետային վիճակի դրսևորումը սովորաբար նույնացվում է բացառական հոլովով խնդրի հետ. հանգակետային վիճակի խնդիրը դիտվում է որպես ներգործվող առարկայի խնդրի մի տարբերակը կամ առանձնացվում է որպես հատուկ («վերածման կամ փոխարկման») խնդիր[21]. նշենք, որ ներգործվող խնդրի և «վերածման» խնդրի միջև առկա է նույն հարաբերությունը, ինչ ենթակայի և գոյական ստորոգելիի միջև, ուստի կրող առարկայի խնդիրը կարելի է կոչել, ավանդական ձևով, ուղիղ խնդիր, վերածման վիճակինը՝ վերածման ուղիղ խնդիր կամ, ավելի ճիշտ, ստորոգելիական խնդիր:

Գոյական անունների դասային տարբերությունները քննելիս մենք բացահայտեցինք՝ 1) վերացական, 2) անձնանիշ, 3) ժամանականիշ և 4) իրանիշ անունների դասեր: Այս դասերից առաջինի համար ընտրելով հատկապես բայանուններ և անորոշ դերբայներ, իսկ չորրորդի համար տարբերակելով իրանիշ, տեղանիշ և չափանիշ բառեր, կունենանք հայերենի հինգ հոլովների հետևյալ գործածառական իմաստները (աղյուսակ 19).

Աղյուսակի հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1) Ընդհանրական բնույթ ունեն միայն ստորոգելիական և ուղիղ խնդիրները. բոլոր հիմքերը կարող են հանդես գալ որպես ստորոգելիական և ուղիղ խնդիրներ, մինչդեռ մնացած դեպքերում լրացումների բնույթը կախված է ձևավորվող հիմքերի բնույթից:

2) Անձնանիշ անունները և տեղանիշ ու չափանիշ արժեք ունեցող իրանունները հանդես են գալիս միայն խնդրային գործածությամբ: Որոշ կարգի իրանուններ, եթե նրանց նշանակած իրերը ծառայում են որպես պարունակիչ (տեղ), կարող են ձևավորվել ներգոյական հոլովով, բայց անձնանիշ և բուն իրանիշ անունները որպես տեղի պարագա հանդես են գալիս մեջ կապով:

3) Բայանունները (բայածանց գոյականները) կարող են հանդես գալ ինչպես խնդրային (հազվադեպ), այնպես էլ պարագայական (հաճախադեպ) գործածությամբ, որ կախված է լրացյալ բայի բնույթից: Խնդրային գործածությունը լինում է անցողական բայերի դեպքում. այս բայերի հետ բայանունները կարող են հանդես գալ որպես ուղիղ խնդիր և որպես միջոցի անուղղակի խնդիր: Պարագայական գործածությամբ բայանունները կարող են հանդես գալ

---

12 Համմ. Վ. Առաքելյան, Հիշ. աշխ., Ա, էջ 298:

որպես նպատակի, պատճառի, հետևանքի, ձևի և հիմունքի պարագաներ. ներգոյական հոլովով դրված բայանունները կարող են հանդես գալ որպես վիճակի տեղի պարագա, որ հավասարազոր է, որոշ նրբերանգով, ժամանակի պարագային՝ «Գործում է երևում» (= «Գործի մեջ է երևում», «Գործի ժամանակ է երևում»). ամենայն հավանականությամբ այսպիսի գործածությամբ է ներգոյականի ում վերջավորությունը վերածվել «անկատար դերբայի» մասնիկի։

4) Մնացած գոյականներից տեղանունները [կամ իբրև այդպիսին (իբրև պարունակիչ) դիտվող իրերի անունները] հանդես են գալիս տեղի, չափանիշ անունները՝ չափի և ժամանականիշ անունները՝ ժամանակի պարագաների տարբեր դրսևորումներով, որոնք հիմնականում հարաբերակից են հոլովական գլխավոր իմաստներին. նշելի է միայն, որ՝ ա) ուղղականաձև տեղի պարագան ցույց է տալիս գործողության ուղղությունը. բ) տրականաձև տեղի պարագան՝ ոչ միայն շարժման հետ կապված հանգման կամ մոտեցման տեղ, այլև դադարի տեղ՝ մակերեսին գտնվելու իմաստի երանգով. մեկ բառով արտահայտված տրականաձև տեղի պարագան երբեմն կարող է հանդես գալ մակբայական արժեքով և նշանակել բուն տեղ՝ տանը. գ) որպես բուն ժամանակի պարագայի արտահայտիչ հանդես է գալիս ուղղականը և ոչ ներգոյականը. վերջինս արտահայտում է ժամանակի որոշ չափ (հմմտ. «Երկ եկավ» և «Մեկ ժամում ավարտեց»). դ) տրականը արտահայտում է ոչ թե հանգում, այլ որոշակի ժամանակ («Ձմռանը պատահեց») կամ ժամանակակետ՝ սովորաբար «ժամը (ժամի)+թվականն» կապակցությամբ՝ ժամը (ժամի) երեքին. մեկ բառով արտահայտված տրականաձև ժամանակի պարագան հանդես է գալիս մակբայական արժեքով՝ ձմռանը, գարնանը, ինչպես երեկոյան, առավոտյան։

5) Վերևում բերված փաստերը ցույց են տալիս, որ հոլովական բուն իմաստների և նրանց խնդրային ու պարագայական որոշակի գործառական դրսևորումների միջև միշտ չէ, որ առկա է որոշակի համապատասխանություն. այստեղ դեր են խաղում լեզվի պատմականորեն կազմավորված արտահայտության եղանակներն ու սովորույթները։

Քանի որ բայերը ոչ այլ ինչ են, եթե ոչ առարկայական հարաբերությունների զանազան տիպերի անվանումներ, ուստի և որոշակի կախում գոյություն ունի բայի իմաստային տարբեր տի-

պերի, գոյականի իմաստային տարբեր խմբերի և նախադասության անդամների տարբեր գործառույթյունների (շարահյուսական տարբեր պաշտոնների) միջև։ Վերևում մենք քննեցինք հոլովական տարբեր ձևերով հանդես եկող հիմքերի և նախադասության մեջ նրանց տարբեր գործառույթյունների փոխհարաբերությունը։ Մասնավորապես երևաց, որ խնդիրների տարբեր տիպերը հայ քերականության մեջ ավանդաբար առանձնացվում են ըստ հոլովական ձևավորման տարբեր տիպերի, մինչդեռ պարագաների տիպերը որոշվում են գերազանցապես ըստ ձևավորվող հիմքերի բնույթի։ Այժմ հարկ ենք համարում խոսել բայի իմաստային խմբերի և բայի հետ կապված խնդիրների ու պարագաների հիմքերի ու դրանց հոլովական ձևերի փոխհարաբերության մասին։ Այս դեպքում հարկավոր է հաշվի առնել ամենից առաջ տիպարային իմաստների խմբերը, որովհետև որոշակի կապ կա տիպարային տարբեր իմաստների և հիմքերի իմաստային խմբերի ու հոլովական տարբեր իմաստների միջև։ Տիպարային կարգի եզրերի առանձնացման համար մենք հիմք ընդունեցինք անցողականության—անանցողականության (կամ, որ նույնն է, անուղղակիության—ներքակայության) և փոխադարձության—անփոխադարձության հատկանիշները. առաջինը ոչ այլ ինչ է, եթե ոչ բայի մեջ դրսևորվող առարկայական, երկրորդը՝ վիճակային հարաբերություն։ Եթե սրանց միացնենք ներհատուկության—ոչ-ներհատուկության (ստորոգելի և ստորոգելիական խնդիր ստանալը կամ չստանալը) հատկանիշը, որ առարկաների դեպքում կդրսևորվի որպես նյութականություն (նյութական կազմ) և տարածականություն, իսկ վիճակների դեպքում՝ որպես վիճակայնություն և ժամանակայնություն, ապա կստացվի բայական ուժը խոսք (աղյուսակ 20, էջ 430)[22]։

Հոլովական լրացումների համար մենք տարբերեցինք հետևյալ հիմնական գործառույթյունները.

I. Խնդիրներ. 1) ստորոգելիական խնդիր, 2) ուղիղ խնդիր, 3) հանգման անուղղակի խնդիր, 4) ելակետի (անջատման) անուղղակի խնդիր, 5) միջոցի անուղղակի խնդիր, 6) ուղեկցման անուղղակի խնդիր, 7) վերաբերության խնդիր։

II. Պարագաներ. 1) տեղի պարագա՝ ներդոյական, մակագոյական, ուղղության, ելակետի անցման տարբերակներով.

22 Յուրաքանչյուր խմբի համար վերցնում ենք մեկական բայ, թեև պետք է նկատի առնել, որ դրանք պայմանական ներկայացուցիչներ են։ Այսպիսի տարբերակման դեպքում է-ն երկատվում է, և ա ւնեմ-ին հակադրվում է կա-ն։

Հատկանիշներ	Տիպարային բայախմբեր							
	Էական (է, ինքնին է գոյություն ունեն)	Կիրառական (կիր)	Փոխադարձ (դասում է)	Շարժական (շարժվում է)	Էական (ինքնին է բերում որևէ կիրառական (ունի))		Փոխադարձ (դասվում է)	Շարժունակ (շարժվում է)
Ներակայություն (անանցողականություն)	+	+	+	+	−	−	−	−
Կայունություն (անփոխարկայնություն)	·	+	−	−	+	+	−	−
Ներհատուկություն (ստորոգայնություն)	+	−	+	−	+	−	+	−

2) ժամանակի պարագա՝ ներգոյական, եղակետային, վիճակատեղի—ժամանակի տարբերակներով, 3) չափի պարագա՝ տարածական, ժամանակի (տևողության), արժեքի (արժեչափի), գերազանցման, միջոցի, ներգոյական տարբերակներով, 4) պատճառի, 5) հետևանքի, 6) նպատակի, 7) հիմունքի:

Վերաբերության խնդրի և նպատակի ու հիմունքի պարագաների դեպքում մենք փաստորեն դուրս ենք գալիս օբյեկտիվ-գոյաբանական գործառությունների շրջանակից և մուտք գործում իմացաբանական գործառությունների շրջանակը. վերաբերության խնդիրը արտահայտում է իմացական օբյեկտ, նպատակի և հիմունքի պարագաները՝ իմացական (ենթադրելի) հետևանք և իմացական (սուբյեկտիվ կամ հասարակայնորեն սահմանված) հիմք: Առայժմ բացառելով՝ ա) իմացական բնույթի պարագաներն ու խնդիրները, որոնց դեպքում մենք գործ ունենք այլ կարգի հարաբերությունների հետ, բ) ժամանակի ու չափի պարագաների այն տարբերակները, որոնց դեպքում տիպարային իմաստները միևնույն հստակությամբ չեն արտահայտվում, գ) հետևանքի պարագան, որ կախված է ենթակայի բնույթից, քննենք բայերի տիպարային խմբերի և խնդիրների ու պարագաների տիպերի փոխհարաբերությունը (աղյուսակ 21):

Բայերի ախտաբային խմբեր	Ստորոգիչի և ստորոգելիի խնդիրը	Խնդիրներ					Պատահաններ							
							տեղ				ժամ			
		ում-ից	ում-ով	ում-ում	ում-ում	ում-ից	ուր-ից	ուր-ով	ուր-ում	ուր-ում	երբ-ից	երբ-ում	երբ-ում (ժամանակի տևողություն)	երբ-ում (ժամանակի կետ)
1. Կայական (կա)	—	—	—	—	—	—	+	—	—	—	+	—	+	—
2. Կական (է, հանդես է գալիս որպես)	+	—	—	—	—	—	+	—	—	—	+	—	+	—
3. Շարժական (շարժվում է)	—	—	—	—	+	+	+	—	+	+	+	+	+	+
4. Փոխական (դառնում է)	+	—	+	—	+	+	+	—	—	—	+	—	+	+
5. Կայանդյական (ստացական) (ունի)	—	+	—	—	—	—	+	—	—	—	+	—	+	—
6. Չանդյական (հանդես է բերում որպես)	+	+	—	—	—	—	+	—	—	—	+	—	+	—
7. Շարժանդյական (շարժում է)	—	+	—	—	+	+	+	—	+	+	+	+	+	+
8. Փոխանդյական (դարձնում է)	+	+	+	—	+	+	+	—	—	—	+	—	+	+

Աղյուսակի կապակցությամբ կարելի է նշել հետևյալը.

1) Փոխարկային տիպարի բայերը (և բայական դարձվածքները) պահանջում են ստորոգելի և ստորոգելիական խնդիր:

2) Անցողական բայերը պահանջում են ուղիղ խնդիր՝ լինի այն պարզ կախման մեջ գտնվող թե ներգործվող (կազմով կամ տարածականորեն փոխվող) առարկա:

3) Բոլոր կարգի բայերի հետ կարող են հանդես գալ ներգոյության տեղի և ժամանակի չափի (տևողության) պարագաները:

4) Շարժական և շարժանցական բայերը կարող են հանդես գալ շարժման ուղղության հետ կապված (ելակետ, հանգման կետ, անցման տեղ) պարագաների, տարածական չափի պարագայի և միջոցի ու ուղեկցման խնդիրների հետ:

5) Փոխական և փոխանցական բայերը կարող են հանդես գալ փոփոխության հետ կապված խնդիրներով (ելակետի, հանգման, միջոցի, ուղեկցման):

6) Շատ բայեր կարող են կապակցվել տարբեր խնդիրների և պարագաների հետ՝ հիմնական իմբերի հատկանիշների զուգակցմամբ. այսպես, տալիս է բայը կունենա «մեկը շարժում է, որ մյուսը ունենա» իմաստը և, հետևաբար հանգման (ով ունենալու է) անուղղակի խնդիր, ստանում է բայը կունենա «(մեկը շարժում է), և մյուսը ունենում է» իմաստը և, հետևաբար, ելակետի (ով շարժել է) անուղղակի խնդիր և այլն:

7) Գտնել և դարձնել բայաձևերի հետ հանգման անուղղակի խնդիրը չի գործածվում, բայց փոխվել—փոխել, վերածվել—վերածել տիպի բայերի հետ ստորոգելիական խնդիրը փոխարկվում է հանգման ուղղակի խնդրի:

Եթե վերանանք հոլովների ստորոգելիական, խնդրային ու պարագայական կիրառություններից և փորձենք որոշել բայի հոլովական լրացումների կաղապարը, ապա կստացվի ((((a+)b+)c+)d+)A(+e/b_1) բանաձևը, որտեղ A-ն բայն է, a-ն՝ ներգոյականով, b-ն՝ ուղղական-տրականով («հայցականով») c-ն՝ գործիականով, d-ն՝ բացառականով, e-ն՝ տրականով, b_1-ը՝ ուղղականով լրացումը. e/b_1-ը (փոխանակման նշանով) ցույց է տալիս, որ տրականով և ուղղականով լրացումները հանդիպում են կաղապարային միևնույն դիրքում և այն էլ ոչ միաժամանակ: Ամենից ավելի շատ խնդիրներ (նկատի ունենք նաև թույլ խնդրառությունը) ընդգրկող դարձնել բայը կունենա b_1-ով («Գործարանում ջուրը մեքենայով հեղուկից դարձնում են պինդ մարմին»), իսկ նրա համանիշ փոխել և վերածել բայերը՝

տրականով խնդիր՝ գոյաբանական միևնույն արժեքով ու կապակցական միևնույն դիրքով («Գործարանում ջուրը հեղուկից մեքենայով փոխում են պինդ մարմնի»)։ Շարժել բայի դեպքում հանդես կգա ((((a+)b+)c+)d+)A(+b1) տարբերակը («Գործարանում մեքենան վագոնով մի արտադրամասից շարժում են մյուս արտադրամաս»)[23]. այդ նույնը կարելի է ասել շարունակել բայի մասին՝ այն տարբերությամբ, որ տեղի պարագայի ելակետային և հանգակետային տարբերակների փոխարեն հանդես կգան ժամանակի համապատասխան տարբերակները՝ d-ի դիրքի փոփոխությամբ («Գործարանում աշխատանքը նոր մեքենայով շարունակում են առավոտից երեկո»)։ Ամենից քիչ՝ միայն ներգոյականով, լրացում կարող չ ունենալ կա բայը («Գործարանում կա»)։ Մնացած բայերը կտրանան երկուսից մինչև հինգ պարտադիր և ոչ-պարտադիր լրացում։ Այս բոլոր դեպքերում կաղապարի մեջ նկատի չեն առնվում բոլոր բայերի հետ որպես ոչ-պարտադիր լրացում հանդես եկող ժամանակի և ժամանակի չափի պարագաները, որոնցից առաջինը սովորաբար ձևավորվում է տրականով և նախորդում (եղբեմն հաջորդում) ներգոյականով լրացմանը («Կեսօրին գործարանում...»), իսկ երկրորդը սովորաբար ձևավորվում է գործիականով ու սովորաբար փոխարինում է գործիականով լրացմանը. այս պարագաների համար առաջնային է մակբայական արտահայտությունը, որ կքննվի հետո։

3. ԿԱՊԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Ինչպես տեսանք գոյականական բառակապակցությանը նվիրված ենթաբաժնում, հայերենի կապերը հանդես են գալիս որոշակի հոլովաձևերի հետ։ Ի տարբերություն գրաբարի և շատ ուրիշ լեզուների, որոնք ունեն տարբեր հոլովաձևերի հետ գործածվող կապերի մի հատուկ խումբ (նախդիրները), ժամանակակից հայերենում այդպիսի կապեր գրեթե չկան. ճիշտ է, առաջ, դուրս, հետու, ներս, ներքև, վերև կապերը կարող են գործածվել և՛ տրական, և՛ բացառական հոլովաձևերի հետ, բայց այդ գործածությունը գործա-

23 Թեև հայերենում շարադասությունը բավականին ազատ է, բայց կա որոշակի բնական կարգ, որ կարելի է որոշել օժանդակ բայի դիրքով. եթե տվյալ խնդիրը իր բնական տեղում է, ապա է-ն դրվում է բայի մոտ (գիրքը տալիս է, տալիս է նրան, գրչով գրում է, փողոցում երգում է և այլն), այլապես է-ն շարժվում է ընդգծվող բառի մոտ։

ական հակադրությունների որոշակի շարք չի առաջացնում[24]. ինչ վերաբերում է իրև, ինչպես, որպես կապերին, ապա դրանք փաստորեն զուրկ են խնդրառությունից. այդ կապերով գոյականները որպես բացահայտիչներ պարզապես համաձայնում են գոյական-բացահայտյալի հետ։

Կարելի էր կարծել, որ ամեն մի հոլովի շուրջ խմբավորվող կապերը այդ հոլովի հետ ունեն որոշակի գործառական ընդհանրություն և պարզապես նրբերանգում ու մանրամասնում են հոլովի գործառական իմաստները։ Սակայն իրականում այդպես չէ. այստեղ մենք գործ ունենք մեծ մասամբ պատմական ու ձևական պայմանավորվածության («խնդրառության») հետ. ժամանակակից հայերենը հակում ունի հնից նկող կապերի համար պահպանել նրանց ավանդական խնդրառությունը, իսկ նոր կապերը գործածել գերազանցապես տրականի (սրա սեռական տարբերակի) հետ՝ որպես հատկացուցիչ-հատկացյալի կապակցություն։ Հատկանշական է, որ ներգոյական հոլովը կապերի հետ ընդհանրապես չի գործածվում, և տեղանիշ կապերը հանդես են գալիս այլևայլ հոլովների հետ։

Ընդհանուր առմամբ ըստ հոլովների հետ ունեցած գործառական հարաբերության կապերը կարելի է բաժանել երկու խմբի. 1) կապեր, որոնց արտահայտած գործառույթները հարաբերակից են հոլովականներին, լրացնում ու մանրամասնում են դրանք, և 2) կապեր, որոնք հանդես են բերում գործառական նոր իմաստներ։ Քննենք հոլովների և կապերի գործառական փոխհարաբերությունը ավելի հանգամանորեն՝ կաղապարային հաջորդականությամբ։

1) Ներգոյականով ձևավորված բառերը և բառակապակցությունները (կաղապարային a կարգ) ունեն գերազանցապես տեղի պարագայի արժեք։ Երկրորդաբար, հատկապես բայանունների դեպքում, միայնակ կամ այլ հոլովաձևերի ու կապական լրացումների հետ միասին, նրանք կարող են հանդես գալ որպես բայի պահանջած լրացում (խնդիր)՝ որոշ դեպքերում բուն ներգոյականի արժեքով («Գտնվում էր ֆաղաքում»), այլ դեպքում՝ առանց ներգոյականության (տեղի) որոշակի արտահայտության («Մի գործում

24 Ինչպես նշել ենք, առաջ-ի դեպքում առկա է տեղանիշ և ժամանականիշ արժեքների հակադրություն, բայց տեղանիշ արժեքի համար ավելի սովորական է առջև ձևի գործածությունը։ Մնացած դեպքում բացառականով գոյականը գործածվում է անփոփոխ կապի, սրականը՝ վերջինիս հոլովվելու դեպքում։

աջակցել»)։ Երկրորդ դեպքը կքննենք բայերի կառավարության (խնդրառության) նվիրված հատվածում։ Այստեղ կանգ առնենք առաջին դեպքի վրա։

Ոչ խնդրառական դրսևորման դեպքում կաղապարային նմուշի *մեջ* գործարանում *(հմմտ. և* գլխին*)* բառաձևով *արտահայտված տեղի պարագան*[25] *կարող է փոխարինվել* արևթեր, աջ, աջ կողմում, առջև (առաջ), առջևում, դիմաց, դուրս, դրսում, (ի)ետևում, կից, կողմում, կողքին, հանդեպ, հանդիման, հետու, ձախ, ձախ կողմում, մեջ, մեջտեղում, միջև, մոտ, ներս, ներսում, ներքո, ներքև, ներքևում, շուրջը, սառն, վար, վեր, վերևում, վրա, տակ, ցած *կապերով (ետադրություններով) արտահայտված լրացումներով՝* գործարանին արևթեր, գործարանից աջ, գործարանի աջ կողմում, գործարանի առջև *և այլն։ Սրանցից* արևթեր, կից, հանդիման *կապերը գործածվում են որոշյալ տրականի,* աջ կողմում, առջև, առջևում, դիմաց, դրսում, (ի)ետևում, կողմում, կողքին, հանդեպ, ձախ կողմում, մեջ, միջև, մոտ, ներսում, ներքո, ներքևում, շուրջը, վերևում, վրա, տակ *կապերը՝ անորոշ տրականի,* աջ, դուրս, հետու, ձախ, ներս, ներքև, վար, վեր, ցած *կապերը՝ բառականի հետ։*

Վերևում բերված կապերի որոշ մասը, սովորաբար այդ կապերի և նրանց խնդիրների հոլովական տարբեր ձևավորմամբ (նույնիսկ լրացուցիչ կապերով), ինչպես նաև մի շարք այլ կապեր կարող են հանդես գալ տեղի պարագայի այլևայլ տարբերակները ձևավորողի դերում, ընդ որում՝ ա) շարժում ցույց տվող բայերի ուղղության տարբեր դրսևորումները ցույց տալու դեպքում դրանք հանդես կգան ըստ հոլովների զբաղեցրած կաղապարային տարբեր դիրքերի (հմմտ. «Գրիգորը Աբովյան փողոցով գործարանից գնում էր տուն»), բ) որոշ դեպքերում էլ կզբաղեցնեն կաղապարային այն դիրքը, ինչ ներգոյականով արտահայտված տեղի պարագան (հմմտ. «Երեկ փողոցն ի վար աղյուսները վագոններով տանում էին գործարան»)։

Իբրև հատուկ տեղի ուղղության կապեր հանդես են գալիս դեպի, ի վար, ի վեր, ուղղությամբ կապերը, ընդ որում դեպի նախադրությունը կարող է միանալ բերված մի շարք կապերի (ինչպես գոյականներին)՝ դեպի առաջ, դեպի վեր, դեպի վար, դեպի աջ, դեպի

25 *Խնդրառությամբ պայմանավորված տեղի պարագան կարող է զբաղեցնել այլ դիրք («Գտնվում է* ֆաղաքում»)։

ձախ և այլն (համմտ. դեպի տուն, դեպի բարձունք և այլն)։ Նախորդ կապերից որպես ուղղության կապեր գործածվում են՝ աջ, աջ կողմ, առջև (առաջ), դիմաց, դուրս, (ի)ետև, կողմ, կողք–, հետու, ձախ, ձախ կողմ, մեջ, մոտ, ներս, ներքև, վար, վեր, վերև, վրա, տակ, ցած՝ ա) բացառականի ձևով (աջից, աջ կողմից, առջևից և այլն), բ) գործիականով (աջով, աջ կողմով, առջևով) և գ) ուղղականաձև կամ դեպի նախադրության զուգորդությամբ՝ նշանակելով ելակետ, անցում և ուղղություն։ Կապերի հոլովված և դեպի նախադրությամբ օժտված ձևերը կազմում են տարածական տարբեր հարաբերություններ արտահայտող շարքեր՝ հար և նման կովկասյան հոլովաշատ լեզուների տարածական-տեղանիշ հոլովների շարքերին։

Եթե նկատի առնենք միայն ներգոյական (շարժման հետ չկապված) տեղի պարագան, ապա կարելի է տարբերել՝ ա) կապեր, որոնք ցույց են տալիս դիրք և բ) կապեր, որոնք ցույց են տալիս տարածական չափ. տարածական չափ են ցույց տալիս առջեր, կից, հետու, մոտ կապերը. կողքին-ը ցույց է տալիս և՛ չափ («մոտ»), և՛ դիրք («աջ կամ ձախ կողմում»). մնացած կապերը ցույց են տալիս տարածական դիրք՝ ըստ երեք չափման՝ վերև—ներքև, աջ—ձախ (առանց սրանց տարբերակման՝ կողքին), առջև—ետև, ներս—դուրս (դուրս-ը նշանակում է ընդհանրապես բոլոր կողմերը ի հակադրություն ներս-ի) կամ մեջ—կողմ (որևէ մեկ կողմ՝ ի հակադրություն մեջ-ի)։ Ներգոյականի հետ գրեթե համարժեք է միայն մեջ-ը, բայց այն էլ ցույց է տալիս ոչ թե ընդհանրապես տեղ, ինչպես ներգոյականը, այլ որոշակի սահմանազատված տեղ։ Այս բոլոր եզրերի փոխհարաբերությունն կարելի է արտահայտել 2-րդ գծագրով (էջ 436).

Գծագրի կապակցությամբ պետք է նշել հետևյալը.

ա) Կապական զուգահեռ ձևերից՝ a) վեր, վերևում, ներքև, ներքևում, ստորև, վար, ցած կապերը տարբերվում են վրա և տակ կապերից նրանով, որ արտահայտում են նաև մերձավորության աստիճան՝ տարածության չափ. առաջիններն ցույց են տալիս «ոչ կից», երկրորդները՝ «կից» («վրա ոչ կից»=«վերևում», «տակ ոչ կից»=«ներքևում»). b) մեջ և մեջտեղում ձևերից առաջինը ցույց է տալիս ընդհանրապես «մեջ»՝ գրեթե համարժեք «ներսում»-ին, մինչդեռ մեջտեղ-ը նշանակում է «կենտրոնում». c) վեր, վար, ցած, ներս, դուրս, ձախ, աջ, մեջ ձևերը մակբայական գործածությամբ ցույց են տալիս ուղղություն (վեր=դեպի վեր և այլն), ընդ որում



որպես կապեր շարժանիշ բայերի մոտ պահպանում են այդ արժեքը («Գնում է fաղաfից դուրս»), ոչ շարժանիշ բայերի մոտ գործածվում են որպես ներգոյականի տարբերակ՝ սովորաբար պահպանելով շարժման տեղ ցույց տվող տեղի պարագայի դիրքը («Զորամասը տեղավորված է fաղաfից դուրս»):

բ) Եթե գծագրում բերված կապերը կողմնորոշում են մեկ առարկայի դիրքով, ապա միջև, դիմաց, հանդեպ, հադիման կապերը նկատի ունեն երկու առարկաների դիրքը. միջև–ը ցույց է տալիս երկու առարկաների միջև, դեմ, դիմաց, հանդեպ, հանդիման կապերը՝ իրար ուղղված առարկաներից մեկի դիրքը մյուսի նկատմամբ, ընդ որում դիմաց–ը և հանդեպ–ը սովորաբար ոչ շարժանիշ, հանդիման–ը՝ շարժանիշ, դեմ–ը և՛ շարժանիշ, և՛ ոչ շարժանիշ բայերի դեպքում:

Ընդհանուր առմամբ տեղանիշ անվան տակ միավորված կապերը ցույց են տալիս դիրք, տարածական չափ և ուղղություն, ընդ որում որոշ կապեր կարող են միավորել դիրքի արտահայտությունը տարածական չափի կամ ուղղության հետ: Բացի

արմաթեր, կից, մոտ, հեռու կապերից տարածական չափ են արտահայտում նաև սկսած, մինչև կապերը, որոնք ըստ իրենց հետ գուգորդվող բառերի բնույթի կարող են նշանակել նաև ժամանակի չափ։

Տեղանիշ կապերը ցուցական, այլև անձնական դերանունների հետ գործածվելով արտահայտում են իրադրական տեղ (ինձ մոտ, ձեզ մոտ, նրա մոտ, սրա մոտ, դրա մոտ և այլն)։ Ինչպես որ այս–ը միանալով ժամ–ին՝ այժմ ձևով ստանում է իրադրական ժամանակի մակբայի արժեք, այնպես էլ այստեղ, այդտեղ, այնտեղ բառերն ունեն իրադրական տեղի մակբայների արժեք. այս կողմ, այդ կողմ, այն կողմ կապակցությունների մասերը դեռ գիտակցվում են որպես առանձին բառեր և դրվում առանձին, բայց գրաբարի ընդ այս, ընդ այն ձևերից ծագած բարբառային դեսը, դենը բառերը գործածվում են գրական լեզվում (խոսակցական-բարբառային ոճում) մակբայական արժեքով։ Տեղի կապերից շատերը կարող են գործածվել առանց գոյականների՝ որպես մակբայներ՝ ցույց տալով ենթակայի հետ կապված (նրանով կողմնորոշվող) կամ խոսողի հետ կապված (նրանով կողմնորոշվող) տեղ, ուղղություն. համմտ. «Հակոբը շարժվեց աջ», որտեղ աջ–ը կարող է նշանակել Հակոբի աջ կողմը կամ խոսողի աջ կողմը՝ ըստ խոսքի ընդհանուր իրադրության և կոնտեքստի։

Ներգոյական հոլովով արտահայտված տեղի պարագայի մի տարբերակն է, այսպես կոչված, մակագոյական տեղի պարագան, որ արտահայտվում է տրական հոլովով և ցույց է տալիս վրան անմիջապես գտնվելը՝ «Գլխին դրված էր գեղեցիկ մի գլխարկ», «Բազկաթոռին նստած էր» և այլն։ Ի տարբերություն բուն (ներգոյականով) տեղի պարագայի՝ տրականով տեղի պարագան սահմանափակ կիրառություն ունի՝ դրվելով միայն որոշ բայերի հետ։ Այն կարող է զբաղեցնել նաև տրականով լրացումների կազապարային տեղը և բուն տեղի պարագայի ազատությունը չունի. համմտ. «Քաղաքում Գրիգորը գնումներ կատարեց»—«Գրիգորը քաղաքում գնումներ կատարեց»—«Գրիգորը գնումներ կատարեց քաղաքում» և «Գրիգորը բազկաթոռին նստած էր»—«Գրիգորը նստած էր բազկաթոռին», բայց ոչ «Բազկաթոռին Գրիգորը նստած էր»։ Մակագոյական տեղի պարագան գրեթե համանիշ է վրա կապով արտահայտված տեղի պարագային և երբեմն կարող է փոխարինվել նրանով։

2) Կազապարում ուղղական-տրականով (հայցականով) արտահայտված և որպես b կարգի անդամ հանդես եկող ուղիղ խըն-

դիրը, ի տարբերություն մյուս լրացումների, կապերով չի արտահայտվում: Մասին կապով լրացման՝ որպես ուղիղ խնդիր ձևավորվելու մասին կխոսվի առանձին:

3) Գործիականով լրացումները կարող են հանդես գալ որպես խնդիրներ և պարագաներ. նրանք լինում են՝ ա) միջոցի անուղղակի խնդիր (գործողության միջոցի՝ «Կացնով ջարդեց» և շարժման միջոցի՝ «Վագոնով տեղափոխեց»), բ) ուղեկցման անուղղակի խնդիր («Ընկերներով գնաց»), գ) վերաբերության անուղղակի խնդիր («Նրա գործով մեկնեց»), դ) անցման տեղի պարագա («Քաղաքով անցավ»), ե) չափի պարագա (միջոցի՝ «Հինգ ռուբլով գնեց», տարածության՝ «Կիլոմետրերով գնում էր», ժամանակի՝ «Ժամերով սպասում էր), զ) ձևի պարագա («Ցավով ասաց»), է) հիմունքի պարագա («Նրա կարգադրությամբ գնաց»), ը) ժամանակի պարագա («Գիշերով հավաքվեցին»):

Սրանցից միջոցի խնդիրը կարող է արտահայտվել ձեռով, միջոցով, օգնությամբ կապերով, որոնք ծագելով գոյականներից, դրվում են անորոշ տրականի («սեռականի») հետ՝ ինչպես հատկացյալը հատկացուցչի հետ. սրանցից ձեռով-ը բնականաբար գործածվում է միայն անձնանիշ անուններին հետ և այն էլ միայն գործողության միջոց (ոչ շարժման միջոց) նշանակելու համար: Քանի որ միջոցի խնդիրը ցույց է տալիս ենթակայից կախված և ուղիղ խնդիրը կախման մեջ դնող (և՛ կախված, և՛ կախող կամ և՛ ներգործվող, և՛ ներգործող) առարկա, այն կրավորական բայերի մոտ կարող է արտահայտել ներգործողին, այսինքն՝ իրական ենթական («Հակոբի ձեռով սպանվեց»). այս դեպքում ձեռով-ն ունի որոշ պատկերավորություն (մասն ամբողջի փոխարեն):

Ուղեկցման անուղղակի խնդրի համար ավելի սովորական է ոչ թե հոլովական, այլ կապական արտահայտությունը: Այդ խնդիրը սովորաբար արտահայտվում է հետ, հետ միասին, հանդերձ կապերով. ընկերներով (գնաց) ձևի փոխարեն կարող են հանդես գալ ընկերներով հանդերձ, ընկերների հետ, ընկերների հետ միասին ձևերը: Դժվար չէ նկատել, որ ուղեկցման խնդիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ հավելվող առարկայի, գործողության և այլն նշանակում. գործիականի -ով վերջավորությունն ու հանդերձ, հետ, հետ միասին կապերը արտահայտում են հավելում և համարժեք են և-ին՝ այն տարբերությամբ, որ միևնույն հարաբերությունը հանդես է գալիս մի դեպքում համադասությամբ, մյուս դեպքում՝ ստորադասությամբ (Հակոբը և նրա ընկերները → Հակոբը ընկերներով, ընկերնե-

ով հանդերձ, ընկերների հետ, ընկերների հետ միասին): *Հասկանալի է, որ իմաստային առումով ուղեկցման խնդիրը պետք է կապվի բացառման և փոխարինման խնդիրների հետ, որոնք միասին կկազմեն կազմի խնդիրների խումբը: Բացառման (հանման) խնդիրն արտահայտվում է* բացառությամբ, բացի, զատ, չհաշված, *փոխարինմանը՝* անունով, տեղ, ի տրիտուր, փոխանակ, փոխարեն *կապերով. վերջինս կլինի երկու հակադիր եզրերի միասնությունը՝ բացառում և հավելում: Ընտրելով բացառելիության և հավելականության հատկանիշները՝ կունենանք կազմի խնդիրների ու դրանք արտահայտող կապերի հետևյալ փոխհարաբերությունը (աղյուսակ 21).*

Աղյուսակ 21

Հատկանիշներ	*Կազմի կարգեր*			
	Փոխարինում	*Բացառում*	*Հավելում*	*Համասեռություն (անփոփոխ կազմ)*
Բացառելիություն	+		−	−
Հավելականություն	+	−	+	−

Գործիականով արտահայտված վերաբերության խնդիրը իմաստով տարբերվում է բացառականով կամ մասին կապով արտահայտված վերաբերության խնդրից: Գործիականով վերաբերության խնդիրը կարող է փոխարինվել առնչությամբ, հետ կապված, կապակցությամբ *կապերով արտահայտված խնդիրներով՝* գործով (մեկնեց)—գործի առնչությամբ, գործի հետ կապված, գործի կապակցությամբ (մեկնեց): *Ի տարբերություն բուն վերաբերության խնդրի՝ սա որոշ դեպքերում կարող է մեկնաբանվել որպես նպատակի պարագա: Վերաբերության գործիականը սովորաբար հանդես է գալիս* հարց, գործ *բայանունների հետ և այս տեսակետից մոտ է բայանունների հետ գործածվող բուն գործիականին. Համմտ. «խոսեց այդ հարցի մասին»—«խոսեց այդ* հարցի կապակցությամբ»: *Նշենք, որ* գործով, հարցով *ձևերը կարող են մեկնաբանվել ինքնին որպես կապեր՝ նպատակի պարագայի արտահայտությամբ, ինչպես* նպատակով *բառը:*

Անցման տեղի պարագան կարող է արտահայտվել նաև միջով կապով, որի հարաբերությունը մեջ-ին նույնն է, ինչ գործիական հոլովինը՝ ներգոյականին: Ինչպես նշվել է տեղի պարագայի քըն-

նության հետ կապված, անցումը կարող է արտահայտվել տեղի տարբեր դրսևորումներով (միջով, վրայով, կողմով և *այլն*)։

Չափի պարագան կարող է փոխարինվել ավելի, համեմատ, հավասար, մինչև, չափ, չափով, պակաս, *իշ կապերով՝* հինգ ռուբլով, հինգ ժամով և *այլն* — հինգ ռուբլու չափ, հինգ ռուբլու չափով, հինգ կիլոմետրի չափով, հինգ ժամի չափով, բոլորից հավասար, իր ուժերի համեմատ, մինչև հինգ կիլոմետր, հինգ կիլոմետրից ավելի, հինգ կիլոմետրից պակաս (*Համմտ. նաև* հինգ կիլոմետրով ավելի, հինգ կիլոմետրով պակաս՝ *այլ իմաստով*)։ *Չափի պարագայի դրսևորումները հարաբերակից են կազմի խնդիրների դրսևորումներին՝ համեմատության միևնույն եղրերով՝ ըստ 23-րդ աղյուսակի։*

Աղյուսակ 23

Հատկանիշներ	Չափի եղրեր			
	Փոխարինման չափ (հինգ ռ. փոխարեն չորս ռ. (չափով))	Նվազման չափ	Հավելական չափ	Հավասարության չափ
Նվազականություն	+	+	—	—
Հավելականություն	+	—	+	—

Գործիական հոլովով ձևի պարագան սովորաբար արտահայտում է այն հոգեվիճակը, որի մեջ գտնվում է գործողությունը կատարողը՝ ամոթով (գնաց), ուրախությամբ (լսեց)։ *Մնացած դեպքերում ավելի սովորական է ձևի պարագայի կապական արտահայտությունը՝* կերպ, կերպով, ձևով, նման, պես *կապերով, որոնք ցույց են տալիս տվյալ գործողությանը համատիպ գործողություն՝* այս կերպ, այս կերպով, միևնույն ձևով, բարեկամի նման, ընկերոջ պես։ *Այս բոլոր դեպքերում առկա է գործողությունների համեմատությունը ըստ նմանության. առավելության և նվազականության համեմատությունը կատարվում է բացառական խնդրով օժտված ածականների մակբայական դործածությամբ՝* ավելի և ձևով, կերպով *բառերի հարակցությամբ կամ առանց դրանց՝* թշնամուց (ավելի) վատ (ձևով), ինձնից (ավելի) գեղեցիկ (կերպով)։ *Նմանության ձևի պարագայի հակառակ դրսևորումն է «տարբերության պարագան», որ արտահայտվում է* ի տարբերություն *կապով. Համմտ.*

«Հակառի նման *նա էլ գրեցի*»—«ի տարբերություն Հակոբի *նա չգրեցի*»։

Գործիականով արտահայտված հիմունքի պարագան («նրա կարգադրությամբ *գնաց*») *կարող է փոխարինվել* ըստ, համաձայն, համապատասխան, համեմատ, հիման վրա, (նայած) *կապերով արտահայտված լրացումներով՝* ըստ (նրա) կարգադրության, (նրա) կարգադրության համաձայն, կարգադրության(ը) համապատասխան, կարգադրության համեմատ, կարգադրության հիման վրա, (նայած կարգադրության)։ *Հակառակ հիմունքի պարագան, որի դեպքում հիմունքը (պայմանը) և գործողությունը հակառակ հարաբերության մեջ են (հիմունքում ենթադրված գործողությունը չի կատարվում կամ, ընդհակառակն, կատարվում է՝ հակառակ ենթադրության), արտահայտվում է* հակառակ, հանդերձ, չնայած *կապերով՝* հակառակ կարգադրության (մեկնեց), չնայած կարգադրությանը (եկավ), տեղյակ լինելով հանդերձ (ոչինչ չարեց)։

Գործիականով ժամանակի պարագան գրեթե համարժեք է տրականով և ուղղականով արտահայտվող ժամանակի պարագային. համմտ. «ճաշին *հավաքվեցին*»—«Գիշերը *հավաքվեցին*»—«Գիշերով *հավաքվեցին*»։

*4) Բացառականով լրացումները ևս կարող են հանդես գալ որպես խնդիրներ և պարագաներ՝ ա) ելակետային անուղղակի խնդիր («Գրիգորից *ստացավ*»), բ) համեմատության անուղղակի խնդիր [«Գրիգորից (ավելի) *մեծ էր*»], գ) վերաբերության անուղղակի խնդիր («Գրիգորից *բամբասում էին*»), դ) պատճառի պարագա («Գլուխը ամոթից *կախեց*»), ե) գերազանցման չափի պարագա («Հինգ կիլոմետրից *անցավ*»), զ) ելակետային տեղի պարագա («Քաղաքից *հեռացավ*»), է) ելակետային ժամանակի պարագա («Երեկվանից *սպասում էր*»)։*

Ելակետային անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից սկիզբ է առնում գործողությունը. ահա թե ինչո՞ւ կրավորական կառուցվածքի դեպքում իրական ենթական արտահայտվում է բացառական հոլովով («հեղինակային բացառական»)։ Համապատասխան այս վերջին գործառույթամբ բացառականով խնդիրը կարող է փոխարինվել կողմից կապով արտահայտված խնդրով՝ բոլորից (սիրված է)՝ բոլորի կողմից (սիրված է)[26]։ Ձեռքից *կապը հանդես է*

[26] *Համանուն դարձվածային գործածությամբ իրական ենթական կարող է արտահայտվել նաև հանձին(ս) կապով՝* «Հանձին նրա *մենք տեսնում ենք այս գործի ղեկավարին*»— «Նա *այս գործի ղեկավարն է*»։

գալիս որպես ելակետային անուղղակի խնդրի արտահայտիչ՝ պատճառականության ավելի շեշտված դրսևորմամբ՝ «նրա ձեռքից աջատրական էր գարձել»։

Համեմատության անուղղակի խնդիրը կապված է որպես ստորոգելի հանդես եկող ածականի հետ և քննվել է բառակապակցությանը նվիրված բաժնում՝ ածականի քննության հետ կապված։ Այստեղ նշենք, որ համեմատության բացառականը բաղդատական աստիճանի դեպքում կարող է փոխարինվել ևան կապով [«Գրիգորը Հակոբից (ավելի) գեղեցիկ է»—«Գրիգորն (ավելի) գեղեցիկ է, քան Հակոբը»], գերադրականի դեպքում՝ մեջ կապով («Մեզնից ամենախելոքն է»—«Մեր մեջ ամենախելոքն է»)։ Ինչպես չափի, այնպես էլ որակի դեպքում համեմատությունը կարող է լինել գերազանցություն («ավելի»), նվազականություն («պակաս»), հավասարություն («պես, նման») և փոփոխություն («մերթ—մերթ»)՝ ըստ 24-րդ աղյուսակի.

Աղյուսակ 24

Հատկանիշներ	Բաղդատության կարգեր			
	Փոփոխականության բաղդատական (մերթ ավելի, մերթ պակաս)	Գերազանցության բաղդատական (ավելի)	Նվազականության բաղդատական (պակաս)	Նմանության բաղդատական (նման, պես)
Գերազանցություն	+	+	—	—
Նվազականություն	+	—	+	—

Վերաբերության խնդրի համար ավելի սովորական է արտահայտությունը ոչ թե բացառականով, այլ առթիվ, մասին, շուրջը, վերաբերմամբ, վերաբերյալ կապերով՝ (խոսում էին) գործից—գործի առթիվ, գործի մասին, գործի շուրջը, գործի վերաբերմամբ, գործի վերաբերյալ։ Սրանցից մասին-ը ավելի ընդհանուր բնույթի է, մյուսները հանդես են բերում իմաստային այս կամ այն երանգը։ Մասին, վերաբերմամբ, վերաբերյալ կապերը կարող են գործածվել անձերի և իրերի, առթիվ, շուրջ(ը) կապերը՝ ոչ-անձերի համար։ Բացի սրանցից, խոսակցական-բարբառային ոճով վերաբերական իմաստով կարող են գործածվել վրա. համար կապերը («Մտածում էր իր գործերի վրա», «Դրա համար մի լավ հոդված էր գրելու»—ՀԹ)։ Վերաբերության խնդիրը լայն առումով նշանի առարկայի (նշանակվողի)՝ իր նշանի հետ ունեցած հարաբերության

արտահայտությունն է. այդ պատճառով էլ այն կապված է իմացական և հաղորդակցական պրոցեսներ կամ վիճակներ արտահայտող բայերի հետ՝ մտածել, խոսել, գրել և այլն։ Կարևոր է նշել, որ վերաբերության խնդիրը լրացումների կազապարում գրավում է այլ դիրք, քան բացառականով ելակետային խնդիրը. վերջինս նախորդում է բային, վերաբերության խնդիրը՝ հաջորդում (համմտ. «Նրանից հեռանում էր» և «խոսում էր նրանից»)։

Պատճառի պարագան, որպես մաքսանորեն շեշտվելու դեպքում, հանդես է գալիս սովորաբար հետևաճոով, շնորհիվ, պատճառով կապերի միջոցով, ընդ որում շնորհիվ-ը արտահայտում է միաժամանակ խոսողի դրական վերաբերմունքը տվյալ պատճառական գործողության նկատմամբ՝ «Հակոբի մեկնելու պատճառով (=հետևանքով) նա գործերը չկարողացավ ժամանակին տնօրինել», «Հակոբի աջակցության շնորհիվ գործը գլուխը բերեցին»։ Ընդհանրապես պատճառի պարագան պետք է ցույց տա մի գործողություն, որ պատճառ է հանդիսացել բայ-ստորոգյալի նշանակած գործողության համար. հետևաբար այն պետք է արտահայտվի բայանվամբ կամ դերբայով։ Սակայն երբեմն նշվում է պատճառ հանդիսացող գործողության հեղինակը՝ առանց այդ գործողության մատնանշման՝ «Հակոբի պատճառով գործերը չկարողացավ ժամանակին տնօրինել», «Հակոբի շնորհիվ գործը գլուխ բերեցին»։ Հետևանքով կապը այս դեպքում չի գործածվում։ Ընդհակառակն, խոսակցական-բարբառային ոճով պատճառով կապի փոխարեն կարող է գործածվել երեսից կապը՝ խոսողի բացասական վերաբերմունքի արտահայտությամբ՝ «Հակոբի երեսից գործը չկարողացան ժամանակին գլուխ բերել»։

Գերազանցման չափի պարագան գրական լեզվում ունի սովորաբար հոլովական արտահայտություն, թեև կարող է արտահայտվել նաև չափ բառի բացառականով։ Ելակետային տեղի պարագայի և ժամանակի պարագայի մասին վերևում արդեն խոսել ենք. դրանք արտահայտվում են նաև բացառականով ձևավորված կապերով՝ ըստ բերված տիպերի։

6) Ստորոգելիական խնդրի մասին մենք առիթ ենք ունեցել խոսելու ստորոգյալի քննության կապակցությամբ։ Այստեղ կանգ կառնենք տրական հոլովով լրացումների կապական դրսևորումների (փոխարկումների) վրա։

Տրական հոլովով ձևավորվում են, բացի ուղիղ խնդրից, որի մասին վերևում խոսել ենք, նաև՝ ա) հանգման անուղղակի

խնդիրը («Հանձնեց Գրիգորին», այլև, ուղղության տեղի պարագայի երանգով, «Մոտեցավ բանվորներին», «Մոտեցավ fարին»), բ) նպատակի պարագան («Գնաց գործի», «Մեկնեց հանգստանալու»), գ) հետևանքի պարագան («Պատճառ դարձավ գժության», «Առիթ տվեց անբավականության»), դ) մակագոյական տեղի պարագան («Նստած էր աթոռին»), ե) ժամանակի պարագան («Ժամի մեկին եկավ», զ) արժեքի չափի պարագան («Հինգ ռուբլու գնեց»):

Սրանցից մակագոյական տեղի պարագայի և տրականով ժամանակի պարագայի կապական արտահայտությունների մասին առիթ ենք ունեցել խոսելու: Այստեղ կխոսենք տրականի մյուս կիրառությունների կապական արտահայտությունների մասին:

Հանգման անուղղակի խնդիրը հանդես է գալիս ամենաբազմազան իմաստներով, որոնց համապատասխան կարող է փոխարինվել զանազան կարգի՝ հատկապես ուղղություն ցույց տվող կապերով՝ (պատմել, բերել, հաճելի է) Գրիգորին—Գրիգորի համար. (հառած են) արևին—դեպի արևը, արևի կողմը, արևի ուղղությամբ. (առնչվում է) Գրիգորին—Գրիգորի հետ: *Քանի որ հայերենում չկա ուղղության հատուկ հոլով, ուղղության հետ կապված իմաստներն արտահայտվում են մասամբ ուղղականի («Հայցականի»), մասամբ տրականի օգնությամբ: Տրականին փոխարինող կապերն արտահայտում են գերազանցապես ուղղության՝ լինի այն ֆիզիկական թե հոգեկան առումով. այս դեպքում հանգման կապական խնդիրը կարող է արտահայտվել* գծով, դեմ, ընդդեմ, ի *(հնացած)*, ի հաշիվ, ի հեճուկս, ի սեր, ի վնաս, ի փառս, համար, հանդեպ, հանուն, հօգուտ, նկատմամբ, ուղղությամբ *և* ի–ով *(ն-ով) կազմվող այլ կապերի օգնությամբ: Դժվար չէ նկատել, որ այս կարգի կապերը բացի ուղղությունից արտահայտում են նաև գնահատում. այս առումով* գծով, դեպի, հետ, հանդեպ, նկատմամբ, ուղղությամբ *կապերը չեզոք են, իսկ* դեմ, ընդդեմ, ի հաշիվ, ի հեճուկս, ի վնաս *և* ի սեր, ի փառս, համար, հանուն, հօգուտ *կապերը արտահայտում են բացասական և դրական վերաբերմունք: Տրական հոլովով արտահայտված նպատակի պարագան կարող է փոխարինվել* համար, *նպատակով արտահայտված կապերով՝* (կանչեցին) համոզելու—համոզելու համար, համոզելու նպատակով: *Տրականով արտահայտվող նպատակի պարագան տարբերվում է տրականով արտահայտվող հանգման խնդրից նրանով, որ առաջին դեպքում հարաբերվում է գործողություն արտահայտող բառ՝ բայհիմք (բայանուն կամ անորոշ), երկրորդ դեպքում՝ անձ կամ իր-*

այլ կերպ ասած՝ խնդրի դեպքում մատնանշվում է այն անձը կամ իրը, դեպի որը, հօգուտ կամ ի վնաս որի կատարվում է տվյալ գործողությունը, բայց չի մատնանշվում օգուտի կամ վնասի իրական բնույթը, մինչդեռ նպատակի պարագայի դեպքում ուշադրության կենտրոնում է հենց գործողությունը. այս պատճառով էլ բացի համար և նպատակով կապերից նպատակ ցույց տալու համար կարող են օգտագործվել հանգման խնդրի համար գործածվող այլ կապեր ևս՝ ի սեր, հանուն և այլն:

Տրականով արտահայտված հետևանքի պարագան խիստ մասնակի դրսևորում ունի՝ հանդես գալով այն դեպքերում, երբ ստորոգելին արտահայտված է պատճառ, հիմունք, առիթ. հիմք տիպի բառերով, այլև երբ այդ բառերով և բայերով կազմվում են դարձվածային արժեք ունեցող կապակցություններ՝ հիմք ավեց, առիթ տրվեց և այլն. այս դեպքում պատճառը կամ հիմունքը բացահայտվում են բայանվամբ կամ անորոշով արտահայտված՝ որևէ գործողություն նկատի ունեցող ենթակայով՝ «Այս արշավանքը առիթ տվեց ռազմական պատրաստություններին»:

Տրականով արտահայտված ժամանակի պարագայի համար, եթե այն օգտագործվում է բայից համեմատաբար անկախ, ավելի սովորական է կաղապարի մեջ առաջնային դիրքը. այն կարող է նախորդել ոչ միայն տեղի պարագային, այլև նույնիսկ ենթակային՝ «Ճաշին նա եկավ»: Ժամանակի պարագան, բուն ժամանակ ցույց տալիս, կարող է արտահայտվել, բացի տրականից, նաև, ինչպես նշել ենք, ուղղականով և գործիականով («Ճաշին նա եկավ»—«Գիշերը նա եկավ»—«Գիշերով հավաքվեցին»):

Կեսօրին, ճաշին և համապատասխան գիշերը, ցերեկը բառաձևերը կարող են փոխարինվել նաև մինչև, նախման նախադրություններով և անց(ած), առաջ, դեմ, զուգընթաց, ընթացքում, ժամանակ, ժամին, ի վեր, կողմ, հետո, միջոցին, մոտ, շուտ, պահին, պես, սկզբին (սկզբում), սկսած, վերջին (վերջում), ուշ, որոշ ետադրություններով՝ մինչև կեսօր, նախման կեսօրը (նախման հավաքվելը), կեսօրից անց (երեք օր անց, երեք օր անցած), կեսօրից առաջ, կեսօրվա դեմ, աշխատանքին զուգընթաց, կեսօրվա ընթացքում (աշխատանքի ընթացքում), կեսօրվա ժամանակ (աշխատանքի ժամանակ), աշխատանքի ժամին, կեսօրից ի վեր, կեսօրվա կողմ, կեսօրից հետո, կեսօրվա միջոցին (աշխատանքի միջոցին), կեսօրվա մոտ, կեսօրից շուտ, կեսօրվա պահին (աշխատանքի պահին), ավարտելուն պես, կեսօրվա սկզբին

(սկզբում) [աշխատանքի սկզբին (սկզբում)], կեսօրից սկսած, կեսօրից վաղ, կեսօրվա վերջին (վերջում) [աշխատանքի վերջին (վերջում)], կեսօրից ուշ, թագավորի ornf (ornվ): *Ինչպես տեսնում ենք, ոչ բոլոր կապերն են կեսօր տիպի ժամանակային գոյականների հետ գործածվում. ա)* նախան *նախադրության և* ընթացքում, ժամանակ, ժամին, միջոցին, պահին, սկզբին (սկզբում), վերջին (վերջում) *եռադրությունների համար ավելի սովորական է գործածությունը անորոշի և բայանունների հետ. բ)* զուգընթաց *կապը, որ արտահայտում է զուգահեռ գործողության համաժամանակություն, գործածվում է միայն անորոշի և բայանունների հետ. գ)* պես-ը *գործածվում է միայն անորոշի հետ և ցույց տալիս հիմնական գործողության մի այլ գործողության անմիջական նախորդում. դ)* ornf-ը *գործածվում է անձնանիշ անունների հետ՝ բայանունների (հազվադեպ՝ անորոշի) ուղեկցությամբ կամ առանց սրանց («Տիգրանի* ornf*»—«Տիգրանի թագավորության* ornf*»—«Տիգրանի թագավորելու* ornf*»): Ժամանակային կապերն արտահայտում են նախորդում (*մինչև, նախքան, առաջ, կողմ, մոտ*), միաժամանակություն* (զուգընթաց, ընթացքում, ժամանակ, միջոցին, ornf, *այնքան որոշ նրբերանգով,* սկզբին, սկզբում, վերջին, վերջում) *և հաջորդում* (անց, անցած, ի վեր, հետո, սկսած), *ընդ որում* ի վեր, սկսած *և մինչև կապերը ցույց են տալիս հիմնական գործողության ժամանակի որոշ չափ՝ գնահատված նախորդող կամ հաջորդող գործողության ժամանակով, իսկ* սկզբին (սկզում), վերջին (վերջում) *կապերը միաժամանակյա գործողությունը տարբերակում են ըստ սկզբի և վերջի՝ ի տարբերություն ընթացակցության: Այս հարաբերությունները կարելի է արտահայտել 3-րդ գծագրով (էջ 447):*

Եթե կապերը զուգորդվում են ցուցական դերանունների հետ, որոնք ցույց են տալիս խոսելու ժամանակը կամ խոսողի նշած որևէ ժամանակակետ, ապա ժամանակի պարագան ստանում է իրադրական ժամանակի արժեք և փաստորեն ուժեղացնում կամ լրացնում է բայի իրադրական ժամանակը: Երբեմն ցուցականը կարող է միանալ ժամանակացույց կապի հետ (այս ժամին՝ այժմ) *կամ ինքնին հասկացվել [«Հետո կգամ» = «Սրանից հետո (=խոսելու ժամանակից հետո) կգամ»]: Այս զուգորդումներն ունեն ժամանակի մակբայի արժեք: Հիմա մակբայն առանց ցուցականի ունի հենց իրադրական արժեք (=այժմ):*



4. ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Մակբայների քննության ժամանակ մենք սահմանափակվեցինք հատկապես արմատականներով և առանձնացրինք տեղանիշ, ժամանականիշ ու չափաքանականիշ խմբեր։ Եթե նկատի առնենք նաև ոչ արմատական տիպերը, ապա այս խմբերը կարելի է լրացնել ձևի կամ որակական և պատճառա-նպատակային տիպերով։ Այլ կերպ ասած՝ մակբայները կխմբավորվեն ըստ մակբայական (մակորոշչային) գործառույթն ունեցող հարցական դերանունների խմբերի՝ nրտե՞ղ, ու՞r, ե՞րբ, n՞rfաճ (nրշա՞փ, ինչfա՞ճ, ինչշա՞փ), ինչպե՞ս, ինչու՞: *Ըստ այսմ կունենանք՝ 1) տեղի՝* nրտե՞ղ, ու՞r, *2) ժամանակի՝* ե՞րբ, *3) չափ ու քանակի՝* nrfա՞ճ, ինչfա՞ճ, nրշա՞փ, ինչշա՞փ, *4) ձևի կամ որակական՝* ինչպե՞ս *և 5) պատճառա-նպատակային մակբայներ՝* ինչու՞:

Տեսականորեն հնարավոր է բոլոր կարգի պարագաների համար մակբայական արտահայտություն, բայց հիմունքի և հակառակ հիմունքի պարագաները փաստորեն մակբայներով չեն արտահայտվում։ Ինչ վերաբերում է պատճառին և նպատակին, ապա դրանց որոշակիորեն տարբերակված մակբայական արտահայտությունը խիստ հազվադեպ է. հայերենում բացի հարցական ինչու՞ մակորոշչից (մակբայից). հարելի է նշել ամոթու, ի ճեճուկս, չգրու մակբայները։

Ինչպիսի՞ կաղապար են կազմում մակբայների տարբեր տիպերը, և ի՞նչ հարաբերության մեջ է այդ կաղապարը հոլովներով ու կապերով արտահայտված անդամների կաղապարի հետ։ Այս հարցը պարզելու համար նշենք, որ մեր կողմից առանձնացված, այսպես կոչված, տեղանիշ մակբայները՝ **առաջ, դուրս, ետ, ներս, մոտ, ներս, վայր (վար), վեր, ցած՝** *փաստորեն հանդես են գալիս որպես բայական վերլուծական բաղադրիչներ՝* **առ–, ներ–, առաջա–** *և այլ ածանցների արժեքով. հայերեն* **առաջ գնալ, դուրս գնալ, ետ գնալ, մոտ գնալ** *և այլն ձևերը հարաբերակից են անգլիական նախադրային (համմտ.* go in, go for, go on *և այլն) և ռուսական նախածանցավոր բայերին (համմտ.* в-ходить, у-ходить, пере-ходить *և այլն)։ Հասկանալի է, որ այս դեպքում բայր և հիշյալ բաղադրիչների կապը պետք է խիստ սերտ լինի (նրանք չեն ընդմիջվի այլ բառերով), և որ փաստորեն այս դեպքում մենք գործ չունենք իսկական տեղի մակբայների հետ։ Որպես այդպիսիք կարելի է դիտել կապական լրացումների քննության կապակցությամբ նշված՝ ներգոյական արժեքով այն կապերը, որոնք հանդես են գալիս (առանց գոյականի) նաև մակբայաբար՝* **առջևում, հետվում, կողքին, ներսում, դրսում** *և այլն։ Այս դեպքում կարելի է որոշել մակբայների հետևյալ կաղապարային բանաձևը՝* (((((a+)b+)c+)d+)e+)A, *որտեղ* a*-ն ժամանակի,* b*-ն տեղի,* c*-ն չափ ու քանակի,* d*-ն պատճառա-նպատակային և* e*-ն ձևի (որակական) մակբայներն են։ *Այս կաղապարային բանաձևի համար կարելի է բերել հետևյալ նմուշը (օրինակը)՝ «Հերու դրսում հաճախ ամոթու կուզեկուզ քայլում էր»։*

Մակբայների կաղապարային այս բանաձևի վերաբերյալ կարելի է ասել հետևյալը.

1) Այսպես կոչված, ձևի մակբայները միշտ չէ, որ իրոք որակական արժեք ունեն. քանի որ այս մակբայների բնույթը սովորաբար որոշվում է ինչպե՞ս *հարցով, ուստի և այս կարգի (կատեգորիայի) մեջ միավորվում են նաև բոլորովին այլ կարգերի, հատկապես չափ ու քանակի շատ մակբայներ. այսպես,* **արագ, դանդաղ, մեկ-մեկ, զույգ-զույգ, մեն-մենակ, միասին, առանձին-առանձին** *և այլ մակբայներ դիտվում են որպես ձևի մակբայներ, մինչդեռ դրանք բառիս բուն իմաստով չափ ու քանակի և, սրանից հետ կապված, կազմի մակբայներ են։ Բուն ձևի մակբայների մեջ պետք է դնել փաստորեն միայն այն մակբայները, որոնք իրոք ձև են ցույց տալիս, այսինքն՝ տարածականորեն ներկայացնելի (գծագրելի) ձև՝* **կուզեկուզ, հոտնկայս, շուրթթաթ** *և այլն՝ բստ շարժման*

ձևի գոյաբանական կարգի ընդհանուր դրսևորումների՝ կոր (շրջանաձև), անկյունավոր (անկյունաձև), ուղիղ-հարթ (ուղղաձև) և այլն: Այս առումով պետք է նկատի առնել, որ ձևը (ուղղության հետ միասին կամ առանց դրա) պարունակվում է երբեմն բայի մեջ ինքնին. համմտ. պառկել (ուղղաձև-հորիզոնական դիրք ընդունել), նստել (անկյունաձև դիրք ընդունել), կանգնել (ուղղաձև-ուղղահայց դիրք ընդունել), խոնարհվել (կորագծորեն թեքվել դեպի ներքև): Իմացականորեն ձևի հասկացությունը տարբեր է որակականության հասկացությունից. որակական մակբայներ ասելով պետք է հասկանալ որակական ածականներից կազմվող մակբայները կամ մակբայաբար գործածվող որակական ածականները՝ լինեն դրանք ֆիզիկական թե հոգեկան հատկությունների արտահայտիչներ՝ մեծապես, խորապես, լավ, վատ և այլն:

2) Պետք է հիշել, որ մակորոշիչները, որոշիչների նման, կարող են լինել իրադրական և ոչ իրադրական. իրադրական են հարցական և ցուցական մակորոշիչները (ու՞ր, ե՞րբ, ինչու՞ և այլն, այստեղ, այդտեղ, այսպես, այսքան և այլն), ոչ իրադրական՝ բուն չափաքանակական և, լայն առումով, որակական մակբայները (եթե այս անվան տակ նկատի առնենք ոչ միայն ձևի, այլև պատճառա-նպատակային և, ընդհանրապես երկու վիճակի տարբերակիչ հանդիսացող ու որպես բայի լրացում հանդես եկող մակբայները):

3) Ի տարբերություն գոյականական լրացումների կազապարի՝ բուն մակբայական լրացումների կազապարը պարունակում է միայն բային նախորդող անդամներ: Ընդհանրապես պետք է նշել, որ հայերենի ստորոգյալի համար ավելի բնորոշ է վերջածիգ դիրքը:

VI. ՀԱՐԱԲԵՐԻՉ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՌԱԽՄԲԵՐ

1. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Նախադասության և բայական բառակապակցության քննարկման ժամանակ մենք տեսանք, որ հարաբերական բառերը և բառախմբերը՝ շաղկապները, նախադասության ընդհանուր կազապարում գրավում են առաջնային դիրք: Սակայն որոշ նկատառումներով մենք նրանց քննարկումը տեղափոխեցինք կազապարային մյուս կարգերի քննարկումից հետո:

Հարաբերիչ բառերը և բառախմբերը մենք վերցրինք միասնաբար: Սակայն դժվար չէ համոզվել, որ ըստ բաշխման և մանրակազապարային դիրքի՝ նրանց մեջ կարելի է տարբերել երկու կարգ, որոնք միայն ավանդաբար են միավորվում շաղկապներ անվան

տակ։ Շաղկապների մի կարգը ա) կազապարի մեջ մյուսի նկատմամբ կարող է գրավել առաջնային դիրք (հմմտ. «Եվ եթե նա հասկանար խնդրի դժվարությունը...»), բ) կարող է հանդես գալ ոչ միայն նախադասություններին, այլև նախադասության և բառակապակցության մասերը (անդամները) կապակցողի (հարաբերողի) դերում (հմմտ. «Ես և Հակոբը դարձանք նրանց ուշադրության առարկան», «Բարձրագագաթ և գեղեցիկ լեռները» և այլն)։ Վերջին տիպի նախադասությունները և բառակապակցությունները կարող են մեկնաբանվել և հաճախ մեկնաբանվում են որպես այնպիսի երկու (կամ ավելի) նախադասությունների և բառակապակցությունների միացություններ, որոնց՝ շաղկապով չմիավորված մասն ընդհանուր է՝ «Ես դարձա նրանց ուշադրության առարկան»+«Հակոբը դարձավ նրանց ուշադրության առարկան»→«Ես և Հակոբը դարձանք նրանց ուշադրության առարկան». «Բարձրագագաթ լեռները»+«Գեղեցիկ լեռները»→ «Բարձրագագաթ և գեղեցիկ լեռները»։ Այս կարգի շաղկապները հանդես են գալիս որպես տարբեր մակարդակների և աստիճանների պատկանող միակարգ միավորների հարաբերիչներ՝ ի տարբերություն մյուս կարգի շաղկապների, որոնք միավորվում են միայն նախադասությունները։ Առաջին կարգի շաղկապները կոչվում են համադասական, երկրորդները՝ ստորադասական։ Այս անվանումները փաստորեն տրամաբանական արժեք ունեն. համադասական շաղկապները ցույց են տալիս միակարգ և միագործառական («համադաս») միավորների, ստորադասական շաղկապները՝ տարակարգ և տարագործառական («ստորադաս») այսինքն՝ լրացում-լրացյալի հարաբերության մեջ գտնվող միավորների հարաբերություններ։

2. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Ստորադասական շաղկապներ են կոչվում այն բառերն ու բառախմբերը, որոնք ցույց են տալիս, թե շաղկապվող նախադասություններից մեկը մյուսի ի՛նչ բաց տեղն է լրացնում։ Բուն առումով շաղկապները ցույց են տալիս առաջին հերթին բայիմաստների հարաբերություններ, սակայն,—քանի որ բայիմաստները տվյալ դեպքում հանդես են գալիս դիմավոր բայերի ձևով, որոնք ինքնին կամ լրացումներով հանդերձ կազմում են ամբողջական նախադասություններ,—ուստի և ստորադասական շաղկապները հանդես են գալիս որպես նախադասությունների հարաբերիչներ։ Ստորադասական շաղկապների իմաստները հարաբերակից են այն կապերի

իմաստներին, որոնք արտահայտում են բայիմաստ ունեցող միավորների (բայանունների և դերբայների) հարաբերությունները դիմավոր բայերի հետ. այս պատճառով էլ ստորադասական շաղկապներով արտահայտված նախադասությունները կարող են փոխակերպվել դերբայական ու բայանվանական անդամների, և ընդհակառակն: Միաժամանակ՝ այս նույն հիմունքով ստորադասական շաղկապների արտահայտած իմաստները մեծ մասամբ հարաբերակից են մակբայական իմաստներին: Ստորադասական շաղկապները պարտադրաբար պահանջում են դիմավոր բայի առկայություն, համադասականները՝ ոչ:

Սովորաբար նշում են, որ ստորադասական շաղկապները որպես նախադասության անդամ հանդես չեն գալիս, այլ արտահայտում են միայն ստորադաս նախադասության պաշտոնը, այն, թե ստորադասը գերադաս նախադասության որ՛ անդամին է փոխարինում: Սակայն հետևողական լինելու համար այս դեպքում պետք է կամ հարաբերական դերանունները չհամարել նախադասության անդամներ, կամ ստորադասական շաղկապների՝ նախադասության անդամներ չլինելու դրույթն ընդունել վերապահությամբ. իսկապես, ի՞նչ տարբերություն կա «Ես մոտեցա նրան, ում վաղուց էի ուզում տեսնել», «Ես ապրում էի այնտեղ, որտեղ արծիվներն էին բուն դնում» և «Ես նրան տեսա (այն ժամանակ), երբ որ (=որ ժամանակ) հույսս կտրած վերադառնում էի տուն» նախադասական կապակցությունների ում, որտեղ և երբ որ բառերի գործառական արժեքների միջև:

Ի տարբերություն համադասականների, ստորադասական շաղկապները կրկնավոր չեն լինում, այլ հանդես են գալիս որպես մենաշաղկապներ և տարանդամ զուգաշաղկապներ: Ճիշտ է, երկուսից ավելի ստորադաս նախադասություններ գլխավորի հետ կապելու դեպքում ստորադասական շաղկապը կարող է կրկնվել, բայց սա կապված է ոչ թե այդ շաղկապի, այլ հաղորդման ընդհանուր բնույթի հետ: Ստորադասական շաղկապների այսպիսի կրկնությամբ կազմված բարդ նախադասությունները հայտնի են «պարբերություն» անվամբ[26]:

Ստորադասական շաղկապները տարբերվում են նույնիմաստ կապերից նրանով, որ պարտադրաբար դրվում են դիմավոր բայերի հետ, այսինքն՝ հանդես են գալիս որպես նախադասությունների կապակցության արտահայտիչներ: Սակայն կան դեպքեր, երբ կա-

---

26 *Համմ.* Վ. Առաքելյան, *Հայերենի պարբերությունը*, Երևան, 1968:

սերը դործածվում են որպես ստորադասական շաղկապներ: Ժամանակակից հայոց լեզվի նորմաներով որպես ստորադասական շաղկապներ գործածվող կապերը պետք է ստանան nr կամ թե բաղադրիչը (հազվադեպ՝ երկուսն էլ)՝ մինչև—մինչև nr, նայած—նայած թե, չնայած—չնայած nr, ասես—ասես թե, կարծես—կարծես թե, ոնց—ոնց nr (ոնց nr թե), որպես—որպես թե, ման—ման թե, սակայն երբեմն այդ տեղի չի ունենում. կապերից նախման-ը և փոխանակ-ը որպես ստորադասական շաղկապներ գործածվում են ընդհանրապես առանց nr կամ թե բաղադրիչի. Համմտ. «Ես լուծեցի բոլոր կարևոր հարցերը նախման երևանից մեկնելը»—«Ես լուծեցի բոլոր կարևոր հարցերը, նախման երևանից կմեկնեի»:

Եթե մի կողմ թողնենք կապերի շաղկապային գործածությունները և խոսակցական-բարբառային լեզվին հատուկ ձևերը, ապա ժամանակակից հայերենի համար կարելի է նշել ստորադասական բնույթի հետևյալ միաբառ շաղկապները՝ այսինքն, եթե, երբ, թե. թեկուզ, թեպետ, թեև, հետևաբար, հետևապես. nr, որովհետև, որպեսզի, ուստի, ուրեմն: Որոշ վերապահությամբ ստորադասական շաղկապների շարքը կարելի է դասել նաև այնուամենայնիվ, այսուհանդերձ բառերը (և բայց և այնպես բառախումբը), որոնք հաճախ հանդես են գալիս թեպետ, թեև շաղկապների հետ միասին՝ կազմելով զուգաշաղկապներ:

Բառախմբային ստորադասական շաղկապները սովորաբար հանդես են գալիս թե, nr, և բաղադրիչներով՝ ասես թե, կարծես թե, որպես թե, ման թե, միայն թե, նայած թե, ինչ է թե, երբ nr, հենց nr, մինչև nr, մանավանդ nr, նամանավանդ nr, այնպես nr, չնայած nr, ինչ է nr, ոնց nr, թեկուզ և, թեպետ և, ուստի և, ուրեմն և. Հազվադեպ են ուժեղացնող բառ-մասնիկ ու մակբայ բաղադրիչ ունեցող շաղկապները՝ եթե միայն, ման դեռ. ասես (թե), կարծես (թե), որպես (թե) բառերն ու բառախմբերը բառիս բուն իմաստով շաղկապներ չեն, այլ եղանակական բառեր: Ընդհանրապես շաղկապների կազմը ըստ սերման բավականին խայտաբղետ է. բացի բուն շաղկապներից այստեղ տեղ են գրավում կապեր, եղանակական և հարաբերական բառեր, որոնք գրական նորմաներով կարող են շաղկապանալ nr, թե շաղկապների հարադրությամբ, բայց խոսակցական ոճով երբեմն գործածվում են առանց այդպիսի բառերի՝ մինչև, փոխանակ, նայած. ասես, կարծես: Որոշ շաղկապներ էլ սահացվում են ցուցական հարաբերյալի և հարաբերականի, ցուցական բառի և nr շաղկապի զուգորդմամբ՝ այնպես ինչպես. այն-

fան որfան, այնfանով որfանով, այնչափով որչափով, այնպես որ. *ընդ որում առաջին չորսը, ի տարբերություն բուն հարաբերականների, որոնք «ձևի» երկրորդական նախադասություններ են կապակցում, այս դեպքում հանդես են գալիս պատճառական շաղկապների արժեքով.* այնպես որ–ի բաղադրիչները կարող են գործածվել նաև որպես հարաբերյալ և շաղկապ (*«Նա քայլում էր* այնպես, որ *գետինը դմբում էր»—«Նա գաղտագողի մոտենում էր տանը,* այնպես որ *ոչ ոք ոչինչ չէր նկատում»*):

Անցնելով ստորադասական շաղկապների բաշխման և, սրա հետ կապված, իմաստային իմբերի քննությանը՝ ամենից առաջ պետք է նշենք, որ՝ ա) որոշ շաղկապների իմաստային արժեքը բացահայտվում է հարաբերակից ցուցական բառերի հետ դրվող այնպիսի բառերի միջոցով, ինչպիսիք են պատճառով (fանի որ—այդ պատճառով). նպատակով (որպեսզի—այդ նպատակով), դեպքում (եթե—այդ դեպքում), ավելի (ավելի—fան), *այսինքն՝ ակնհայտորեն առկա են շաղկապների պատճառական, նպատակային, պայմանական և համեմատական արժեքները. բ) ինքնին և* որ, *թե շաղկապների օգնությամբ որպես ստորադասական շաղկապներ գործածվող* մինչև, նայած, չնայած, ասես, կարծես, որպես, fան *բառերի իմաստը հայտնի է կապերի բաշխական և իմաստային քննությունից. դրանք են ժամանակային (ավելի ճիշտ՝ ժամանակաչափային՝ մինչև, մինչև որ. մինչև–ը իբրև կապ գործածվում է նաև տեղանիշ իմաստով), հիմունքի* (նայած, նայած թե), *հակառակ հիմունքի* (չնայած, չնայած որ), *համեմատության* (ասես, ասես թե, կարծես, կարծես թե, որպես, որպես թե, ոնց որ, ոնց որ թե, fան թե) *իմաստները. գ) շաղկապների իմաստների բացահայտման համար նյութ է տալիս նախադասությունների փոխակերպումը դերբայական դարձվածների ու բայանվանական կառույցների, և ընդհակառակն:*

Այսպիսով, ստորադասական շաղկապների դասակարգումը և իմաստային տիպերի բացահայտումը կարող է կատարվել առաջին հերթին այն բանի հիման վրա, թե շաղկապների և կապակցական բառերի ու բառախմբերի ի՛նչ կարգերի հետ են նրանք գուգորդվում, և թե նախադասությունների փոխակերպման ժամանակ ի՛նչ կարգի կապերով են փոխարինվում: Բացի սրանցից, հարկավոր է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, թե ստորադասական շաղկապները դիմավոր բայերի եղանակային ի՛նչ ձևերի հետ են զուգորդվում՝ «եղանակ» բառի լայն առումով (ոչ միայն բուն եղանակը, այլև հաստատականությունն ու ժխտականությունը): Տեղ

ինայելու նպատակով բերում ենք միայն միաբառ և որ-ով ու թե-ով ուղեկցվող երկբառ շաղկապները. դժվար չէ համոզվել, որ մնացած շաղկապները, լինեն դրանք մենաշաղկապներ թե զուգաշաղկապներ, իմաստային նոր տիպեր չեն դրսևորում, այլ մյուսներից տարբերվում են պատմական-ծագումնային և ոճական առումով՝ հանդես գալով որպես համանիշ ձևեր: Ստորադասական շաղկապների՝ բայի եղանակային ձևերի հետ ունեցած բնորոշ զուգորդելիությունը կարելի է արտահայտել 25-րդ աղյուսակով.

Աղյուսակ 25

Ստորադասական շաղկապներ	Նրանց համար բնորոշ զուգորդելիությունը եղանակային ձևերի հետ					
	Հաստատա-ժխտական ձևեր		Բուն եղանակային ձևեր			
	գրում է գրի կգրի	չի գրում չգրի չի գրի	գրում է	գրի	կգրի	գրի՛ր
1. այսինքն	+	+	+	+	+	+
եթե (թե)	+	+	—	+	—	—
երբ	+	—	+	+	+	—
թե (ոչ եթե» իմաստով)	+	+	+	+	+	—
թեկուզ	+	+	—	+	—	—
թեպետ	+	+	+	—	+	—
թեև	+	+	+	—	+	—
հետևաբար	+	+	+	+	+	+
հետևապես	+	+	+	+	+	+
որ	+	+	+	+	+	—
որովհետև	+	+	+	—	+	—
որպեսզի	+	+	—	+	—	—
ուստի	+	+	+	+	+	+
ուրեմն	+	+	+	+	+	+
քանի	+	—	+	+	+	+
2. ասես թե	+	+	+	—	+	—
իբր թե	+	+	+	—	+	—
կարծես թե	+	+	+	—	+	—
միայն թե	+	+	—	+	—	+
նայած թե	+	+	+	+	+	—
որպես թե	+	+	+	—	+	—
քանի թե	+	—	+	+	+	+
3. այնպես որ	+	+	+	+	+	+
երբ որ	+	—	+	+	+	—
հենց որ	+	—	+	+	+	—
մինչև որ	+	—	+	+	+	—
թե որ	+	+	—	+	—	—
չնայած որ	+	+	+	—	+	—
մանավանդ որ	+	+	+	—	+	—
նամանավանդ որ	+	+	+	—	+	—
քանի որ	+	+	+	—	+	—

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1. Ստորադասական բոլոր շաղկապները կարող են զուգորդվել բայի հաստատական ձևերի հետ. այսպիսով, բայական հաստատական ձևերը շաղկապների գործածության սահմանափակումներ չեն մտցնում և փաստորեն պետք է հանվեն աղյուսակից որպես մեր քննության համար հավելուրդային ձևեր. նրանք բերվեցին այդ բանում համոզելու համար:

2. երբ, ման, ման թե, երբ nr, հենց nr, մինչև nr ստորադասական շաղկապները, որոնց համար բնորոշ չէ ժխտական ձևերի հետ կապակցվելը, պատկանում են երկու իմաստային խմբի՝ ժամանակային (երբ, երբ nr, հենց nr, մինչև nr) և համեմատական (ման, ման թե). և սա հասկանալի է. ժամանակի և համեմատության ստորադաս նախադասությունները ծառայում են գերադաս նախադասության մեջ արտահայտվածի ժամանակի ճշտմանը կամ գերադասի հետ ունեցած չափային առավելության ու նվազականության բացահայտմանը: Հետաքրքրական է նշել, որ որոշ կասկածով համապատասխանության հարաբերություն արտահայտող ասես (թե), կարծես (թե), nրպես (թե) շաղկապները, ի տարբերություն ման–ի և ման թե–ի, կարող են ժխտական ձևերի հետ գործածվել. սակայն այս դեպքում ժխտական ձևը փոխարինելի է վիճականիշ դրական ձևով. «Այնպես էր քայլում, ասես թե հաց չէր կերել» (=«...ասես թե քաղցած էր»). սա նույնպես հասկանալի կլինի, եթե նկատի առնենք, որ այս բառերն ու բառախմբերը եղանակիչներ են, որ երկրորդաբար են ձեռք բերել շաղկապական արժեք:

3. եթե, թեկուզ, nրպեսզի, միայն թե, թե nr ստորադասական շաղկապները, որոնց համար բնորոշ չէ սահմանական բայաձևերի հետ կապակցվելը, արտահայտում են ենթադրական բնույթի գործողություններ՝ պայմանական (եթե, թե nr, թեկուզ, միայն թե) և նպատակային (nրպեսզի). նշենք որ թեկուզ–ը զուգակցում է պայմանականությունը զիջականության (հակառակ հիմունքի) արտահայտության հետ:

4. Այսինքն, հետևաբար, հետևապես, ուստի, nրեմն, այնպես nr ստորադասական շաղկապները կարող են գործածվել բոլոր եղանակային ձևերի հետ առանց սահմանափակության. այս կամ այն եղանակաձևի ընտրությունը կախված է գերադաս նախադասության բայեղանակի բնույթից. տեղի է ունենում տվյալ շաղկապներով կապված նախադասությունների եղանակային համաձայնություն. սրանք արտահայտում են հետևանքային (այնպես nr), մակաբերական (տրամաբանական հետևության՝ հետևաբար, հետևա-

պես, ուսոի, ուրեմն) և *մեկնական (բացահայտության՝ այսինքն) իմաստներ:*

5. Թեպետ, թեև, որովհետև, մանավանդ որ, նամանավանդ որ, բանի որ *սորտադասական շաղկապները չեն զուգակցվում ըղձական բայաձևերի հետ, այլ սահմանական և այսպես կոչված պայմանական (կգրի) տիպի այն բայաձևերի հետ, որոնք հավաստի գործողության են ցույց տալիս. սրանք պատճառական (որովհետև, մանավանդ, նամանավանդ որ, բանի որ) և զիջական (հակառակ հիմունքի՝ թեպետ, թեև) իմաստներ են արտահայտում. ինչպես նշվեց, թեկուզ-ը զուգակցում է զիջականության և պայմանականության իմաստները, թեև այն սովորաբար դնում են զիջական շաղկապների մեջ:*

6. *Ըստ բաշխման առանձին խումբ են կազմում թե և որ շաղկապները, որոնք հայտնի են «մեկնական» անվամբ. սրանցով արտահայտված նախադասությունները ցույց են տալիս գլխավոր նախադասությունների արտահայտած իմացական և զգացական երևույթների օբյեկտները՝ որ-ը հավաստիաբար, թե-ն կասկածով՝ «Ասաց, թե գնում է» «Ասաց, որ գնում է» «Զգաց, որ վատանում է» և այլն: Թե-ն և որ-ը արտահայտում են հատկապես ուրիշի խոսքը՝ անուղղակի ձևով, սեփական շարադրանքով: Թե-ն (հազվադեպ նաև որ-ը) ժողովրդա-խոսակցական լեզվում կարող է զուգակցվել նաև հրամայականի հետ՝ համադրելով ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքի որոշ առանձնահատկություններ՝ «Ասաց, թե գնա՛»՝ փոխանակ «Ասաց, որ գնամ» և «Ասաց. գնա՛» ձևերի: Նշենք, որ հատկապես ժողովրդա-խոսակցական լեզվում թե-ն կարող է օգտագործվել եթե-ի, որ-ը՝ որպեսզի-ի, եթե-ի, որովհետև-ի, երբ-ի իմաստներով, այսինքն՝ երկուսն էլ սինկրետիկ ձևով արտահայտում են շաղկապական տարբեր իմաստներ: Գնալով կոպիտ ընդհանրացման ճանապարհով՝ կարելի է ասել, որ որ-ը սորտադասական շաղկապների մեջ կատարում է գրեթե նույն բաղմակի դերը, ինչ և-ը համադասականների մեջ:*

Վերևում ասվածների հիման վրա կարելի է կատարել սորտադասական շաղկապների իմաստային դասակարգում:

Ամենից առաջ կարելի է տարբերել շաղկապների երկու խումբ՝ ըստ հաղորդման նշանային, թե օբյեկտային ուղղվածության.

I. Շաղկապներ, որոնց դեպքում հաղորդումը նշանային ուղղվածություն ունի. այս շաղկապները երկու կարգի են.

1) Մեկնական (որ, թե), որոնք ցույց են տալիս գործողության, որպես հաղորդման օբյեկտի, նշանային ուղղվածությունը,

այսինքն՝ առարկան (տվյալ դեպքում գործողությունը) որպես նշանակվող. մեկնաբանական շաղկապները երկու տիպի են լինում՝ ըստ օբյեկտի հավաստիության (nr) և անհավաստիության (թե). եթե նշանը նշանակենք M-ով, օբյեկտը՝ S-ով, ենթադրական (անհավաստի) օբյեկտը՝ Շ-ով (հրչվաճ S), ապա որ-ի համար կունենանք (M)→S, թե-ի համար՝ (M)→Շ բանաձևերը[27]:

Ճ) Բացահայտական (այն է, այսինքն), որոնք ցույց են տալիս, տարբեր նշանների՝ միևնույն օբյեկտին վերաբերելը, ընդ որում անծանոթ նշանը բացահայտվում է ծանոթի միջոցով. բացահայտական շաղկապների արժեքը կարելի է ցույց տալ $M_1 \to S = M_2(\to S)$ բանաձևով:

II. Շաղկապներ, որոնց դեպքում հաղորդումը օբյեկտային ուղղվածություն ունի: Այս շաղկապները ևս բաժանվում են երկու խմբի՝ համեմատության և կախման,

1) Համեմատության շաղկապները լինում են բուն (նյութական) և ժամանակային համեմատության. առաջին դեպքում կատարվում է որակական (բովանդակային), երկրորդ դեպքում՝ ժամանակային (ծավալային) համեմատություն: Սրանց հարաբերությունը նույնն է, ինչ առարկաների համեմատության դեպքում բուն համեմատությունը և տեղի համեմատությունը՝ $S_1 r S_2$ և $S_1 r \bar{S}_1(S_2)$ բանաձևերով, որտեղ r-ը ցույց է տալիս հարաբերություն, S_1-ը և S_2-ը՝ տարբեր առարկաներ, $\bar{S}$-ը՝ S-ի, որպես նյութական առարկայի, ժխտումը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ նյութական առարկայի դեպքում՝ տարածություն, գործողության դեպքում՝ ժամանակ, ընդ որում փակագծերում առնված միավորները ցույց են տալիս կողմնորոշող առարկաներն ու գործողությունները.

$S_1 r S_2$—*Հակոբը կարծես Գրիգորն է.*

Քայլում է, կարծես վազում է.

$S_1 r \bar{S}_1(S_2)$—*Հակոբը քաղաքում է (քաղաքի մեջ է):*

Երգում է, երբ քայլում է (քայլում = քայլելու «մեջ» = քայլելու ժամանակ).

ա) Բուն համեմատության շաղկապները, ինչպես նշվել է, մեծ մասամբ եղանակիչ և հարաբերական բառեր և բառախմբեր են (**ասես, ասես թե, ինչպես, ինչպես թե, կարծես, կարծես թե, ոնց, ոնց nr, ոնց nr թե**), *մասամբ էլ բուն շաղկապներ* (**բան, բան թե**):

---

27 *Տվյալ դեպքում նկատի չենք առնում թե-ի ոճական գործածությունը nr-ի փոխարեն՝ վերջինս չկրկնելու նպատակով. համմ. «Նա ասաց, nr ինքը հիվանդ, թե...»:*

սրանք կարելի է համադրել առավելության և նվազականության հատկանիշներով՝ ըստ 26-րդ աղյուսակի.

Աղյուսակ 26

Հատկանիշներ	Իմաստային եզրեր			
	Պարբերական (փոփոխական) համապատասխանություն	Առավելություն	Նվազականություն	Համապատասխանություն
Առավելություն	+	+	−	−
Նվազականություն	+	−	+	−

Համապատասխանությունն արտահայտվում է եղանակային բառերից և բառախմբերից ծագած շաղկապների միջոցով, որոնք մեծ մասամբ ցույց են տալիս կատարած (ասես թե, կարծես թե և այլն), հազվադեպ՝ հավաստի համապատասխանություն (ինչպես **որ**):

Անհամապատասխանության համեմատությունն արտահայտվում է **քան, քան թե** *շաղկապների և հարաբերակից* **ավելի, ավելի շատ** *(առավելության), ավելի* **քիչ, ավելի պակաս** *(նվազականության) բառերի միջոցով։ Պարբերական (փոփոխական) անհամապատասխանությունը կարող է արտահայտվել* **քան, քան թե** *շաղկապների ու հարաբերակից բառերի և* **մեկ—մեկ, մերթ—մերթ** *և այլն կրկնավոր շաղկապների հարադրությամբ՝* **մերթ ավելի շատ, մերթ ավելի քիչ—քան**:

*բ) Ժամանակային շաղկապները (***երբ, երբ որ, թե չէ, հենց, հենց որ, մինչև որ, մինչ, նախքան, քանի որ, քանի դեռ***) արտահայտում են նույն իմաստները, ինչ բայական ժամանակի մասնիկները, միայն թե երկրորդ դեպքում համեմատության եզր է ծառայում խոսելու կամ խոսողի ընտրած պահը, մինչդեռ շաղկապները կողմնորոշվում են դեպի որևէ այլ գործողություն՝ սրա անմիջական մատնանշմամբ. ժամանակային այդ իմաստները կարտահայտվեն նախորդման և հաջորդման հատկանիշներով (աղյուսակ 27, էջ 459)։*

Թե չէ, հենց, հենց որ, նախքան *շաղկապներն արտահայտում են նախորդում,* **մինչ, մինչև, մինչև որ, քանի դեռ** *շաղկապները՝ հաջորդում, ընդ որում հաջորդում ցույց տվող շաղկապներից* **քանի դեռ***–ը գործածվում է ժխտականի հետ («Քանի դեռ չի եկել, գնամ»)։* **Քանի***–ն սովորաբար արտահայտում է պարբերականու-*

Հատկանիշներ	Իմաստային եզրեր			
	Մշտականություն և պարբերականություն	Նախորդում	Հաջորդում	Համաժամանակություն
Նախորդում	+	+	—	—
Հաջորդում	+	—	+	—

թյուն («Քանի գնում է, նրան է տեսնում»)։ Երբ–ը սովորաբար արտահայտում է համաժամանակություն, բայց ըստ բայական ժամանակների ու կոնտեքստի, այլև ըստ հարաբերական բառերի ու բառախմբերի (այն բանից հետո, երբ և այլն) կարող է արտահայտել նաև նախորդում ու հաջորդում։ Երբ որ–ը սովորաբար արտահայտում է նախորդում, բայց կարող է արտահայտել և համաժամանակություն։

2) Կախման շաղկապներն ավելի բազմազան են և կարող են խմբավորվել երեք կարգի հատկանիշով՝ ըստ ժամանակի (նախորդում և հաջորդում), ըստ հակադրության (վերջին հաշվով՝ ըստ նախադասության «որակի»՝ հաստատում-ժխտականություն) և ըստ եղանակավորության (ենթադրականություն և հավաստիություն)։ Այլ կերպ ասած՝ սրանց հիմքում ընկած են համադասական, ժամանակային և նշանային ուղղվածություն ունեցող շաղկապների հիմնական տարբերությունները։ Ընտրելով հակադրվող հատկանիշներից մեկական եզրեր, կստանանք կախման շաղկապների հետևյալ իմաստային կարգերը (աղյուսակ 28, էջ 460)[28]։

Եթե բացառենք հետևանքա-հակադրական և նպատակա-հակադրական կարգերը, որոնք հայերենում հատուկ շաղկապային արտահայտություն չունեն (կարող են դրսևորվել նկարագրորեն), մյուսների համար կարելի է բերել հետևյալ բանաձևերը՝ ըստ օբյեկտների, ընդ որում օբյեկտները (տվյալ դեպքում գործողությունները) նշանակվում են տառերով, նախորդայնությունը՝ տառերի դիրքով, ենթադրականությունը տառերի շրջումով և հակադրայնությունը՝ ժխտական նշանով։

28 Կարգերի անվանումների հետ միասին բերում ենք շաղկապների մեկական օրինակներ։

Հատկանիշներ	իմաստային եզրեր							
	ենթադրական-ձևային (իմաստի դեմ)	հակադրական (իմաստի դեմ)	պատճառական (—) դրական	հետևանքական (—) դրական	պայմանի (եթե)	զիջական (թեև, չնայած)	վերլուծական (ինչպես)	ոչ սահմանափակիչ (ոչ սահմանափակ)
Հակադրականություն	+	+	+	+	—	—	—	—
Նախադրյալություն	—	+	—	—	+	+	—	—
Ենթադրականություն	+	—	+	+	+	—	+	—

ա) Պատճառի — $(S_2) \rightarrow S_2$

բ) Հետևանքի — $S_1 \rightarrow (S_2)$

գ) Իրական-զիջական — $S_1 \rightarrow (\bar{S}_2)$

դ) Ենթադրական-զիջական $S_1 \rightarrow (\bar{S}_2)$

ե) Նպատակի — $(S_1) \rightarrow S_2$

զ) Պայմանի — $S_1 \rightarrow (S_2)$

Կախման ստորադասական շաղկապները բաշխվում են հետևյալ կերպ.

ա) Պատճառի՝ մանավանդ որ, նամանավանդ որ, որ, որովհետև, չէ՞ որ, բանի որ.

բ) Հետևանքի (մակաբերական)՝ ա) օբյեկտային՝ այնպես որ, *բ) նշանային (գատոզական, եզրահանգման)՝* հետևաբար, հետևապես, ուստի, ուստի և, ուրեմն, ուրեմն և.

գ) Իրական-զիջական՝ թեպետ, թեպետև, թեև, չնայած, չնայած որ, փոխանակ.

դ) Ենթադրական-զիջական՝ թեկուզ, թեկուզ և.

ե) Նպատակի՝ թե ինչ է, ինչ է թե, ինչ է որ, միայն թե, որ, որպեսզի.

զ) Պայմանի՝ եթե, եթե միայն, թե թե որ, միայն թե, նայած, նայած թե, բանի դեռ:

VII. ԲԱՅԵՐԻ ԿԱՊԱԿՑԵԼԻԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

1. ԲԱՅԵՐԻ ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Բայերի կապակցելիական դասակարգում ասելով պետք է հասկանալ բայերի դասակարգումը ըստ նախադասությունը կազմող բառերի և բառախմբերի հետ նրանց ունեցած կապակցելիության, այսինքն՝ ըստ այն բանի, թե նախադասությունը կազմող բառերի ու բառախմբերի ո՛ր տեսակների հետ նրանք կարող են կապակցվել և ո՛ր խմբերի հետ՝ ոչ: Այս դասակարգումը վերջ ի վերջո հանգում է բայերի իմաստային դասակարգմանը՝ ըստ նրանց բաշխման տիպերի: Քանի որ ստորոգյալը կազմվում է գերազանցապես դիմավոր բայաձևերով, ուստի և, բնականաբար, բայերի կապակցելիական դասակարգումը պետք է կատարվի ստորոգյալի քննության հետ կապված՝ սրան նվիրված հատվածում: Եթե մենք նախադասության և բայական բառակապակցության քննությունը կատարելիս վերանայենք դրանք կազմող բառերի ու բառախմբերի իրական հաջորդականությունից և ստորոգյալը քննենք նախադասության վերջում, ապա բայերի կապակցելիական դասակարգումը կկատարվեր հենց ստորոգյալին նվիրված հատվածում՝ մյուս բոլոր տարբերիչ ու հարաբերիչ բառերի ու բառախմբերի՝ արդեն քննված տեսակների հիման վրա: Սակայն մենք նախ՝ ընդհանուր սկզբունք ենք ընդունել լեզվական միավորների քննությունը կատարել ըստ հայոց լեզվի կաղապարներում նրանց ունեցած բնական հաջորդականության և երկրորդ՝ որոշ նկատառումներով հարաբերիչ բառերի ու բառախմբերի քննությունը տեղափոխել ենք տարբերիչ բառերի քննությունից հետո. այսպիսով, ստորոգյալի քննությունը փաստորեն բաժանվում է երկու հատվածի, որոնցից մեկը դրվում է ենթակայական բառերի ու բառախմբերի, մյուսը՝ բոլոր մնացած բառերի ու բառախմբերի քննությունից հետո:

Բայերի կապակցելիական դասակարգում ասելով մենք հասկանում ենք բայերի երեք կարգի դասակարգում՝ դասանշային, արժութային և ընտրութային: Բայերի դասանշանային դասակարգումը բայերի խմբավորումն է ըստ ենթակայի դասային տարբեր խմբերի հետ կապակցվելու կամ չկապակցվելու: Բայերի արժութային դասակարգումը բայերի խմբավորումն է ըստ առարկայանիշ բառերի ու բառակապակցությունների (գոյականների ու գոյականական բառակապակցությունների, այսինքն՝ ենթակայի, գոյականական

ստորոգելիի, խնդիրների և գոյականական պարագաների) հետ նրանց ունեցած կապակցելիության։ Բայերի ընտրութային դասակարգումը բայերի խմբավորումն է ըստ մակբայների հետ նրանց ունեցած կապակցելիության։

Բայերի կապակցելիական դասակարգման ժամանակ մենք նկատի չենք առնում նրանց կապակցելիությունը եղանակիչ բառերի ու բառախմբերի և հարաբերիչ բառերի ու բառախմբերի հետ, որովհետև դրանք բայերի գործածության սահմանափակումներ գրեթե չեն առաջացնում։

Եթե մենք բայերը հանգամանալից դասակարգման ենթարկենք հիշյալ երեք հայեցակետով, ապա կունենանք բայերի բոլոր հնարավոր տեսակները. մնացած բոլոր տարբերությունները կլինեն համանշային արժեքի։ Այսպիսով, բայերի իմաստային բովանդակությունը փաստորեն սպառվում է առարկայական հարաբերությունների և դասային ու մակբայական տարբերությունների արտահայտությամբ՝ համանշային և ստուգաբանական զանազան տարբերություններով հանդերձ։ Միաժամանակ՝ քանի որ բայերը, ինչպես ցույց է տալիս սեմական լեզուների օրինակը, կարող են ընկնել անվանական բոլոր հիմնական իմաստների արտահայտության հիմքում, ապա բնական է կառուցել այնպիսի կաղապար, որն արտացոլի բայական բառակապակցության բոլոր դրսևորումները, և մնացած տարբերությունները ստանալ սերման ճանապարհով։ Այս հավանականությունն ավելի կմեծանա, եթե մենք նկատի առնենք ստորոգյալն ավելի լայն առումով՝ դիմավոր բայը, «ածական+օժանդակ բայ» կապակցությունը և անդեմ-եղանակական (պետք է, հարկավոր է և այլն) կապակցությունները, որոնք կսպառեն օբյեկտիվ-առարկայական և սուբյեկտիվ-վերաբերողական բոլոր կարգի տարբերությունների արտահայտությունը։

2. ԲԱՅԵՐԻ ԴԱՍԱՆՇԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Բայերի դասանշային դասակարգումը կապված է արժութային և ընտրութային դասակարգումների հետ։

Այսպես, արժույթի դրսևորումներից մեկը բայերի կապակցելիությունն է վերաբերության խնդրի հետ («Այսինչ անձի կամ բանի մասին»)։ Քանի որ մասին կապը ցույց է տալիս նշանի հարաբերությունը դեպի նշանակվող առարկան, այսինքն՝ նշանի և օբ-

յեկտի փոխհարաբերությունը, ուստի և մասին *կապով խնդիրներ են ստանում հոգեկան ակտիվ գործողություններ ցույց տվող բայերը, որոնք բնորոշում են բանական էակներին (անձերին)։* Մասին *կապից ավելի լայն շրջանակ է ընդգրկում* nr *շաղկապ-հարաբերիչը՝ ցույց տալով ոչ միայն իմացության և հաղորդման, այլև զգայության և ազդանշման առարկան, այսինքն՝ բնորոշելով կենդանի արարածներին ընդհանրապես։ Այսպես, մասին–ով խնդիր են պահանջում* ատենաբանել, ատենախոսել, դատել «դատողություն անել», երազել, զեկուցել, իմանալ, խորհել, խոկալ, խորհրդածել, հաղորդել, հայտնել, տածել, վկայել, տեղեկանալ *և այլն բայերը, որոնք արտահայտում են մարդուն հատուկ մտածողական և հաղորդակցական գործողություններ։ Այս նույն բայերը մեծ մասամբ մասին–ով խնդրի փոխարեն կարող են ստանալ* nr *շաղկապով ստորադաս նախադասություններ՝* հաղորդել, nr..., մտածել, nr... *տեղեկանալ, nr... և այլն։ Սակայն nr-ով նախադասություններ կարող են ստանալ նաև զգայական* (զգալ, լսել, տեսնել *և այլն) և դիմողական-հրամայողական բայերը* (խնդրել, կարգադրել, հանձնարարել, հրամայել, ցանկանալ, ուզել *և այլն)։*

Դասանշային արժեք ունի նաև բայերի ընտրութային դասակարգումը, եթե մակբայները արտահայտում են առարկայական տարբեր դասերի պատկանող հատկություններ. և այս ոչ այնքան բուն մակբայների, որքան –աբար, –ապես,–որեն ածանցներով այն ածականներից և գոյականներից կազմված մակբայների դեպքում, որոնք բնորոշում են առարկաների տարբեր խմբերը։ Այսպես, ազնվաբար, բարեկամաբար, գիտակցաբար, ընկերաբար, թշնամաբար, հայրաբար, բարոյապես, գաղափարապես, պաշտոնապես, բազմականապես, բարեխղճորեն, միամտորեն, անգիտակցորեն *և այլն մակբայները բնորոշում են անձերի հատկություններ և, հետևաբար, կարող են գործածվել հատկապես անձերին բնութագրող բայերի հետ. հմմտ.* բարեկամաբար ակնարկել, ասել, գրել, դիմել, ընդունել, խնդրել, խոսել, հորդորել, ձայնել *և այլն.* միամտորեն ասել, կարծել, մտածել *և այլն։*

Սակայն բայերի դասանշային դասակարգումը նեղ իմաստով, ինչպես ցույց է տալիս անվանումը, բայի կապակցելիության հնթակայի դասային տարբեր խմբերի հետ։ Այս առումով բայերի դասակարգումը նման է որոշչի դեր կատարող ածականների դասակարգմանը, ածականներ, որոնք կարող են հանդես գալ ոչ միայն

որոշչային, այլև ատրոգելիական գործառույթամբ։ Բայերի կապակցելիությունը ենթակայի իմաստային տարբեր դասերի հետ՝ նույնական է բայերի դերբայական ձևերի (դերբայական ածականների) կապակցելիությանը գոյականների տարբեր դասերի հետ։

Գոյականները քննելիս մենք տարբերեցինք չորս դաս՝ վերացական, անձնանիշ, իրանիշ և ժամանականիշ անունների։ Պահպանելով դասերի քանակը՝ միացնենք վերջին երկուսը և իմաստաբանական-իմացական ; հիմունքով ավելացնենք կենդանիների («շնչավորների») դասը։ Սրանք դիտելով որպես բայական իմաստային խմբերի տարբերիչ հատկանիշներ՝ կունենանք բայերի դասանշային տասնվեց կարգ (տիպ, խումբ) (աղյուսակ 29, էջ 465)։

Բայական յուրաքանչյուր կարգի (տիպի) համար բերենք համապատասխան օրինակներ՝ ապագային թողնելով բայերի դասանշային հանգամանալից դասակարգումը (աղյուսակ 30)։

Աղյուսակների կապակցությամբ կարելի է նշել հետևյալը.

1. Իմաստային բոլոր կարգերը լեզվական առումով հավասարարժեք չեն. կան խիստ բազմանդամ խմբեր (միայն մարդկանց, միայն իրերին վերաբերող, մարդկանց և կենդանիներին վերաբերող բայախմբեր), մինչդեռ որոշ խմբեր ներկայացված են կամ հատուկենտ օրինակներով, կամ էլ ընդհանրապես բացակայում են. վերջին հանգամանքը հարկավոր է ճշտել բայերի հետագա հանգամանալից դասակարգմամբ։

2. Բազմադաս (մեկից ավելի դասերի վերաբերող) բայերի մեջ դասանշային տարբեր իմաստների զուգակցումը տեղի է ունենում մեծ մասամբ փոխաբերական ճանապարհով. առանձնապես հաճախակի է անձերին և կենդանիներին վերաբերող բայերի գործածությունը իրերի նկատմամբ՝ շնորհիվ սրանց անձնավորման և շնչավորման։

3. Լեզուների տարբերությունների մի զգալի մասն էլ կապված է բայերի դասանշային կապակցելիության տարբերությունների հետ։

4. Մենք վերցրինք դասային չորս կարգերից մեկական բառեր. բայց կան այս կամ այն դասին պատկանող բառերի ենթակարգերի հետ բայերի կապակցելիության տարբերություններ. այսպես, կենդանիների տարբեր տեսակների անվանումների հետ կապակցվում են ձայնանիշ տարբեր բայեր՝ **կովը բառաչում է, ոչխարը մայում է, թռչունը ծլվլում է և այլն**։

Ուժեղացնող գործոններ (d)	Իրար հակադրող գործոններ (c)	Թուլացնող գործոններ (b)	Անհրաժեշտ գործոններ (a)	Դասակարգման հիմքերը	Դասակարգման հիմքերի հարաբերակցությամբ տեղերի բաշխումը
+	+	+	+	1. (Sabcd)V	(Բոլոր հնարավոր) տիպ
+	+	+	+	2. (Sabc)V տիպ	
+		+	+	3. (Sabd)V տիպ	
+	+		+	4. (Sacd)V տիպ	
+	+	+		5. (Sbcd)V տիպ	
		+	+	6. (Sab)V տիպ	
	+		+	7. (Sac)V տիպ	
+			+	8. (Sad)V տիպ	
	+			9. (Sbc)V տիպ	
		+	+	10. (Sbd)V տիպ	
+	+			11. (Scd)V տիպ	
			+	12. (Sa)V տիպ	
		+		13. (Sb)V տիպ	
				14. (Sc)V տիպ	
				15. (Sd)V տիպ	
				16. Ինքնորոշ-ված տիպ	

Կարգեր	Զուգորդման տիպեր	Օրինակներ
1	(Sabcd)V	մարդը, կենդանին, իրը, խոսքը մնում են
2	(Sabc)V	մարդը, կենդանին, իրը լողում են
3	(Sabd)V	մարդը, կենդանին, խոսքը հուզում են
4	(Sacd)V	մարդը, իրը, խոսքը էլեկտրականացնում են
5	(Sbcd)V	կենդանին, իրը, խոսքը անձնավորվում են
6	(Sab)V	մարդը, կենդանին ծնվում են
7	(Sac)V	մարդը, իրը ծխում են (ծխով լցնում են)
8	(Sad)V	մարդը, խոսքը քաջալերում են
9	(Sbc)V	կենդանին, իրը կրվում են
10	(Sbd)V	կենդանին, խոսքը թռչում են
11	(Scd)V	իրը, խոսքը հնանում են
12	(Sa)V	մարդը մտածում է
13	(Sb)V	կենդանին սատկում է
14	(Sc)V	իրը մաշվում է
15	(Sd)V	խոսքը հնչում է
16	—V	— լուսանում է

3. ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Արժույթը ոչ այլ ինչ է, եթե ոչ կառավարության (խնդրառության) գաղափարի հետագա ընդարձակումը։ «Արժույթ» տերմինը առաջին անգամ օգտագործել է Լ. Տենիերը[29] *այդ անվան տակ հասկանալով բայի կապակցելիությունը ենթակայի և խնդիրների հետ։ Ավելի լայն առումով արժույթը բայի կապակցելիություն է ենթակայի, խնդիրների և պարագաների հետ։ Կարելի է ասել, որ արժույթը որոշում է բայի էությունը՝ որպես զանազան կարգի առարկայական հարաբերությունների լեզվական արտահայտության։*

Օգտագործելով «արժույթ» բառը՝ մենք պետք է մի քանի վերապահում անենք. 1) այս գաղափարն առաջ քաշողներն ու օգտագործողները հատակորեն չեն տարբերակում գոյաբանական, իմացաբանական և լեզվական պլանները. այդ է պատճառը, որ խոսում են արժութազուրկ բայերի մասին՝ նկատի ունենալով ենթակայի լեզվաբերականական արտահայտության բացակայությունը (անդեմ բայեր). ինչպես նշել ենք, այս դեպքում ենթական տրվում է անմիջաբար, և հետևաբար, նրա լեզվական արտահայտությունը անհրա-

[29] *L. Tesnière*, Eléments de syntaxe structurale, Paris, *1959*. *Հմմտ. նաև Р. Мразек*, Синтаксическая дистрибуция глаголов, ВЯ, 1964, № 3.

ժեշտ չի համարվում. ընդհանուր առմամբ պետք է խիստ տարբերություն անցկացնել գործողության իրական մասնակիցների քանակի և բայի ընդգրկած ենթակա-առարկայական նզրերի քանակի միջև, մի բան, որ ոչ միշտ է արվում. այսպիսով, բացարձակ իմաստով արժութազուրկ բայեր լինել չեն կարող. զրո արժույթի բայերի մասին կարելի է խոսել միայն հարաբերականորեն՝ ըստ քառա-քերականական դրսևորման բացակայության. 2) բայի էությունն է զանազան կարգի հարաբերությունների արտահայտությունը. պետք է տարբերել՝ ա) առարկաների հարաբերությունների ու բ) առարկաների հարաբերությունների (որպես վիճակների) հարաբերությունների արտահայտությունը՝ մի կողմից՝ որպես իրականության մեջ տեղի ունեցող, տեղի ունեցած և, որոշ իմաստով, հաստատապես տեղի ունենալիք հարաբերության հավաստում (գոյաբանական հիմք) և մյուս կողմից՝ որպես իրականության հիման վրա կատարվող ընդհանրացում (իմացաբանական հիմք). առարկաների հարաբերությունները հանդես են գալիս գերազանցապես ենթակայի և խնդիրների, իսկ առարկաների հարաբերությունների (վիճակների) հարաբերությունները՝ պարագաների միջոցով, ընդ որում բայը կարող է ունենալ սրանց համար իմաստային և քերականական հատուկ դրսևորման եղանակներ. 3) խիստ կարևոր է բայի և նրա լրացումների միջոցով արտահայտվող օբյեկտիվ և սուբյեկտիվ հարաբերությունների տարբերակումը, որ ոչ միշտ է հստակ կերպով անցկացվում։

Ըստ բայի հետ կապվող միավորների բնույթի՝ արժույթը կարող է հանդես գալ որպես՝ ա) ենթակայություն (բառային-քերականական ենթակա ստանալը կամ չստանալը), բ) ստորոգառություն (ստորոգելի կամ ստորոգելիական խնդիր ստանալը կամ չստանալը), գ) խնդրառություն (տարբեր տիպի խնդիրներ ստանալը կամ չստանալը, ընդ որում սրա մի դրսևորումը կլինի անցողականություն-անանցողականությունը՝ ուղիղ խնդիր ստանալը կամ չստանալը, մի այլ դրսևորումը՝ դերբայառությունը՝ անորոշ դերբայ ստանալը կամ չստանալը) և դ) պարագաառություն (տարբեր տիպի պարագաներ ստանալը կամ չստանալը)։

Ըստ բայի հետ կապվող տարբեր բնույթի միավորների քանակի կարելի է տարբերել բայի զրո արժույթից մինչև մի քանի արժույթ, և ըստ այսմ առանձնացնել զրո արժույթի («արժութազուրկ»), միարժույթ, երկարժույթ, եռարժույթ բայեր և այլն։

Ստորև կխմբավորենք բայերն ըստ արժույթի։ Նշենք որ անցո-

ղական բայերը վ–ի օգնությամբ կարող են փոխվել անանցողականների և անանցողականները (ա/ե)ցն–ի և տալ–ի օգնությամբ՝ անցողականների. բ) այդ բայերը կբերվեն արժույթի այլ դրսևորումներ ունեցող բայերի քննության ժամանակ, ընդ որում կնշվի նաև դրանց անցողական կամ անանցողական լինելը։

Արժույթի մի դրսևորումը, ինչպես նշվեց, ենթակաություն է. ենթակա ստացող բայերը լեզվականորեն անդիմաստահմանափակ են (դիմային սահմանափակություն չունեն, այսինքն՝ տեսականորեն կարող են գործածվել բոլոր դեմքերով)[30]*, ենթակա չստացողները՝ դիմաստահմանափակ (գործածվում են միայն երրորդ դեմքով, որ ավյալ դեպքում չի հակադրվում առաջին և երկրորդ դեմքերին)։ Այս բայերը հայտնի են միադեմ (միադիմի) անունով և փաստորեն զրո արժույթի են կամ արժութազուրկ, եթե նկատի չառնենք ոչ պարտադիր պարագաություն։ Հայերենում բուն միադեմ բայերը մեծ թիվ չեն կազմում՝* ամպել,աննձրևել, երեկոյանալ, լուսանալ, ձյունել (ձնել), մթնել, ցրտել։ *Ուրիշ լեզուների միադեմ բայերի փոխարեն հայերենում հանդես են գալիս* անել, գալ, դնել, ընկնել *և այլ բայերով կազմվող դարձվածային զուգորդումները՝* ցուրտ անել, շոգ անել, աննձրև գալ, ձյուն դնել, շաղ դնել, մութ ընկնել, կայծակին տալ *և այլն։*

Բաղադրյալ ստորոգյալի և բայական տարբեր տիպի ստորոգյալների միջոցով ստեղծվում են կերպա-տիպարային և ոճական զանազան տարբերություններ՝ շոգ է—շոգում է—շոգ է անում. տաք է—տաքանում է—տաք է անում. աննձրև է—աննձրևում է— աննձրև է գալիս—աննձրև է մաղում. մութ է—մթնում է—մութն ընկնում է *և այլն։*

Արժույթի երկրորդ դրսևորումը՝ ստորոգառություն, արտահայտվում է անանցողական բայերի դեպքում ստորոգելի, անցողական բայերի դեպքում ստորոգելիական խնդիր ստանալու մեջ։ Ստորոգելին և ստորոգելիական խնդիրը հանդես են գալիս գերազանցապես ուղղական հոլովով, երբեմն էլ որպես, ինչպես, իբրև *կապերով*[31]*։ Անանցողական ստորոգառու բայերն են* դառնալ, եմ, երևալ,

---

30 *Գործնականում կարող են սահմանափակումներ լինել ըստ բայերի դասանշային արժեքի. այսպես, հաչել բառը առաջին դեմքով կարող է օգտագործվել դիմառնաբար կամ փոխաբերաբար։*

31 *Հայցականն իբրև առանձին հոլով դիտողները այս դեպքում կանգնում են անլուծելի դժվարությունների առջև. «Հակոբը մարդ է դառնում» նախադասության մեջ մարդ-ը դիտվում է որպես ուղղական, «Գրիգորը Հակոբին մարդ է դարձնում» նախադասության մեջ՝ որպես հայցական հոլովով ուղիղ խնդիր, ընդ որում, ի*

թվալ, հանդես գալ (որպես), հանդիսանալ, ձևանալ, մնալ, ներկայանալ) (իրենից ներկայացնել)։ *Երկրորդաբար, կորցնելով իրենց հիմնական տարբերակիչ հատկանիշը և վերացական բնույթ ստանալով, իբրև ստորոգառու կարող են հանդես գալ* գալ (երազ է գալիս), գնալ (երթալ) (գերի է գնում), ընկնել, կանգնել, կտր(վ)ել *(առանց վ-ի էլ չեզոք առումով է դործածվում՝* ճար կտրեց), ճառել *բայերը։ Անցողական ստորոգառու բայերն են* անվանել, առաջադրել, ասել *(«անվանել, համարել» իմաստով՝ «քեզ մարդ եմ ասում»)*, գտնել, դարձնել, դիտել (որպես), ընդունել (որպես), կարգել, կարծել, կոչել, համարել, հայտարարել, հաշվել, հաստատել (որպես), հիշատակել (որպես), հիշել (որպես), հռչակել, հրապարակել (որպես), նշանակել, նշել (որպես)։ *Սրանք վ-ի օգնությամբ կարող են գործածվել որպես անանցողական ստորոգառու բայեր։*

Այս բոլոր բայերը ցույց են տալիս առարկայի և նրա հատկանիշի, առարկայի տարբեր վիճակների, առարկայի և նրա անվանման (որպես առարկայի յուրատեսակ հատկանիշի), առարկայի՝ մի այլ առարկայով փոխարինվելու կամ ներկայացվելու հարաբերություններ, երբեմն էլ առարկայի որպիսության սուբյեկտիվ գնահատում (թվալ, երևալ և այլն)։

Ըստ ուժեղ և պարտադիր խնդրառության անանցողական ստորոգառու բայերը միարժույթ են, անցողական ստորոգառու բայերը՝ երկարժույթ։

Անանցողական-ստորոգառու բայերի մի դրսևորումն էլ բացարձակ «չեզոքությունն» է՝ այն դեպքը, երբ հատկանիշ արտահայտող ստորոգելին մտնում է իր իսկ բայի մեջ՝ տիպարի և կերպի տարբեր դրսևորումներով։ Այս բայերը սովորաբար համարվում են միարժույթ, և նրանց համար բնորոշ է համարվում միայն «ենթակաառություններ». իրականում «միարժույթ» լինելը բնորոշում է այդ բայերն ըստ «մակերեսային կառուցվածքի» (surface structure), *իսկ ըստ «խորքային կառուցվածքի»*[32] *այդ բայերը փաստորեն երկարժույթ են՝ բնորոշվելով ենթակաառությամբ և իրենց մեջ արտահայտված «ստորոգառությամբ». նրանք ցույց են տալիս ենթա-*

տարբերություն բուն ուղիղ խնդրի, սա և՛ իրի, և՛ անձի դեպքում ուղղականանման է։ Միաժամանակ՝ որպես, ինչպես, իբրև *կապերով օժտված բառերի հոլովի որոշումը դժվարանում է։*

32 *«Խորքային կառուցվածքի» մեր ըմբռնումը տարբեր է Ն. Խոմսկու և ուրիշների ըմբռնումից. այս անվան տակ մենք նկատի ենք առնում նախադասության գոյաբանական-առարկայական հիմքը։*

կայի վիճակը (այս բառի լայն առումով) իրենց մեջ արտահայտված՝ տիպարի փոխարկային կամ ոչ-փոխարկային և, փոխարկայինի դեպքում, կերպային (սկսնական, ընթացքային և ավարտական) տարբերություններով։

Ըստ արտաքին դրսևորման սրանց մեջ առաջին հերթին պետք է նշել **–ալ–**ով *բայերի մեծ մասը* (խաղալ, սգալ, սողալ, ցնծալ *և այլն), ածականներից և հատկանիշ արտահայտող գոյականներից կազմվող* **–անալ–**ով *փոխարկային բայերը* (լայնանալ, նեղանալ, մեծանալ, փոքրանալ, սարկանալ, գոյանալ *և այլն),* **–ոտ** *ածանցով կազմված ածականներից երկրորդաբար* **–ել–**ով *և* **–վ–ել–**ով *կազմվող բայերը* (բորոտել, խոսոտել, մրոտվել, կեղտոտվել *և այլն), գրականում անկախ գործածությունից դուրս եկած և ժողովրդական-խոսակցական լեզվին հատուկ՝* **կալել–**ով *(հմմտ. գրաբարյան* կալնում*) ու գոյականներով բաղադրված բայերը* (ճարպակալել, մազակալել, սառցակալել *և այլն)։*

Ըստ իմաստային դրսևորման ամենից առաջ պետք է հաշվի առնել այս բայերի դասանշային արժեքը, այսինքն՝ ենթակաների դասային ի՛նչ խմբերի հետ կապակցվելու և, հետևաբար, դրանք բնութագրելու կարողությունը։

1) Մի հատուկ խումբ են կազմում այն բայերը, որոնք արտահայտում են վիճակի փոփոխություն ամենաընդհանուր ձևով և գործածվում են բայանվանական (վիճակ ցույց տվող) ենթակաների դեպքում. հմմտ. աշխատանքը սկսվում է, առաջանում է, ծագում է, տևում է, շարունակվում է, անցնում է, փոխվում է, վերջանում է, ավարտվում է, դադարում է *և այլն։ Այս բայերի մի զգալի մասը փոխակերպելի է «դիմավոր բայ+անորոշ դերբայ» կառուցվածքի՝* սկսում է աշխատել, շարունակում է աշխատել, դադարում է աշխատելուց *և այլն, ընդ որում սկզբնային պետք է համարել «Գրիգորն սկսում է աշխատել» կառուցվածքը, որ փոխակերպվում է «Գրիգորի աշխատանքն սկսվում է», «Գրիգորի աշխատանքի սկիզբը» կառուցվածքների։*

2) Երկրորդ խումբը կազմում են այն բայերը, որոնք ցույց են տալիս նյութական (անօրգանական և օրգանական) աշխարհի գոյականներին՝ իրերին, բույսերին, կենդանիներին առանձին-առանձին կամ տարբեր գուգակցություններով բնորոշ վայրկենական կամ տևական վիճակներ, հատկություններ, զգայություններ, կենսական տարբեր գործառույթներ, այդ թվում՝ տարբեր օրգանների բնորոշ գործառույթներ՝ աճել, բաբախել, բողբոջել, բորբոսնել,

բուսնել. բուրել. դողալ. դողդողալ. դողացնել. երերալ. զարգանալ. թոչնել. թրթռալ. թովռալ. լողալ. լողանալ. խայտալ. ծաղկել. ծխալ. կաղալ. կափկափել. հազալ. հոտել. հոտանչել. հուրհրալ. ճայթել. ճառագայթել. մգլել. միզել. մխալ. մղկտալ. մրափել. մրմռալ. մրսել. նեխել. նիրհել. ննջել. շնչել. շողալ. շողշողալ. որդնել. ործկալ. որոճալ. պաղել. պայթել. պղպջալ. ջերմել. սահել. սայթաքել. սառչել. սողալ. ցայտել. ցոլալ. ցոլանալ. ցոլցլալ. փայլատակել. փայլել. փրթել. փողփողել. փոշտալ. փրփրալ. fայլել. fնել. fրտնել *և այլն։ Այս բայերի մի մասը կարող է ստանալ թույլ խընդիր՝ ա) նշանակալից մասով՝ անջատման (բացառականով) անուղղակի խնդիր, որ ցույց է տալիս այդ գործողության պատճառ հանդիսացող առարկան կամ գործողությունը՝* բորբոսնել (խոնավությունից). դողալ (ցրտից), երերալ (fամուց). մրսել (ցրտից). սառչել (ցրտից) *և այլն, բ) հազվադեպ նաև ուղիղ խնդիր՝* շնչել (օդը). որոճալ (կերածը). *գ) գործիականով խնդիր՝* փայլել (ընդունակությամբ՝ *փոխաբերական գործածություն*), *դ) ներգոյականով կամ մեջ–ով խնդիր՝* կաղալ (մի բանում. մի բանի մեջ՝ *փոխաբերական գործածություն*) *և այլն։ Բոլոր բայերի հետ կարող են գործածվել տեղի և ժամանակի պարագաներ՝ սահմանափակելով նրանց արտահայտած գործողությունները՝* աճել (դաշտում, կարճ ժամանակ *և այլն*), բաբախել (կրծքում, ամբողջ կյանքում *և այլն*), բողբոջել (այգում, գարնանը *և այլն*) *և այլն։*

3) Երրորդ խումբը կազմում են մարդու համար բնորոշ երեվույթներ, վիճակներ, գործառություններ, տվյալություններ արտահայտող բայերը. սրանց մեջ առաջին հերթին պետք է նշել բարդ հիմքով՝ –բայ(ել) (երկբայել), –բան(ել) (այլաբանել, երկարաբանել. մեծաբանել *և այլն*), –խոս(ել) (մեծախոսել, շատախոսել *և այլն*), –ֆալ(ել) (*«զբաղեցնել, վարել» իմաստով՝* ատենակալել, գահակալել *և այլն*), –ճար(ել) (թմբկաճարել, փողաճարել *և այլն*), –մտ(ել) (երկմտել, մեծամտել *և այլն*), –վար(ել) (թիավարել. ձիավարել, նավավարել, պաշտոնավարել *և այլն*) *և որոշ այլ բաղադրիչներով կազմված բայերը։ Մյուս կարգի բայերից կարելի է նշել* գործել. պատանցել, ընթրել. թախծել, թեյել, ժպտալ, լալ, լռել, խաղալ, ծիծաղել, կակազել, կամավել, ճաշել, ճգնել. շեփորել, շվարել, պանդրխտել, պարել. տրնել, ցնծալ, փղձկալ, փոթկալ *և այլն։ Սրանք նույնպես, երկրորդ խմբի բայերի նման, կարող են ստանալ տեղի և ժամանակի պարագաներ, մասամբ բացառականով խնդիր* (ծիծաղել ուրախությունից. լալ վշտից *և այլն*) *և այլն։*

4) Չորրորդ խումբը կազմում են զանազան բնական ձայներ, այդ թվում նաև մարդկանց ու կենդանիների արձակած ձայներ արտահայտող բայերը՝ աղմկել, բառաչել, բզզալ, գեղգեղել, գոչել, գոգոալ, դղրդալ, թառաճչել, թնդալ, խոխոջել, խոխոալ, խոմփալ, խրխնջալ, ծվծվալ, կաղկանձել, կարկաչել, կոկոալ, ճաչել, հառաչել, հեծել, հեծեծալ, հեկեկալ, ճնշել, ղժղժալ, ղողանջել, ճարճատել, ճղճղալ, ճղփալ, ճչալ, ճռճռալ, ճռնչալ, ճռռալ, ճռվողել, ճվճվալ, մռմռալ, մռնչալ, մրմնջալ, նվալ, նվնվալ, շաչել, շառաչել, շշնջալ, շշալ, ոռնալ, ոռոտալ, սոսափել, սվսվալ, fրթմնջալ, fրfջալ *և այլն։ Այս բայերը ևս երկրորդաբար կարող են ստանալ բուն խնդիրներ (հատկապես բացառականով) և պարագայական խնդիրներ (տեղի և ժամանակի)։*

Այժմ անցնենք արժույթի այլ դրսևորումների քննությանը։ Ամենից առաջ խոսենք այն երկարժույթ բայերի մասին, որոնք բացի ենթակայից ստանում են նաև անորոշ դերբայ՝ անփոփոխ ձևով, երբեմն էլ տրական և նույնիսկ բացառական հոլովով՝ արտահայտելով տիպարային, կերպային և եղանակային իմաստներ՝ աշխատել (գրել), դադարել (գրելուց), դանդաղել (գրել), կարողանալ (գրել), հապաղել (գրել), ճգնել (գրել), շարունակել (գրել), չտապել (գրել), որոշել (գրել), ջանալ (գրել), սկսել (գրել), վճռել (գրել), փորձել (գրել) *և այլն։ Զգալի թիվ են կազմում* -վ-ով *բայերը, որոնք սովորաբար պահանջում են տրականով, երբեմն էլ անփոփոխ ձևով անորոշ դերբայ՝* հարկադրվել (գրելու, գրել), մտադրվել (գրելու, գրել), նպատակադրվել (գրելու, գրել), պատրաստվել (գրելու), պարտավորվել (գրելու, գրել), չարչարվել (գրել), ստիպվել (ստիպված լինել) (գրելու, գրել) *և այլն։ Առաջին կարգի բայերից մի քանիսը հավասարապես գործածվում են նաև համապատասխան բայանունների հետ, որոնք հանդես են գալիս որպես ուղիղ խնդիր՝* շարունակել (գործը), որոշել (ճարցը), սկսել (գործը), վճռել (գործը)։ *Ընդհակառակն, կան անցողական բայեր, որոնք սովորաբար ստանում են բայանուններ որպես ուղիղ խնդիր, բայց կարող են դրանդ փոխարեն անորոշ դերբայ ստանալ՝ սովորաբար գոյականացված ձևով՝ ը հոդով՝* վերջացնել (գործը, գրելը), դադարեցնել (աշխատանքը, աշխատելը) *և այլն։* Զբաղվել *բայը պահանջում է գործիականով բայանուն-խնդիր, որ կարող է փոխարինվել դերբայով՝* զբաղվել աշխատանքով (աշխատելով)։

Անորոշի հետ գործածվող բայերը հարաբերակից են եղանակային և կերպային իմաստ ունեցող ածականներին՝ տիպարային և

կերպային տարբերությամբ՝ պատրաստ եմ գրելու—պատրաստվում եմ գրելու, պարտավոր եմ գրել—պարտավորվում եմ գրել և այլն: *Այս տիպի ածականները պետք է դիտել որպես ստորոգական ածականներ:*

Անանցողական բայերը ըստ ուժեղ խնդրառության սովորաբար լինում են երկարժույթ և եռարժույթ: Երկարժույթ բայերն ստանում են (բացի ննթակայից) տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներից որևէ մեկով կամ որևէ կապով խնդիր՝ լինի այն բուն խնդիր թե պարագայական խնդիր: Եռարժույթ բայերն ստանում են (բացի ննթակայից) երկուական խնդիր՝ հոլովական և կապական խնդիրների տարբեր զուգակցումներով: Ստորև բերենք անանցողական բայերն ըստ արժույթի տարբեր դրսևորումների՝ փակագծերում տալով խնդրառական տարբերակները: Պետք է նկատի առնել, որ եռարժույթ բայերի երկրորդ խնդիրը հաճախ համեմատաբար թույլ է լինում և կարող է զանց առնվել:

. 1) Տրական հոլովով (հանգման) խնդիր պահանջող երկարժույթ և լրացուցիչ կերպով որևէ այլ հոլովով կամ կապով խնդիր պահանջող եռարժույթ բայեր.

ա) Տրական հոլովով (հանգման) խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ննթակա+դիմավոր բայ+տրականով խնդիր» մասնակաղապար)՝ ակնարկել (— վրա, — *ուղ. խ.*, — *տր.*)[33], այցելել, ածցնել (— *գործ.*, միջով) ապաստանել (— մոտ), ապավինել, արձագանգել, բազմել (— մեջ, վրա), բարևել, գերազանցել (— *բցո.*), դավել (— դեմ), դիմանալ, դոփել (— *ներգ.*), երևալ (—, — *ստորոգ.*), երկրպագել (— *ուղ. խ.*), թագավորել (—, — վրա), ըմբռնելանալ (— հետ), թիկնել, թղթակցել (*անձի դեպքում՝* — հետ+մյասին, շուրջը), խշխել (— վրա), խնկարկել (—), խորթանալ (— *բցո.*), ծանոթանալ (*անձի դեպքում՝* հետ), ծարավել (—), կառչել (— *բցո.*), կարոտել, կպչել (— *բցո.*), կոթնել (—), հակասել, համապատասխանել, համբերել (—), համբնկնել (— հետ, — *ներգ.*), հանգել, հանդիպել (— հետ), հաջորդել, հասնել (*տեղանիշ բառերի դեպքում՝* — *ուղղ.*), հարմարվել (— հետ+*ներգ.*), հետամտել (հետամուտ լինել), ձգտել, մասնակցել (*օտարաբանությամբ՝* — մեջ), մերձենալ, միանալ (— հետ), միջամտել, մոտենալ, նախագահել (—

---

33 *Փակագծերում բերվող (— վրա), (— մոտ), (— բցո.) և այլ նշանակումները ցույց են տալիս, որ տվյալ բայերը կարող են ստանալ տրականի փոխարեն վրա-ով, մոտ-ով, բացառականով և այլ խնդիրներ): (—) նշանը ցույց է տալիս, որ բայը կարող է գործածվել նաև առանց խնդրի (խնդրառության բացակայություն):*

ներգ.), նայել (—վրա), չորոմորթել, ողջունել (— *տր.*+համար), պապակել *(—)*, պատասխանել, պատկանել, սիրահարվել, սպառնալ, սպասել վարժվել, վշտակցել *(— տր.*+*ներգ., —* հետ+*ներգ.)*, տիրանալ, տիրապետել, տիրել, տոկալ, ցատկել *(—* վրա), ուղեկցել, ունկնդրել, ֆծնել, օտարանալ *(բցո.)* և *այլն:*

բ) Տրական հոլովով (հանգման) և *ներգոյականով կամ մեջ կապով խնդիրներ պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+տրականով խնդիր+ներգոյականով կամ մեջ կապով խնդիր» մասնակաղապար)՝* աշակերտել, աջակցել, ապավինել, առարկել, դավաճանել, դիմադրել, ընդառաջել, ընդդիմադրել, ընդդիմախոսել, ընդդիմանալ, խանգարել, ծառայել (ծառայություն մատուցել), հակաճառել, հակառակել, հաճոյանալ, հավատալ, հավասարվել, հետևել *(փխբ.)*, հնազանդել, ձայնակցել (— հետ), հորտանալ *(փխբ.)*, համաձայնել *(— տր.*+*գործ.)*, նպաստել *(— տր.*+*գործ.)*, ստորանալ (— առջև), ստրկանալ *(փխբ.)*, վերաբերել, վերաբերվել, վճասել (վճաս տալ), վստահել (վստահաճանալ), օգնել, օժանդակել *և այլն:*

գ) Տրական հոլովով (հանգման) և համար *կապով խնդիրներ պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+տրականով խնդիր+համար-ով խնդիր» մասնակաղապար)՝* աղաչել, աղոթել, արժանանալ, բարեխոսել, բողոքել (— դեմ *կամ* վրա+համար), դիմել, թախանձել, ծափահարել, կարեկցել, նախանձել *(— տր.*+*ներգ.)*, ներկայանալ, ողջունել, պաղատել, ցավակցել *և այլն:*

դ) Տրական հոլովով (հանգման) և որպես *կապով խնդիրներ պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+տրականով խնդիր+որպես-ով խնդիր» մասնակաղապար)՝* գծագրվել, երեվալ, պատկերանալ *և այլն:*

Հաղորդում արտահայտող որոշ կարգի անցողական բայերի ուղիղ խնդիրը կարող է փոխարինվել մասին կապով խնդրով, և այս դեպքում «ենթակա+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+տրականով խնդիր» մասնակաղապարի փոխարեն հանդես կգա «ենթակա+դիմավոր բայ+տրականով խնդիր+մասին-ով խնդիր» մասնակաղապարը՝ զեկուցել հարցը մեկին — զեկուցել մեկին հարցի մասին. *այսպես նաև* ասել, հաղորդել, հայտնել, տեղեկացնել *և այլն:*

2) Բացառական հոլովով (անջատման) անուղղակի խնդիր պահանջող երկարժույթ և լրացուցիչ կերպով որևէ հոլովով կամ կապով խնդիր պահանջող եռարժույթ բայեր.

ա) Բացառական հոլովով (անջատման) խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+բացառականով խնդիր+դիմավոր բայ» մասնակազմությամբ)՝ ակնածել, արբնանալ (—), բաղկանալ, բացակայել, բխել, բռնկվել (—,— *գործ.*), գազազել, գոյանալ, ելնել (— *դեմ*), եռալ (—,— *գործ.*), երկնչել, զայրանալ, զարթնել, զարհուրել, զգուշանալ, զովանալ (—), ընդարմանալ, ընկրկել, թաքնվել (— *ներգ.*, — *բցո.+ներգ.*), թուլանալ (—), ժայթքել (—), խորթանալ (— *տր.*), խորշել, խռովել, խրտնել, խուճանալ (—), խուսափել, ծագել, ծլել (—), ծփալ (—,— *գործ.*), կառչել, կշտանալ, հագենալ, հեռանալ (— *ուղ.*, — *բցո.+ուղղ.*), հետադիմել (—), հիասթափվել (— *բցո.+համար*), հոգնել (—), հանել, հոսել (—,— *բցո.*, *տ. ուղ.*), հովանալ (—), ձանձրանալ (—), ճայթել (—), ճողոպրել, մազապուրծ լինել, մեկուսանալ (—,— *ներգ.*), նահանջել, նվաղել (—), շիկնել (—), շլանալ (—), շշմել (—), ոստնել (—), պայթել (*փխբ.*, —), պատկառել, պարտվել (— *բցո.+ներգ.*), սարսափել, սարսել, սոսկալ, վախենալ, վեհերել (— *առջև*), վշտանալ (—), վրիպել (— *ուղ.*, —), տառապել (—,— *համար*), փախչել (— *տ. ուղ.*,— *դեպի*) *և այլն:*

բ) Բացառական հոլովով (անջատման) և համար կապով խնդիրներ պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+բացառականով խնդիր+համար-ով խնդիր» մասնակազմությամբ)՝ ամաչել, դժգոհել, զզվել, խորհել, խորշել, նեղանալ, նողկալ, շնորհակալ լինել, սաոչել (*փխբ.*), վրեժխնդիր լինել *և այլն:*

գ) Բացառական հոլովով (անջատման) և վրա կապով խնդիրներ պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+բացառականով խնդիր+դիմավոր բայ+վրա-ով խնդիր» մասնակազմությամբ)՝ ծորել (—.— *տ. ուղղ.* ,— վրա), կաթել (—.— *տ. ուղղ.* ,— վրա), ցայտել (— *տ. ուղղ.*,— վրա *և այլն:*

3) Գործիական հոլովով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+գործիականով խնդիր+դիմավոր բայ» մասնակազմությամբ)՝ անցնել, ապրել (— *ներգ.*), արբել, արբենալ, բավականանալ, գոհանալ, զբաղվել, թափանցել, լիանալ, ծփալ (— *բցո.*), հարբել, հիանալ, հպարտանալ, պարապել (—,— *հետ*), պարծենալ, սխրանչանալ, տառապել (— *բցո.*), ուրախանալ (—,— *համար*), փայլել (*փխբ.*,—) *և այլն:*

4) Ներգոյական հոլովով կամ մեջ կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+ներգոյականով կամ մեջ կապով խնդիր» մասնակազմությամբ)՝ ամրանալ, աշխատել

«պաշտոնավարել», ապրել, արդարանալ, արձանանալ (—), բանակել, գործել, դեգերել, երթևեկել, զբոսնել, թափառել, թաքնվել (— բցո.+ներգ.), թերանալ, խարխափել (—), ծվարել (— վրա, — տակ), կայանալ, համառել, հավաստիանալ, հերթապահել (—), հիասթափվել (բցո.+ներգ.), հմտանալ (— տր.), հուսահատվել (—), ձմեռել, ճախրել, ճանապարհորդել, ճարտարանալ (—), նեմել, մարգարեանալ, մեկուսանալ (— բցո.), մենանալ, միայնանալ, միանձնանալ, մնալ, շրջագայել (— գործ.), շրջել, պաշտոնավարել (—ներգ.+ոտքես), պառկել (— տր., վրա, մեջ և այլն), սավառնել, սիգալ, վարանել (— համար), վխտալ, տարակուսել (— համար), տուժել (— բցո.), ցնդել «անհետանալ» («խենթանալ»՝ —,— բցո.) և այլն:

5) Ուղղական («հայցական») հոլովով խնդիր պահանջող երկարժույթ բայեր.

ա) Շարժման տեղի պարագայական խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+շարժման տեղի պարագա» մասնակազապար)՝ աճապարել, արշավել, բարձրանալ (—), գահավիժել (—), գնալ, երթալ, ընթանալ, ընկնել, թեւակոխել, ժամանել, իջնել, խուժել, կորչել (փխբ.), հասնել (— տր.), ճեծնել (— տր.)[34], մագլցել (— վրա), մեկնել («ուղևորվել»), նստել (— տր., — վրա, տակ և այլն), շտապել, չվել, սլանալ, սողոսկել (— միջով), սպրդել (— մեջ), սուրալ, վազել (—), ուղևորվել, փախչել (— բցո.), փութալ և այլն:

բ) Չափի (պարագայական) խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+չափի պարագա» մասնակազապար)՝ արժենալ, կշռել, տեւել և այլն:

6) Զանազան կապերով խնդիրներ պահանջող երկարժույթ և լրացուցիչ կերպով այլ կապերով կամ հոլովներով խնդիր պահանջող եռարժույթ բայեր.

ա) Դեմ կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+դեմ կապով խնդիր» մասնակազապար), որոնք լրացուցիչ կերպով կարող են ստանալ (հատկապես փոխաբերական առումով) նաև ներգոյական հոլովով խնդիր («ենթակա+դիմավոր բայ+դեմ կապով խնդիր+ներգոյական հոլովով խնդիր») ապստամբել, դավել, դժկամել, դժկամակել, դիմագրավել (— տր.+ներգ.), դիմադրել (— տր.+ներգ.), ելնել, ապստամբել, ըմբոստա-

34 Ոմանք ձի ճեծնել արտահայտության մեջ ձի-ն դիտում են որպես ուղիղ խնդիր, բայց հմմտ. ա) ձի նստել, բ) ձիուն ճեծնել, գ) գրաբար ճեծանիմ ի ձի:

ճալ, ընդվզել խիզախել, ծառանալ, կռվել (— հետ), հոխորտալ, ճակատամարտել (— հետ), ճակատել, ճամարտակել, մարտնչել, մաքառել, մեղաճչել, մենամարտել (—.— հետ), ոգորել, պայքարել, պատերազմել և այլն։

բ) Դեմ *կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+դեմ կապով խնդիր»), որոնք կարող են ստանալ նաև* համար *կապով խնդիր («ենթակա+դիմավոր բայ+դեմ կապով խնդիր+*համար *կապով խնդիր»)՝* բողոքել, գանգատվել, տրտնջալ և այլն։

գ) Համար *կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+*համար *կապով խնդիր» մասնակաղապար)՝* ապաշխարել. ափսոսալ, հոգալ (— մասին), ցավել, երկբայել (—,— մասին), երկմտել (—,— մասին) և այլն։

դ) Մասին *կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+*մասին *կապով խնդիր» մասնակաղապար)՝* -բանել (ատենաբանել, դատարկաբանել և այլն) (—), ատենախոսել (—), բամբասել (— *ուղ. խ.*), գանգատվել (— *բցո.*), դատել «դատողություն անել», երազել (—,— *ուղ. խ.*), երկբայել (— համար), երկմտել (— համար), թմրկահարել (—), խոկալ, խորհել, խորհրդածել, հոգալ (— համար), մտածել (—.— *ուղ. խ.*), վկայել, տեղեկանալ. տրամաբանել (—), չարախոսել (—) և այլն։

ե) Հետ *կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+*հետ *կապով խնդիր» մասնակաղապար), որոնց խնդիրը կորչում է, եթե խնդրի նշանակած անձը կամ առարկան արտահայտվում է ենթակայի միջոցով (հոգնակի ձևով կամ և շաղկապով՝ «Ամուսնացավ նրա հետ» — «Նրանք ամուսնացան», «Հակոբը և Գոհարն ամուսնացան»,)՝* ամուսնանալ. բարեկամանալ, գահակցել (— *տր.*), գոռեմարտել (— դեմ), գործակցել (— *տր.*), եղբայրանալ, զինակցել (— *տր.*), ըմբշամարտել. ընկերանալ, թշնամանալ, ծանոթանալ (*ոչ-անձի դեպքում՝ տր.*), կատակել (—), կենակցել. հաշտվել, մենամարտել (— *դեմ*), միանալ (— *տր.*), մտերմանալ, նույնանալ, շռնանալ. պարապել (*անձի դեպքում, այլապես՝ — գործ.՝ մի բանով*) և այլն։

զ) Հետ *կապով և ներգոյական հոլովով խնդիրներ պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+*հետ *կապով խնդիր+ներգոյական հոլովով խնդիր» մասնակաղապար)՝* դաշնակցել, զինակցել. համագործակցել, համաձայնել. հարմարվել (*տր.*), ձայնակցել (— *տր.+ներգ.*), միաբանել, մրցել, մրցակցել և այլն։

է) Հետ և մասին *կապերով խնդիրներ պահանջող եռարժույթ*

բայեր («ենթակա+դիմավոր բայ+հետ կապով խնդիր+մասին կապով խնդիր» մասնակաղապար)՝ զրուցել, խոսել, խորհրդակցել, շաղակրատել, շատախոսել (—), վիճաբանել, վիճել *և այլն։*

ը) Հետ *և* համար (շուրջը) *կապերով խնդիրներ պահանջող եռարժույթ բայեր [«ենթակա+դիմավոր բայ+հետ կապով խնդիր+համար (շուրջը) կապով խնդիր» մասնակաղապար]*՝ սակարկել *և այլն։*

թ) Վրա *կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+վրա կապով խնդիր» մասնակաղապար)*՝ ազդել, ակնարկել *(— տր.)*, աշխատել *(«գրել»)*, բռնանալ, գոռալ (—), գրոհել, զարմանալ, թագավորել *(— տր.,— ներգ.)*, իշխել *(— տր.)*, խնդալ *(—)*, խոյանալ, ծանրանալ *(փխբ.)*, ծիծաղել *(—)*, կասկածել, հսկել, ներգործել *(— վրա+ներգ.)*, ողբալ *(—,— ուղ. խ.)*, սգալ *(—,— ուղ. խ.) և այլն։*

ժ) Վրա *և* համար *կապերով խնդիրներ պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+վրա կապով խնդիր+համար կապով խնդիր» մասնակաղապար)*՝ բարկանալ, զայրանալ, չարանալ, ջղայնանալ *և այլն։*

ժա) Մոտ *կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+մոտ կապով խնդիր» մասնակաղապար)*՝ ապաստանել, օթևանել *(— ներգ.) և այլն։*

ժբ) Մոտ *և* համար *կապերով խնդիրներ պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+մոտ կապով խնդիր+համար կապով խնդիր» մասնակաղապար)*՝ միջնորդել *և այլն։*

ժգ) Մեջ *կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+մեջ կապով խնդիր» մասնակաղապար)*՝ թափանցել *(փխբ.,— տ. ուղղ.)*, խորամուխ լինել, խորանալ *(փխբ.)*, հմտանալ *(— ներգ.) և այլն։*

ժդ) Առջև *կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+առջև կապով խնդիր» մասնակաղապար)*՝ խոնարհվել, ենթարկվել, նվաստանալ, սողալ *(փխբ.)*, ստել *(—)*, ստորանալ *և այլն։*

ժե) Որպես (իբրև, ինչպես) *կապով խնդիր պահանջող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+որպես կապով խնդիր» մասնակաղապար)*՝ աշխատել *(—)* հանդես գալ, պաշտոնավարել, *այլև* դիտվել, ընդունվել, ճանաչվել *և այլն։*

ժզ) Մինչև *կապով խնդիր պահանջվող երկարժույթ բայեր («ենթակա+դիմավոր բայ+մինչև կապով խնդիր» մասնակաղապար)*՝ հարատևել, տևել *և այլն։*

Անցողական բայերը նույնպես ըստ ուժեղ խնդրառության լինում են երկարժույթ և եռարժույթ, ընդ որում խնդիրներից մեկը ուղիղ խնդիրն է. ուժեղ խնդրառություն ունեցող քառարժույթ, հնգարժույթ բայեր սովորաբար չեն լինում: Եռարժույթ բայերի երկրորդ խնդիրը ուժեղ է տրական և բացառական, համեմատաբար թույլ՝ գործիական և ներգոյական հոլովների դեպքում:

Երկարժույթ անցողական բայերը կարելի է բաժանել իմաստային տարբեր խմբերի ըստ սերման, ըստ փոխակերպման որոշ առանձնահատկությունների, ըստ կապակցելիության և, սրա հետ կապված, ըստ ենթակայի ու օբյեկտի դասային պատկանելիության, վերջապես՝ ըստ օբյեկտի կրած ներգործման բնույթի: Անցողական բայերի իմաստային դասակարգման դեպքում զանց կանենք ակնհայտորեն որպես բաղադրյալ գիտակցվող հիմք ունեցող (բարդ, նախածանցավոր և վերջածանցավոր) այն կազմությունները, որոնք կարող են ստացվել սերման սովորական կանոններով:

Անցողական բայերի դասակարգման համար ամենից առաջ նկատի ունենանք սերումը: Ըստ սերման առանձնացնենք նախ այն բոլոր բայերը, որոնք ծագում են գոյականներից և ցույց են տալիս գոյականի նշանակած առարկայի հետ կապված որևէ գործողություն՝ նրանով ազդում և բաղադրում (օժտում), նրանով ստեղծում, նրա օգտագործում որպես պարունակիչ և այլն՝ ածիլել, ակոսել, աղաճձել, աղել, ապակել, ապխտել, աստառել, արծաթել, բահել, բանտել, բետոնել, բրել, գայլիկոնել, գետնել, գնդել, դրոշմել, զինել, թամբել, թելել, թերթել, խմբել, ծխել, կեղևել, կճ(ե)պել, կոճկել, կպրել, համեմել, հիպնոսել, հողել, ձիթել, ձյութել, ճաճկել, մոմել, մրել, շղթայել, պայտել, պաստառել, պատճենել, պսակել, ջրել, ռաճդել, սածիլել, սանձել, սաՀրել, տոնել, ցանցել, ցեմենտել, փալանել, փնջել և այլն: Որոշ դեպքերում այս կարգի բայերն օգտագործվում են իրենց նշանակածից ավելի լայն իմաստով և ձեռք բերում փոխաբերական առում. այդպիսին են հնից ավանդված շատ բայեր, որոնք ծագել են գոյականներից և նախնական գործածությամբ նեղ իմաստ են ունեցել. համմտ. բզել, բոնել, դարմանել, դեղել, կռակել, մաշկել, նկարել, nրսալ, պատկերել և այլն: Սրանք ատորև կքննվեն բուն բայերի մեջ: Բանաստեղծական խոսքում իբրև բայահիմքեր կարող են գործածվել և այլ գոյականներ՝ ասղել, արևել, լուսնել և այլն:

Ըստ սերման երկրորդ խումբը կազմում են այն բայերը, որոնց հիմքերը անկախ գործածվում են որպես ածականներ, և որոնք ցույց

են տալիս ներգործվող առարկայի կողմից ածականի նշանակած հատկանիշի ձեռքերում (լրացուցիչ տիպարային տարբերությամբ)։ Սրանք հարաբերակից են –անալ-ով (երբեմն և –ել–ով) չեզոք բայերին։ Այդպիսիք են բարսել, թեքել, խեղել, խոժռել, խոտանել, կեղծել (—), կոկել, կրթել, հաստատել, հավաստել, հարթել, մաներել, շռայլել, շտկել (<շիտակել), պարզել, պնդել, պրկել, սեղմել, սերտել, ստուգել, սրել և այլն,

Ինչպես անանցողական, այնպես էլ անցողական բայերի խմբավորման չափանիշ կարելի է ընդունել ենթակայի դասային տարբեր խմբերի հետ նրանց կապակցվելու կարողությունը։ Այս դեպքում ևս կարելի է առանձնացնել անձերի, կենդանիների, իրերի և վերացական անունների հետ առանձին-առանձին կամ տարբեր զուգակցումներով կապակցվող բայեր։ Այսպես, մի շարք բայեր ցույց են տալիս հատկապես մարդու (անձերի) համար բնորոշ գործողություններ՝ ածիլել, աղաճձել, աղել, աներջել, ապխտել, բեռտոնել, գայլիկոնել, դատել, զինել, թամբել, թխել և այլն. սրանց մեջ հատուկ տեղ են գրավում այն բայերը, որոնք ուղիղ խնդրի փոխարեն կամ նրա հետ միասին կարող են ստանալ մասին կապով խնդիր և ցույց են տալիս մարդկային մտածողական և խոսողական տարբեր գործառույթներ՝ խոսել, կարդալ, ճառել, մտորել, պատմել, վկայել..., այլև հիշել, մոռանալ և այլն։ Մի շարք բայեր բնորոշում են միայն կենդանիներին՝ արածել, լակել, կոցել, որոճալ (—) և այլն։ Կան բայեր, որոնք նշանակում են լայն առումով կենդանիներին, այդ թվում և մարդուն, հատուկ գործողություններ՝ զգալ, լսել, տեսնել և այլն։ Անցողական բայերի դասանշային մանրամասն դասակարգումը թողնելով հատկապես այդ հարցին նվիրված մի աշխատության՝ նշենք, որ հոգեկան տարբեր գործառույթներ արտահայտող բայերը (զգայական, մտածողական, կամային) միավորվում են մի կարևոր հատկանիշով. նրանց օբյեկտը, լինի այն ուղիղ թե մասին կապով արտահայտված խնդիր, կարող է արտահայտվել nr շաղկապով երկրորդական նախադասությամբ։ Այդ մասին առիթ ենք ունեցել խոսելու շաղկապների քննության հետ կապված՝ նկատի ունենալով փոխակերպման որոշակի առանձնահատկություն։

Քանի որ անցողական բայերը անցողական են հենց նրանով, որ պահանջում են ներգործվող օբյեկտ՝ ուղիղ խնդիր, ուստի և նրանց բնութագրման համար կարևոր է օբյեկտի բնույթի հաշվառումը։ Այստեղ մենք նկատի ունենք ոչ միայն օբյեկտի դասային պատկանելիությունը, ինչպես ենթակայի հետ ունեցած կա-

պակցելիությունը քննելիս, այլև օբյեկտի կրած ներգործման բնույթը։ Այսպիսի դասակարգումը լայն տարածում ունի ավանդական քերականության մեջ, թեև քերականներն այս դեպքում բավարարվում են լոկ ներգործման բնույթի մատնանշմամբ՝ խոսելով ուղիղ խնդրի տեսակների մասին, առանց բայերի համապատասխան դասակարգման։

Ըստ օբյեկտի կրած ներգործման բնույթի կարելի է տարբերել երկարժույթ անցողական բայերի հետևյալ խմբերը.

1. Բայեր, որոնք ցույց են տալիս ֆիզիկական (փոխաբերաբար նաև հոգեկան) ներգործում՝ սովորաբար օբյեկտի հատկություններին, բաղադրության, տարածական դիրքի փոփոխությամբ, երբեմն էլ այդպիսի փոփոխությունների արգելակմամբ՝ ածիլել, ամոթել *(նաև հոգեպես),* ամփոփել *(նաև հոգ.)*[35], այրել, ապակել, ապրխտել, ապտակել, աստառել, ավերել, արածել, արծաթել, բախել, բահել, բանտել, բացել (բանալ), բեկել, բեռոնել, բզել, բնդել, բոթել, բուժել, բուծել, բռնել, բտել, բրդել, բրել, բրոռել, գայլիկոնել, գեռնել. գերել *(նաև հոգ.),* գզել, գծել, գնդել, գրկել, դաբաղել, դաղել, դարմանել, դեղել, դնֆսել, դրոշմել, եփել, զարկել, զեղել, զինել, զոհել, զսպել, էտել, ըմպել, ընկճել, թալանել, թամբել, թարթել, թարսել, թափել, թելել, թեղել, թերթել, թեֆել, թխել, թրծել, թրջել. լակել, լարել, լափել, լիզել, լլկել, լպստել, լվանալ, խախտել *(նաև հոգ.),* խայթել, խանձել, խաշել, խաչել, խարտել, խեղդել. խեղել. խզել *(նաև հոգ.),* խժռել, խնձել, խնողել *(նաև հոգ.),* խրմբել, խոժոռել, խորովել, խորտակել, խուզել, խցել, խփել, ծալել, ծախսել. ծածկել, ծակել, ծավալել *(նաև հոգ.),* ծեծել, ծխել, ծծել. կազդուրել. կալսել, կանթել, կաշկանդել, կարել, կեղևել, կեղեքել, կեղծել *(նաև հոգ.),* կիզել, կիսել, կլանել, կծել, կճ(ե)պել. կմշտել. կնճել. կոծկել, կոկել. կողպել, կոնկել, կոնծել, կոտրել, կուրծանել, կոփել. կպրել, կռել, կուփել. կսմթել, կտրել, կտցել, կրակել, կրթել *(հոգ.),* կրծել, կրտել, հալել, հակել, հաղթել, համբուրել, համեմել, հապավել. հատել, հարել *«խփել»,* հարթել, հեղել, հերկել, հերձել, հիճայել. հղկել, հյուծել, հնձել, հողել, հորել. հուզել *(նաև հոգ.),* հուշցել, ձգել, ձիթել, ձյութել, ձուլել, ձևել, ճանկել. ճաշակել. ճզմել, ճխլել, ճկել. ճղել, ճմլել, ճմռել, ճնշել. ճոճել. մանրել, մաշկել, մարսել, մաֆրել. մերել, մզել, մշակել *(նաև հոգ.),* մոմել, մրել. նորոգել. նվաճել. չալակել, շարժել, շեշտել *(հոգ.),* չղրայել, շնչել

35 *Այստեղ և ստորև հոգ. նշանակում է հոգեպես։*

(—), չոյել, չոայլել. չակել (<չիտակել). չփել. ոթել, ոուսալ. շոել, պայտել, պաշարել, պաստառել, պատռել. պեղել, պնդել *(նաև հոգ.)*, պսակել, պրկել, պրպտել, ջարդել, ջնջել, ջրել, ռանդել սածիլել. սանձել. սաՌել, սասանել, սեղմել, սպանել, սպառել, սվաղել, սրբել. սրել, սրսկել, սփռել, վառել, վատնել. վարել, վճարել. վրդովել, տանջել, տաշել, տատանել, տնկել, տոչորել *(նաև հոգ.)*, ցանցել, ցեմենտել, ցնցել. ցրել, ուղղել, ուտել, փայլաճել, փակել. փետել, fամել, fանդել, fերել, fերթել, fերծել, fշտել, fորել, օրորել և այն։ *Հատկանշական է, որ անուններից ածանցված բայերը պատկանում են հատկապես այս տիպին։ Սրանց մի տարատեսակը պետք է համարել այն բայերը, որոնց օբյեկտը ստեղծվում կամ ձեռք է բերվում որպես գործողության հետևանք (հմմտ. վերևում բերված այն բայերը, որոնք ցույց են տալիս օբյեկտի վերացումը, սպառումը, անհետացումը)*՝ ածել, գտնել, երկնել, ծնել, կերտել, հայթայթել, հիմնել. հնարել *(հոգ.)*, ճարել, մոգոնել, շինել, ստեղծել, տպել և այլն։ *Սրանցից* գտնել, կերտել, հայթայթել, հնարել. ճարել, մոգոնել, շինել, ստեղծել *բայերը փաստորեն եռարժույթ են և կարող են բացի ուղիղ խնդրից ստանալ նաև բացառականով խնդիր։*

2) Բայեր, որոնք ցույց են տալիս կամ օբյեկտի կախվածություն, ընդօրինակում, զգայում, ցանկալիություն (օբյեկտին ուղղված նպատակադիր գործողություն), կամ օբյեկտի, որպես վերացական առարկայի (գործողության անվանման), հատկանշում (բացառում, սկսում, ավարտում, փոփոխություն, ձգտում և այլն)՝ աՌջել (— մասին), ափսոսալ (— համար), բաղձալ, գիտենալ (— մասին), գրոհել (— վրա), դաստել, դյութել, դրժել, երազել (— մասին), երգել (— մասին), զգալ, զննել, ըղձալ, թվել, ժխտել. իմանալ *(— ուղ. խ.+բցռ.)*, լուծել *(նաև հոգ.)*, լքել, խափանել. խնամել, խնայել, խորհել *(—,— մասին)*, խոսել, խոտանել, խրատել, ծաղրել, ծանակել, կամենալ *(— ուղ. խ.+տր.)*, կատարել. կարդալ, համրել, հաստատել, հավաստել, հարգել, հեգնել, հերքել. հիշել *(— մասին)*, հիպնոզել, հղանալ, հոլովել, հուսալ, ճանաչել. ճառել, մեկնել *«մեկնաբանել»*, մոռանալ *(— մասին)*, մտածել *(— մասին)*, մտորել *(— մասին)*, մուրալ, նկատել, նկարել, նշանակել. նշել *(— մասին)*, որոնել, որոշել, պահել, պաշտել. պատկերել, պատճենել, պատմել (— մասին), պարզել *(— ուղ խ.+ համար)*, պլշել. պրծնել. սերտել, սիրել. սկսել *(— անորոշ)*. ստեղծել, ստուգել. վկայել *(— մասին,— ուղ. խ.+մասին)*. վճռել

տոնել, ցանկանալ (— ուղ. խ.+տր.), ուզել (— անորոշ), ուխտել, ունենալ, ուրանալ, վնտրել, փորձել, ճնճել, օրհնել և այլն։ *Այս կարգի բայերը մասամբ, ինչպես տեսնում ենք, ընդհանրական բնույթի են, մասամբ նույն տիպի են, ինչ անորոշ դերբայ պահանջող բայերը, մասամբ արտահայտում են լայն առումով նշանային հարաբերություններ և նեղ առումով՝ հոգեկան զանազան գործառույթներ. այս դեպքում զգայում ցույց տվող բայերը* (զգալ, տեսնել, նկատել և այլն) *փաստորեն ներկայացնում են ներգործման առարկան՝ զգայողին, որպես ներգործող։ Եթե նկատի առնենք որ շաղկապի հետ կապակցվելու կարողությունը, ապա կարելի է առանձնացնել հետևյալ բայերը՝* աներջել, բաղձալ, գիտենալ, դրժել, երազել, երգել, զգալ, ըղձալ, ժխտել, իմանալ, խորհել, խոսել, ծաղրել, ծանակել, կամենալ, կարդալ, համրել, հաստատել, հավաստել, հեգնել, հերքել, հիշել, հղանալ, հուսալ, ճառել, մոռանալ, մտածել, մտորել, նկատել, նշել, որոշել, պատմել, պարզել, ստուգել, վկայել, վճռել, ցանկանալ, ուզել, ուխտել, ստանալ և այլն։ *Դժվար չէ նկատել, որ սրանք զգայում, ցանկություն և հոգեկան զանազան այլ գործառույթներ արտահայտող բայեր են, որոնց համար որպես օբյեկտ հանդես են գալիս ամբողջական նախադասություններ։*

Եռարժույթ անցողական բայերը կարելի է խմբավորել ըստ անուղղակի խնդիրների տարբեր դրսևորումների.

1) Ուղիղ խնդրի հետ միասին տրական հոլովով խնդիր պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+տրական հոլովով խնդիր» մասնակաղապար)՝ ազուցել, ազդանշել, ազդարարել, ակնարկել, աղաչել (— ուղ. խ.+բցո.), աղերսել (— ուղ. խ.+բցո.), աճել (— ուղ. խ.,— ուղ. խ.+համար), ապացուցել, ապսպրել, առ(ա)դրել (— ուղ. խ.+ինո), ասել, ավանդել, ավետել, արգելել (— տր.+անորոշ), բաժանել «բաշխել» (բաժանել «անջատել»՝ — ուղ. խ.+բցո.) բաշխել (—ուղ. խ.+միջև), բառնալ (բարձել) (— ուղ. խ.+վրա), բացատրել, բռնադատել, գամել (— ուղ. խ.+տեղի ուղղ.)[36], գանգատվել, գրել (— տր.+մասին), գրավել, գաւժել, գուշակել (—,— ուղ. խ.+համար), դասավանդել (— ուղ. խ.), դասել (— ուղ. խ.+վրա), դրդել, ենթարկել, զեկուցել (— տր.+մասին), զոհաբերել (— ուղ. խ.+համար),

[36] «Տեղի ուղղ.» *տվյալ դեպքում նշանակում է «տեղի ուղղական» (ուղղության տեղի պարագա)։*

զուգակցել (— *ուղ. խ.*, — *ուղ. խ.*+հետ), ընծայել, ընձեռել, թախանձել (— *տր.*+համար, *տր.*+*անորոշ*), թարգմանել, թելադրել, թողնել (— *ուղ. խ.*, — *անորոշ*), լծել (— *ուղ. խ.*+հետ), խառնել (— *ուղ. խ.*, — *ուղ. խ.*+հետ), խոստանալ (— *տր.*+*անորոշ*), խոստովանել, ծախել, կապել (— *ուղ. խ.*+հետ), կարգադրել (— *տր.*+*անորոշ*), կարկառել (— *ուղ. խ.*), կիսել (— *ուղ. խ.*), կտակել, հակադրել, հաղորդել, հայտնել, հանձնարարել, հանձնել, հառել, հասցեագրել, հատուցել (— *տր.*+համար), հարցնել (— *ուղ. խ.*+*բցո.*), հեռագրել, հղել (— *ուղ. խ.*+*տեղի ուղղ.*,— *ուղ. խ.*+*մոտ կամ ետևից*), հյուսել (— *ուղ. խ.*,— *ուղ. խ.*+հետ), հուշել, հրամայել (— *տր.*+*անորոշ*), ձուլել (— *ուղ. խ.*+հետ), ճեղքել (— *ուղ. խ.*), մաղթել, մատակարարել, մատնանշել, մատնել, մատուցել, մերժել, միակցել (—,— *ուղ. խ.*+հետ), մղել (— *ուղ. խ.*+*անորոշ*,— *ուղ. խ.*+*տեղի ուղղ.*), ներշնչել, նկարագրել (— *ուղ. խ.*), նվիրաբերել, նվիրել, շնորհել, շշնջալ (—), պատասխանել, պատմել (— *տր.*+մասին), պարգևել, սեռել (— *ուղ. խ.*+վրա), ստորաբաժանել (— *ուղ. խ.*), վաճառել, վերագրել, վերածել, վերավաճառել, վերափոխել, տալ, տրոհել, ուղարկել (— *ուղ. խ.*+*տեղի ուղղ.*,— *ուղ. խ.*+ետևից), ուղղել (— *ուղ. խ.*+*տեղի ուղղ.*), ուսուցանել, փաթաթել, փոխարկել, փոխակերպել, փոխել, փռել (— *ուղ. խ.*+ *տեղի ուղղ.*), fարոզել, fսել (— *ուղ. խ.*+վրա) և այլն։ *Դժվար չէ նկատել, որ այս բոլոր բայերն արտահայտում են տալու, հաղորդելու (=նշան տալու), վերածելու, ուղղելու, բաշխելու իմաստներ։ Ինչպես մասամբ տեսանք փակագծերում բերված զուգահեռ ձևերից, այս տիպի բայերին մոտ են այն բայերը, որոնց հետ ուղիղ խնդրի փոխարեն հանդես է գալիս անորոշը՝ անփոփոխ ձևով կամ, երբեմն էլ, տրականով՝* առաջարկել, արգելել, բռնադատել, թողնել, թույլատրել, կարգադրել, համոզել, հարկադրել, հորդորել, հրամայել, մերժել, պարտադրել, ստիպել և այլն։

2) Ուղիղ խնդրի հետ միասին բացառական հոլովով խնդիր պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+բացառական հոլովով խնդիր» մասնակաղապար)՝ ազատել, ածանցել, ակնկալել, աղաչել (— *ուղ. խ.*+*տր.*), աղերսել (— *ուղ. խ.*+*տր.*), անջատել, ապաքինել (— *ուղ. խ.*) առնել, արձակել (— *ուղ. խ.*+*տեղի ուղղ.*), արտագրել, արտածել, արտահանել, արտանկարել, արտատպել (— *ուղ. խ.*+*գործ.*), արտաfսել (— *ուղ. խ.*+*գործ.*), աfսորել (— *ուղ. խ.*+*գործ.*), բեռնաթափել, գանձել, գերադասել, գծել, գողանալ, գրավել, զանազանել, զավթել, զատել,

զեկուցել (— *տր.+մասին*), զտել (— *ուղ. խ.*), ընդունել (— *ուղ. խ.*), ընկալել (— *ուղ. խ.*), ընտրել, ժառանգել, թոցնել (*փխբ.*), ժողովել (— *ուղ. խ.+տեղի ուղղ.*), իմանալ, լսել, խզել, խնդրել (— *տր. կամ բցո.+անորոշ*), կազմել, կախել, կորզել, հայցել, հանել (— *ուղ. խ.+տեղի ուղղ.*), հավաքել (— *ուղ. խ.+տեղի ուղղ.*), հափշտակել, հորինել (— *ուղ. խ.*), ձեռք բերել, մեջբերել, շահել, շեղել, շորթել, չանթել, պահանջել (— *բցո.+անորոշ*), պոկել, ջոկել, սահմանազատել, սովորել, ստանալ, վաճել, վարձել, վերցնել, վոնդել, վտարել, տարբերել, տեղեկանալ, ուսանել, փրկել, ֆաղել, ֆաշել (— *ուղ. խ.+տեղի ուղղ.*) և այլն։ *Բացառականով խնդիր պահանջող անցողական բայերը ցույց են տալիս մի բանի անջատում մյուսից, այդ թվում նաև նշանի անջատում՝ այս բառի լայն իմաստով.* միացնել, տալ, հաղորդել և վտարել *բայերը տարբերվում են* անջատել, ստանալ, իմանալ և ընդունել *բայերից գործողության ուղղությամբ։ Բացառականով խնդիր են պահանջում նաև արդեն հիշատակված* գտնել, կերտել, հայթայթել, հնարել, ճարել, մոգոնել, շինել, ստեղծել և այլն *անցողական բայերը։*

3) Ուղիղ խնդրի հետ միասին գործիական հոլովով խնդիր պահանջող եռարժույթ բայեր («ննթակա+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+գործիական հոլովով խնդիր» մասնակազապար)՝ ամրապնակել (— *ուղ. խ.+ներգ.*), բախտավորել, բավարարել, բեռնավարել, բեռնել, բնորոշել, բնութագրել, գայթակղեցնել, գերազանցել (— *ուղ. խ.+ներգ.*), գերակատարել, զարդարել, զուգել, թովել, լրցնել, խոցել, կաշառել, կերակրել, կոծել, կողմնորոշել (— *ուղ. խ.+ներգ.*), համակրել, հյուրասիրել, հուսադրել, ճեղքել (— *ուղ. խ.*,— *ուղ. խ.+տր.*), մխիթարել, նախշել (— *ուղ. խ.*), ներկել, նշանավորել, շնորհավորել (— *ուղ. խ. +համար կամ առթիվ*), շրջապատել, ոգեշնչել, ոգևորել, ողողել, ոռոգել, չափել, պատել, պատվել, պարգևատրել, պարուրել, պճնել, ամփոփել, վարկաբեկել (— *ուղ. խ.*), վարձատրել (— *ուղ. խ.*), վիրավորել (— *ուղ. խ.*), վնասել, տուգանել, տորոել (— *ուղ. խ.*), փաթաթել, փոխարինել, ֆաղարկել, օժտել, օծել և այլն։

4) Ուղիղ խնդրի հետ միասին ներգոյական հոլովով կամ մեջ *կապով (բուն և պարագայական) խնդիր պահանջող եռարժույթ բայեր («ննթակա+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+ներգոյական հոլովով խնդիր» մասնակազապար)՝* ամբաստանել, անտեսել, առարկել, ափսոսել (— *ուղ. խ.+համար*), գովել (— *ուղ. խ.*,— *ուղ. խ.+համար*), գտնել (— *ուղ. խ.+բցո.*), երկրորդել, զետեղել, զրպար-

տել, ընդօրինակել, թաղել, խաբել, խանգարել, խծբծել, կանխել, կշտամբել (— *ուղ. խ.*+համար), կողմնորոշել (— *ուղ. խ.*+*գործ.*), հակագործել, համոզել, հանդիմանել (— *ուղ. խ.*+համար), հետապնդել (— *ուղ. խ.*), հյուրընկալել, հորդորել (— *ուղ. խ.*), հուսախաբ(եցն)ել, մարզել, մեղադրել (— *ուղ. խ.*+համար), նախատել (— *ուղ. խ.*+համար), նզովել (— *ուղ. խ.*+համար), չահագործել (— *ուղ. խ.*), պախարակել (— *ուղ. խ.*+համար), պաշտպանել, (— *ուղ. խ.*+*բցո.*,— *ուղ. խ.* +*ներգ.*), պատսպարել, սերմանել, ցանել, տեղադրել, տեղավորել (— *ուղ. խ.*), ցուցաբերել, փոխարինել և այլն:

5) Ուղիղ խնդրի հետ միասին ուղղական («հայցական») հոլովով կամ մեջ կապով (երբեմն էլ այլ կապերով պարագայական խընդիր՝ տեղի պարագա) պահանջող եռարժույթ բայեր («ենթակա+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+ուղղության տեղի պարագա» մասնակաղապար)՝ առաջնորդել, առաքել, արձակել (— *ուղ. խ.*+*բցո.*), դնել (— *տր. կամ* վրա, մոտ...), բերել, գցել, խոթել, խրել, խցկել, կանչել. կոխել, հավաքել (— *ուղ. խ.*,— *ուղ. խ.*+*ներգ.*,— *ուղ. խ.*+*բցո.*), հրավիրել, հրել, ձգել, մխել, մխրճել, մղել, մուծել, հետել, շպրտել, տանել, տապալել, տեղափոխել, ուղարկել (— *ուղ. խ.*+*տր.*,— *ուղ. խ.*+*եռևից*), փոխադրել, ֆաշել (— *ուղ. խ.*+*բցո.*), ֆշել (— *ուղ. խ.*+*բցո.*) և այլն:

6) Ուղիղ խնդրի հետ տարբեր կապերով խնդիրներ պահանջող եռարժույթ բայեր.

ա) Մեջ *կապով լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր («ենթակա+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+մեջ կապով խընդիր» մասնակաղապար)՝* մեխել (— *ուղ. խ.*+*տր.*,— *ուղ. խ.*+*տեղի ուղղ.*), ներգրավել, ներդրել, ներմուծել, ներֆաշել և այլն:

բ) Վրա *կապով լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր («ենթակա+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+վրա կապով խընդիր» մասնակաղապար)՝* բարդել, բարձել (բառնալ) (— *ուղ. խ.*+*տր.*), դարսել (— *ուղ. խ.*+*տր.*), դիզել, խարսխել (— *ուղ. խ.*), կիտել (— *ուղ. խ.*), մակագրել, փորագրել, ֆսել (— *ուղ. խ.*+*տր.*) և այլն:

գ) Հետ *կապով լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր («ենթակա+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+հետ կապով խընդիր» մասնակաղապար)՝* բաղդատել, զոդել, զուգադրել, զուգավորել, զրուցել, լծել (— *ուղ. խ.*+*տր.*), խաղալ (— *ուղ. ղ.*), խառնել (— *ուղ. խ.*+*տր.*), համակերպել, համեմատել, հյուսել (— *ուղ. խ.*+

տր.), միավորել, շաղախել *(— ուղ. խ.+տր.)*, շաղկապել, շղթայակցել *(— ուղ. խ.+տր.)*, շփոթել և այլն։

դ) Համար կապով լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր *(«ենթական+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+համար կապով խնդիր» մասնակաղապար)*՝ աճիծել, գովել *(— ուղ. խ.+ներգ.)*, դրվատել, կշտամբել *(— ուղ. խ.+ներգ.)*, կոթել, նախատել *(— ուղ. խ.+ներգ.)*, նզովել, շնորհավորել *(— ուղ. խ.+գործ.)*, պախարակել *(— ուղ. խ.+ներգ.)* պատժել և այլն։

ե) Հանդեպ (ճկատմամբ, դեպի) լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր *[«ենթական+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+հանդեպ (ճկատմամբ, դեպի) կապով խնդիր» մասնակաղապար]*՝ տածել և այլն։

զ) Միջև կապով լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր *(«ենթական+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+միջև կապով խընդիր» մասնակաղապար)*՝ բաշխել *(— ուղ խ.+տր.)*։

է) Մասին կապով լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր *(«ենթական+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+մասին կապով խնդիր» մասնակաղապար)*՝ ասել, գրախոսել, գրել, երգել *(— ուղ. խ.,— մասին)*, խորհել *(— ուղ. խ.,— մասին)*, մտածել *(— ուղ. խ., — մասին)*, պատմել *(— ուղ. խ., — մասին)*, տեղեկանալ *(ուղ. խ.+բցո., — բցո.+մասին)* և այլն։

ը) Շարժում (շարք) կապով լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր *[«ենթական+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+շարժում (շարք) կապով խնդիր» մասնակաղապար]*՝ դասել։

թ) Մինչև կապով լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր *(«ենթական+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+մինչև կապով խնդիր» մասնակաղապար)*՝ երկարաձգել, հետաձգել, շարունակել և այլն։

ժ) Դեմ կապով լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր *(«ենթական+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+դեմ կապով խնդիր»)*՝ ճյութել։

ժա) Մոտ (կողմից) կապով լրացուցիչ խնդիր պահանջող անցողական բայեր *[«ենթական+ուղիղ խնդիր+դիմավոր բայ+մոտ (կողմից) կապով խնդիր» մասնակաղապար]*՝ շարել։

4. ԲԱՅԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Բայերի ընտրութային դասակարգումը, ինչպես նշվել է, բայերի դասակարգումն է ըստ մակբայների տարբեր խմբերի հետ նրանց կապակցելիության։ Հասկանալի է, որ բայերի ընտրութային համեմատաբար լրիվ դասակարգում կատարելու համար հարկավոր կլիներ ունենալ բայերի և մակբայների ըստ հնարավորին լրիվ ցանկը և պարզել դրանց բոլոր հնարավոր զուգակցութիւնները։ Հայերենի համար առայժմ այդպիսի դատակարգում չի կատարված։ Այս խնդրի լուծումը թողնելով ապագային (այն կպահանջի էլեկտրոնային հաշվիչ մեքենայի օգտագործում)՝ առայժմ բավարարվենք բայերի՝ մակբայական հիմնական խմբերի հետ կապակցվելու հնարավորութեան քննութեամբ։

Գոյականական բառակապակցութիւնների քննութեան ժամանակ մենք տարբերեցինք արմատական կամ իբրև այդպիսին գիտակցվող մակբայների երեք խումբ՝ տեղանիշ, ժամանականիշ և չափաքանականիշ։ Բայական բառակապակցութեան և նախադասութեան մակբայական լրացումների քննութեան կապակցութեամբ, հաշվի առնելով հարցական բնույթի դերանվանական մակբայների տիպերը և բաղադրյալ մակբայների վերաբերյալ տվյալները՝ մենք առանձնացրինք նաև որականիշ («ձևի») և պատճառա-նպատականիշ խմբեր։ Այսպիսով, ստացվեց մակբայների հինգ խումբ՝ 1) տեղանիշ, 2) ժամանականիշ, 3) չափաքանականիշ, 4) որականիշ («ձևի») և 5) պատճառա-նպատականիշ։ Այս դասակարգումը քնականաբար տրամաբանորեն թերի է, որովհետև նախ՝ ոչ բոլոր պարագաները են մակբայական արտահայտութիւն ստանում (համմտ. հիմունքի և հակառակ հիմունքի պարագաները), երկրորդ՝ մակբայների դեպքում պատճառի և նպատակի հատակ տարբերակում չի լինում, երրորդ՝ այսպես կոչված չափաքանականիշ մակբայների խմբի մեջ դրվում են տարածութեան ու ժամանակի չափ արտահայտող մակբայները, և այդ առումով հիշյալ խմբերի տարբերակումը դառնում է բավականին տարտամ։ Հաշվի առնելով այս բոլորը՝ նպատակահարմար համարենք բայերի ընտրութային քննութիւնը կատարել ըստ մակբայների առանձին խմբերի մեջ մտնող ենթախմբերի և հաշվի առնենք նաև մակբայաբար գործածվող ածականները։

Այսպես կոչված տեղանիշ մակբայների մեջ պետք է տարբերել երկու ենթախումբ՝ ա) մակբայներ, որոնք ցույց են տալիս տեղ կամ

դիրք՝ անկախ ուղղությունից և պատասխանում են որտե՞ղ հարցին, բայց սովորաբար ճիշտ գործածության դեպքում, չեն պատասխանում ու՞ր հարցին՝ ներսում, դրսում, առջևում, ետևում և այլն. բ) մակբայներ, որոնք ցույց են տալիս ուղղություն դեպի մի տեղ, պատասխանում են ու՞ր հարցին՝ ներս, դուրս, առաջ, (ի)ետ, վեր, վար, ընդառաջ, սարն ի վեր և այլն. տրամաբանորեն սրանց մեջ պետք է դրվեն նաև որտեղի՞ց և որտեղից ու՞ր հարցերին պատասխանող մակբայները՝ վերուստ:

Այսպես կոչված ժամանականիշ մակբայները բաժանվում են մի քանի խմբի. ա) բուն ժամանականիշ մակբայներ, որոնք ցույց են տալիս ժամանակային «տեղ» (դիրք), հարաբերակից են բուն տեղի մակբայներին (այն տարբերությամբ, որ տեղի մակբայները ցույց են տալիս տարածական երեք չափում, իսկ ժամանակայիններն գծային բնույթ ունեն) և պատասխանում են ե՞րբ (=ո՞ր ժամանակ. համմտ. որտե՞ղ) հարցին՝ առաջ, հետո, երեկ, այսօր, այժմ հիմա, հետու, առավոտյան, երեկոյան և այլն. բ) ժամանակային չափի կամ տևողության մակբայներ, որոնք ցույց են տալիս ժամանակի որոշ չափ՝ տևողություն և պատասխանում են որքա՞ն ժամանակ, որքա՞ն ժամանակում, ի՞նչ արագությամբ հարցերին՝ արագ, իսկույն, դանդաղ, երկար, ցմահ, րոպեապես, վայրկենաբար և այլն. այս մակբայների որոշ տարբերակ պետք է համարել հասանելիության աստիճան արտահայտող արդեն (արդեն հասել է), դեռ, դեռևս (դեռ չի հասել, դեռևս չի եկել) մակբայները. գ) ժամանակային քանակի մակբայներ, որոնք ցույց են տալիս գործողության կատարման քանակն ու՝ պարբերականությունը և պատասխանում են քանի՞ անգամ հարցին՝ երկիցս, եռիցս, բազմիցս և այլն, երբեմն, հաճախ, միշտ, երբեմն–երբեմն, մերթընդմերթ և այլն. դ) ժամանակային կարգի մակբայները, որոնք ցույց են տալիս գործողության սկիզբը, ընթացքը, վերջը և պատասխանում են ո՞ր անգամ, քանի՞երորդ անգամ, ե՞րբ հարցերին՝ սկզբում, վերջում, նախապես, ընթացքում, կրկին, նորից, դարձյալ և այլն: Ինչպես հայտնի է, վերջին երկու տիպի մակբայները սովորաբար դրվում են չափ ու քանակի մակբայների մեջ, որ յուրովին ճիշտ է: Բուն չափ ու քանակի մակբայներից այս մակբայների տարբերությունն այն է, որ նրանք կապված են գործողության ժամանակի հետ, մինչդեռ բուն չափ ու քանակի մակբայներն արտահայտում են տարածության չափ և գործողության հետ կապված առարկաների չափ ու քանակ:

Չափ ու քանակի մակբայների մեջ ևս կարելի է տարբերել մի քանի ենթախումբ. ա) չափի մակբայներ, որոնք ցույց են տալիս գործողության հետ կապված առարկաների (օբյեկտի տարածության) ընդգրկման չափը և կազմը՝ շատ, բիչ, բիչ-բիչ, համարյա, գրեթե, եթե, մոտավորապես, լիովին, ամբողջովին, մասամբ, բացառապես *և այլն. բ) աստիճանի մակբայներ, որոնք ցույց են տալիս գործողության կատարման և ազդեցության աստիճանը՝* հազիվ, հազիվհազ, ուժգին, սաստիկ, ուժգնորեն *և այլն. գ) քանակի մակբայներ, որոնք ցույց են տալիս գործողության ենթակայի, երբեմն էլ օբյեկտի քանակը՝* մեկ-մեկ, զույգ-զույգ, փունջ-փունջ *և այլն: Չափի ու քանակի մակբայները սովորաբար պետք է պատասխանեն* որքա՞ն, որքա՞ն տարածություն, ի՞նչ աստիճանի, ի՞նչ **չափով, քանիսո՞վ** *հարցերին, բայց երբեմն պատասխանում են* ինչպե՞ս *հարցին* (ուժգին, հազիվ):

Որականիշ մակբայները կարելի է բաժանել երկու խմբի. ա) ձևի մակբայներ, որոնք ցույց են տալիս ենթակայի և նրա շարժման ձևը՝ ուղիղ, ուղղակի, ուղղակիորեն, շեղ, շեղակի, ծուռումուռ, **կռնգեկուզ, ճոտընկայս** *և այլն. բ) հատկանշային մակբայներ, որոնք ցույց են տալիս ենթակայի և օբյեկտի, ընդհանրապես գործողության հետ կապված առարկաների վարմունքով ու հատկություններով պայմանավորված և տվյալ գործողության համար մասնավորվող հատկանիշներ՝* արտաքուստ, ներքուստ, ներքնապես, տեսականորեն, գործնականորեն, գիտակցաբար, բարոյապես, **խելքաբար, լրջորեն, աշխարհագրորեն** *և այլն: Որականիշ մակբայները սովորաբար պատասխանում են* ինչպե՞ս, ի՞նչ ձևով *հարցերին:*

Հայերենի պատճառա-նպատականիշ մակբայները թվով խիստ սահմանափակ են, վերաբերում են անձերի կատարած գործողություններին և պատասխանում են ինչու՞, ինչի՞ համար, ինչի՞ց դրդված, ի՞նչ նպատակով *հարցերին՝* ամոթս, ի ճեճուկս, չգրու:

Մակբայների բոլոր խմբերի մեջ կան ժխտական բնույթի բառեր և բառախմբեր (նկարագրական մակբայներ), որոնք գործածվում են միայն ժխտական բայաձևերի հետ՝ ոչ մի տեղ, երբեք, ամենևին, ոչ մի չափով, ոչ մի կերպ, ոչ մի ձևով:

Այժմ ընտրելով մակբայական ամեն մի ենթախմբից մեկական ներկայացուցիչ և բայական տարբեր խմբերից մի քանի ներկայացուցիչ (այնպես, որ ընդգրկվեն բայական իմաստային հիմնական տիպերը)՝ կազմենք բայերի՝ մակբայների տարբեր տիպե-

Բայեր	Ներանց կապակցելիությունը մակրայների հետ											
	դուրս	ներսից դուրս	դուրսից ներս	ներքև (ներս)	դեպի	հետևից	դեպի ներս	դեպի դուրս	դեպի վեր (վերև)	դեպի ներքև	դեպի առաջ	դեպի հետ
1. Անանցողական												
(մարդիկ, դրքեր) են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
կան	—	—	—	—	+	—	+	+	—	—	—	—
կանգնած են	—	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
մնում են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
շողում են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
գոչում են	+	—	+	—?	+	—	+	+	—	—	+	—
մեծանում են	+	—	+	—?	+	—	+	+	—	—	+	—
աճում են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
դալիս են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
գնում են	+	—	+	—	+	—	—	+	—	—	+	—
ժպտում են	+	—	+	—?	+	—	+	+	—	—	+	—
հառաչում են	+	—	+	—?	+	—	+	+	—	—	+	—
սխրում են	+	—	+	—?	+	—	+	+	—	—	+	—
2. Անցողական												
(տներ) ուներ	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
(տները) գիտեն	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
(տարցը) հասկանում են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
(ամեն ինչ) զգում են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
(դրանք տներ) են դարձնում	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
(դրանք) փոխում են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
(քարերը) շարժում են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
(դրքերը) տալիս են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
(նրանց) հուզում են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
(նրանց) սպանում են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—
(նրանց) ծեծում են	+	—	+	—	+	—	+	+	—	—	+	—

րի հետ կապակցվելու հնարավորությունը պարզող աղյուսակ (աղյուսակ 31)[37]։

Աղյուսակը ցույց է տալիս հետևյալը.

1) Մակբայների որոշ տիպեր՝ **դրսում** *(տեղի),* **առավոտյան** *(ժամանակի),* **արդեն** *(հատանելիության աստիճանի),* **կրկին** *(ժամանակի կարգի),* **զույգ-զույգ** *(քանակի), ընդհանրապես ընտրութային տարբերություններ չեն առաջացնում։ Ըստ աղյուսակի այս խմբին պետք է հատկացվեն նաև հատկանշային մակբայները (արտաքնապես), բայց սա պետք է բացատրել աղյուսակի համար ընտրված մակբայի բնույթով. այս խմբի մակբայները իրականում բայերի դասանշային գործածության սահմանափակություն ունեն. համմտ.* **բաջարար, մտավորապես, բարոյապես** *և այլն։*

2) Տեղի ուղղության մակբայներն օգտագործվում են միայն տարածական շարժում արտահայտող բայերի հետ՝ լինեն դրանք անցողական, թե անանցողական՝ **գալ, գնալ, շարժել, տալ** *և այլն։*

3) Ժամանակային չափի (տևողության) և քանակի մակբայները՝ **արագ, հաճախ** *և այլն, բայակերպային սահմանափակություն ունեն. միակատար և անփոփոխ վիճակ արտահայտող բայերի հետ նրանք չեն գործածվում՝* **եմ, կամ, կանգնած լինել, մնալ, ունեմ, գիտեմ** *և այլն։*

4) Ավելի սահմանափակ գործածություն ունեն աստիճանի և ձևի մակբայները՝ ըստ ենթակայի ու օբյեկտի փոխազդեցության չափի և ենթակայի կամ նրա շարժման ձևի։ Առաջին տիպի մակբայների հետ գործածվում են հատկապես ազդեցության բայերը, ձևի մակբայների հետ՝ ենթակայի դիրք և շարժում ու փոփոխություն ցույց տվող բայերը։

5) Պատճառա-նպատակային մակբայների գործածությունը խիստ սահմանափակ է՝ ըստ բայերի դասանշային և կերպային առանձնահատկությունների։

6) Եթե նկատի առնենք միայն չափի և աստիճանի մակբայները, ապա կարելի է սահմանել որոշ աստիճանավորություն. տևողությանը հատուկ լինելով բոլոր բայիմաստներին, եմ, կամ, ունեմ **արժեմ, գիտեմ** *բայերի մեջ արտահայտվում է որպես կետ, մյուսների դեպքում՝ որպես գիծ (վերջինիս հատուկ տարբերակում-*

---

37 Նկատի ունենալով որոշ մակբայների բնույթը (համմտ. **զույգ-զույգ**)՝ բայերը բերվում են հոգնակի երրորդ դեմքով, ընդ որում ստորոգելի և ուղիղ խնդիր ստացող բայերը բերվում են որևէ ստորոգելիի և ուղիղ խնդրի հետ միասին։

ներով՝ ըստ ժամանակի և տարածության չափային փոխհարաբերության). ուժգնությունը հատուկ է այն բայերի արտահայտած գործողությանը, որոնք ցույց են տալիս որոշ փոխազդեցություն՝ ըստ գործողության աղբյուրի և օբյեկտի ծախսած էներգիայի։ Բացի սրանցից, ինչպես հայտնի է հնչաբանությունից, ձայնի համար այս երկուսին գումարվում է բարձրության աստիճանի հատկանիշը՝ բարձր խոսել, ճնշել, ձայնել, երգել և այլն՝ կապված ձայնի աղբյուրի տատանումների քանակի նշանակման հետ։

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՓՈԽԿԱՂԱՊԱՐՈՒՄ

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ինչպես նշել ենք ներածուխյան մեջ, համադասական կապակցությունը կարող է ունենալ բառային և ոչ-բառային արտահայտություն։ Համադասական կապակցության բառային արտահայտիչները համադասական շաղկապներն են, ոչ-բառայինները՝ պարզ կցումը և, որոշ վերապահությամբ, զեղչումը՝ համապատասխան առոգանությամբ հանդերձ։

Համադասական յուրաքանչյուր կապակցություն,—լինի այն բառերի, բառակապակցությունների թե նախադասությունների,—վերջին հաշվով կարելի է դիտել որպես տարբեր քանակությամբ ընդհանուր տարրեր ունեցող կամ ոչ մի ընդհանուր տարր չունեցող նախադասությունների համադասական կապակցություն. համմտ. «ես գնեցի մատիտ»+«ես գնեցի տետր» → «ես գնեցի մատիտ և տետր». «ես գնեցի մատիտ»+«Գրիգորը գնեց տետր» — «ես գնեցի մատիտ, Գրիգորը՝ տետր». «ես գնեցի մատիտ»+«ես մատիտով գրեցի դասը» → «ես գնեցի մատիտ և մատիտով (նրանով) գրեցի դասը» և այլն։ Հայ քերականության մեջ ընդունված է՝ ա) ընդհանուր գլխավոր անդամներ ունեցող նախադասությունների միացումը մեկ նախադասության մեջ (այլ կերպ ասած՝ մեկ ենթակայով և մեկից ավելի ստորոգյալներով, մեկից ավելի ենթականերով և մեկ ստորոգյալով, մեկից ավելի ենթականերով և ստորոգյալներով նախադասությունները) կոչել միավորյալ նախադասություն. բ) ընդհանուր երկրորդական (լրացական) անդամներ ունեցող նախադասությունների միացումը մեկ նախադասու-

թյան մեջ՝ համադաս անդամներով նախադասություն. գ) տարբեր դերավոր անդամներ (տարբեր ենթականեր և տարբեր ստորոգյալներ) ունեցող նախադասությունների միացումը մեկ նախադասության մեջ՝ նախադասությունների համադասական կապակցություն:

Համադասական կապակցության հիմնական միջոցները պարզ հավելումը և համադասական շաղկապներն են. զեղչումը բառիս բուն իմաստով հատուկ եղանակ չէ, այլ այն բանի դրսևորումը, որ տվյալ անդամը միացված նախադասությունների համար ընդհանուր է («Ես գնացի տուն, Հակոբը՝ դպրոց»): Նախադասությունների պարզ հավելմամբ կարող են արտահայտվել այն բոլոր իմաստները, որոնք արտահայտում են համադասական շաղկապները. իմաստային տարբերությունները դրսևորվում են միավորվող նախադասությունների կազմով և համապատասխան առոգանությամբ:

2. ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Համադասական շաղկապները, մի շարք այլ միավորների նման, կարող են հանդես գալ և՛ բառերի, և՛ բառախմբերի ձևով. բառախմբերն իրենց հերթին կարող են լինել երկու տիպի՝ մենաշաղկապներ, որոնք հանդիպում են շաղկապվող միավորներից մեկի մոտ (սովորաբար նրանց միջև), և զուգաշաղկապներ, որոնք հանդիպում են շաղկապվող միավորներից յուրաքանչյուրի մոտ (սովորաբար նրանցից առաջ): Միաբառային շաղկապներն են այլ, այնինչ, բայց, էլ, թե, իսկ, կամ, մինչդեռ, ևս, նույնպես, սակայն ու, և: Բառախմբային մենաշաղկապները բաղկացած են բառային շաղկապներից կամ դրանց և ցուցական բառերի միացությունից՝ բայց և, նույնպես և, սակայն և, ոչ թե և այլն: Զուգաշաղկապները լինում են կրկնավոր՝ էլ — էլ, թե — թե, կամ — կամ, ոչ — ոչ, ոչ այն է — ոչ այն է, և՛ — և՛, և տարանդամ՝ ոչ — այլ, ոչ թե — այլ, ոչ միայն — այլև, ոչ միայն — այլ ևս: Միաբառային շաղկապներից էլ-ը և նույնպես-ը դրվում են շաղկապվող միավորներից երկրորդից հետո և ունեն եղանակիչ մասնիկների արժեք. մյուսները դրվում են շաղկապվող միավորների միջև՝ ես և դու, ես կամ դու և այլն: Զուգաշաղկապներից միայն էլ — էլ-ն է դրվում շաղկապվող յուրաքանչյուր միավորից հետո. մյուսները դրվում են շաղկապվող միավորներից առաջ:

Համադասական շաղկապների բաշխումը ինչպես նշվեց, գործառական և մակարդակային տարբերություններ չունի. այդ շաղկապները կարող են գործածվել՝ ա) բոլոր լիիմաստ խոսքի մասերի և բ) ոչ միայն բառերի, այլև նախադասությունների շաղկապման համար. այսպիսով, համադասական շաղկապների բաշխման և, հետևաբար, նրանց իմաստի տարբերությունները կապված են ոչ թե առանձին բառերի ու նույնիսկ բառակապակցությունների, այլ նախադասությունների ընդհանուր կարիքների հետ։ Դժվար չէ պարզել, որ այստեղ դեր են խաղում շաղկապվող միավորների որակական և քանակական տարբերությունները։ Որակական ասելով հասկանում ենք շաղկապվող միավորների հաստատականության և ժխտականության, միասնության և հակադրության տարբերությունները։ Քանակական ասելով հասկանում ենք այդ տարբերությունների՝ մեկական թե երկուական զույգերի վրա տարածվելը։ Այս հարաբերությունները կարելի է արտահայտել 1-ին աղյուսակով.

Աղյուսակ 1

Շաղկապներ	Շաղկապվող եզրեր		Օրինակներ
	Առաջին եզր	Երկրորդ եզր	
1	2	3	4
1. այլև	+	+	գրեց, այլև գնաց (Գրիգորը, այլև Հակոբը)
էլ			գրեց, գնաց էլ (Գրիգորը, Հակոբն էլ)
նաև			գրեց,նաև գնաց (Գրիգորը, նաև Հակոբը)
նույնպես			Գրիգորը, Հակոբը նույնպես
ու			գրեց ու գնաց (Գրիգորն ու Հակոբը)
և			գրեց և գնաց (Գրիգորը և Հակոբը)
էլ—էլ			գրեց էլ, գնաց էլ (Գրիգորն էլ, Հակոբն էլ)
թե—թե			թե՛ գրեց, թե՛ գնաց (թե՛ Գրիգորը, թե՛ Հակոբը)
և—և			և՛ գրեց, և՛ գնաց (և՛ Գրիգորը, և՛ Հակոբը)
ոչ միայն—այլև			ոչ միայն գրեց, այլև գնաց (ոչ միայն Գրիգորը, այլև Հակոբը)
ոչ միայն—այլ նաև			ոչ միայն գրեց, այլ նաև գնաց (ոչ միայն Գրիգորը, այլ նաև Հակոբը)
2. (չ) և (չ)	—	—	չգրեց և չգնաց
(չ) ու (չ)			չգրեց ու չգնաց
(ոչ) և (ոչ)			ոչ գրեց և ոչ գնաց (ոչ Գրիգորը և ոչ Հակոբը)
ոչ—ոչ			ոչ գրեց, ոչ գնաց (ոչ Գրիգորը, ոչ Հակոբը)
էլ			չգրեց, չգնաց էլ

1	2	3	4
էլ—էլ			չգրեց էլ, չգնաց էլ
ոչ միայն—այլև			ոչ միայն չգրեց, այլև չգնաց
			(ոչ միայն Գրիգորը, այլև Հակոբը չգնաց)
ոչ միայն—այլ նաև			ոչ միայն չգրեց, այլ նաև չգնաց
			(ոչ միայն Գրիգորը, այլ նաև Հակոբը չգնաց)
3. բայց	+	—	գրեց, բայց չգնաց (Գրիգորը, բայց ոչ Հակոբը)
միայն թե			գրեց, միայն թե չգնաց
			(Գրիգորը, միայն թե ոչ Հակոբը)
(այլ) ոչ թե			գրեց, (այլ) ոչ թե գնաց (Գրիգորը, այլ ոչ թե Հակոբը)
և (ու)			գրեց և չգնաց (Գրիգորը և ոչ Հակոբը)
4. այլ	—	+	չգրեց, այլ գնաց
ոչ—այլ			ոչ Գրիգորը, այլ Հակոբը
ոչ թե—այլ և (ու)			ոչ թե գրեց, այլ գնաց (ոչ թե Գրիգորը, այլ Հակոբը) չգրեց և գնաց
5. թե՞	±	∓	գրե՞ց, թե՞ չգրեց (գրե՞ց, թե գնաց)
			(Գրիգո՞րը, թե՞ Հակոբը)
կամ			գրեց կամ չգրեց (գրեց կամ գնաց)
			(Գրիգորը կամ Հակոբը)
կամ—կամ			կամ գրեց, կամ գնաց
			(կամ Գրիգորը, կամ Հակոբը)
6. այնինչ	+,+	—,—	Գրիգորը գրեց, այնինչ Հակոբը չգրեց
			(Գրիգորը գրեց, այնինչ Հակոբը գնաց)
իսկ			Գրիգորը գրեց, իսկ Հակոբը՝ ոչ
			(Գրիգորը գրեց, իսկ Հակոբը գնաց)
մինչդեռ			Գրիգորը գրեց, մինչդեռ Հակոբը չգրեց
և (ու)			Գրիգորը գրեց, մինչդեռ Հակոբը գնաց
			Գրիգորը գրեց, և Հակոբը չգրեց
			(Գրիգորը գրեց, և Հակոբը գնաց)

Աղյուսակի հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Կարելի է տարբերել համադասական շաղկապների երեք հիմնական տիպ՝ ա) հավելական՝ երկու ենթատիպով՝ դրական-հավելական կամ միասնության (+ և +) և ժխտա-հավելական կամ կրկնաժխտական (— և —). բ) ներհակական՝ երեք ենթատիպով՝ սահմանափակական (+ և —), ժխտական կամ փոխարկական (— և +) և հակադրական (+, + և —,—). գ) տրոհա-

կան կամ երկբայական (± և ∓). վերջինս յուրատեսակ միջին դիրք է գրավում առաջին երկու տիպերի միջև և, ի տարբերություն նրանց, ունի սուբյեկտիվ-եղանակիչ երանգ. խոսողը երկու կողմն էլ հավասարապես ընտրելի է համարում՝ կամ առաջինը մերժելի և երկրորդն ընդունելի, կամ ընդհակառակն:

2. Համադասական շաղկապների արտահայտած իմաստները պատկանում են մեր կողմից առանձնացված ընդհանրական կարգերից (կատեգորրիաներից) կազմին և ունեն երկու տեսակի դրսևորում՝ գոյաբանական ու իմացաբանական. ա) գոյաբանական առումով այստեղ պետք է տարբերել՝ որպես վիճակ՝ առկայությունը և բացակայությունը, որպես գործողության՝ հավելումը, հանումը, փոխարինումը. բ) իմացաբանական-եղանակային առումով պետք է տարբերել՝ որպես վիճակ՝ իմացությունը և անիմացությունը, որպես գործողություն՝ հաստատումը, ժխտումը և երկբայումը՝ ըստ 2-րդ աղյուսակի.

Աղյուսակ 2

	Վիճակայնություն		Գործողայնություն		
	+	−	+	−	±
Գոյաբանական	Առկայություն	Բացակայություն	Հավելում	Հանում	Փոխարկում
Իմացաբանական	Իմացություն	Անիմացություն	Հաստատում	Ժխտում	Երկբայում

3. Համադասական շաղկապների՝ նշված իմաստները պատկանելով կարգի կազմին՝ բնականաբար կարող են արտահայտվել նաև կապերի օգնությամբ՝ հետևյալ հիմնական փոխակերպումներով՝ ա) «Գրիգորը և Հակոբը» → «Գրիգորը Հակոբի հետ միասին», բ) «Ոչ թե Գրիգորը, այլ Հակոբը» → «Գրիգորի փոխարեն Հակոբը», որոշ վերապահությամբ նաև գ) «Գրիգորը, բայց ոչ Հակոբը» → «Գրիգորը, առանց Հակոբի,...», դ) «Ոչ Գրիգորը, այլ Հակոբը» → «Հակոբը, առանց Գրիգորի...»: Տրոհականի դեպքում համադասական կապակցության լիակատար փոխարինում առորադասա-

կանով տեղի չի ունենում՝ «Գրիգորը կամ Հակոբը» → «Գրիգորի փոխարեն Հակոբը կամ Հակոբի փոխարեն Գրիգորը»: Համադասական հարաբերության փոխարինումն ստորադասականով հանկանալի կլինի, եթե նկատի առնենք, որ ոչ մի համադասություն բացարձակ չէ. այն հանգամանքը, որ շաղկապվող կողմերից մեկը նախորդում է մյուսին, արդեն որոշ ստորադասության մեջ է դնում հաջորդը նախորդի հանդեպ. բուն ստորադասությունն այս փաստի ավելի շեշտված արտահայտությունն է:

4. Բառախմբային շաղկապները միաբառային շաղկապների համեմատությամբ բաշխական որևէ առանձնահատկություն և նոր իմաստ չեն ավելացնում. նրանք, հատկապես զուգաշաղկապները, ընդգծում, շեշտում և ուժեղացնում են միաբառային շաղկապների արտահայտած իմաստները:

5. Քանի որ մարդկային խոսքը ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվական միավորների հաջորդական հավելում, ուստի և հավելական շաղկապները, հատկապես և–ը, կարող են հանդես գալ նաև մյուս կարգի շաղկապների դերում կամ նրանց հետ միասին. առաջին դեպքում բուն հարաբերություններն արտահայտվում են շաղկապվող միավորների հաստատական և ժխտական ձևերով. երկրորդ դեպքում և–ը ցույց է տալիս պարզապես խոսքային հավելում:

6. Պետք է տարբերել շաղկապների մի հատուկ խումբ ևս, որ հանդես է գալիս խոսքի նկարագրական, դատողական և այլն մասերը միացնելու, նրանց իրական և տրամաբանական հաջորդականությունը մատնանշելու, երբեմն էլ փոխհաջորդում արտահայտելու համար: Ի տարբերություն նախորդ շաղկապների՝ սրանք փաստորեն պատկանում են կարգի ընդհանրական կատեգորիային՝ տարածական և ժամանակային համապատասխան դրսեվորմամբ: Այս շաղկապներն են՝ ապա, առաջին — երկրորդ — երրորդ..., նախ — ապա, նախ և առաջ — ապա, նախ — հետո; մեկ — մեկ և այլն:

7. Ժխտա-հավելական հարաբերությունը կարող է արտահայտվել ոչ միայն ոչ — ոչ զուգաշաղկապի, այլև բուն հավելական (դրական-հավելական) շաղկապների միջոցով, որոնք այս դեպքում միանում են երկու (կամ ավելի) ժխտվող մասերի հետ՝ չգրեց և չգնաց: Ոչ — ոչ զուգաշաղկապը փաստորեն ոչ թե շաղկապ է, այլ երկու ժխտվող մասերի ժխտման ընդգծված արտահայտիչ, որ դրանով իսկ ձեռք է բերում շաղկապական արժեք:

8. Եվ, էլ, իսկ և այլ շաղկապներ ունեն նաև եղանակական-

ուժեղացնող մասնիկների դեր, որոնք նույնպես կարող են կապվել տարբեր խոսքի մասերի հետ և իրենց գործառական բնույթով մոտենում են համադասական շաղկապներին. վերջիններս ծագումով հաճախ գալիս են այս կարգի բառ-մասնիկներից (հմմտ. «եվ դո՛ւ, Բրուտոս», «ես էլ մարդ եմ», «Հակոբը չկասկածեց իսկ» և այլն):

9. Քանի որ համադասական բուն շաղկապների իմաստները ոչ այլ ինչ են, եթե ոչ հարաբերվող միավորների հաստատական և ժխտական ձևերի տարբեր զուգակցությունների նշանակումներ, ուստի և այդ իմաստները կարող են արտահայտվել նաև շաղկապվող միավորների պարզ զուգորդումով՝ անշաղկապ կամ, ինչպես ընդունված է ասել, շարահարական կապակցությամբ: Սա բնականաբար պատմականորեն ավելի վաղ ձև է և այժմ ունի գործառական որոշ տարբերակվածություն՝ ավելի շատ հատուկ լինելով խոսակցական լեզվին. շաղկապական կապակցությունները ավելի հատուկ են գիտական խոսքին:

10. Եթե, ինչպես հարաբերիչ այլ միավորների դեպքում, այս դեպքում ևս համադասական շաղկապները դիտենք հարաբերվող միավորներից մեկի առնչությամբ, ապա կստացվի հետևյալ պատկերը.

1. Հավելական

ա) Միասնության (դրական-հավելական)

$(A_1)+A_2$ — և Հակոբը

բ) Կրկնաժխտական (ժխտա-հավելական)

$(\bar{A}_1)+\bar{A}_2$ — և ոչ Հակոբը

2. Ներհակական

ա) Սահմանափակական

$(A_1)+\bar{A}_2$ — բայց Հակոբը

բ) Ժխտական կամ փոխարկական

$(\bar{A}_1)+A_2$ — այլ Հակոբը

գ) Հակադրական

$(A_1, A_2)+\bar{A}_1, \bar{A}_2\ [(A_1, A_2)+B_1, B_2]$ — իսկ Հակոբը գնաց

3. Տրոհական

$(\mp A_1)\pm A_2$ — կամ Գրիգորը

Համադասական հարաբերության մեջ գտնվող անդամների քանակը փաստորեն սահմանափակված չէ՝ կախված լինելով

տվյալ բազմության բաղադրիչների իրական քանակից։ Այս տեսակետից պետք է տարբերել վերջնային և ոչ վերջնային դիրքեր. վերջնային դիրքում (նախադասության վերջում) թվարկումը շատ ավելի քիչ է սահմանափակված, քան ոչ վերջնային դիրքում (համմտ. «Ժողովին մասնակցում էին Պետրոսյանը, Գրիգորյանը...» և «Պետրոսյանը, Գրիգորյանը... մասնակցում էին ժողովին»). ոչ վերջնային դիրքի դեպքում առկա է նախադասության բաղադրիչների՝ իրարից շատ հեռանալու և դրանով իսկ իմաստի ընկալումը դժվարացնելու վտանգ։

ԵՐԿՐՈՐԴ ԽՆԹԱԲԱԺԻՆ

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ

1. ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոխակերպման հասկացությունը և «փոխակերպում» տերմինը (transformation, трансформация) լեզվաբանության մեջ նոր չեն։ Վաղուց ի վեր հայտնի է, որ միևնույն միտքը կարելի է արտահայտել քերականական տարբեր կառուցվածքներով, տարբեր միջոցներով ու եղանակներով։ Դեռևս հին աշխարհում ճարտասանական վարժությունների մեջ լայն տեղ էր տրվում քերականական փոխակերպմանը, իսկ ոճաբանության՝ որպես գիտաճյուղ ձևավորվելու հետ կապված փոխակերպումը դառնում է այդ գիտաճյուղի առանցքային գաղափարներից մեկը։ Կրավորական կառուցվածքի փոխակերպումը ներգործականի, երկրորդական (ստորադաս) նախադասություններինը՝ դերբայական դարձվածների, ուրիշի ուղղակի խոսքինը՝ ուղղակի խոսքի և այլն,—այս բոլորը, այսպես կոչված, ավանդական քերականության ամենաստվորական գործողություններից են։ «Փոխակերպում» տերմինը ևս անհայտ չէ ավանդական քերականությանը։ Այսպես Ջ. Կ. Նեսֆիլդը իր «Դարձված, քերականություն և համադրություն» աշխատության մեջ, որ 1895 թ. սկսած բազմաթիվ հրատարակություններ է ունեցել, շուրջ երեսունհինգ էջ է նվիրում փոխակերպմանը՝ այն սահմանելով հետևյալ կերպ. «Փոխակերպել մի նախադասություն (sentence) նշանակում է այն փոխել մի քերականական ձևից մյուսի՝ առանց փոխելու նրա իմաստը»[1]։ «Նախադասությունների փոխակեր-

[1] *J. C. Nesfield*, Idiom, grammar and synthesis, 1932, էջ 296—330։

պում» («The transformation of sentences») անվան տակ նա քննում է, բացի ուրիշ ուղղակի խոսքը անուղղակի խոսքի փոխակերպելու կանոններից, նաև ներգործական և կրավորական, բացականչական և պատմողական («հաստատական»—assertive), հարցական և պատմողական, ժխտական և հաստատական, պարզ և բարդ նախադասությունների՝ իրար փոխակերպելու կանոնները և այլն, ինչպես նաև խոսքի մասերի փոխանցումները՝ համապատասխան վարժություններով։

Ինչպես նշում են ժամանակակից փոխակերպական քերականության ներկայացուցիչները, փոխակերպման գաղափարի սաղմը արդի առումով առկա է Պոր-Ռոյալի հայտնի քերականության մեջ։

Ո՞րն է այս դեպքում այն նորությունը, որ բերում է ժամանակակից փոխակերպական քերականությունը։ Այդ նորը փոխակերպման գաղափարի ընդլայնման ու ընդհանրացման և ձևականացման մեջ է։ Ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ այն ծագել է անմիջական բաղադրիչների մեթոդի սահմանափակությունը հաղթահարելու, լրացնելու և զարգացնելու որոնումների ընթացքում[2]։ Փոխակերպական սերող քերականության բաղադրիչներն են համարվում 1) անմիջական բաղադրիչների, 2) փոխակերպման և 3) ձևահնչութային կանոնները։ Փոխակերպման մեթոդը լրացնում է անմիջական բաղադրիչների մեթոդը սերման պրոցեսի նկարագրությամբ և շարահյուսական կառուցվածքի ու նրա իմաստային կողմի բացահայտմամբ։ Այն հնարավորություն է տալիս սերելու այնպիսի նախադասություններ, որոնք անմիջական բաղադրիչների կազապարի օգնությամբ չեն կարող սերվել[3]։ Փոխակերպման դեպքում պահպանվում են փոխակերպվող կառուցվածքի միավորները (բառերը) և բաղադրիչների սերման ծառը. կատարվում է քերականական ձևերի փոփոխություն և միավորների տեղափոխություն։ Օրինակ՝ ներգործական «Մայրը սիրում է տղային» և կրավորական «Տղան սիրվում է մորից» կա-

---

2 Ռ. Բ. Լիզը իր «Ի՞նչ է փոխակերպումը» հոդվածում (ВЯ, 1961, № 3, էջ 70) տերմինի ներմուծումը վերագրում է Զ. Հարիսին, իսկ փոխակերպական քերականության տեղի, գերի և խնդիրների որոշումը (ինչպես այն ընդունված այժմ)՝ Ն. Խոմսկուն։ Այսպիսի անտեղյակությունը զարմանալի չէ, եթե նկատի առնենք, որ ինքը Խոմսկին իր որոշ «հայտնագործումներին» սաղմերը հետագայում սկսում է գտնել նախորդ շատ հեղինակների մոտ։

3 Համմ. Ю. А. Апресян, Идеи и методы современной структурной лингвистики, М., 1965, էջ 222—223։

ռուցվածքների սերման ծառերը և բառերը նույնական են, քերականական ձևավորումը և շարադասությունը՝ տարբեր ըստ $N_1^{սուդ.} + V^{ներգ.} + N_2^{սր./սուդ.} \rightarrow N_2^{սուդ.} + V^{կր.} + N_1^{բաց.}$ բանաձևերի, որոնք կարելի է արտահայտել բաղադրիչների սերման հետևյալ ծառերով (գծագիր 1).

Գծագիր 1





Փոխակերպական քերականությունը տարբերում է միջուկային նախադասություններ և փոխակերպներ (համմտ. հետագայում խորքային և մակերեսային կառուցվածքների գաղափարը). առաջիններն համարվում են հիմնական (ոչ նշանակիր) միավորներ, որոնց նկատմամբ կիրառվում են անմիջական բաղադրիչների կանոնները, մյուսները՝ ոչ հիմնական (նշանակիր), ո-

րոնք տարբերվում են միջուկայիններից որևէ հատկանիշով, և որոնց՝ միջուկայինների փոխակերպելու վերաբերյալ տրվում են հատուկ կանոններ։ Այսպես, ներգործական կառուցվածքի, պատմողական ու հաստատական նախադասությունները համարվում են միջուկային, իսկ կրավորական կառուցվածքի, հարցական ու ժխտական նախադասությունները՝ փոխակերպներ, և երկրորդները առաջինների վերածելու համար տրվում են փոխակերպման հատուկ կանոններ։ Հարկավոր է նշել, որ միջուկային նախադասությունների փոխակերպներ են համարվում նաև նրանցից սերված գոյականական, ածականական և մակբայական գործածություն ունեցող բառակապակցությունները՝ «Հակոբը տեսնում է → 1) «Հակոբի տեսնելը» 2) «Հակոբի տեսած», 3) «Հակոբի տեսնելիս»։

Ներկա աշխատության մեջ մենք փոխակերպումը կհասկանանք նեղ առումով և կտարբերենք փոխանցումից։ Փոխանցում ենք համարում մի խոսքի մասի այնպիսի անցումը մյուսին, որի դեպքում արտաքին որևէ փոփոխություն չի լինում. հմմտ. սխալ (ածական ←→ գոյական ←→ մակբայ՝ «Սխալն ուղղվեց», «Սխալ գաղափար», «Սխալ է գնում»)։ Փոխակերպում ենք կոչում՝ ա) խոսքի մասերի այնպիսի անցումները, որոնք կատարվում են արտաքին-բառակազմական հատուկ միջոցներով. բ) նախադասությունների անցումը դերբայական դարձվածների և ընդհակառակն. գ) այնպիսի նախադասությունների փոխադարձ անցումները, որոնք արտահայտում են միևնույն առարկայական իմաստը (որպես անփոփոխակ) և տարբերվում են միմյանցից իմացական-իրադրական հատկանիշներով (առորոգման հիմնական բաղադրիչներով)՝ հաստատականության-ժխտականության, եղանակավորության և բայաձևի դրսևորումներով։

1. ԲԱՅԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

ա. Բայի փոխակերպում գոյականի (բայի գոյականական փոխակերպում կամ գոյականացում)

Դիմավոր բայաձևերի գոյականացումը հայերենում ունի երկու դրսևորում՝ բուն լեզվական և անդրլեզվական. անդրլեզվական փոխակերպումը հատուկ է լեզվաբանության, այդ թվում նաև քերականության, լեզվին, որտեղ խոսվում է լեզվի՝ որպես օբյեկտի մասին։

Անդրլեզվական փոխակերպման ժամանակ դիմավոր բայաձևերը կարող են գոյականացվել անփոփոխ ձևով՝ սովորաբար որոշիչ հոդի հավելմամբ, ընդ որում գրավոր խոսքում բուն բայաձևերը ընդգծվում են կամ առնվում չակերտների մեջ. համմտ. «Գնաց-ը անցյալ կատարյալի երրորդ դեմքի բայաձև է», «Գնաց բայաձևը գնացի, գնացիր բայաձևերի համեմատությամբ բնութագրվում է դիմային դրո վերջավորությամբ» և այլն:

Ավելի բարդ է դիմավոր ձևերի լեզվական փոխակերպումը: Այս դեպքում առկա է փոխակերպման երկու դրսևորում՝ բայանվանական և դերբայական. գոյականացած դերբայական բայաձևը հայ քերականության մեջ կոչվում է անորոշ դերբայ, այսինքն՝ դրվում է դերբայների շարքը. ուրիշ լեզուներում անորոշ դերբայը դերբայների շարքը չի դրվում, այլ համարվում է հատուկ բայաձև՝ «անորոշ» (infinitivus) անվանմամբ. հայ հին քերականները այն կոչում էին «անեղևույթ»: Բայանվանական և դերբայական բայաձևերի տարբերությունը կերպային բնույթ ունի. դերբայական ձևերի մեջ պրոցեսայնության-տևականության գաղափարն ավելի է ընդգծված. համմտ. **խոսում է → խոսք** և **խոսել**, **գրում է → գրություն** և **գրել** և այլն:

Հայերենի կառուցվածքը, այսպիսով, հնարավորություն է տալիս գրեթե յուրաքանչյուր բայից կազմել բայանվանական և անորոշ-դերբայական ձևեր: Եթե այս առումով տիպաբանական զուգահեռ անցկացնենք հայերենի և այլ լեզուների միջև, կարելի է տեսնել, որ մի շարք լեզուներում (արաբերեն, վրացերեն և այլն) ընդհանրապես բացակայում է անորոշը, մի շարք այլ լեզուներում (ռուսերեն, լատիներեն և այլն) անորոշը չի հոլովվում և այլն: Հայերենի այս առանձնահատկությունը հնարավորություն է տալիս բայական բոլոր ձևերը գոյականաբար գործածելու, որ կարևոր նշանակություն ունի տերմինակազմության առումով:

Վերջին ժամանակներս արևելահայ գրական լեզվում լայն տարածում է ստացել անորոշի փոխարեն բուն գոյական անունների գործածությունը՝ ոչ առանց ռուսերենի ազդեցության: Այս բանը հանգեցնում է վերացական արտահայտության հնարավորությունների ուժեղացման և, հասկանալի պատճառներով, առանձնասրես լայն չափեր է ընդունում գիտական և պաշտոնական-գործարարական ոճերում:

Հայերենում բայանունների կազմության ընդհանրական եղանակ չկա: Ճիշտ է, լայն տարածում ունեն **-ություն** և **-ում** ածանց-

ներով բայանունները, բայց դրանցով գոյական անուններ կարելի է կազմել ոչ բոլոր բայաձևերից. համմտ., օրինակ, բնաձայն բայերը՝ գոգոալ,խշխշալ, վզվզալ, ոզզալ և այլն: Ընդհակառակն, կան բայեր, որոնց համար հնարավոր են բայանվանական մեկից ավելի ձևեր՝ գոյականացման և կերպային (տևականության) դրսևորման տարբեր աստիճաններով (համմտ. ուսմունք և ուսում, կերտվածք և կերտում, ընթերցանություն և ընթերցում և այլն) կամ առանց այդպիսի տարբերությունների (հաղթանակ և հաղթություն, կազմվածք և կազմություն և այլն):

Մի շարք դեպքերում բայանունները բնութագրվում են զրո վերջավորությամբ, այսինքն՝ լիովին համընկնում են բայական հիմքերի հետ: Այս դեպքերում հաճախ հնարավոր չէ պարզել փոխակերպման ուղղությունը (բայ → գոյական, թե՞ գոյական → բայ), և այդ հարցը (սերման պատմությունը) պարզելու որոնումները կարող են շատ հեռու տանել[4]: Նշենք միայն, որ՝ ա) -անալ-ով, -ացնել-ով, -ավորել-ով բայերի դեպքում գոյականը ավելի նախնական է, և առկա է գոյականի բայացում՝ ծովանալ, կղզիանալ, շոգիանալ, էվակուացնել, կոոպերացնել, դասավորել, կահավորել և այլն. բ) մի շարք բայահիմքեր որպես գոյականներ սովորաբար գործածվում են միայն հատուկ դարձվածային արտահայտություններում ու բառերում՝ առևտուր, ելևէջ, առուվաճառ և այլն. գ) զուտ նյութական բնույթի՝ իրերի և նյութերի, անունները բնականաբար ծագմամբ գոյականներ են, վիճականիշ անունները՝ բայահիմքեր. համմտ. արծաթ → արծաթել, կնիք → կնքել և այլն, բայց ցաւակել → ցաւակ. խուզել → խու(յ)զ և այլն: Բանաստեղծական լեզվում ավելի հաճախ է նյութական գոյականների փոխակերպումը բայերի՝ արև → արևել, լուսին → լուսնել և այլն:

Ինչպես հայտնի է, հայերենի բուն (ոչ ժխտական) նախածանցները խոսքի-մասային փոխակերպման գործառույթ չեն կատարում: Այդպիսի գործառույթը հատուկ է վերջածանցներին: Բայաձևերի գոյականացմանը ծառայող ամենից ավելի արդյունավետ (արտադրողական, պրոդուկտիվ) ածանցները ում-ը և ություն-ն են, որոնք երբեմն դուրս են մղում հնից եկող ոչ արդյունավետ ածանցները: Սրանցից ություն-ը միանալով ող-ի հետ կազմում է տևական կերպի բայանուններ՝ ի տարբերություն առանց

---

4 Համմտ. Ա. Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, I, Երևան, 1962, էջ 79—119:

ող-ի և մի շարք այլ ածանցներով ձևերի՝ հասկացություն—հասկացողություն, խոսք—խոսողություն, մտածություն (միտք)—մտածողություն և այլն։

Բացի ություն-*ից* (ողություն-*ից*) և ում-*ից որպես* բայանվանական կենդանի և արդյունավետ ածանցներ հանդես են գալիս հետևյալները՝ անք, մունք, յուն, ոց, վածք, ույթ, թ. *սրանցից* ույթ-*ը* և յուն-*ը* ություն-*ի* բաղադրիչներն են, որ հանդես են գալիս նաև ինքնուրույնաբար։ Կերպային առումով ում-*ը* և ողություն-*ը* հակադրվում են մյուսներին՝ *որպես* տևականները՝ ոչ տևականներին ու կերպային չեզոքության ունեցողներին.

Ոչ տևական	*Տևական*
ության	*ողություն*
անք	
մանք	
յուն	*ում*
ոց	
ույթ	
ք	

Սակայն այս հակադրությունը ոչ բոլոր դեպքերում է հստակորեն հանդես գալիս, և կարելի է ասել, որ բայանուններին, բացի որոշ դեպքերից, հատուկ չէ կերպային հստակ տարբերակումը։ Ինչպես նշվել է, ություն-*ը և* ում-*ը համեմատաբար ընդհանրական բնույթ ունեն, մյուսները հանդես են գալիս իմաստային և պատմական ու ձևական զանազան սահմանափակումներով։*

Բայանվանական ածանցների բաշխման հանգամանալից քննությունը թողնելով առանձին ուսումնասիրության՝ այստեղ բավարարվենք մի քանի ընդհանուր դիտողություններով։

1) Ածանցներից յուն-*ը և* ոց-*ը բայանուններ են կազմում հատկապես բնաձայնական բայերից, ընդ որում՝ ա) դրանք երբեմն հանդես են գալիս զուգահեռաբար՝* դղրդյուն—դղրդոց, խշշյուն—խշշոց, խրխնջյուն—խրխնջոց, ճռնչյուն—ճռնչոց, մռնչյուն—մռնչոց, շշնջյուն—շշնջոց, վրնջյուն—վրնջոց, frթմնջյուն—frթմնջոց *և այլն. բ)* յուն-*ը հանդես է գալիս առանց* ոց-*ի՝ սովորաբար զրո ածանցին զուգահեռ՝* բառաչ—բառաչյուն, խոխոջ—խոխոջյուն, խրխինջ—խրխնջյուն, կարկաչ—կարկաչյուն, կռինչ—կռնչյուն, ղողանջ—ղողանջյուն, շառաչ—շառաչյուն (շառաչում), շռինդ—շռնդյուն, շռինչ—շռնչյուն, սոսափ—սոսափյուն, տրտունջ—տրտնջյուն *և*

այլն. գ) յուն–*ը հանդես է գալիս* ում–*ին զուգահեռ՝* բաբախյուն—բաբախում, բախյուն—բախում, գոշյուն—գոշում, թնդյուն—թընդում, ճարճատյուն—ճարճատում, ճղփյուն—ճղփում, պայթյուն—պայթում, տռռփյուն—տռռփում *և այլն, այլև* ճնշյուն—ճնշում *(կերպա-իմաստային տարբերակմամբ)։*

2) Մուճ *ածանցը ներկայացնում է գրաբարյան ումն ածանցի հոգնակի ձևը և աշխարհաբարում ստացել է ինքնուրույն արժեք՝ կերտելով բազմաթիվ նոր բայանուններ։ Եթե* մուճ–*ը սովորաբար ունի* ում–*ով զուգահեռ ձևեր՝* զգացում—զգացմունք *և այլն, ապա* ում–*ով շատ բայանուններ* մուճ–*ով զուգահեռներ չունեն։* Մուճ–*ով կազմությունների մի մասը գալիս է հնից, մյուս մասը նորաբանություն է, ընդ որում* ում–*ի համեմատությամբ* մուճ–*ի գոյականական-նյութական բնույթն ավելի ուժեղ է. հմմտ.* բեռում—բեռմունք, համոզում—համոզմունք *և այլն։* Մուճ–*ով բայանուններից կարելի է հիշատակել* ասմունք, արարմունք, զգացմունք, խոսմունք, համոզմունք, հիացմունք, հուզմունք, նախապաշարմունք, շփոթմունք, պահանջմունք *(հմմտ.* պահանջ, պահանջարկ), պատահմունք, պարապմունք, վարմունք, վերաբերմունք *և այլն։*

3) Անք *ածանցը գալիս է հնից, բայց զգալիորեն ընդարձակել է իր սահմանները՝* արհամարհանք, բամբասանք, բանդագուշանք, բերդրանք, գուրգուրանք, դավանանք, երգիծանք, զարդարանք, զարմանք, զզվանք, զրկանք, թոթովանք, խանդաղատանք, խնդրանք, խրախուսանք, համակրանք, հարգանք, հեգնանք, հեկեկանք *(հմմտ.* հեկեկոց), հրապուրանք, մեղադրանք, նողկանք, պատկառանք, պարծանք, սփոփանք, տառապանք, տարակուսանք, տենչանք, վիրավորանք, փաղաքշանք, փայփայանք *և այլն։*

4) Ույթ–*ը* ություն–*ից ավելի սահմանափակ կիրառություն ունի, բայց վերջին ժամանակներս ընդարձակել է իր գործածության շրջանակները՝ լայն չափերով հանդես գալով տերմինակերտման բնագավառում. որոշ դեպքերում այն կազմում է* ություն–*ին զուգահեռ, բայց գործածությամբ և իմաստով տարբերակված բայանուններ՝* ավանդույթ—ավանդություն, սովորույթ—սովորություն *և այլն. այլ դեպքերում հանդես է գալիս ինքնուրույնաբար՝* ելույթ, հատույթ *և այլն։*

5) Ք–*ն հանդես է գալիս որպես առաջնային ածանց, որ բայական հիմքերից կերտում է բայանուններ, և որպես երկրորդային ածանց, որ բայական այլ ձևերից, հատկապես դերածականական*

ձևերից կերտում է դոյականական ձևեր, այդ թվում՝ բայանվանական արժեքով։ Ք–ն առաջին դեպքում կարող է դրվել ինչպես արմատի, այնպես էլ կատարյալի հիմքի վրա (վերջինս՝ ամ, անամ տիպի բայերի դեպքում)՝ արարք, գովք, եյք, խնամք, խոսք, խոռվք, ճիճ, վազք և այլն. ընթացք, լվացք, հիացք, սլացք և այլն. թռիչք բայանվան դեպքում այն դրված է ներկայի հիմքի վրա (համմտ. թռչ–եմ)։ Որպես երկրորդական ածանց այն դոյականներ է կազմում լի և ված դերբայական ձևերից՝ համապատասխան լրացական իմաստով՝ «անելի բան» և «արված բան» արժեքով՝ գալիք, տալիք և այլն. գրվածք, դարձվածք, թափվածք, կազմվածք, կառուցվածք, մանվանձք, շինվածք և այլն. –լիք տիպի կազմությունները երբեմն կարող են ունենալ բայանվանական արժեք (սպառնալիք). անանցողական բայերից կերտված վածք–ով ձևերը սովորաբար նույնպես բայանվանական արժեք ունեն՝ նայվածք, fայլվածք և այլն։ Ք–ով կազմված արք բաղադրյալ ածանցը այժմ բավականին լայն տարածում ունի՝ ինքնուրույնաբար կերտելով բայանուններ՝ գործարք, լուծարք, սուտգարք և այլն։

Բացի հիշյալ բայանվանական ածանցներից, ժամանակակից հայերենը ունի մի շարք անարդյունավետ ածանցներ՝ ակ (հաղթանակ), անդ (եռանդ), եստ (գովեստ), իճ (նախատինճ), իստ (հանգիստ), իք (ավետիք, կարծիք), ուկ (շշուկ), ույթ (հաճույթ), ունդ (ծնունդ), ուստ (գալուստ, փախուստ), ուցք (այրուցք, մոլուցք)։ Այս ածանցներով կազմությունները, բնականաբար, ժամանակակից հայերենը պատրաստի ձևով ժառանգել է հնից, թեև բայի և բայանվան կապը դեռ գիտակցվում է։

Բազմաթիվ դեպքերում բայերից կերտված դոյականները հանդես են բերում զանազան կարգի լրացական իմաստներ՝ ցույց տալով տվյալ գործողությամբ բնորոշվող առարկան՝ գործողը, գործիքը, գործողության արդյունքը, տեղը և այլն. 1) արդյունավետ՝ արար (խոռվարար, ճորարար), իկ (բացիկ, մարգիկ, մարտիկ, մուրացիկ), ուկ (հեղուկ, թափթփուկ, խաչմերուկ, մճացուկ), արան (լսարան, մարզարան, ճաշարան), որդ (աճցորդ, բաժանորդ, գնորդ, կցորդ, մճացորդ) ոճ (գործոճ, ծամոճ, ջարդոճ), ու (այցելու, ծաղրածու, վաշխառու, տաղերգու), ուն (թռչուն, սաղուն) և այլն. 2) անարդյունավետ՝ախ (շաղախ). ածու (ժողովածու, հավաքածու), ածո (բռածո, դրածո, պահածո), ասա (իմաստա). եստ (պահեստ). իլ (կաթիլ). իճ (պատիճ, ուտիճ), որ (բեկոր, կտոր). ուճ (բղուճ), ույկ (խարույկ), ուստ (ելուստ), ուրդ (ժողովուրդ)։

Բերված ածանցներից մի քանիսը բայական հիմքակազմ տարրեր են, որոնք գոյականակերտ են դարձել համապատասխան ածականների գոյականական փոխանցմամբ: Այս կարգի գոյականները հատկապես մեծ թիվ են կազմում, և նրանց քանակը գնալով աճում է: Կատարյալի հիմքի աց. ույց մասնիկներով ձևերի՝ ինքնուրույն գոյականական գործածությունը պետք է համարել լրացական իմաստով գոյականների կազմության մի դեպք՝ գոյականական զրո ածանցով, ընդ որում աց-ը հանդես է գալիս նախածանցավոր կազմությունների և բարդությունների դեպքում (աղֆատիմաց, ճնպլընքաց, տաղասաց և այլն), ույց-ը՝ նաև ինքնուրույնաբար (կառույց, կառամատույց, սառույց և այլն):

Անորոշը կազմվում է բայերի մասնակաղապարային 1-ին դասի (անկատարի) ձևերից՝ մ-ի փոխարկումով լ-ի՝ գրեմ գրել, մնամ — մնալ, տեսնեմ — տեսնել, փախչեմ — փախչել մոտենամ — մոտենալ, իմանամ — իմանալ և այլն: Անորոշ դերբայը հոլովվում է ու հոլովմամբ և չունի հոգնակի ձև. «Գալներդ լինի, գնալներդ չինի» արտահայտության մեջ հանդիպող ձևերը ոչ թե բուն հոգնակի են, այլ նշանակում են հոգնակի ստացողներ՝ գալներդ=ձեր գալը, գնալներդ=ձեր գնալը:

Ժամանակակից հայ գերականության մեջ, ինչպես եվրոպական շատ լեզուների, այդ թվում նաև ռուսերենի, քերականություններում, անորոշը դիտվում է որպես բայական հիմնական ձև, և դիմավոր ձևերի քննության ժամանակ դրանք բխեցվում են անորոշից: Սակայն բուն լեզվական առումով անորոշը չի կարող իսկական հիմնաձև լինել, և պատահական չէ, որ ժողովրդական-խոսակցական լեզվում անորոշ դերբայով ձևերը փոխարինվում են համապատասխան դիմավոր ձևերով՝ «Ուզում եմ գնալ»=«Ուզում եմ գնամ»[5]:

Անորոշ դերբայը պահպանում է բայի ոչ-ստորոգական այն-

---

5 Այս առումով հետաքրքրական է Լ. Տենիերի կարծիքը. «Անորոշն իր էությամբ ինչ-որ ճապաղ, փոփոխական և դժվարությամբ որոշացվող մի բան է... Անորոշի առելությունը դեմքի գաղափարի հանդեպ հասցնում է նրան, որ անորոշային նախադասությունը ենթարկվում է բարդ սահմանափակումների, որի հետևանքով նրանից օգտվելը դառնում է անհարմար: Սա է, հավանաբար, պատճառը, որ անորոշ նախադասությունը բավական հազվադեպ է հանդիպում լեզուներում: Այդ սահմանափակումներից խուսափելու միակ միջոցը անորոշային նախադասությունից խուսափելն է». L. Tesnière, Eléments de syntaxe structurale, Paris, 1959, էջ 434:

պիսի կարգերը, ինչպիսիք են տիպարը, սեռը, կերպը. երկրորդաբար անորոշը կարող է ունենալ երկրորդական բաղադրյալ ձևերին համապատասխան ձևեր և տարբերակվել ըստ ժամանակային հաջորդականության՝ գնացած լինել *(նախորդում),* գնալու լինել *(հաջորդում),* գնալիս լինել *(համընթացություն, միաժամանակություն): Բնականաբար այս բոլոր դեպքերում անորոշը կորցնում է ստորոգման հետ կապված կարգերը՝ դեմքը, իրադրական ժամանակը, եղանակը, այլև դեմքի հետ կապված դասը և թիվը:*

բ. Բայի փոխակերպում ածականի

(բայի ածականական փոխակերպում կամ ածականացում)

Բայերը կարող են փոխակերպվել ոչ միայն գոյականների, այլև գոյականական և ածականական բառակապակցությունների կախյալ անդամների՝ որոշիչների և մակրոշիչների կամ, եթե նկատի առնենք սրանց մասնակի դրսևորումները, ածականների և մակբայների: Բայի փոխակերպումը ածականի և մակբայի (ածականացումը և մակբայացումը) սկզբունքային տարբերություն չունի բայի գոյականական փոխակերպումից (գոյականացումից):

Ինչպես գոյականական փոխակերպման դեպքում, պետք է տարբերել բայի ածականական փոխակերպման երկու դրսևորում՝ բուն ածականական և դերբայական (դերածականական): Բուն ածականական կազմություններ հարաբերակից են բայանուններին կամ, ավելի ճիշտ, բայածանց գոյականներին, և կարող են կոչվել բայածանց ածականներ և բայածանց մակբայներ:

Բայերից ածականներ կերտող մասնիկները ոչ միայն վերջածանցներ են, ինչպես բայանունների դեպքում, այլ նաև նախածանցներ: Ժխտական նախամասնիկներից (նախածանցներից) ան-ը և տ-ն *փաստորեն կատարում են երկակի դեր (ֆունկցիա)՝ բայահիմքի արտահայտածը ժխտում են և միաժամանակ այն գործառական փոխակերպում՝* թառամ-ել → ան-թառամ (≈չթառամող), տաշ-ել → անտաշ (≈չտաշված), *այլև* անահ, անամոթ, անավարտ, անանց, անդարձ, անբնդհատ, անթարթ, անթափանց, անզգա, անլվա, անխնամ, անխոս, անկոչ, անշեղ, անմոռաց, անշարժ, անտես *և այլն: Ան-ը երբեմն կարող է զուգակցվել որոշ վերջամասնիկների հետ՝* իկ, ում՝ ան-ատ-իկ, ան-դադր-ում, ան-կոտր-ում, ան-հատն-ում, ան-զիջ-ում, ան-խնդ-ում, ան-կշտ-ում,

և այլն։ Ի տարբերություն ան–ի, որ կարող է զուգակցվել ա–ով և ացա–ով բայահիմքերի, ինչպես նաև որոշ վերջածանցների հետ, տ–ն միանում է միայն բայարմատներին՝ տ–գետ, տ–կար, տ–հաս։ *Ան–ը ժամանակակից հայերենում արդյունավետ ածանց է, տ–ն՝ ոչ։*

Ածականակերտ ածանցների մեջ հատուկ տեղ է բռնում իչ–ը, *որ գրեթե համարժեք է* ող–ին՝ *այն հիմնական տարբերությամբ, որ սեռային տարբերակում չունի (համմտ.* ապականող—ապականվող *և* ապականիչ)։ Իչ–ով *ածականների նշանակալից մասը ձեռք է բերել գոյականական արժեք՝ նշանակելով տվյալ գործողությամբ բնորոշվող անձ, գործիք։* Իչ–ով *կազմվող ածականներից են՝* ապականիչ, գիշատիչ, գրավիչ, գրգռիչ դյութիչ, թմրեցուցիչ, խանգարիչ, կործանիչ, համոզիչ, հմայիչ, հուզիչ, չախչախիչ, սպանիչ, սառեցուցիչ, ֆայֆայիչ *և այլն։*

Բայահիմքերից իմաստային տարբեր երանգներով բնորոշվող ածականներ են կազմում (մասամբ միջնորդաբար) հետևյալ ածանցները (տվյալ գործողությանը վերաբերող՝ ական, *տվյալ գործողությունը կատարող՝* արար, ակ *և այլն, տվյալ գործողությունը որևէս բնորոշ հատկանիշ ունեցող՝* ուռ, կուռ *և այլն)՝* ական (աղերսական, բացատրական, ենթադրական, թարգմանական, հավակրական, հեգնական, հիացական, մխիթարական, սպառնական, վիրավորական *և այլն),* արար (կործանարար, կովարար, փրկարար *և այլն),* իկ (ազ–իկ, եց–իկ, ուց–իկ) (ազդեցիկ, բացառիկ, քաքացիկ, թափանցիկ, շրչիկ, պայթուցիկ *և այլն, բարդությամբ՝* բարեկեցիկ, զբոսաշրջիկ, վաղամեռիկ *և այլն),* կուռ (ամաչկուռ, բարկացկուռ, զայրացկուռ, ծիծաղկուռ, մոռացկուռ, պահանջկուռ, պարծենկուռ, փութկուռ *և այլն),* ու (ազդու, ծախու, կծու, հասու, հատու *և այլն,* բանասարկու, բողոքարկու *և այլն),* ուկ (դիպուկ կտրուկ *և այլն),* ուն (գնայուն, երերուն, զգայուն, խոհուն, կարկաչուն, մնայուն, սահուն, տոկուն *և այլն)։ Գրաբարյան դերբայական* յալ (<եալ) *մասնիկը, բացի հնից (քարացած ձևով) ժառանգված բառերից, կազմում է նաև նոր բառեր՝* անցյալ, միացյալ, մեղադրյալ *և այլն։ Անարդյունավետ և սակավաթիվ կազմություններ ընդգրկող ածանցներից են* ածո (վաճառ, աճուռ, ծուռ) (կռածո, կոփածո, հյուսածո, չափածո, ֆաղվածո, շինծու, *և այլն*)[6], անուտ (հոսանուտ, շիջանուտ *և այլն),* ի (հարգի, կատաղի), ման

6 *Այս ածանցը ած դերբայական ածանցի հետագա բաղադրումն է։*

(բրբռ.) (ելման, վաումաճ), ոտ *(երկրորդաբար՝ բայանուններից)* (երկչոտ, հավակնոտ), ուշ (վայելուշ, *այլև* սրտառուչ): -ույց-ը, *որ հին հայկական պատճառականի կազմիչն է, ածականներ կարող է կազմել օբյեկտի անվան ներառմամբ՝* ձագասնույց, վարձաճատույց *և այլն: Այս նույն ձևով կատարյալի* -ացը *կարող է բաղադրյալ ածականներ կազմել՝* տաղասաց, երկարակյաց, ծովահայաց, մարդատյաց *և այլն:*

Տարբերում են երեք տեսակի ածականական դերբայներ կամ դերածականներ՝ -ող, -ած *և* -լի: *Սակայն, ինչպես կտեսնենք, լի-ով կազմությունները չի կարելի դիտել որպես իսկական դերբայական ձևեր, այլ պետք է դնել բուն ածականների մեջ:*

Ընդունված է -ող *դերբայը կոչել ենթակայական, -ած-ը՝ հարակատար: Այս անվանումները նկատի ունեն դերբայական ձևերի մասնակի գործածությունները և անհաջող են. առաջին դեպքում նկատի է առնվում* -ող *դերբայի ենթակայական գործառությունը, երկրորդ դեպքում՝* -ած *դերբայի կերպա-ժամանակային մասնակի հրաժարությունը: Ավելի ճիշտ կլիներ* -ող-ը *կոչել համընթացական,* -ած-ը՝ *նախընթացական դերբայներ (դերբայական ածականներ, դերածականներ):*

1) Համընթացական դերբայը (դերածականը) կազմվում է հետևյալ կերպ. ա) ե.մ տիպի բայերի դեպքում՝ ող մասնիկը դրվում է այդ եմ-ի փոխարեն՝ խոս-եմ—խոս-ող, բեր-եմ—բեր-ող, թող(ն)-եմ—թող(ն)-ող, տես-ն-եմ—տեսն-ող, հագն-եմ—հագն-ող, փախչ-եմ—փախչ-ող, տան-եմ—տան-ող, դն-եմ—դն-ող, վերցրն-եմ—վերցն-ող, լինեմ *բայի դեպքում* ող-ը *դրվում է կատարյալի հիմքի վրա՝* եղ-ա—եղ-ող. *բ) -ա-մ տիպի բայերի դեպքում՝ սովորաբար կատարյալի վերջավորությունների փոխարեն՝* մնաց-ի—մնաց-ող, մոռաց-ա—մոռաց-ող, իմաց-ա—ի-մաց-ող, դարձ-ա—դարձ-ող. գամ *բայն ունի* եկող, տամ-ը՝ տվող *ձևը:*

2) Նախընթացական դերբայը (դերածականը) կազմվում է վաղակատար դերբայի նման. ա) I խմբի 1, 3, 5-րդ ենթախմբերի դեպքում ած-ը *դրվում է կատարյալի* եց-ի *փոխարեն՝* խոս-եց—խոս-ած, բեր-եց—բեր-ած, թող-եց—թող-ած, տվ-եց—տվ-ած. *բ) մնացած դեպքերում՝ կատարյալի վերջավորությունների փոխարեն՝* մնաց-ի—մնաց-ած, տես-ա—տես-ած, հագ-ա—հագ-ած, փախ-ա—փախ-ած *և այլն:*

Այս դերբայներից առաջինը ավելի հաճախ, քան երկրորդը, դր-

ծածվում է որպես գոյական և նույնիսկ ձևոք բերում իսկական գոյականի արժեք՝ կորցնելով խնդրառությունը. հմմտ նամակ գրողներ և հայ գրողներ:

Բուն ածականների և դերբայական ածականների տարբերությունները քննելիս մենք կանգ առանք քերականական որոշ կարգերի դրսևորման առանձնահատկությունների վրա: Այստեղ փորձենք պարզել դերբայական ածականների հարաբերությունը բուն ածականների և դիմավոր բայերի հետ փոքր ինչ ավելի հանգամանորեն:

Եթե ածականն առնենք իր համեմատության աստիճաններով, ինչպես որ գոյականական բառակապակցության դեպքում գոյականն առնում էինք իր հոլովաձևերով հանդերձ, ապա ածականական բառակապակցության լիակազապարի համար կունենանք ((((a+) b+) c+) d+) A ընդհանուր բանաձևը, որտեղ a-ն ածականի պարագայական խնդիրն է կամ նրան փոխարինող մակբայը, b-ն՝ երկրորդային գոյականական խնդիրը, c-ն՝ առաջնային գոյականական խնդիրը, d-ն՝ համեմատության խնդիրը, A-ն ածականը: Լիակազապարային այս բանաձևի համար կարելի է տալ «Քաղաքում (a) (իր) արարքներով (b) բնակիչներին (c) բոլորից (d) (ավելի) հայտնի (A)» նմուշը:

Լիակազապարային այս բանաձևը կարող է ունենալ իր մասնակազապարային բանաձևերը: Այսպես, ածականների մի խումբ չի կարող ընդհանրապես երկրորդային խնդիր ստանալ՝ «Դպրոցում (a) աշակերտներին (c) բոլորից (d) (ավելի) ծանոթ (A)». այս նմուշի համար կունենանք (((a+) c+) d+)A բանաձևը: Եթե այսպիսի ածականների առաջնային խնդիրը պարտադիր է, ապա կունենանք (a+)c+(b+)A բանաձևը՝ «Երեկվանից (a) մարդկանցով (c) բոլորից (d) (ավելի) լի (A)» նմուշով: Այսպիսի մասնակազապարային բանաձևեր կարելի է տալ նաև գոյականական խնդիր և համեմատության աստիճաններ չունեցող ածականների համար:

Ածականական բառակապակցությունը ըստ լիակազապարային բանաձևի կարող է ունենալ 15 տիպ՝ 1 հինգանդամ (ածականը բոլոր լրացումներով), 4 քառանդամ (ածականը երեք լրացումով), 6 եռանդամ (ածականը երկու լրացումով) և 4 երկանդամ (ածականը մեկ լրացումով):

Քանի որ երկրորդային գոյականական խնդիրը հատուկ է խիստ սահմանափակ թվով ածականների, հաննենք այն և հիմք ըն-

դուննք (((a+)c+)d+)A բանաձևը՝ ածականական բառակապակցության տարածված տիպերը հաշվելու համար։ Այս դեպքում կունենանք 7 (միայնակ ածականը նկատի ունենալու դեպքում՝ 8) տիպ (աղյուսակ 3).

Աղյուսակ 3

Կապակցության տիպեր	Կապակցության տիպերի բանաձևեր	Նմուշներ (օրինակներ)
1	A	հայտնի
2	aA	բազաքում հայտնի
3	cA	բոլորին հայտնի
4	dA	բոլորից (ավելի) հայտնի
5	acA	բազաքում բնակիչներին հայտնի
6	adA	բազաքում բոլորից (ավելի) հայտնի
7	cdA	բնակիչներին բոլորից ավելի հայտնի
8	acdA	բազաքում բնակիչներին բոլորից ավելի հայտնի

Աղյուսակի կապակցությամբ հարկավոր է նշել հետևյալը.

1) Պարագայական խնդիրը կարող է հանդես գալ տարբեր հոլովներով կամ ամբողջովին փոխարինվել մակբայով. այսպիսով, մակբայը ոչ այլ ինչ է, եթե ոչ պարագայական խնդրին փոխարինող բառ։ Մակբայների տեսակներն էլ պարագաների ամենատարածված տեսակներն են՝ տեղի, ժամանակի, չափի, ձևի։

2) Գոյականական խնդիր ստացող ածականները հատկապես բայահիմքերն են, որոնք առանց հատուկ ձևավորման ունեն դերբայական որոշ արժեք. Համմտ. կարոտ=կարոտած, լի=լցված, զուրկ=զրկված և այլն։

3) Համեմատության աստիճաններ չստացող ածականները կարող են ստանալ պարագայական, բայց ոչ գոյականական խնդիր. փայտյա—երեկվանից փայտյա — վաղուց փայտյա — ամբողջովին փայտյա և այլն։

4) Համեմատության խնդիր կարող են ստանալ և՛ բաղդատական, և՛ գերադրական աստիճանի ածականները, միայն թե առաջին դեպքում խնդիրը պարտադիր է, երկրորդ դեպքում՝ ոչ. այս դեպքում խնդիրը հանդես է գալիս սահմանափակող կամ ընդգծող («ավելադրական») իմաստով՝ մեջ կապով կամ բացառա-

կան հոլովով՝ «Մեր մեջ ամենալավ (մարդը)», «Մեր մեջ լավագույն (մարդը)», «Մեզնից ամենալավ (մարդը)», «Մեզնից լավագույն (մարդը)»:

5) Պարագայական խնդիր կամ մակբայ կարող են ստանալ բոլոր ածականները, ուստի պարագաառության կամ մակբայառության հատկանիշը չի կարող հիմք ծառայել ածականների բաշխական խմբավորման համար: Այդպիսի խմբավորման հիմք կարող են ծառայել մյուս երկու հատկանիշները՝ խնդրառությունը և համեմատելիությունը (համեմատության աստիճան և համեմատության խնդիր) ստանալը: Ըստ այս հատկանիշների ածականները կարելի է խմբավորել հետևյալ կերպ (աղյուսակ 4).

Աղյուսակ 4

Հատկանիշներ	Ածականների խմբեր			
	Դերբայատիպ որակական ածականներ	Հատկացական հարաբերական ածականներ	Որակական ածականներ	Բաղկացնիչ հարաբերական ածականներ
Խնդրառություն	+	+	—	—
Համեմատելիություն	+	—	+	—

Դերբայատիպ-որակական ածականներ են կարոտ, տեղյակ, գոհ, լի, զերծ և այլն. հատկացական-հարաբերական է հղի. որակական են բարձր, ցած, մեծ, փոքր և այլն. հարաբերական են նախ՝ մի բանից կազմված լինելը, երկրորդ՝ մի բան ունեցող կամ չունեցող և երրորդ՝ երկու հնարավորից մեկը ցույց տվող ածականները՝ փայտյա, ամուրի, այրի, ստերջ, որձ և այլն:

6) Ածականները կարող են ստանալ տարբեր հոլովներով և կապերով խնդիրներ. ըստ այսմ խնդիրները կարող են լինել հոլովական և կապական՝ մեզ ծանոթ, ինձնից գոհ, խնդությամբ լի, մի բանում համառ, ինձ համար անհասկանալի և այլն: Խնդիրները կարող են լինել տրական, բացառական, գործիական, երբեմն էլ ներգոյական հոլովներով, համար, հանդեպ, հետ և այլն կապերով:

Դերբայական ածականները բուն ածականների համեմատությամբ ունեն քերականական կարգերի դրսևորման հետևյալ ընդհանրություններն ու տարբերությունները.

1. Որակական ածականներին հատուկ՝ համեմատության աստիճանների քերականական կարգը դերբայական ածականներին

հատուկ է միայն մասամբ. նախ՝ համեմատության աստիճաններ կարող են ստանալ միայն այն դերբայական ածականները, որոնք ծագում են ածականներից՝ հակադրվելով նրանց որպես փոխարկային տիպարի ածականները՝ ոչ-փոխարկայիններին՝ մեծ, ավելի մեծ — մեծացող, ավելի մեծացող, մեծացած, ավելի մեծացած. մնացած դերբայական ածականները համեմատության մեջ են դրվում միայն շատ, ֆիչ մակբայներով կազմված ավելի շատ, ավելի ֆիչ և ամենից ավելի շատ, ամենից ավելի ֆիչ մակբայական դարձվածների (այդ թվում՝ խնդրառական բառակապակցությունների) օգնությամբ՝ ճստած — ավելի շատ ճստած — բոլորից ավելի շատ ճստած. փոխարկային տիպարի դերածականները ևս փոխանակ անմիջական համեմատական ավելի բարի կարող են համեմատության մեջ դրվել նույն ձևով՝ մեծացած — ավելի մեծացած — ավելի շատ մեծացած. բ) փոխարկային դերածականները բուն գերադրական աստիճան չունեն. դրանց փոխարեն հանդես են գալիս ամենից ավելի (շատ), ամենից ավելի ֆիչ դարձվածները. համմտ. մեծացած — ավելի մեծամած — ամենից ավելի (շատ) մեծացած (չկան ամենամեծացած, մեծացածագույն ձևեր):

2) Ինչպես տեսանք բուն ածականների քննությունից, որակական ածականների որոշ մասին հատուկ է խնդրառությունը, նեբառայալ նաև պարագայական խնդրառությունը. այս տիպի որակական ածականները մեծ մասամբ ունեն գրեթե չձևավորված նախընթացական դերբայի արժեք՝ գուրկ (=զրկված), կախ (=կախված) և այլն: Իհարկե, սրանց համար խնդրառությունը պետք է հասկանալ նեղ իմաստով՝ բացառելով ուղիղ խնդիր ստանալը: Ուղիղ խնդիր ստանալու հատկությունը սերտորեն կապվում է բայասեռի քերականական կարգի վ ենթն ստանալու հատկության հետ, որ հանդես է գալիս անցողական բայերի դեպքում՝ նամակ գրող. նամակ գրած (գրող—գրվող. գրած—գրված): Ինչպես նշվել է, անմիջապես ուղիղ խնդիր չունեցող -ած-ով ձևերը, որպես վիճակի արտահայտիչներ, կորցնում են սեռային հակադրությունը՝ գրված նամակը — գրած նամակը:

3) Բայական կարգերից տիպարի մասին ադիթ ունեցանք խոսելու վերևում: Մնացած կարգերից բուն եղանակի կարգը հատուկ է միայն բայական դիմավոր ձևերին: Ժխտման կարգը հատուկ է և՛ դիմավոր ձևերին, և՛ դերբայներին. վերջիններս սերելով բայահիմքերից և պահպանելով բայահիմքերի հատկանիշները, պահպանում են նաև բայերի ժխտական ձևերի կազմության եղանակը.

նրանց ժխտականը, ի տարբերություն բուն ածականների ժխտականի, կազմվում է չ նախամասնիկով՝ չգրող, չկարդացող, չգրած, չկարդացած: Բուն ածականները բայի ժխտական ձևերի կազմության ձևը չեն պահպանում. նրանք ստանում են ժխտական ձև ոչ բառ-մասնիկի, հազվադեպ նաև (արխաիկ ոճով) ան- ժխտական մասնիկի միջոցով՝ գեղեցիկ — ոչ գեղեցիկ, լայն — ոչ լայն, ընդհատ — անընդհատ, կայուն — անկայուն և այլն. ընդհանուր առմամբ ան- ժխտականը օգտագործվում է գոյականներից ածականներ կազմելիս, բայց, ինչպես տեսնում ենք, կարող է նաև ածականներից ածականներ կազմել[6]: Քանի որ -ա/ե-լի-ով ձևերը ա) ստանում են բուն դերբայներից տարբեր ժխտականներ, բ) կազմվում են ոչ բոլոր, այլ սովորաբար սուբյեկտիվ-զգայական տիպի բայերից (զգալի, ցանկալի, հասկանալի, տեսանելի և այլն), գ) պահպանում են դրաբարյան կազմությամբ ձևերը (անցանելի, հասանելի, տեսանելի և այլն, այսինքն՝ ժամանակակից հայերենի համար պատրաստի կերպով յուրացված ձևեր են և դ) սովորական եղանակով ստանում են համեմատության աստիճաններ, կարելի է եզրակացնել, որ դրանք պետք է հանվեն դերբայների շարքից և կամ դրվեն բուն ածականների մեջ, կամ դիտվեն որպես առանձին ստորոգելիական ածականների շարք՝ մոտավորապես ռուսերեն «վիճակի կատեգորիայի» բառերի նման. -ա/ե-լի-ով ձևերը հանդես են գալիս գերազանցապես որպես ստորոգելի (ստորոգելիական վերադիր)՝ կազմելով յուրատեսակ անդեմ ձևեր՝ ցանկալի է, հաճելի է, զգալի է և այլն:

4) Քանի որ դերբայական ածականները կազմվում են կերպային ձևերից որևէ մեկից, ուստի և կերպային բուն հակադրությունը չեն պահպանում. դրա փոխարեն նրանք պահպանում են բառակազմական կերպայնությունը՝ վազվզել, գոռգոռալ տիպի բազմակատար (բազմապատկական) — միակատար (ոչ բազմապատկական) հակադրությամբ, բայց այս կարգի կերպայնությունը երբեմն կարող է հատուկ լինել նաև բայածանց ածականներին՝ բեկուն—բեկբեկուն, շողուն—շողշողուն և այլն: Բուն ածականների կերպային հիմնական տարբերությունն ընդհանրապես ըստ տևականության չտարբերակված և տարբերակված լինելու մեջ է. ածականները ցույց են տալիս մշտահատուկ հատկանիշ և կեր-

6 Ոչ-ի և չ-ի իմաստային փոխհարաբերությունը կարելի է բացահայտել գեղեցիկ դառնալ (=գեղեցկանալ) — ոչ գեղեցիկ դառնալ (=տգեղ դառնալ, տգեղանալ) — գեղեցիկ չդառնալ (=չգեղեցկանալ) ձևերի համեմատությամբ:

պայնորեն չեզոք են, դերբայները բնորոշվում են որոշ տևականությամբ։

5) Ժամանակային առումով դերբայներին հատուկ է ժամանակային հաջորդականությունը, բայց ոչ բուն ստորոգական (օժանդակ բայի ձևերով արտահայտվող)՝ իրադրական ժամանակի, դեմքի և թվի կարգերը։ Ժամանակային հաջորդականությունը բնորոշում է ող–ի և ած–ի տարբերությանը՝ հակառակ ածականների։ Ածականները միայն հազվադեպ (ոչ հետևողականորեն) բառակազմական միջոցներով կարող են այդպիսի հաջորդականություն արտահայտել. համմտ. մսացու անասուն (անասուն, որ նախատեսված է որպես միս օգտագործվելու, այսինքն՝ վերածվելու է մսի)։

Այսպիսով, դերածականները բուն ածականներից տարբերվում են ժխտման կարգի ընդհանուր և համեմատության աստիճանների, խնդրառության ու սեռի, հաջորդականության կարգերի մասնակի դրսևորմամբ։

գ. Բայի փոխակերպում մակբայի

(բայի մակբայական փոխակերպում կամ մակբայացում)

Տեսականորեն կարելի է ընդունել բայի մակբայական փոխակերպման երկու դրսևորում՝ բուն մակբայական և դերբայական (դերմակբայական կամ մակդերբայական)։ Սակայն բայական հիմքերից անմիջապես բուն մակբայներ կազմելը հայերենում տարածված եղանակ չէ. փութ–աճակի–ն (փութ–ալ) պետք է համարել ոչ գործուն կազմություն, պատահաբար–ը՝ թերևս ոչ անմիջական սերման արդյունք (համմտ. պատահ–ական–որեն)[7]։

Որպես մակդերբայական մասնիկ հանդես է գալիս լիս–ը։ –լիս տիպի դերբայը բոլոր դեպքերում կազմվում է բայերի կապապարային 1–ին դասից (անկատարի հիմքից)՝ բուն դիմային վերջավորությունը լիս–ով փոխարինելու միջոցով՝ խոսեմ—խոսելիս, մնամ—մնալիս, մոտենամ—մոտենալիս[8]։ –լիս–ով ձևերը

---

7 Ավելի սովորական է բայանունների գործիականի՝ մակբայատիպ գործածությունը՝ պատահմամբ, դիտմամբ և այլն։

8 –լիս–ը ծագում է անորոշից, բայց արդի ըմբռնմամբ հանդես է գալիս որպես ինքնուրույն ձև։

բնորոշվում են դերբայական ածականների բոլոր քերականական կարգերով, միայն թե չունեն ըստ հաջորդականության իրենց հակադրվող համադրական ձևեր (ինչպես այդ տեղի ունի -ող և -ած ձևերի դեպքում)[9]. -լիս-ը ցույց է տալիս ուղեկցող եղելություն («Ես տեսա նրան գնալիս») և պետք է կոչվի համընթացական (ընթացակցական) դերմակբայ (մակդերբայ): Այն կարող է արտահայտել ինչպես ենթակայի՝ բուն գործողությանն ուղեկցող («Տուն գնալիս ես տեսա նրան»), այնպես էլ ուղիղ խնդրի արտահայտած առարկայի գործողություն («Ես տեսա նրան տուն գնալիս»): Հազվադեպ միայն -լիս-ը կարող է արտահայտել անուղղակի խնդրին ընթացակից գործողություն («Ես մոտեցա Հակոբին նամակ գրելիս»). վերջին դեպքում ավելի սովորական է ժամանակ բառի գործածությունը՝ անուղղակի խնդիրը մատնանշող դերանվան հետ միասին՝ «...նրա նամակ գրելու ժամանակ»):

Մակբայական արժեքով գործածվում է նաև անորոշ դերբայի գործիականը՝ գրելով, գնալով և այլն՝ միայն ենթակայի լրացուցիչ գործողությունը նշելու համար՝ «Նա տուն էր գնում քթի տակ խոսելով»: Այս ձևը կարող է ունենալ ըստ հաջորդականության տարբերակված վերլուծական (նկարագրական) տարբերակ՝ -ած լինելով (համմտ. երգող և երգած), թեև հենց ինքն էլ կարող է արտահայտել, գործածության համեմատ, նախորդող գործողություն՝ «Գրելով նամակը՝ նա գնաց տուն» («նամակը գրած լինելով, նամակը գրելուց հետո...»): Վերջին ձևն ավելի գործածական է և ճշականորեն գերադասելի:

3. ԳՈՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ

ա. Արտաքին փոխակերպում

Գոյականական բառակապակցության գլխավոր և լրացական անդամները՝ գոյականական և որոշչային բառերը, կարող են փոխակերպվել ստորոգական ձևերի՝ կազմել բաղադրյալ ստորոգյալ (ստորոգանալ), կամ վերածվել բայական ստորոգյալի (բայանալ):

Խոսերով գոյականի բայական փոխակերպման (բայացման)

---

9 Մինչդեռ համմտ. երկրորդական բաղադրյալ ձևերը՝ գնացած լինելիս, գնալու լինելիս:

մասին՝ հարկավոր է նկատի առնել, որ այս դեպքում գոյականը ձեռք է բերում բայի բոլոր հատկությունները և կարող է ինչպես խոնարհվել, այնպես էլ փոխակերպվել, բային հատուկ փոխակերպմամբ, բայանվանական և դերբայական ձևերի՝ պարիսպ → պարսպեմ → պարսպում, պարսպել:

Սակայն հնարավոր է գոյականի ստորոգելիական գործածություն՝ առանց բուն բայական կարգերի: Սա այն դեպքն է, երբ գոյականը հանդես է գալիս եմ–ի հետ միասին, ինչպես կտեսնենք նախադասության քննության մեջ, կատարում է ստորոգելիի (ստորոգյալի անվանական մասի) դեր (ֆունկցիա)՝ պարիսպ է, տուն է, մարդ է և այլն: Այս դեպքում պարիսպ. տուն, մարդ բաղադրիչներին հատուկ չեն լինի բայական այնպիսի կարգեր, ինչպիսիք են տիպարը, սեռը, կերպը: Մարդ է լինում, մարդ է դառնում ստորոգական ձևերում տիպարա-կերպային տարբերությունները բնորոշում են ոչ թե բուն ստորոգելին՝ մարդ–ը, այլ կապված են եմ, լինեմ, դառնամ բայերի տարբերությունների հետ: Այս մասին հանգամանորեն խոսվել է նախադասության նվիրված հատվածում, թեև սա փաստորեն գոյականի ստորոգացման և, հետևաբար, գոյականի փոխակերպման քննություն է:

Նախադասության նվիրված հատվածում քննվել են նաև երկու այլ երևույթներ, որոնք կապված են գոյականի ստորոգական փոխակերպման հետ, բայց վերաբերում են բուն նախադասության: Դրանք այն դեպքերն են, երբ գոյականը եմ–ով կամ ստորոգման այլ միջոցներով ինքնին նախադասություն է կազմում՝ «Առավոտ է:» «Ամառ: Կեսօր:» և այլն: Բանն այն է, որ նախադասությունը իր էությամբ և իմաստով երկանդամ է, որ պահանջում է ենթակայի և ստորոգելիի միացում՝ լինի ենթական բառով (բառերով) արտահայտված թե ոչ: Քննության մեջ մենք քննեցինք այն երկու հիմնական բաղադրիչները (գոյականը և բայը), որոնց միացումը կարող է նախադասություն ստեղծել: Սակայն որոշ կարգի բայական և գոյականական ձևեր կարող են ինքնին նախադասություններ կազմել. այս դեպքում էլ իրականում մենք գործ ունենք ստորոգյալների հետ, որոնց «ենթակաները» (իրական առարկաները և երևույթները) տրված են անմիջական զգայության մեջ և բառային արտահայտություն չեն ստացել: Ինչպես որ որոշ կարգի բայաձևեր (լուսանում է, մթնում է և այլն) կարող են հանդես գալ ինքնուրույնաբար, այնպես էլ որոշ կարգի գոյականներ կարող են հանդես գալ որպես ստորոգման ինքնուրույն կրողներ և նախադասու-

բյուններ կազմել։ Ձուտ ձևական մոտեցման դեպքում այսպիսի կազմավորումները պետք է քննվեն այստեղ՝ անունների փոխակերպմանը նվիրված բաժնում։ Սակայն նկատի առնելով նախադասության էության պարտադիր երկատելիությունը, սրանք քննվել են նախադասությանը հատկացված ենթաբաժնում։

Գոյականների երկու տիպերից գոյական դերանունը անմիջապար չի բայանում, թեև կարող է ածականանալ (հատկանշի վերածվել) և ապա բայանալ՝ ես → եսական → եսականանալ։ Այս վերջինը եզակի երևույթ է։

Գոյական անվան բայացումը ավելի սովորական է և մասամբ քննվեց բայի գոյականացման կապակցությամբ։ Կա գոյականի բայացման երկու ուղի։

1) Գոյականն առանց լրացուցիչ ածանցական մասնիկների ստանում է բայերին, առանձնապես –ել և –անալ բայերին հատուկ ձևեր՝ պարիսպ → պարսպել, fար → fարել և այլն, կոզի → կոզիանալ, ոսկր → ոսկրանալ և այլն. ինչպես նշվել է, անալ-ով կազմություններում գոյականը սովորաբար գործածվում է փոխաբերաբար, որպես հատկանշի անուն՝ փաստորեն հանդես գալով ածականական արժեքով (տեղի է ունենում իմաստային փոխակերպում՝ գոյականական իմաստ → ածականական-հատկանշային իմաստ → բայիմաստ). արդի էտապում բայական մյուս ձևերով (–ալ,–չել,–նել,–ենալ) գոյականը չի կարող անմիջապես բայանալ. բանաստեղծական լեզվում ել-ով բայացումը շատ ավելի լայն չափեր ունի՝ արևել, լուսնել, ասղել և այլն.

2) Գոյականը բայանում է լրացուցիչ ածանցական մասնիկներով՝ ա) –արկ–ել՝ գործարկել, ձեռնարկել, փորձարկել և այլն. բ) –ավորել՝ դասավորել, թևավորել, կաճավորել, սարքավորել և այլն. գ) –ացնել՝ ավտոմատացնել, հիպնոսացնել (հիպնոսել) և այլն. –ացն–ել-ը հատկապես գործածական է այն օտարաղբի բառերի դեպքում, որոնք վերջանում են-ացիա-ով, և որոնց ացն-ը այսպիսով բաղարկվում է (կոնտամինացիայի է ենթարկվում, իառնվում է) ացն–ի ացն–ի հետ՝ գազիֆիկացնել, էլեկտրիֆիկացնել, մոբիլիզացնել, օկուպացնել և այլն։

Որոշիչ բառերը ևս, գոյականների նման, կարող են կամ բայանալ, հանդես գալ բայ-ստորոգյալի դերում և կրել բայի բոլոր փոխակերպումները (այդ թվում՝ դերբայական փոխակերպման ենթարկվել), կամ ստանալ ստորոգանիշ միջոցներ, հանդես գալ ստորոգելիի դերով և նույնիսկ կազմել անկենթակա միակազմ նախա-

դասութիւններ։ Առաջին դեպքի մասին խոսվել է խոնարհման քննութեան մեջ, երկրորդ դեպքի մասին՝ նախադասութեանը նվիրված հատվածում, ուստի և այստեղ կանենք մի քանի ընդհանուր դիտողութիւններ։

Տեսականորեն բոլոր ածականները և թվականական որոշիչները կարող են ստանալ -անալ-ով ձևեր և բայանալ՝ մեծ—մեծանալ, ամայի—ամայանալ, երկու—երկուանալ և այլն։ Որոշ կարգի ածականներ և թվականներ բայանում են առանց ան-ի՝ բայական ելքորդութեան վերջամասնիկների անմիջական հավելմամբ՝ կարմիր—կարմրել, սպիտակ—սպիտակել, երկրորդ—երկրորդել և այլն։ Կան ածականներ, որոնք ինքնին բայահիմքեր են և հավասարապես գործածվում են և՛ որպես որոշիչ ածականներ, և՛ որպես բայահիմքեր՝ անջատ—անջատել, զուրկ—զրկել, կախ—կախել և այլն։

Ածականը և ածականական բառակապակցութիւնը կարող են հանդես գալ որպես ստորոգելի («Հակոբը բարի է», «Հակոբը շատ բարի է») և նույնիսկ կազմել անեղբակա նախադասութիւններ. վերջին կարգի փոխակերպմանն ընդունակ են միայն որոշ տիպի՝ գնահատողական ածականները (համմտ. «վավ է», «Շատ լավ է», «Գեղեցի՛կ»)։

2. ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Գոյականական բառակապակցութիւն գործառական կազապարի անդամները՝ գոյականը, որոշիչը (կախյալ անդամ) և մակրոշիչը (երկրորդական կախյալ անդամ), ենթակա են փոխանցման և փոխակերպման, ընդ որում այդ պրոցեսները կատարվում են յուրաքանչյուր իմաստային խմբի համար առանձին-առանձին՝ ըստ 2-րդ գծագրի.

Գծագիր 2

Գոյական	Գոյական անուն	Գոյական թվական	Գոյական դերանուն
Որոշիչ	Ածական	Որոշիչ թվական	Որոշիչ դերանուն
Մակրոշիչ	«Մակբայ» (մակածական)	Մակրոշիչ թվական	Մակրոշիչ «դերանուն»

Հայերենի բառերը գոյականական բառակապակցության երեք կարգի անդամների միջև նույն հաստակությամբ չեն բաշխվում։ Գործառական հստակ տարբերակված բառերի կողքին նշանակալից թիվ են կազմում այն բառերը, որոնք միևնույն ձևով կարող են հանդես գալ՝ ա) որպես գոյական, որոշիչ ու մակորոշիչ, բ) որպես գոյական ու որոշիչ և գ) որպես որոշիչ ու մակորոշիչ։ Այս երևույթը կարելի է կոչել գործառական համանունություն։

Դերանուններից գործառական համանունություն ունեն որոշ ցուցական և հարցական տեսակներ. այս, այդ, այն, ի՞նչ դերանունները կարող են գործածվել որպես գոյական և որոշիչ, իսկ –ման, –չափ բաղադրիչներով դերանունները (այսման, այսչափ, որքա՞ն և այլն)՝ որպես որոշիչ և մակորոշիչ՝ «Այս ի՞նչ է» և «Այս մարդը», «Ի՞նչ կա» և «Ի՞նչ գործ» «Այսման մարդ» և «Այսման գեղեցիկ»։ Ժողովրդա-խոսակցական լեզվում այսպես, այդպես այնպես մակորոշիչ «դերանունները» կարող են հանդես գալ նաև որպես որոշիչ՝ «Այսպես մարդ» (փխկ. «Այսպիսի մարդ»)։

Դերանունների մի զգալի մասը, բնույթով լինելով որոշիչ, հոդի օգնությամբ կարող է հանդես գալ որպես գոյական՝ այսպիսի(ն), այդպիսի(ն), այնպիսի(ն), նույնպիսի(ն), մյուս(ը), ո՞ր(ը), որպիսի(ն), ինչպիսի(ն), ամենորդ(ը), ո՞րերորդ(ը), յուրաքանչյուր(ը), բոլոր(ը), այսինչ(ը), այնինչ(ը), ուրիշ(ը)։

Որոշ կարգի դերանուններ էլ գոյականանում են՝ ստանալով հոդ և կրելով հիմքային փոփոխություններ՝ ամեն՞—ամենքը, մի—մեկը, ինչ-որ մի—ինչ-որ մեկը, ոչ մի—ոչ մեկը, մի ամբողջ—մի ամբողջը։

Հայերենի քանակական և դասական թվականները գործածվում են որպես որոշիչ. դերանունների նման նրանք կարող են գոյականանալ հոդի օգնությամբ, ընդ որում երկու-ն կրում է նաև հիմքային փոփոխություն. համմտ. մեկ—մեկը, երկու—երկուսը, երեք—երեքը և այլն, առաջին—առաջինը, երկրորդ—երկրորդը, երրորդ—երրորդը և այլն։ Բաշխական թվականները որոշչային գործառույթամբ կազմվում են քանակական թվականներից –ական ածանցով (մեկական, երկուական և այլն), իսկ մակորոշչային գործառույթամբ հանդես են գալիս քանակական թվականների պարզ կրկնությամբ՝ մեկ-մեկ, երկու-երկու և այլն։

Քանակական թվականները տարբեր ածանցական մասնիկներով և լրացական իմաստներով կարող են գոյականանալ և մակորոշչանալ։ Քանակական թվականներից –յակ ածանցով կազմվում

են հավաքական, -անոց ածանցով՝ չափական կամ պարունակական արժեքի գոյականներ, ընդ որում, յակ-ի դեպքում երկու. երեք. չորս թվականների համար հանդես են գալիս երկ-, եռ-, քառ-, -անոց-ի դեպքում երկու թվականի համար՝ երկուս- հիմքերը՝ երկյակ. եռյակ. քառյակ. հնգյակ, վեցյակ և այլն, երկուսանոց. երեքանոց. չորսանոց. հնգանոց և այլն։ Քանակական թվականների՝ -յակ-ի համար բնորոշ հիմքերից -իցս ածանցով կազմվում են ժամանակա-քանակական մակորոշիչներ՝ երկիցս. եռիցս. այլև քանիցս. բազմիցս. -իցս-ով կազմությունները ժամանակակից հայերենում արդյունավետ չեն։ Սրանց փոխարեն տարածված են արդեն ածանցի վերածվող -ապատիկ-ով (պատել բայի հիմքից) կազմությունները՝ եռապատիկ, քառապատիկ, հնգապատիկ և այլն, որոնք, սակայն, ավելի շատ ածականների վրա են դրվում՝ քառապատիկ լավ, եռապատիկ գեղեցիկ և այլն։ Անարտադրողական և ոչ-գործուն են -կին-ով կազմությունները (կրկին <երկ-կին, երեքկին և այլն)։

Ինչպես նշվեց, հայերենում կա բառերի մի զգալի քանակություն, որ հանդես է գալիս եռակի (գոյական-ածական-մակբայ) և երկակի (գոյական-ածական, ածական-մակբայ) գործառությամբ։

Եռակի գործառությամբ հանդես եկող, այսինքն՝ գործառական չտարբերակված բառերի մեջ կարելի է նշել առաջին՝ հերթին -ա/երեն ածանցով կազմությունները՝ հունարեն, հայերեն, ռուսերեն և այլն (համմտ. «մի հայերեն կամ մի ռուսերեն», «հայերեն խոսք», «հայերեն ճիշտ» և «հայերեն կարդաց»)։ Այս խմբին պատկանող արմատական բառերի քանակը մեծ չէ՝ սխալ, սուտ. որոշ վերապահությամբ նաև աջ, ձախ, ճիշտ, շատ, փիչ, որոնց համար գոյականական գործածությունը սովորաբար միայն որոշիչ հոդով է լինում. համմտ. «մի այնպիսի սուտ ասաց» «սուտ խոսք, «սուտ խոսել» «սուտ հիմար»)։

Ավելի մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնք գործածվում են որպես գոյական և որպես ածական։ Սրանց մեջ հատուկ տեղ են բռնում անձերի բնորոշ անունները, որոնք կարող են գործածվել անկախաբար՝ որպես անձերի տարբեր խմբերի անվանումներ և դրվել անձնանիշ գոյականների վրա՝ ադեաւտ, այրի, ապստամբ. բարբարոս, գերի, դավաճան, երիտասարդ, ժլատ, լիրբ, կախարդ. հարազատ, որբ, պառավ, սուրբ և այլն։ Այս բառերը գոյականական գործածությամբ ցույց են տալիս ոչ թե հատկանիշներ (այսինքն՝ հանդես են գալիս ոչ թե որպես հատկանշների անուններ), այլ

այդ հատկանիշներով բնորոշվող անձեր։ Այսպիսի գործածություն ունեն նաև կենդանի արարածներին վերաբերող այնպիսի բառեր, ինչպիսիք են արու, էգ, մատղաշ և այլն։

Հայերենի գրեթե բոլոր ածականները, ստանալով որոշիչ հոդ, կարող են գործածվել գոյականաբար։ Կարելի է տարբերել այսպիսի գործածության երեք դեպք. ա) ածականները գործածվում են որպես հատկանիշների գոյականացված անուններ (այսինքն՝ այնպես, որ կարծես ունեն ություն ածանցը) և պատկանում են վերացական անունների դասին՝ «Բարին, գեղեցիկն ու լավը և շարը, ոգեղն ու վատը հակադիր են». բ) ածականները գործածվում են ոչ թե հատկանիշներ, այլ դրանք ունեցող անձեր, կենդանիներ, իրեր նշանակելու համար. անձերին և մասամբ կենդանիների վերաբերող վերոհիշյալ անունները այս տիպի են. գ) ածականները գործածվում են այնպես, որ նրանց մեջ հասկացվում են նախապես այդ ածականներով գործածված գոյականները՝ առանց նորից կրկնվելու՝ «Մեծ սենյակը կահավորվեց, փոքրը (=փոքր սենյակը)՝ ոչ»։

Համապատասխանաբար հայերենի ածականների նշանակալից մասը անփոփոխ ձևով կարող է գործածվել նաև մակբայաբար, ընդ որում մի շարք դեպքերում երկու գործածությունները գրեթե հավասար դրսևորում ունեն, մյուս դեպքերում գերակշռում է ածականական գործածությունը. ավելի տարածական է ածականի մակբայական գործածության դեպքում ձևով, կերպով բառերի կամ աբար, ապես, որեն ածանցների հավելումը. համմտ. ամուր, աշխույժ, զգույշ, զվարթ, լավ, խիստ, ծուռ, կուշտ, հավասար, վատ տխուր և այլն։ Գործառական համանունություն ունեն ակի ածանցով կազմությունները՝ հաճախակի, հանկարծակի, շեշտակի և այլն (համմտ. «Հաճախակի ելույթներ» և «Հաճախակի է հանդես գալիս»)։

Ածականները գոյականանում են ություն ածանցով, որ այսպիսով, կերտում է հատկանիշի գոյական անուններ՝ վերջավանկային հնչույթների փոփոխության կանոնների ընդհանրական կիրառությամբ՝ ագահ—ագահություն, աղճատ—աղճատություն, անձուկ—անձկություն, առաքինի—առաքինություն, բուռ—բռություն, գեր—գիրություն, գերի—գերություն, թթու—թթվություն, թույլ—թուլություն, ծույլ—ծուլություն, հաստ—հաստություն, մտերիմ—մտերմություն, պիրկ—պրկություն, փափուկ—փափկություն և այլն։ Թեև ություն-ը ածականներից հատկանիշի գոյական անուններ կերտելիս ավելի ընդհանրական բնույթ ունի, քան բայերից բայանուններ կերտելիս, բայց այստեղ էլ հանդիպում են ածականներ,

որոնք ություն չեն ստանում, այլ գոյականանում են սովորաբար որոշիչ հոդի օգնությամբ. այս կարգի ածականներից են հատկապես՝ ա) վերևում նշված՝ երկակի գործառույթն ունեցողները՝ խավար, նախանձ, ցամաք և այլն. բ) ա–ով վերջացողները՝ ակամա, աշկարա, արյունլվա և այլն, գ) խոսակցական-բարբառային բնույթի որոշ ածականներ՝ ազիզ, fարթու և այլն: –ություն–ից ավելի քիչ տարածված է –f–ն, որ գոյականներ է կերտում ոչ միայն բայերից, այլև ածականներից. համմ. լայն—լայնիf (=լայնություն), երկայն—երկայնիf (=երկարություն) և այլն. f–ով կազմությունները հատուկ են ավելի շատ խոսակցական լեզվին:

Ածականներից մակբայներ են կերտվում, ինչպես նշվել է, –աբար,–ապես,–որեն արդյունավետ ածանցների օգնությամբ, որոնք երբեմն կազմում են զուգահեռ ձևեր՝ ազնվաբար—ազնվորեն, գիտակցաբար—գիտակցորեն, վայրկենաբար—վայրկենապես, rոպեաբար—rոպեապես և այլն, խոնարհաբար, մտավորապես, fաղաfականապես, փարթամորեն և այլն:

Այս ածանցները երբեմն կարող են մակբայներ կազմել գոյականներից՝ արտահայտելով «նման, ձևով», «առումով» իմաստները՝ հայրաբար, սարկաբար, պաշտոնապես, ճյութապես, վարպետորեն, բնագրորեն և այլն: –ություն և–ական ածանցներով հիմքերի դեպքում մակբայական ածանցները կարող են դրվել անմիջապես հիմքերի վրա՝ կազմակերպություն—կազմակերպական—կազմակերպ(ական)որեն:

Կան սակավադեպ ոչ արդյունավետ ածանցներ, որոնք մակբայներ են կերտում ածականներից (ովի՝ յուրովի, ովին՝ լիովին) և գոյականներից (աց՝ երեսաց, սրտաց, ովի՝ մտովի):

ԵՐՐՈՐԴ ԵՆԹԱԲԱԺԻՆ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

I. ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

Նախադասության ներքին փոխակերպումը նախադասության կառուցվածքի այնպիսի փոփոխությունն է, որի դեպքում չի փոխվում նրա առարկայական բովանդակությունը: Ինչպես նշվել է

ստորոգման քննության մեջ, փոխակերպումն ընդհանրապես ոչ այլ ինչ է, եթե ոչ սուբյեկտիվ ընկալման, հաղորդման բնույթի և վերաբերմունքի տարբերության դրսևորում՝ կառուցվածքային տարբերությունների ձևով. կառուցվածքային այդ տարբերությունները դրսևորվում են (փոխակերպման լայն ըմբռնման դեպքում) քերականական բնույթի միավորների հավելման ու փոխարկման, նախադասության անդամների տեղափոխության և զեղչման ձևով[10]: Ի տարբերություն փոխակերպման ընդունված ըմբռնման՝ մենք ելակետային ենք համարում ոչ թե միջուկային նախադասությունները («խորքային» կառուցվածքները), այլ նախադասության առարկայական բովանդակությունը որպես իրականության որևէ հատվածի: Այս կապակցությամբ՝ ա) հատուկ ուշադրություն չենք դարձնում նախադասության մեջ ընդգրկված բառերի (այդ թվում նախադասության անդամների) քանակի վրա, որ կարող է տարբեր լինել միջուկային նախադասությունների և սրանց փոխակերպների մեջ. բ) չենք պահպանում սերման (վախտամների) ծառի ճյուղավորման տեսքը. գ) հետևելով լեզվի բնույթին՝ երբեմն դուրս ենք գալիս միևնույն նախադասության սահմաններից և ներխուժում նախադասությունների կապակցության բնագավառը, եթե նախադասության առարկայական բովանդակությունը մնում է նույնը:

Ներքին փոխակերպումը կընդգրկի փոխակերպման այնպիսի դեպքեր, ինչպիսիք են՝ 1) հարցական և բացականչական նախադասությունների (որպես փոխակերպների) հարաբերությունը պատմողականներին, 2) ժխտականներինը՝ հաստատականներին, 3) կրավորական կառուցվածքներինը՝ ներգործականներին, 4) ընդգծվող անդամով նախադասություններինը՝ սովորական բնույթի (միջուկային) նախադասություններին, որոնցում նորույթի կրողը ստորոգյալն է: Այս բոլոր տարբերությունները բխում են խոսողի ընկալումից, իմացության աստիճանից, հաղորդակցման ընթացքից և կոնտեքստից, հաղորդման ներգործուն լինելու կարիքից: Բոլոր դեպքերում էլ խոսողն ինչ-որ բան մղում է առաջին պլան ըստ խոսակցի և խոսքի կարիքների: Նախադասության ներքին փոխակերպման չորս հիմնական դրսևորումներից չորրորդը որոշ հիմք է ծառայում առաջինի և երկրորդի համար: Այս պատճառով էլ

---

10 Հավելման, ժխտման (զեղչման), փոխարկման և շրջման (տեղափոխության) եղանակների մասին տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 125—126:

նախ քննենք երրորդ ու չորրորդ, ապա առաջին և երկրորդ տիպի փոխակերպումները։

Բայի ձևաբանական հարացույցի և ստորոգման քննության ժամանակ մենք ցույց տվեցինք սեռի քերականական կարգի հիմնական բովանդակությունը։ Նշվեց, որ այս դեպքում միևնույն առարկայական հարաբերությունը (օրինակ՝ Գրիգորի՝ Հակոբին սպանելու փաստը) հաղորդման պրոցեսում կարող է դրսևորվել եկու կերպ՝ ներգործական և կրավորական ձևերով. առաջին դեպքում իրական կատարողը համընկնում է նախադասության ենթակայի հետ, երկրորդ դեպքում՝ ոչ։ Այսպիսով, ներգործական կառուցվածքը իրականության ուղղակի արտացոլումն է, կրավորականը՝ անուղղակի կամ փոխակերպված արտացոլումը։ Եթե երկու արտացոլումներից առաջինի համար պահպանենք «միջուկային», երկրորդի համար՝ «փոխակերպ» անվանումները (առաջինն ավելի ճիշտ կլիներ կոչել «անփոխակերպ», intransform), ապա հայերենի ներգործական և կրավորական կառուցվածքների փոխհարաբերությունը կարտահայտվի երկու կերպ (N—գոյական, V—բայ).

1) Իրական ներգործվողի՝ անձ լինելու դեպքում՝

ա) $N_1^{\text{ուղղ.}} + V^{\text{ներգ.}} + N_2^{\text{սր.}}$

բ) $N_2^{\text{ուղղ.}} + V^{\text{կր.}} [+ N_1^{\text{բցա. (սր.+կողմից)}}]$

ա) Գրիգորը սպանեց Հակոբին

բ) Հակոբը սպանվեց [Գրիգորից (Գրիգորի կողմից)]

2) Իրական ներգործվողի՝ ոչ անձ լինելու դեպքում՝

ա) $N_1^{\text{ուղղ.}} + V^{\text{ներգ.}} + N_2^{\text{ուղղ.}}$

բ) $N_2^{\text{ուղղ.}} + V^{\text{կր.}} [+ N_1^{\text{բցա. (սր.+կողմից)}}]$

ա) Գրիգորը գրեց նամակը

բ) Նամակը գրվեց [Գրիգորից (Գրիգորի կողմից)]

Բանաձևերը ցույց են տալիս, որ՝ 1) իրական ներգործվողի՝ ոչ-անձ լինելու դեպքում ներգործական կառուցվածքի ենթական և ներգործվող ուղիղ խնդիրը ունենում են հոլովական միևնույն ձևավորումը. 2) կրավորական կառուցվածքի դեպքում ներգործողի արտահայտությունը պարտադիր չէ, և այն կարող է բաց թողնվել. վերջին դեպքը մենք կկոչենք «թերի փոխակերպում»։

Բացի այս հիմնական փոխակերպումներից, ըստ հաղորդողի իմացության աստիճանի, անձնական դիտավորության (մանրամասն—ոչ մանրամասն, ճիշտ—ոչ ճիշտ) և կոնտեքստի՝ միևնույն փաստը կարող է ներկայացվել թերի փոխակերպման

տարբեր աստիճաններով՝ ոչ միայն իրական ներգործողի, այլև ներգործողի և ներգործվողի արտահայտության բացառմամբ՝ «Գրիդորը սպանվեց», «Կատարվել է սպանություն» (վերջինս՝ «կատարվել, տեղի ունենալ բայերի դիմավոր ձև+բայանուն» կաղապարով)։ Եթե այս բոլորին միանում են ընդգծման և վերաբերմունքի (հուզականության) տարբերությունները, ապա հանդես են գալիս «Սպանությո՛ւն է կատարվել» (ընդգծված), «Սպանությո՛ւն» (բացականչական) տիպի նախադասությունները։

Հաղորդակցման պրոցեսում հարկ է լինում ունկնդրի ուշադրությունը գրավել նախադասության որևէ անդամի կամ որևէ հատվածի վրա, ապատկացնել այն կամ երբեմն էլ արտահայտել իր համաձայնությունը՝ որևէ հարցում զիջել։ Հաղորդողի՝ նախադասության որևէ հատվածի վրա հաղորդակցի ուշադրություն հրավիրելը կատարվում է առոգանության (շեշտի), շարադասության և հատուկ բառամասնիկների միջոցով։

Նախադասության անդամի ընդգծումը սովորաբար տեղի է ունենում այն դեպքում, երբ ունկնդիրը հաղորդման որևէ անդամը չի լսել կամ չի հասկացել և հարց է տալիս. պատասխանն այս դեպքում լինում է կամ համեմատաբար լրիվ նախադասություն՝ սվյալ անդամի ընդգծմամբ, կամ թերի նախադասություն՝ միայն տվյալ անդամով. հմմտ. ա) «Հակոբը գնացել է տուն»—«(Հակոբն) ո՞ւր է գնացել»—«(Հակոբը) տուն է գնացել», բ) Հակոբը գնացել է տուն»—«Ո՞ր»—«Տուն»։

Նախադասության որևէ անդամի ընդգծումը տեղի է ունենում մի շարք միջոցներով ու եղանակներով, որոնցից հաջորդը սովորաբար մակաշերտվում է նախորդի վրա. 1) տրամաբանական շեշտ, որ ստանում է ընդգծվող անդամը. հմմտ. «Հակոբը գնաց տուն» → «Հակո՛բը գնաց տուն». 2) եմ օժանդակ բայի (հանգույցի)՝ առկայության դեպքում նրա տեղափոխում ընդգծվող անդամի մոտ (սովորական՝ միջուկային նախադասության մեջ եմ-ը դրվում է ստորոգյալի բուն մասի մոտ). հմմտ. «Հակոբը գնացել է տուն» → «Հակո՛բն է գնացել տուն». 3) ստորոգյալին հաջորդող անդամի տեղափոխում ստորոգյալից առաջ. հմմտ. «Հակոբը գնաց տուն»→ Հակոբը տո՛ւն գնաց», «Հակոբը գնացել է տուն»→«Հակոբը տո՛ւն է գնացել». 4) ընդգծվող անդամի առաջբերում ու օժտում որ հարաբերական դերանվամբ ու օժանդակ բայով, և հաջորդող մասի վերածում ստորադաս նախադասության. հմմտ. «Հակոբը գնացել է տուն» → «Հակոբն է, որ տուն է գնացել». «Հակոբն սպանել է

Գրիգորին» — «Գրիգորին է, որ Հակոբն սպանել է». վերջին տիպի փոխակերպումը քիչ սովորական է պարագայական նախադասությունների դեպքում։ Բայց թողնելով առաջին տիպը և մյուսների համար ընտրելով մեկական տիպական նմուշ՝ կոնենանք ընդգծողական փոխակերպման հետևյալ բանաձևերը (p-ով նշանակում ենք ստորոգյալի բուն մասը՝ առանց օժանդակ բայի)՝

2ա) $N^{\text{ուղղ.}} + V^{p+եմ}$

բ) $N^{եմ} + V^{p}$

ա) Հակոբը գնում է

բ) Հակո՛բն է գնում

3ա) $N_1^{\text{ուղղ.}} + V + N_2^{\text{սր./ուղղ.}}$

բ) $N_1^{\text{ուղղ.}} + N_2^{\text{ուղղ/սր.}} + V$

ա) Հակոբը տեսավ Գրիգորին

բ) Հակոբը Գրիգորի՛ն տեսավ

4ա) $N_1^{\text{ուղղ.}} + V + N_2^{\text{սբ./ուղղ.}}$

բ) $N_1^{\text{ուղղ.}\ եմ+որ} + V + N_2^{\text{սբ./ուղղ.}}$

ա) Հակոբը տեսավ Գրիգորին

բ) Հակոբն էր, որ տեսավ Գրիգորին։

Այս կապակցությամբ նշենք հետևյալը. 1) բոլոր դեպքերի թվարկումն ու բանաձևավորումը խիստ մեծածավալ կլիներ, և մենք որոշ ընտրություն ենք կատարում. դրանք կարող են առանձին քննության նյութ լինել. 2) չորրորդ դեպքում եմ-ը ժամանակով համաձայնում է հաջորդող մասին՝ դրվելով՝ ա) ոչ-անցյալ ժամանակների և եմ օժանդակ բայով անցյալ ժամանակների հետ՝ ներկայով՝ «Հակոբն է, որ գրում է (գրել է, պիտի գրի, գրելու է...)». բ) մյուս ժամանակների հետ՝ անցյալով՝ «Հակոբն էր, որ գրեց (գրել էր, գրելու էր...)»։

Ընդգծման հետ աներոտրեն կապված է այսպես կոչված կամքերական բառ-մասնիկների գործածությունը, որոնք, ինչպես նշվել է, որոշ քերականներ դնում են մակբայների, ուրիշները՝ եղանակական բառերի մեջ, և որոնք իրականում կազմում են խոսքի-մասային հատուկ խումբ՝ կազապարային և իմաստա-գործառական որոշակի արժեքով. ա) ի տարբերություն եղանակական բառերի՝ այս բառ-մասնիկները երանգավորում են ոչ թե ամբողջ նախադասությունը, այլ նախադասության այս կամ այն անդամը. բ) ի տարբերություն մակբայների՝ նրանք դրվում են ոչ միայն ածականների և բայերի, այլև գոյականների և նույնիսկ մակբայների, այսինքն՝ բոլոր լիիմաստ բառերի վրա։ Այդ բառ մասնիկնե-

ը, ինչպես նշվել է, կազմի գոյաբանական կարգի սուբյեկտիվ դրսևորումներն են, կազմի կարգի նկատմամբ խոսողի և խոսակցի համաձայնության և անհամաձայնության արտահայտիչներ. այս դեպքում շեշտվում է որևէ բանի առկայության և բացակայության անհրաժեշտությունը կամ դիջում է արվում խոսակցին որևէ բանի առկայության և բացակայության (մասնակցության և չմասնակցության) հարցում (տվյալ միավորն առնվում է ամբողջի հարաբերությամբ): Ըստ այսմ կամաբերական բառ-մասնիկները լինում են երկու տիպի սաստկական-ընդգծողական և դիջական-սահմանափակական:

1) Սաստկական-ընդգծողական բառ-մասնիկներն են անգամ, իսկ, մանավանդ, մինչև անգամ, մինչև իսկ, նամանավանդ, նույնիսկ. հմմտ. «Նույնիսկ ես չկարողացա մասնակցել», «Գրիգորը նույնիսկ գրեց այդ մասին» «Նույնիսկ արագ կատարվեց» և այլն:

2) Դիջական-սահմանափակական բառ-մասնիկներն են գեթ, գոնե, լոկ, միայն, միմիայն. հմմտ. «Գոնե ես կարողանայի մասնակցել», «Գրիգորը գոնե գրեր այդ մասին», «Գոնե արագ կատարվեր» և այլն:

Կամաբերական բառ-մասնիկների վերաբերյալ հարկավոր է նշել հետևյալը. 1) գոնե–ն ունի ենթադրական երանգ և սովորաբար գործածվում է ըղձական բայաձևերի հետ. մյուս բառ-մասնիկները եղանակային այդպիսի սահմանափակում չունեն. 2) այն հանգամանքը, որ կամաբերական բառ-մասնիկները կազմի գոյաբանական կարգի դրսևորմանն են ծառայում, նրանց զգալիորեն մոտեցնում է համապատասխան շաղկապներին. այս է պատճառը, որ համադասական շաղկապները հաճախ ծագում են այսպիսի բառ-մասնիկներից կամ նրանց հետ ընդհանուր են, և վերջիններս հաճախ թվարկվում են շաղկապների շարքում. հմմտ. «Գրիգորն իսկ ի վիճակի չէ այդ անելու» և «Ես գնացի տուն, իսկ նա՝ դպրոց»:

Ժխտական և հաստատական նախադասությունների հարաբերությունը ձևաբանական է, ուստի և քննվել է խոնարհման կապակցությամբ. նշվել է հատկապես, որ չ-ն դրվում է պարզ բայաձևերի դեպքում դրանցից, իսկ բաղադրյալ ձևերի դեպքում՝ օժանդակ բայից առաջ, ընդ որում վերջինս փոխում է իր տեղը. այլ կերպ ասած՝ պարզ ժամանակների դեպքում ժխտումն արտահայտվում է միայն մասնիկավորմամբ, բաղադրյալների դեպքում՝ մասնիկավորմամբ և օժանդակ բայի տեղափոխությամբ: Այստեղ ավելացնենք, որ ժխտման դրսևորումները հենվում են ընդգծման դրսևորումների վրա, որովհետև ժխտվողը նաև ընդգծվում է:

Հարցական և բացականչական նախադասությունների փոխակերպական քննությունը, ինչպես նշվել է, նույնպես հենվում է ընդգծման վրա։ Այս դրույթը ճիշտ է հատկապես հարցական նախադասությունների համար, որոնց մեջ հարցումը սովորաբար վերաբերում է որևէ անդամի, այսինքն՝ ուղեկցվում է հարցվող անդամի ընդգծմամբ։ Բացականչական նախադասությունը թեև իր բնույթով այնպիսին է, որ բացականչումը վերաբերում է ողջ նախադասությանը, բայց որոշ դեպքերում ընդգծվում է հատկապես որևէ անդամ։ Ե՛վ հարցական, և՛ բացականչական նախադասությունների համար կարելի է տարբերել երկու տեսակ. 1) սովորական, որ կրկնում է միջուկայինի կառուցվածքը՝ հնչերանգային փոփոխությամբ, և բ) փոխակերպային, որի դեպքում տեղի են ունենում նաև կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես բառերի հավելում և տեղափոխություն (նախադասության շարադասության փոփոխություն)։ Առաջին տեսակը հանդես է գալիս հատկապես որպես հաղորդման հակազդում (ռեակցիա), երբ հաղորդումն ընկալողը իմացածը կրկնում է բացականչորեն (զարմանք, կշտամբանք և այլն)[11] կամ ուզում է հավաստիանալ։ Երկրորդ տեսակը ունի տարբեր դրսևորումներ, որոնք կարող են հանդես գալ ընդգծման տիպի փոխակերպական բանաձևերով։

Հարցական նախադասությունների համար սովորական է հարցումն արտահայտող բառերի նախադաս գործածությունը՝ ընդգծմամբ հանդերձ՝ «Ա՞ղ էր հարկավոր ոչխարի համար» (ՀԹ) (համմտ. «Ոչխարի համար հարկավոր էր աղ»)։ Հարցումը կարող է ուժեղացվել մի՞թե, արդյո՞ք, թե՞ չէ, ո՞ր հարցական բառերով, որոնցից առաջինը նախորդում է, վերջին երկուսը՝ հաջորդում, իսկ արդյոք-ը կարող է և՛ հաջորդել, և՛ նախորդել, համմտ. «Մի՞թե վերջին պռեստն եմ ես» (ՎՏ). «Արդյոք գնացե՞լ է»—«Գնացե՞լ է արդյոք», «Գնացե՞լ է, թե՞ չէ», «Գնացե՞լ է որ»։

Ըղձական տիպի բացականչական նախադասությունների համար սովորական է ստորոգյալի տեղափոխումը ենթակայից առաջ՝ «Կորչի՛ անարդարությունը»։ Ընդհանրապես սովորական է ընդգծվող անդամների նախադաս գործածությունը՝ հատկապես ի՛նչ, ինչ-ո՞ւ և այլ տիպի բառերի ուղեկցությամբ (համմտ. ի՞նչ, ինչո՞ւ հարցականները)՝ «Ի՛նչ գեղեցիկ է այս քաղաքը», «Ինչո՛ւ շատ են նկողները» և այլն։

---

11 Զարմանքի դեպքում՝ հարցական-բացականչական հնչերանգով։

II. ԱՐՏԱՔԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

1. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Նախադասության արտաքին փոխակերպումը ոչ այլ ինչ է, եթե ոչ նախադասությունների փոխակերպում գոյականական, ածականական և մակբայական բառաձևերի և բառակապակցությունների, որոնք կարող են մտնել բառակապակցությունների և նախադասությունների կազմի մեջ։ Նախադասության փոխակերպումը բառաձևի հայերենում համեմատաբար հազվադեպ է և տեղի ունի մեկ բայով արտահայտված անեղթակա միակազմ նախադասությունների դեպքում՝ ցրտեց → ցրտելը, (ցրտած), ցրտելիս։ Շատ ավելի հաճախադեպ է նախադասության փոխակերպումը բառակապակցության՝ համապատասխան լրացումներով հանդերձ։

Հնարավոր է նախադասության արտաքին փոխակերպման հինգ դեպք. 1) նախադասությունը հարաբերական դերանունների և շաղկապների օգնությամբ փոխակերպվում է ստորադաս նախադասության, որ բառակապակցության կամ մի այլ («գլխավոր») նախադասության մեջ հանդես է գալիս գոյականի, որոշչի (ածականի) և մակորոշչի (մակբայի) գործառությամբ. 2) նախադասությունը վերածվում է դերբայական դարձվածի, այսինքն՝ դերբայով (լրացումներով կամ առանց լրացումների) արտահայտված անդամի, որ բառակապակցության կամ մի այլ նախադասության կազմում հանդես է գալիս գոյականի, որոշչի և մակորոշչի գործառությամբ. 3) հնարավոր դերբայական դարձվածի դերբայը գեղչվում է, և նախադասությունը վերածվում է գոյականական բառակապակցության՝ կախյալ գոյական անդամով. 4) նախադասությունը վերածվում է բայանվանական գոյականի և ածականի՝ բառակապակցության կամ մի այլ նախադասության կազմում ստանձնելով գոյականին և ածականին հատուկ գործառություն. նախադասության՝ դիմավոր բայից տարբեր անդամները այս դեպքում հանդես են գալիս որպես լրացումներ. 5) նախադասությունը վերածվում է բաղադրյալ և հատկապես բարդ գոյականի, ածականի և մակբայի, որոնք բառակապակցության և մի այլ նախադասության մեջ կատարում են համապատասխան պաշտոններ։

Նախադասության փոխակերպման տարբեր դեպքերը պայմանավորված են՝ ա) փոխակերպվող նախադասության անդամների բնույթով ու քանակով. բ) արտահայտության ճկական տարբերու-

թյուններով (ըստ գործառական և անհատական ոճերի, այլև ոճին ներկայացվող ընդհանուր պահանջների), գ) հայերենի բառակազմական առանձնահատկություններով և հնարավորություններով:

Ծավալուն նախադասությունների համար սովորական է փոխակերպումը երկրորդական նախադասությունների, ավելի քիչ սովորական՝ փոխակերպումը ներքայական դարձվածների. սրանց համար սովորական չէ փոխակերպումը բայանվանական (գոյական և ածականանական) բառակապակցությունների, առավել ևս՝ բաղադրություններին: Նախադասությունների և լրացումների մի շարք տիպեր ունեն փոխակերպման տարբեր սահմանափակումներ, որոնց մասին ըստ անհրաժեշտության կխոսվի:

2. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ (ՍՏՈՐԱԴԱՍ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ա. Նախադասությունների ստորադասական կապակցություն (բարդ ստորադասական նախադասություն)

Բայական բառակապակցության կենտրոնական անդամը բայն է, որ դիմավոր ձևով նախադասություն է կազմում: Դիմավոր բայի հետ կապված բոլոր անդամները՝ ենթական, ստորոգելին, խընդիրները և պարագաները, համապատասխանաբար կարող են արտահայտվել ամբողջական նախադասությամբ, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ անկախ նախադասության փոխակերպում կախյալի:

Եթե նկատի առնենք, որ դիմավոր բայի շուրջը կենտրոնացած անդամները կարող են արտահայտվել բառակապակցություններով, որոնք իրենց հերթին կարող են ունենալ նախադասական լրացումներ, ապա կստացվի զանազան կարգի նախադասությունների զուգակցման բավականաչափ բարդ պատկեր: Իր կազմում որևէ լրացական (երկրորդական, ստորադաս) նախադասություն ունեցող նախադասությունը ընդունված է կոչել բարդ ստորադասական նախադասություն: Մեկից ավելի լրացական նախադասություններ պարունակող նախադասությունը համապատասխանաբար կոչենք հարաբարդ: Պետք է նկատի առնել, որ հարաբարդ նախադասությունը բարդ ստորադասականի համեմատությամբ որակական տարբերություն չունի. հարաբերությունների բնույթը նույնն է, ինչ բարդ նախադասություններում, ընդ որում հնարավոր են ամենատարբեր զուգակցումներ. միևնույն նախադասության կազմում կարող են

հանդիպել՝ ա) տարբեր գործառություն ունեցող լրացական նախադասություններ՝ «Իմ ընկերը, որ աչքի էր ընկնում մեծ հետաքրքրասիրությամբ, դարձյալ ճանապարհ ընկավ, որպեսզի նոր քաղաքներ և նոր երկրներ տեսնի». բ) միևնույն գործառություն ունեցող լրացական (համաստորադաս) նախադասություններ՝ «Իմ ընկերը, որ աչքի էր ընկնում մեծ հետաքրքրասիրությամբ, և որին հազվադեպ կարելի էր տեսնել միևնույն վայրում, դարձյալ ճանապարհ ընկավ». գ) լրացական (երկրորդական) նախադասությունը լրացնող (երկրորդ կարգի ստորադաս) նախադասություն՝ «Գրիգորյանը երկրորդ անգամ չներկայացավ, որովհետև մոռացել էր, թե խոստացել է ներկայանալ». այսպիսի նախադասությունների գործածությունը խրախուսելի չէ, մանավանդ երբ երկրորդական կարգի ստորադաս նախադասությունը լրացվողի հետ համընկնում է գործառական բնույթով, և հանդես են գալիս կապակցության միևնույն միջոցները: Այն հարաբարդ նախադասությունները, որոնց երկրորդական նախադասություններն ունեն միևնույն գործառությունը և կրկնվում են պարբերական հաջորդականությամբ՝ ճարտասանական-ոճաբանական նկատառումներով, կոչվում են պարբերություններ[12]:

Ներկա աշխատության ընդհանուր սկզբունքին համապատասխան լրացական նախադասությունների քննությունն սկսենք կապակցության միջոցներից, ապա անցնենք դրանց իմաստային տեսակավորմանը: Ըստ կապակցության միջոցների կարելի է տարբերել հարաբերական և շաղկապական նախադասություններ: Հարաբերական նախադասությունները կապակցվում են հարաբերական դերանուններով, շաղկապական նախադասությունները՝ շաղկապներով: Սակայն սրանց հստակ տարբերակումը օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի որոշ դժվարություններ է հարուցում. ա) դժվար է որոշակի սահման անցկացնել հարաբերական դերանունների և շաղկապների որոշ տեսակների միջև. եթե հիմք ընդունենք այն սկզբունքը, թե հարաբերական դերանունները նախադասության անդամներ են, իսկ շաղկապները՝ ոչ, ապա, ինչպես նշվել է, դժվար է հիմնավորել որոշ կարգի շաղկապների՝ նախադասության անդամ լինելը. բ) հայ քերականության մեջ, ոչ առանց հիմնավորման, հարաբերական դերանուններ են համարվում նաև այն հարցա-հարաբերական բառերը, որոնք մակբայական գործառու-

12 Մանրամասների համար տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի պարբերությունը, Երևան, 1968:

թյուն ունեն, այսինքն՝ ոչ միայն ով, ինչ, որ, որպիսի, ինչպիսի, որերորդ, քանիերորդ *բառերը, որոնք հարաբերակից են գոյական և ածական անուններին, այլև* որտեղ, ուր, երբ, ինչպես, քանի, որքան, ինչքան, որչափ, ինչչափ *բառերը, որոնք հարաբերակից են մակբայներին: Այս առումով հարաբերական «դերանունների» շրջանակն զգալիորեն ընդարձակվում է: Բուն հարաբերական նախադասությունները գոյականական և որոշչային բնույթի են, այսինքն՝ փոխարինում են գոյականներին ու գոյականական բառակապակցություններին և որոշիչներին ու որոշչային բառակապակցություններին: Սակայն հարաբերական «դերանունների» սահմաններն՝ հիշյալ տիպի ընդարձակման դեպքում հարկ կլինի հարաբերական նախադասությունների մեջ քննել նաև որոշ կարգի մակբայա-պարագայական բնույթի նախադասություններ: Շաղկապական նախադասությունները գերազանցապես պարագայական նախադասություններ են, այսինքն՝ փոխարինում են պարագայական լրացումներին: Քան և որ շաղկապներով նախադասությունները երկու դեպքում արտաքնապես կարծես հանդես են գալիս գոյականական անդամներին փոխարինողների դերում. սակայն իրականում երկու դեպքում էլ առարկաներն առնվում են իրենց բնորոշ հատկությամբ կամ գործողությամբ. քան–ը ցույց է տալիս հատկանիշի համեմատություն, որ-ը՝ հոգեկան գործառության առարկա՝ առնված իր որևէ կողմով. համմտ. «Նա ավելի գեղեցիկ է, քան ես կարծում էի», «Նա ավելի շատ աշխատեց, քան կարելի էր սպասել», «Նա տեսավ, որ Գրիգորը գալիս է (=Գրիգորի գալը)»:*

Բ. Հարաբերական երկրորդական (ստորադաս) նախադասություն

ա. Գոյական հարաբերական նախադասություն

Հարաբերական երկրորդական նախադասությունները, ինչպես նշվեց, գերազանցապես գոյականական և որոշչային, հազվադեպ մակորոշչային գործառություն ունեն: Գոյականական բնույթի հարաբերական նախադասությունները հարաբերակից են նախադասության և բառակապակցության հոլովական և կապական անդամներին:

Հարաբերական երկրորդական նախադասությունների համար սովորական է ետադաս գործածությունը, բայց կարող են հանդիպել նաև նախադաս և նույնիսկ միջադաս հարաբերական նախա-

դասություններ։ Գլխավոր նախադասություններում հարաբերական դերանուններին սովորաբար համապատասխանում են՝ գոյականական նախադասությունների դեպքում նա, այն, նույնը, այն ամենը, այն բոլորը, մակորոշչայինների (մակբայականների) դեպքում՝ այն–ով, երբեմն էլ նույն–ով, այս–ով, այդ–ով բաղադրված ցուցականները՝ այնտեղ, այն ժամանակ, այնման և այլն. այս–ով, այդ–ով բաղադրված ձևերը սովորաբար հանդիպում են այն դեպքում, երբ երկրորդական նախադասությունը նախադաս է։

Դիմավոր բայի շուրջը կենտրոնացած գոյականներին և գոյական բառակապակցություններին փոխարինող երկրորդական նախադասությունները կարող են կապակցվել ով, ինչ, որ հարաբերական դերանուններով։ Ի տարբերություն որոշչային (ածականական) հարաբերական նախադասությունների՝ այստեղ ավելի սովորական է ով և ինչ հարաբերականների գործածությունը՝ այդ բառերի դասային սովորական տարբերակմամբ (անձ և ոչ-անձ նշանակելու համար)։ Եթե ով և ինչ դերանունների հոլովաձևերը կամ կապական խմբերը՝ ով, ում, ումնից, ումնով, ինչին, ինչից, ինչով, ում հետ, ում համար, ինչի մասին և այլն, ցույց են տալիս նրանց դերը երկրորդական նախադասության մեջ, ապա ցուցական բառերի հոլովաձևերը որոշում են երկրորդական նախադասությունների գործառական արժեքը՝ ո՛ր գոյականներին փոխարինելը։ Ըստ այսմ՝ ով–ով և ինչ-ով երբեմն էլ ով որ-ով, ինչ որ–ով կապակցվող երկրորդական նախադասությունները կարող են լինել ենթակա, ստորոգելի, ուղիղ խնդիր, անուղղակի խնդիրներ.

1) Ենթակա երկրորդական նախադասություն՝ «Ով եկել էր գյուղից հետու, նա թողել էր հողը խոնավ» (ԵՂ, 2, 81), «Ով չի օրհնում քեզ, սրիկա է նա» (ԵՂ, 2, 49), «Սրիկա է նա, ով հայր է լինում» (ԱՒ, 190), «Ով որ կա, թող գա» (ԵՂ, 2, 173)։

2) Ստորոգելի երկրորդական նախադասություն՝ «Ցավն այն է, որ ես սիստեմատիկ կրթություն չեմ ստացել» (ՆԴ), «Քո ասածը նույնն է, ինչ ես ամեն օր կրկնում եմ»։

3) Ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն՝ «Պար ենք բռնել խելահեղ, Հրդեհում ենք ու վառում Այն ամենը, ինչ որ կար Հազարամյա աշխարհում» (ԵՂ, 2, 75). «Ասել է նույնը, ինչ ես ամեն օր կրկնում եմ», «Այլևս չէր ուզում տեսնել նրան, ով երկար ժամանակ իր սրտում թագավորում էր»։

4) Անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն՝ «Հանձնեց նրանց, ովքեր պետք է փոխադրեին», «Մեղավոր է հենց

նրանով, որ ոչ ոքի տեղյակ չի պահել», «Չի կարելի նեղանալ նրանից, ով իր արածները չի գիտակցում» և այլն: Հատուկ խումբ են կազմում կապական խնդիր երկրորդական նախադասությունները՝ «Տանջվիր նրա համար, ով արժանի է», «Պատմում էր այն բոլորի մասին, ինչ տեսել էր» և այլն:

Ինչպես մասամբ տեսանք, ով–ի և ինչ–ի դերը երբեմն կատարում է որ հարաբերական դերանունը՝ «Բայց ինչու՞ միայն ես երգեմ, Միայն ես և ոչ թե նրանք, Որ օրերը այս հողմածեծ Գրոհել են անցյալի վրա» (ՆՀ, 2,124), «Ամեն ինչ հաղորդեց նրան, որ ուղարկված էր հատուկ հանձնարարությամբ», «Վաղուց ի վեր հնացել էր նրանից, որ բոլոր վշտերի պատճառն էր եղել» և այլն:

Այն դեպքերում երբ պարզ նախադասության ստորոգելին արտահայտված է պես, նման, չափ կապերով ձևավորված գոյականներով, ստորոգելի երկրորդական նախադասությունը և գլխավոր նախադասությունը կարող են ձևավորվել այնպես—ինչպես, այնպիսին—ինչպիսին, այնման—որման տիպի կապակցական միջոցներով՝ «Այդ բոլորը այնպես չէ, ինչպես դուք հաղորդում եք» (=«Այդ բոլորը ձեր հաղորդածի նման չէ»), «Քո ուղարկածն այնման չէ, որման դու խոստացել էիր» և այլն: Ընդհանրապես ստորոգիչի կապական տարբեր տեսակները կարող են հանդես գալ ցուցականի և հարաբերականի հետ տվյալ կապերի կամ նրանց համապատասխանող այլ բառերի զուգակցությամբ:

Գոյականից կախված հատկացուցիչ, բացահայտիչ, սահմանափակիչ երկրորդական անդամների մասին կխոսվի ներկա գլխի՝ գոյականական լրացմանը նվիրված հատվածում:

բ. Որոշիչ հարաբերական նախադասություն

Առարկայանիշ բառերի (գոյականների) ծավալման քննության ժամանակ մենք տեսանք, որ այդ բառերի երկու հիմնական կարգերից գոյական անունները որոշիչ բառեր ստանում են, գոյական դերանունները՝ փաստորեն ոչ. վերջին հանգամանքը մենք բացատրեցինք նրանով, որ դերանունները իրադրական բնույթ ունեն և կամ ինքնին որոշյալ են, կամ ինքնին անորոշ: Այսպիսով պարզվեց, որ բառերի այդ երկու կարգերը իրարից որոշակիորեն տարբերվում են ոչ միայն ձևաբանական փոփոխության առանձնահատկություններով, այլև ըստ կապակցելիության:

Որոշչային բնույթի երկրորդական նախադասությունների քըն-

նությունից նկատում ենք, որ այս դեպքում կապակցելիական տարբերությունը վերանում է, և գոյական դերանունները ձեռք են բերում որոշիչ ստանալու հատկություն. այս առումով դերանունները որոշող երկրորդական նախադասությունները փոխակերպելի չեն. համմտ. «Դուք, որ մեր քրտինքն եք կերել Ու հարբել քրտինքով մեր տոթ,—եկեք, թե կուզեք չլինել Մեր վերջին կռվից հետո...» (ԵՉ, 2,122), «Ես, որ մարդկանց նախանձի առարկան էի, այժմ դարձել եմ լոկ խղճահարության արժանի մի թշվառական», նման դեպքերում որոշիչ երկրորդական նախադասությունները կարելի է համարել բացահայտիչ երկրորդական նախադասություններին համարժեք և փոխակերպել վերջիններիս նման՝ համապատասխան բացահայտիչ որևէ բառի (անձ, մարդ, անձնավորություն, մեկը և այլն) հավելմամբ. համմտ. «Ես՝ մարդկանց նախանձի առարկա եղած մի անձնավորություն...»:

Սակայն եթե գոյական դերանունները կարող են որոշիչ երկրորդական նախադասություն ստանալ, ապա որոշիչ դերանունները (դերանվանական որոշիչները) չեն կարող փոխարինվել որոշիչ երկրորդական նախադասությամբ: Այս դեպքում նրանք հանդես են գալիս որպես հարաբերիչ բառեր կամ հարաբերյալներ՝ անմիջական առարկայական իրադրության մեջ առարկաներ նշանակելու փոխարեն դառնալով այդ առարկաների նշանակումների նշանակիչներ. համմտ. «Ո՞ր մարդը»—«Այն մարդը, որ գնում էր»:

Այսպիսով, որոշիչ բառերից միայն ածականներն ու թվականներն են, որ փոխարինվում են համապատասխան երկրորդական նախադասություններով:

Ի տարբերություն գոյական անունները լրացնող բառերի, որոնք գերազանցապես նախադաս դիրք են զբաղեցնում լրացյալի նկատմամբ, գոյական անունները լրացնող երկրորդական նախադասությունները, խիստ հազվադեպ բացառություններով, լրացյալի նկատմամբ գրավում են ետադաս դիրք: Այս դեպքում նրանք կամ հարում են լրացյալին անմիջաբար (եթե լրացյալը վերջադաս դիրք է գրավում), կամ այլ բառերի միջնորդությամբ. վերջին դեպքում կամ լրացյալն ստանում է այն ցուցականը (երբեմն էլ դրանով բաղադրված մի այլ ցուցական), որ ձևական որոշչի դեր է կատարում («Իմ այն ընկերոջ գիրքը, որ...»), կամ հարաբերյալը կրկնվում է («Ես վերադարձա իմ ընկերոջ տունը, ընկերոջ, որ...»):

Որոշիչ երկրորդական նախադասություններ ներմուծող ամե-

նից ավելի ընդհանրական դերանունը որ-ն է: Ժամանակակից հայերենում այն հանդես է գալիս շարահյուսական հետևյալ հիմնական հատկանիշներով. 1) որ-ը թվով սովորաբար համաձայնում է հարաբերյալի հետ. հմմտ. «Այն մարդիկ (մարդկանց, մարդկանցից...), որոնք (որոնցից, որոնցով...)». որպես երկրորդական նախադասության ենթակա հանդես գալիս այն կարող է չհամաձայնել («Այն մարդիկ, որ...»), ընդ որում հոգնակի հարաբերյալի դեպքում երկրորդական նախադասության ստորոգյալը համաձայնում է ոչ թե հարաբերականի, այլ հարաբերյալի հետ, այսինքն՝ դրվում է հոգնակի թվով. հմմտ. «Այն մարդիկ, որ սովորել են շողոքորթել...». 2) որ-ը դրվում է այն հոլովով, որ որոշվում է երկրորդական նախադասության մեջ նրա կատարած դերով կամ խնդրառական պահանջով. հմմտ. «Այն մարդիկ, որոնցից երեխաները սովորելու ոչ մի բան չունեն...», «Այն մարդիկ, որոնցով թատրոնները լցված են...» «Այն մարդիկ, որ(ոնք) սիրում են շողոքորթել...» և այլն. 3) ուղղականաձև որ հարաբերականի որոշիչ հոդը երբեմն, անկախ իմաստից, կարող է զանց առնվել ոճական նկատառումներով՝ «Այն մարդը, որ(ը) սիրում է շողոքորթել...». Հոգնակի հարաբերյալի դեպքում որ-ն ընդհանրապես հոդ չի ստանում. 4) հարաբերյալը կարող է ստանալ այն, նույն այն (այդ), մի ձևական որոշիչները. հմմտ. «Այն մարդը, որ...», «Նույն այն մարդը, որ...», «Մի մարդ, որ...». Հարաբերյալի կրկնվելու դեպքում այսպիսի ձևական որոշիչ ստանում է երկրորդ հարաբերյալը («Ես տեսա Հակոբյանի նկարը, այն Հակոբյանի, որ...», ընդ որում կրկնվող հարաբերյալը կարող է գործածվել ուղղականաձև («Ես տեսա այդ մարդու նկարը, մի մարդ, որ...), կամ փոխարինվել որևէ ընդհանրացնող բառով «Ես տեսա Հակոբյանի նկարը, մի մարդ(ու) որ...»]. 5) որ հարաբերականը սովորաբար վերաբերում է որևէ գոյական հարաբերյալի, սակայն երբեմն այն կարող է վերաբերել ստորոգյալին իր բոլոր լրացումներով, այսինքն՝ փաստորեն նախորդող նախադասությանը. այս դեպքում ստորոգյալն առնվում է գոյականացումով, և մենք գործ ունենք յուրատեսակ բնական փոխակերպման հետ, որի միջին օղակը բաց է թողնվում կամ հանդես է գալիս մի բան, մի հանգամանք ընդհանրացնող բառերով. «Գրիգորը դադարեցրեց իր այցելությունները, որ խիստ զարմանալի էր բոլորի համար», «Գրիգորյանը դադարեցրեց իր այցելությունները, մի

բան, որ խիստ զարմանալի էր բոլորի համար». 6) որոշ դեպքերում, երբ հարաբերյալը հարաբերական դերանունից անջատված է հատկացյալով, վերջինս, հակառակ հայերենի շարադասության սովորական կանոնի, կարող է առաջ բերվել. «նա տեսավ նկարը մի մարդու, որ...» 7) եթե որ հարաբերականը երկրորդական նախադասության մեջ կատարում է տեղի կամ ժամանակի պարագայի դեր, իսկ հարաբերյալը տեղացույց կամ ժամանակացույց բառ է, այն կարող է փոխարինվել որտեղ, ուր, երբ բառերով՝ «Մեկնեց այն քաղաքը, որտեղ անց էր կացրել իր մանկությունը», «Եվ մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերի վրա...» (Ահ, 187):

Որ–ից ավելի մասնավորված գործածություն ունեն որպիսի, ինչպիսի և որքան, ինչքան հարաբերականները, որոնցից առաջինները ներմուծում են որակական (ածականական արժեքի), երկրորդները՝ քանակական (թվականական արժեքի) երկրորդական նախադասություններ. սրանցից առաջիններին որպես ձևական որոշիչներ համապատասխանում են այնպիսի (երբեմն էլ այսպիսի, նույնպիսի), երկրորդներին՝ այնքան ցուցականները. «Այնպիսի մարդ էր, որպիսին քիչ է հանդիպում», «Այնքան ճանապարհ գնաց, որքան կարելի է գնալ մեկ օրում»: Երկու դեպքում էլ բուն որակական և քանակական որոշիչները՝ ածականները և թվականները, փոխարինվում են համապատասխան նկարագրական արտահայտություններով: Որպիսի հարաբերականը համաձայնում է հարաբերյալի հետ թվով, ընդ որում, ի տարբերություն որ–ի, նրա համաձայնությունը պարտադիր է: Որպիսի–ն և որքան–ը բուն արժեքով որոշիչ բառեր են, բայց կարող են գործածվել գոյականաբար և հոլովվել. այս դեպքում որպիսի–ի եզակի հոլովաձևերի գործածությունը (որպիսիսի, որպիսիցից և այլն) հազվադեպ է: Քանի որ որոշիչները ևս կարող են ունենալ իրենց որոշիչները (մակորոշիչները), ուստի և հարկ կլինի տարբերել նաև մակորոշչային տիպի լրացական նախադասություններ:

գ. Մակորոշիչ հարաբերական նախադասություն

Մակորոշիչ («մակբայական» բնույթի») հարաբերական երկրորդական նախադասությունները ունեն երկու կարգի դրսևորում՝ ա) ըստ լրացվող որոշչի՝ որոշյալի նկատմամբ գրաված դիրքի և բ) որոշչի՝ ի՛նչ խոսքի մասով արտահայտված լինելու:

Որոշիչը որոշյալի նկատմամբ սովորաբար դրավում է նախադաս դիրք, սակայն ոճական, տրամաբանական և կառուցվածքային նկատառումներով երբեմն կարող է գրավել ետադաս դիրք: Երկրորդ տիպի որոշչի՝ նախադասությամբ լրացվելու հնարավորություններն ավելի մեծ են. այս դեպքում հնարավոր են երկրորդական նախադասությունների այն բոլոր տեսակները, որոնք կարող են հանդես գալ ածականով արտահայտված ստորոգելի ունեցող նախադասությունների դեպքում. համմտ. «Իմ ընկերը՝ բարեկիրթ, երբ ցանկանար...», «Իմ ընկերը՝ բարեկիրթ, որտեղ ցանկանար...», «Իմ ընկերը՝ սիրալիր, որպեսզի կարողանա համակրանք շահել» և այլն: Այս երկրորդական նախադասությունները իրականում պետք է դիտել որպես որոշչի փոխակերպված ստորոգյալի լրացումներ, և բավարարվել ստորոգյալի գործառական փոխակերպման մատնանշմամբ. համմտ. «Իմ ընկերը բարեկիրթ էր, երբ ցանկանար...» → «Իմ ընկերը՝ բարեկիրթ, երբ ցանկանար...» և այլն: Նման փոխակերպումը առանձին բարդություն չունի. բավական է պահպանել հանգույցը:

Որոշիչը կարող է արտահայտվել, բացի բուն ածականից, նաև դերածականով (ածականական դերբայով): Վերջինս ներկայացնում է դիմավոր բայի փոխակերպման արդյունք և տեսականորեն կարող է ունենալ երկրորդական նախադասությունների՝ բայի համար հնարավոր բոլոր տեսակները: Սակայն այս հնարավորությունը փաստորեն, իրականացնում է միայն որոշիչ դերածականի՝ որոշյալի նկատմամբ ետադաս դիրք գրավելու դեպքում: Այսպիսով, նախադաս որոշիչը, լինի այն արտահայտված բուն ածականով թե դերածականով, նախադասությամբ ծավալվելու սահմանափակ հնարավորություններ ունի: Այդ հնարավորություններն ավելի քիչ դուրս կգան, եթե նկատի առնենք, որ որ հարաբերականով և այն ձևական որոշիչով բնութագրվող կապակցությունները՝ մակորոշչային կիրառություն չունեն՝ կառուցվածքային սահմանափակության հետևանքով. «Այն գեղեցիկ կինը, որ...» կառուցվածքում այն-ը սովորաբար բնութագրում է ոչ թե գեղեցիկ որոշիչը, այլ գեղեցիկ կին բառակապակցությունը. այն-ի շեշտումը այս երկիմաստությունը բավարար չափով չի վերացնում, ուստի և գործնականում այն — որ մակորոշչային կառուցվածքները գործածելի չեն:

Նախադաս որոշիչները լրացնող բուն մակորոշիչ նախադա-

սությունների քնույթը հասկանալու համար հարկավոր է նկատի ունենալ, որ ածականների վրա դրվող մակբայները գերազանցապես չափութանականիշ արժեք ունեն: Պատահական չէ, որ հայերենի արմատական քնույթի բուն մակբայները տեղանիշ, ժամանականիշ և չափութանականիշ տիպերին են պատկանում, ընդ որում առաջին երկուսն ընդհանրական գործածություն ունեն:

Բուն մակորոշիչ երկրորդական նախադասությունները երկու տիպի են՝ համեմատական և չափութանական: Առաջինը քնութագրվում է fան, երկրորդը՝ nrfան, ինչfան հարաբերականներով, որոնց պարտադիր կարգով համապատասխանում են ավելի և այնfան հարաբերյալները. հմմտ. «Ավելի բարի մի անձնավորություն, քան կարելի էր ենթադրել», «Այնքան բարի մի անձնավորություն, որքան կարելի է ենթադրել»: Ինչպես տեսնում ենք, երկու տիպերն էլ փաստորեն ցույց են տալիս հատկության դրսևորման չափի համեմատություն՝ ըստ գերադասության և ըստ հավասարության:

Մակբայների քննության ժամանակ մենք տարբերեցինք մակբայական գործառություն նշող հինգ տեսակ հարցական «դերանուններ»՝ 1) տեղանիշ՝ nրտե՞ղ, ու՞r, 2) ժամանականիշ՝ ե՞րբ, 3) չափութանականիշ՝ nրfա՞ն, ինչfա՞ն, nրչա՞փ, ինչչա՞փ, 4) ձևանիշ կամ որականիշ՝ ինչպե՞ս (ժողովրդա-խոսակցական՝ ո՞նց) և 5) պատճառա-նպատականիշ՝ ինչո՞ւ: Բացի ինչո՞ւ-ից, մնացած բոլոր նշված հարցականները կարող են հանդես գալ որպես հարաբերական դերանուններ՝ գլխավոր նախադասության մեջ սովորաբար ունենալով այնտեղ, այն ժամանակ, այնfան, այնչափ, այնպես, այլև նույն տեղում, այն տեղում, նույն ժամանակ, նույնfան, նույնչափ, նույնպես և այլ ցուցական հարաբերյալները: Ինչու–ն որպես հարաբերական դերանուն հանդես չի գալիս նույնիսկ nr-ի հետ միացած ձևով. ինչու nr շաղկապը, նոր գրական հայերենի զարգացման վաղ շրջանում գործածության մեջ լինելով, այժմ դարձել է ակնհայտ հնաբանություն: Այսպիսով, մակորոշչային գործառություն ունեցող հարաբերականներով հանդես են գալիս տեղի, ժամանակի, չափ ու քանակի և ձևի (համեմատության) երկրորդական նախադասությունները.

1) Տեղի պարագա երկրորդական նախադասություն՝ «Եվ վերջին անգամ նայեցինք մենք ետ, Ուր ոչինչ չկար մեզ համար դյութիչ» (bշ, 2,14)[13], «Ապրում էր այնտեղ, որտեղ բախտը նրան մի կտոր հաց էր ուղարկում»:

13 *bթե ետ–ը չդիտենք որպես գոյականացված բառ՝ ուր-ով որոշիչ նախադասությամբ:*

2) Ժամանակի պարագա երկրորդական նախադասություն՝ «Ուշ իրիկուն էր, երբ մի գյուղ մտանք» (ԵՂ, 2,15), «Երբ մենք մի վայրկյան հանգստի համար, կանգնեցինք լեռան ճերմակ գագաթին,— Նայեցի հեռուն» (ԵՂ, 2, 29);

3) Չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասություն՝ «Գնաց այնքան, ինչքան մի օրում կարելի է գնալ», «Այնքան ուրախ էր, ինչքան կարող է ուրախ լինել հոգսերից ազատված մարդը»;

4) Չևի պարագա երկրորդական նախադասություն՝ «Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ... գյուղը ալացան մի խումբ կտրիճներ» (ՀԹ), «Ծիծաղում էր այնպես, ինչպես կարող են ծիծաղել տասնհինգամյա անհոգ պատանիները», «Ինչպես անտառը խշշար, ինչպես ծովը շառաչեր, ինչպես մրրիկը շաչեր—բանակից էտ բազմամարդ Ամբողջ երկիրը զնգաց ու դղրդաց ծերից-ծեր» (ԵՂ 2,109), «Եվ հանկարծ, ինչպես հեղեղը հորդի, ահեղ սուրաց վերից-վար արնախում զորքը ցարի» (ԵՂ, 2,109);

Գ. Շաղկապական երկրորդական (ստորադաս) նախադասություն

Ստորադասական շաղկապների քննության ժամանակ մենք տարբերեցինք նրանց իմաստային հետևյալ խմբերը.

I Նշանային ուղղվածության շաղկապներ՝ 1) մեկնական՝ nr, թե, *և 2) բացահայտության՝* այն է, այսինքն.

II Օբյեկտային ուղղվածության շաղկապներ՝ 1) Համեմատության՝ ա) բուն Համեմատության՝ ասես, ասես թե, ինչպես թե, կարծես, կարծես թե, ոնց nr, ոնց թե *(բուն արժեքով եղանակական և հարաբերական բառեր),* ման, ման թե *(բուն շաղկապներ), և բ) ժամանակային՝* երբ nr, թե չէ, հենց, հենց nr, մինչ, մինչև nr, նախման, ման, ման դեռ. *2) կախման՝ ա) պատճառի՝* մանավանդ nr, նամանավանդ nr, nr, որովհետև, չէ՞ nr, ման nr, *բ) հետևանքի՝* այնպես nr *և* հետևաբար, հետևապես, ուստի, ուստի և, ուրեմն, ուրեմն և. *գ) իրական-զիջական՝* թեպետ, թեպետ և, թեև, չնայած, չնայած nr, փոխանակ. *դ) ենթադրական-զիջական՝* թեկուզ, թեկուզ և. *ե) նպատակի՝* թե ինչ է, ինչ է թե, ինչ է nr, միայն թե, nr, nrպեսզի. *զ) պայմանի՝* եթե, եթե միայն, թե, թե nr. միայն թե, նայած, նայած թե, ման դեռ:

Ըստ շարադասության շաղկապական երկրորդական նախա-

դաստիյունները կարելի է բաժանել երկու խմբի՝ կայուն շարադասությամբ երկրորդական նախադասություններ և ազատ շարադասությամբ երկրորդական նախադասություններ։ Կայուն շարադասություն ունեն բացահայտության այն է, այսինքն, բուն համեմատության **քան, քան թե, ժամանակային թե չէ, պատճառի** *մանավանդ,* **nr, նամանավանդ nr, չէ՞ nr,** *հետևանքի* **այնպես nr. հետևաբար, հետևապես, ուստի, ուստի և, ուրեմն, ուրեմն, և,** *նպատակի* **թե ինչ է, ինչ է թե, ինչ է nr** *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները, ընդ որում* **թե չէ** *շաղկապով ժամանակային երկրորդական նախադասությունը նախորդում է գլխավորին, մյուսները՝ հաջորդում։ Պետք է նշել, որ* **թե չէ-ն** *երկրորդական նախադասության մեջ վերջադաս դիրք է գրավում («Տուն մտանք* **թե չէ,** *Հայկազը տեղից վեր կացավ»). մյուս բոլոր շաղկապները գրավում են նախադաս դիրք։ Կայուն նախադասություն ունեցող երկրորդական նախադասությունների մեծ մասը արտացոլում է իրական և տրամաբանական երևույթների բնական հաջորդականությունը. բացահայտության, բուն համեմատության, հետևանքի, նպատակի, երկրորդական նախադասությունները այս առումով գրավում են ետադաս, ժամանակային նախորդում ցույց տվող* **թե չէ-ով** *նախադասությունը՝ նախադաս դիրք. միայն* **մանավանդ nr և նամանավանդ nr** *շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասություններն են, որ հակառակ բնական հաջորդականության, գրավում են ետադաս դիրք. սա բացատրվում է* **մանավանդ և նամանավանդ** *բառերի բնույթով. այդ բառերը, որպես եզանակական բառեր, շեշտում և մասնավորում են նախորդ բառի արտահայտածը («Բոլորը նրան սիրում են,* **մանավանդ ես**»)։ *Սրա հետ կապված՝* **մանավանդ nr, նամանավանդ nr, չէ՞ nr** *շաղկապները փաստորեն արտահայտում են լրացուցիչ պատճառ՝ շեշտված և մասնավորված ձևով՝ «Մենք ստիպված էինք վերադառնալ այդ հարցին,* **մանավանդ nr** *արդեն լուծելու հեռանկարներ կային»։* **Թե ինչ է, ինչ է թե** *շաղկապները հատուկ են ժողովրդա-խոսակցական լեզվին և սովորաբար շաղկապում են ետադաս երկրորդական նախադասությունները, թեև տեսականորեն վերջիններս կարող են նաև նախադաս դիրք գրավել։ Այս շաղկապները կարող են արտահայտել նաև պատճառ. նպատակի արտահայտության դեպքում դիմավոր բայը դրվում է ըղձականով, պատճառի դեպքում՝ սահմանականով (հմմտ.* **«Ճամփա ընկավ, թե ինչ է երեխային տեսնի»** *և* **«Ճամփա ընկավ, թե ինչ է մարդ է եկել»**։ *Թե ինչ է և ինչ է թե շաղկապների ետադաս*

դիրքը բացատրվում է ինչ է բառախմբի սկզբնական բնույթով. այն փաստորեն նախադասության արժեք ունի: Նույն պատճառով չէ՞ որ շաղկապը կապում է ետադաս նախադասություններ:

Ազատ շարադասությամբ երկրորդական նախադասությունների շաղկապները ինքնին բավարար են շաղկապվող երկրորդական նախադասությունների իսկական բնույթը բացահայտելու համար: Սակայն այս դեպքում էլ, այնուամենայնիվ, ավելի գործածական է շարադասության այս կամ այն տեսակը. այսպես, մեկնական որ, թե, բուն համեմատություն ասես, ասես թե, ինչպես թե, կարծես, կարծես թե, ոնց, ոնց որ, ոնց որ թե, *ժամանակի* երբ որ, *պատճառի* որովհետև, *նպատակի* որպեսզի, *պայմանի* եթե միայն, միայն թե, թե որ *շաղկապներով նախադասությունների համար սովորական է ետադաս, պատճառի* ֆանի որ, *իրական-զիջական* թեպետ, թեպետ և, թեև, չնայած, չնայած որ, փոխանակ, *ենթադրական-զիջական* թեկուզ. թեկուզ և, *պայմանի* եթե. նայած, նայած թե, ֆանի դեռ *շաղկապներով նախադասությունների համար՝ նախադաս դիրքը: Ժամանակի երկրորդական նախադասությունների դիրքը սովորաբար կախված է արտահայտվող ժամանակի դրսևորումից. նախորդող գործողություն ցույց տվողների համար սովորական է նախադաս գործածությունը. գլխավոր նախադասության մեջ հարաբերակից այն ժամանակ, այն ժամանակից, այն ժամանակից հետո, այն բանից հետո *բառախմբերի առկայության դեպքում սովորական է ետադաս դիրքը:

Շարադասական առումով հատուկ բնույթ ունեն որ-ով շաղկապվող պարագայական զանազան նախադասությունները: Ինչպես նշվել է, որ շաղկապը կարող է արտահայտել տարբեր իմաստներ. այս դեպքում իմաստները տարբերակվում են գլխավոր և երկրորդական նախադասությունների բայեղանակով, երկրորդական նախադասության շարադասությամբ, երբեմն էլ կոնտեքստով: Այսպես, ա) որ-ով նպատակային, պայմանական և ենթադրական-զիջական նախադասությունների բայեղանակն ըղձական է, պատճառականինը՝ տեսմանական, ընդ որում նպատակայինի գլխավոր նախադասության բայեղանակը տեսմանական է («Գրիգորը եկավ, որ Հակոբին տեսնի»), պայմանականինը՝ ենթադրական («Որ Գրիգորը գա, Հակոբին կտեսնի»), ենթադրական-զիջականինը՝ ենթադրական-ժխտական («Որ Գրիգորը գա էլ, Հակոբին չի տեսնի»), պատճառականինը՝ տեսմանական («Ես ուրախ եմ, որ նա անվնաս է մնացել»). իրական-զիջական նախադասու-

թյունները nr շաղկապով չեն շաղկապվում. բ) ինչպես երևում է վերևում բերված օրինակներից, nr-ով նպատակային և պատճառական նախադասությունների համար սովորական է ենթադաս, պայմանական և ենթադրական-զիջական նախադասությունների համար՝ նախադաս դիրքը։

Շարադասությունը և բայեղանակը կարող են արտահայտել ստորադասական տարբեր հարաբերություններ ոչ միայն nr-ի հետ միասին, այլև ինքնուրույնաբար։ Ստորադասական հարաբերությունների այդպիսի արտահայտությունը ավելի նախնական բնույթ ունի և քերականության մեջ հայտնի է շարահարական կապակցություն անունով։ Շարահարական կապակցությունը կարող է հանդես գալ ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական հարաբերության դեպքում։ Համադասական հարաբերության դեպքում նախադասությունների կապակցությունն արտահայտվում է շարադասությամբ և բայերի հատատա-ժխտական ձևերի տարբեր դուգակցություններով, ստորադասական հարաբերության դեպքում՝ շարադասությամբ և բայեղանակային տարբեր դրսևորումներով։ Իհարկե, շարահարական կապակցության դեպքում չկա իմաստային-տրամաբանական տարբերակման այն հստակությունը, ինչ բուն շաղկապների դեպքում։ Ըստ սերմանի հաջորդականության շարահարական կապակցությունը առաջին աստիճանն է, շաղկապականը՝ երկրորդը. ստորադասական բնույթի շաղկապական կապակցության համար էլ իր հերթին կարելի է սահմանել երկու աստիճան՝ nr-ով կապակցության և տարբերակված շաղկապներով կապակցության[14]։

Սերմանի այս հաջորդական աստիճանները, լեզվի մեջ հանդես գալով իրար կողքի, ստանում են գործառական տարբերակում։ Ընդհանուր առմամբ այս առումով կարելի է սահմանել հետևյալ տարաժամանակյա հանրույթը. շարահյուսական արտահայտության եղանակների զարգացման յուրաքանչյուր նախորդ էտապ պահպանվում է յուրաքանչյուր հաջորդ էտապին անցնելիս՝ ձեռք բերելով գործառական տարբերակում։ Սա նշանակում է, որ ասույթների գործառական ճշգրիտ դասակարգման դեպքում առանձնացվող տիպերը

---

14 Շարահարական կապակցության մասին ավելի հանգամանորեն տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Երևան, 1962, էջ 362—385, Ն. Պառնասյան, Անշաղկապ բարդ նախադասությունը ժամանակակից հայերենում, ԼՈՀ, 3, 1964, Ա. Հ. Պապոյան, Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում, Երևան, 1966։

կարտացոլեն զարգացման հաջորդական փուլեր։ Տվյալ դեպքում շարահարական և nr–ով կապակցությունները ավելի շատ հատուկ են խոսակցական, տարբերակված շաղկապական կապակցություններ՝ գիտական ոճին։

Որոշ պայմանականությամբ զարգացման տարբեր աստիճաններ և, հետևաբար, գործառական տարբեր ոճերին հատուկ երևույթներ պետք է համարել ուրիշի խոսքը մեջ բերելու ուղղակի և անուղղակի եղանակները։ Որևէ անձ խոսելու ժամանակ կարող է մեջ բերել մի ուրիշի խոսքը կամ ուղղակի ձևով՝ նույնությամբ (հմմտ. «Հակոբն ասաց՝ գնում եմ»), կամ անուղղակի ձևով՝ nr, թե շաղկապների օգնությամբ և բայի դեմքի փոփոխությամբ. բայը դրվում է երրորդ դեմքով (հմմտ. «Հակոբն ասաց, որ գնում է», «Հակոբն ասաց, թե գնում է»)։ Ուղղակի մեջբերումը մեծ մասամբ հատուկ է խոսակցական և գեղարվեստական ոճերին, անուղղակին՝ գիտականին. գիտական ոճում ուղղակի մեջբերումը կատարվում է սովորաբար գրավոր խոսքից՝ միտքը ճշտությամբ փոխանցելու նպատակով։ Գեղարվեստական խոսքի մեջ երբեմն ուղղակի և անուղղակի խոսքերի հատկությունները կարող են տարբեր ձևերով զուգակցվել և առաջացնել ոճական-հուզաարտահայտչական տարբեր երանգներ. nr-ի հետ կարող է պահպանվել 1-ին կամ 2-րդ դեմքը, խոսողը կարող է առանց nr-ի բավական ազատ շարադրել ուրիշի ասածը՝ գրեթե որպես սեփական խոսք, կարող է բաց թողնել ասացական բայերը և այլն։

Ստորադասական շաղկապներին դլխավոր նախադասության մեջ կարող են համապատասխանել՝ ա) համադասական շաղկապները՝ բայց, սակայն (թեկուզ, թեկուզ և, թեպետ, թեպետ և, թեև, չնայած, չնայած nr *ստորադասական շաղկապների դեպքում՝* թեև — բայց, թեև — սակայն *և այլն*), ապա (*բանի* nr — ապա), *բ) ստորադասական շաղկապներ, որոնք արտահայտում են զուգակից ստորադասական շաղկապներին հակադիր իմաստներ՝ երկու նախադասությունների կապի պակաս սերտությամբ՝* ետևաբար, ետևապես, ուստի, ուրեմն (եթե, *բանի* nr *շաղկապների դեպքում՝* եթե — ետևաբար, եթե — ուրեմն, *բանի* nr — ետևաբար, *բանի* nr — ետևապես, *բանի* nr — ուստի, *բանի* nr — ուրեմն), այնուամենայնիվ, այսուհանդերձ, բայց և այնպես (թեկուզ, թեկուզ և, թեպետ, թեպետ և, չնայած, չնայած nr *շաղկապների դեպքում՝* թեկուզ — այնուամենայնիվ, թեկուզ — այսուհանդերձ *և այլն*), *գ) ստորադասական շաղկապի արժեք ունեցող*

դիմավոր բայեր՝ նշանակում է (=ուրեմն) (եթե, fանի nr *շաղկապների դեպքում՝* եթե — նշանակում է, fանի nr — նշանակում է), *դ) մակբայական արժեքի բառեր և բառախմբեր՝* ավելի, ավելի շատ, ավելի fիչ, ավելի պակաս (fան, fան թե *շաղկապների դեպքում՝* ավելի — fան, ավելի շատ — fան *և այլն*), *ե) ցուցական բառեր և բառախմբեր՝* այն ժամանակ, այնժամ (երբ nr, հենց nr *շաղկապների դեպքում՝* երբ nr — այն ժամանակ, երբ nr — այնժամ *և այլն*), այդ դեպfում (եթե, թե, թե nr *շաղկապների դեպքում՝* եթե — այդ դեպfում, թե — այդ դեպfում, թե nr — այդ դեպfում), այդ պատճառով, այդ պատճառով էլ (fանի nr *շաղկապի դեպքում՝* fանի nr — այդ պատճառով, fանի nr — այդ պատճառով էլ), այդ նպատակով, այդ նպատակով էլ (nr, որպեսզի *շաղկապների դեպքում* nr — այդ նպատակով, որպեսզի — այդ նպատակով *և այլն*). *որոշ վերապահությամբ ստորադասական շաղկապների մեջ դրված* այնուամենայնիվ, այսուհանդերձ, բայց և այնպես *բառերն ու բառախմբերը ծագումով ու գործառական արժեքով փաստորեն պետք է դրվեն այս տիպի ցուցական բառերի և բառախմբերի մեջ։ Ընդհանրապես պետք է ասել, որ* այն-ի և պատճառով, նպատակով *բառերի կապակցությունները* nr-ի *ուղեկցությամբ կարող են հանդես գալ ստորադասական շաղկապների գործառույթյամբ՝* այն պատճառով nr, այն նպատակով nr. *այս նույն արժեքն ունի* այն ժամանակ երբ *կապակցությունը։*

Երբ *հարաբերականը կարող է օգտագործվել* եթե-ի *արժեքով՝ զուգորդվելով ըղձական բայաձևերի հետ՝ «երբ գա, կգնամ»։*

Թեկուզ–*ը մենք դրեցինք ենթադրական-պիջական շաղկապների մեջ, բայց այն կարող է գործածվել* թեև-ի *արժեքով՝ «Թեկուզ մեր կյանքը հորձանք է դեռ, Թեկուզ պայքարը կրկի՛ն համառ— Բայց դադարե՞լ են հո հողմահար Որոտումները Թնդանոթի» (ԵՉ, 2,228)։*

3. ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄ (ԴԱՐՁՎԱԾ)

Քանի որ դերբայի քերականական կարգերն ավելի շատ են, քան բուն գոյականին, ածականին և մակբային հատուկ կարգերը, ուստի նրա կապակցական հնարավորություններն ավելի մեծ են։ Ի տարբերություն վերջինների՝ դերբայները կարող են կազմել բային հատուկ առարկայական (ենթակա-խնդրային) և պարագայական դրեթե բոլոր լրացումներով բառակապակցություններ։

Այս դեպքում մեն գործ ունենք նախադասության գործառական փոխակերպման հետ, որի դեպքում փոխակերպված նախադասությունը հանդես է գալիս բառակապակցության մի այլ նախադասության որևէ անդամի դերով՝ կազմելով, այսպես կոչված, դերբայական դարձված՝ «Գրիգորը տխրեց» → «Գրիգորի տխրելը (բոլորի վրա ազդեց)»:

Նախադասության՝ դերբայական դարձվածի փոխակերպվելու դեպքում տեղի է ունենում հետևյալը.

1) Նախադասության դիմավոր բայը վերածվում է՝ նոր գործածությամբ պայմանավորված անդեմ (դերբայական) ձևի՝ գրեց → գրելը, գրած, (գրող), գրելիս:

2) Ենթական ձևավորվում է տրական հոլովով՝ որպես յուրատեսակ հատկացուցիչ, որին հատկացվում է տվյալ գործողությունը՝ Հակոբը գրեց → Հակոբի գրելը, Հակոբի գրածը, Հակոբի գրելիս:

3) Նախադասության մնացած բոլոր անդամները ձևաբանական որևէ փոփոխություն չեն կրում. փոխվում է միայն նրանց շարադասությունը՝ դիմավոր բային հետադասվող անդամները սովորաբար տեղափոխվում են առաջ, թեև որոշ դեպքերում, հատկապես դերբայական դարձվածի՝ վերջնային դիրքի դեպքում, կարող են և հաջորդել. համմտ. «Գրիգորը Հակոբին նամակ գրեց վերջին դեպքերի մասին» → «Գրիգորի՝ Հակոբին վերջին դեպքերի մասին նամակ գրելու ժամանակ (գրելիս)»:

4) Դերբայական դարձվածը որպես որոշիչ (ածական) կարող է հանդես գալ միայն այն դեպքում, երբ որոշյալը նախադասության ենթական կամ ուղիղ խնդիրն է. այլ կերպ ասած՝ միայն նախադասության ենթական կամ ուղիղ խնդիրը կարող են որոշվել այդ նախադասության մեջ արտահայտված գործողությամբ, մնացած անդամները չեն կարող փոխակերպմամբ դառնալ դերբայական ածականի լրացյալներ: Երբ նախադասությունն ունի ուղիղ խնդիր, այն փոխակերպվում է դերածականական դարձվածի՝ որպես ուղիղ խնդրի լրացում. եթե չունի, ապա դերածականական դարձվածը դառնում է ենթակայի լրացում. «Ես գիրքը տվեցի Հակոբին» — «Իմ՝ Հակոբին տված գիրքը» (կամ «Հակոբին իմ տված գիրքը). «Երեխան տանը քնած է» → «Տանը քնած երեխան». «Երեխան փողոցում երգում է» → «Փողոցում երգող երեխան»: Կրավորական կառուցվածքի նախադասության դեպքում նույնպես ենթական է դառնում լրացյալ՝ «Գիրքը իմ կողմից տրվեց Հակոբին» → «Իմ կողմից Հակոբին

տրված գիրքը»։ Բնականաբար ներգործական կառուցվածքի նախադասությունը կարող է փոխակերպվել կրավորական կառուցվածքի դերբայական դարձվածի, բայց այս դեպքում պետք է վերականգնել որպես միջանցիկ օղակ կրավորական կառուցվածքի նախադասության. համմտ. «Ես գիրքը տվեցին Հակոբին» (→ «Գիրքը իմ կողմից տրվեց Հակոբին») → «Իմ կողմից Հակոբին տրված գիրքը»։

5) Նախադասության փոխակերպումը վիս–ով մակդերբայական դարձվածի կարող է ունենալ երկու դրսևորում. ա) մակդերբայական դարձվածի ենթական համընկնում է ենթակայի, ուղիղ խնդրի կամ, հազվադեպ, անուղղակի խնդրի հետ. այս դեպքում նրա ենթական բաց է թողնվում, և մակդերբայական դարձվածը ցույց է տալիս նախադասության գործողության մասնակիցների լրացուցիչ (ուղեկցող) գործողությունը. համմտ. «Գրիգորը քայլելիս կիսաձայն երգում էր», «Ես տեսա Գրիգորին բակը մաքրելիս», «Ես հանդիպեցի Գրիգորին բակը մաքրելիս» և այլն. բ) մակդերբայական դարձվածի ենթական չի համընկնում ենթակայի ու խնդիրների հետ և դարձվածը պարագայական (ժամանակի պարագայի) կիրառություն ունի. այս դեպքում դերբայական դարձվածի ենթական ընդհանուր կանոնով դրվում է տրական («սեռական») հոլովով. համմտ. («Հակոբի տուն վերադառնալիս Գրիգորը քաղաքից բացակայում էր»)։

Տեսականորեն գոյականական բառակապակցության յուրաքանչյուր լրացական անդամ կարող է արտահայտվել նախադասությամբ, և, ընդհակառակն, յուրաքանչյուր նախադասություն կարող է արտահայտվել դերբայական դարձվածով կամ այլ կարգի լրացումով։ Սակայն բնական լեզուներում այս բոլոր հնարավորություններն իրականանում են միայն մասամբ։

4. ԳՈՅԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄ

Գոյականական երկու եզրերի հարաբերություն արտահայտող որոշ կարգի նախադասությունների փոխակերպման ժամանակ դերբայը կարող է զեղչվել՝ ինքնին հասկանալի լինելով կախյալ գոյականի հոլովական ձևավորումից կամ փոխարինվելով կապակցական որոշակի միջոցներով։ Այս դեպքում փոխակերպումը հանգեցնում է ոչ թե դերբայական դարձվածի, այլ յուրատեսակ գոյականական բառակապակցության, որտեղ գլխավոր գոյական անդամը լրացվում է մի այլ գոյականով. վերջինս փաստորեն հանդես

է գալիս որոշչի փոխարեն՝ որպես կախյալ անդամ։ Այսպիսով, հնարավոր է գոյականական բառակապակցությունների երկու տեսակ՝ մեներգ և երկեզր։ Մեներգ գոյականական բառակապակցությունները պարունակում են գոյականական մեկ եզր որպես գլխավոր անդամ՝ լինի այն եզակի թե հոգնակի՝ Այս տուն, Այս երկու գեղեցիկ տներ։ Երկեզր գոյականական բառակապակցությունները պարունակում են գոյականական երկու եզրեր (լինեն դրանք եզակի թե հոգնակի)՝ կապված լրացական (սուորդասական) հարաբերությամբ՝ Գրիգորի գիրքը, Տիգրան թագավորը, սխտորով ճաշը։ Ի տարբերություն մեներգ գոյականական բառակապակցությունների՝ երկեզր բառակապակցությունների գլխավոր բառ կարող է լինել նաև դերանունը։

Մեներգ և երկեզր բառակապակցությունները գտնվում են ազատ հարաբերակցության մեջ, այսինքն՝ դրանցից որևէ մեկի անդամների քանակը կախված չէ մյուսից. երկեզր գոյականական բառակապակցությունների յուրաքանչյուր գոյական անդամը կարող է հանդես գալ որպես մեներգ գոյականական բառակապակցություն, և մեներգ բառակապակցության լրացական անդամները կարող են ունենալ գոյականական լրացումներ (խնդիրներ)։

Մեներգ և երկեզր բառակապակցություններ առանձնացնելիս մենք նկատի ենք ունենում լեզվական կողմը՝ անկախ դենոտատների իրական քանակից և փոխհարաբերությունից, այլապես մեներգ գոյականական բառակապակցությունները կարող են լինել բազմեզր-դենոտատային և բազմեզր գոյականական կապակցությունները՝ մեներգ-դենոտատային։ Այսպես, գոյականներից ածանցված ածականների, այլև խնդրառու ածականների գոյականական մեներգ կապակցությունը փաստորեն նշանակում է երկեզր դենոտատ՝ փայտե սեղան («փայտից պատրաստված սեղան»՝ փայտ և սեղան դենոտատներով), թագավորական ճաշ («թագավորին հատուկ ճաշ»՝ թագավոր և ճաշ դենոտատներով). լեզվականորեն փայտե-ն, թագավորական-ը դիտվում են իբրև սեղան ու ճաշ գոյականների հատկանիշներ և դրվում ածականների խմբի մեջ[15]։ Ընդհակառակն, Տիգրան թագավորը երկեզր գոյականական բառակապակցությունը նշանակում է մեներգ դենոտատ, այսինքն՝ միևնույն անձնավորությունը։

---

15 Մոտավորապես նույն վիճակն է և խնդրառու ածականների դեպքում. համմտ. գինով լի տակառ։

Մեննեզր գոյականական բառակապակցությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ գոյականի քերականական կարգերի ծավալում։ Այս տիպի գոյականական բառակապակցության անդամների քանակը սահմանափակված է. մինչդեռ երկեզր բառակապակցությունը, հանդես գալով նոր նախադասության կազմում որպես հարաբերության մեկ եզր և ենթարկվելով նոր փոխակերպության, կարող է դառնալ եռեզր, սա էլ, համապատասխան գործողությամբ, քառեզր և այլն։ Երկուսից ավելի գոյականական եզրեր ունեցող այս տիպի գոյականական բառակապակցությունները կոչենք բազմեզր։

Ըստ սերման բնույթի և ըստ արտահայտության ու բովանդակության պլանների առանձնահատկությունների (բուս արտահայտության միջոցների ու եղանակների և սրանց արտահայտած իմաստների տարբերության) կարելի է տարբերել երկեզր գոյականական բառակապակցությունների չորս հիմնական տիպ՝ հատկացական, բացահայտական, սահմանափակական և խնդրային։ Հատկացական հարաբերությամբ կապված գոյականական եզրերը կոչվում են հատկացուցիչ (կախյալ անդամը) և հատկացյալ (գլխավոր անդամը). բացահայտական հարաբերությամբ կապված եզրերը՝ բացահայտիչ և բացահայտյալ. սահմանափակական հարաբերությամբ կապված եզրերը՝ սահմանափակիչ և սահմանափակյալ. խնդրառական հարաբերությամբ կապված եզրերը՝ խնդիր և խնդրառու։

Բազմեզր գոյականական բառակապակցությունները կարող են լինել միատիպ, երբ եզրերը կապված են միևնույն հարաբերությամբ («Հակոբի բնակարանի տեղյակների դռները»), և տարատիպ, երբ եզրերը կապված են տարբեր հարաբերություններով («Հակոբի ուսուցիչ ընկերը», «Հակոբի ոսկե կազմով գիրքը»)։

Բազմեզր գոյականական բառակապակցությունների եզրերի քանակը տեսականորեն կարող է անսահմանափակ լինել, բայց իրականում այն սահմանափակված է ոճի բազմազանեցման պահանջով և հատկապես մարդու հիշողության տարողությամբ, որ բացառում է միատիպ եզրերի 7 ± 2 քանակից ավելին[16]։ Բազմեզր գոյականական բառակապակցության գլխավոր անդամի հոլովական ձևավորումը պայմանավորված է տվյալ բառակապակցության ար-

16 *Հմմտ. Э. Миракян,* Испытание гипотезы В. Ингве на материале армянского языка, Ереван, 1968.

տաքին հարաբերությամբ, իսկ ներքին հարաբերությունների բնույթը որոշվում է կախյալ անդամների բնույթով։ Այս պատճառով էլ երկեզր գոյականական բառակապակցությունների հետագա քննությունը կլինի ոչ այլ ինչ, եթե ոչ կախյալ անդամների տիպերի՝ հատկացուցչի, բացահայտչի, սահմանափակչի և խնդրի քննությունն։

Գոյական անվան լրացումների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել 3-րդ գծագրով։

Գծագիր 3



Հատկացուցիչ է կոչվում գոյականը այն գոյական լրացումը, որ ձևավորվում է տրական հոլովով (սրա սեռական տարբերակով), որոշիչ հոդ չի ստանում և ցույց է տալիս հատկացյալին պատկանող առարկան։ Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը առաջին հերթին ունեմ բայով միացած գոյականական եզրերի փոխակերպման արդյունք է. այս փոխակերպմամբ էնթական վերածվում է հատկացուցչի, ուղիղ խնդիրը՝ հատկացյալի. -ի վերջավորությունը և նրան համարժեք այլ վերջավորություններ ու հերթագայություններ փաստորեն իրենց վրա են վերցնում ունենալու (հատկացական) հարաբերության արտահայտությունը. փոխակերպումը կատարվում է $(N_1^{\text{ուղղ.}} + V^{\text{ունեմ}} + N_2^{\text{ուղղ. (անհոդ)}}) \rightarrow (N_1^{\text{սեռ. (անհոդ)}} + N_2)$ բանաձևով՝ «Հակոբը գիրք ունի» → «Հակոբի (ունեցած) գիրքը (գրքից, գրքով...)»։

Հատկացուցիչը, ածական որոշչի նման, լրացվող գոյականի նկատմամբ հայերենում գրավում է նախադաս դիրք. եռադաս դիրքում այն հանդես է գալիս կամ բանաստեղծական խոսքում, կամ այն դեպքում, երբ այն պետք է լրացվի երկրորդական նախադասությամբ՝ 1. «...Որ ոսկի արևն Իրանի» (—«Որ Իրանի ոսկի արևը», ԾՉ, 165), 2. «Ես տեսա բնակարանը (այն) մարդու, որ բանաստեղծական իր հանճարով հասավ չգերազանցված վարպետության»:

Քանի հատկացուցիչ-հատկացյալ բառակապակցությունը հիմնականում սերվում է ունեմ բայով կապված գոյականական եզրերից, բայց կան բազմաթիվ դեպքեր, երբ այդ բառակապակցության եզրերը այլ կառույցների փոխակերպման արդյունք են: Դրանցից «տրական հոլովով գոյական-հատկացուցիչ+բայանուն» բառակապակցության մասին մենք առիթ կունենանք խոսելու: Այստեղ կանգ առնենք այն դեպքերի վրա, երբ հատկացուցիչը և հատկացյալը նյութական գոյականներ են, բայց չեն ծագում ունեմ–ով կապարված կառույցներից: Հնարավոր են մի քանի այսպիսի դեպքեր. 1) սերող նախադասության գոյականական եզրերի միջև առկա է «ննջակա+ուղիղ խնդիր» հարաբերություն՝ գերազանցապես ծագման և հետևանքի հարաբերությամբ՝ «Թումանյանի երկերը» (← «Թումանյանը երկեր է գրել»), «Ճարտարապետի նախագծերը» (← «Ճարտարապետը նախագծեր է կազմել») և այլն. 2) սերող նախադասության գոյականական եզրերի միջև առկա է «ննջակա+անուղղակի խնդիր» հարաբերություն՝ «Երկաթի դուռ» (← «Դուռը պատրաստված է երկաթից») և այլն. այս դեպքում ավելի սովորական է սերող նախադասության անուղղակի խնդրի հոլովի պահպանումը՝ «Երկաթից դուռ» և այլն. 3) սերող նախադասության գոյականական եզրերի միջև առկա է ննջակայի և պարագայի հարաբերություն՝ «Փողոցի բազմությունը» (← «Փողոցում բազմություն կա»), «Հինգ ռուբլու չեք» (←«Չեքն արժի հինգ ռուբլի») և այլն:

Եթե հատկացուցիչը և հատկացյալը արտահայտված են ոչնյութական գոյականներով, ապա դրանց միջև կարող են հանդես գալ ժամանակի և գործողության («Ձմեռվա հոգս» ← «Ձմեռը հոգս կա»), պատճառի և գործողության («Սիրո վիշտ» ← «Սիրուց վիշտ է առաջանում») հարաբերություններ և այլն:

Բացահայտիչը հայերենում լինում է երեք տեսակ՝ սովորական, տրոհված և մասնական: Սովորական բացահայտիչը նախորդում է

բացահայտյալին և չի հոլովվում՝ «Տիգրան թագավորը (թագավորից, թագավորով...)»։ Տրոհված բացահայտիչը հաջորդում է բացահայտյալին և ստանում նրան համապատասխան հոլով և դիմորոշ հոդ (եթե բացահայտյալը դերանուն չ), այսինքն՝ համաձայնում է բացահայտյալի հետ հոլովով և դեմքով՝ «Հայոց թագավորը՝ Տիգրանը» («Հայոց թագավորին՝ Տիգրանին», «Հայոց թագավորից՝ Տիգրանից» և այլն), «Հակոբը՝ մեր դպրոցի ուսուցիչը», «Ես՝ պատանի բնասերս» և այլն։ Մասնական բացահայտիչը կարող է նախորդել կամ հաջորդել բացահայտյալին և ուղեկցվում է որպես, իբրև, ինչպես կապերով՝ «Ես, որպես դպրոցի ուսուցիչ,...» «Որպես դպրոցի ոսուցիչ, Գրիգորյանը...»[17]։ Տրոհված բացահայտիչը բացահայտյալից և մյուս անդամներից անջատվում է բութով և ստորակետով, մասնականը՝ ստորակետներով։ Տրոհված բացահայտիչը սովորաբար արտահայտված է լինում մեկից ավելի բառերով։

Բացահայտական բառակապակցության եզրերը՝ և՛ բացահայտիչը, և՛ բացահայտյալը, նշանակում են միևնույն դենոտատը, այլ կերպ ասած՝ բացահայտիչ-բացահայտյալ կապակցության մեջ մենք գործ ունենք միևնույն առարկայի լեզվական տարբեր նշանակումների հետ, որոնցից բացահայտիչը այլ առումով կամ բառերով բացահայտում է, որոշում բացահայտյալի իմաստը։ Թե երկու նշանակումներից ո՛րն է դառնում լրացում, կախված է այն բանից, թե հաղորդման մեջ խոսողը ո՛րն է առաջին պլանը մղում որպես ելակետ (բացահայտյալ) և ո՛րը դիտում իբրև այդ ելակետի վերաբերյալ արտահայտվող նորություն. այսպիսով, այս դեպքում առկա է նախադասության առկայացական մասնատմանը զուգահեռ մի երևույթ։ Եթե հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը հիմնականում ունեմ բայով արտահայտված նախադասության փոխակերպման արդյունք է, ապա բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը եմ բայով արտահայտված (անվանական) նախադասության փոխակերպման արդյունք է, ընդ որում տրոհված բացահայտչով բառակապակցությունը յուրատեսակ միջին օղակն է սերող նախադասության և սովորական (նախադաս-անհամաձայն) բացահայտյալով բառակապակցության միջև՝ «Հակոբը մեր

17 Թվային համաձայնությունը պարտադիր չէ. այն կարող է լինել իմաստային և ոչ թե քերականական, երբ եզրերից մեկը հոգնակի է, իսկ մյուսը ցույց է տալիս բազմության անդամներն առանձին-առանձին՝ «Մեր ընկերները՝ Հակոբը և Գուրգենը» կամ «Հակոբը և Գուրգենը՝ մեր ընկերները»։

պարոցի ուսուցիչն է» → «Հակոբը՝ դպրոցի ուսուցիչը» → «Մեր դպրոցի ուսուցիչ Հակոբը». ($N_1^{\text{ուղղ.}} + V^{\text{եմ}} + N_2^{\text{ուղղ.}}$) → ($N_1^{\text{ուղղ./տր./...}} + N_2^{\text{ուղղ./տր./...}}$) (→ $N_2^{\text{ուղղ.}} + N_1^{\text{ուղղ./տր./...}}$). Մասնական բացահայտչի համար կարելի է առել հետևյալ բանաձևը՝ ($N_1^{\text{ուղղ.}} + V^{\text{եմ}} + N_2^{\text{ուղղ.}}$) → ($N_1^{\text{ուղղ./տր./բցա....}} + N_2^{\text{որպես+ուղղ./տր./բցա....}}$ կամ $^{\text{ուղղ./տր/տր..}}$): Լիմի բացահայտյալը որևէ թեք հոլովով է, ապա բացահայտիչը դրվում է կամ տվյալ հոլովով (հոլովական լիակատար համաձայնություն), կամ տրականով (հոլովական մասնակի համաձայնություն)՝ «Հակոբը, որպես ուսուցիչ», բայց «Հակոբին, որպես ուսուցչի», «Հակոբից, որպես ուսուցչից (կամ ուսուցչի)»: Մասնական բացահայտիչը միշտ անհոդ է:

Սահմանափակիչ է կոչվում գոյականի այն գոյական լրացումը, որ դրվում է որևէ թեք հոլովով (այդ թվում՝ տրականով, բայց հոդառության հնարավորությամբ) կամ կապով և սահմանափակյալի իմաստը լրացնում է այդ հոլովների և կապերի արտահայտած տարբեր առումներով: Սահմանափակչի դեպքում պետք է ենթադրել որևէ զեղչված դերբայ՝ «Սատինից վերնաշապիկ» (← «Սատինից կարված վերնաշապիկ» ← «Վերնաշապիկը կարված է սատինից»), «Մխտորով ճաշ» (← «Մխտորով համեմված ճաշ» ← «Ճաշը համեմված է մխտորով), «Պատերազմի վերաբերյալ (մասին) գիրք» (← «Պատերազմի վերաբերյալ գրված գիրք» ← «Գիրքը գրված է պատերազմի վերաբերյալ») և այլն: Գործիական հոլովով սահմանափակչի ով-ը հաճախ արտահայտում է ավոր («ունեցող») ածանցի իմաստ և կարող է դիտվել որպես ունեմ–ով կապված գոյականների փոխակերպման արդյունք՝ «Մև մորուքով մարդ» (← «Մև մորուք ունեցող մարդ» ← «Մարդը մև մորուք ունի»):

Սահմանափակիչը հարաբերակից է գոյականի գոյական խընդրին՝ այն տարբերությամբ, որ սահմանափակչի դեպքում դերբայը զեղչված է, և սահմանափակիչը հանդես է գալիս որպես թաքնված խնդիր, իսկ գոյական խնդրի լրացյալը բայանուն է, և գոյական խնդիրը՝ նրա բուն խնդիրը: Սահմանափակիչը կամ, որ նույնն է, թաքնված խնդիրը սովորաբար նախորդում է լրացյալին, բուն խնդիրը՝ հաջորդում. համմտ. «Մխտորով ճաշ», «Մահուդից վերարկու», բայց «Մոտեցում հարցին», «Բազմացումը ոտտատորով» և այլն:

Գոյականական լրացումների շարադասական փոխհարաբերությունը բխում է լրացումների և լրացյալի սերտության աստիճա-

նից. ամենից ավելի սերտորեն գոյականի հետ կապված են սահմանափակիչը և խնդիրը, որոնք դիրքային տարբերակներ են (իրար հետ չեն հանդիպում), ավելի քիչ սերտորեն՝ բացահայտիչը և ամենից ավելի քիչ սերտորեն՝ հատկացուցիչը։ Այս դեպքում էլ պետք է տարբերել լրացյալի նկատմամբ նախադաս ևետադաս դիրք գրավող բացահայտիչներով և խնդիրներով բառակապակցությունները, այլև հաշվի առնել, որ խնդիրների և բացահայտիչների որոշ տիպեր իրար հետ չեն հանդիպում։

Բացահայտչի ետադաս գործածության դեպքում հատկացուցիչը կամ դրվում է միայն նրա վրա (սերը դեպի հայրենիքը՝ մեր հավատամքը), կամ կրկնվում է (մեր սերը դեպի հայրենիքը՝ մեր հավատամքը)։

Գոյականի գոյականական լրացումները ևս կարող են արտահայտվել երկրորդական նախադասությամբ, ընդ որում գոյականական մյուս երկրորդական նախադասությունների համեմատությամբ նրանք հանդես են բերում արտահայտության եղանակի զգալի տարբերություններ։ Այս առումով բացահայտիչ երկրորդական նախադասությունը յուրահատուկ դիրք է գրավում։ Եթե հատկացուցիչ և խնդիր երկրորդական նախադասությունները լեզվական արտահայտության եղանակներով որևէ տարբերություն չունեն գոյականական մյուս երկրորդական նախադասություններից, ապա բացահայտիչ երկրորդական նախադասությունները երկընտրյալ են՝ ըստ հարաբերյալի խոսքի-մասային պատկանելիության։

Գոյական անվամբ արտահայտված հարաբերյալի դեպքում բացահայտիչ երկրորդական նախադասությունը հարում է որոշիչ երկրորդական նախադասությանը՝ չունենալով կառուցվածքային որևէ էական տարբերություն. վերջինիս նման նա հանդես է գալիս այն — որ կառուցվածքով և բուն որոշիչ երկրորդական նախադասությունից տարբերվում է միայն ստորոգյալի դրսևորմամբ. բացահայտիչ երկրորդական նախադասության ստորոգյալն անպայմանորեն բաղադրյալ է՝ գոյականով արտահայտված ստորոգելիով, մինչդեռ որոշիչ երկրորդական նախադասությունը լինում է բայական կամ «ածական + հանգույց» տիպի ստորոգյալով. համմտ. «Հակոբը, որ մեր դպրոցի հին ուսուցիչներից մեկն է...» (→ «Հակոբը՝ մեր դպրոցի հին ուսուցիչներից մեկը...») և «Հակոբը, որին բոլորը սիրում են...» (→ «Բոլորի կողմից սիրված Հակոբը...») կամ «Հակոբը, որ շատ բարի էր և շատ համբերատար...» (→ «Շատ բարի և շատ համբերատար Հակոբը»)։

Գոյական դերանվամբ արտահայտված հարաբերյալի դեպքում երկրորդական նախադասությունները, ըստ փոխակերպման բնույթի, կարող են մեկնաբանվել՝ ա) կամ որպես գոյականական տարբեր գործառույթություններ ունեցող՝ ենթակա, ստորոգելի, խնդիր, պարագա երկրորդական նախադասություններ, եթե հարաբերյալները մեկնաբանվում են որպես ձևական և փոխակերպման դեպքում հանվում են, բ) կամ որպես այդ գործառույթությունները կատարող գոյական դերանունների տրոհվող բացահայտիչներ, եթե հարաբերյալները դիտվում են որպես ոչ ձևական, տեքստում ընդգծված են և, հետևաբար, փոխակերպման դեպքում պահպանվում են. հմմտ. «Նրանք, ովքեր ձեռք են բարձրացնում օրենքի վրա...» → «Նրանք՝ օրենքի վրա ձեռք բարձրացնողները...» կամ, պարզապես, «Օրենքի վրա ձեռք բարձրացնողները...»։ Եթե ձևական հարաբերյալ չի լինում, այդ դեպքում փոխակերպման նշված երկվությունը վերանում է, և երկրորդական նախադասությունը բացահայտչի չի փոխակերպվում. հմմտ. «Ովքեր ձեռք են բարձրացնում օրենքի վրա...» → «Օրենքի վրա ձեռք բարձրացնողները...»։

Հատկացուցիչ և խնդիր երկրորդական նախադասությունների արտահայտության եղանակները գոյականական մյուս երկրորդական նախադասությունների համեմատությամբ, ինչպես նշվել է, որևէ էական առանձնահատկություն չունեն. միակ տարբերությունն այն է, որ այս դեպքում ձևական հարաբերյալի առկայությունը պարտադիր է, ընդ որում այն հատկացուցչի դեպքում դրվում է տրականով (սրա սեռական տարբերակով), մյուս դեպքերում՝ տարբեր հոլովներով՝ ըստ խնդրառու գոյականի պահանջի. հմմտ. «Նրանց ապրելակերպը, ովքեր ողջ կյանքում թափառում են...» (→ «Ողջ կյանքում թափառողների ապրելակերպը...»). «Զգտումը նրան, ինչ կենսական է և անհրաժեշտ... (→ «Զգտումը կենսականին և անհրաժեշտին...»)։ Նշենք, որ գոյականի խնդիրը հայերենում սովորաբար վերջադաս է, և այս դեպքում խնդիր-նախադասության դիրքը չի տարբերվում խնդիր-բառի կամ խնդիր-բառակապակցության դիրքից։ Խնդիր երկրորդական նախադասությունների հանգամանալից քննությունն այստեղ ավելորդ է, որովհետև գոյականի խնդրառությունը պայմանավորված է գերազանցապես այն բայի խնդրառությամբ, որից նա առվել է՝ «Զգտել կենսականի և անհրաժեշտին» → «Զգտում կենսականին և անհրաժեշտին»։

5. ԲԱՅԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄ (ԴԱՐՁՎԱԾ)

Կարճ նախադասությունները կարող են փոխակերպվել բայանվանական (բայագոյականական և բայածականական) դարձվածների, որոնք բառակապակցության և մի այլ նախադասության կազմում կարող են կատարել գոյականին և ածականին հատուկ պաշտոններ։

Նախադասության՝ բայանվանական դարձվածների փոխակերպվելու դեպքում գործում են հետևյալ կանոնները.

1) Նախադասության դիմավոր բայը վերածվում է բայանվան (բայածանց գոյականի և բայածականի)՝ **հաղթում է → հաղթանակ (հաղթություն) և հաղթական։**

2) Դիմավոր բայի ենթական դառնում է բայագոյականի (բայածանց գոյականի)՝ տրական («սեռական») հոլովով լրացում՝ «Գրիգորը խոսում է» → «Գրիգորի խոսքը»։

3) Եթե դիմավոր բայը անցողական բնույթի է և արտահայտում է ենթակայի և ուղիղ խնդրի հարաբերություն, ապա հայերենի համար հնարավոր է բայագոյականական բնույթի միայն թերի կամ լրացական փոխակերպում[18]. ա) առաջին դեպքում պահպանվում է գոյականական եզրերից միայն մեկը՝ երբեմն միայն ենթական («Գրիգորը հաղթեց Պետրոսին» → «Գրիգորի հաղթանակը». բայց ոչ «Պետրոսի հաղթանակը». վերջին դեպքում «հաղթանակ» բառը փոխարինվում է հականիշ «պարտություն» բառով՝ «Պետրոսի պարտությունը»), երբեմն նաև ուղիղ խնդիրը («Մարդիկ սիրում են հայրենիքը» — 1. «Մարդկանց սերը» և 2. «Հայրենիքի սերը»). բ) երկրորդ դեպքում պահպանվում են երկու եզրերն էլ, բայց կամ ուղիղ խնդրի խնդրառական բնույթի փոփոխությամբ (արտահայտում կապական խնդրով՝ «Գրիգորը հաղթեց Պետրոսին» → «Գրիգորի հաղթանակը Պետրոսի նկատմամբ»), կամ պարզ բայի փոխարինումով համարժեք հարադրական բայով և համապատասխան փոխակերպումով («Գրիգորը հաղթեց Պետրոսին» → «Գրիգորը հաղթանակ տարավ Պետրոսի նկատմամբ» → «Գրիգորի տարած հաղթանակը Պետրոսի նկատմամբ»)։

4) Մյուս կարգի խնդիրները բայագոյականական դարձված-

---

18 *Երկու տերմիններն էլ հեղինակինն են. առաջին դեպքի մասին խոսվել է. երկրորդի անվան տակ, ինչպես կպարզվի, նկատի ունենք նոր բառերի հավելումը և խնդրառության բացարձակ փոփոխությունը (ուղիղ խնդրի վերածումը կապականի)։*

ներում սովորաբար պահպանվում են («Գրիգորն այցելեց Հակոբին» → «Գրիգորի այցելությունը Հակոբին», «Գրիգորը զեկուցեց դպրոցի աշխատանքների մասին» → «Գրիգորի զեկուցումը դպրոցի աշխատանքների մասին» և այլն)։

5) Նախադասությունը բայածականական դարձվածի փոխակերպվում է միայն թերի կերպով. այս դեպքում ենթական կամ ուղիղ խնդիրը դառնում են լրացյալ, ածականի փոխակերպված բայը՝ լրացում՝ «Գրիգորը հաղթում է բոլորին» → «Հաղթական Գրիգորը». «Մարդն զգայում է օբյեկտը» → «Զգայական (զգայելի) օբյեկտը»։ Խնդրառու ածականով ստորոգելի ունեցող նախադասությունների ածական խնդիրը սովորաբար պահպանվում է՝ «Նա գոհ է քեզնից» → «Քեզնից գոհ», «Կարասը լի է գինով» → «Գինով լի կարաս» և այլն։

6. ԲԱՌԱԲԱՂԱԴՐԻՋ

Այն հարաբերությունները, որոնք արտահայտվում են դերբայական դարձվածների միջոցով, ավելի համառոտ ձևով կարող են արտահայտվել բաղադրյալ գոյականների, ածականների և մակբայների միջոցով։ Այս դեպքում ածանցավոր բառերի ածանցները արտահայտում են դերբայական իմաստներ, իսկ բարդությունը, բացի բաղադրիչների իմաստներից, նաև լրացական դերբայական իմաստներ։

Ստորև բերենք որոշ տարածված ածանցներ և ցույց տանք նրանց արտահայտած դերբայական իմաստները՝ փոխակերպման օրինակներով.

ություն «լինել». Համմտ. «Քաղաքը մեծ է» → «Քաղաքի մեծ լինելը» → «Քաղաքի մեծությունը»։

անի, ավետ, ավոր, եղ, յա, ոտ, ուն «ունեցող, պարունակող». Համմտ. «Դևը յոթ գլուխ ունի» → «Յոթ գլուխ ունեցող դև» → «Յոթգլխանի դև». «(Այս) ծաղիկը բույր ունի» → «Բույր ունեցող ծաղիկ» → «Բուրավետ ծաղիկ». «(Այս) մարդը բախտ ունի» → «Բախտ ունեցող մարդ» → «Բախտավոր մարդ». «(Այս) մարդը (շատ) ուժ ունի» → «(Շատ) ուժ ունեցող մարդ» → «Ուժեղ մարդ». «(Այս) կինը սև աչքեր ունի» → «Սև աչքեր ունեցող կին» → «Սևաչյա կին». «(Այս) կենդանին (շատ) բուրդ ունի» → «(Շատ) բուրդ ունեցող կենդանի» → «Բրդոտ կենդանի». «(Այս) զգեստը զարդարանք ունի» → «Զարդարանք ունեցող (զարդարված) զգեստ» → «Զարդարուն զգեստ»[19]։

ածոց «(չափի միավոր) պարունակող». Համմտ. «(Այս) թղթադրամը երեք ռուբլի է պարունակում» → «Երեք ռուբլի պարունակող թղթադրամ» → «Երեք ռուբլիանոց թղթադրամ» (կրճատ՝ «երեքանոց»).

ատ «չունեցող (կտրված)». Համմտ. «(Այս) մուկը պոչ չունի (պոչը) կտրված է» → «Պոչ չունեցող (պոչը կտրված) մուկ» → «Պոչատ մուկ». «Դեմքը գույն չունի» → «Գույն չունեցող դեմք» → «Գունատ դեմք».

ե, եղեն, յա «պատրաստված, բաղկացած, կազմված». Համմտ. Սեղանը բաղկացած է (պատրաստված է) փայտից» → «Փայտից բաղկացած (պատրաստված) սեղան» → «Փայտե (փայտյա) սեղան». «Այս իրը բաղկացած է (պատրաստված է) ոսկուց» → «Ոսկուց բաղկացած (պատրաստված) իր» → «Ոսկեղեն իր».

ակալ [<-ա+կալ-(նում)], ապան «պահող (բռնող, պահպանող)». Համմտ. «(Այս) իրը պահում է մոմը» → «Մոմը պահող իր» → «Մոմակալ (իր)». «(Այս) մարդը պահում է այգին» → «Այգին պահող մարդ» → «Այգեպան (մարդ)».

ական, այինն «առնչվող, վերաբերող, հետ կապված, պատկանող». Համմտ. («Այս) նշանը կապված է հանրահաշվի հետ (առնչվում է, պատկանում է հանրահաշվին)» → «Հանրահաշվի հետ կապված (առնչվող, պատկանող) նշան» → «Հանրահաշվական նշան».

Կանգ չառնելով նախադասության՝ ածանցական կազմությունների փոխակերպվելու այդ դեպքերի վրա՝ խոսենք բարդության տիպերի մասին: Բարդ բառերը ներկայացնում են նախադասությունների լրիվ և թերի փոխակերպման արդյունք: Ըստ տերման կարելի է տարբերել բարդությունների մի շարք տիպեր: Այսպես կոչված կցական կամ բաղհյուսական բարդությունների դեպքում բարդության համար հիմք տված բառակապակցության կամ նախադասության բաղադրիչների փոխհարաբերությունը պարզ է, թեև բառակապակցությունը, վերածվելով բարդության, կարող է ձեռք բերել որոշ լրացական իմաստ. Համմտ. հոր եղբայր → հորեղբայր, այս or → այսօր, առաջ բաշել → առաջբաշում և այլն:

Այսպես կոչված, իսկական բարդությունների բաղադրիչների փոխհարաբերությունը հասկանալու համար հարկավոր է նկատի առնել բարդությունների գործառական արժեքը՝ որպես գոյական,

---

19 Ինչպես նշվել է, «ունեցող» իմաստով ածանցի արժեք է ստացել նաև ով հոլովական վերջավորությունը՝ նամով—նամ ունեցող:

ածական, թե մակբայ հանդես գալը: Կարելի է ասել, որ նախադասության անդամների գրեթե բոլոր հարաբերությունները արտահայտվում են նաև բարդությունների միջոցով՝ ըստ բաղադրիչների բնույթի և փոխհարաբերության:

Բարդությունները կարելի է դիտել որպես միջուկային նախադասություններից սերված երկրորդական նախադասությունների, բառակապակցությունների և դերբայական դարձվածների հետագա փոխակերպման արդյունք, ընդ որում դերբայական իմաստը սովորաբար ենթադրվում է ըստ բաղադրիչների փոխհարաբերության. համմտ. 1) «Հակոբը լրագիր է վաճառում»+«Հակոբը եկավ տուն»→«Հակոբը, որ լրագիր է վաճառում, եկավ տուն»→«Լրագիր վաճառող Հակոբը եկավ տուն»→«Լրագրավաճառ Հակոբը եկավ տուն». «Հակոբը գեղեցիկ դեմք ունի»+«Հակոբը դուր է գալիս կանանց»→«Հակոբը, որ գեղեցիկ դեմք ունի, դուր է գալիս կանանց»→«Գեղեցիկ դեմք ունեցող Հակոբը դուր է գալիս կանանց»→«Գեղեցկադեմ Հակոբը դուր է գալիս կանանց». «Տունը պատած է պարսպով»+«Տունը քաղաքի ծայրին է»→«Տունը, որ պատած է պարսպով, քաղաքի ծայրին է»→«Պարսպով պատած տունը քաղաքի ծայրին է»→«Պարսպապատ տունը քաղաքի ծայրին է». «Մարդը շատ է խոսում»+«Մարդը ձանձրացնում է», →«Մարդը, որ շատ է խոսում, ձանձրացնում է», →«Շատ խոսող մարդը ձանձրացնում է»→«Շատախոս մարդը ձանձրացնում է». 2) «Լեռը լանջ ունի»+«Լանջը պատած է ձյունով»→«Լեռան լանջը պատած է ձյունով»→«Լեռնալանջը պատած է ձյունով». «Արևը ծագում է»+«Արևի ծագումը գեղեցիկ է»→«Արևածագը գեղեցիկ է». 3) «Հակոբը վազեց»+«Հակոբը (կարծես թե) խելքը կորցրեց» «Հակոբը վազեց, (կարծես թե) խելքը կորցրեց»→«Հակոբը վազեց խելքը կորցրածի պես»→«Հակոբը խելակորույս վազեց» և այլն:

Նշենք, որ փոխակերպման բոլոր հնարավորությունները չեն իրականանում. առկա են կառուցվածքային (այդ թվում՝ եզրերի քանակի հետ կապված) պատմական, ոճական և արտալեզվական զանազան սահմանափակումներ: Այսպես, սովորական չեն եռաբաղադրիչ բարդությունները, որոշ բայական հիմքեր չեն կարող որպես բարդության վերջին բաղադրիչ հանդիպել [համմտ. «Փոստը տանել»→«Փոստատար», բայց «Մայլը հրել»→(չիք)]. կա գրավաճառ, հացավաճառ, լրագրավաճառ և այլն, բայց, արտալեզվական սահմանափակմամբ, ոչ դաշտավաճառ, լեռնավաճառ և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ., *Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906։*

Աբեղյան Մ., *Աշխարհաբարի հոլովները, Վաղարշապատ, 1908։*

Աբեղյան Մ., *Հայցական հոլովը մեր աշխարհաբարում, Վաղարշապատ, 1909։*

Աբեղյան Մ., *Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912։*

Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1933։*

Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965։*

Աբրահամյան Ա. Ա., *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953։*

Աբրահամյան Ա. Ա., *Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1958։*

Աբրահամյան Ա. Ա., *Բայը ժամանակակից հայերենում, հ. 1, Երևան, 1962։*

Աբրահամյան Ս. Գ., *Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը, ԳԱՏ, 1953, № 9։*

Աբրահամյան Ս. Գ., *Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956։*

Աբրահամյան Ս. Գ., *Նախադասության տեսակներն ըստ բնույթի ժամանակակից հայերենում, ԼՈՀ, 1, 1960։*

Աբրահամյան Ս. Գ., *ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962։*

Աբրահամյան Ս. Գ., *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965։*

Աբրահամյան Ս. Գ., *ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969։*

Աբրահամյան Ս. Գ., Վերդյան Բ. Հ., Քոսյան Վ. Ա., *Հայերեն լեզվի դասագիրք, Երևան, 1966։*

Աղայան Է. Բ., *Հայ լեզվաբանության պատմություն, 1—2, Երևան, 1958—1962։*

Աղայան Է. Բ., *Լեզվաբանության ներածություն, Երևան, 1963։*

Աղայան Է. Բ., *Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում, ՊԲՀ, 1963, № 3։*

Աղայան Է. Բ., *Բայակազմությունը ժամանակակից հայերենում, ԳԱՏ, 1963, № 5։*

Աղայան Է. Բ. *Գրաբարի քերականություն, I ա, Երևան, 1964։*

Աղայան Է. Բ., *ժամանակակից հայերենի հոլովները, ՊԲՀ, 1966, № 4։*

Աղայան Է. Բ. *ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967։*

Աղայան Է. Բ., Բարսեղյան Հ. Խ., *Հայոց լեզու, Երևան, 1965։*

Աճառյան Հ., *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, 1—5, Երևան, 1952—1967։*

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 1—2, Երևան, 1949—1951։
Աճեմյան Վ. Լ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1971։
Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866։
Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955։
Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957։
Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, 1—2, Երևան, 1958—1964։
Առաքելյան Վ., Հայերենի պարբերույթը, Երևան, 1968։
Ասատրյան Մ. Ե., Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1958։
Ասատրյան Մ. Ե., Կա՞ արդյոք ժամանակակից հայերենում հայցական հոլով, ՍԴ, 1965, № 50։
Ասատրյան Մ., Հին և նոր բանավեճեր ժամանակակից հայերենի հոլովական համակարգի շուրջը, ԲԵՀ, 1968, № 2։
Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա-Բ, Երևան, 1970—1973։
Ասլանյան Վ., Քանի՞ հոլով ունի արդի հայերենը (գիտական բանավեճ լեզվի ինստիտուտում), ՍՀ, 1966, № 288։
Ամանգուլյան Հ. Ա., Հայերենի բայի խոնարհման ձևերի շուրջը, ՊԲՀ, 1963, № 2։
Ավդալյան Լ., Դարձյալ հայցականի մասին, ՍԴ, 1966, № 7։
Բահարյանց Ա., Քերականություն աշխարհիկ լեզվի, Տփղիս, 1879։
Բարսեղյան Հ. Խ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953։
Բարսեղյան Հ. Խ., Հատուկ անուն, Երևան, 1964։
Բարսեղյան Հ. Խ., Մ. Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, Երևան, 1967։
Գարեգինյան Գ. Լ., Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963։
Գյուլբուդաղյան Ս. Վ., Թվականը ժամանակակից հայերենում, Երևան, 1964։
Գյուլբուդաղյան Ս. Վ., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967։
Դաղբաշյան Հ., Արևելահայ աշխարհաբարի քերականություն, մասն Ա, Ստուգաբանություն, Թիֆլիս, 1913։
Էլոյան Ս., Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963։
Թումանյան Հար., Համառոտ ստուգաբանություն հայոց աշխարհաբար լեզվի, Թիֆլիս, 1905։
Իշխանյան Ռ., Բայի սեռի կարգը արդի հայերենում, ԳԱՏ, 1959, № 11—12։
Իշխանյան Ռ., Ուղղակա՞ն թե հայցական, ՍԴ, 1965, № 47։
Իշխանյան Ռ., Հայերենի հոլովման համակարգը կառուցվածքային վերլուծությամբ, ԼՀԳ, 1968, № 6։
Իշխանյան. Ռ., Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971։
Վիսիցյան Ստ., Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը, ՆՊՀԳԻ, 19, 1941։
Հարությունյան Հ. Ա., Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1970։
Ղազարյան Լ., Բանավեճ, հինգ թե՞ յոթ հոլով, ԵՀ, 1966, № 38։
Ղազարյան Ս. Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954։
Ղարիբյան Ա. Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954։

Ղարիբյան Ա. Ս., *Հայոց լեզվի քերականություն, Երևան 1964։*
Ղարիբյան Ա. և Մարգարյան Ս., *Ընդդեմ կամայականությունների, ՍԴ, 1966, № 10։*
Ղափանցյան Գ., *Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939։*
Մալխասյանց Ստ., *Հայցական հոլովը աշխարհաբարի մեջ, Թիֆլիս, 1910։*
Մալխասյանց Ստ., *Դարձյալ հայցական հոլովը, «Նոր դպրոցը», 1909, № 1—2։*
Մարգարյան Ա. Ս., *Արդի հայերենի կապերը, Երևան, 1955։*
Մարգարյան Ա. Ս., *Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966։*
Մարգարյան Ա. Ս., *Հարակատարն ու անցյալի հարակատարը բայական ժամանակներ են, ՊՀՔ, 1964, № 2։*
Մելիք-Թանգյան Ն., *Աշխարհաբարի քերականություն, Շուշի, 1893։*
Մուրադյան Ա., *Հունաբան դպրոցը և նրա ստեղծած քերականական տերմինաբանությունը, Երևան, 1971։*
Մուրվալյան Ա., *Հայերենի բայածանցները, ԼԻԱԺ, 1, 1946։*
Մուրվալյան Ա., *Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955։*
Մուրվալյան Ա., *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, 1959։*
Ներսիսյան Գ., *Բայի սեռի և կերպի ուսուցումը, Երևան, 1943։*
Շարաբխանյան Պ., *Արդի հայերենի հոլովները, ՍԴ, 1966, № 13։*
Շարաբխանյան Պ. և Պիվազյան Է., *Արդի հայերենի հոլովների մասին, ՊՔՀ, 1967, № 4։*
Շիլականձ Իվ. Ի., *Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, ԼՈՀ, 2, 1964։*
Պալասանյան Ստ., *Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց, Թիֆլիս, 1870։*
Պալասանյան Ստ., *Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874։*
Պապոյան Ա., *Տեղաշարժեր հայերենի հոլովական հարացույցում, ՊՔՀ, 1964, № 4։*
Պապոյան Ա., *Նվ հայցականի, և սեռականի մասին, ՍԴ, 1966, № 1։*
Պապոյան Ա., *Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում, Երևան, 1964։*
Պառնասյան Ն. Ա., *Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, 1961։*
Պառնասյան Ն. Ա., *Անշաղկապ բարդ նախադասությունը ժամանակակից հայերենում, ԼՈՀ, 2, 1964։*
Պառնասյան Ն. Ա., *Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970։*
Պետրոսյան Հ., *Գոյականի առումները հայերենում, Երևան 1960։*
Պետրոսյան Հ., *Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972։*
Պողոսյան Պ. Մ., *Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959։*
Ջահուկյան Գ. Բ., *Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը XVIII—XIX դդ. (դոկտորական դիսերտացիա, ձեռագիր), Երևան, 1955։*
Ջահուկյան Գ. Բ., *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959։*
Ջահուկյան Գ. Բ., *Լեզվաբանության պատմություն, 1—2, Երևան, 1960—1962։*
Ջահուկյան Գ. Բ., *Հայոց լեզվի հոլովները, ՍԴ, 1967, № 4։*
Ջահուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967։*
Ջահուկյան Գ. Բ., *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969։*
Ջուհարյան Թ., *Բայի ուսուցման հիմնական հարցերը, Երևան, 1956։*

Սևակ Գ., *Խոսքի մասերի ուսմունքը, ԵՊՀԳԱ, 1939։*
Սևակ Գ., *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955։*
Սևակ Գ., *Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1964։*
Վանցյան Գ., *Դպրոցական քերականություն, Թիֆլիս, 1906։*
Քոսյան Վ. Ա., *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, ՀՊՄԻԳԱ, 2, 1967։*
Օհանյան Հ. Ա., *Ածականը ժամանակակից հայերենում, Երևան, 1962,*
Սարգսյան Ա. Ե., *Գրաբարի տիպաբանական բնութագիրը (թեկնածուական դիսերտացիա, ձեռագիր), Երևան, 1970։*

Авакян В. Г., Модальные слова современного армянского языка, автореферат кандидатской диссертации, Ереван, 1972.

Адмони В. Г., Введение в синтаксис современного немецкого языка, М., 1955.

Алексеев М. М. и *Колшанский Г. В.*, О соотношении логических и грамматических категорий, ВЯ, 1965, № 5.

Аналитические конструкции в языках различных типов, М., 1965.

Апресян Ю. Д., Опыт описания значений глаголов по их синтаксическим признакам (типам управления), ВЯ, 1965, № 5.

Апресян Ю. Д., Идеи и методы современной структурной лингвистики, М., 1966.

Апресян Ю. Д., Экспериментальное исследование семантики русского глагола, М., 1967.

Арамян А. А., Некоторые выводы по дистрибутивному анализу смычных литературного армянского языка, ВОН Арм. ССР, 1969, № 5.

Атаян Э. Р., Проблемы и методы структурального синтаксиса, Ереван, 1962

Атаян Э. Р., Понятие элементарной синтаксической структуры, Ереван, 1964.

Атаян Э. Р., Части речи, их дифференциальные признаки и критерии классификации, ТПВПИЯ, М., 1970.

Ахманова А. С., Основные направления лингвистического структурализма, М., 1955.

Ахманова О. С., Фонология, морфонология, морфология, М., 1966.

Ахманова О. С., Словарь лингвистических терминов, М., 1966.

Ахманова О. С., Микаелян Г. Б., Современные синтаксические теории, М., 1963.

Ахманова О. С., Мельчук И. А., Падучева Е. В., Фрумкина Р. М., О точных методах исследования языка, М., 1967.

Базмаджян Р. А., Джанполадян Т. К., Тер-Микаелян Г. М., Об одном варианте морфологического анализа и методе его реализации на специализированной машине, ПК, 15, 1965.

Балли Ш., Общая лингвистика и вопросы французского языка, М., 1955.

Бархударов Л. С., К вопросу о бинарности оппозиций и симметрии грамматических систем, ВЯ, 1966, № 4.

Бархударов Л. С., Структура простого предложения современного английского языка, М., 1966.

Блумфильд Л., Язык, М., 1968.

Бондарко А. В., Грамматическая категория и контекст, М., 1971.

Бромлей С. В., Принципы классификации глагола в современном русском языке, ВЯ, 1965, № 5.
Будагов Р. А., Литературные языки и языковые стили, М., 1967.
Вандриес Ж., Язык, М., 1937.
Виноградов В. В., Русский язык. Грамматическое учение о слове. М., 1947.
Волоцкая З. М., Молошная Т. Н., Николаева Т. М., Опыт описания русского языка в его письменной форме, М., 1964.
Вопросы грамматики, М.—Л., 1960.
Вопросы грамматического строя, М., 1955.
Вопросы составления описательных грамматик, М., 1961.
Вопросы теории частей речи, Л., 1968.
Гладкий А. В., О формальных признаках в лингвистике, ВЯ, 1966, № 3.
Гладкий А. В., Мельчук И. А., Элементы математической лингвистики, М., 1969.
Глисон Г., Введение в дескриптивную лингвистику, М., 1959.
Головин Б. Н., К вопросу о сущности грамматической категории (на материале русского языка), ВЯ, 1955, № 1.
Головин Б. Н., Заметки о грамматическом значении, ВЯ, 1962, № 2.
Горнунг Б. В., О характере языковой структуры, ВЯ, 1959, № 1.
Грамматика русского языка, I—II, М., 1960.
Грамматика современного русского литературного языка, М., 1970.
Григорьев В. И., Что такое дистрибутивный анализ? ВЯ, 1959, № 1.
***Григорьев В. И.*, Статистическое распознавание и дифференциальные признаки фонем**, ВЯ, 1964, № 3.
***Гросс М., Лантен А.*, Теория формальных грамматик**, М., 1971.
Гухман М. М., От языка немецкой народности к немецкому национальному языку, М., 1955.
Гухман М. М., Понятие системы в синхронии и диахронии, ВЯ, 1961, № 4.
Данеш Фр., Опыт теоретической интерпретации синтаксической омонимии, ВЯ, 1964, № 6.
Дегтерева Т. А., Пути развития современной лингвистики, М., 1962.
Дегтерева Т. А., Развитие норм литературного языка, М., 1963.
Денисов П. Н., Принципы моделирования языка, М., 1965.
Дешериев Ю. Д., Протченко И. Ф., Развитие языков народов СССР в советскую эпоху, М., 1968.
Джаукян Г. Б., О соотношении лингвистических единиц и их различительных признаков, ТПВПИЯ, М., 1970.
Джаукян Г. Б., Важнейшие направления научных исследований Института языка АН Армянской ССР, ИАН ОЛЯ, 1972, 2.
Джаукян Г. Б., О некоторых теоретических вопросах языкознания, ИАН ОЛЯ, 1974, 2.
Евдошенко А. П., Проблемы структуры языка, Кишинев, 1967.
Есперсен О., Философия грамматики, М., 1958.
Ефимов А. И., История русского литературного языка, М., 1954.
Жинкин Н. И., Механизмы речи, М., 1958.

Жинкин Н. И. Произнесение слов — концепция глоточного образования слога, IJSLP, I, 11, 1959.
Жирмунский В. М., Теоретические проблемы советского языкознания, ВАН, 1963, № 7.
Жолковский А. К., Мельчук И. А., О семантическом синтезе, ПК, 1967.
Зализняк А. А., Русское именное словообразование, М., 1967.
Звегинцев В. А., История языкознания XIX и XX веков в очерках и извлечениях, I—II, М., 1965.
Звегинцев В. А., Очерки по общему языкознанию, М., 1962.
Звегинцев В. А., Теоретическая и прикладная лингвистика, М., 1968.
Иванов В. В., Хеттский язык, М., 1963.
Иванов В. В., Топоров В. Н., Санскрит, М., 1960.
Исаченко А. В., Грамматический строй русского языка, Морфология, I, Братислава, 1954.
Исаченко А. В., Бинарность, привативные оппозиции и грамматические значения, ВЯ, 1963, № 6.
Исследования по общей теории грамматики, М., 1968.
Кацнельсон С. Д., Содержание слова, значение и обозначение, М., 1965.
Кацнельсон С. Д., Типология языка и речевое мышление, Л., 1972.
Климов Г. А., Фонема и морфема, М., 1967.
Козлова М. С., Философия и язык, М., 1972.
Колшанский Г. В., Логика и структура языка, М., 1965.
Комлев Н. Г., Компоненты содержательной структуры слова, М., 1969.
Коротков Н. Н. и *Панфилов В. З.*, О типологии грамматических категорий, ВЯ, 1965, № 1.
Крашенинникова Е. А., Новое в немецкой грамматике, 1—4, М., 1960—1965.
Кузнецов П. С., О принципах изучения языка, М., 1961.
Кузнецов П. С., Опыт формального определения слова, ВЯ, 1964, № 5.
Курилович Е. Р., Заметки о значении слова, ВЯ, 1955, № 3.
Курилович Е. Р., Очерки по лингвистике, М., 1964.
Кусикьян И. К., Очерки исторического синтаксиса литературного армянского языка, М., 1959.
Макаев Э. А., К вопросу об изоморфизме, ВЯ, 1961, № 5.
Мельчук И. А., Автоматический синтаксический анализ, Новосибирск, 1964.
Мельничук А. С., Понятие системы и структуры языка в свете диалектического материализма, ВЯ, 1970, № 1.
Мещанинов И. И., Части речи и члены предложения, М.—Л., 1945.
Микуш Ф., Обсуждение вопросов структурализма и синтагматическая теория, ВЯ, 1957, № 1.
Миракян Э. Б., Испытание гипотезы В. Ингве на материале армянского языка, Ереван, 1968.
Морфологическая структура слова в индоевропейских языках, М., 1970.
Морфологическая структура слова в языках различных типов, М.—Л., 1963.
Морфологическая типология и проблема классификации языков, М.—Л., 1965.

Мразек Р., Синтаксическая дистрибуция глаголов и их классы, ВЯ, 1964, № 3.
Мухин А. М., О категории падежа в современном английском языке, ВЯ, 1957, № 2.
Мухин А. М., Функциональные лингвистические единицы и методы структурного анализа, ВЯ, 1961, № 1.
Мухин А. М., Понятие нейтрализации и функциональные лингвистические единицы, ВЯ, 1962, № 5.
Мухин А. М., Функциональный анализ синтаксических элементов, М., 1964.
Мухин А. М., Структура предложений и их модели, М., 1968.
Мухин А. М., Модели внутренних синтаксических связей предложения, ВЯ, 1970, № 4.
Мучник И. П., Грамматические категории глагола и имени в современном русском литературном языке, М., 1971.
Новое в лингвистике, 1—5, М., 1960—1970.
Общее языкознание, 1—3, М., 1970—1973.
Основные направления структурализма, М., 1964.
Основы построения описательной грамматики современного русского литературного языка, М., 1966.
О соотношении синхронного анализа и исторического изучения языка, М., 1960.
Панфилов В. З., Грамматика и логика, М.—Л., 1963.
Петрова Н. В., Пиотровский Р. Г., Слово, контекст, морфология, ВЯ, 1965, № 2.
Пешковский А. М., Русский синтаксис в научном освещении, 7-е изд., М., 1956.
Почепцов Г. Г., Конструктивный анализ структуры предложения, Киев, 1971.
Пражский лингвистический кружок, М., 1967.
Принципы лингвистического анализа, М., 1966.
Принципы научного анализа языка, М., 1959.
Проблемы изучения языка, М., 1957.
Проблемы общего и частного языкознания, М., 1960.
Проблемы структурной лингвистики, М., 1963—1972.
Проблемы языкознания, М., 1957.
Развитие грамматики и лексики современного русского языка, М., 1964.
Распопов И. А., Актуальное членение предложения, Уфа, 1961.
Рвачев Л. А., Математика и семантика, Киев, 1966.
Ревзин И. И., Структуральная лингвистика, семантика и проблемы изучения слова, ВЯ, 1957, № 2.
Ревзин И. И., Модели языка, М., 1962.
Ревзин И. И., К логическому обоснованию теории фонологических признаков, ВЯ, 1964, № 5.
Ревзин И. И., Метод моделирования и типология славянских языков, М., 1966.

Ревзин И. И., Юлдашева Г. Д., Грамматика порядков и ее использования, ВЯ, 1969, № 1.
Реформатский А. А., Введение в языкознание, М., 1967.
Реформатский А. А., Из истории отечественной фонологии, М. 1970.
Рождественский Ю. В., О современном строении языкознания, ВЯ, 1965, № 3.
Рождественский Ю. В., Типология слова, М., 1969.
Сепир Э., Язык, М., 1934.
Серебренников Б. А., Об относительной самостоятельности развития системы языка, М., 1968.
Смирницкий А. И., Морфология английского языка, М., 1959.
Сова Л. З., Аналитическая лингвистика, М., 1970.
Советское языкознание за 50 лет, М., 1967.
Современная буржуазная философия, М., 1972.
Соссюр Ф.де-, Курс общей лингвистики, М., 1933.
Статистико-комбинаторное моделирование языков, М.—Л., 1965.
Стеблин-Каменский М. И., О предикативности, ВЛГУ, № 20, 1956.
Степанов Ю. С., О предпосылках лингвистической теории значения, ВЯ, 1964, № 5.
Степанов Ю. С., Основы языкознания, М., 1966.
Структурный синтаксис английского языка, Л., 1972.
Суник О. П., Общая теория частей речи, М.—Л., 1966.
Теоретические проблемы советского языкознания, М., 1968.
Тер-Матевосян А., Краткий сравнительный обзор структурных особенностей русского и армянского языков, Баку, 1939.
Тошьян С. Б., Слогораздел и строение слога в армянском языке, ВЯ, 1969, № 3.
Трансформационный метод в структурной лингвистике, М., 1964.
Трубецкой Н. С., Основы фонологии, М., 1960.
Туманян Э. Г., Превращение артикля в флексию дательного падежа в новоармянском языке, ВЯ, 1955, № 5.
Туманян Э. Г., Артикли в современном армянском языке, Ереван, 1963.
Туманян Э. Г., Очерки исторического развития падежных форм новоармянского литературного языка, М., 1962.
Туманян Э. Г., Армянский язык, «Языки народов СССР», I, М., 1966.
Успенский Б. А., Структурная типология языков, М., 1965.
Филин Ф. П., Заметки о состоянии и перспективах советского языкознания, ВЯ, 1965, № 2.
Филин Ф. П., К проблеме социальной обусловленности языка, ВЯ, 1966, № 4.
Фрумкина Р. М., Статистические методы изучения лексики, М., 1964.
Хачатрян А. А., Айрапетян В., Экспериментальное исследование согласных армянского языка, Ереван, 1972.
Хомский Н., Три модели описания языка, КС, 2, М., 1961.
Хомский Н., Аспекты теории языка, М., 1972.
Хэмп Э., Словарь американской лингвистической терминологии, М., 1964.
Черч А., Введение в математическую логику, 1, М., 1960.

Члены предложения в языках различных типов, Л., 1972.
Чешко Е. В., К вопросу о падежных корреляциях, ВЯ, 1960, № 2.
Шанидзе А. Г., Новый взгляд на природу спряжения армянского глагола, ТТУ, 116, V, 1965.
Шаумян С. К., Проблемы теоретической фонологии, М., 1962.
Шаумян С. К. и *Соболева П. А.*, Аппликативная порождающая модель и исчисление трансформаций в русском языке, М., 1963.
Шаумян С. К., Структурная лингвистика, М., 1965.
Шаумян С. К., Основания порождающей грамматики русского языка, М., 1968.
Шахматов А. А., Очерк современного русского литературного языка, М., 1941.
Шендельс Е. И., О грамматической полисемии, ВЯ, 1962, № 3.
Штелинг Д. А., О неоднородности грамматических категорий, ВЯ, 1959, № 1.
Щерба Л. В., Избранные работы по языкознанию и фонетике, 1, Л., 1958.
Benveniste E. Problèmes de linguistique générale, Paris, 1966.
Benveniste E., Fondements syntaxiques de la composition nominale, 1952. LXII, 1, 1968.
Bloch B., and *Trager G. L.*, Outine of Linguistic Anaiysis, Baltimore, 1942.
Bühler K., Sprachtheorie, Jena, 1934.
Chomsky N., Aspects of the Theory of Language, Cambridge (Mass.), 1965.
Current Trends in Linguistics. III. Theoretical Foundations, The Hague—Paris, 1970.
Directions in Psycholinguistics, New York—London, 1965.
Ebeling G. L., Linguistic Units, 's-Gravenhage, 1960.
Feydit F., Manuel de langue arménienne, Paris, 1948.
Fries CH. C. The Structure of English, New York, 1952.
Gardiner A., The Theory of Speech and Language, Oxford, 1951.
Godel R., La question des signes zéro, CFS, 1956, 11.
Godel R., Les sources manuscrites du „Cours de linsuitique générale" de F. de Saussure, Genève—Paris, 1957.
Godel R., De la théorie du signe aux termes du système, CFS, 1966, 22.
Godel R., Questions concernant le syntagme, CFS, 1969, 25.
Groot de A. W., Structurele syntaxis, Den Haag, 1949.
Harris Z. S., Methods in Structural Linguistics, Chicago, 1951.
Harweg R., Subjekt und Prädikat, FL, V, 3—4.
Hill A., Introduction to Linguistic Structures, New York, 1958.
Hjelmslev L., La catégorie des cas, I—II, 1935—1937.
Hjelmslev L., Essais linguistiques, Copenhague, 1959.
Hockett C. F., A Manuel of Phonology, Baltimore, 1953.
Hockett C. F., A Course of Modern Linguistics, New York, 1958.

Jakobson R., Beitrag zur allgemeinen Kasuslehre, TCLP, 6, 1936.
Jakobson R., Russian Conjugation, „Word", 1948, 4, № 3.
Jensen H., Altarmenische Grammatik, Heidelberg, 1959.
Kelly L. G., De modis generandi: Points of Contact between Noam Chomsky and Thomas of Erfurt, FL, V, 3—4.
Kurylowitz J., Le problème du classement des cas, BPTJ, IX, 1949.
Lamb S., Outline of the Stratificational Grammar, Washington, 1966.
Language Today, New York, 1967.
Malmberg B., Les nouvelles tendences de la linguistique, Paris, 1968.
Martinet A., A Functional View of Language, Oxford, 1962.
Martinet A., La linguistique synchronique, Paris, 1970.
Pike K., Grammemic Theory, GL, 1957, 2.
Ries J., Was ist Syntax? Marburg, 1894.
Ries J., Zur Wortgruppenlehre, Prag, 1928.
Ries J. Was ist ein Satz? Prag, 1931.
Sörensen H. S., Word-Classes in Modern English, Copenhagen, 1958.
Tesnière L., Esquisse de syntaxe structurale, Paris, 1953.
Tesnière L., Eléments de sytnaxe structurale, Paris, 1959.
Togeby K., Siructure immanent de la langue francaise, Kopenhague, 1951.
Trubetzkoy N. S., Gedanken über Morphonologie, TCLP, 1931, 4.
Trends in European and American Linguistics 1930—1960, Antwerp, 1966.
Zeichen und System der Sprache, II, Berlin, 1972.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻ— Ա. Իսահակյան, Ընտիր երկեր, Երևան, 1948։
ԱՎ— Ազատ Վշտունի, Երկեր, Երևան, 1935։
ԲԵՀ— Բանբեր Երևանի համալսարանի։
ԳԱՏ— ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր (Հասարակական գիտությունների սերիա)։
ԳԹ— Գրական թերթ
ԵՀ— Երևանի Համալսարան։
ԵՉ— Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, 1—5, Երևան, 1962—1966։
ԵՊՀԳԱ— Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ։
ԼԻԱԺ— ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի աշխատությունների ժողովածու։
ԼՀԳ— Լրաբեր հասարակական գիտությունների (տե՛ս և ԳԱՏ)։
ԼՈՀ— Լեզվի և ոճի հարցեր (ժողովածու)։
ՀԹ— Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, I—VI, Երևան, 1950—1959։
ՀՊՄԻԳԱ— Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատություններ։
ՄԿԱ— Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ։
ՄՆ— Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1955։
ՆԴ— Նար-Դոս, Երկերի ժողովածու, 1—3, Երևան, 1953։
ՊԲՀ— Պատմա-բանասիրական հանդես։
ՍԴ— Սովետական դպրոց։
ՍԳ— Սովետական գրականություն։
ՍՀ— Սովետական Հայաստան։
ՎՇ— Վ. Նեֆսպիր, Ընտիր երկեր, I—II, Երևան, 1951—1953։
ՎՏ— Վ. Տերյան, Երկեր, Երևան, 1956։

ВАН — Вестник Академии наук СССР.
ВЛГУ — Вестник Ленинградского государственного университета.
ВОН — Вестник общественных наук АН Арм. ССР.
ВЯ — Вопросы языкознания.
ИАН ОЛЯ — Известия АН СССР. Отделение литературы и языка.
КС — Кибернетический сборник.
ПК — Проблемы кибернетики.
ТИЯ — Труды Института языкознания.
ТПВПИЯ — Теоретические и практические вопросы преподавания иностранных языков.
ТТУ—Труды Тбилисского университета (серия востоковедения).

BSL— Bulletin de la Société de linguistique de Paris.
CFS— Cahiers de F. de Saussure.
FL— Folia linguistica.
GL— General Linguistics.
IF— Indogermanische Forschungen.
IJSLP— International Journal of Slavic Linguistics and Poetics.
REA— Revues des études arméniennes.
TCLP— Travaux du Cercle linguistique de Prague.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան 5
Ներածություն 11
1. Լեզվական կաղապարի հասկացությունը. ընդհանրական կաղապար —
2. Լեզվաբանության կառուցվածքը 37

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Արտահայտչական միջոցներ 53

ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱԲԱԺԻՆ

Հնչաբանություն

I. Հնչութաբանություն (հարացուցային հնչաբանություն) . . . 57
1. Հնչույթների տարբերակման հնարավորությունները . . . —
ա. Արտասանական օրգաններ . . . . . —
բ. Հնչույթների տարբերակիչ հատկանիշները ըստ ընդհանրական կարգերի 64
2. Հայերենի հնչույթների դասակարգումը 67
ա. Հնչույթների երկու հիմնական խմբերը՝ բաղաձայններ և ձայնավորներ . . . . . —
բ. Բաղաձայններ 69
գ. Ձայնավորներ 75
II. Շարահյուսական հնչաբանություն 81
1. Բաղաձայնական կապակցություն . . . . . —
2. Վանկ 84
III. Վանկերի կապակցություն և փոխկաղապարում 88
1. Վանկերի կապակցություն և հնչաշղթա . . . . . —
2. Հնչափոխություն 92

ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԲԱԺԻՆ

Գրաբանություն

I. Գրանշանները որպես արտահայտաբանական համակարգ . . . 96
1. Գրանշանների առանձնահատկությունները . . . . . —
2. Գրանշանների բաշխումը և տեսակները 98

3. Գրանշանների կազմությունը 101
II. Հնչաբանական և գրաբանական համակարգերի փոխհարաբերությունը . 112
1. Հնչույթների և գրույթների փոխհարաբերությունը . . . --
ա. Քանակական փոխհարաբերություն . . . . . —
բ. Որակական փոխհարաբերություն. ուղղագրություն և ուղղախոսություն 114
2. Կետադրական նշանների գործառական արժեքը . . . 116

ԵՐՐՈՐԴ ՆՆԹԱԲԱԺԻՆ

Շարժաբանություն

1. Շարժանշանների առանձնահատկությունները 118
2. Հարալեզվական (պարալինգվիստիկական) շարժանշանները . 121

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բառերի խմբերը և կազմությունը 125
1. Հոսքի մասեր . . . . . —
2. Բառի կազմությունը 150
ա. Ձևույթը և նրա տեսակները . . . . . —
բ. Ածանցական ձևույթներ 151
գ. Հիմքի հատկացությունը 158

ԱՌԱՋԻՆ ՆՆԹԱԲԱԺԻՆ

Գոյականական բառաձևերի հարացույց (հոլովում)

I. Անվանական հոլովում 161
1. Անվանական քերականական կարգեր . . . . . —
2. Թվի կարգը 172
3. Հոլովի կարգը 186
4. Դասի կարգը 206
5. Առկայացման կարգը 209
II. Դերանվանական հոլովում . . . . . —
1. Թվի կարգը 213
2. Հոլովի կարգը 215
3. Դասի կարգը 217
4. Դեմքի կարգը 218

ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԲԱԺԻՆ

Ստորոգական բայաձևերի հարացույց
(խոնարհում)

I. Համադրական ձևեր 227
1. Բայական և ստորոգական կարգեր 228
2. Եզանակի կարգը . . . . . —
3. Կերպի կարգը 249
4. Տիպարի կարգը 256
5. Սևի կարգը 264
6. Ժամանակի կարգը 272
7. Դեմքի և դասի կարգերը 276
8. Թվի կարգը 279
II. Վերլուծական ձևեր 280

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱԲԱԺԻՆ

Դոյականական բառակապակցություն

I. Դոյականական կարգերի ծավալումը. գոյականական բառակապակցության կառուցվածքը 291
II. Որոշիչ բառեր և բառախմբեր 298
1. Դերանվանական որոշիչ . . . . . —
2. Թվական որոշիչ 301
3. Ածական որոշիչ 303
ա. Արմատական ածականները և նրանց կապակցելիությունը —
բ. Բազադրյալ ածականներ. Համեմատության աստիճանի կարգը 308
4. Որոշչային բառակապակցություններ 312
ա. Որոշչային բառակապակցությունների տեսակները . —
բ. Մակորոշիչ բառեր՝ «մակբայներ» 314
III. Հարաբերիչ բառեր և բառախմբեր՝ կապեր 317

ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԲԱԺԻՆ

Բայական բառակապակցություն
և նախադասություն

1. Նախադասությունը որպես լեզվաբանական միավոր 332
1. Բայա-ստորոգական կարգերի ծավալումը . . . . —
2. Նախադասության բնութագրական կարգերը 342

3. Շարույթ 353
II. Եղանականիշ բառեր և բառախմբեր 355
1. Եղանակավորություն . . . . . —
ա. Եղանակավորության առոգանական արտահայտությունը. նախադասության եղանակա-առոգանական տեսակները . 355
բ. Եղանականիշ բառերի և բառախմբերի տեսակները . 359
2. Ձայնարկություն 363
3. Կոչական 368
4. Հարցուպատասխանական բառեր և բառախմբեր . . . 371
5. Վերաբերողական բառեր և բառախմբեր 379
III. Ննթակա 388
1. Ննթակայի հասկացությունը . . . . . —
2. Միակազմ անննթակա նախադասություններ 394
3. Ննթակայական բառեր և բառակապակցություններ . . . 396
IV. Ստորոգյալ 398
1. Ստորոգյալի հասկացությունը . . . . . —
2. Միակազմ անհանգույց-անվանական նախադասություն . . 401
3. Բաղադրյալ ստորոգյալ և անվանական նախադասություն . . 407
4. Բարդ ստորոգյալ 412
5. Ննթակայի և ստորոգյալի համաձայնությունը. 416
V. Նախադասության լրացչական անդամներ 419
1. Խնդիրներ և պարագաներ . . . . . —
2. Հոլովական լրացումներ 425
3. Կապական լրացումներ 432
4. Մակրայական լրացումներ 447
VI. Հարաբերիչ բառեր և բառախմբեր 449
1. Շաղկապների տեսակները . . . . . —
2. Ստորադասական շաղկապներ 450
VII. Բայերի կապակցելիական դասակարգումը 461
1. Բայերի կապակցելիությունը . . . . . —
2. Բայերի դասանշային դասակարգումը 462
3. Բայերի արժութային դասակարգումը 486
4. Բայերի ընտրութային դասակարգումը 488

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ,

ՓՈԽԿԱՂԱՊԱՐՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ՆՆԹԱԲԱԺԻՆ

Համադասական կապակցություն

1. Համադասական կապակցության բնույթը և դրսևորման եղանակները 495
2. Համադասական շաղկապներ 496

Խոսքի մասերի փոխակերպում և փոխանցում

1. Փոխակերպման և փոխանցման հասկացությունները . . 502
2. Բայի փոխակերպում 505
   ա. Բայի փոխակերպում գոյականի (բայի գոյականական փոխակերպում կամ գոյականացում) . . . . . —
   բ. Բայի փոխակերպում ածականի (բայի ածականական փոխակերպում կամ ածականացում) 512
   գ. Բայի փոխակերպում մակբայի (բայի մակբայական փոխակերպում կամ մակբայացում) 520
3. Գոյականական բառակապակցության անդամների փոխակերպում և փոխանցում 521
   ա. Արտաքին փոխակերպում . . . . . —
   բ. Ներքին փոխակերպում և փոխանցում 524

ԵՐՐՈՐԴ ԵՆԹԱԲԱԺԻՆ

Նախադասության փոխակերպում

I. Ներքին փոխակերպում 528
II. Արտաքին փոխակերպում 535
   1. Նախադասության արտաքին փոխակերպման տեսակները . . —
   2. Երկրորդական (ստորադաս) նախադասություն 536
      ա. Նախադասությունների ստորադասական կապակցություն (բարդ ստորադասական նախադասություն) . . —
      բ. Հարաբերական երկրորդական (ստորադաս) նախադասություն 538
      σ. Գոյական հարաբերական նախադասություն . . . —
      β. Որոշիչ հարաբերական նախադասություն . . . 540
      γ. Մակրոշիչ հարաբերական նախադասություն . . . 543
      դ. Շաղկապական երկրորդական (ստորադաս) նախադասություն 546
   3. Դերբայական անդամ (դարձված) 551
   4. Գոյականական լրացում 553
   5. Բայանվանական անդամ (դարձված) 562
   6. Բառաբաղադրիչ 563
Գրականություն 566
Համառոտագրություններ 576

СОДЕРЖАНИЕ

Предисловие 5
Введение 11
1. Понятие лингвистической модели. Универсальная модель. —
2. Структура языкознания 37

ПЕРВАЯ ЧАСТЬ

УЧЕНИЕ О ВЫРАЖЕНИИ

Средства выражения 53

ПЕРВЫЙ РАЗДЕЛ

Фонетика

I. Фонематика (фонология) (парадигматическая фонетика) . . 57
1. Возможности дифференциации фонем . . . . . —
а) Органы речи . . . . . —
б) Дифференциальные признаки фонем по универсальным категориям 64
2. Классификация фонем армянского языка 67
а) Две основные группы фонем—согласные и гласные —
б) Согласные 69
в) Гласные 75
II. Фонотактика 81
1. Сочетание согласных . . . . . —
2. Слог 84
III. Сочетание и трансмоделирование слогов 88
1. Сочетание слогов и фонетическая цепь . . . . . —
2. Фонетическое изменение 92

ВТОРОЙ РАЗДЕЛ

Графика

I. Письменные знаки как система выражения 96
1. Особенности письменных знаков . . . . . —

2. Дистрибуция и виды письменных знаков 98
3. Состав письменных знаков 101
II. Соотношение фонетических и графических систем . . . 112
1. Соотношение фонем и графем . . . . . —
а) Количественное соотношение . . . . . —
б) Качественное соотношение. Орфография и орфоэпия 114
2. Функциональное значение пунктуационных знаков . . 116

ТРЕТИЙ РАЗДЕЛ

Кинесика

1. Особенности кинесических знаков 118
2. Паралингвистические кинесические знаки 121

ВТОРАЯ ЧАСТЬ

МОРФОЛОГИЯ

Группы и состав слов 125
1. Части речи . . . . . —
2. Состав слова 150
а) Морфема и ее виды . . . . . —
б) Деривационные морфемы 151
в) Понятие основы 158

ПЕРВЫЙ РАЗДЕЛ

Парадигма субстантивных словоформ

(Склонение)

I. Именное склонение 161
1. Именные грамматические категории . . . . . —
2. Категория числа 172
3. Категория падежа 186
4. Категория класса 206
5. Категория актуализации 209
II. Местоименное склонение . . . . . —
1. Категория числа 213
2. Категория падежа 215
3. Категория класса 217
4. Категория лица 218

ВТОРОЙ РАЗДЕЛ

Парадигма предикативных глагольных форм

(Спряжение)

I. Синтетические формы 220
1. Глагольные и предикативные категории 220
2. Категория наклонения . . . . . —
3. Категория вида 249
4. Категория залога 256
5. Категория типа 264
6. Категория времени 272
7. Категория лица и класса 276
8. Категория числа 279
II. Аналитические формы 280

ТРЕТЬЯ ЧАСТЬ

СИНТАКСИС

ПЕРВЫЙ РАЗДЕЛ

Субстантивное словосочетание

I. Развертывание субстантивных категорий. Структура субстантивного словосочетания 291
II. Атрибутивные (определительные) слова и группы слов . . 298
1. Атрибутивное местоимение . . . . . —
2. Атрибутивное числительное 301
3. Атрибутивное прилагательное 303
а) Непроизводные прилагательные и их сочетаемость —
б) Производные прилагательные. Категория степеней сравнения 308
4. Атрибутивные словосочетания 312
а) Виды атрибутивных словосочетаний . . . . —
б) Приатрибутивные слова—«наречия» . . . 314
III. Реляционные слова и группы слов—предлоги и послелоги . 317

ВТОРОЙ РАЗДЕЛ

Глагольное словосочетание и предложение

I. Предложение как лингвистическая единица 332
1. Развертывание глагольно-предикативных категорий . . —
2. Грамматические категории предложения 342

3. Синтагма 353
II. Модальные слова и группы слов 355
1. Модальность . . . . . —
а) Просодическое выражение модальности. Модально-просодические типы предложения 355
б) Виды модальных слов и групп слов 359
2. Междометие 363
3. Обращение 368
4. Вопросительно-ответные слова и группы слов. . . . 371
5. Субъективно-относительные слова и группы слов . . 379
III. Подлежащее 388
1. Понятие подлежащего . . . . . —
2. Бесподлежащные односоставные предложения . . . 394
3. Подлежащные слова и словосочетания 396
IV. Сказуемое 398
1. Понятие сказуемого . . . . . —
2. Номинативные односоставные предложения . . . 404
3. Составное именное сказуемое и именное предложение . 407
4. Сложное глагольное сказуемое 412
5. Согласование сказуемого с подлежащим 416
V. Второстепенные члены предложения 419
1. Дополнения и обстоятельства . . . . . —
2. Падежные дополнения 425
3. Предложные дополнения 432
4. Наречные слова 447
VI. Реляционные слова и группы слов 449
1. Виды союзов . . . . . —
2. Подчинительные союзы 450
VII. Классификация глаголов по сочетаемости 461
1. Сочетаемость глаголов . . . . . —
2. Классификация глаголов по соотнесенности с классами. . 462
3. Классификация глаголов по валентности 466
4. Классификация глаголов по избирательности . . . 488

ЧЕТВЕРТАЯ ЧАСТЬ

ТРАНСМОДЕЛИРОВАНИЕ

ПЕРВЫЙ РАЗДЕЛ

Сочинительная связь

1. Характер и способы выражения сочинительной связи . 495
2. Сочинительные союзы 496

ВТОРОЙ РАЗДЕЛ

Трансформация и транспозиция частей речи

1. Понятие трансформации и транспозиции 502
2. Трансформация глагола 505
   а) Трансформация глагола в существительное . . —
   б) Трансформация глагола в прилагательное . . 512
   в) Трансформация глагола в наречие 520
3. Трансформация и транспозиция членов субстантивного словосочетания 521
   а) Внешняя трансформация . . . . . —
   б) Внутренняя трансформация 524

ТРЕТИЙ РАЗДЕЛ

Трансформация предложения

I. Внутренняя трансформация 528
II. Внешняя трансформация 535
   1. Виды внешней трансформации предложения . . —
   2. Придаточное предложение 536
      а) Подчинительная связь предложений . . . —
      б) Относительное придаточное предложение . . 538
         α) Субстантивное придаточное предложение . —
         β) Атрибутивное придаточное предложение . 540
         γ) Приатрибутивное придаточное предложение. 543
      в) Союзное придаточное предложение 546
   3. Инфинитивный, причастный и деепричастный обороты . 551
   4. Субстантивное определение 553
   5. Отглагольно-именной оборот 562
   6. Компонент слова 563
Литература 566
Список сокращений 576

ՋԱՀՈՒԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԲԵԳԼԱՐԻ
ДЖАУКЯН ГЕВОРК БЕГЛАРОВИЧ

ԱՐԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիր Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հրատ. խմբագիր Փ. Հ. ՄԱՂԱԼՅԱՆ
Նկարիչ Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
Տեխն. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ

ՎԼ 05435 Հրատ. 4010 Պատվեր 230 Տպաքանակ 2500

Հանձնված է շարվածքի 11/III 1974 թ., ստորագրված է տպագրության 21/10 1974 թ., տպագր. 36,75 մամուլ+ 4 ներդիր, հրատ. 31,9 մամուլ, պայմամ. 37,12 մամուլ, թուղթ № 1, $60\times90^{1}/_{16}$: Գինը՝ 3 ո. 43 կ.:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, Բարեկամության 24ա:
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24: